

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ,
ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ՎԱՆԱԶՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ



ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ 14-ՐԴ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՆՅՈՒԹԵՐ

ՎԱՆԱԶՈՐ – 2025

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ,
ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ՎԱՆԱԶՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ
ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ
14-ՐԴ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ
ՆՅՈՒԹԵՐ

Գիտության մարտահրավերները և
երիտասարդ գիտնականների ներուժը

ՎԱՆԱԶՈՐ
2025

**МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ, НАУКИ,
КУЛЬТУРЫ И СПОРТА РА**

**ФОНД «ВАНАДЗОРСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ
УНИВЕРСИТЕТ ИМЕНИ О. ТУМАНЯНА»**

**МАТЕРИАЛЫ 14-ОЙ
РЕСПУБЛИКАНСКОЙ
СТУДЕНЧЕСКОЙ
КОНФЕРЕНЦИИ**

Проблемы науки и
потенциал молодых ученых

ВАНАДЗОР
2025

RA MINISTRY OF EDUCATION, SCIENCE,
CULTURE AND SPORT

“VANADZOR STATE UNIVERSITY
NAMED AFTER H. TUMANYAN” FOUNDATION

MATERIALS
OF THE 14TH
REPUBLICAN STUDENT
CONFERENCE

The challenges of science and the
potential of young scientists

VANADZOR
2025

ՀՏԴ 378:001(082)
ԳՄԴ 74.48+72g43
Գ 609

Տպագրվում է
«Վանաձորի Հ. Թումանյանի անվան
պետական համալսարան» հիմնադրամի
գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագրական խորհուրդ

Ռ. Ռ. Սահակյան, տեխ. գ. դ. (խմբագրական խորհրդի նախագահ)
Վ. Վ. Հովսեփյան, կ. գ. թ. (խմբագրական խորհրդի նախագահի տեղակալ)
Լ. Ս. Հակոբյան (պատասխանատու քարտուղար)

Խմբագրական խորհրդի անդամներ

Վ. Վ. Բաղդասարյան, տնտ. գ. դ., **Հ. Ա. Ղազարյան**, ք. գ. դ., **Ֆ. Վ. Սովսիսյան**,
պ. գ. դ., **Պ. Հ. Գևորգյան**, մ. գ. դ., **Ս. Ս. Փարսադանյան**, ֆ.-մ. գ. թ.,
Հ. Պ. Հարությունյան, բ. գ. թ., **Վ. Ա. Փիլոյան**, բ. գ. թ., **Լ. Յ. Վարդանյան**, բ. գ. թ.,
Վ. Վ. Հարությունյան, տնտ. գ. թ., **Հ. Կ. Հակոբյան**, արվեստագիտության դոցենտ

Գ 609 ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՈՒՄԱՆՈՂԱԿԱՆ 14-ՐԴ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՆՅՈՒԹԵՐ / ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամ, Խմբ. խորհուրդ՝ Ռ. Սահակյան և այլք. – Վանաձոր: 2025. – 482 էջ:

Ժողովածուն ամփոփում է «ՎՊՀ» հիմնադրամի 2025 թվականի ապրիլի 29-ին կայացած ուսանողական հանրապետական գիտաժողովի նյութերը: Հոդվածները խմբագրական խորհրդի կողմից գրախոսվել, խմբագրվել և երաշխավորվել են տպագրության:

ISBN 978-9939-1-2206-9
ՀՏԴ 378:001(082)
ԳՄԴ 74.48+72g43

© Հեղինակային խումբ, 2025
© «Վանաձորի Հ. Թումանյանի անվան
պետական համալսարան» հիմնադրամ, 2025

Печатается по решению Ученого Совета
Фонда «Ванадзорский государственный университет имени О. Туманяна»

Редакционный совет

Р. Р. Саакян, д. тех. н. (председатель редакционного совета)

В. В. Овсепян, к. б. н. (заместитель председателя редакционного совета)

Л. С. Акопян (ответственный секретарь)

Члены редакционного совета

В. В. Багдасарян, д. э. н., **Г. А. Казарян**, д. х. н., **Ф. В. Мовсисян**, д. и. н.,

П. О. Геворкян, д. пед. н., **С. М. Парсаданян**, к. физ.-мат. н., **А. П. Арутюнян**,

к. ф. н., **В. А. Пилоян**, к. ф. н., **Л. Ю. Варданян**, к. ф. н., **В. В. Арутюнян**, к. э. н.,

А. К. Акопян, доцент искусствоведения

МАТЕРИАЛЫ 14-ОЙ РЕСПУБЛИКАНСКОЙ СТУДЕНЧЕСКОЙ КОНФЕРЕНЦИИ.

/ Министерство образования, науки, культуры и спорта РА, Фонд «Ванадзорский государственный университет имени О. Туманяна», Ред. совет – Р. Саакян и др. – Ванадзор. 2025. – 482 стр.

Сборник обобщает материалы республиканской студенческой конференции, состоявшейся 29 апреля 2025 года. Статьи были рецензированы, отредактированы и гарантированы печати редакционным комитетом.

© Авторская группа, 2025

© Фонд «Ванадзорский государственный университет имени О. Туманяна», 2025

Printed by the Resolution of the Academic Council of
“Vanadzor State University after H. Tumanyan” Foundation

Editorial Board

R. R. Saakyan, Doctor of Technical Sciences (Chairman of Editorial Board)

V. V. Hovsepyan, Candidate of Biological Sciences (Deputy Chairman of the Editorial Board)

L. S. Hakobyan (Secretary-in-charge)

Editorial Board Members

V. V. Baghdasaryan, Doctor of Economic Sciences, **H. A. Ghazaryan**, Doctor of Chemical Sciences, **F. V. Movsisyan**, Doctor of Historical Sciences, **P. H. Gevorgyan**, Doctor of Pedagogical Sciences, **S. M. Parsadanyan**, Candidate of Physical and Mathematical Sciences, **H. P. Harutyunyan**, Candidate of Philological Sciences, **V. A. Piloyan**, Candidate of Philological Sciences, **L. Y. Vardanyan**, Candidate of Philological Sciences, **V. V. Harutyunyan**, Candidate of Economic Sciences, **H. K. Hakobyan**, Associate Professor of Art History

MATERIALS OF THE 14TH REPUBLICAN STUDENT CONFERENCE.

/ RA Ministry of Education, Science, Culture and Sport, “Vanadzor State University after H. Tumanyan” Foundation. Editorial Board: R. Sahakyan, etc. – Vanadzor. 2025. – 482 p.

The collection summarizes the materials represented during the republican student conference at Vanadzor State University on April 29, 2025. The articles are reviewed, edited and guaranteed to be printed by the editorial staff.

© Author group, 2025

© “Vanadzor State University after H. Tumanyan” Foundation, 2025

ՀԱՅ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ
АРМЯНСКАЯ ФИЛОЛОГИЯ
ARMENIAN PHILOLOGY

**ԳՈՐԻՍԻ ԵՎ ԱՐՅԱՆԻ ԲԱՐԲԱՆՆԵՐԻ ԴԱՐՉՎԱԾՔՆԵՐԻ
ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ**

Առաքելյան Լիգա

*Գորիսի պետական համալսարան,
«Հայոց լեզու և գրականություն», 2-րդ կուրս
Գիտական ղեկավար՝ ք. գ. թ., դոցենտ Մ. Քումունց*

Հանգուցային բառեր *բարբառ, համեմատական վերլուծություն, վանկային տարբերություններ, արտասանության տարբերություններ, հնչյունափոխություն*

Այս հոդվածում փորձել ենք կատարել համեմատական վերլուծություն Գորիսի և Արցախի բարբառներում առկա դարձվածքների վերաբերյալ: Վերլուծության ընթացքում առանձնացվել են երկու բարբառների միջև առկա կառուցվածքային, հնչյունաբանական և իմաստային տարբերությունները՝ ընդգծելով ինչպես դրանց համընկնումները, այնպես էլ յուրահատկությունները: Հետազոտության արդյունքում պարզվել է, որ թեև Գորիսի և Արցախի բարբառները դասակարգվում են որպես Սյունիք-Արցախյան բարբառախմբի մաս, սակայն դրանց դարձվածային համակարգերը ունեն զգալի տարբերություններ, ինչը վկայում է երկու բարբառների ինքնուրույն զարգացման մասին: Դարձվածքների մեծ մասը ձևով և արտասանությամբ տարբերվում է, ինչը պայմանավորված է հնչյունափոխական տարբերություններով, տարբեր լեզվամտածողությամբ և բարբառային ինքնատիպ առանձնահատկություններով: Միևնույն ժամանակ, որոշ դարձվածքներ պահպանել են իրենց ընդհանուր իմաստը՝ պահպանելով մշակութային ու լեզվական կապերը: Այս հետազոտությունը ցույց է տալիս, որ Արցախի և Գորիսի բարբառները, լինելով նույն բարբառախմբի մաս, ունեն իրենց յուրահատուկ լեզվամշակութային առանձնահատկությունները, որոնք պայմանավորված են պատմական, աշխարհագրական և լեզվամտածողության գործոններով:

Մեթոդաբանություն

Հետազոտության հիմքում ընկած է Գորիսի և Արցախի բարբառների դարձվածքային միավորների համաժամանակյա համեմատական լեզվաբանական վերլուծությունը: Հետազոտությունն իրականացվել է երկու հիմնական աղբյուրների միջոցով՝ 1. գրավոր աղբյուրներ. հիմնականում օգտվել ենք Արմեն Սարգսյանի «Ղարաբաղի բարբառի դարձվածաբանական բառարանից» և այլ գիտական աշխատություններից, 2. բանավոր նյութեր. 2023 թվականին Արցախի բռնագաղթված բնակիչների բանավոր խոսքից հավաքվել են դարձվածքներ, որոնք համեմատվել են Գորիսի բարբառի համապատասխան ձևերի և տարբերակների հետ: Հետազոտության ընթացքում կիրառվել են հետևյալ լեզվաբանական մեթոդները՝ համեմատական վերլուծություն, դարձվածքային նյութերի խմբավորում:

Քննարկում

Դարձվածքը կառուցվածքով երկու և ավելի բառերի կայուն, իմաստով ամբողջական, վերաիմաստավորված այնպիսի կապակցություն է, որը խոսքում վեր-

արտադրվում է իբրև լեզվական պատրաստի միավոր և արտահայտում է բառերի խմբի իմաստներից դուրս՝ վերախմաստավորված հասկացություն: Ժամանակակից հայերենում դարձվածքը հաճախ անվանում են դարձվածաբանական միավոր, դարձվածաբանական արտահայտություն, հատուկ ոճ, որոշ դեպքերում նաև՝ իդիոմ կամ իդիոմային արտահայտություն [1, 368]: Այս անվանումները պատահական չեն, քանի որ հաճախ, ըստ Գորիսի բարբառում առկա դարձվածային միավորների, դժվարություններ են առաջանում դարձվածքների և մյուս կայուն կապակցությունների տարբերակման սահմանը որոշելիս: Եվ իսկապես, լեզվաբանական գրականության մեջ միասնական կարծիք չկա դարձվածքի կամ դարձվածաբանական միավորների տարբերակման, դարձվածաբանության ընդգրկման սահմանների վերաբերյալ: Դարձվածաբանության ավելի լայն ըմբռնման կողմնակիցները դարձվածքների մեջ ներգրավում են առածները, ասացվածքները, աֆորիզմները, թևավոր խոսքերը, հարադրությունները [1, 369], բարդ հարադրական շաղկապները, բառակապակցական տերմինները, մյուսները՝ դարձվածաբանության ավելի նեղ ըմբռնման կողմնակիցները, հրաժարվում են վերոհիշյալից և դարձվածքներ են համարում միայն իդիոմային արտահայտությունները [1, 368]:

Այս աշխատանքում մենք կհամեմատենք Գորիսի և Արցախի բարբառների դարձվածքները և կփորձենք հասկանալ՝ որքանով են նրանք նման կամ տարբեր:

Այսպիսով՝ օգտվելով Արմեն Սարգսյանի «Լարաբաղի բարբառի դարձվածաբանական բառարանից» և 2023 թ. Արցախից բռնագաղթված և Գորիսի տարածաշրջանում բնակություն հաստատած արցախցիների բանավոր գրույցներից՝ առանձնացրել ենք դարձվածքներ, որոնք.

ա) Նույն իմաստն են արտահայտում և նույն կերպ են կազմված, սակայն, տարբեր են արտասանությամբ, ինչպես՝ (Արց.) *վրենները լրվանալ, ճուրը խմել* (Մեկին շատ երախտապարտ լինել), որի գործիսյան համարժեքն է՝ *վենդերը լիվանայ՝ ճուրը խրմիլ*, (Արց.) *հրժան կարմուր խրնձօր դարկել* (հանդիսավոր հրավիրել), (Գոր.), *յեղան կարմիր խինձօր դարկիլ*, (Արց.) *կուլու՝ սրժու կերած* (անվախ, համարձակ), (Գոր.) *կուլի սերտ կերած*, (Արց.) *պենը պուրթ ինիլ* (վիճակիը վատ լինել), (Գոր.) *պանը պուրթ ինիլ*, (Արց.) *բեղա վեր ընգած պըրինձ* (հարգանքից գրկված), (Գոր.) *բեղա յերինգած պըրինձ*, (Արց.) *քըղ(ըհ)ան կօխել* (ցանքը մոլախոտերով պատվել), (Գոր.) *քաղը կօխիլ*, (Արց.) *տերտակ մըհակեն շոն չի հաչում* (առանց պատճառի ոչինչ չի լինում), (Գոր.) *տանտանկ մղակում շոն չի հաչում*, (Արց.) *չօրը թացան ձօկել* (վատը լավից տարբերել), (Գոր.) *թացը չօրան ձօկիլ*, (Արց.) *լուզուն կապ ըղնել* (պապանձվել), (Գոր.) *լուզուն կապ ինգի/լուզուն կօլ տալ*, (Արց.) *սըժրտը կըկըղել/ փըփըկել* (մեղմանալ, հանգստանալ) (Գոր.) *սերտը կըկըղի/փըփըկի/պիրանիլ*, (Արց.) *լուզվան խըժճ* (ճարտար լեզու չունեցող), (Գոր.) *լուզվան խեղճ*, (Արց.) *աշկեն թօզ փիչիլ* (խորամանկորեն խաբել), (Գոր.) *ըշկըրէրին թօզ փիչիլ*, (Արց.) *աշկերը հըլօրել* (աչքերի շարժումով սաստել), (Գոր.) *աշկերը հուլօրիլ*, (Արց.) *ըղթած էշ* (թմրած), (Գոր.) *աղթած էշ/ տիմբիրած*, (Արց.) *սաղանու խըլը* (խորամանկ), (Գոր.) *սըտրնի խըլը*, (Արց.) *վէ՛չ քուր ա, վէ՛չ քըռակեն* (հարազատ չլինել), (Գոր.) *վէ՛չ քուր ա, վէ՛չ քըռակին/ վէ՛չ հօր ղօլալն ա վէ՛չ սօր*, (Արց.) *օխձեն ըռխումը մըզիս կըսաստկի* (կեղտոտ լինել),

(Գոր.) *օցի պիրանումը մըրգես՝ կըսաստկի.* (Արց.) *խը՛լքը կըլխեն,* (գիտակից)
 (Գոր.) *խէլքը կըլխին.* (Արց.) *անգումը ծանդըր* (չլսող), (Գոր.) *անջուկը ծանդըր.*
 (Արց.) *ցը՛խը կոխէ տուս օնէ* (նախատել, պախարակել), (Գոր.) *կօխիլ ցէխը հանիլ.*
 (Արց.) *լու՛գուս կապ ընգավ* (պապանձվեցի), (Գոր.) *լու՛գուս կապ ինգեց.*
 (Արց.) *օրէն յըրա* (օրեցօր), (Գոր.) *օրնանօրը.* (Արց.) *քուրն աւից՝ ախպէր օնիւ.*
ախպէրըն աւից՝ քուր չօնիւ (քրոջ սրտացավությունը, եղբոր անտարբերությունը), (Գոր.) *քուրը աւեց ախպէր ունեն, ախպէրը աւեց՝ քուր չունեն.* (Արց.) *չափ-չափ անէլ* (պարապ-սարապ թափառել), (Գոր.) *չափ-չափ անիլ.* (Արց.) *չանա՛*
թակէլ (շատախոսել), (Գոր.) *չանա՛ թակիլ.* (Արց.) *պըրիշակ անէլ* (ավերել/քանդել), (Գոր.) *պրիշակ անիլ.* (Արց.) *պա ըստի պէն կինի* (ասում են հուսահատության նեղ վիճակի մեջ ընկնելիս կամ անակնալ բան լսելիս), (Գոր.) *բա սենց պանը կինի.*
 (Արց.) *ջիւալը ծը՛րքը հրվաքէ/օնէ* (սանձել), (Գոր.) *ջիւալը ծէրքը հրվաքի.* (Արց.) *պա հինցը ս գիդացալ* (այդպես էլ պետք է լիներ), (Գոր.) *բա հինցիր գիդուս.* (Արց.) *պէն ա՛նէ՛ պէն ըսկանանք* (այնպես խոսիր, որ հասկանալի լինի), (Գոր.) *պա՛ն աւի՛ պա՛ն հսկանանք.* (Արց.) *պէնա/կօրծա ըղնէլ* (գործածությունից դուրս գալ), (Գոր.) *գործա ինգիլ.* (Արց.) *ջամբալը անէլ* (մի կերպ իրենից հեռացնել), (Գոր.) *ջամբար անիլ.* (Արց.) *ջանը մաչին* (մարմնետ), (Գոր.) *ջանը միչումը.* (Արց.) *ջանջալը քըցիլ* (դժվարացնել/ձգձգել), (Գոր.) *ջինջիլըցնիլ/ջինջիլըցնիլ.* (Արց.) *սըրտը ըռանմ ըղնէլ* (խղճմտանքով լցվել), (Գոր.) *սըրտը ըռանմ ինգիլ.* (Արց.) *սըթիրջամ անէլ* (մրսեցնել/թոքաբորբով հիվանդացնել), (Գոր.) *սաթորջամ անիլ.* (Արց.) *վը՛ննան* (մինչը՛վ) *կըլօ՛խը* (ամբողջությամբ/ոտքից գլուխ), (Գոր.) *վէնդան կիլօ՛խ.* (Արց.) *տափան կացած* (շատ ցածրահասակ), (Գոր.) *տափան կըցած.* (Արց.) *տըմբըհան անէլ* (մի կերպ, մի քիչ շարժել) (Գոր.) *տըմբըհան անիլ* և այլն:

Օրինակների հիման վրա կարելի է արձանագրել հնչյունական հիմնական տեղաշարժերը Գորիսի և Արցախի բարբառային դարձվածքներում.

1. Ձայնավորների փոփոխություններ

“ը” > “լ” կամ “յ”

(Արց.) *վընները* լըվանալ → (Գոր.) *վէնդերը* լիվանալ

(Արց.) *բեղա վեր ընգած* պըրինձ → (Գոր.) *բեղա յերինգած* պըրինձ

«ու» > «ո» կամ “ը”

(Արց.) *կյու՛ու՛* սըրտ կերած → (Գոր.) *կու՛լի* սերտ կերած

(Արց.) *լու՛գուն կապ ընգավ* → (Գոր.) *լու՛գուս կապ ինգեց*

2. Բարբառային տարբերակներ և փոխարինումներ

“հ” հնչյունի կորուստ կամ առկայություն

(Արց.) *հըւտան կալմուր խընձօր դարկէլ* → (Գոր.) *լէնդան կարմիր խինձօր*

դարկիլ

(Արց.) *օխձեն ըոխումը մըզիս՝ կըսաստկի* → (Գոր.) *օցի պիրանումը մըրգես՝*

կըսաստկի

«ծ» > «ց» փոփոխություն

(Արց.) *ցը՛խը կոխէլ, տուս օնէլ* → (Գոր.) *կօխիլ ցէխը հանիլ*

(Արց.) *ջանջալը քըցիլ* → (Գոր.) *ջինջիլըցնիլ*

3. Վանկերի կամ ամբողջական բառերի վերափոխումներ, վերաշարադրումներ

(Արց.) չօրը թացան ճօկէլ → (Գոր.) թացը չօրան ճօկիլ

(Արց.) օրէն յըրա → (Գոր.) օրնանօրը

4. Տարբեր բառերի գործածություն նույն իմաստի համար՝

(Արց.) լու՛գուն կապ ընգավ → (Գոր.) լու՛գուս կապ ինգեց

(Արց.) սըթիքջամ անէլ → (Գոր.) սաթիքջամ անիլ

Այս բոլոր փոփոխությունները ցույց են տալիս, որ թեև երկու բարբառները միմյանց մոտ են, բայց ունեն հնչյունական յուրահատկություններ, որոնք պայմանավորված են տեղային լեզվական զարգացման ուղիներով:

բ) Արցախի և Գորիսի բարբառներում բազմաթիվ դարձվածքներ արտահայտում են նույն իմաստը, սակայն ունեն տարբեր կազմություն: Ստորև ներկայացված համեմատական աղյուսակի ձևով՝

Աղյուսակ 1.

Համեմատական տախտակ

Արցախի բարբառ	Գորիսի բարբառ	Իմաստ
ծօնը ծունաստար ա տրեռալ	շօնը տիրոջը ճնանչում չի	Անարդարությունները շատացել են
քարը քարէն օտէլ	ցամաք հացին կակա սաիլ	Սով լինել, տարածվել
էշը կօրած	կիրը կուրցրած	Շփոթված
կըլխան յըրէղճ	կըլխան հափռած	Խելապական
մին ծըրքբավ ծափ տալ	կըլխան տուս պանէր անիլ	Հնարավորություն չունենալ, բայց գործ ձեռնարկել
իրաւը ծռէլ	վիգ ծըրիլ	Աղաչել, խնդրել
քամակը տանիս, առաշկը գլիդայ չի	հու՛շը կուրցըրած / միճիճված	Անուշադիր լինել
չօր տափէն թօղնէլ	իրա նէստավ անիլ	Ապրուստի միջոցներից զրկել
քարը հօփ տա, ճուր կըկաթէ	էշը փլանավը շիլակիլ	Ուժեղ լինել
մաննը պիրանունը պահէլ	կըլխան հափռած	Տհաս լինել
աշկէրը տափէն օնէլ	կիլօխը կախ անիլ	Ամաչել
մարդու՛ հավա չինիլ	իսան չինիլ	Անպիտան լինել
հափռուը պէնդ	ծէրքը պէնդ	Շղատ լինել
չանան բօշ	պիրանան թուլ / փորումը պան չպահող	Գաղտնիք չպահող
հացէն պըտառէն թըքիս, տէմ անիս յըր կօնէ	իրեսին թիքէս կասի անձրէվ ա կամ	Անինքնասեր, պնդաճակատ
չաթուն չըվանէն տալ	էսօր-էրուց անիլ	Գործը ձգձգել
չուլ կյօրծէլ	տակը քանդիլ	Դավ նյութել

Արցախի բարբառ	Գորիսի բարբառ	Իմաստ
պամբուլի կըտըրըլ	սանիլիկանալ	Թեթևստլիկություն անել
պառը կակօղ	մըրթամօտ	Մարդամոտ լինել
պըռըշնեն հօփ տուված	քէթը տնգած	Մեծամիտ լինել
ջանա քըցիլ	հալաթ անիլ	Ուժասպառ լինել
սամթը քըթէնալ	սամթը ճարիլ	Հարմար ձևը գտնել
սըրտէն կըրակը թունդ (ինիլ)	աթունը կըլխին տուած	Տաքարյուն լինել
սըրտումը ման/ջօտ կյալ	աշկումը ման կալ	Ատելի լինել
սունունը ծըռէլ	գօրծը թաթսվիլ	Գործը ձախողվել
վախը յըէր քաղէլ	վախը օնէլ	Վախը սնտոփ միջոցներով բուժել
վէ՛ջ ալուն յէշիլ, վէ՛ջ վալուն	վէ՛ջ ալուն մհալ տինիլ, վէ՛ջ վալուն	Ոչ մեկին ու ոչինչին ուշադրություն չդարձնել
վէ՛ջ տես, վէ՛ջ տեն	վէ՛ջ էս դօլ, վէ՛ջ էն դօլ	Առանց ավելորդ պատճառաբանությունների
տանը հըղէն կընանչիլ	տօնը պրիշալ տաննալ	Տունը անտեր մնալ, ավերվել
տաշտէն մին հացը	մադար խօխա	Մինուճար զավակ
ջըղըբ-ջօղաբ անէլ/ինիլ	յախա-յախա ինիլ	Վիճաբանել
սարքու կյալ	դարար քիցիլ	Կանոնավորվել
սէպարատըրալ քաշած	լղար/ժարօնիկի քթան էրինգաձ	Շատ նիհար

Այս դարձվածքների ուսումնասիրությունը ցույց է տալիս արցախյան և գորիսյան բարբառների միջև հետաքրքիր տարբերություններ և նմանություններ՝ ինչպես կառուցվածքի, այնպես էլ իմաստի մակարդակում: Փորձենք դիտարկել հիմնական առանձնահատկությունները.

1. **Տարբեր կառուցվածք, բայց նույն իմաստ:** Շատ դեպքերում դարձվածքները տարբեր լեզվական միջոցներով արտահայտում են նույն իմաստը. (Արց.) **ծօնը ծուռնատար ա տըճոսլ** → (Գոր.) **շօնը տիրօջը ճնանչում չի** (Անարդարությունների շատացում, կարգերի խախտում) (Արց.) **քարը քարէն օտէլ** → (Գոր.) **ցամաք հացին կակա առիլ** (Մովի տարածում) (Արց.) **էըը կօրած** → (Գոր.) **կիրը կուրցրած** (Շփոթվածություն, անօգնական վիճակ) (Արց.) **մին ծըլըքալ ծափ տալ** → (Գոր.) **կըլխան տուս պանէր անիլ** (Հնարավորություն չունենալ, բայց գործ սկսել): Այս տիպի տարբերությունները ցույց են տալիս, որ երկու բարբառներում միևնույն իմաստները կարող են տարբեր կերպ արտահայտվել, ինչը խոսում է յուրահատուկ լեզվական մտածողության մասին: Պետք է նկատել, սակայն, որ կան դարձվածքներ, որոնք երկու տարածքներում էլ տարածված են: Ինչպես նկատեցինք, մենք առանձնացրինք հատկապես իմաստային ընդհանրություն ունեցող դարձվածքները, որոնք նույնանիշ են:

2. *Բմաստային նրբերանգներ:* Որոշ դարձվածքներ ունեն մոտ իմաստ, բայց տարբեր նրբերանգներ՝ կապված կենցաղային, տարածքային, լեզվամտածողության, տարբեր փոխազդեցությունների հետ. (Արց.) *պամբուլի կըտըրել* → (Գոր.) *սանիկիօթուն անիլ* (թեթևստիկություն անել). Գորիսի տարբերակը առավելապես մոտ է հարադիր բային *թեթևաստության* երանգ կա *սա՝հլիկանայ:* (Արց.) *պատը կակօղ* → (Գոր.) *մըրթասուտ ինիլ* (մարդամոտ) Գորիսի ձևը ավելի *սովորական է*, իսկ Արցախյան ձևը *պատկերավոր:* (Արց.) *սըրտումը ման/շօռ կյալ* → (Գոր.) *աշկումը ման կալ* (ատելի լինել). գորիսյան ձևը ավելի *հուզական է* կապված տեսողական ընկալման հետ: Այս տարբերությունները ցույց են տալիս, որ երկու բարբառներն էլ ունեն իրենց հատուկ լեզվառձական և հուզական արտահայտչամիջոցները:

3. *Համընկնումներ:* Որոշ դեպքերում դարձվածքները գրեթե նույնական են. (Արց.) *վէ՛ջ ալուն յէշի, վէ՛ջ վալուն* → (Գոր.) *վէ՛ջ ալուն մհալ տինհի, վէ՛ջ վալուն* (ոչ մեկին ուշադրություն չդարձնել), (Արց.) *վէ՛ջ տեւ, վէ՛ջ տէն* → (Գոր.) *վէ՛ջ էւ դօլ, վէ՛ջ էն դօլ* (առանց ավելորդ պատճառաբանությունների գործ անել): Որոշ դարձվածքներ պահպանել են ընդհանուր կառուցվածքը՝ բարբառային փոքր տարբերություններով:

4. *Արտահայտչական տարբերություններ:* Որոշ դարձվածքներ ավելի պատկերավոր են մեկ բարբառում, քան մյուսում. (Արց.) *քարը հօփ տա, ճո՛ր կըկաթէ* → (Գոր.) *էը փլանավը շիլալիլ* (ուժեղ լինել). Գորիսի տարբերակը ավելի կենցաղային է: (Արց.) *մա՛րդո՛ հավա չինիլ* → (Գոր.) *խաս չինիլ* (անպիտան մարդ). արցախյան տարբերակը ավելի ցայտուն և պատկերավոր է: (Արց.) *պըռընէն հօփ տուված* → (Գոր.) *քէթը սնգած* (մեծամիտ). կարծում ենք՝ արցախյան զուգահեռ ձևը ավելի բարդ և պատկերային կառուցվածք ունի: Սա ցույց է տալիս, որ Արցախյան բարբառը երբեմն ավելի պատկերավոր արտահայտություններ է պարունակում, մինչդեռ Գորիսի բարբառը կարող է լինել ավելի սեղմ, դիպուկ և կարճ:

5. *Հավանական փոխազդեցություններ:* Հնարավոր է, որ որոշ դարձվածքներ ձևավորվել են տարբեր լեզուների ազդեցությամբ. (Արց.) *չուլ կյօրծել* → (Գոր.) *տակը քանդիլ* (դավ նյութել). արցախյան ձևը կարող է ունենալ պարսկական ազդեցություն (չուլ), իսկ գորիսյանը՝ ընդհանուրհայերենյան: (Արց.) *հացէն պըտատէն թըթիս, տէն անիս յըլը կօնէ* → (Գոր.) *իրեսին թիքէս կասի անձրեվ ա կաւմ* (պնդաճակատություն). երկու ձևերն էլ արտահայտիչ են, բայց Արցախի տարբերակը կրկնության միջոցով ուժեղացնում է իմաստը: Այս օրինակները ցույց են տալիս, որ բարբառները ոչ միայն զարգացել են ինքնուրույն, այլ նաև կրել են որոշակի ազդեցություններ հարևան լեզուներից:

գ) Նույն իմաստն են արտահայտում, ունեն նույն կազմությունը և արտասանվում են նույն կերպ, ինչպես՝ (Արց.) *աշկը ծակ* (ազահ) (Գոր.) *աշկը ծակ*, (Արց.) *հափըռումը աղ չինիլ* (երախտիքը չգնահատվել) (Գոր.) *հափըռումը աղ չինիլ*, (Արց.) *տուն տալ* (հիմար-հիմար խոսել) (Գոր.) *տուն տալ*, (Արց.) *ալունը քախձըր* (սիրվող, դուրեկան) (Գոր.) *ալունը քախձըր*, (Արց.) *ալան-թալան անիլ* (թալանել) (Գոր.) *ալան-թալան անիլ*, (Արց.) *փայ հըվաքող* (մուրացկան) (Գոր.) *փայ հըվաքող*, (Արց.) *պօրտը տը՛ղը տինիլ* (պատժել, ընկձել, վրեժ լուծել) (Գոր.)

պօրտը տեղը տինիլ, (Արց.) *ջանը տուն կալ* (կաշվից դուրս գալ, հոգնել) (Գոր.) *ջանը տուն կալ*, (Արց.) *չգիտալը տինիլ* (անտեղյակ ձևանալ/ուշադրություն չդարձնել) (Գոր.) *չբռնալը տինիլ*, (Արց.) *պարան կալ* (փլվել) *պարան կալ*, (Արց.) *ըռըխը լըխտուտ* (անպարկեշտ խոսող) (Գոր.) *ըռըխը լըխտուտ* և այլն:

դ) Նույն կազմությունն ունեն, սակայն, և՛ իմաստով են տարբերվում, և՛ արտասանությամբ, ինչպես (Արց.) *մին խախալ ծո՛ւ ածել* (խիստ վախենալ) (Գոր.) *մի խախալ ծո՛ւ ածիլ* (շատ երկար սպասել), (Արց.) *ալիշ- վերիշ անել* (առուծախով զբաղվել) (Գոր.) *արիշ- վերիշ անիլ* (շփում ունենալ), (Արց.) *սառած-սըքըսառած մընալ*(զարմանքից քարանալ) (Գոր.) *սառած-սիքսառած մնալ* (սաստիկ մրսել):

ե) Հետաքրքրական են հատկապես Արցախի տարածքում ստեղծված դարձվածքային հատկանիշներ ունեցող այն կազմությունները, որոնք կառուցվածքով բավականին բարդ են (դարձվածքային կազմի բառերի քանակով պայմանավորված), Գորիսի բարբառում դրանք բացակայում են կամ ունեն այլ համարժեք, ինչպես՝ (Արց.) *արբրիլը մալդան մին քանե օր փօխ ա կալա* (ապրիլը մարտից մի քանի օր պարտք է վերցրել (ասում են երբ շատ ցուրտ է լինում), (Արց.) *աճափը ըզափեն հախ ա, աճափը ըրփըվերուն նըհախ ա* (մարդկանց կարգավիճակը պետք է համապատասխանի իրար հետ լինելու համար) (Արց.) *ախպօր ումեղ ընգեր ըխպըհարը ընգեր* (եղբոր հույսին պետք չէ ընկնել), (Արց.) *ավրաղ տըռնալ* (շատ չորանալուց փտել), (Արց.) *պերանը վըտեղ* (որևէ բան անընդհատ ասել), (Արց.) *սաբաբ տըռնօղը վերչումը քաբաբ կըտըռնա* (միջնորդը վերջում կտուժի՝ մեղավոր կճանաչվի), (Արց.) *սագան վըսպե խընծօրնե կախ* (ասում էին շնորհալի աշուղներին), (Արց.) *սար տըսնալիս էծ տըռնալ, ճոնր տըսնալիս՝ ծոկուն* (ամեն ինչի հարմարվել), (Արց.) *սը՛վ հավը ծըկըլթալ* (պատերազմ կոտորած սպասվել), (Արց.) *սը՛րտը խըրթնել* (կասկածել), (Արց.) *սըվթա՛ անել* (փորձել/սկսել), (Արց.) *սիպտակը սը՛վեն վեզ չի ծըռեր* (հարուստը չունևորին չի խնդրի), (Արց.) *վարթանհայ անել* (խուսել չիմացած բանի մասին), (Արց.) *ջանը օխլավ* (գեղեցիկ կազմվածքով), (Արց.) *սուտեն կըրկատան չինիլ* (սուտն ակնհայտ լինել) և այլն:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Սուրբասյան Ա. Ս., Ժամանակակից հայոց լեզու (Հնչյունաբանություն, բառագիտություն), ԵՊՀ հրատ., Երևան, 2017, 462 էջ:
2. Սարգսյան Ա., Մինասյան Շ., Ղարաբաղի դարձվածաբանական բառարան, Երևան, 2017, 569 էջ:
3. Սարգսյան Բ., Բարբառագիտական ընթերցումներ. միջազգային գիտաժողովի նյութեր, (չբառարանագրված դարձվածքներ Գորիսի բարբառում), ՀՀ, ԳԱԱ, ԼԻ հրատ., Երևան, 2024, 292 էջ:
4. Սարգսյան Ա., Ժամանակակից հայոց լեզու (բառակազմություն, դարձվածաբանություն, բառարանագրություն), ԵՊՀ հրատ., Երևան, 1990, 502 էջ:

СРАВНИТЕЛЬНЫЙ АНАЛИТИЧЕСКИЙ ОБЗОР РАЗВИТИЯ ГОРИССКОГО И АРЦАХСКОГО ДИАЛЕКТОВ

Аракелян Лиза

*Горисский государственный университет,
«Армянский язык и литература», 2-й курс*

Научный руководитель:

кандидат филологических наук, доцент М. Кумунц

Резюме

Ключевые слова: *диалект, сравнительный анализ, различия в слогах, различия в произношении, звукопреобразование*

Сравнение 100 фразеологизмов горисского и арцахского диалектов показало, что 10 из них полностью идентичны, 51 различны, а 39 частично похожи. Несмотря на принадлежность к сюникско-арцахской диалектной группе, они являются отдельными диалектами. Арцахские фразеологизмы более образны, а горисские – лаконичны и точны. Эти различия свидетельствуют о языковых и культурных связях, самостоятельном развитии и внешних влияниях, формируя уникальное языковое мышление.

COMPARATIVE EXAMINATION OF THE DEVELOPMENTS OF THE GORIS AND ARTSAKH DIALECTS

Arakelyan Liza

Goris State University,

“Armenian Language and Literature,” 2nd Year

Academic Supervisor: M. Kumunts,

Candidate of Philological Sciences, Associate Professor

Summary

Key words: *dialect, comparative analysis, syllabic differences, pronunciation differences, sound transformation*

The comparison of 100 idioms from the Goris and Artsakh dialects revealed that 10 of them are completely identical, 51 are different, and 39 are partially similar. Although they belong to the Syunik-Artsakh dialect group, they are distinct dialects. The idioms of Artsakh are more figurative, while those of Goris are more concise and precise. These differences indicate linguistic and cultural connections, independent development, and external influences, shaping a unique linguistic mindset.

ԲԱՂԱԴՐՅԱԼ ՍՏՈՐՈԳՅԱԼԻ ԿԱՊԱԿՅԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ
ՎԱՆՈ ՍԻՐԱԴԵՂՅԱՆԻ ԵՐԿԵՐՈՒՄ

Բաղդասարյան Անի

*«ՎՊՀ» հիմնադրամ,
«Հայոց լեզու և գրականություն»,
մագիստրատուրա, 2-րդ կուրս
Գիտական ղեկավար՝ Բ. Գ. Թ., դոցենտ Լ. Պետրոսյան*

***Հանգուցային բառեր.** գոյական, ածական, դերանուն, բայ, բաղադրյալ ստորոգյալ, ստորոգելի, բարդ*

Նախադասության գլխավոր անդամներից ստորոգյալը, ունենալով արտահայտության տարբեր ձևեր, ունի մեկ հիմնական արտահայտություն, այն է՝ դիմավոր բայ, որը մի դեպքում հանդես է գալիս միայնակ՝ ձևավորելով պարզ ստորոգյալ, մյուս դեպքում անուն կամ բայ գուգահեռներով՝ ձևավորելով բաղադրյալ ստորոգյալ, որը, կազմված լինելով տարբեր խոսքի մասերից, դրսևորում է կապակցական բազմազան հնարավորություններ, որոնք էլ ուսումնասիրել ենք Վ. Սիրադեղյանի «Ծանր լույս» ժողովածուի պատմվածքներում¹:

Աշխատանքի **նպատակը** – Ուսումնասիրել բաղադրյալ ստորոգյալի կապակցելիության առանձնահատկությունները, բացահայտել բաղադրյալ ստորոգյալի կապակցելիության դերը նախադասության կառուցման և իմաստի արտահայտման գործընթացում:

Աշխատանքի **խնդիրներն** են՝

1. Տեսական նյութի ուսումնասիրում:
2. Բաղադրյալ ստորոգյալի կապակցելիությունը Վ. Սիրադեղյանի երկերում:
3. Համապատասխան օրինակների դուրսբերում և վերլուծություն:
4. Բաղադրյալ ստորոգյալի կապակցելիության հնարավորության մեկնաբանում՝ ըստ 20-րդ դարի արձակի:

Բաղադրյալ ստորոգյալի կապակցելիության առանձնահատկությունների իմացությունը նպաստում է խոսքի ճշգրտությունը, լեզվի ինքնատիպության պահպանմանը: Այն շարունակում է մնալ **արդիական** ժամանակակից հայ լեզվաբանության մեջ՝ ունենալով ինչպես տեսական, այնպես էլ գործնական կարևոր նշանակություն լեզվի զարգացման և ուսումնասիրության տարբեր ոլորտներում:

Աշխատանքը կատարելիս օգտվել ենք **նկարագրական, համեմատական, համադրական մեթոդներից**:

«Ստորոգյալ» լեզվական իրողությունը՝ որպես արևելահայերենի քերականական կառուցվածքի առանցքային միավոր, քննության է առնվել Ստ. Պալասան-

¹ Բնագրի օրինակները մեջբերված են համացանցային հրատարակությունից, <https://grapaharan.org> (հասանելի է՝ 5.06.2024 թ.):

յանի կողմից, որն ի սկզբանե ստորոգյալի իմաստով գործածում է *բան, խոսք* տերմինները, ավելի ուշ՝ նաև ստորոգյալ եզրույթը՝ այն կոչելով՝ «*այն, ինչ որ ասվում է առարկայի վրա*» [3, 11]:

Շարահյուսության խնդիրների մանրակրկիտ ուսումնասիրությամբ զբաղվել է Մ. Աբեղյանը՝ ստեղծելով արևելահայ աշխարհաբարի գիտական համակարգված քերականությունը: Նա բայակենտրոն ուսմունք է ներկայացնում և համոզված է, որ նախադասություն կազմում են միայն բայերը: Խոսքի մասերը՝ ըստ խոսքի մեջ իրենց կատարած պաշտոնի, լինում են *բայ, ստորոգյալ, ստորոգելիական վերադիր, ենթակա, խնդիր, պարագա և վերադիր*: Մ. Աբեղյանը բայն ու ստորոգյալը միասին է առնում իբրև խոսքի մաս և կոչում բայ-ստորոգյալ [1, 365]: Բայ-ստորոգյալը լինում է երկու տեսակ՝ պարզ և բաղադրյալ:

Մ. Աբեղյանը տարբերակում է բաղադրյալ ստորոգյալի արտահայտման երկու ձև.

1. **Ես, լինիմ բայով և մի գոյական կամ ածական լրացումով, որ ասվում է ստորոգյալ:**
2. **Ղառնայ, կոչվել, համարվել, թվալ և այլն բառերով և մի գոյական կամ ածական լրացում, որ ասվում է ստորոգելիական վերադիր** [1, 367]:

Վ. Առաքելյանն ընդունում է բաղադրյալ ստորոգյալի երկու տեսակ՝ անվանական և բայական [4, 61]:

Գ. Ջահուկյանը և Վ. Առաքելյանը ընդունում են նաև բարդ ստորոգյալ անվանումը [13, 403-404]: «*Գան դեպքեր, երբ կերպարա-եղանակային իմաստներն արտահայտվում են դիմավոր բայաձևերի միջոցով, իսկ բուն հատկանշա-ստորոգելիական իմաստն արտահայտվում է անորոշ դերբայի միջոցով՝ սկսում է քայլել, ուզում է գնալ և այլն: Այս տիպի կապակցություններն ընկալվում են որպես մեկ միասնական ստորոգյալ և կոչվում են բարդ ստորոգյալ*» [13, 403-404]:

Ռ. Բշխանյանը **ստորոգյալ** հասկացությունը նույնացնում է **դիմավոր բայ** հասկացությանը. ստորոգյալը կա՛մ արտահայտվում է դիմավոր բայով, կա՛մ նրա կազմում լինում է դիմավոր բայ: Առանց դիմավոր բայի արդի հայերենում չկա ստորոգյալ [8, 112]:

Համաաշխարհային լեզվաբանության մեջ բայերի կապակցելիական հնարավորություններին անդրադարձել է ֆրանսիացի լեզվաբան Տենիերը՝ այն անվանելով **արժույթ**, իսկ հայ լեզվաբանության մեջ արժույթի գաղափարին առաջին անգամ անդրադարձել է Է. Աթայանը [14, 220]:

Արժույթը բայի կապակցելիությունն է ենթակայի, խնդիրների և պարագաների հետ, որոնք բնութագրվում են ենթակաառությամբ, ստորոգառությամբ, պարագաառությամբ [13, 466]:

Արժույթին վերաբերող ուսումնասիրությունները բազմազան են հայ լեզվաբանության մեջ: Հայ լեզվաբան հեղինակները տարբեր դիտարկումներով են ուսումնասիրել բառերի կապակցելիական հնարավորությունները: Մենք անդրադարձել ենք բաղադրյալ ստորոգյալի լրացումառության հնարավորություններին՝

առանձնացնելով դրանք ըստ վերադիրի խոսքիմասային պատկանելության:

Բաղադրյալ ստորոգյալի արտահայտությունը գոյականով

Գոյականով արտահայտված բաղադրյալ ստորոգյալն ի գորու է կապակցվել ինչպես բայական, այնպես էլ գոյականական լրացումների, որոնք ավելի հաճախադեպ են Վ. Սիրադեղյանի երկերում, ինչպես՝ *Այս առավոտ վեր ես կացել օրը գտել ես քեզ բազկապանակ. թուղթը՝ աջիդ տակ, ծխախոտն ու սուրճը՝ ձախիդ, պատը՝ դեմը,– քո կախարդական հայելին է: ... և պատկերը ջուրը ընկղմված ջրանկար է՝ երանգները հեղհեղուկ են: ... եկվորի տեղը մեռյալների ու ապրողների արանքում է նախ: Չէ, շնագայլի կյանք չէ ուզածը, պարզապես քո մենակությունը քո հանգիստն ու ազատությունն է: Այս տարիքում, այս վիճակնում ազատությունդ միակ ձևն է: ... Դու այն ինչի՞ տեր ես, որ ինքդ քեզ հերիք ես... Լավ տղա ես, սիրտդ բարակ մարդ ես և այլն: Գոյական ստորոգելիները կապակցվում են նաև մակբայների, ինչպես՝ *Նրանք արդեն էրեխաներ չեն:* Հեղինակային կիրառություններ են այն կապակցությունները, որոնցում ստորոգելին կապակցվել է դարձվածքային նշանակությամբ արտահայտություն, սրանք հատկապես գործածվում են երկխոսությունների մեջ, որոնք բացահայտում են հերոսների ներաշխարհը, ինչպես՝ *Մադրի առարկա էին դառնալու* առանձին-առանձին:*

Բաղադրյալ ստորոգյալի արտահայտությունը ածականով

Ածական ստորոգելիով արտահայտված բաղադրյալ ստորոգյալները կարող են լրացումներ չունենալ, ինչպես՝ ... *Եվ պատկերը ջուրը ընկղմված ջրանկար է, երանգները հեղհեղուկ են: Տարիների պատն անթափանց է... Մայրիկը լուռ էր... Կարող են կապակցվել խնդիրների և պարագաների, ինչպես՝ *Մայրիկը դեմ էր մինչև անգամ վաճառելուն, իսկ ձեռնասունը աջնան վրա անհանգիստ էր: Բսկ կեսը այնտեղ քսանհինգ տարվա ճանապարհ հեռու, ամառվա մի օր իմաստալից մի քայլ անելու ջանքով է լեզուն: Նրա սերը հոգսից ազատ է, և իր հայրիկին կպաշտպանի: Ածական ստորոգելիով ստորոգյալին կարող են լրացնել նաև երկրորդական նախադասություններ, ինչպես՝ *Հիմա կինդ գյուղում հայրական տանը արթնացել, ափսե՛ն ձեռին ման է գալիս չորս տղայի ետևից ու երթ երեք րոպեն մեկ հաջողացրեց գդալը խցկել բերանը՝ երջանիկ է: ... Ու քանի նա կա, շունչը թեթև է: ... Որովհետև իրենք մեծ էին, որբությունը քեզ էր հասնում ամենից առաջ: Չանգը կանուխ էր քաղաքի համար... որովհետև իրենք որբ էին ու գիտեին, որ դու որբ էիր, բայց չգիտեիր՝ քո չիմանալով մահն անհերթ էր: Վերջին օրինակում բաղադրյալ ստորոգյալով երկրորդական նախադասությունը կապակցվել է բաղադրյալ ստորոգյալով արտահայտված գլխավոր նախադասությանը: Ածական ստորոգելիները գործածվում են նաև վերաբերական արժեքով միջանկյալ խոսքերում, ինչպես՝ *Աստված մեծ է, պիտի որ տեսնես քեզ այն օրվա մեջ: Բայց գիշերը անտանելի էր... Որպես ստորոգելի է գործածվել նաև *նման* ածականը՝ պահանջելով հիմունքի պարագա և հանգման անուղղակի խնդիր լրացումներ՝ ինչպես՝ *Այդ կենտրոնացած տեսքով նա նման է* արտեզրին կանգնած պատանի *հորթարածի:*****

Բաղադրյալ ստորոգյալի արտահայտությունը դերանունով

Դերանունով արտահայտված բաղադրյալ ստորոգյալները շարահյուսական յուրահատուկ կառուցվածք են, որոնք հայերենում հաճախ գործածվում են անորոշ, ընդհանրական կամ համեմատական իմաստներ փոխանցելու համար: Դրանք հիմնականում չեն կապակցվում բառով արտահայտված լրացումների, այլ ստանում են լրացումներ՝ արտահայտված երկրորդական նախադասություններով: Վ. Միրադեղյանի գործերում «այն էր» բաղադրյալ ստորոգյալը ոչ միշտ է պարզ սահմանում ներկայացնում: Այն երբեմն ծառայում է հակադրություն ստեղծելու, ենթատեքստ ձևավորելու կամ արտահայտությանը դինամիկ բնույթ հաղորդելու համար: Այսպիսի կառույցները հաճախ թույլ են տալիս ստեղծել երկիմաստ կամ բազմաշերտ իմաստային դաշտ, որը կարող է ընթերցողին մղել տարբեր մեկնաբանությունների: Օրինակ՝ «Լավ մերկությունն այն էր, որ մերկանալու էլի տեղ ունի», որտեղ «Լավ մերկությունն» ենթադրում է բացարձակության մի մակարդակ, մինչդեռ երկրորդական նախադասությունը («որ մերկանալու էլի տեղ ունի») հակասում է այդ բացարձակությանը՝ ենթադրելով, որ մերկությունն ավարտուն չէ: Այսպիսով, ստորոգելին ձևավորում է պարադոքսալ իմաստ՝ միաժամանակ և՛ հաստատելով, և՛ ժխտելով առաջին բաղադրիչի ամբողջականությունը: «Մեր տունն այն էր, ինչ ընկած էր երկնքի տակ» նախադասության մեջ առկա է արտահայտչական հակադրություն, որը ստեղծում է իդեալականի ու իրականի միջև եղած լարվածություն, մի տեսակ սահմանազատում: «Վտանգը այն էր, որ այդպես պառկած երկնքին նայող երագող կմաննք» նախադասության մեջ էլ այն էր բաղադրյալ ստորոգյալով ներկայացվում է մեկ այլ պարադոքս. նախադասության մեջ առկա է հակասական հանգստություն: «Այդպես պառկած երկնքին նայող երագող կմաննք» արտահայտությունը ինքնին պասիվ վիճակի նկարագրություն է, որը խոսակցական տրամաբանությամբ կարելի էր կապել ոչ թե վտանգի, այլ հանգստության կամ երազկոտության հետ: Սակայն այստեղ այն հակադրվում է կանխատեսվող հետևանքի հետ. պառկած մնալն իրականում ներկայացվում է որպես վտանգ՝ ձևավորելով իմաստային նոր շերտ:

Դերանունով արտահայտված այլ ստորոգելիները նախադասությանը այդքան խոր իմաստային երանգներ չեն հաղորդում, որքան *այն էր*-ը, իսկ դրա պատճառը, կարծում ենք, այն է, որ ավելի կանխատեսելի բովանդակությամբ երկրորդականներ են կապում, ինչպես՝ Լավ հանգամանքն էլ *այնպիսին չէր*. որ բախում թառժածով աղմուկ սարքեն..., Ուզում ես էն պուճոռին տար... *նույնն ա...* և այլն:

Բաղադրյալ ստորոգյալի արտահայտությունը դերբայներով

Դերբայներով արտահայտված ստորոգելիները դրսևորում են կապակցական նույն հնարավորությունները, ինչ դիմավոր բայերով արտահայտված ստորոգելիները: Վ. Միրադեղյանի երկերում դերբայներից որպես ստորոգելի է գործածվում հարակատարը: Հարակատարով ստորոգելիներին հատուկ է կրավորական սեռի իմաստով գործածությունը, որը հաճախ է հարաբերվում չեզոքայնությանը, ինչպես՝ *Թեև տունը կարեկցանքով մեկուսացված էր գյուղի գործնական անցողարձից, կյանքի աղմուկն իր գործն անում էր: Տունը սուզված էր վշտի հատակը...*

Երեխաները գմայլված էին հայրիկի անութի տակ խլրտացող դառան պոչով: Հովանոցը երեք կողմից ցանցապատված էր: Համոզված էի, որ սիրատուն մայր ու տատ է... Բերված օրինակներում հարակատար դերբային են լրացրել ձևի, տեղի պարագաներ, անջատման, ներգործող անտողակի խնդիրներ, ինչպես նաև ասեմանափակման անտողակի խնդիր, որն արտահայտվել է երկրորդական նախադասությամբ: Դերբայ ստորոգելիները երբեմն գոյականաբար գործածվելիս զրկվում են խնդրառությունից և հայցականով սեռի խնդիր պահանջելու փոխարեն սկսում են պահանջել հատկացուցիչ լրացում՝ արտահայտված սեռական հոլովով, ինչպես՝ Եվ դա դարձել էր ինքն իր ջանքերի սպառողը, ինքն իր գնահատողը, նույնիսկ ինքն իր ունկնդիրը:

Բաղադրյալ ստորոգյալի արտահայտությունը կապական կապակցությամբ

Կապական կառույցներից ստորոգելիներ են ձևավորվում **հետ, մեջ, վրա, մոտ, նման** և այլ կապեր, որոնք հիմնականում կապակցվում են **եւ**, հազվադեպ՝ **լինել** բայերին: Երբ Ն. Պառնասյանը գրում է, թե այս կազմությունները (նկատի ունի առհասարակ բաղադրյալ ստորոգյալ կազմելու ձևերը) դեռ չեն բարձրացել բարդ բառի աստիճանի [4, 208-219], մասնակի է ճշմարիտ թվում, իսկ հակասությունն առաջացնում են կապական կապակցությամբ արտահայտված բաղադրյալ ստորոգյալները, հատկապես՝ չեզոք բայերով բաղադրվածները, որոնք երևան են բերում փոխաբերություն ոչ միայն տվյալ համատեքստում, այլև դրանից դուրս, հետևաբար ամենաանմասնատունակն են և, կարելի է ասել, «բարձրացել են բարդ բառի աստիճանի»: Այսպիսով՝ «դու տխմարի պես ժպտացել ես, որպեսզի նրանք չմտածեն, թե խանգարում են, որպեսզի ներեն, որ իրենց հետ չես» նախադասության ընդգծայրը նշանակում է՝ «այլախոհ ես»: Խոզությունն իմ մեջ է եղել նախադասության ընդգծայրը՝ «իմ սկզբնաղբյուրն է», Եվ ամիս ի վեր ամայի տունս տան նման եղավ՝ «մարդաբնակ դարձավ», Ամեն անգամ օրը մթնելու վրա էր լինում՝ «ակնակիր էր», Գետի սկիզբը ամենուրեք է կամ հենց իր մեջ է՝ «ինքնիրեն է», Մայրը երկու օր ստքի վրա էր՝ «հոգնատանջ էր», Կցկտուր բառերը լողում էին մեկերեւսին, իսկ խորքում ամեն մեկը իր մտքերի հետ էր՝ «մտասույզ էր», իր հիվանդության ու առողջության, իր սպրած կյանքի հետ էր՝ «ինքնախոհ էր», Մինչդեռ հետը գորացրված տղերքը խնջույքների մեջ էին՝ «կենսաթրթիռ էին»... և այլն: Այս կառույցները հիմնականում պահանջում են պարագա լրացումներ:

Այսպիսով՝ ուսումնասիրելով բաղադրյալ ստորոգյալը Վ. Միրադեղյանի երկերում՝ նկատեցինք, որ շատ են գոյականով, ածականով արտահայտված բաղադրյալ ստորոգյալները, դերբայներով արտահայտված բաղադրյալ ստորոգյալներից համեմատաբար շատ էին հարակատար դերբայով արտահայտված ստորոգյալները, համեմատաբար քիչ էին դերանունով և կապական կապակցելիքայմբ արտահայտված ստորոգյալները:

Գոյական ստորոգելիներին լրացրած որոշիչները, ըստ խոսքիմասային պատկանելության ածականներ, դերբայներ են. վերջիններս երբեմն զրկվում են խնդրառությունից՝ իրենք դառնալով իրենց խնդրի որոշիչ լրացումը: Գոյականով

արտահայտված ստորոգելիներին լրացնում են ոչ միայն որոշիչներ և հոսկացուցիչներ, այլ նաև բացահայտիչներ, այս դեպքում ստորոգելին մեկնաբանվում է ստորոգելիով: Գոյական ստորոգելիները կապակցվում են նաև դերանուն լրացումների, որոնցից ավելի հաճախ են գործածվում հարցական, ցուցական դերանունները:

Ի տարբերություն գոյականական մյուս անդամների՝ գոյական ստորոգելիները ի գորու են պահանջելու նաև բայական անդամի լրացումներ, այս դեպքում խնդիրները և պարագաները լրացնում են ամբողջ բաղադրյալ ստորոգյալին, որի բայագաղափարն արտահայտվում է հանգույցի միջոցով:

Ածական ստորոգելիով արտահայտված բաղադրյալ ստորոգյալները հայերենում կարևոր դեր են խաղում թե՛ պարզ, թե՛ բարդ նախադասությունների կառուցվածքում: Դրանք հաճախ հանդես են գալիս առանց լրացումների, սակայն կարող են կապակցվել խնդիրների, պարագաների և երկրորդական նախադասությունների՝ ստեղծելով ավելի հարուստ լեզվական արտահայտչաձևեր: Մինևույն ժամանակ դրանք կարող են հանդես գալ վերաբերական և միջանկյալ դիրքում՝ ներգրավելով լրացուցիչ իմաստային շերտեր, ինչը վկայում է դրանց կառուցվածքային և բովանդակային ճկունության մասին:

Դերանունով արտահայտված բաղադրյալ ստորոգյալները Վ. Միրադեղյանի գործերում ունեն ոչ միայն կառուցվածքային, այլև հոգեբանական ու իմաստաբանական դերակատարում: Դրանք ծառայում են որպես իրավիճակի վերագրման միջոց, հնարավորություն են տալիս խոսքային հակադրություն ստեղծելու, իսկ որոշ դեպքերում՝ հեզնական կամ փիլիսոփայական ենթատեքստ հաղորդելու:

Դերբայներով կազմված բաղադրյալ ստորոգյալները հայերենի շարահյուսական համակարգում առանձնանում են իրենց կապակցման ճկունությամբ՝ կրավորական իմաստների, չեզոք երանգների և լրացուցիչ խնդիրներ պահանջելու հնարավորության տեսանկյունից: Դրանց որոշ ձևեր կարող են գործածվել որպես գոյականներ, ինչի հետևանքով փոխվում են նրանց լրացումառության օրինաչափությունները:

Կապական կապակցությամբ արտահայտված բաղադրյալ ստորոգյալները երևան են բերել բարդ բառի բնորոշ առանձնահատկություններ:

Հեղինակի խոսքը պարզ է, հարուստ է արտահայտչական միջոցներով, բառապաշարի գրեթե բոլոր շերտերով, իսկ բաղադրյալ ստորոգյալի յուրահատուկ դրսևորումները հավելյալ երանգավորում են այդ արտահայտչականությունը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աբեղյան Մ., Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1965:
2. Աբրահամյան Ա., Հայերենի դերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը, Երևան, 1953:
3. Աղայան Էդ., Ընդհանուր և հայկական բառագիտություն, Երևան, 1984:
4. Առաքելյան Վ., Հայերենի շարահյուսություն, հատոր Ա, Երևան, 1958:
5. Ասատրյան Մ., Ժամանակակից հայոց լեզու, Երևան, 1987:
6. Բարսեղյան Հովհ., Արդի հայերենի բայի և խոնարհման տեսություն, Երևան, 1953:
7. Գյուլբուղայան Ս., Ժամանակակից հայոց լեզու, Երևան, 1988:
8. Իշխանյան Ռ., Արդի հայերենի շարահյուսություն, Պարզ նախադասություն, Երևան, 1986:
9. Խաչատրյան Գ., Գրաբարի վերլուծական բայերի արժույթը, Երևան, 2000:
10. Հարությունյան Հ., Կառավարումը ժամանակակից հայերենում, Երևան, 1983:
11. Պալասանյան Ստ., Քերականություն մայրենի լեզուի, Թիֆլիս, 1988:
12. Պառնասյան Ն., Ձևաբանական և բառա-քերականական համանիշները ժամանակակից հայերենում, Երևան, 1975:
13. Ջահուկյան Գ., Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Երևան, 1974:
14. Атаян Э. Предмет и основные понятия структурального синтаксиса, Ереван, 1968.
15. Балли Ш. Общая лингвистика и вопросы французского языка, издательство иностранной литературы, Москва, 1955.

СОЧЕТАЕМОСТЬ СОСТАВНОГО СКАЗУЕМОГО В ТВОРЕНИЯХ ВАНО СИРАДЕГЯНА

Багдасарян Ани

*Фонд “ВГУ”, “Армянский язык и литература”,
магистратура, 2-й курс*

*Руководитель магистерской диссертации:
кандидат филологических наук, доцент Л. Петросян*

Резюме

Ключевые слова: *существительное, прилагательное, число, местоимение, глагол, сложное сослагательное наклонение, сослагательное наклонение, простой, сложный*

В произведениях В. Сирадегяна наиболее часто встречаются составные именные и прилагательные сказуемые, затем – сказуемые, выраженные причастиями совершенного вида, а составные сказуемые с местоимениями и связкой встречаются относительно реже.

Именные сказуемые могут дополняться определителями, приложениями и пояснительными конструкциями, а в некоторых случаях требуют глагольных дополнений. Сказуемые, выраженные прилагательными, обладают структурной гибкостью, часто встречаются без дополнений, но могут связываться с аргументами, обстоятельствами и придаточными предложениями, тем самым обогащая выразительность речи.

THE COMBINABILITY OF COMPOUND PREDICATES IN THE WORKS OF VANO SIRADEGHYAN

Baghdasaryan Ani

*“VSU” Foundation, “Armenian Language and Literature”,
Master’s Degree, 2nd Year*

Academic Supervisor: L. Petrosyan,

Candidate of Philological Sciences, Associate Professor

Summary

Key words: *noun, adjective, number, pronoun, verb, complex subjunctive mood, subjunctive mood, simple, complex*

In V. Siradeghyan’s works, compound predicates, expressed by nouns and adjectives, are the most frequent, followed by those formed with the perfect participle, while pronoun-based and copulative compound predicates are relatively rare.

Nominal predicates can be supplemented by determiners, appositions, and explicators, and in some cases, they require verbal complements. Adjectival predicates exhibit structural flexibility, often appearing without complements but also combining with arguments, adverbials, and subordinate clauses, thereby enriching linguistic expression.

ԱՌՏԵՒՆ ՍՈՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՎԱՐՔԻ ՈՒ ԲԱՐՔԻ ԵՎ ԿԵՆՑԱՂԻ
ԱՆԴՐԱԴԱՐՁՆԵՐԸ ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐՈՒՄ

Բատիկյան Քրիստինե

*Գավառի պետական համալսարան,
«Հայոց լեզու և գրականություն», 4-րդ կուրս
Գիտական ղեկավար՝ ք. գ. թ., դոցենտ Լ. Ղոնջյան*

Հանգուցային բառեր. *հանելուկներ, առտնին սովորություններ, գյուղ, ընտանիք, կենցաղ, վարք ու բարք, ժողովուրդ, սովորություն, ավանդույթներ*

Հանելուկները վիպական ժանրի այլաբանական բնույթի ստեղծագործություններ են: Դրանք ժողովրդական բանահյուսության հնագույն տեսակներից են և հազարամյակի ընթացքում ժողովուրդների հոգևոր կյանքում կարևոր դեր են խաղացել: Ժամանակակից հասարակությունում հանելուկները շարունակում են պահպանել իրենց արժեքը՝ որպես մշակութային ժառանգության կարևոր մաս: Սակայն մարդկային բանականության զարգացման հետ մեկտեղ դրանք կորցրել են իրենց սկզբնական դերն ու արժեքը և հետզհետե վերածվել են զվարճախոսության սրամիտ միջոցների: Այդպիսին է հանելուկը արդի ժողովրդական բանահյուսության մեջ:

Ուսումնասիրությունը գրված է արդի գրականագիտության և բանագիտության մեջ ընդունված տեսական, մեթոդական սկզբունքով: Կիրառվել են պատմահամեմատական, համադրական և տիպաբանական մեթոդները՝ բերված փաստերը հիմնավորելու և ճշգրիտ եզրահանգումներ կատարելու համար:

Նյութական կյանքի երևույթներից ու առարկաներից բացի, ժողովրդական հանելուկներում իրենց արձագանքն են գտել նաև ժողովրդի առտնին սովորությունների, վարքի ու բարքի և կենցաղի առանձին կողմերը:

Այս բաժնի մեջ ամենաշատը ժողովրդի առօրյա աշխատանքային կենցաղին անդրադարձած ստեղծագործություններն են աչքի ընկնում: Դրանց մեծ մասը գեղջկական առտնին զբաղմունքների հետ է կապված:

Այսպես, օրինակ, հետևյալ հանելուկի միջոցով ամեն առավոտ գեղջկուհու կողմից թոնիրը վառելու սովորությունն է այլաբանորեն ներկայացված:

Ամեն ռավը ետ քու մերը

Կարմիր բոխչեն բաց արավ [2, 21]: (Անթեղած կրակ)

«Կարմիր բոխչեն» բացելու պատկերով արտահայտվել է նույն միջավայրին հատուկ մի ուրիշ կենցաղային գծի՝ թոնրում անթեղած կրակը բացելու երևույթը:

Կամ՝

Ավլեցի, ըստրկեցի մաքրել, օսկի պունը տնկեցի: (Արև)

Այս հանելուկում արտացոլվել է գեղջկական առօրյա կենցաղից մի պատահուկ. գյուղերում թոնրով հաց թխելուց հետո, երբ տունը մաքրում էին, արդեն

կեսօր էր դառնում, և դա այն ժամն էր, երբ արևը երդիկից ուղղահայաց ճառագայթներով ներս էր ընկնում, որը հանելուկում ստացել է ոսկե սյան այլաբանական պատկեր:

Օրվա երկրորդ կեսին գեղջկուհու կողմից կատարվող աշխատանքի՝ մանել-գործելու արտահայտությունն է պահպանվել ճախարակի վերաբերյալ հետևյալ հանելուկում:

Ավլեցի, ժողվեցի, կուզ Կարապետը նստեցուցի:

Հետևյալ հանելուկները ևս գյուղական առօրյայի առանձին պատկերներ են.

Մի մաղ չորթան քշերը տրի տուռը,

Առավոտ էլա՝ չկար:

Իրիկունը մաղ մը տաշեղ երդիկը դրի,

Առավոտուն էլա, որ չկա [2, 9]: (Աստղեր)

Հայաստանի մի քանի շրջաններում ամառվա գիշերներին, երբ ներսում օդ չէր լինում շնչելու, մեծ մասամբ քնում էին տանիքներԻ վրա: Այս սովորությունը ևս իր արձագանքն է գտել ներքոհիշյալ հանելուկի մեջ.

Երկու աղբեր ջուխտ կովան,

Ջուխտն էլ իրար հետ փռվան:

Կենցաղային մեկ այլ սովորույթ ևս ուշագրավ է. պահարանների փոխարեն Հայաստանում իրերն ու մթերքները հաճախ պահում էին կճուճների ու կարասների մեջ: Այս սովորույթի արձագանքն է հետևյալ հանելուկը.

Էռտուն երկու ուրագ՝

Մեկ պտուկ կճուճ [2, 96]: (Բերան և ատամներ)

Մեկ այլ սովորության համաձայն Նարեկը, Ավետարանը և այլ սուրբ գրքեր աշխարհիկ բովանդակություն ունեցող գրքերից զատում էին և պահում էին տան փոքրիկ որմնախորշում, որոնց վրա փռում էին ասեղնագործ խաչագարդ պաստառիկներ: Այս երևույթի արձագանքը ընկույզի վերաբերյալ հետևյալ հանելուկում է պահպանվել.

Մութ պատուհան

Մեջն Ավետարան:

Տնային սպասեղենը նույնպես պահում էին նմանատիպ որմնախորշերում, որի արձագանքն է հետևյալ հանելուկը.

Պիծի (փոքր) պտրհան,

Պղնձավ լիզը: (Նույնը)

Գյուղերում, և հատկապես ունեգուրկ ընտանիքներում, որտեղ այլուրը քիչ էր և այն պարկով էին պահում, սովորական է եղել գրտնակը այլուրով լիքը պարկի մեջ դնելը: Ըստ երևույթին այդ պատկերի այլաբանական նկարագրությունն է դարձել փշատի վերաբերյալ տարածված հանելուկը:

Պարկըմ այլուր, մեջը գրդնակ:

Կանայք սովորություն ունեին լուցկին պահել ծոցում, որի արձագանքը եղել է հետևյալ հանելուկը:

Թխկոց, շիկոց, շրխկոց,

Ընդից էսն բալա բոց,

Քու մամ թալեց ուրան ծոց [2,157]: (Լուցկի)

Հայ գեղջուկը տարին երկու անգամ գլուխը խուզելու սովորություն ուներ: Ահա այդ սովորության արձագանքը.

Չայիր մը ունիմ,

Ոչ կըջրվի, ոչ կըցանվի,

Տարին երկու անգամ կըհնձվի [2,89]: (Գլուխ և մագեր)

Աշուղները, արևելքում և հատկապես Հայաստանում, ժողովրդական կյանքում մեծ դեր են խաղացել: Մասնավորապես նրանց կազմակերպած մրցահանդեսները մեծ ազդեցություն են թողել ժողովրդի երևակայության վրա:

Երկու աշըղ ասա-ասա (ասել-խոսել),

Կերթան կգան՝ բասա-բասա (մրցել) [2,17]: (Գիշեր-ցերեկ)

Այս հանելուկի մեջ անընդհատ իրար դեմ-դիմաց գնացող ու եկող գույգ աշուղների մրցության շարժուն պատկերը փոխաբերվել է գիշերվա և ցերեկվա հետ:

Ժողովրդի առօրյա սովորությունների պատկերավոր վերարտադրումից բացի, հանելուկներում իրենց արտացոլումն են գտել նաև կենցաղային մի շարք իրեր ու առարկաներ, զգեստներ և ուտելիքներ, որոնց մեծ մասը հայ գյուղացու առտնին գործածության իրերն են, նրա աննդի կարևոր միջոցները, հագուստն ու կապուստը:

Օրինակ, հանելուկներում հաճախ են հանդիպում շերեփ, կճուճ, գդալ, թաս, քրեղան, թավա, պղինձ, կոտիկ, և այլն. առտնին գործածության իրերից՝ սալա, մաղ, գրտնակ, ակիշ, դաստառակ, խնոցի, մում, լուցկի, ճրագ և այլն. զգեստներից՝ քոլոզ, յափնջի, շիլա շապիկ, գոզոց, տրեխ, գուլպա, փիլոն և այլն. ուտելիքներից՝ մածուն, խորոված, յուղ, կարագ, տոլմա, գաթա, լո՛, բոքոն, խավիժ, աղանձ և այլն:

Հանելուկները, բացի նյութական կենցաղի հետ կապված սովորություններից, անդրադարձել են նաև ժողովրդի կենսափորձով հաստատված մի շարք բարոյական սկզբունքների, բարոյական կյանքի երևույթների, որոնք հայկական նահապետական միջավայրին են բնորոշ եղել: Այսպես, օրինակ՝ «հարսնություն» կոչված սովորությունը եղել է հայ նահապետական ընտանեկան հարաբերությունների առանձնահատուկ գծերից մեկը, որն իր արտահայտությունն է գտել ժողովրդական հանելուկներում:

Ցերեկը նորահարս (խանում),

Գիշերը դարավաշ (աղախին) [3, 64]:

Զուգված անկողնի ծալքին լուռ ու անշարժ նստելը նահապետական կենցաղում նորահարսի համանման վիճակի հետ է համեմատվել: Միննույն բարոյական նորմերի համաձայն՝ այդ նորահարսը իրենց տուն եկող-գնացող պատկառելի

տարիքի հասած մարդկանց ձեռքը, ի նշան ողջույնի, պարտավոր էր լուռ ու խոնարհ համբուրել: Այդ երևույթը ևս պահպանվել է ժողովրդական հանելուկներում:

Հարս մը ունիմ, որ եկող գնացողի ձեռքը կը պագե [2,169]: (Դռան բռնակ)

Հին բարքերի հետ առնչվող մեկ այլ սովորույթի համաձայն, որ, հավանաբար, մեռելների պաշտամունքի հետ է կապված, հուղարկավորության ժամանակ, հուղարկաթափորին հանդիպող տղամարդիկ պետք է կանգնեին և գլխարկը հանեին, սպասեին այնքան ժամանակ, մինչև թափորը կանցներ: Այդ երևույթին է վերաբերում հետևյալ հանելուկնը.

Էն ո՞վ է, վուր փողոցումս անցկացնելիս,

Դիփունքը (բուրբը) նրա համա գրակ ին վի կալնում [1, 78]:

Հանելուկների մեջ արտացոլված մարդու բարոյականության հարցերը պայմանականորեն բաժանվում են երեք խմբի՝ ընտանեկան, հասարակական և կենցաղային:

Առաջին խմբի մեջ ընտանիքի տարբեր անդամների գնահատականն ու նրանց միջև եղած փոխհարաբերությունն է տրվում:

Օրինակ՝ կնոջ մասին ասվող մի հանելուկում կնոջն ապրանք համարելու կարծիքը բացառվում է.

Օտխելու չէ ու փոխելու չէ [3, 68]: (Կին)

Այս հանելուկը վկայում է իրական կյանքում կնոջն ապրանք համարելու բարոյական հայացքի մասին, որի դեմ էլ ուղղված է հանելուկը:

Ներքոհիշյալ հանելուկում տրված է աղջիկ երեխայի գնահատականը՝ ըստ ամուսնու և ծնողների բարոյական տեսակետի:

Հոր համար լուսին է,

Մորը՝ արեգակ,

Օտարին՝ քամու բերած բուրդ [2, 87]: (Աղջիկ)

Ուշագրավ է այն փաստը, որ ժողովրդական աշխարհայացքով աղջիկ երեխան հոր և մոր համար նույն արժեքը չունի: Եթե մոր համար աղջիկը գեղեցկության և ջերմության խորհրդանիշ է՝ արեգակ, ապա հոր համար նա լուսին է, թեև գեղեցիկ է և փայլուն, բայց սակավաջերմությամբ, իսկ օտարի գնահատմամբ, որը հավանաբար ամուսինն է, աղջիկը, այսինքն կինը պատրաստի ձեռք բերված բարիք է:

Արու զավակի վերաբերյալ նման մի ավանդական հայացքի արդյունք է ներքոհիշյալ հանելուկը.

Էն ի՞նչ պտուղ է.

Քանի խակ է՝ քաղցր է,

Իփոր (երբ որ) հասնում է՝ դառը [2,87]: (Որդի)

Այս հանելուկի մեջ ընգծված է արու զավակի ծնողներին պատճառած դառնությունն ու հաճույքը:

Ընտանիքի տարբեր անդամների, մասնավորապես հարազատ եղբայրների մեջ եղած անհամերաշխության բարքերի արձագանքն է ներքոհիշյալ հանելուկը.

Հինգ ախպեր են,

Հինգ լե գիրարու (միմյանց) տեղ կը փորեն [1,80]:(Գուլպայի ճաղեր)

Հանելուկների հաջորդ խումբը շոշափում է հասարակական արժեք ներկայացնող հարցեր: Դրանցից առաջին հերթին աչքի են ընկնում աշխատանքի ժողովրդական բարոյագիտական ըմբռումները մարմնավորող հանելուկները: Այս ըմբռման համաձայն՝ աշխատասիրությունն ու աշխատանքը վսեմացնում, գեղեցկացնում են մարդուն:

Ահա գութանի խոփի վերաբերյալ հետևյալ հանելուկում էլ պատկերավոր կերպով մարմնավորվել է այդ հասկացողությունը:

Մեզ մի հարս ունինք.

Գնում ա չանք (մինչև) իրիկուն խողը տալի գլխին,

Իրիկունն ամենից սիրուն ա գալիս [1, 123]: (Գութանի խոփ)

«Այստեղ հողը գլխին շաղ տվող սգավոր հարսի գեղեցկանալու այլաբանական պատկերի մեջ մի կողմից ուղղակի շեշտվում է վարող խոփի փայլը, մյուս կողմից փոխաբերաբար ընդգծվում աշխատանքի ու աշխատասիրության գեղեցկացնող ու վսեմացնող հատկությունը» [1, 82]:

Մանգաղի վերաբերյալ հետևյալ հանելուկը աշխատանքի նույն ըմբռման արտահայտություններից է.

Մեզ մինն օսինք,

Ամիռնը շողշողում ա,

Ձմեռը ժընգտում [2,126]: (Մանգաղ)

Գութանի մասին ասվող հետևյալ հանելուկը նույնպես աշխատանքի ժողովրդական գնահատման իմաստով առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում: Ահա՝

Էն հի՞նչ ա.

Օռո կը եշի (նայել),

Դյուզ (ուղիղ) կը քինա [2, 123]:

Հայ ժողովրդական բանահյուսության մեջ գութանը աշխարհաշեն աշխատանքի խորհրդանիշն էր, և դա արտացոլվել է վերոհիշյալ հանելուկի մեջ՝ միայն բարոյագիտական առումով:

Մի կողմից այստեղ ուղղակի կերպով ընդգծվել են գութանի արտաքին ծուռ տեսքը և ուղիղ փոսեր բացելու հատկությունը, իսկ մյուս կողմից, որն ավելի էական է, գութանավորի ազնվության և ուղղամտության ակնարկն է այստեղ, որն էլ հաճախ տեսնում ենք ժողովրդական երգերում: Առանձնակի ուշադրության է արժանի նաև այն հանգամանքը, որ ժողովրդական հանելուկների մեջ աշխատանքի բարոյական ըմբռնումը երկրագործական այս կամ այն գործիքի հետ է

առնչվում և առանձնապես նրանց, որոնք հատկանշական են երկրագործությանը՝ իբրև տարածված զբաղմունքի:

Հանելուկներ մեջ արտացոլվել են նաև այնպիսի մարդկային հատկանիշներ, ինչպիսիք են համեստությունը, ընչաքաղցությունը, գոռոզամտությունը և այլն:

Օրինակ՝ ստամոքսի մասին մի հանելուկում ակնարկվում է ընչամոլության մասին:

Քանի լցես՝ չի լցվի [2, 104]: (Ստամոքս)

Մեկ այլ հանելուկի մեջ կարծես լսվում է կյանքում տիրող անարդար բարքերի դեմ երբեմնի հասարակական բարձր դիրք ու տեղ ունեցող և հետագայում ցածր աստիճանի հասած անհատի բողոքը:

Բարձր լեռան (լեռից) էկեր եմ,

Լռլռոզ (երկար) գտակ դրիր եմ,

Անհարկի տեղ նստիր եմ [2, 163]: (Ավել)

Ավելին վերաբերող մեկ այլ հանելուկ գրառել ենք Գեղարքունիքի մարզի Կարմիրգյուղ համայնքից.

Ըստե քըստ, ընդե քըստ,

Դռան հեղեվ նըստ¹:

Այստեղ ներկայացված է կենցաղային իրերից ավելի գործառույթների և այն դռան հետևում դնելու հայ կնոջ սովորույթը:

Հանելուկների երրորդ խումբը կենցաղային արժեք ու նշանակություն ունեցող բարոյական պատկերացումներ և հասկացողություններ է վերարտադրում: Դրանց մեջ ժողովրդի բարոյական սկզբունքներից շեղվող ամեն մի երևույթ դատապարտվում է: Օրինակ՝ ծուլությունը ժողովրդի հայացքով մարդու բացասական հատկություններից մեկն է, որ քամահրանքի է ենթարկվում և ծաղրվում է: Նման պատկերացումների արգասիք են հետևյալ հանելուկները.

Դուն պուպուզ, դուն պուպուզ,

Աղեկամե՛ռ (սևավոր), խերիք պուպուզ [2, 150]: (Ջրի փարչ)

Ինքը իպիշ (հիմար),

Քիթը պիպիշ (սիրուն),

Գոթի (ծույլ) կնկան

Ամանլվիչք: (Կատու)

Առաջին հանելուկի մեջ դատապարտվում են անգործությունն ու ծուլությունը, իսկ երկրորդի մեջ ծաղրի է ենթարկվում ծույլ տանտիկինը, որն ամանները չի լվանում, և դրանք հանձնում է կատուների տնօրինությանը:

Ժողովրդի պատկերացմամբ նա, ով հայելի շատ է սիրում և դռան շատ է նա-

¹ Անձն. հավաք., Գեղարքունիքի մարզ, գյուղ Կարմիրգյուղ, 2024:

յում, անբարոյական է: Այս վերաբերմունքի արտացոլանքն ենք տեսնում հետևյալ ստեղծագործության մեջ.

Էս կուռը թախտ ա,

Էն կուռը թախտ ա,

Մեջը դալ ու դախպա [1,81]:

Ժողովրդի հայացքով մարդկային լեզուն ամենամեծ բարիքներ գործելու և ահավոր չարիքներ պատճառելու է ընդունակ:

Լեզվի չար հատկության մասին է խոսվում հետևյալ հանելուկում.

Սուր ալ չիմ, թուր ալ չիմ,

Շեմ (և) կը սևցնում, հեմ կը մեռցնում [2,99]: (Լեզու)

Հանելուկներում անդրադարձված կենցաղային սովորություններն ավելի շատ ունեն նյութական բովանդակություն և կապվում են ժողովրդի նյութական կյանքի հետ, կազմում են նրա կեցության մի մասը, իսկ բարոյական հասկացությունները ծագել են կեցության հիման վրա, բայց առնչվում են հասարակական գիտակցության ձևերի հետ և կազմում են նրանց բաղկացուցիչ մասը:

Ընդ որում կենցաղային սովորությունների մեծ մասը, դրանց հետ առնչվող բազմաթիվ առարկաներն ու իրերը գեղջկական առօրյայի հետ են կապված: Այնինչ բարոյական գաղափարներն ու հասկացողությունները ավելի ընդհանուր և համաժողովրդական բնույթ ունեն և հասկանալի են ժողովրդի տարբեր հատվածների հավասարապես, և կախում չունեն նրանց տնտեսական զբաղմունքների ձևերից:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Հարությունյան Ս. Բ., Հայ ժողովրդական հանելուկներ, Հայկական ՍՍՌ ԳԱ հրատ., Երևան, 1960, 170 էջ:
2. Հարությունյան Ս. Բ., Հայ ժողովրդական հանելուկներ, Հայկական ՍՍՌ ԳԱ հրատ., Երևան, 1965, 428 էջ:
3. Տեր-Աղեքսանդրյան Գ., Թիֆլիսեցոց մտավոր կյանքը, Թիֆլիս, Յովհաննես Մարտիրոսյանցի տպարան, 1885, 456 էջ:

ОТРАЖЕНИЕ НАЦИОНАЛЬНЫХ ПРИВЫЧЕК, ПОВЕДЕНИЯ, МАНЕР И ОБРАЗА ЖИЗНИ В ЗАГАДКАХ

Батикян Кристине

Гаварский государственный университет,

«Армянский язык и литература», 4-й курс

Научный руководитель:

кандидат филологических наук, доцент Л. Греджян

Резюме

Ключевые слова: *загадки, традиционные обычаи, деревня, семья, образ жизни, поведение и нравы, народ, обычаи, традиции*

Загадки – аллегорические произведения романного жанра. Они являются одним из древнейших видов фольклора и на протяжении тысячелетий играли важную роль в духовной жизни народов. В современном обществе загадки продолжают сохранять свою ценность как важная часть культурного наследия. Однако по мере развития человеческого интеллекта они утратили свою первоначальную роль и значение и постепенно превратились в остроумные средства развлечения.

REFLECTIONS OF NATIONAL HABITS, BEHAVIOR, MANNERS AND LIFESTYLE IN RIDDLES

Batikyan Christine

Gavar State University,

“Armenian Language and Literature,” 4th Year

Academic Supervisor: L. Ghrejyan,

Candidate of Philological Sciences, Associate Professor

Summary

Key words: *riddles, traditional customs, village, family, lifestyle, behavior and manners, people, custom, traditions*

Riddles are allegorical works of the novel genre. They are one of the oldest types of folklore, that have played a crucial role in the spiritual life of peoples for thousands of years. In modern society riddles continue to retain their value as an important part of cultural heritage. However, with the development of human intellect, they have lost their original function and meaning, gradually transforming into witty instruments of entertainment. This is the mystery of modern folklore.

**ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՄԱՆԵԿԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ
ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ
ԱՆԳԼԻԱԽՈՍ ՀԱՆՐՈՒԹՅԱՆԸ**

Գեորգյան Նանե

*«ՎՊՀ» հիմնադրամ,
«Հայոց լեզու և գրականություն»,
մագիստրատուրա, 1-ին կուրս
Գիտական ղեկավար՝ ք. գ. թ., դոցենտ Լ. Պետրոսյան*

Հանգուցային բառեր. մշակույթ, մշակութային բառ, լեզվաերկրագիտություն, հարսանիք, ամուսնություն, մասնակիցներ, ավանդական-պահպանողական բառարմատներ

Աշխատանքի արդիականությունը: Հայերենը, չլինելով տարածված և միջազգային լեզու, օտար հանրությանը գրեթե չի հետաքրքրել մանավանդ խորհրդային տարիներին, երբ նկատվում էին այնպիսի իրողություններ, ինչպիսին էին հայերի՝ մաքուր հայերենով չխոսելը՝ բառապաշարում մեծ տեղ հատկացնելով ռուսերենին, իսկ մի սովոր գանգվածի կողմից էլ, ժամանակակիցների հավաստամբ, նույնիսկ հայերեն բառերի՝ ռուսերենին բնորոշ առոգանությամբ, շեշտով արտասանելը: Թերևս հետաքրքրում էր միայն պատմաբաններին՝ հատկապես ցեղասպանության պատմության հետ կապված միջազգային արձագանքներից հետո: Պատկերը փոխվեց Խորհրդային Միության փլուզումից հետո. մեծացավ մանավանդ սփյուռքահայության հետաքրքրությունը արևելահայերենի նկատմամբ, ապա գրավեց զբոսաշրջիկներին՝ մշակութային հսկայական ժառանգություն ունենալու տեսանկյունից, կրթության ու գիտության մեջ հայաստանյան փորձն ու որակը գնահատող ուսանողներին և գանազան պատճառներով (ամուսնություն, ընտանիք, ճգնաժամային՝ քաղաքական կամ ռազմական հանգամանքներ) Հայաստան տեղափոխվողներին և ապաստանողներին: Թվարկվածներից բոլորին (խոսքը հասուն տարիքի մարդկանց մասին է) հայերենի միայն նվազագույն հաղորդակցական մակարդակի իմացությունը կամ քերականական կառուցվածքների սերտումը բավարար չէ. նրանք պետք է գիտակցեն, որ տարբեր մշակույթներում առկա միևնույն առարկան կամ իրողությունը տվյալ լեզվակրի կողմից կարող է ընկալվել տարբեր կերպ, արժանանալ տարբեր վերաբերմունքների: Ահա այս հարցի արդիականության սահմաններում էլ այժմ ՀՀ ԿԳՄՍ նախարարությունը նախաձեռնում է հայերենի՝ որպես օտար լեզվի դասավանդման չափորոշչային պահանջների ծրագիր:

Նպատակը: Մեր առաջադիր նպատակն է հայերենի դասավանդման նոր փորձի ներդրումը:

Ինդիքները: Ա) Ուսումնասիրել լեզվաերկրագիտական բնույթի հայ և այլազգի լեզվաբան-մանկավարժների տեսությունները, բ) առանձնացնել հիմնական մշակութային ոլորտները, որտեղ կարող են լինել հնարավոր տարբերու-

թյուններ, գ) այդ տարբերություններից անդրադառնալ հարսանեկան արարողության մասնակիցների մշակութային տարբերությունների ուսուցմանը, դ) կատարել աշխատանքից բխող եզրահանգումներ:

Գիրատած մեթոդները նկարագրական, զուգադրական:

Լեզվաերկրագիտությունը՝ որպես լեզվադիդակտիկայի առանձին ճյուղ, հայ բանասիրության մեջ քիչ է ուսումնասիրվել, կարելի է ասել՝ գրեթե չի ուսումնասիրվել, թերևս լիակատար կարելի է համարել «լեզու և գենդեր» համատեքստում քննված իրադրությունները՝ **Ա. Կնյազյանի** հեղիակությամբ. «Գենդերը բացահայտում է հանրամշակութային կարծրատիպերի, փոփոխվող դերերի, կարգավիճակների, վարքի տարատեսակ դրսևորումների և զգայական համակարգերի տարբերությունները» [3, 5]: Չնայած դրան՝ լեզվի ու մշակույթի կապը պարբերաբար քննվել է, նշվել է առանց մշակույթի իմացության լեզվին համակողմանիորեն տիրապետել չկարողանալու իրողության մասին, օրինակ՝ **Ա. Մարգարյանը** իր «Ընդհանուր և հայ լեզվաբանություն» գրքում՝ լեզվաերկրագիտությանը մի առիթով անդրադառնալիս, զավեշտական բան է պատմում. «գյումրեցի ամուսինների երկխոսությունը ռուս ընտանիքի հետ ծովափին. – «Какой огурычик ваш муж!». – Ի՞նչ ըսավ... – Ըսավ՝ ինչ խիյար ամուսին ունես»: Անգամ գրական լեզվի վարունգ բառով փոխարինելիս՝ արտահայտության բացասական գնահատականը չի վերանում» [5, 45]: Ամեն դեպքում, հայ լեզվաբանության մեջ լեզվաերկրագիտական դրույթները ծավալուն գործնական հիմնավորումներ չեն ստացել: Լեզվաերկրագիտության կարևորությունը գիտակցվել է դեռ շատ վաղուց: Ոլորտն ուսումնասիրողներից **Մ. Կարապետյանը** այս հարցի առնչությամբ իր մի հոդվածում տալիս է պատմական ակնարկ. «Դեռևս IV դարում սխոլաստիկական ուղղության ներկայացուցիչները փաստում էին, որ էթե «չիմանաս կյանքը, չես իմանա նաև լեզուն», ուստի լատիներեն ուսուցանելիս նրանք նկարագրում էին Ոսկե և Արծաթե դարերի գրականության ստեղծման պատմական և սոցիալական նախադրյալները: Մխոլաստիկների մեկնաբանություններն ընդարձակ էին և ընդգրկում էին տեղեկություններ ամենատարբեր ոլորտներից՝ սկսած աշխարհագրությունից մինչև սոցիալական վարքագիծ: Միայն XIX դարի վերջին և XX դարում է, որ կարևորագույն տեղ է հատկացվում այն երկրի նյութական և հոգևոր կյանքի հետ ծանոթացմանը, որի լեզուն ուսումնասիրվում է» [1, 107]: Ճիշտ է ընտրված «ծանոթացում» բառը, որը օտարախոսին (մեր դեպքում՝ անգլիախոս) հայերեն դասավանդելու փուլերից առաջինն է: Այս փուլում չի կարևորվում ոչ լեզվակրի կողմից հայերեն հնչյունների անսխալ արտասանությունը. սա բանավոր խոսքի, ընդհանուր բառագիտության և ուղղախոսության ուսուցում չէ, որը, համաձայն մեր առաջարկության, նախատեսվում է երկրորդ փուլում, երրորդ փուլով նախատեսվում է անցում կատարել շարահյուսությանը, վերջում՝ ուղղագրությանը. էթե սկսնակը չտիրապետի տվյալ երկրի մշակույթին (մեր դեպքում՝ հայկական), չկարողանա ճիշտ հասկանալ բառերի իմաստը, ճիշտ արտասանել դրանք, չի կարողանա նաև ճիշտ գրել:

Մշակութային բառերի սերտումը կարևորվում է նրանով, որ երբեմն ուսումնասիրվող լեզվի բառերը ենթագիտակցորեն ընկալվում են մայրենի լեզվի բառերի

իմաստային դաշտով, ինչը կարող է հանգեցնել սխալ մեկնաբանությունների: Լեզվաերկրագիտական տեսության առաջին հիմնադիրներ **Ե. Վերեչագինը** և **Վ. Կոստոմարովը** իրական դեպքերի վրա հիմնված օրինակներ են բերում, բավարարվենք դրանցից մեկով. «Ռուսաց լեզվի «գայլ» բառը ունի բացասական իմաստ՝ կապված նենգության և վտանգավորության հետ: Սակայն, երբ ռուսական դպրոցում դասի ժամանակ աշակերտները (դրդական ծագմամբ) պետք է ներկայացնեին Կոիլովի «Գայլը և գառը» առակը, նրանք բոլորը գերադասեցին կարդալ գայլի դերը, քանի որ դրդական մշակույթում գայլն ընկալվում է որպես ուժեղ, խելացի, քաջ ու վեհ կերպար: Այս դեպքը վկայում է այն մասին, որ որոշ բառեր տարբեր լեզուներում կարող են ունենալ հակառակ ֆոնային նշանակություններ» [6, 87]: Սեպիր Ուորֆի լեզվական հարաբերականության վարկածն էլ, ինչպես հայտնի է, ենթադրում է, որ լեզվի կառուցվածքն ազդում է իր խոսողների աշխարհայացքի կամ ճանաչողության վրա, և ուստի մարդկանց ընկալումները հարաբերական են նրանց խոսակցական լեզվին: Բայց «դա չի նշանակում, որ մի մշակույթի մարդիկ չեն կարող մտածել այնպիսի առարկաների մասին, որոնց համար մեկ այլ մշակույթն առատ բառապաշար է օգտագործում (ձյուն, ուղտ...): Ավելի շուտ, մեր որոշակի հասկացությունների կամ օբյեկտների մասին չմտածելու յուրահատկությունը կարող է նշանակել, որ նման տարբերություններն ավելի քիչ կարևոր են մեր մշակույթի համար» [9, 161]: Մշակութային առանձին բառեր ու արտահայտություններ երբեմն այնքան տիպական են, որ կարելի է համեմատել դարձվածային միավորների հետ¹:

Հայ-անգլիական մշակութային տարբերությունները զանազան են՝ հարսանեկան-ծիսական բառապաշար, գունանուններ, միևնույն կառույցների ճարտարապետական նախագծեր, բնական 4 տարրերի ընկալման ընդհանուր օրինաչափություններ և այլն: Դրանցից այս հոդվածում անդրադառնալու ենք հարսանեկան արարողության մասնակիցների մշակութային տարբերություններին, նաև հարսանիք-ամուսնություն բառագույզին՝ մի բան, որ հաճախ շփոթելու աստիճան տարածվածություն է գտել:

Wedding / հարսանիք /harsanik/: Սա արարողություն է, միջոցառում, որի ընթացքում գույզը պաշտոնապես ամուսնանում է: Wed նշանակում է «ամուսնանալ»: Հին անգլերենում weddian բայը կապված էր «խոստում կամ գրավ տալու» կամ «պայմանագիր կնքելու» գաղափարի հետ²: Գերմանական այլ լեզուներում իմաստը ավելի մոտ է մնացել՝ «գրավադրմանը» (օրինակ՝ գերմաներեն Wette «խաղադրույք»), սրա «ամուսնանալու» իմաստը հատուկ է անգլերենին, բայց

¹ Լ. Ի. Ռոյզենզոնի միտքը՝ «այս կամ այն ժողովրդի կյանքի և կենցաղի ինքնատիպությունը առավելագույնս արտացոլվում է դարձվածաբանության մեջ, որը խտացնում է տվյալ ժողովրդի հոգեբանության և մշակույթի ողջ բարդ համակարգը, նրա պատկերային մտածողության անկրկնելի կերպը» [7, 13], միանշանակ պրոյեկտվում է նաև երկրագիտական նշանակության բառերի վրա:

² Անգլերեն բառերի բոլոր արմատները ստուգաբանված են <https://www.etymonline.com/> բառարանային կայքէջով (հասանելի է՝ 25.03.2025):

միջին անգլերենում այն դեռ կարող է նշանակել «գրագ գալ»: Կարևոր է հասկանալ նաև, թե ինչպես են կապվում **գրավ** (*pledge*) և **պայմանագիր** (*contract/agreement*) բառերը: Դրանք միանշանակ նույնը չեն, բայց պատմականորեն կապվում են: Հին ժամանակներում, երբ մարդիկ պայմանագիր էին կնքում, հաճախ պահանջվում էր ինչ-որ **գրավ** կամ **երաշխիք**, որը ցույց էր տալիս, որ նրանք լուրջ են տրամադրված: Մա կարող էր լինել՝

- 1) Գույքային գրավ (օրինակ՝ հող, գումար, զարդեր),
- 2) Խոստման գրավ (երդում, խոստում, երդվյալ պարտավորություն),
- 3) Ամուսնության դեպքում՝ օժիտ կամ հարսանիքի հետ կապված վճարներ:

Իսկ հայերեն «հարսանիք» բառի հիմքում հենց «հարսն»՝ «ամուսնացող աղջիկ» նշանակող արմատն է: Թեև «գրավ» բառը չկա բառահիմքում, սակայն հայոց շրջանում արմատացած է օժիտի գաղափարը: Ժամանակները փոխվել են, հայերը հիմա այնքան էլ ավանդապաշտ չեն, ինչպիսին նախկինում էին, բայց, միևնույնն է, օժիտի և ամուսնության ինստիտուտի կարևորությունը դեռ կենսունակ է՝ հատկապես գյուղական համայնքներում. «Հայերի ավանդության, առավելապես գյուղական հասարակության մեջ ամուսնությունը պարտադիր, հարգի ամենանշանակալից իրադարձություններից էր, քանզի յուրաքանչյուր ամուսնություն, նոր ընտանիքի հիմք դառնալով, ենթադրում է նոր մարդու աշխարհ գալը՝ սերնդաճը: Ամուրի մնալը ժողովուրդը դիտում էր իբրև բացասական երևույթ և խստիվ դատապարտում: Բացառություն կարող էին լինել միայն ֆիզիկական և մտավոր թերություններ ունեցող անձինք» [4, 11]: Օժիտը՝ որպես կապիտալ, առաջացել է Կիլիկյան ժամանակաշրջանում, որի մասին իմանում ենք Սմբատ Սպարապետի «Դատաստանագրքի» «Վասն այրուկնաց ամուսնութեան» («Ամուսինների ամուսնության մասին») երկից, որում հիշատակվում են օժիտի այնպիսի ձևեր, որպիսին ընտանի կենդանիներն ու անասուններն էին: Հատկանշական է, որ եթե կինն է բերել կենդանիներին՝ որպես օժիտ, ապա ամուսնալուծվելիս կարող է հետ վերցնել, սակայն ամուսնության ընթացքում դրանցից ծնված կենդանիները բաժանվելու էին հավասարապես» [8, 84]: Օժիտի մնացած տեսակները՝ կահկարասի, անկողնային պարագաներ, տուն, փող և այլն, դարձյալ կենսունակ են, իսկ անգլիական միջավայրում ընդունված հիմնական միջոցը փողն է՝ հազարավոր ֆունտ ստեռլինգներ:

Marriage / ամուսնություն [amusnut'yun]: Մա ամուսնական կապն է, որը սկսվում է հարսանիքից հետո, վերաբերում է զույգի համատեղ կյանքին: Անգլերենում marry արմատը անորոշ ծագում ունի. «*mari՝ երիտասարդ կին, PIE *mari-, *mori- «երիտասարդ կին՝ արամբի, պարզապես երիտասարդ կին», ազգակից է այս արմատին՝ *meryo- «երիտասարդ տղամարդ» (սանսկրիտ՝ marya- «երիտասարդ տղամարդ»): Հայերենում ևս «ամուսին» բառի բացատրությունը տրված է այդպես՝ «կնոջ մարդը կամ մարդու կինը», այն բնիկ հայկական ծագում ունի և նշանակում է «միասին մեծացած» [2, 165]: Ստացվում է, որ անգլիական մշակույթում արտացոլվում է պատմականորեն երիտասարդ տարիքում ամուսնանալու տարածված պրակտիկան, իսկ հայկական մշակույթում՝ միասին համերաշխ ու

ներդաշնակ ապրելու (մինչև խոր ծերություն) գաղափարը: Դեռ հնուց հայ հասարակությունը, անկախ ամուսնալուծության պատճառից, այն որակում էր «ամոթ», այդ պատճառով էլ շատերը, անտեսելով իրենց անտանելի ապրումները ամուսնական միջավայրում, չէին ամուսնալուծվում, ապրում էին մինչև խոր ծերություն: Ներկայում, ինչպես վերը նշվեց, ամուսնության ինստիտուտը մեծամասամբ գյուղերում է կենսունակ, և Հայաստանում ևս ժամանակակից մշակութային փոփոխությունների հետևանքով երիտասարդ սերունդն ավելի շատ կարևորում է թեկուզև ժամանակավոր, բայց երջանիկ համատեղ կյանքը՝ փոխելով ավանդական հայացքները ամուսնության վերաբերյալ:

Bride / հարսնացու [harsnatsu]: Անչափ հետաքրքիր է այն իրողությունը, որ հայերը ավելի պահպանողական ազգ են, քան անգլիացիները³, բայց պահպանողականությունը հայերեն արմատների մեջ չի երևում, փոխարենը երևում է գուգահեռ քննվող լեզվում: Այսպես՝ bride բառի հիմքում «*bhreu- արմատն է, որը կապվում է ուտեստներ եփելու և գարեջուր պատրաստելու հետ, քանի որ դա, հավանաբար, հարսի գործն էր»: Հարսնացու բառի հիմքում էլ, ինչպես վերև է նշվել, «հարսն» արմատն է, որտեղ կենցաղային նմանօրինակ աշխատանքների կատարման պարտավորության մասին ոչ մի ակնարկ չկա, բայց փոխարենը հարսի մասին այդ պատկերացումները կան, ընդ որում՝ շատ խիստ արտահայտված:

Groom / փեսա [p'esə]: Անգլերենում սա անհայտ ծագման բառ է՝ առանց որոշակի ցեղակիցների այլ գերմանական լեզուներում: Ենթադրվում է, որ նշանակել է «տղամարդ ծառա, սպասավոր, անչափահաս սպա թագավորական կամ ազնվական տնային տնտեսությունում, որը պաշտոնով ավելի բարձր է, քան մանկլավիկը»: Գրեթե նույն բացատրությունն է տալիս Հր. Աճառյանը հայերեն «փեսայ» արմատի համար «...Թագաւոր բառից...տղայ, մանուկ» [2, 2526]: Հավանաբար երկու դեպքն էլ հուշում է, որ փեսայի կերպարը կարող էր ընկալվել ոչ միայն որպես նոր ձևավորվող ընտանիքի անդամ, այլև որպես անձ, որը դեռ պետք է հաստատեր իր դիրքը նոր ընտանիքում՝ ենթարկվելով որոշակի պարտականությունների, այլ կերպ ասած՝ ծառայեր իր նորաստեղծ ընտանիքին:

Անգլիական հարսանեկան արարողության մնացած մասնակիցներից ոչ մեկը չունի իր միանշանակ գուգահեռը հայկական հարսանեկան արարողության մասնակիցների մեջ: Հետևաբար, դրանց գուգահեռները քննել ենք որոշակի պայմանականությամբ:

Best man / խաչեղբայր [khacheghbayr]: Անգլիական հարսանիքները կազմակերպվում են առավելապես ընկերական միջավայրում, ասել է թե՛ հյուրերի մեծ մասը փեսայի ու հարսի ընկերներն են: Best man-ը փեսայի ընկերների (*groomsmen*) գլխավորն է, ամենամոտ ընկերն է, ամուսնության վկա (witness to the marriage): Հայերեն տարբերակում տեսնում ենք, որ բառարմատները չեն պահպա-

³ Եվրոպական միջավայրում անգլիացիները խիստ պահպանողական են, բայց այդ պահպանողականությունը հաճախ համադրվում է ազատական արժեքների հետ: Մինչդեռ հայկական պահպանողականությունը, ձևավորված պատմական փորձառությունների և գոյատևման պայքարի արդյունքում, ավելի խորը արմատներ ունի:

նել բառիմաստի ավանդական նշանակությունը (ի հակադրություն նախորդ դեպքերի), համաձայն որի՝ սա երիտասարդ է, որ պսակի ժամանակ խաչն է բռնում հարսի ու փեսայի գլխին և ամբողջ հարսանիքի ժամանակ նրանց ընկերակցում ու սպասարկում: Ստացվում է, որ բաղադրիչների իմաստային կենսունակությունը չպահպանելու տեսանկյունից այս մասնակիցների զուգահեռները կարող են քննվել համարժեքության սահմաններում:

Maid of honour / հարսնաքույր [Harsnakuyr]: Սա էլ հարսի ամենամոտ ընկերուհին է, մնացած ընկերուհիների (*bridesmaids*) գլխավորը, դարձյալ ամուսնության վկա (witness to the marriage), ավելի ճիշտ՝ պատվի (honour) վկա: Ակնառու է, որ անգլերեն տարբերակում դարձյալ պահպանված են հին ավանդական մտածողության տարրեր՝ կապված զույգի «մաքրության» պատվի հետ: Իսկ հայերեն տարբերակում «քույր» բաղադրիչը պարզապես ընդգծում է տվյալ անձնավորության հարազատության աստիճանը հարսի նկատմամբ. ոչ մի ավանդական գաղափարախոսական տարր չկա բաղադրիչների միջև:

Godfather / կնքահայր [knkahayr] (քավոր [qavor]) / godmother / կնքամայր [knkamayr] (քավորկին [qavorkin]): Ե՛վ անգլերենում, և՛ հայերենում այս հասկացությունները վերաբերում են եկեղեցական արարողության ընթացքում հոգևոր պատասխանատվություն ստանձնող անձանց, սակայն իրենց նշանակությամբ ու դերով զգալիորեն տարբերվում են: Անգլո-ամերիկյան մշակույթում godfather և godmother հասկացությունները հիմնականում կրոնական նշանակություն ունեն: Նրանք երեխաների կնունքին ներկա են լինում՝ որպես նրանց հոգևոր առաջնորդներ, և սրանով նրանց դերը ավարտվում է, հարսանիքների ընթացքում և նորաստեղծ ընտանիքի կյանքում նրանք նշանակալի ու ազդեցիկ դեր չունեն: Այսինքն՝ ժամանակի ընթացքում այս դերը դարձել է ավելի խորհրդանշական և ոչ պարտադիր, ինչը չի կարելի ասել հայկական մշակույթի մասին, որտեղ այդ կերպարները նորաստեղծ ընտանիքի խորհրդատուն են, պաշտպանը, պետք է ասել նաև ֆինանսական աջակիցը: Անգլերենում *godfather* և *godmother* բառերը բառացիորեն նշանակում են «աստվածային հայր» և «աստվածային մայր», ինչը արտացոլում է նրանց հոգևոր դերակատարությունը՝ որպես անձինք, որոնք կրոնական տեսանկյունից պետք է առաջնորդեն երեխային: Ժողովրդական մակարդակում երբեմն ենթադրվում է, որ *քավոր* բառը ծագում է *թագավոր* բառից՝ հաշվի առնելով նրանց հնչյունական նմանությունը, նաև այն հանգամանքը, որ «թագավոր» բառը ունեցել է «տղա, մանուկ» իմաստը, ինչը մատնանշում է քավորի երեխայի կյանքի առաջին իսկ փուլերում ընտրվելը, ընդ որում՝ ոչ միայն հոգևոր, այլև խնամակալության նպատակով: Ամեն դեպքում, լեզվաբանական տեսանկյունից այս կապը հաստատված չէ: Հատկանշելի է նաև այն փաստը, որ հայկական մշակույթում կնունքի քավորը մեքենայաբար կարող է դառնալ նաև հարսանիքի քավոր, եթե կնքել է տղա զավակին: Աղջկա կնունքի քավորը, ըստ էության, սիմվոլիկ դեր ունի նրա կյանքում:

Flower girl (ծաղկի աղջիկ) և *ring bearer (մատանի տանող)* մասնակիցները ընդհանրապես չկան հայկական հարսանիքներում: Երկուսն էլ մինչև տասը-

տասներկու տարեկան երեխաներ են, առաջինը՝ աղջիկ, երկրորդը՝ տղա: Ավանդույթի համաձայն՝ թե՛ հարսնացուին ծաղիկ տանող աղջիկը, թե՛ գույգի ամուսնական մատանիները տանող տղան խորհրդանշում են պտղաբերության հույսը:

Այսպիսով, հարսանեկան մասնակիցները հայկական և անգլո-ամերիկյան մշակույթներում էական տարբերություններ ունեն: Նույնիսկ նրանք, որոնք իբր նույնական են, միևնույնն է, իրենց դերով ու ազդեցիկությամբ տարանջատվում են: Ջարմանալիորեն, անգլիացիները, լինելով պակաս պահպանողական ազգ հայերից, իրենց բառապաշարում դեռ կենսունակ են պահում այնպիսի բառեր, որոնց իմաստները հին-ավանդական են, իսկ հայերը, թեպետ չունեն ավանդական նշանակության բառեր կամ արմատներ, սակայն իրենց կենսաձևում խիստ պահպանողական են:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ակունք (գիտական հոդվածների ժողովածու), թիվ 2(16), Երևան, ԵՊՀ հրատ., 237 էջ:
2. Աճառյան Հ. Հ., Հայերեն արմատական բառարան (հ. Ա-Դ), Երևան, Երեւանի Համալսարանի Հրատարակչություն, 1926, 2705 էջ:
3. Կնյազյան Ա. Տ., Լեզու և գենդեր, Երևան, ԵՊՀ հրատ., 2018, 208 էջ:
4. Նահապետյան Ռ. Ա., Հայոց սոցիոնորմատիվ մշակույթը, մաս 1, Երևան, Հեղինակային հրատարակություն, 2009, 182 էջ:
5. Սարգսյան Ա. Ե., Ընդհանուր և հայ լեզվաբանություն, Երևան-Լոս-Անջելես, 2018, 370 էջ:
6. Верещагин Е. М., Костомаров В. Г. Лингво-страноведческая теория слова, Москва, «Русский язык», 1980, 320 с.
7. Ройзензон Л. И. Фразеология и страноведение. Бюллетень по фразеологии N1, Самарканд, 1972, 166 стр.
8. Сукиасян А.Г. Судебник Цмбата Спарапета (Гундстабля), Ереван: изд. ЕГУ, 1971, 208 стр.
9. Shuang L., Zala V., Cindy G. Introducing Intercultural Communication. Second edition, 2015, 385 p.

ОБУЧЕНИЕ КУЛЬТУРНЫМ РАЗЛИЧИЯМ УЧАСТНИКОВ АРМЯНСКОЙ СВАДЕБНОЙ ЦЕРЕМОНИИ ДЛЯ АНГЛОГОВОРЯЩЕЙ АУДИТОРИИ

Геворгян Нане

*Фонд “ВГУ”, «Армянский язык и литература»,
магистратура, 1-й курс*

*Руководитель магистерской диссертации:
кандидат филологических наук, доцент Л. Петросян*

Резюме

Ключевые слова: культура, культурное слово, лингвокультурология, свадьба, брак, участники, традиционные-консервативные корни слов

Участники свадеб в армянской и англо-американской культурах имеют существенные различия. Даже те, кто якобы идентичны, всё же различаются по своей роли и влиянию. Удивительно, что англичане, будучи менее консервативным народом, чем армяне, сохраняют в своем словарном запасе такие слова, значения которых традиционны, в то время как армяне, хотя и не имеют традиционных слов или корней, тем не менее, являются крайне консервативными в своем образе жизни.

TEACHING CULTURAL DIFFERENCES OF ARMENIAN WEDDING CEREMONY PARTICIPANTS TO AN ENGLISH-SPEAKING AUDIENCE

Gevorgyan Nane

*“VSU” Foundation, “Armenian Language and Literature”,
Master’s Degree, 1st Year*

*Academic Supervisor: L. Petrosyan,
Candidate of Philological Sciences, Associate Professor*

Summary

Key words: culture, cultural word, linguoculturology, wedding, marriage, participants, traditional-conservative word roots

Participants in weddings within Armenian and Anglo-American cultures exhibit significant differences. Even those who may appear similar differ in their roles and influence. Interestingly, the English, despite being less conservative than Armenians, retain in their vocabulary words whose meanings are deeply traditional, whereas Armenians, although lacking such traditional terms or roots, remain highly conservative in their way of life.

Դավթյան Կատին

*Գորիսի պետական համալսարան,
«Հայոց լեզու և գրականություն», 2-րդ կուրս
Գիտական ղեկավար՝ Բ. Գ. Թ., դոցենտ Ռ. Ստեփանյան*

Հանգուցային բառեր. *Էդիպյան բարդույթ, Համլետ, ենթագիտակցական խանդ, հրապուրանք, պայթուցիկ պոռթկումներ, վարքագիծ*

Հոգվածում քննության ենք առել Էդիպյան բարդույթը Շեքսպիրի «Համլետ»-ում: Փորձել ենք բացահայտել Համլետի որոշումների և գործողությունների դրդապատճառները՝ ընդգծելով նրա անգիտակցական խանդը մոր նկատմամբ և աստվածությունը՝ մրցակից հոր հանդեպ: Առաջնորդվել ենք մեկնաբանման հերմենևտիկական մեթոդներով՝ դասական, հոգեվերլուծական և այլն:

Վիլյամ Շեքսպիրի «Համլետ»-ը (1603 թ.) համաշխարհային գրականության դասական գլուխգործոցներից է, որի պլուժետային ու կառուցվածքային զարգացումներում որոշիչ են հերոսների անգիտակցից ցանկությունները, ճնշված հիշողությունները, հոգեբանական կոնֆլիկտները և այլն:

Գլխավոր հերոսի՝ Համլետի գործողությունները բացատրելու և բացահայտելու նպատակով մի շարք հայեցակարգեր են ի հայտ եկել: Հարցին անդրադարձել են Ջիզմունդ Ֆրոյդը, Էռնեստ Ջոնսը, Ժան Լականը և այլք:

Թեմայի արդիականությունը պայմանավորված է նրանով, որ անդրադարձ է կատարվում ժամանակակից աշխարհում կարևոր մի շարք խնդիրների, որոնց հիմքում ծնող-զավակ հարաբերություններն են:

Մեր քննության **նպատակը** պիտեում էդիպյան համալիրի ուսումնասիրումն է, **առաջադիր խնդիրը**՝ բացահայտել ինչ ազդեցություն ունեն Համլետի հոգեբանական կոնֆլիկտները նրա գործողությունների վրա:

Աշխատանքի հիմնական բովանդակությունը

Էդիպյան բարդույթը, որը սահմանել է Ջիզմունդ Ֆրոյդը, ակնարկում է երեխայի ենթագիտակցական սերը ծնողներից մեկի նկատմամբ և հակամարտությունը մյուս ծնողի հետ: Տղա երեխան մոր նկատմամբ իր հակումների մեջ հորն իբրև հակառակորդ է ընկալում, նրա նկատմամբ թշնամանք տածում: Ֆրոյդը դա անվանում է Էդիպյան բարդույթ՝ նկատի ունենալով Սոֆոկլեսի «Էդիպոս արքա» ողբերգությունը, որտեղ հերոսը՝ Էդիպոսը, սպանում է հորը և ամուսնանում մոր հետ: Հակառակ օրինակը աղջկա չգիտակցված սեռական հրապուրանքն է հոր նկատմամբ, որը Կարլ Յունգն անվանել է Էլեկտրայի բարդույթ [7, 150]՝ նկատի ունենալով Տրոյական պատերազմի հերոսներից մեկի՝ Ագամեմնոնի դստերը, ում կերպարին անդրադարձել են Էսքիլոսը, Սոֆոկլեսը, Եվրիպիդեսը և այլք:

Եվ ինչպես «Հոգեվերլուծության ներածություն» գրքում նշում է Ֆրոյդը, հեշտ է նկատել, որ փոքրիկ տղամարդը ցանկանում է՝ մայրը միայն իրեն պատկանի, հոր ներկայությունն ընկալում է որպես խանգարող հանգամանք և չի թաքցնում

իր հաճույքը, երբ հայրը մեկնում կամ բացակայում է [3, 224]: Հարկ է նկատել՝ բարդույթին Ֆրոյդն անդրադառնում է նաև «Էդիպ արքան և Համլետը» գործում՝ համեմատելով երկու հերոսների արարքները և դրանց դրդապատճառները [2, 17]:

Մեր քննության շրջանակում փորձել ենք ընդգծել Էդիպյան բարդույթի առկայությունը «Համլետ»-ում:

Համլետը՝ Դանիայի թագաժառանգը, սովորում էր Գերմանիայում: Լսելով հոր մահվան մասին՝ գալիս է պալատ՝ մասնակցելու վերջինիս հուղարկավորությանը: Հայտնաբերում է, որ մայրն ամուսնացել է իր հորեղբոր՝ Կլավդիոսի հետ, ով սպագա գահակալն էր: Հիասթափված մոր դավաճանությունից և հորեղբոր նոր կարգավիճակից՝ Համլետը խելագարության աստիճան մոտրվում է մտքերի մեջ: Լարվածությունն ավելի է ուժգնանում, երբ տեսնում է հոր ուրվականը, որը պնդում է՝ իրեն սպանողը Կլավդիոսն է, և Համլետին հրամայում է վրեժ լուծել:

Նկատենք՝ հոր ուրվականի մոտիվը, թույնի սիմվոլիկան բացահայտում են Համլետի ենթագիտակցական ցանկությունները, չլուծված հակամարտությունները և մահկանացուի վախը:

Հոր սպանության ճնշված հիշողությունները և դրա հետ կապված տրավմատիկ փորձառությունները նշանակալի դեր են խաղում նրա մտքերի, գործողությունների և անվճռականության դեմ պայքարում: Վրեժխնդրությունն իրագործելու հարցում շեքսպիրյան հերոսի հապաղելը Ֆրոյդը բացատրում է նրանով, որ նա Էդիպյան բարդույթի կրողն է: Հոր մահվան թաքուն ցանկությունը, Ֆրոյդի կարծիքով, ստիպում է դանիացի արքայազնին անգիտակցաբար նույնացնել իրեն Համլետ ավագի մարդասպանի հետ, և այդ հիմքի վրա նրա հոգեբանության մեջ առաջանում են մեղքի ուժեղագույն բարդույթ և մահվան ընդգծված ձգտում [6, 88]:

Էդիպյան բարդույթի առկայությունը, ինչպես ակնարկվում է մոր՝ Գերտրուդի հետ հարաբերություններում, պատճառ էր նրա հոգեբանական ցնցմանը: Հորեղբոր խարդախությունը, հոր մահը, իր տառապանքները մի կողմ թողած՝ նա ուներ մի այլ անձնական վիշտ՝ այն էր, մորը մեկ ուրիշ տղամարդու կողքին տեսնելը: Համլետի սերն անսահման էր իր մոր նկատմամբ, սակայն սա այնպիսի զգացմունք էր, որ երբեմն ընթերցողին հիշեցնում է ոչ թե սովորական մայր-որդի հարաբերությունների, այլ ավելի խորը, բազմաշերտ ու բազմանշանակ կապի մասին:

Արքայազնը հարգանքով էր վերաբերվում իր հանգուցյալ հորը՝ փառավոր ու հերոսական կերպար դարձնելով նրան: Համեմատության մեջ դնելով երկու եղբոր դիմադիրներին՝ դիմում է մորը.

Նայի՛ր դու այստեղ, նախ այս պատկերին և ապա սրան՝

Տես, ի՞նչ Նտրոք կա այս դեմքի վրա...

Իսկ այժմ նայիր, այս մյուսին նայիր,

Այս է ամուսինդ՝ բորբոսնած մի հասկ [5, 83]:

Կլավդիոսը Համլետի հիմնական թշնամին էր: Մակայն սա կարելի է սիմվոլիկ համարել՝ որպես «պայքար հոր դեմ»: Ակնառու է ևս մի փաստ. Համլետը չէր կարող բացահայտորեն սպանել Կլավդիոսին, քանի որ վերջինս կատարել էր այն, ինչը ինքը ենթագիտակցաբար ցանկանում էր՝ սպանել հորն ու տիրանալ Գերտ-

րուդին: Նրա վրդովմունքը Կլավդիոսի հանդեպ ավելին էր, քան պարզապես բարոյական հակազդեցությունը, նա խանդում էր հորեղբորը՝ որպես մոր նոր զուգընկեր:

Ենթագիտակցական խանդի դրսևորում կարելի է համարել այն տեսարանը, որտեղ Համլետը մեղադրում է մորը հորեղբոր հետ ամուսնության համար: Նրա սուր պոռթկումները, խոսքի տոնի և ելևէջների տատանումները պատճառ են մտածելու, որ հերոսը պարսավում է մորը միայն այն պատճառով, որ ուրիշ մեկի հետ է ամուսնացել: Մորը մեղադրելը հաճախ վերագվում է որպես էմոցիոնալ գերլարվածության վկայություն, սակայն նրա մեղադրանքներն ու խոսքերն անսովոր մտերմություն և զգայական կապ են ցույց տալիս մոր հետ:

«Բուք թողեցիք իմ հորն ու ընկաք այս տկար տղամարդու գիրկը: Թագուհին էս դու, տեգորդ կինն էս, ոչ բարով մայրս» [5, 81]: Այս համատեքստում հետևյալ տողերը կարելի էր վերագրել արժանապատվությանն ու բարոյականությանը, սակայն մեր տեսակետից քննելիս տեսնում ենք, որ հերոսը անընդհատ օգտագործում է «կինն էս» արտահայտությունը: Հակված ենք այն կարծիքին, որ այստեղ գաղտնի խանդն ու նախանձն են խոսում: Նա մանրամասն նկարագրում է մոր ամուսնական հարաբերությունները, ինչը վկայում է նրա չափազանց անձնական հետաքրքրության մասին: Ինչո՞ւ էր որդին հենց այդ կողմից քննում իրավիճակը, մի թե ավելի շատ բարոյական ու քաղաքական պատճառներին չպիտի անդրադառնար: Եվս մի փաստ, որը վկայություն է հերոսի ենթագիտակցական սեռական բարդությունների:

«Թուլություն, անունդ կին է» [5, 14] տողը հերոսի ներքին կռվի արտացոլումն է: Նա պայքարում էր իր մոր հանդեպ սիրո և հարգանքի զգացումների միջև: Հուզական պոռթկումից առաջացած արտահայտությունը ներքին բախումների, աշխարհը չընկալելու և չըմբռնելու փոքր-ինչ մեղադրական աղերսներ է պարունակում:

Վերլուծելով Համլետի մենախոսությունները, նրա ներքին ու արտաքին կոնֆլիկտները՝ կարելի է բացահայտել հերոսի անգիտակից ցանկությունները, նրա ճնշված հիշողությունները կապված հոր սպանության հետ և այս գործոնների հոգեբանական ազդեցությունը: Նրա հոգեվիճակը և ներքին վարանումն ստեղծում են իմպուլսիվ գործողություններ, որոնք հանգեցնում են ողբերգական հետևանքների:

Հարկ է նկատել՝ միսոգինիայի՝ կնատյացության թեման «Համլետ»-ում իր արմատներն է ձգում արքայազնի՝ մոր հանդեպ վերաբերմունքի մեջ: Նա զգվում էր Գերտրուդի՝ ամուսնու մահվանից անմիջապես հետո Կլավդիոսի հետ ամուսնանալու որոշումից: Մեղադրում էր մորը երկդիմի և ոչ անկեղծ լինելու մեջ.

Աչքերը առանց շոշափելիքի,
Շոշափելիքը առանց տեսության,
Ականջներն առանց ձեռքի կամ աչքի,
Հոտառությունը առանց մյուսների
Կամ հավատարիմ մի զգայարանի հիվանդ մասնիկն էլ
Չէր կարող այդքան անզգա լինել [5, 84]:

Հաշվի առնելով, որ Համլետի ժամանակներում կինը զրկված էր ազատությունից և անկախությունից, որ պետք է գտնվեր տղամարդու խիստ հսկողության և պաշտպանության ներքո, Գերտրուդը կարծես թե շատ տարբերակ չունի: Իր իրավիճակում Կլավդիոսի հետ ամուսնանալը ողջամիտ որոշում էր, քանի որ այս ամուսնությունը երաշխավորում էր նրա սոցիալական ապահովությունը:

Իսկ Համլետը չէր հասկանում մոր դիրքորոշումը: Նրա ատելությունը հասնում է գագաթնակետին, երբ սկսում է հավատալ, որ բոլոր կանայք խաբեբա են ու անհավատարիմ: Պնդում էր, որ կանայք պարզապես ստորակ են իրենց սեռական ցանկություններին և այդ պատճառով չափազանց թույլ են հավատարիմ լինելու համար:

Հատկանշական է Համլետի պահվածքը Օֆելյայի հանդեպ, ում Լականը տվել է հետևյալ բնորոշումը. «Օֆելյա անունով խայծի այդ կտորը» [1, 1]: Օֆելյայի՝ սերը խորն էր և անկեղծ, սակայն արքայազնի փոփոխական վերաբերմունքը սիրուց դեպի վիրավորանք և մեղադրանք, կործանում է աղջկա հոգեբանությունը և ներքին կայունությունը: Օֆելյան ևս Համլետի ատելության գոհն է դառնում:

Էռնեստ Ջոնսի բանաձևմամբ՝ դրանք «պայթուցիկ պոթոկումներ» [4] են, ուստի ակնհայտ է, որ Համլետի արձագանքները Օֆելյայի խոսքերին և արարքներին հիվանդագին են և չարդարացված: Հավանական միակ պատճառը կարող էր լինել նրա ֆիքսվածությունը մեկ այլ կնոջ վրա. Համլետը պետք է ամաչեր մոր հանդեպ իր այլասերված մտքերի պատճառով: Արքայազնի վարքագծային օրինաչափությունը լիովին համապատասխանում է այս ենթադրություններին:

Ժամանակակից հոգեբանները նման հոգեվիճակը կոչում են ֆիքսացիա մոր կամ Էդիպյան բարդույթի վրա, ինչպես Էռնեստ Ջոնսն է արդարացիորեն նշում: Մի՞թե Համլետը կարող էր այդքան շուտ մոռանալ իր երբեմնի սիրուն ու նման բացասական արտահայտություններով բնորոշեր նրան: Նրա խոսքերը վկայում են՝ երբեք էլ չի սիրել Օֆելյային. «Եթե առաքինի և գեղեցիկ էք, առաքինությունդ ոչ մի հարաբերություն չպիտի թույլ տա գեղեցկությանդ հետ: Աստված Ձեզ այլ երես է տվել, իսկ Դուք ձեզ համար մի այլ երես եք շինում, օրորվում եք, շորորվում եք ... Ձեր լկտիությանը անգիտության երևույթ եք տալիս...» [5, 61]:

Վերջինիս միջոցով փորձում էր մոռանալ մորը: Բուռն զրույցի ընթացքում Համլետը նրան ասում է. «Մտի՛ր կուսանոց, գնա՛, մնաս բարով: Եվ կամ եթե անպատճառ պետք է ամուսնանաս, ամուսնացի՛ր մի հիմարի հետ, որովհետև խելացիները լավ գիտեն, թե Դուք նրանց ինչ հրեշներ եք դարձնում: Հայդե կուսանոց, և շո՛ւտ, մնաս բարով» [5, 62]:

Համլետը մեղադրում էր Օֆելյային անմեղ ձևանալու մեջ: Առաքինության արժևորումը և աղջկան առաքինությունից զուրկ անվանելը միայն մի դրդապատճառ ուներ՝ ցրել սեփական անբարո մտքերը և դիմացինին վերագրելով՝ դուրս գալ այդ հոգեկան ծանր վիճակից:

«Ես ինքս քիչ թե շատ պարկեշտ մարդ եմ, բայց դարձյալ ինքս իմ մեջ այնպիսի բաներ եմ տեսնում, որ ավելի լավ էր մայրս ինձ ծնած չլիներ» [5, 62]: Խոսքերն էլ դրա վառ վկայությունն են, հերոսն ուներ անբարո մտքեր, որոնք առաքինի չէին, և, իհարկե, դրանք մոր հանդեպ զգացմունքներն էին:

Նկատենք նաև, որ այստեղ կանայք ընկալվում են որպես խամաճիկներ տղամարդկանց ձեռքում: Կլավդիոսը և Պոլոնիոսը օգտագործում են Օֆելյային և Գերտրուդին, երբ խոսքը վերաբերում է Համլետին լրտեսելուն: Իրականում այս երկու կանայք սիրում էին Համլետին: Քանի որ կանանց կարգավիճակը հասարակության մեջ չափազանց ցածր էր, նրանք իրավունք չունեին դեմ գնալ տղամարդկանց: Ուստի Օֆելյան և Գերտրուդը իրենց կամքին հակառակ ներգրավվեցին Կլավդիոսի չար ծրագրում:

Այնուամենայնիվ, այս խնդիրները չպետք է հանգեցնեն որևէ մեկին սպանելուն, իսկ նա երկու մարդու սպանեց, ովքեր կանգնած էին իր և մոր միջև: Խեղեց ճակատագրեր չգիտակցելով՝ կործանվում է նաև ինքը:

Այսպիսով՝ ակնհայտ է, որ Համլետն ուներ խնդիրներ: Հաշվի առնելով հոգեկան վիճակը և վարքագծային օրինաչափությունները, որոնք այժմ հոգեբանական խնդիրներ են դիտարկում, Համլետն ուներ էդիպյան բարդույթ:

Եզրակացություններ

Ամփոփելով՝ կարող ենք ասել.

1. էդիպյան բարդույթը «Համլետ»-ի հետաքրքիր մեկնաբանություններից մեկն է, որը բացահայտում է գլխավոր հերոսի ներքին պայքարն ու մարդկային զգացմունքների բարդությունը:

2. էդիպյան բարդույթի առկայությունը, որ ակնարկվում է մոր՝ Գերտրուդի հետ հարաբերություններում, պատճառ էր Համլետի հոգեբանական ցնցմանը: Հորեղբոր խարդախությունը, հոր մահը, իր տառապանքները մի կողմ թողած՝ նա ուներ մեկ այլ վիշտ՝ մորը մեկ ուրիշ տղամարդու կողքին տեսնելը: Համլետի սերն անսահման էր մոր նկատմամբ, սակայն սա հիշեցնում էր ոչ թե մայր-որդի հարաբերությունների, այլ ավելի խորը, բազմաշերտ ու բազմանշանակ կապի մասին:

3. Համլետի մենախոսությունները, ներքին ու արտաքին կոնֆլիկտները, հոր ուրվականի մոտիվը, թույնի սիմվոլիկական պարզում են Համլետի ենթագիտակցական ցանկությունները, չլուծված հակամարտությունները և մահկանացուի վախը: Նրա հոգեվիճակը և ներքին վարանումն ստեղծում են իմպուլսիվ գործողություններ, որոնք հանգեցնում են ողբերգական հետևանքների:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Lacan J. Desire and the interpretation of desire in Hamlet
<https://www.jstor.org/stable/2930434>
2. Фрейд З. Художник и фантазирование, Москва: «Республика», 1995.
https://readeralexy.narod.ru/Library/Freud_1995.pdf
3. Զիգմունդ Ֆ., Հոգեվերլուծության ներածություն, Ե., «Զանգակ-97», 2002, 472 էջ:
4. Համլետի հոգեվերլուծական ակնարկ Էռնեստ Ջոնսի կողմից (Քննադատական գրություն) <https://ivypanda.com/essays/the-psychoanalytic-hamlet-by-ernest-jones/> (10.03.2025)

5. Շեքսպիր Վ., Համլետ, Ե., «Անտարես», 2008, 144 էջ:
6. Տուրիշևա Օ., Արտասահմանյան գրականագիտության տեսությունը և մեթոդաբանությունը, Ե., «ԵՊՀ», 2017, 264 էջ:
7. Քալանթարյան Ժ., Քննադատությունն իբրև գործնական գրականագիտություն, Ե., «ԵՊՀ», 2017, 290 էջ:

ЭДИПОВ КОМПЛЕКС В «ГАМЛЕТЕ» ШЕКСПИРА

Давтян Катин

Горисский государственный университет,

«Армянский язык и литература», 2-й курс

Научный руководитель:

кандидат филологических наук, доцент Р. Степанян

Резюме

Ключевые слова: *Эдипов комплекс, подсознательная ревность, очарование, взрывные вспышки, поведение*

В статье рассматривается Эдипов комплекс в трагедии Шекспира «Гамлет». Мы попытались раскрыть мотивы решений и поступков Гамлета, подчеркнув его бессознательную ревность к матери и ненависть к отцу-сопернику. Мы руководствовались герменевтическими методами интерпретации: классическими, психоаналитическими и т. д.

THE OEDIPUS COMPLEX IN SHAKESPEARE'S "HAMLET"

Davtyan Katin

Goris State University,

"Armenian Language and Literature", 2nd Year

Academic Supervisor: R. Stepanyan,

Candidate of Philological Sciences, Associate Professor

Summary

Key words: *Oedipus complex, subconscious jealousy, attraction, explosive outbursts, behavior*

In the article, we examined the Oedipus complex in Shakespeare's "Hamlet". We tried to reveal the motives of Hamlet's decisions and actions, emphasizing his unconscious jealousy towards his mother and hatred towards his rival father. We were guided by hermeneutic methods of interpretation: classical, psychoanalytic, etc.

Դարբինյան Սոնա

*Գորիսի պետական համալսարան,
«Հայոց լեզու և գրականություն», 2-րդ կուրս
Գիտական ղեկավար՝ ք. գ. թ., դոցենտ Լ. Ներսիսյան*

Հանգուցային բառեր. *մարմնի մասերով դարձվածքներ, Գորիսի բարբառ, հոմանիշ դարձվածքներ, նույնանիշ դարձվածքներ, հականիշ դարձվածքներ, ինքնատիպ դարձվածքներ*

Դարձվածքի ըմբռնումը լեզվաբանության մեջ

Այս հոդվածում ուսումնասիրել ենք Գորիսի բարբառի՝ մարմնի մասերի անվանումներով կազմված դարձվածքները, որոնք աչքի են ընկնում հոմանշային և հականշային զույգերով, բազմիմաստությամբ, ինչպես նաև արտահայտչականությամբ ու պատկերավորությամբ, որոնք հարստացնում են խոսքը: Հատուկ ուշադրություն ենք դարձրել նաև բազմիմաստ դարձվածքներին, որոնց տարբեր նշանակությունները կախված են համատեքստից և խոսքային միջավայրից: Բացի այդ, առանձնացրել ենք դարձվածքներ, որոնք հատուկ են միայն Գորիսի բարբառին և բացակայում են գրական հայերենում, ինչը վկայում է բարբառի ինքնատիպության մասին:

Հայերենի դարձվածքները իրենց ծագմամբ հիմնականում ազգային են, սակայն դրանց մի մասը փոխառված է այլ լեզուներից՝ թարգմանության միջոցով: Դարձվածքները առաջացել են երկու հիմնական ուղիով՝ ա) հիմնականում կենդանի խոսակցական լեզվում, որտեղից էլ ներթափանցել են գրավոր խոսք, բ) գիտության և մշակույթի տարբեր ոլորտներում, ապա գրավոր խոսքից անցել են բանավորին: Ժամանակակից հայերենի դարձվածքները ձևավորվել են պատմական տարբեր շրջաններում. դրանց մի մասը գալիս է նախագրաբարյան ժամանակաշրջանից, իսկ մյուս մասը ձևավորվել է նոր գրական հայերենի զարգացման ընթացքում [1, 316]:

Դարձվածքը կառուցվածքային առումով երկու և ավելի բառերից կազմված կայուն կապակցություն է, որն ունի ամբողջական իմաստ և վերաիմաստավորված նշանակություն: Այն խոսքում օգտագործվում է որպես պատրաստի լեզվական միավոր՝ առանց բաղադրիչների առանձին վերլուծության: Ժամանակակից հայերենում այն հաճախ անվանում են դարձվածաբանական միավոր, դարձվածաբանական արտահայտություն, հատուկ ոճ, իսկ որոշ դեպքերում նաև՝ իդիոմ կամ իդիոմային արտահայտություն [4, 368]: Քննվող բարբառում հանդիպում են դարձվածքներ, որոնց ձևերն ու կիրառությունները երբեմն տարբերվում են գրական հայերենում ընդունված տարբերակներից: Բարբառային դարձվածքները կարող են ունենալ յուրահատուկ բաղադրություն, հնչյունական տարբերություններ կամ միայն տվյալ տարածաշրջանին բնորոշ իմաստներ:

Լեզվաբանական գրականության մեջ չկա միասնական մոտեցում դարձվածքի կամ դարձվածաբանական միավորների սահմանման և դարձվածաբանության ընդգրկման շրջանակների վերաբերյալ: Դարձվածաբանության առավել ընդգրկուն մեկնաբանման կողմնակիցները դարձվածքների շարքին դասում են նաև առածները, աֆորիզմները, թևավոր խոսքերը, հարադրությունները, բառակապակցական տերմինները: Մինչդեռ ավելի նեղ մոտեցման կողմնակիցները բացառում են վերոնշյալ խմբերը և դարձվածքներ համարում միայն իդիոմային արտահայտությունները: Գորիսի բարբառի դարձվածքների ուսումնասիրության ժամանակ նկատել ենք, որ դրանցից մի քանիսը դարձվածքներ են՝ կայուն կառուցվածքով և վերախմաստավորված նշանակությամբ, մինչդեռ որոշ արտահայտություններ կարող են սահմանակից լինել առածներին, թևավոր խոսքերին՝ հաճախ տարածաշրջանի լեզվական առանձնահատկությունների շաղախով:

Դարձվածքները, ըստ Ա. Սուքիասյանի, բաժանվում են չորս խմբի՝ դարձվածքի ընդհանուրիմաստի և դարձվածքը կազմող բաղադրիչ բառերի միջև գոյություն ունեցող հարաբերության տեսակետից: Դրանք են՝ դարձվածքային սերտաճում, դարձվածքային միասնություն, դարձվածքային կապակցություն և դարձվածքային արտահայտություն [4, 371]: Բարբառում դարձվածքներն ընդհանուր առմամբ ենթակա են նույն լեզվաբանական դասակարգմանը, ինչ գրական հայերենի դարձվածքները:

Աշխատանքում առանձնացրել ենք մարմնի մասերով այն դարձվածքները, որոնց մի մասը ձևավորվել է հենց Գորիսի բարբառում, իսկ մի մասը ծագում է գրաբարից կամ ընդհանուր հայերենից:

Դարձվածքային սերտաճում

Այս խմբի մեջ են դասվում այն դարձվածքները, որոնց ընդհանուր իմաստը չի բխում դարձվածքի կազմի մեջ մտնող բաղադրիչ բառերի բառային իմաստներից: Դրանք իմաստային տեսակետից անբաժանելի, անքակտ կապակցություններ են: Նրանցում բառերը, ամբողջապես կորցնելով իրենց բառային իմաստները և տվյալ կառուցվածքում վերախմաստավորվելով, դառնում են դարձվածքի ընդհանուր, ամբողջական իմաստի բաղադրատարր՝ չցուցադրելով իրենց բառային և իմաստային ինքնուրույնությունը [4, 377]. ինչպես, օրինակ՝ *աշկան քիցիլ «այլևս չսիրել, ատել» կրլիխն փորցանք պիրիլ «մեկին դժբախտության մեջ գցել», թէվերը թո՛ւլա՛նա՛լ, «հուսահատվել, ընկճվել» անջո՛ւկի ծէրավ լըսիլ «պատահաբար լսել», պէրա՛նը ծըռիլ «խնդրել», ծէրքէրը լիվա՛նա՛լ «հրաժարվել մի բանի մասնակցելուց», ծէրքէրը քօր կա՛լ «մի բան անելու ցանկություն զգալ», քըթան պիրիլ «չթողնել, որ մարսի», անջո՛ւկի դիրէտ քիցիլ «անուշադրության մատնել», աշկը մանածիլ «աչքերով փնտրել», մանդէրը նհէտը օտիլ «շատ համեղ լինել»:*

Դարձվածքային միասնություն

Դարձվածքների այս խմբի մեջ մտնում են դարձվածաբանական այնպիսի միավորներ, որոնք դարձվածքային սերտաճումների նման իմաստաբանորեն անբաժան են և ամբողջական, բայց ի տարբերություն նախորդների, սրանց դարձ-

վածքային ընդհանուր իմաստը որոշ չափով պատճառաբանված է դարձվածքը կազմող բաղադրիչ բառերի առանձին, փոխաբերական իմաստով: Դարձվածքների այս կարգին առաջին հերթին բնորոշ է պատկերավոր իմաստը [4, 378]: Օրինակ՝ *կրլխին նրստիլ «իշխող ազդեցություն ունենալ», անջո՛ւ կ տինիլ «ուշադիր լսել», ծերքերը ծալիլ «պարսպ լինել», ծերքը ինգիլ «ձեռք բերել, գտնել», մանդավ անիլ «ցույց տալ», քէթը տընգիլ «գոռոգամտանալ», սերտը առնիլ «տրամադրությունը բարձրացնել», վէնդի կաղնիլ « առողջանալ», օնքավ անիլ «հասկացնել», կիլծխը օտիլ «սպանել», թէվի տակ պալնջ տինիլ «խոստումներով միամտացնել», քըթից էն դօլ չըտեսնալ «անհետատես լինել», լու՛զվին տակին չըմընալ «պատասխան տալ», պէրա՛նը ճոնր առած «պայանձնաված»:*

Դարձվածքային կապակցություն

Դարձվածքային կապակցություններ են կոչվում դարձվածքային այն միավորները, որոնց ընդհանուր իմաստը ամբողջովին բխում է նրանց բաղադրիչ բառերի իմաստներից: Դրանք այնպիսի դարձվածքներ են, որոնց կազմի մեջ մտնող բառերն ունեն ինչպես ազատ, այնպես էլ դարձվածաբանորեն կապված գործածություն [4, 380]. ինչպես, օրինակ՝ *տանտա՛ւ կ կիլծխ «հիմար, սպուշ», կիլծխը խառը «գբաղված», կիլծխը ծակ «անխելք», կիլծխը կախ «ամոթահար», անջոնկը դինջ «հանգիստ, խաղաղ», պէրա՛ նա՛ ն կէշ «հայհոյասեր, հայհոյանք տվող», լու՛զոն կարճ «խոսելու իրավունք կամ համարձակություն չունեցող», օցի լու՛զոն «խայթող՝ չար խոսք ունեցող», ծերքը պա՛ց «առատաձեռն», մանդը խառը «մասնակից որևէ գործին», քէթը ցեց «գոռոգ, ինքնահավան», քէթը կախ «տխուր», փօրը կօշտ «կուշտ, հագեցած», փօրի գէրի «միայն ուտելու մասին մտածող», փօրի ցավ «ցանկություն» սերտը կախ «անտրամադիր», վէնդա՛ն կիլծխ «ամբողջ մարմնով», աշկը տա՛նը «որևէ մեկի գալուն սպասել», աշկը կօշտ «իր ունեցածով բավարարվող», աշկը ճընպի «մեկին անհամբեր սպասող, սպասողական վիճակ», վէնդը թիթէվ «արագաշարժ» և այլն:*

Դարձվածքային արտահայտություն

Դարձվածքային արտահայտություն են համարվում այն կայուն դարձվածաբանական միավորները, որոնք իմաստային տեսակետից ոչ միայն անբաժանելի են, այլև կազմված են ազատ իմաստ ունեցող բաղադրիչ բառերից. դարձվածքի ընդհանուր իմաստը կախված է և բխում է դարձվածքը կազմող բաղադրիչ բառերի բառային իմաստից, դարձվածքի բառային կազմը և դարձվածքային իմաստը կայուն են [4, 380]: Դարձվածքային արտահայտությունների թվին են դասվում.

1. Ժողովրդական-խոսակցական անեծքները, մաղթանքները, օրհնանքները, որոնք պատկերավոր բնույթ ունեն և փոխաբերական իմաստ ստանալով՝ վերածվել են դարձվածքների. *ինչպես՝ վէնդըս կրլխիտ, անջոնկըտ քըռանա, մագէրըտ սպիտակէն, լու՛զոնտ չուրանա, ըշկըրնիտ լուս ինի, վէնդըտ խէրավ ինի, ըշխաթօղ ծէրքա ինգէս, աշկիտ լու՛սը խըվարի, մըսէրըտ յէր տակի:*

2. Առածասացվածքային արտահայտությունները, որոնք վերածվել են դարձվածքների. *ինչպես՝ օնքը սրքիլի տէղը աշկն ա հանալ, վէնդտ յօրդանի գօրա*

մէնզնի, լոճգոն էրգան՝ խէլքը կարճ, աչավ տուր վէր ծախսավ յերօնես, ըշխարքիս շինողն ու քանդողը լոճգոնն ա, սաղին մի աշկավ ա յէշուս, կոլլին կրլխին ավետարանն էս կարթում, ասում ա վէշխարը սարը անց կցավ, լոճգոնտ շինէր, ըգռավնին աշկերտ կրհնէլին և այն:

Դարձվածքային արտահայտություններ են նաև՝ սէրտը լէն, սէրտը պա՛ ց, վէնդը խէրավ, սէրտը դինջ, կլլխի վիրա՛ պահիլ և այլն:

Գործիս բարբառում գերակշռում են մենիմաստ դարձվածքները, սակայն աշխատանքում ընդգրկել ենք **բազմիմաստ դարձվածքներ**, ստորև կնշենք դրանցից մի քանիսը՝ աշկը պա՛ց անիլ «1. արթնանալ, 2. ուշքի գալ», աշկ տինիլ «1. հավանել, 2. հետևել», անջո՛ կը ծակ «1. չլսող, 2. խոսքին շուտ հավատացող», պէրա՛-նը ծըռիլ «1. ճշմարտությունը չասել, 2. հոխորտալ», ծէրը քիցիլ «1. ձեռնարկել, 2. բռնել մի բանից, 3. տիրանալ», քէթը տընգիլ «1. նույնն է՝ քիթը բարձր պահել, 2. նեղացած լինել», վէնդ տինիլ «1. մի տեղ գնալ, 2. մտնել», վէնդի տակ քիցիլ «1. փչացնել, 2. անպատվել»:

Բազմիմաստ դարձվածքների իմաստները բացատրվել են Աշոտ Սուքիասյանի «Շայոց լեզվի դարձվածաբանական բառարանով»:

Կան նաև մի քանի դարձվածքներ, որոնք օգտագործում ենք այլ իմաստով, ինչը նաև նշված է Է. Աղայանի բացատրական բառարանում: Դրանք են՝ **աշկը պա՛ց անիլ** – ծնվել, **պէրա՛ նը ծըռիլ** – խնդրել, **քէթը կախ** (Գործիս բարբառում օգտագործում ենք միայն **տխուր** իմաստով, սակայն ունի նաև **շվարած** իմաստը):

Նմանիշ դարձվածքներ

Նմանիշ են կոչվում այն դարձվածքները, որոնք, ձևով տարբեր լինելով, նույն կամ մոտ իմաստն են արտահայտում: Իրենց բաղադրիչների իմաստով ու բնույթով պայմանավորված՝ հոմանիշ դարձվածքները սովորական հոմանիշ բառերի պես լինում են նույնանիշ և հոմանիշ [2, 338]:

Նույնանիշ են այն դարձվածքները, որոնք նույն իմաստն են արտահայտում և հեշտորեն կարող են մեկը մյուսով փոխարինվել, ինչպես՝ *անջո՛ կ տինիլ-անջո՛ կ անիլ, լոճգոնն ո՛րա՛ն և պահիլ-լոճգոնն փօրը քիցիլ, անջո՛ կի դըրաղավ լըսիլ-անջո՛ կի ծէրավ լըսիլ, աշկի կիրօղ-աշկի փօշ, աշկ անիլ-աշկավ անիլ, սէրտը պա՛ ց-սէրտը լէն, վէնդը տափան կըտրիլ-վէնդը վէղան կըտրիլ, վէնդերը փըռիլ-վէնդերը տընգիլ, վէնդերը իրգինցընիլ-վէնդ քիցիլ, վէնդը թիթէվ-թիթէվ վէնդ, վէնդի կաղնիլ-վէնդի կըղնըցնիլ, վէնդի տակ փօրիլ-վէնդի տակը քանդիլ, թէվերը թո՛ւլա՛ նա՛ լ-վէնդերը թո՛ւլա՛ նա՛ լ, ծէրը կըլխան անպակաս-ծէրը կըլխից անպակաս և այլն:*

Նմանիշ են կոչվում այն դարձվածքները, որոնք մոտ իմաստ են արտահայտում, ինչպես՝ *կիլօխը թէթիլ - վիզը ծըռիլ, պէրա՛ նը պա՛ ց մնալ-ըշկերին չըրվատալ, կիլօխը կախիլ-աշկերը թախ կըցնիլ, փօրը մէշկան կցած-աշկին տակը փօս ինգա՛ ծ, վէնդերը ինգիլ-պէրա՛ ն ծըռիլ, ըշկաթող անիլ-կըլխա՛ ն հանիլ, խէլքի ինգիլ-մանդը կըծիլ, կիլօխը օտիլ-մեծ կտօրը անջոնկը թողալ, իրէսը շօտ տալ-քէթը յեր քաշիլ, օնբերը կիտիլ- կիլօխը կախիլ/սէրտան արո՛ն կա՛յ, սէրտը կտօր-*

կտօր անիլ, ձերք առնիլ-մանդի վիրա՛ շօռ տալ, օնքերը պա՛մ ցվիլ-վէնդէրը տափան կտրվիլ, կըլխի ինզիլ-մանդան հօտ քաշիլ, ո՛րո՛ր ձերք քիցիլ-մէշկ մէշկի տալ, քըթի մագ-քէթը ցէց և այլն:

Դարձվածքները հումանշային շարքեր են կազմում՝ արտահայտելով զբաց-մունքներ, իրողություններ, զանազան իրավիճակներ, հոգեկան ապրումներ՝ ուրախություն, տխրություն, ցավ, տառապանք և այլն: Օրինակ՝ հումանշային շարք են կազմում *գեղեցիկ, սիրուն, ջքնաղ... բառերը, նաև՝ աշկի ինզօղ, աշկ ծակօղ, աշկավօնքավ, նայել, տեսնել, դիտել... բառերը, նաև՝ աշկը ման ածիլ, աշկ քիցիլ, աշկի վիրա՛ պահիլ, աշկ տընզիլ, ամաչել, քաշվել... բառերը, նաև՝ իրէս չինիլ, աշկերը կախ քիցիլ, կիծիւր կախիլ, խայտառակել, անարգել, անպատվել... բառերը, նաև՝ իրէսին թիքիլ, շանը լափը կըլխին լըցնիլ, մահանալ, վախճանվել, անշնչանալ... բառերը, նաև՝ վէնդէրը տընզիլ, վէնդէրը իրզինցնիլ, վէնդէրը ծիքիլ, աշկերը փակվիլ, ազահ, ընչասեր, փողասեր... բառերը, նաև՝ աշկը անկօշտ, աշկը ծակ, ձերքը պէնդ և այլն:*

Հումանիշ դարձվածքները խոսքը դարձնում են արտահայտիչ և բազմազան: Դրանք թույլ են տալիս նույն միտքը տարբեր կերպ ներկայացնել՝ տալով խոսքին ավելի պատկերավոր ու կենդանի բնույթ:

Հականիշ դարձվածքներ

Հականիշ դարձվածքները կայուն արտահայտություններ են, որոնք հակա-դիր իմաստներ են արտահայտում: Դրանց միջոցով խոսքը ավելի պատկերավոր է դառնում: Օրինակ՝ *աշկի լու՛ն «շատ սիրելի» – աշկի կիրօղ «ատելի», սէրտ տալ «մխիթարել, թնավորել» – սէրտը կօտրիլ «վշտացնել, հուսահատվել», սէրտը պաճիլ «անկեղծ լինիլ» – սէրտը փակիլ «ծածկամիտ լինել», ձէնը կիլծիւր քիցիլ «բարձր ձայնով խոսել, գոռգոռալ» – ձէնը փօրումը մընալ «ձայնը ցածրանալ, ձայնը կտրել», կիլծիւր կախ ինիլ «համեստ լինել» – կիլծիւր գօվիլ «պարծենալ, մեծախոսել», վէնդի կախնիլ «ապաքինվել, առողջանալ» – վէնդէրը դիքիլ «մահանալ, վախճանվել», լու՛զուն էրգա՛ւ ն «համարձակ խոսող» – լու՛զուն կարճ «խոսելու համարձակություն չունեցող»:*

Գործիսի բարբառի հականիշ դարձվածքները կարևոր նշանակություն ունեն, որոնք արտահայտում են տարածաշրջանի մարդկանց մտածողությունը: Այս դարձվածքները հարստացնում են բարբառի բառապաշարը՝ պատմելով բարբառով խոսող մարդկանց աշխարհայացքի և մշակութային արժեքների մասին:

Ուսումնասիրելով հումանիշ և հականիշ դարձվածքները, որոնք կազմած են մարդու մարմնի մասերով, կարող ենք ասել, որ Գործիսի բարբառում գերակշռում են ավելի շատ հումանիշ դարձվածքները:

Առանձնացրել ենք նաև մի քանի դարձվածքներ, որոնք չկան գրական հայերենում: Դրանք են՝ *ջիլա՛վը ձերքը տալ – «իշխանությունը մեկին տալ», վէռը կախ անիլ, ռէխը կախ անիլ – «երկար մնալ, սպասեցնել», կըրքըքնին յէր թափիլ – «ինչ-որ բան ուտելիս ատամները ցավել, տհաճություն զգալ», դուդան էրգան – «տգեղ դեմք ունեցող», աշկումըտ սիրած – «տեղն է քեզ», [3, 131-136], կըլխին տալ –*

«*ափստալ*» (դարձվածքը, ճիշտ է, ընդգրկված է Ա. Մ. Սուքիասյանի և Ս. Ա. Գալստյանի դարձվածաբանական բառարանում [5, 149], սակայն Գորիսի բարբառում այն գործածվում է չորրորդ «*գղջալ, ափստալ*» իմաստով), *կիլօխ չրտալ* – «*չերևալ*» (գրական հայերենը ունի *գլուխ տալ* դարձվածքը, իսկ բարբառում օգտագործում ենք *գլուխ չտալ* «*չերևալ*» իմաստով, օրինակ *հիշքան վախտա կիլօխ չես տամ-հնչքան ժամանակ է չես երևում*):

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Հայկական սովետական հանրագիտարան, «Հայ սովետական հանրագիտական» հրատ., հ. 3, 1977, 720 էջ:
2. Մարգարյան Ա., Ժամանակակից հայոց լեզու, բառակազմություն, դարձվածաբանություն, բառարանագրություն (ուսումնական ձեռնարկ), Ե., ԵՊՀ, 1990, 502 էջ:
3. Մարգարյան Ի., Չբառարանագրված դարձվածքներ Գորիսի բարբառում, Բարբառագիտական ընթերցումներ, միջազգային գիտաժողովի նյութեր, ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., Երևան, 2024, 292 էջ:
4. Սուքիասյան Ա. Մ., Ժամանակակից հայոց լեզու (Հնչյունաբանություն, բառագիտություն), ԵՊՀ հրատ., Երևան, 2017, 462 էջ:
5. Սուքիասյան Ա. Մ. և Գալստյան Ս. Ա., Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան, Երևանի համալսարանի հրատարակչություն, Երևան, 1975, 734 էջ:

ПРЕОБРАЗОВАНИЯ ЧАСТЕЙ ТЕЛА НА ГОРИССКОМ ДИАЛЕКТЕ

Дарбинян Сона

Горисский государственный университет,

«Армянский язык и литература», 2-й курс

Научный руководитель:

кандидат филологических наук, доцент Л. Нерсисян

Резюме

Ключевые слова: словосочетания составленные из частей тела, горисский диалект, словосочетания-синонимы, синонимные выражения, словосочетания-антонимы, уникальная идиома

В статье подробно изучены фразеологизмы, образованные названиями частей тела в горисском диалекте, с акцентом на их синонимы, антонимы и многозначность. Горисский диалект содержит множество уникальных выражений, которые отсутствуют в литературном армянском языке и имеют свое специфическое значение. Эти выражения часто отражают местную культуру и мышление, поскольку каждое слово и фразеологизм несет лексико-семантические особенности того сообщества, в котором они используются.

IDIOMS WITH BODY PARTS IN THE GORIS DIALECT

Darbinyan Sona

Goris State University,

“Armenian Language and Literature,” 2nd Year

Academic Supervisor: L. Nersisyan,

Candidate of Philological Sciences, Associate Professor

Summary

Key words: *Idioms composed of body parts, Goris dialect, synonymous idioms, homonym idioms, antonym idioms, unique idiom*

The article thoroughly examines the idioms formed with body part names in the Goris dialect, focusing on their synonyms, antonyms, and multiple meanings. The Goris dialect contains many unique idioms that do not exist in literary Armenian and carry their own specific meanings. These expressions often reflect the local culture and way of thinking, as each word and idiom carries the linguistic features of the community where they are used.

**«ՄԻՐԱՅԻՆ ԵՌԱՆԿՅՈՒՆԻ» ՍՅՈՒԺԵՏԱՅԻՆ ՄԽԵՄԱՆ
Ն. ԶԱՐՅԱՆԻ «ԱՐԱ ԳԵՂԵՅԻԿ» ՈՂԲԵՐԳՈՒԹՅԱՆ ՄԵՋ**

Ձուրաբայան Անուշիկ

*«ՎՊՀ» հիմնադրամ,
«Հայոց լեզու և գրականություն»,
մագիստրատուրա, 2-րդ կուրս
Գիտական ղեկավար՝ ք. գ. թ. դոցենտ Շ. Բաբուշյան*

Հանգուցային բառեր. սիրային եռանկյունի, սյուժետային սխեմա, կոնֆլիկտ, Արա Գեղեցիկ, Շամիրամ, Նուարդ

Համաշխարհային գրականությունը հայտնի օրինակներ է տվել նշված սյուժետային գծի առումով, ինչպես «Աննա Կարենինա», «Տրիստան և Իզոլդա», «Տիկին Բովարի», «Քամուց քշվածները», «Իլիական» և այլն: Հայ գրականությունից սույն հոդվածի շրջանակում ընտրել ենք դրամատիկական երկ Ն. Զարյանի «Արա Գեղեցիկը» մեր ընտրած թեմայի քննությունը կատարելու նպատակով:

«Սիրային եռանկյունին» գրականության մեջ ավանդաբար կազմված է *երկու տղամարդ-մեկ կին* կամ *երկու կին-մեկ տղամարդ* փոխհարաբերությունից: Այն գրականության ամենատարածված սյուժետային սխեմաներից է, որը կա՛մ հավելյալ գործոն է, կա՛մ հիմնական պատումաստեղծ գործոն, ինչպես մեր քննարկման առարկա երկում: Սիրային եռանկյունու ծավալման համար անհրաժեշտ է, որ երկու ծայրաբևեռների կերպարները էականորեն տարբերվեն: Սիրային եռանկյունիները հաճախ խորհրդանշում են մարդկային սիրո և փոխհարաբերությունների խճճվածությունը, որոնք համապատասխանում են իրական կյանքի բարդություններին: «Սիրային եռանկյունի» ասելով տվյալ դեպքում հասկանում ենք հետևյալը. կա երեք կողմ՝ Արա, Նուարդ ու նրանց միջև մեկ այլ կերպար, որը խաթարում է իրադարձությունների բնականոն ընթացքը: Սիրային եռանկյունում երրորդ կողմի գործոնը որոշիչ նշանակություն ունի:

Այս սյուժետային գծի բնորոշ առանձնահատկություններից է այն, որ կերպարներից մեկը խճճված հարաբերություններում պարտադիր սպասում է, մյուսը ձգտում է ամեն գնով երջանկության, իսկ մեկն էլ ցավ է պատճառում մյուս(ներ)ին: Ընդ որում՝ սյուժետային ընթացքին նպաստում են խանդի դրսևորումը, հարաբերություններ պարզելը, հակառակ դեպքում էթե կերպարները մասնավորապես Շամիրամը և Նուարդը, միմյանց չառնչվեն, սյուժեն կգրկվի դինամիկ ընթացքից:

Հոդվածով **նպատակ** ունենք սյուժետային եռանկյունու միջոցով ուսումնասիրելու (Արա Գեղեցիկ-Շամիրամ-Նուարդ) սիրո, իշխանության և հակամարտության թեմաները, և թե ինչպես այս կերպարները միասին ազդեցություն են ունենում հայ ժողովրդի պատմական, մշակութային և հոգևոր ինքնության ձևավորման վրա: Հոդվածը նպատակ ունի նաև բացահայտելու, թե ինչպես տարբեր ժամանակներում Խորենացու և Նաիրի Զարյանի մոտեցումների միջոցով, կերպար-

ները վերամշակվել և ձեռք են բերել նոր իմաստներ՝ ավելացնելով խորություն և բազմաշերտություն հայ մշակութային հիշողության մեջ:

Այս հողվածի **արդիականությունը** պայմանավորված է այն իրողությամբ, որ Նաիրի Ջարյանի «Արա Գեղեցիկ»-ը, լինելով դիցապատմական ողբերգություն, դեռևս պահպանում է իր կարևորությունը ժամանակակից սերնդի համար, քանի որ չնայած մարդկային արժեհամակարգերի ու փոխհարաբերությունների հարավոյությունը՝ այս կերպարների միջոցով շարունակում են արդիական մնալ սիրո, անձնագոհության, ընտանիքին ու հայրենիքին նվիրվածության թեմաները:

Համաշխարհային գրականության մեջ բազմիցս քննարկված այնպիսի կերպարներ, ինչպիսիք են Արա Գեղեցիկի և Շամիրամի խորհրդանշական կերպարները, և որոնք պատմության մեջ շարունակում են մնալ մշակութային ու պատմական արժեքներ, Մ. Խորենացուց մինչ այսօր պարբերաբար գրական հետաքրքրություն են առաջացրել:

Արա Գեղեցիկի և Շամիրամի կերպարները մեծ նշանակություն ունեն հայ ազգային պատմության ու մշակույթի մեջ: Մ. Խորենացու և Ն. Ջարյանի գործերում նրանց հանդես գալը ենթադրում է տարբեր մոտեցումներ, սակայն ընդհանուր նպատակն է պահպանել ու խթանել ազգային արժեհամակարգը: Ջարյանը, խորացնելով Խորենացու պատկերացումները, պատմության ու մշակույթի խորքային մեկնաբանություն է տալիս՝ ընդգծելով այս երկու հերոսների կարևորությունը:

«Արա Գեղեցիկ և Շամիրամ» ավանդազրույցը պատմական տեսանկյունից դիտարկելու մինչ այժմ արված փորձերն ավելի քան բավարար են: Այդ գործում իրենց ծանրակշիռ ավանդն են բերել հայագիտության երախտավորներ Մ. Էմինը, Մ. Աբեղյանը, Ն. Աղոնցը, Ա. Մատիկյանը, Գ. Ղափանցյանը և ուրիշներ, որոնց աշխատություններում ցույց է տրվել, որ պատմիչների առասպելախառն գրույցներից հետաքրքիր տեղեկություններ կարելի է քաղել Հայկական լեռնաշխարհի տեղաբնիկների պատմության (մասնավորապես՝ Վանի թագավորության ժամանակաշրջանի) վերաբերյալ [5, 5]:

Հարկ է նշել, որ Նուարդի կերպարը Խորենացու «Հայոց պատմություն» պատմագրքում չի ստանում այնպիսի հոգեբանական ընդգծվածություն, ինչպես Նաիրի Ջարյանի ողբերգության մեջ, և չէր էլ կարող ստանալ: Նաիրի Ջարյանի ողբերգության մեջ Նուարդի կերպարը առաջնային է, և նրա դերն այստեղ չի սահմանափակվում միայն ընտանեկան նվիրվածությամբ: Ջարյանն ուրվագծում է Նուարդի կերպարի հոգեբանական խորությունը:

Նուարդի և Շամիրամի հոգեբանական տարբերությունը կապվում է նրանց՝ մարդկանց ու աշխարհի հանդեպ ունեցած ամենատարբեր մոտեցումների հետ: Նուարդը սիրով ապրող ու սիրո ցավի մեջ խեղդված կին է: Նուարդի կերպարը արտահայտում է սիրո, հավատարմության և բարոյական ուժի ամբողջություն: Ինչ վերաբերում է Շամիրամին, ապա նա ամենից առաջ մտածում է անձնական շահերի մասին: Նրա կերպարը կարելի է համեմատել պատմական ու քաղաքական տարբեր գործիչների հետ, որոնք իրենց իշխանությունը պահելու համար օգտագործում են տարաբնույթ միջոցներ:

Ողբերգության մեջ ամենից ամբողջական կերպար ներկայանում է Շամիրամը: Նրա մասին համաշխարհային և հայ գրականության մեջ բազմաթիվ ավանդություններ կան: Իհարկե, Շամիրամը առասպելի բազմաթիվ մշակումներում մեկնաբանվել է իբրև անվախճան կրքերի ու չբավարարված տենչերի մարմնացում: Նաիրի Ջարյանը իր ստեղծագործության մեջ պահպանել է Շամիրամին տրված բոլոր հատկանիշները և կերպարին փորձել է նոր շունչ հաղորդել, նոր մեկնաբանություն տվել՝ նրան հանդես բերելով իբրև դաժան բռնակալ [2, 225]:

Միրային եռանկյունու մեջ երեք կերպարները հայտնվում են պայքարի մեջ: Այս պայքարում ոչ միայն արտաքին աշխարհն է հակասական, այլև ներքին աշխարհը, որտեղ մի կողմից ուժ է և բռնություն, իսկ մյուս կողմից՝ անմեղ սիրո դրսևորում:

Նուարդի կերպարը՝ որպես սիրային եռանկյունու բաղադրիչ, կարող է էական նշանակություն ունենալ, քանի որ նրա մասնակցությունը ոչ միայն ավելացնում է սիրային կոնֆլիկտի խորությունը, այլև մերկացնում է սիրո և նվիրվածության թեմաները:

Նուարդը էմոցիոնալ առումով կապված է Արա Գեղեցիկի հետ, և այդ սիրո արտահայտությունը նրա մեջ ընդգծում է մաքրություն և ազնվություն:

Մի կողմից ողբերգության ժանրի առանձնահատկությունը պահպանելու, մյուս կողմից էլ կոնֆլիկտը խորացնելու նպատակով գրողն Արային վերագրում է փոթորկահույզ սեր Շամիրամի հանդեպ, մի բան, որ բացակայում է Խորենացու մոտ [2, 225]:

Շամիրամի բնույթը բացահայտվում է հետևյալ տողերում.

Դեմքով մի աղավնի է նա, հոգով՝ առյուծ:

Նա սարսեցնում է իմ աչքերն, ինչպես արևը բարկ [4, 432]:

Շամիրամը ներկայացվում է որպես գեղեցիկ և քնքուշ կին, որի արտաքին տեսքը անմեղության ու բարության արտացոլումն է: Նրա ներսում թաքնված ուժի ու խիզախության շնորհիվ նրան կարելի է համեմատել առյուծի՝ դաժանության, իշխանության ու գերազանցության հետ: Թվում է՝ Շամիրամը բարեհամբույր է, բայց իրականում ագրեսիվ ու իշխանատենչ է, կարող է ձևանալ միաժամանակ ուժեղ և փխրուն, դաժան ու գեղեցիկ:

Համեմատելով Մ. Խորենացու ավանդած առասպելը և Նաիրի Ջարյանի դիցապատմական ողբերգությունը՝ նկատում ենք, որ երկու գործերում էլ Արան հանդես է գալիս իբրև չափազանց առաքինի, ընտանիքին ու կնոջը նվիրված ու հավատարիմ տղամարդ: Ըստ Արտաբանի՝ դա շատ վատ է, քանի որ Շամիրամը, լինելով կամային և չար կին, կփորձի ամեն կերպ հագուրդ տալ իր ցանկությանը և իր կողմը գրավել Արային:

Շամիրամը ամեն կերպ փորձում է ցույց տալ իր ուժն ու կարողությունը. Նուարդը Հայաստանն է, Շամիրամը՝ Նինվեն. դա բացահայտվում է հետևյալ տողերում.

Արդյոք Նուարդան, իմ չքնաղ երագուռիս,
Փխրուն է, քան հավող, որ չես բերել Նինվե,

Դու հավոդից բերել ես քաղցրահամ գինին,

Նուարդայից ոչինչ [4, 445]:

Հեզագեղ Նուարդը հայոց պարծանքն է, հայոց պերճ բարբառն է ու հայոց հոգին, նա հայոց արևի տակ հուրհրատող մի վարդ է: Նուարդը իր վսեմ սիրով հանդես է գալիս իբրև վեհ բարոյականության կրող: Նուարդը բավականին խոհեմ կին է, նա իր կամքը չի թելադրում ամուսնուն, քանի որ ցանկացած կին, ով ունի առաջնորդ ամուսին կամ ընտրյալ, հարկադրված է մի բան հասկանալ. նախ և առաջ այդ ընտրյալը պատկանում է աշխարհին և նոր միայն իր սիրո առարկային:

Արան այսպես է բնութագրում կնոջը.

Նուարդ, մաքուր ու բարձր է քո հոգին,

Ինչպես Մասյաց գլխին ձյունաձերմակ մի ամպ:

Դու կուրացնում ես ինձ աստվածային քո վեհությամբ [4, 497]:

Արան հոգեկան պայքար է մղում, նա խոսում է իր հոգում կատարվող պայքարի մասին: Այս կերպարները՝ Նուարդ և Շամիրամ, ներկայացնում են երկու շատ տարբեր աշխարհներ, հակադիր կերպարներ են. մեկը մարմնավորում է սիրո, ազնվության ու մաքրության գաղափարը, իսկ մյուսը՝ դաժանության, ուժի ու ամոթալի սիրո գաղափարը: Երկու կերպարները պայքարում են սիրո զետերի միջև կործանվող թագավորի հոգում, իսկ «երկու կրակ» արտահայտությունն օգտագործելով՝ ցույց է տալիս, որ նրանց գործողությունները իր հոգում ստեղծում են հակասություններ:

«Մեկը մի պահ մարում է, մյուսն է բորբոքվում» խոստովանությամբ Արան նկարագրում է, որ երբ մեկը՝ Նուարդը, մի քիչ «մարում է», երկրորդը՝ Շամիրամը, անմիջապես ներխուժում է հոգին: Այս հակադրությունը ոչ միայն հոգեկան բեկում է առաջացնում, այլև պայքար, որն էմոցիոնալ և բարոյական մակարդակներում իրապես բարդ է: «Կամ միասին և դեմ առ դեմ են փոթորկվում՝ Պատակտելով իմ սիրտը...» տողում բացահայտվում է երկու ուժերի ոչ միայն առանձին, այլ նաև միասին լինելը անհաղթահարելի ցավի ու խառնաշփոթի մեջ: Այս «դեմ առ դեմ փոթորկումը» ենթադրում է ներքին խռովություն՝ տենդային պայքար, որի երեք կողմերն էլ ըստ էության դատապարտված են կործանման: Զգացմունքների «պատակտումը» հենց դրա արտացոլումն է՝ ներքին ճգնաժամ, որտեղ Արան ստիպված է տառապել միաժամանակ սիրո ու մոլորության ուժերի պայքարում: «Ուր գնամ» տողում հայոց արքան գտնում է իրեն քառտիկ վիճակում, ուր չի կարող որոշում ընդունել կամ գտնել անխոտոր ճանապարհ: Արան հայտնվել է փակուղում՝ երկու հակադիր ուժերի ազդեցության տակ: Նուարդը ներկայանում է որպես աստվածային սիրո մարմնավորում, իսկ Շամիրամը՝ որպես մոլի կրքերի դրսևորում: Վերլուծելով այս հատվածը հոգեբանական տեսանկյունից՝ այն կարելի է դիտարկել որպես մարդկային ներաշխարհի խառնաշփոթ վիճակի, հոգու և մարմնի հակադրության արտացոլում: Արան ապրում է սիրո հակադիր կողմերի՝ մեղքի ու անմեղության մեջ: «Ուր գնամ» հարցը մնում է անպատասխան՝ ցույց տալով, որ ներքին մոլորությունը խաթարում է թե՛ ընտրության, թե՛ ինքնաճանաչման գործընթացը:

Նուարդի միջոցով Զարյանը ցույց է տալիս կին կերպարի բազմաշերտությունը՝ ոչ միայն որպես կին, այլ նաև որպես հասարակական ու քաղաքական ուժի ներկայացուցիչ: Նուարդը այն եզակի կերպարներից մեկն է, որը կարողանում է համատեղել այս բոլոր կողմերը՝ ներկայանալով որպես ուշագրավ ու բարդ անհատ: Գարծում ենք՝ ճիշտ դիտարկում է արել Վ. Սաֆարյանը՝ Նուարդի կերպարի մեջ հայ կնոջ հավաքական հատկանիշները դիտարկելով. «Ն. Զարյանի գեղարվեստական ներշնչանքի վկայությունն այն է, որ Նուարդը բարձրացել է ի հակակշիռ Շամիրամի և դարձել ողբերգության ոչ միայն հիմնական գաղափարների կրողը, այլև գեղագիտական յուրօրինակ խորհրդանիշ: Նուարդի կերպարի մեջ տարրալուծվում են և՛ Աստվածամայր Անահիտը, և՛ Աստղիկը, և՛ Եղիշեի «Տիկնայք փափկասուն հայոց աշխարհի»» [7, 202]:

«Արա Գեղեցիկ և Շամիրամ» առասպելն աչքի է ընկնում մի առանձին հմայքով: Նրանում խիստ հակադրման սկզբունքով կերտվել են Հայաստանի թագավոր Արա Գեղեցիկի և Ասորեստանի տիրուհի Շամիրամի կերպարները Նուարդի հետ ունեցած հարաբերությունների թնջուկում: «Արան ոչ միայն գեղեցիկ է, այլև խոհեմ ու խիզախ, նա չի դավաճանում հայրենիքին և չի անտեսում բարոյական պարտադիր չափանիշները» [3, 39]:

«Առասպելում բերված Շամիրամի սիրո պատմությամբ Արա Գեղեցիկը սիմվոլացնում է նաև ամուսնական ընտանեկան հավատարմությունը, որն ըստ էության առնչվում է հայրենի հողի ու ջրի, հայրենի ժողովրդի նկատմամբ տածած նրա ջերմագին անդավաճան սիրուն» [6, 51]:

Արա Գեղեցիկը և Շամիրամը հայ գրականության մեջ նկատելի ու խորհրդանշական կերպարներ են: Այս կերպարները, որոնք սերտորեն կապված են հայոց պատմության և մշակույթի հետ, դառնում են կոնֆլիկտի կարևորագույն տարրեր սիրային եռանկյունում, որը կարելի է դիտարկել որպես հայրենասիրության, իշխանության ու մարդկային ողբերգության բարդ ու բազմաշերտ պատկերի արտահայտություն:

Արա Գեղեցիկը խորենացու «Պատմություն հայոց»-ում ներկայացվում է որպես ազգային հերոս՝ մի մարդ, ով իր կյանքը տալիս է հայրենիքի պաշտպանության համար: Նրա ամեն մի գործողություն հիմնված է ազնվության, հայրենասիրության և սիրո գաղափարների վրա: Արա Գեղեցիկի կերպարը լիարժեքորեն արտահայտում է այն գաղափարը, որ սիրո և գոհողության մեջ միահյուսվում են հերոսական սկզբունքները: Այս կերպարն ունի խորիմաստ բարոյական արժեքներ, որոնց շրջանակում սիրո գաղափարն ավելի մեծ նշանակություն է ստանում: Սակայն նա հանդիպում է Շամիրամին՝ կնոջ, որն իր ճանապարհին կանգնում է որպես իշխանության ձգտող, հակադրվող ֆիգուր: Սյուժետային մակարդակով այս սիրային եռանկյունում Արա Գեղեցիկը մնում է բարոյական առումով բարձր:

Ինչ վերաբերում է Շամիրամին, ապա նա որքան էլ ձգտում է դեպի Արա Գեղեցիկը, ավելի կարևորում է իր սեփական իշխանության ճանապարհը. պատահական չէ, որ նա գահից չի ընկրկում Արայի մահից հետո, և պատկերված չէ նրա տառապանքը սիրած տղամարդու մահվան պատճառով:

Զարյանը չի կրկնում Խորենացու հերոսներին, այլ նրանց բերում է մեկ ուրիշ պատմական ու սոցիալական հարթություն, որտեղ գերիշխում է սիրո և իշխանության պայքարը:

Արա Գեղեցիկը, Շամիրամը և Նուարդը, լինելով սիրային եռանկյունու հիմնարար դերակատարները, իրենց վարքագծով ստեղծում են բարդ պատկերներ, որոնց միջոցով Զարյանը և Խորենացին կերտում են հայ ժողովրդի պատմության, մշակույթի ու արժեքների մի էական դրվագ: Արա Գեղեցիկը ներկայացված է որպես իդեալ, մարդկային կատարյալ տեսակ: Նա հերոս է թե՛ արտաքին գեղեցկության և թե՛ ներքին բարոյական արժանիքների առումով:

Նուարդի կերպարով Զարյանը ներկայացնում է մասնավորապես հայ կնոջ կերպարի յուրահատկությունը: Այս կերպարն անցնում է կոնֆլիկտային ու հոգեբանական ուժերի ցնցող պայքարի միջով՝ պահպանելով հոգու կորովը: Սիրային եռանկյունու սյուժետային սխեման ցույց է տալիս, թե ինչպես սիրո և մարդկային իդեալների հակասությունները կարող են հանգեցնել ողբերգության:

Ըստ Պոլտի դրամատիկ իրավիճակների դասակարգման՝ այս սյուժետային եռանկյունին կարելի է ներառել չորրորդ կետում, որտեղ նշվում է հետևյալը՝ վրեժ լուծել սիրելիից սիրելիի համար [9]:

Փորձը ցույց է տալիս, որ եթե երկիրը գտնվում է արտաքին վտանգի ու անելանելի դրության մեջ, ապա ամեն կերպ պետք է փորձել այն պահել, սակայն Արան կտրականապես մերժում է իշխանության բռնակալական շունչը, ինչը առկա է Շամիրամի կերպարում:

«Արդ ինչ է մեր Շամիրամի և Արայի զրույցը: Ինչպես «այրասիրտն այն և կաթոտն» Շամիրամ նույնն է, ինչ որ իր մայրը, սիրո աստվածուհին, մարտիկ և տարփագին դիցուհին Իշտար-Աստարտե-Ատարգատիս կամ Դերկետո, նույնպես և մեր Շամիրամի և Արայի զրույցը նույնն է, ինչ որ Իշտարի և Իզդուբարի վեպը: Համեմատությունը շատ պարզ է: Մեր Արան նույնպես գեղեցիկ է, ինչպես Իզդուբար-Թամնուզ, Ադոնիս և ուրիշները: Ինչպես Իշտարն Իզդուբարին, նույնպես և Շամիրամն Արային իշխանության խոստումներ է անում իր կամքը կատարելու համար: Բայց Արան հավանություն չի տալիս, ինչպես և Իզդուբարը: Իշտարը զայրանում և մահացնում է Իզդուբարին: Այսպես և Շամիրամ տիկինն «ի սաստիկ ցասման լեալ» գալիս կոչվում է Արայի դեմ, և Արան սպանվում է այդ սիրո պատճառով» [1, 65]:

Շամիրամը իր սեփական նպատակներին հասնելու համար պատրաստ է դիմելու ցանկացած ստոր քայլի, և կարող ենք ասել, որ նրա սերը Արայի նկատմամբ իշխանություն ձեռք բերելու միջոց է: Արան, մերժելով Շամիրամին, խորհրդանշում է ժողովրդի կամքն ու հերոսական պայքարը:

Շամիրամը նույնպես ինչ-որ չափով ողբերգական կերպար է, քանի որ ձեռքից ձեռք անցնելով՝ այս կինը առաջին անգամ զգացմունքներ ուներ իր հոգում, սակայն այս դրամատիկով Զարյանը չի պահում մինչև վերջին էջը:

Այսպիսով՝ ուսումնասիրելով «սիրային եռանկյունի» սյուժետային սխեման Նաիրի Զարյանի «Արա Գեղեցիկ» ողբերգության մեջ՝ եկանք հետևյալ եզրահանգումներին.

1. Առաջին հերթին «Արա Գեղեցիկը» սիրային եռանկյունու վառ օրինակ է, որտեղ Արա Գեղեցիկը, Շամիրամը և Նուարդը արտահայտում են կոնֆլիկտային բախումներ:

2. Զարյանը հեշտությամբ է կարողացել բացահայտել կերպարների հոգեբանական շերտերը՝ նրանց ներքին և բացահայտ պայքարը դարձնելով դրամայի զարգացման արտացոլում:

3. Արա Գեղեցիկը հանդես է գալիս որպես բարձր բարոյականության կրող, իսկ Շամիրամը՝ իշխանության տենչացող, դաժան կնոջ կերպար, որը հակադրվում է Նուարդի բարոյական գաղափարներին:

4. Ն. Զարյանի «Արա Գեղեցիկը» առհասարակ խորացնում է Խորենացու պատմագրքում ներկայացված կերպարների հոգեբանական վերլուծությունը՝ հարդրելով նոր նշանակություն:

5. Հողվածի քննությունը ապացուցում է, որ «Արա Գեղեցիկ»-ի կերպարները կարող են հետաքրքրել ու հուզել և՛ ժողովրդի պատմությունն ու մշակույթը ուսումնասիրողներին, և՛ արդի ժամանակների ընթերցողներին:

6. Սյուժետային զարգացման մեջ կարևոր դեր են խաղում կերպարների միջև հանդես եկող հակադրությունները՝ հատկապես Շամիրամի իշխանության և Արա Գեղեցիկի բարոյական սկզբունքների պայքարը, որը նաև բացահայտում է սիրո և իշխանության բարդ հարաբերությունները:

7. «Սիրային եռանկյունի» սյուժետային սխեման գրականության սիրելի սխեմաներից է, որ յուրովի է դրսևորվել նախիկզարյանական մշակման մեջ՝ բացահայտելով կերպարների հոգեբանական խորքերը, հակադրության զարգացումները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աբեղյան Մ., Երկեր 1, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1966, Երևան, 570 էջ:
2. Աղաբաբյան Ս., 20-րդ դարի հայ գրականության զուգահեռականներում, գիրք 1, Սովետական գրող, Երևան, 1983, 432 էջ:
3. Դոլուխանյան Ա., Հայ ժողովրդական բանահյուսություն, Երևան, 2008, 268 էջ:
4. Զարյան Ն., Երկերի ժողովածու, հատոր 2, «Սովետական գրող» հրատարակչություն, Երևան, 1984, 701 էջ:
5. Թումանյան Գ., Արա Գեղեցիկ և Շամիրամ, Զանգակ-97, Երևան, 2005, 50 էջ:
6. Հայ բանահյուսության քրեստոմատիա, Երևան, 1974, 531 էջ:
7. Սաֆարյան Վ., Նախիկ Զարյան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Եր., 1985, 235 էջ:
8. <https://cyberleninka.ru/article/n/tipichnye-syuzhetnye-shemy-v-povestvovaniyah-i-v-zhizni/viewer> (28.02.2025)
9. https://sharing.mail.ru/shared_token=W07KsfVmYaOdk21zYs8B7R4-pStU9QlmcAotA9UeqOJK (28.02.2025)

**СХЕМЫ ЛЮБОВНОГО ТРЕУГОЛЬНИКА В ТРАГЕДИИ Н. ЗАРЯНА
«АРА ПРЕКРАСНЫЙ» («АРА ГЕХЕЦИК»)**

Зурабян Анушик

*Фонд “ВГУ”, «Армянский язык и литература»,
магистратура, 2-й курс*

*Руководитель магистерской диссертации:
кандидат филологических наук, доцент Э. Бабурян*

Резюме

Ключевые слова: любовный треугольник, сюжетная схема, конфликт, Ара Гехецик, Шамирам, Нуард

Статья посвящена проявлению сюжетной схемы любовного треугольника и психологическому обоснованию персонажей в трагедии Наири Заряна «Ара Прекрасный» («Ара Гехецик»). В данном сюжетном треугольнике представлены три основные типические фигуры: Ара Прекрасный, Шамирам и Нуард. В трагедии доминирует напряжённый внутренний конфликт, в рамках которого тема любви становится центральной движущей силой, раскрывающей эмоциональные переживания и внутренний мир персонажей.

**“LOVE TRIANGLE” PLOT SCHEME IN N. ZARYAN’S TRAGEDY
CALLED “ARA GEGHETSİK”**

Zurabyan Anushik

*“VSU” Foundation, “Armenian Language and Literature”,
Master’s Degree, 2nd Year*

*Academic Supervisor: H. Baburyan,
Candidate of Philological Sciences, Associate Professor*

Summary

Key words: love triangle, plot scheme, conflict, Ara Geghetsik, Shamiram, Nuard

The article is dedicated to the expression of the “love triangle” plot scheme and the psychological grounding of the characters in Nairi Zaryan’s tragedy called “Ara Geghetsik”. In this plot triangle, there are three main typical characters: Ara Geghetsik, Shamiram, and Nuard. The tragedy is dominated by an intense inner conflict, in which the theme of love becomes the central driving force, revealing the emotional experiences and inner worlds of the characters.

**ԵՂԻԱ ՏԵՄԻՐՃԻՊԱՇՅԱՆԻ ԲԱՌԱՍՏԵՂԾՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ
ՀՐԱՊԱՐԱԿԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ**

Թաղնոսյան Անժէլա

*«ՎՊՀ» հիմնադրամ,
«Հայոց լեզու և գրականություն»,
մագիստրատուրա, 1-ին կուրս
Գիտական ղեկավար՝ Բ. Գ. Թ., դոցենտ Լ. Պետրոսյան*

Հանգուցային բառեր. գոյական, ածական, բառաբաղադրիչ, ածանց, լեզվամտածողություն, հեզնանք

Ժամանակակից լեզվաբանության մեջ նորաբանությունների ուսումնասիրությունն ունի առաջնային նշանակություն՝ որպես լեզվի զարգացման և հարստացման միջոց: Ե. Տեմիրճիպաշյանի հրապարակախոսության լեզվական վերլուծությունը կարևոր է ոչ միայն որպես լեզվաբանական խնդիր, այլև որպես մշակութաբանական երևույթ. նրա նորաբանությունները հանդիսանում են իր ժամանակի հասարակական-քաղաքական և ազգային-մտավոր միջավայրի լեզվական անդրադարձ:

Սույն աշխատանքը նպատակ ունի վերլուծելու Եղիա Տեմիրճիպաշյանի հրապարակախոսական գործերում հանդիպող բառաստեղծման միտումները՝ բացահայտելով դրանց հատուկ կառուցվածքային, ոճական և գաղափարական առանձնահատկությունները:

Նպատակին հասնելու համար մեր առջև դրված խնդիրներն են՝

1. Հայտնաբերել Տեմիրճիպաշյանի հրապարակախոսության մեջ կիրառված բառաստեղծական միավորները:
2. Դասակարգել դրանք ըստ բառակազմական և ոճաբանական կառուցվածքի:
3. Վերլուծել նորաբանությունների գործառույթները՝ արտահայտչականության, հեզնանքի և հեղինակային վերաբերմունքի տեսանկյունից:
4. Արձանագրել այն օրինաչափությունները, որոնք բնորոշ են հեղինակի լեզվամտածողությանը:

Ուսումնասիրությունը կատարել ենք համադրական, վերլուծական և նկարագրական մեթոդներով:

Առաջին հայացքից թվում է՝ նորաբանությունները հատուկ են չափածո խոսքին, որտեղ կան ծավալային և հանգավորման, վանկերի քանակի պահպանման խնդիրներ, և դրանք, կարծես, միտված են լուծելու հենց այդ խնդիրները: Բայց առավել հետաքրքիր են նորաբանությունների դրսևորումները արձակում, մասնավորապես հրապարակախոսության մեջ, որտեղ վերոհիշյալ խնդիրները չեն առաջանում: Հրապարակախոսության մեջ նորաբանությունների դիմելու նախադրյալ է դառնում խոսքին հնչեղություն և ազդեցիկություն հաղորդելու անհրաժեշտությունը: Կոստումարովը նշում է. «Հիշվում է նույնիսկ անհետաքրքիր հոդվածը,

Եթե ընթերցողը այնտեղ հանդիպում է լեզվական անհամապատասխանության կամ երկիմաստության, ընդհանրապես՝ որևէ անսովորության կամ անակնկալի» [3, 85]:

Ի տարբերություն գեղարվեստական գրականության, որտեղ հանդիպող նորաբանությունները հաճախ մնում են հեղինակի բառապաշարի տիրույթում և չեն դառնում համագործածական, հրապարակախոսական ելույթները սովորաբար ընդգրկում են հասարակության ավելի լայն շերտեր, իսկ դրանցում քննարկվող հարցերն ու խնդիրները ժողովրդի կողմից ամենաշատն են արձագանք ստանում, հետևաբար այս ոճի բառաշերտը կարող է արագ մտնել առօրյա-խոսակցական լեզվի մեջ:

Իհարկե, այսօր դժվար է որոշել՝ ինչքանով են Եղիա Տեմիրճիպաշյանի կերտած նոր բառերը գործածական եղել 19-րդ դարում, բայց քանի որ իր հրատարակած պարբերականներում նա անդրադառնում է հայոց ազգային, հասարակական, կրոնական, գրական-մշակութային, կրթական-մանկավարժական և բազմազան այլ հարցերի ու խնդիրների, որոնք ժամանակի ընթացքում չեն կորցրել իրենց արդիական շունչը, չի բացառվում, որ նրա որոշ դիպվածային կազմություններ դառնան գործածական բառեր:

Հրապարակախոսական տեքստերը հաճախ պահանջում են մանրամասն վերլուծություն, հստակ տրամաբանական շարադրանք, ինչպես նաև հեղինակային վերաբերմունքի արտահայտություն, ինչը հնարավոր չէ առանց լեզվական գագացական միջոցների օգտագործման:

Ե. Տեմիրճիպաշյանը խոստովանում է, որ միշտ չէ, որ գոհ է մնացել իր ստեղծած բառերից. «Այդ հոյակապ բառարաններուն վրայ՝ իմոյս առաւելութիւնն նոր շինած բառերս կը կազմեն: Որքա՛ն առհասարակ գոհ կը մնամ մատենագրած պահուս ստեղծած բառերէս, այնքա՛ն դժգոհ կը մնամ ընդհանրապէս ա՛յն բառերէն՝ զորս բառգիրքի մը պատրաստութեան ժամանակ կը յօրինեմ մտաց անլծորդ, անզսպանակ գործունէութեան մը միջոցին: Սոցա մէջէն ժողովուրդն անշուշտ զգուշեաւ ընտրանօք պիտ'առնու, եւ թերեւս առնէ գործածէ ա՛յն բառերը, զորս բնագղով՝ ականջով շինած եմ, ժամանակի սղութիւնն – եւ ամենէն դժբաղդ պարագայից զուգորդութիւնն – ինձ թոյլ չտալով յար գիտական համբերատար բառակազմութիւն» [2, 5]:

Բայց միննույն ժամանակ Տեմիրճիպաշյանը ոչ գործածական հնաբանությունների փոխարեն առաջարկում է նորաբանություններ, որոնք բնութագրվում են համապատասխան նորաբանություններով հետևյալ խոսքում՝ Պետք չէ, որ հոն մուտ գտնեն բոլորովին անգործածելի բառեր, **լեզուայարդէն**² ժողովրդեան ու **լեզուայարդար** մատենագրաց կողմէն արտաքսուած՝ հաւասարապէս ընթացիկ լեզուէն ու գրականութենէն. պէտք է, ընդհակառակն, որ բառագրքէ մը դուրս չը ձգուին այն բառերն, որք ընդունուած են գիտնոց կողմանէ, թէւ մերժուած կամ

¹ Խոսքը Նորայրեան ու Նուպարեան բառարանների մասին է:

² Ընդգծումները մերն են:

դեռ չընդունուած պաշտանապէս Կաճառի մը կողմանէ. բառի մնայլեայլ առումներն այն կարգաւ շարուած ըլլալ պարտին, որով յառաջ եկած են բառի մը կենաց ընթացքին մէջ [117]:

Դիպվածային բառերի հիմքը թէն սկզբունքորէն նույն բառակազմական օրինաչափություններն են, սակայն լեզվական նորմի հետ ունեցած հարաբերության մէջ դրանք կարող են նաև կանոնական չլինել, հիմնականում իրադրության կամ համատեքստի պահանջով են ստեղծվում կամ այսպէս կոչված բառակազմական համաբանության արդյունք են և ունեն առավելապէս ոճական նպատակադրում, աչքի չեն ընկնում ընդհանրական դառնալու միտումով [1, 194-198]:

Թեկուզև այդ բառերը դեռևս չեն մտել լեզվի գործածական բառերի շերտ, բայց դրանք կարևոր են բառաստեղծման առումով, որոնք ցույց են տալիս լեզվի ճկունությունը:

Երբեմն նորաբանությունների ստեղծման առիթ են դառնում այս կամ հանդեսը, աշխատությունը և դրանց գործունեությունը բնութագրելը՝ դրանով իսկ ընդգծելով նաև հեղինակի վերաբերմունքը: Այսպէս՝ Զմիւռնիոյ **հեղինակափառ** Հանդէսն, ինչ-ինչ քննադատական խաւսէրէ յետոյ կը քաջալերէ Գիտական Հանդիսին հրատարակիչն եւ յարատեւութիւն կը մաղթէ նմա [62]: Կամ՝ Բազմահմուտ ու ծանրախոհ Եւրոպացի հեղինակ մը, Տէրին, իր **Ճեմարանապսակ Վաճառանութեան պատմութեան** մէջ ստեղծ կը խոսի Հայոց վրա [71]:

Ընդ որում՝ նորաբանությունների կերտմանը նպաստում է ոչ միայն այն հանգամանքը, որ հեղինակն է բնութագրում այս կամ այն հանդեսը, այլև ուրիշների վերաբերմունքը իր իսկ հանդեսի նկատմամբ: «Գրականութեան համար Հանդէսս անցեալ ամ վայելած է գլխաւորապէս երիտասարդ ու մեծատաղանդ գրագէտի աշխատակցութիւնն, որ **Հրաչեայ գարդանունով** դատած է «Մարդիկն եւ իրքն»՝ արիւնակ ընծայելով ընդհանրապէս քաջագեղ ոճոյ ու **քաջադատ** մտաց» [74]: Հեղինակը կեղծանուն կամ ծածկանուն բառերի փոխարեն ստեղծել է զարդանուն նորաբանությունը: Առաջին հայացքից թվում է՝ հեղինակը ցանկացել է ընդգծել գրողի համարձակությունը ու **քաջագեղ** ածականի նմանողությամբ ստեղծել է **քաջադատ** ածական-նորաբանությունը, բայց կարգալով հրապարակախոսական այլ հոդվածներ, մասնավորապէս «Խոստովանութիւնք առ Հրաչեայ»-ն՝ նկատում ենք, որ Տեմիրճիպաշյանի և Հրաչյայի հարաբերությունները ներդաշն հողի վրա չէին կառուցված. «...դու կ'այայանէս ս զիս, ո՛ Հրաչեա, դու զիս պաղարեամբ **դէրասան** կ'անուանես, եւ **անկեղծութեան** բարոյական դասեր ինձ աւանդելու կը մտաբերես «Երկրագունտին» մէջ...» [60], հետևաբար այս նորաբանությունները կերտված են հեզնական իմաստով:

Եվ վերջապէս իր ստեղծած նոր բառերով հեղինակը կարող է բնութագրել իրեն՝ բացահայտելով իր լեզվամտածողությունը, ինչպէս՝ «Եթէ երբէք կրնայ շահ կոչուիլ նպաստ մը, որ, որքան փափկութեամբ ալ մատուցուի, կը ծանրանա՛յ յաւետ **անկախատենչ** հրապարակագրի մը սրտին վրա» [63]:

Եղիա Տեմիրճիպաշյանը նորաբանությունները ստեղծում է գիտակցաբար, օրինակ, բարերարապէտ բառը կերտելուց հետո մտահոգում է այն հարցը՝ կմտնի

ժողովրդի մեջ: Այսպես՝ ցույց տալու տեր Միքայել Հակոբյանի ոչ սովորական բարերարական գործունեությունը, նրան հռչակում է *բարերարապետ*, որի *պետ* բաղադրիչի ընտրությանը նպաստել է նույն հատվածում հանդիպող *վարչապետ* բառը: Երկու մեծ պատրիարքաց դիմաց երկու մեծ անձնատրություններ կային՝ վարչապետ Վսեմաշուք Նուրեան տեար, եւ **բարերարապետ** Ազնուաշուք Յակոբեան Միաքել տեար: *Բարերարապե տ*: Այս բառն արդեաւք խո րթ պիտի հնչէ Հայ ականջներուն. Բնչ ալ ըլլայ, իրողութեան մը կը համապատասխանէ այն: Արդարեւ մայրաքաղաքիս մէջ չը կայ մեծատուն մը, որ Յակոբեան տիրոջ չափ բարերարած ըլլայ [80]:

Հետաքրքիր է *համայնաստեղծ* ածականը, որը դարձել է Աստված բառի որոշիչը: Նույն Աստված գոյականը ստացել է նաև անստեղծ լրացումը, և այս երկու հատկանիշները հակադրություն են առաջացնում, բայց ամբողջացնում Աստծո բնույթը: Մի կողմից ընդգծում է, որ Աստված ինքնին անստեղծ է, քանի որ չի ստեղծվել ինչ-որ մեկի կողմից, մյուս կողմից՝ համայնաստեղծ է, այսինքն՝ ստեղծել է ամեն ինչ՝ Եւ ինձ յորդոր Դու մարդասիրաբար կը կարդաս՝ «իմ աղու բառերով ու նուագաւոր իմ ոճով» քարոզ հանդիսանալ բուն դրական իմաստասիրութեան, այն իմաստասիրութեան, որ կ'ուսուցանէ մարդոյն հաւատալ եւ ո՛չ ուրանալ, արհնել եւ ո՛չ անհիծել, արհամարհել նիւթն եւ հռչակել անհասանելի զարութիւնն եւ անպատմելի մեծութիւնն աննիւթ, անստեղծ ու **համայնաստեղծ** Աստուծոյն [105]:

Տեմիրճիպաշյանը հաճախ քննադատում է նաև մեր ազգին, որը նախընտրում է օտար երկրների բարիքները, սովյալ դեպքում՝ գինին: Այսպես՝ *բյուրագունակ* և *բյուրախորժակ* հատկանիշներով բնութագրվող ֆրանսիական գինին, որտեղ *բյուրագունակ* նորաբանության *գունակ* բաղադրիչը ունի տեսակ իմաստը և ընդգծում է բազմազանությունը, իսկ *բյուրախորժակը*՝ շատ համերը, հակադրում է հայկական թեև ոչ բազմազան ու բազմահամ, բայց «անարատագոյն ու հզարագոյն» գինուն: Կը մոռնանք, թէ մենք ալ ազգ մենք, ոյր քաղաքակրթութիւնն հնագոյն է, քան ֆրանսական ազգինն. ո՛հ, կը մոռնանք, թէ մենք ալ բնագաւառ մունինք, ոյր այգիներն անարատագոյն ու հզարագոյն գինի կընծայեն, քան **բիրագունակ** ու **բիրախորժակ** ֆրանսական գինիներն [106]:

Տեմիրճիպաշյանի արձակ գործերից մեկում («Վարդէն Աստուած») նույնպես հանդիպում ենք *բյուրագունակ* ածական-նորաբանությունը, որը կարող է և՛ «շատ տեսակ», և՛ «շատ գույներ» նշանակել՝ Դալարիք ու ծաղկունք, այո՛, ելեւելումով մը ցնծատե՛նդ՝ երկրիս արգանդէն ելած ու բուրբուած են շուրջ... վարդի՛ն. աչկու՛նք եւ ա՛յդ ծաղկունք՝ բիրապատիկ ու **բիրագունակ**՝ երկնից կապուտակ ալքին հետ միակ՝ համողջունելու համար, հեռուէն կամ մաւտէն համբուրելու համար թագուհին ծաղկանց [326]:

Հեղինակը -ություն ածանցով նորաբանություններ է կերտում և՛ գործածական, և՛ ոչ գործածական բառերից, այսպես գործածական *գավազանակիր*, *բազմահող*, *չարավաստակ*, *գործատեսաց* ածականներից կազմվել են *գաւազանակրութիւն* [116], *բազմայաւորութիւն* [118], *չարավաստակութիւն* [118], *գործատեսացու-*

թիւն [122] գոյականները, իսկ *առատախաւսութիւն* [69], *թերսպասաւորութիւն* [71], *շղթայայարութիւն* [122] գոյականների բաղադրիչների ընտրությունն ու կապակցելիությունը հեղինակային է:

Ուշագրավ է *հունկերգություն* [118] գոյական-նորաբանությունը: Հունկ-ը մի գրաշարի անուն է, և ինչպէս իր բանաստեղծություններից ենք տեղեկանում, անձնասպան է եղել [314]: Հավելենք, որ մի ամբողջ շարք է նվիրել նրան: Եվ ահա Տեմիրճիպաշյանը Հունկին նվիրված շարքը անվանում է հունկերգություն: Իսկ սա տեղ է գտել իր հրապարակախոսության մեջ, քանի որ այն հրատարակել էր «Մասիս» շաբաթաթերթում, որի խմբագրի հետ հետագայում վատ հարաբերությունների մեջ է եղել:

Այսպիսով՝ Ե. Տեմիրճիպաշյանի հրապարակախոսության մեջ նորաբանությունների կիրառությունը ոչ միայն արտացոլում է նրա լեզվամտածողության յուրահատկությունը, այլև վկայում է լեզվական նորարարական փորձերի մասին: Նրա ստեղծած նորաբանությունները հաճախ ունեն ռճական ուղղվածություն, ընդգծում են հեղինակի վերաբերմունքը և արտահայտում են ժամանակի հասարակական ու մշակութային խնդիրների շուրջ նրա դիրքորոշումները:

Հեղինակի բառաստեղծման մեջ նկատվում է ներքին ռիթմի, համահունչ բաղադրիչների, այսպէս ասած, ներքին հանգի օգտագործումը, ինչը նպաստում է լեզվական արտահայտչականության բարձրացմանը: Երբեմն էլ նույն բառաբաղադրիչների կիրառմամբ ստեղծում է հակադիր իմաստներ արտահայտող բառեր:

Ե. Տեմիրճիպաշյանի բառաստեղծական փորձերը հաստատում են, որ լեզուն շարունակաբար զարգացող և հասարակական կյանքի փոփոխություններին արձագանքող համակարգ է:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Էլոյան Ս., Ժամանակակից հայերենի բառային ռճաբանություն, Երևան, ԳԱԱ հրատ., 1989, 258 էջ:
2. Տեմիրճիպաշյան Ե., Բառարան Ֆրանսերեն-Հայերեն, Կ. Պոլիս, Յ. Մ. Սէթեան, 1930, 1198 էջ:
3. Костомаров В. Г. Языковой вкус эпохи (из наблюдений над речевой практикой масс-медиа), Москва: Педагогика-Пресс, 1994, 247 с.

ТЕНДЕНЦИИ СЛОВОТВОРЧЕСТВА ЕГИИ ТЕМИРЧИПАШЯНА В ПУБЛИЦИСТИКЕ

Тадевосян Анжела

Фонд “ВГУ”, «Армянский язык и литература»,
магистратура 1-й курс

Руководитель магистерской диссертации:
кандидат филологических наук, доцент Л. Петросян

Резюме

Ключевые слова: существительное, прилагательное, компонент слова, аффикс, языковое мышление, ирония

Использование неологизмов в публицистике Е. Темирчипашяна не только подчёркивает оригинальность его языкового мышления, но и свидетельствует о стремлении к новаторству и экспериментам в словотворчестве. Его неологизмы выполняют стилистическую функцию, выражают авторскую позицию по общественным и культурным вопросам, а также усиливают выразительность текста за счёт внутреннего ритма, рифмы и звуковой гармонии.

THE TRENDS OF WORD FORMATION IN THE PUBLIC DISCOURSE OF YEGHIA TEMIRCHIPASHIAN

Tadevosyan Anzhela

“VSU” Foundation, “Armenian Language and Literature”,
Master’s Degree, 1st Year

Academic Supervisor: L. Petrosyan,
Candidate of Philological Sciences, Associate Professor

Summary

Key words: noun, adjective, word component, affix, linguistic thinking, irony

The use of neologisms in Temirchipashian’s public discourse not only highlights the originality of his linguistic thinking but also demonstrates his commitment to innovation and experimentation in word creation. His neologisms serve a stylistic function, expressing the author’s position on social and cultural issues, and enhancing the expressiveness of the text through internal rhythm, rhyme, and sound harmony.

ՀԱՅ ՎԱՃԱՌՎԱՆԻ ՏԻՊԸ ԵՐՎԱՆԴ ՕՏՅԱՆԻ
«ՎԱՃԱՌՎԱՆԻ ՄԸ ՆԱՄՄԿՆԵՐԸ» ԷՊԻՍՏՈԼՅԱՐ ՎԻՊԱԿՈՒՄ

Թամազյան Աստղիկ

*«ՎՊՀ» հիմնադրամ,
«Հայոց լեզու և գրականություն»,
մագիստրատուրա, 2-րդ կուրս,
Գիտական ղեկավար՝ ք. գ. թ., դոցենտ Շ. Բաբոնյան*

Հանգուցային բառեր. վաճառականի նամակներ, բուրժուազիա, կատարյալ մարդ, Գոզմա էֆենտի

Հայ բուրժուազիայի գաղափարախոսությունն Օտյանը մերկացրել ու ծաղրել է «Վաճառականի մը նամակները կամ կատարյալ մարդ ըլլալու արվեստը» վիպակում, որն ընդգրկում է 1906-1913 թթ. տաճկահայ իրականության ժամանակաշրջանը, այսինքն՝ համիդյան ռեակցիայի, 1908 թ. սահմանադրական հեղաշրջման, մարտի 31-ի (ապրիլի 13) արկածախնդրության և օսմանյան սահմանադրության վերահաստատման ժամանակաշրջանը: «Կատարյալ մարդ ըլլալու» թեզը հեղինակը գործածում է ըստ երկի գլխավոր կերպարի հասկացողության, սակայն հեզնանքով, այսինքն՝ կատարյալ շահագործող, կատարյալ բուրժուա: Իր խորհուրդներով Գոզմա Դամիանոսյանը որդուն այլ բան չի սովորեցնում, քան կատարյալ շահագործող լինել: Վիպակի մեջ ամենակարևորը Գոզմայի վերաբերմունքն է կյանքի տարբեր խնդիրների նկատմամբ, նրա մտածելակերպը: Օտյանը ռեալիստորեն, ամբողջ խորությամբ վերլուծում է վաճառականի հոգեբանությունը՝ երկի նարատիվը կառուցելով հենց կերպարի դիտանկյունից, ինչին նպաստում է նամականու ձևը: Գոզման ծայրաստիճան ժլատ և ագահ մարդ է և իբրև այդպիսին՝ սարսափում է շռայլությունից. նրա երջանկության միակ աղբյուրը նյութական ապահովությունն է, որի շուրջ նա իր կյանքի փիլիսոփայությունն է կառուցել: Նա անգամ ընդունակ չէ հասկանալու արվեստի և գրականության գեղեցկությունը, ոգևորվելու պոեզիայով, քանզի լավագույն պոեզիան նրա համար գումարումն ու բազմապատկումն է: Օտյանն իր կերտած կերպարի մեջ շեշտել է բնավորության առանձնապես երկու գիծ, որոնք բնորոշ են 20-րդ դարի սկզբի հայ վաճառականին՝ չափազանց ագահ և քաղաքականապես խիստ ձկուն: Գոզման բուրժուական հասարակարգի ծնունդն է, բուրժուական բարոյականության մարմնացումը, ինչպես նաև դրա գիտակից ու հետևողական պաշտպանը:

Սույն հետազոտությունը կատարել ենք՝ հետևյալ նպատակներն ու խնդիրները սահմանելով, կատարելով մեթոդական ընտրություն:

Նպատակը: Վերլուծության ենթարկել հայ վաճառականի տիպը՝ բացահայտելով Գոզմա Դամիանոսյանի տիպական կերպարը՝ իր ամբողջ քաղաքական ու հոգևոր մերկությամբ:

Խնդիրները

- հանգամանորեն վերլուծել երկը, հատկապես գլխավոր կերպարի սկզբունքները,

- բացահայտել օտյանական արձակի տիպերից մեկի առանձնահատկությունները,
- անդրադառնալով նամականու հատկանիշներին՝ ցույց տալ կերպարակերտման հարցում սեռաժանրային ընտրության առավելությունը:

Մեթոդները: Աշխատանքի ուսումնասիրության ժամանակ օգտվել ենք համադրական ու վերլուծական մեթոդներից:

Արդիականությունը: Քանի որ Օտյանի՝ քննության առարկա երկը գրականագիտության ուշադրության կենտրոնում չի եղել, և մեր անդրադարձը եզակիներից է, դրանով աշխատանքը դառնում է արդիական, ավելին՝ աշխատանքի արդիականությունը պայմանավորված է նաև հայ վաճառականի տեսակի վերլուծությամբ, տեսակ, որը զգալիորեն բնորոշ է հայ գրականությանը:

Ժանրատեսակի ընտրությունը: Երվանդ Օտյանի «Վաճառականի մը նամակները» ստեղծագործությունը պատկանում է գրական ժանրային տեսակներից վիպակին, բայց գրված է նամականու ձևով: «Էպիստոլյար գրականությունը (հունարենից՝ ուղերձ) սկզբում ընկալվել կամ հետագայում մեկնաբանվել է որպես գեղարվեստական կամ լրագրողական արձակ՝ ընդգրկելով ընթերցողների լայն շրջանակ: Նման նամակագրությունը հեշտությամբ կորցնում է իր երկկողմանի բնույթը՝ վերածվելով պայմանական կամ անվանական հասցեատիրոջն ուղղված նամակների շարքի» [7]:

Ահա պատմականառումնալից էպիստոլյար ձևաչափը դառնում է նաև Օտյանի ընտրությունը՝ իր ժամանակաշրջանի վառ տիպերից մեկին՝ հայ վաճառականին բացահայտելու համար: «Նամականու ձևը այս վիպակում Եր. Օտյանի գրչի տակ ստացել է հերոսների հոգեբանության վերլուծություն, արդիական հրատապ խնդիրների արժարժման լայն հնարավորություններ: Երգիծանքի տարբեր հնարանքները, մանավանդ հակադրությունը, ձեռք է բերել մարդկային արատները բացահայտող վիթխարի ուժ: Եվ հակադրության երկու կողմերը հայր և որդի Դամիանոսյաններն են՝ Գոզման և Միհրանը: Անշուշտ, վիպակի կենտրոնական դեմքը Գոզմա Դամիանոսյանն է, որի իր որդուն՝ Միհրանին, փեսային՝ Թոչնակերյան Մարտիկ էֆենդուն, ռոտոսթոնգի բարեկամ Փիլիպոսին ուղղված և իր անանուն տոմարակալից ստացած նամակները, ինչպես նաև հեղինակի «Բացատրություն մը» հառաջաբանը կազմում են վիպակի ամբողջ հյուսվածքը» [4, 359]:

Երգիծանքը որպես քննադատության միջոց «Վաճառականի մը նամակները»

Երկում: Ծավալով փոքր, սակայն բովանդակային լայն ընդգրկումով այս երկն ունի նաև ենթավերնագիր՝ «Կատարյալ մարդ ըլլալու արվեստը», որը, սակայն, ճիշտ հակառակ նպատակադրում ունի և բանալի է երկի ընկալման համար: Նամակագրական ձևաչափի ընտրությունը նարատորի դիմային ընտրություն է ենթադրում, որով պատումը համոզիչ երանգներ է ստանում, դառնում կերպարի սկզբունքների արտահայտման եղանակ, ինչին առանձնահատուկ երանգ է հաղորդում երգիծական միջոցների բազմաշերտ կիրառությունը: Վիպակում հաշվենկատ, «սեփական փորը» հայրենիք դարձրած ու միայն անձնական շահ հետապնդող վաճառականը ինքնաներկայացվում է որպես կատարյալ մարդ: Գոզմա

էֆէնտի Դամիանոսյանն ամեն ջանք գործադրում է իր հարազատներին ևս «կատարյալ մարդ» դարձնելու միտումով: Իրականում որդուն, փեսային և աղջկան նրա տված խորհուրդները հեռու են իրապես կատարյալ մարդ դառնալուն միտված խորհուրդներից:

Ըստ Օտյանի վաճառականի նամակները իրեն հանձնել է Գոզմայի տոմարակալը՝ նշելով, որ այդ նամակները պարզապես ցույց են տալիս հայ վաճառականի հոգեբանությունը, կյանքի ըմբռնումը և ինտելեկտը: Մրանից գատ՝ տոմարակալի համար նշանակություն չունի, որ հեղինակը կարող է փոփոխել նամակների հասցեները կամ անունները, որովհետև «...անձերը կարևորություն չունեն, այլ նամակներու ոգին» [6, 573]:

Ինչպես ընկալվում է երկի ընթերցումից, Գոզմա Դամիանոսյանը տվյալ ժամանակաշրջանի հայ վաճառականի ընդհանրական տիպ է (նշենք նաև, որ տոմարակալն այս նամակները բնորոշում է որպես ընդօրինակության տեսորակ): Առհասարակ Ե. Օտյանի գրական հայացքը կենտրոնանում է իրականության նկատելի կերպարների, շատ հաճախ՝ տիպերի վրա, ինչպես Փանջունին, հեղափոխության մակարույծները, քանի որ երգիծանքի միջոցով քննադատում է հասարակական արատավոր տիպերի՝ փանջունիականությունը, հայ վաճառականությունը իրականությունից արմատախիլ տեսնելու մտահոգությամբ: «Գոզմայի տիպը հետաքրքրական է առանձնապես այն տեսակետից, որ բավականաչափ կրթված և եվրոպական բուրժուական կյանքին իրազեկ մի անձնավորություն ներկայացնում է արդեն եվրոպականացած հայ բուրժուական շերտերին: Կրթությունը և քաղաքական կյանքի իրազեկությունը ոչ միայն չեն մեղմացրել նրա, իբրև շահագործողի, գիշտափ բնագոյները, այլ ավելի վտանգավոր են դարձրել: Գոզման կրթության և եվրոպական կյանքի իրազեկության շնորհիվ դարձել է ավելի շրջանկատ, ավելի խարդախ, խորամանկ ու ճկուն» [2, 170-171]:

Գոզմայի նամակների պատասխան նամակները՝ որպես առանձին իրողություններ, վիպակում առկա չեն, բայց հայրն իր նամակներում որոշակի մեջբերումներ է անում որդու խոսքերից, ինչով ապահովում է երկի երկխոսական բնույթը: Գոզմային շատ է գայրացնում ու հունից հանում որդու այն միտքը, որ դրամը պարզապես միջոց է և ոչ թե նպատակ, քանի որ նա գաղափարի մարդ է դառնալու. «Ես իտեալի գաղափարական մարդ ըլլալ կուզեմ. ինձի համար դրամը կամ հարստությունը միջոց մըն է և ոչ թե նպատակ մը» [6, 576]:

Գոզմա էֆէնտու նամակները որակվում են գուտ անձնական ու մտերմական նամակներ՝ ուղղված իր զավակին, ով Ժնևում ուսանող էր: Նամակ առ նամակ կերպարակերտման ինքնաբնութագրման եղանակով հառնում է հայ վաճառականի տիպը: Առաջին նամակից աստիճանաբար բացահայտվում է Գոզմա էֆէնտիի «որակներից» մեկը՝ ժլատությունը, որ դրսևորվում է անգամ հեռվից հղված բյուր համբույրների նկատմամբ, մի տեսակ չափազանց է և իրականությունից հեռու: Գոզման որդուն՝ Միհրանիկին, այսպես է խրատում. «Կաղանդի առթիվ մեզի ուղղած շնորհավորություններդ մեծ հաճույքով կարդացինք: Շատ գոհ եմ, որ մեզ միշտ կհիշես ու չես մոռցած ընտանեկան հարկը: Այս առթիվ պզտիկ դիտողություն մը ունիմ ընելիք. նամակդ կը վերջացնես սա բառերով. «Բյուր համբույրներ

քեզի, մայրիկիս ու քույրերուս»: Այդ տողերուդ մեջ, թերևս ըսելիքս զարմանալի երևա քեզի, ես տեսակ մը շռայլություն կը նշմարեմ: Բյուր համբույրները չափազանց չե՞ միթե. կրնայիր գրել «Ամենքդ սիրով կը համբուրեմ» [6, 575]: Պարզագույն այս դրվագից հեղինակը հասել է առավել լուրջ թեմաների ու դրանով հանդերձ՝ ցավագին բացահայտումների:

Գոզմայի համար առաջին և մեծագույն իդեալը, որքան էլ նատուրալիստորեն հնչի, նախ իր փորը կշտացնելն է, հետո՝ իր ընտանիքի ու զավակների: «Այս սկզբունքները Գոզման քաղել է իր անձնական կենսափորձից, սկզբունքներ, որոնք միաժամանակ խտացնում են դուկասների, կերմերյանների, միքիասների, բարսեղների, ինչպես նաև «հեղափոխության մակաբույծների», կուլտամյանցների, փանջունիների սոցիալական իդեալները, քաղաքական հայացքներն ու բարոյական ըմբռնումները» [1, 688]: Ցայտուն պատկերված են նաև Գոզմայի եսափրությունն ու երեսպաշտությունը: Նրա համար իր առաջնային լինելը պայմանավորված է սեփական «ես»-ի գերազնահատմամբ, նյութականը հոգևորից վեր դասելով: Հայ վաճառականը առևտրային սկզբունքները տարածում է նույնիսկ հայրորդի հարաբերությունների վրա. «Հաշիվ ըրե մեյ մը, թե ծնելդ ի վեր քանիի՞ բեռ եղած ես ինձի, և նույնիսկ տակավին չծնած: Որովհետև պատմած ենք քեզի, թե որչա՞ փ նեղությամբ մայրդ քեզ աշխարհ բերավ: Բացի դահեկեն՝ երեք բժիշկ կար անկողնին գլուխը, անոնց ամեն մեկուն քսան ոսկի վճարեցի: Տետրակներուս մեջ գրված են ասոնք: Հետո՝ դպրոցի, բժշկի, դեղի, ուտելիքի, հագնելիքի, խաղալիքի և այլն, և այլն ծախքերը եթե մեկիկ-մեկիկ հաշվենք, գիտե՞ս գումարը քանիի կը հասնի: Հիմա ատեն չունիմ տետրակներս աչքի անցնելու, բայց եթե մոտավորապես հաշվենք, վրա վրայի տարեկան 80 ոսկի ծախած եմ միայն քեզի համար, ինչ որ քսան տարվան մեջ կընե 1600 ոսկի, որուն տոկոսն ալ եթե հաշվենք, քսան տարվան մեջ երեք հազար ոսկին կանցնի» [6, 577]: Այս ճղճիմ հաշվարկից հետո հոր միակ հույսն այն է, որ որդին կարդարացնի իր սպասելիքները, հետագայում կփոխհատուցի իր ջանքերն ու ներդրումը՝ «կատարյալ մարդ» դառնալով:

«Գոզմայի կերպարի միջոցով Օտյանը բացահայտել է արևմտահայ բուրժուազիայի քաղաքական երերուն դիրքը, բարոյական նկարագիրը: Գոզման Աբդուլ Համիդի տիրապետության շրջանում թունդ մոնարխիստ էր: 1908 թ. սահմանադրական «հեղաշրջումից» հետո հարում է երիտասարդ թուրքերին, դառնում է թունդ սահմանադրական: 1909 թ. մարտի 31-ի պահպանողական-ռեկրեացիոն շարժման ժամանակ Գոզման նորից դառնում է թունդ մոնարխիստ, երբ ռեակցիան ճնշվում է և նորից իշխում են երիտասարդ թուրքերը, որոնց հետ բարեկամացել էր դաշնակցությունը, Գոզման դարձյալ դառնում է սահմանադրական ու թունդ դաշնակցական» [6, 696]:

Կերպարը, բացի անձնական դատողություններից, պարզվում է, դատողություններ ունի նաև իր հայրենիքի, ազատության և այլ հարցերի շուրջ, որոնք ևս անձնական շահերով են բացատրվում: «Գոզմայի համար քաղաքականությունը առևտրի շարունակությունն է, եթե դա նպաստում է առևտրին, լավ է, եթե չի նպաստում՝ վատ է: «Լավ»-ին կարող է սիրաշահել, քծնել, իսկ վատի հետ համակերպվել» [2, 172]: Վիպակում առկա է այն գաղափարը, որ ազատության համար

ամենից կարևորը դրամ ունենալն է. «Եթե դրամ ունիս՝ աշխարհի ամենեն ազատ մարդն ես, եթե դրամ չունիս՝ գերի ես ամենուն ձեռքը, աշխարհի որ կողմն ալ գտնվիս, որ երկրին մեջն ալ ապրիս: Ազատություն, անկախություն, հեղափոխություն, ասոնց ամենքն ալ դրամն է: Դրամը չսիրողը ազատությունը չկրնար սիրել» [6, 581]: Այս խոսքերի մեջ, հիարկե, ճշմարտության հատիկ կա, սակայն գումար կուտակելու մոլոցքով կյանքը, ինչպես անում էր Գոզման, ընդունելի չէ: Աղջկան ամուսնացնելու ժամանակ էլ Գոզման առաջնորդվում է միայն փեսացուի նյութական վիճակի վերաբերյալ դրական կարծիքներով՝ չնայած անախորժ անցյալին, ապօրինի հարաբերություններին և զավակին. կարևորության նժարին դրվում է այն, որ Մարտիկ էֆենտին՝ Գոզմայի փեսան, բարձր դիրք ունի Պոլսում: Գոզմա էֆենտին, որ բացի դրամի պաշտամունքից չունի որևէ մարդկային զգացմունք, փեսացուի անբարո անցյալը որակում է սոսկ որպես երիտասարդական թեթևություն և ոչ ավելին, իսկ պատահական կապից երեխայի ծնունդը մտահոգիչ էր թվում միայն երեխայի դիմաց ամենամայա վճարումներով:

Գոզմայի սկզբունքներին խորթ չի թվում նաև այն ընտանիքը, որի զավակն էր Մարտիկ էֆենտին. նրա մայրն անբարոյական էր, իսկ հոր հետ հարաբերությունները սոսկալի վատ էին: Այս ամենն էլ Գոզման դիտարկում էր իր շահի դիրքերից. «Ռոտոսթոցիներեն իմացա նաև, որ Մարտիկ էֆենտի իր հորը հետ գժտված է և նույնիսկ անոր վրա դանակ քաշած է եղեր և այդ ցավալի դեպքեն ի վեր ամեն հարաբերություն խզվեր է հոր և զավակին միջև: Բնականաբար մենք իրավունք չունինք ընտանեկան ներքին խնդիրներու խառնվելու: Թերևս այդ գժտության մեջ հայրն ալ իր պատասխանատվության բաժինը ունի: Ես կփափաքիմ միայն հասկնալ, թե հարաբերության այդ խզումը ապագային ի՞նչ հետևանքներ կրնա ունենալ, կամ ավելի բաց խոսելով՝ արդյոք հայրը իր զավակը զրկած է ժառանգությունեն, ինչպես որ բարեկամ մը ինձ հավաստեց» [6, 583]: Գոզմային, փաստորեն, անհանգստացնում էր այն փաստը, որ չլինի թե հոր ու որդու գժտության պատճառով որդին զրկվի նյութական օժանդակությունից. «Իրավ է, որ դրամն ու հարստությունը շատ բաներ կրնան ծածկել, բայց գոնե այդ նյութական ապահովության մասին պետք է որ որոշ գաղափար մը ունենանք: Եթե, իրավ, Մարտիկ էֆենտիի հայրը վճռած է իր որդին ժառանգությունեն զրկել, խնդիրը շատ կը դժվարանա» [6, 584]: Տպավորություն է, թե Գոզմա էֆենտիի համար կյանքը ծրագիր է, իսկ կատարած գործողությունները՝ սառը հաշվարկ, պլանավորված, ինքն էլ կարծես մեխանիկական հաշվիչ լինի: Հույզեր, զգացմունքներ, երազներ չունեցող մարդը գտնում է, որ երազելը ամենասխալ բանն է. մարդ պետք է անընդհատ ու անդադար մտածի դրամ կուտակելու մասին: Էֆենտին ցանկանում է, որ իր բարեկամն իմանա, թե ինչքան է կազմում Մարտիկի հարստությունը, քանի որ միայն նյութական կացությունն է նրա համար հպարտության արժանի իրողություն. «Վերջապես և ասիկա ամենեն կարևորն է, կը փափաքիմ Մարտիկ էֆենտիի նյութական կարողության մասին որոշ գաղափար մը ունենալ» [6, 583]:

Գոզմա էֆենտիի ուռճացած հոգին անհաղորդ է մինչև իսկ իր դստեր՝ Մելինեի տառապանքներին: Աղջիկն ամուսնանում է առանց սիրելու և իրեն դժբախտ է զգում: Դրամի հետ կապված որևէ բան չի վրիպում Գոզմայի աչքից. «Կը գրեք

նան, որ մեր խնամիցուն, Մարտիկ էֆենտիեն գատ, մանչ մը և երկու ամուսնացած աղջիկներ ունի: Այս ալ թանկագին տեղեկություն մըն է, որովհետև էթե 3-4 մանչ ունենար, իր մահվան պարագային մեծ բան մը չպիտի մնար մեր փեսին» [6,585]: Ահա թե ինչ աստիճանի կարող է մարդու դրամասիրության ու անընդհատ կուտակելու ձգտումը աղավաղել նրան՝ որպես մարդու, հոր: Գոզմա էֆենտիի համար մարդու յուրաքանչյուր թերություն դառնում է աննշան դրամի դիմաց. «Խաղամուլություն, զինեմուլություն, բարկություն և այլն, անանկ թերություններ են, որոնք քանի տարիները անցնին՝ կը պակսին ու կը մեղմանան, մինչդեռ դրամը առաքինություն մըն է, որ տարիներու ընթացքին հետզհետե կաճի, բաղադրյալ տոկոսի դրությամբ» [6, 586]:

Գոզմա էֆենտին անտեսում է այն հանգամանքը, որ Մելինեն բռնության է ենթարկվում ամուսնու կողմից. չէ՞ որ այդ ամենը ծածուկ է տեղի ունենում, հակառակ դեպքում դա կարող է ազդել փեսայի գործերի հաջողության վրա. «Բարեբախտաբար խնդիրը չիմացվեցավ և գործը անուշ տեղը կապեցինք ու համոզեցինք Մելինեն, որ իր տունը վերադառնա: Եթե իմացվեր՝ ալ լրագիրներուն մեջ պիտի անցնեինք ու ամենուն բերնին ծամոց պիտի ըլլայինք: Ասանկ բաները երբոր չիմացվին, կարևորություն չունին ու կը մոռցվին կերթան: Ես խրատեցի Մելինեն որ ոչինչ բաները խնդիր չընեն ու երկանը հետ աղեկ կերթա, մանավանդ, որ այս միջոցիս իր գործերը շատ աղեկ են ու լավ դրամ կը շահի կոր» [6, 600]: Անշահ մարդկային հույզերից ու մարդուն մարդ պահող ապրումները գերծ էֆենտին, ցավոք, մարդկային հատկանիշներ չի դրսևորում անգամ որպես հայր, որի համար միննույն է դստեր հոգեֆիզիկական ցավը:

Գոզմա էֆենտին, գործելով իրավիճակին համապատասխան, պատկերվում է նաև որպես քաղաքական «համոզումներ» ունեցող գործիչ: Անհրաժեշտության դեպքում դաշնակցական է, մեկ այլ դեպքում՝ հնչակյան, կամ էլ լրիվ անկուսակցական: Նրա քաղաքական հայացքները նույնպես պայմանավորված էին անձնահաճո, շահադիտական նկրտումներով:

Դասական գրականության տիպիկ ժլատ վաճառական է Գոզման, բայց միննույն ժամանակ հեղհեղուկ, քամելեռնի հոգեբանությամբ, բոլորին հանուն շահի գոհաբերելու պատրաստակամությամբ: Այս առիթով հարկ է նշել հետևյալ տողերը, որ հնչում են նրա կողմից. «Համոզումներն ու կարծիքները հագուստի կը նմանին և եղանակին համեմատ պետք է, որ փոխվին» [6, 604]: Առևտրականի կարծիքով իմաստությունն է այդպես պահանջում:

Այս մարդը չի կարողանում տեսնել ուրիշների հոգեկան աշխարհը, որովհետև միայն նյութականի հետևից գնացողի համար հոգեկանը ներթափանցելը դառնում է և՛ անիրատեսական, և՛ անհնարին. այդ հոգևոր դաշտում էլ նա էլի պիտի առաջնորդվի նյութականով, իսկ դա չի բերելու մարդու հոգեկանի բացահայտման ցանկալի արդյունքին:

Երբ հերթը հասնում է նրա որդու ամուսնությանը, նա ցանկանում է իմանալ, թե ինչ հարստության տեր է աղջկա ընտանիքը, իսկ Միհրանի համար դա ընդհանրապես կարևոր չէր. նրան գրավում էր սերը: Ու թեև հայրը դեմ էր օտարագրի

աղջկա հետ ամուսնությանը, սակայն հարուստ լինելու հանգամանքը կարող է իրավիճակ ու սկզբունքներ փոխել. «Ես թեև սկզբունքով հակառակ եմ օտարագրվածությանը, հետ ամուսնանալու, բայց եթե տալիք տեղեկությունները գոհացուցիչ ըլլան՝ բնական է, որ չեմ հակառակիք այս տեսակ միության մը» [6, 621]:

Այս մարդն ինքնախաբեությամբ էր զբաղվում. նա վստահ էր իր ճշմարտացիությանը: Նամակից նամակ բացահայտվող ընտանեկան դժբախտությունը նրան չէր կարողանում սթափեցնել, իրականությանը շիտակ հայացքով նայել, չհամակշռել մամոնայի պաշտամունքն ու երջանկության պատկերացումը, ինչի հետևանքով նա շարունակում էր պնդել, որ ամեն խնդիր լուծելի է դրամի միջոցով. «Կյանքի մեջ իրական դժբախտությունը դրամ չունենալն է. երբ դրամ ըլլա մեջտեղ՝ ամեն դժբախտության առաջքը կաննվի» [6, 610]:

Գոզմա Էֆենտին մահանում է իր համոզմունքներին հավատարիմ: «Դրամի մասին Գոզմա Էֆենտին ունի իր հատուկ տեսությունը, որ արժանի է ուշադրության: Նրա կարծիքով դրամը լիովին փոխարինում է կրոնին, և հարուստը կրոնի պետք չունի, փոխարինում է բարոյականությանը, և դրամ ունեցողը կարող է բարոյական չլինել, դրամը, ըստ Գոզմայի, աճող «առաքինություն» է, դրամ ունեցողի կարծիքը պետք է ավելի գնահատվի» [3, 128]: Իր դրամասիրության շնորհիվ նա կործանում է ընտանիքի անդամների հոգեկան ու ֆիզիկական առողջությունը: Մենք այդպես էլ չենք իմանում, թե ինչ եղավ նրա աղջկա՝ Մելինեի ճակատագիրը, ամուսնացած վորդին իր սիրած աղջկա հետ: Մի բան հստակ էր, որ որդին այդպես էլ չշարունակեց նրա առևտրական գործունեությունը, չդարձավ նրա երագած «կատարյալ մարդը»: Գոզմա Էֆենտին ուներ վաճառականի ճղճիմ հոգեբանություն, և տարիների ընթացում այդ հոգեբանությունն ավելի խոր արմատներ էր գցել նրա մեջ, դարձել ապրելակերպ, կյանքում առաջնորդվելու միջոց:

Մի գիշերում մի շնչով նամակներն ընթերցելուց հետո հեղինակը հետևյալ եզրահանգմանն է գալիս. «Երբեք հայ վաճառականը իր հոգեկան մերկությունը չէր պարզած այսքան կատարյալ կերպով: Հայ պուրժուան էր, որ ինքզինք կը ցուցադրեր անպատկառ ինքնավստահությամբ մը, իր գաղափարներովը հպարտ և իր համոզումներովը խանդավառված» [6, 573]:

«Գոզմայի կերպարի մեջ Օտյանը կոնկրետացրեց 20-րդ դարի սկզբի հայ բուրժուազիայի քաղաքական վարքագիծը, նրա բարոյական նշանաբանները, որոնք խարսխված են «մարդը մարդու համար գայլ» սկզբունքի վրա:...Գոզմայի տիպը հայ ռեալիստական գրականության նվաճումներից մեկն էր» [5, 18-19],-- է գրել Ան. Մակարյանը:

Ինչ խոսք, Երվանդ Օտյանը առաջինը չէր գրական այս տիպի բացահայտման ճանապարհին, քանի որ հայ գրականության մեջ կան ստեղծագործություններ, որտեղ ներկայացվում են հայ վաճառականի կյանքն ու սկզբունքները, ինչպես Հ. Թումանյանի «Գիշորը» պատմվածքում Բազազ Արտեմի կերպարը, ում համար էականը առևտրային գործում հաջողությունն է: Գոզմայի նման նա ևս զուրկ է մարդկային բոլոր առաքինություններից: Նրա մեջ մեռած են բոլոր հույզերը ու մարդուն մարդ պահող ապրումները: Կամ, օրինակ, Ղազարոս Աղա-

յանի «Վաճառականի խիղճը» ստեղծագործության մեջ հեղինակը ներկայացնում է մի վաճառականի, ով հրաժարվում է գործակատարին իր աշխատանքի դիմաց վճարելուց:

Այսպիսով՝ ամփոփենք վերլուծությունը ստացված եզրահանգումներով: «Վաճառականի մը նամակները» ստեղծագործության մեջ հեղինակը խորությամբ մերկացրել ու ծաղրել է հայ բուրժուազիայի գաղափարախոսությունը: Բնչպես նշվում է աշխատանքի մեջ, ստեղծագործությունը նամականու ձևով է գրված. հենց նամակների միջոցով են մերկացվում, բացահայտվում հայ վաճառականի հոգեբանությունն ու տիպը: Նամակագրական ձևաչափի ընտրությունը նարատորի դիմային ընտրություն է ենթադրում, որով պատումը համոզիչ երանգներ է ստանում, դառնում կերպարի սկզբունքների արտահայտման եղանակ:

Հայ վաճառականն այստեղ իր հոգեկան մերկությունը ցույց է տալիս ամբողջովին: Իրականության մեջ էլ շատ կան Գոզմայի նմանները, հետևաբար նա ո՛չ առաջինն է, ո՛չ էլ, ցավոք, վերջինը: Շատերը կյանքում ապրում են այն համոզմամբ, որ երջանկության միակ աղբյուրը նյութական ապահովությունն է: Եվ, հետևաբար, մարդկանց այս տիպը մերժում է նրանց, ովքեր փորձում են կամ գտել են իրենց երջանկությունը մի այլ հարթության վրա: Գոզմայի նման մարդկանց համար բարոյականությունը ևս ստորադասվում է դրամին, որովհետև ըստ նրանց՝ «Իրան ունեցողը կարող է և բարոյական չունենալ»:

Կարելի է ասել, որ Օտյանը Գոզմայի կերպարի միջոցով տիպականացրել է 20-րդ դարի սկզբի հայ բուրժուազիայի կյանքի փիլիսոփայությունն ու կենցաղը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Հայ նոր գրականության պատմություն, հատոր հինգերորդ, հայկական ՄՄՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1979:
2. Մակարյան Ա., Երվանդ Օտյան, Հայաստան, Երևան, 1965, 523 էջ:
3. Հյուսյան Մ., Երվանդ Օտյանի երկերի միհատորյակը: (Մինաս Հյուսյան, Էջեր արևմտահայ գրականության պատմությունից), Երևան, 1977, 355 էջ:
4. Մուրադյան Ս., Երվանդ Օտյան, կյանքը և գործը (երկրորդ՝ լրամշակված հրատարակություն), Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2012, 451 էջ:
5. Օտյան Ե., Երկերի ժողովածու, հատոր առաջին, Հայպետհրատ, Երևան, 1960, 691 էջ:
6. Օտյան Ե., Երկերի ժողովածու, հատոր չորրորդ, Հայպետհրատ, Երևան, 1962, 688 էջ:
7. Эпистолярная литература: <https://feb-web.ru/feb/kle/kle-abc/default.asp>

ТИП АРМЯНСКОГО КУПЦА В ЭПИСТОЛЯРНОЙ ПОВЕСТИ ЕРВАНДА ОТЯНА «ПИСЬМА ОДНОГО КУПЦА»

Тамазян Астхик

Фонд “ВГУ”, «Армянский язык и литература»,
магистратура, 2-й курс

Руководитель магистерской диссертации:
кандидат филологических наук, доцент Э. Бабурян

Резюме

Ключевые слова: купеческие письма, буржуазия, идеальный человек, Гозма Эфенди

Данная статья посвящена анализу эпистолярной повести Ерванда Отяна «Письма одного купца». Повесть также имеет подзаголовок «Искусство быть совершенным человеком», который, естественно, приобретает совершенно противоположное значение. Здесь Отян реалистично раскрывает типаж армянского купца, построив повесть в форме переписки. Гозма Дамианосян представляется как собирательный образ армянского купца. Основное внимание в повести сосредоточено на его отношении к различным жизненным проблемам и образе мышления. Пицьмо за письмом, методом самоописания, перед читателем постепенно возникает типичный образ армянского купца.

THE TYPE OF ARMENIAN MERCHANT IN YERVAND OTYAN'S EPISTOLARY NOVELLA “THE LETTERS OF A MERCHANT”

Tamazyan Astghik

“VSU” Foundation,

“Armenian Language and Literature”, Master’s Degree, 2nd Year
Academic Supervisor: H. Baburyan,

Candidate of Philological Sciences, Associate Professor

Summary

Key words: letters of a merchant, bourgeois, perfect man, Gosma Efendi

This article is dedicated to the analysis of Yervand Otyan's epistolary novella “The Letters of a Merchant”. The novella also has a subtitle “The Art of Being a Perfect Man”, which, naturally, takes on a completely opposite meaning. Here, Otyan realistically exposes the archetype of the Armenian merchant, structuring the novella in the form of correspondence. Gosma Damianosyan is presented as a generalized representation of the Armenian merchant. The main focus of the novella is on the merchant's attitude toward various life challenges and his way of thinking. Letter by letter, through the method of self-description, the typical image of an Armenian merchant gradually emerges.

**ԽԵԼԱԳԱՐՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՆ ՇԱՌԼՈՑ ԳԻԼՄԱՆԻ
«ԴԵՂԻՆ ՊԱՍՏԱՌԸ» ՊԱՏՄՎԱԾՔՈՒՄ**

Ղազարյան Անի

*Գործիսի պետական համալսարան,
«Հայոց լեզու և գրականություն», 2-րդ կուրս
Գիտական ղեկավար Բ. Գ. Թ., դոցենտ Ռ. Ստեփանյան*

Հանգուցային բառեր. գունային սիմվոլիկա, ֆեմինիզմ, հոգեկան անկում, բժիշկ, ամուսին, սողացող կանայք, օրագրային գրառումներ

Հոդվածում անդրադարձել ենք Շառլոթ Գիլմանի «Դեղին պաստառը» պատմվածքում կնոջ խելագարության թեմային, դրան նպաստող ազդակներին ու գործոններին: Ուշադրություն ենք դարձրել գույների սիմվոլիկային, պաստառի կարևորությանը, ինչպես նաև հերոսուհու վարքագծին ու շարժումներին: Հերոսուհու հոգեկանի մթազնումն առավել ցայտուն պատկերացնելու և հասկանալու համար առաջնորդվել ենք մեկնաբանման հերմենևտիկական մեթոդներով՝ դասական, հոգեվերլուծական, ֆեմինիստական, կատարել վերլուծություններ ու եզրահանգումներ:

Ներածություն

Մեր քննության շրջանակը ամերիկացի ֆեմինիստ գրող Շառլոթ Գիլմանի «Դեղին պաստառը» ինքնակենսագրական պատմվածքն է: Թեպետև հեղինակի ստեղծագործություններում այն ծավալով ամենամեծը չէ, սակայն առանձնակի հնչեղություն ու կարևորություն ունի: Այն ոչ միայն Գիլմանի ապրած ժամանակաշրջանի, այլև հենց մեր օրերի մարտահրավերն է կանանց և տղամարդկանց միջև խտրականությանը: Հարկ է նկատել՝ իր տարբեր աշխատություններում հեղինակն առանձնակի ուշադրություն է դարձրել այս խնդրին՝ ցույց տալով, թե ինչ ողբերգական հետևանքներ կարող է ունենալ այն: Գիլմանը պնդում էր, որ տնային գործերը պետք է հավասարապես բաժանվեն տղամարդու և կնոջ միջև, որ վաղ տարիքից կանայք պետք է անկախ լինեն [3]: Գտնում էր, որ մանկուց երիտասարդ աղջիկներն ապրում են սոցիալական սահմանափակումների մեջ, որ իրենց համար նախատեսված խաղալիքների և հագուստների միջոցով նրանց պատրաստում են մայրության, որ աղջիկների և տղաների հագուստների, խաղալիքների միջև չպետք է տարբերություն լինի, կամ այն գործունեության, որով նրանք զբաղվում են [3]: Համոզված էր՝ տնտեսական անկախությունն իրական ազատություն կարող է բերել կանանց, ապահովել կանանց և տղամարդկանց հավասարությունը, բացառել խտրականությունը: «Կանայք և տնտեսությունը» (1898 թ.) գիտական ուսումնասիրության մեջ հեղինակն այն կարծիքն է հայտնում, որ մայրանալը չպետք է խոչընդոտի կնոջն աշխատելու տնից դուրս, որ տնային տնտեսությունը, խոհարարությունը և երեխա խնամելը պետք է դառնան պրոֆեսիոնալ գործեր, որ կանայք նվաճված են տղամարդկանց կողմից [1]:

Թեմայի արդիականությունը կանանց և տղամարդկանց միջև խտրականության դատապարտումը, ամուսնական հարաբերությունների արժևորումն է:

Աշխատանքի **նպատակը** քննության առարկա գործում խելագարության թեման ուսումնասիրելն է: Ելնելով թեմայի առանձնահատկություններից՝ շեշտադրել ենք մի քանի **հիմնախնդիրներ**

ա) վերլուծել երկի ֆեմինիստական շերտերը,

բ) բացահայտել պատումի հերոսուհու հոգեվիճակի մթազման ազդակները,

գ) ընդգծել ամուսնական հարաբերությունների դերն ու ազդեցությունը կանանց վարքագծի ու ներաշխարհի վրա:

Առաջնորդվել ենք մեկնաբանման հերմենտիկական **մեթոդներով**՝ դասական, հոգեվերլուծական, ֆեմինիստական և այլն:

Աշխատանքի հիմնական բովանդակությունը

Շառլոթ Գիլմանը «Դեղին պատառը» գրել է իր տանն ընդամենը երկու օրվա ընթացքում՝ 1890 թվականի հունիսի 6-7-ը՝ հետծննդաբերական շրջանում՝ հոգեկան ծանր պայմաններում [3]: Հիմք ունենալով անձնական փորձն ու հոգեբանական ծանր ապրումները՝ Գիլմանը ցույց է տվել, թե անազատությունը ինչպես կարող է կնոջ կործանման պատճառ դառնալ: Պատումը 19-րդ դարի կանանց համար «հանգիստ բուժումը» լուսաբանող մի կարճ պատմություն է:

Այս պատմությունը ֆեմինիստական քննադատների կողմից մեկնաբանվել է որպես 19-րդ դարի բժշկական պրոֆեսիայի տղամարդկանց կողմից վերահսկման դատապարտում: Պատմության ողջ ընթացքում գրողը բազմաթիվ առաջարկություններ է անում՝ իր առողջությունը բարելավելու համար, օրինակ՝ վարժություններ անել, աշխատել կամ հասարակության հետ շփվել: Նրա գաղափարներն անմիջապես մերժվում են [2]:

Փառաբանելով ժամանակակից ֆեմինիզմը և դրա դերը գրականության ուսումնասիրության և մեկնաբանության փոփոխման մեջ՝ Բրանդեյսի համալսարանի պրոֆեսոր Սյուզան Ս. Լանսերը գտնում է՝ «Դեղին պատառը» այն պատմություններից մեկն է, որ տվել է ֆեմինիստներին գործիքներ՝ գրականությունը այլ կերպ մեկնաբանելու [2]:

Մարթա Ջ. Կաթերը նշում է, որ Գիլմանի բազմաթիվ գործեր վերաբերում են «պայքարին, որտեղ տղամարդկանց կողմից վերահսկվող բժշկական հաստատությունները փորձում են լռեցնել կանանց»: Այն ժամանակ բժշկությունը կարծում էր, որ կանայք, ովքեր զբաղվում են լուրջ մտավոր գործունեությամբ (օրինակ՝ համալսարանական կրթությամբ), չափից դուրս խթանում են իրենց ուղեղը, ինչը, իր հերթին, հանգեցնում է հիստերիայի վիճակների: Ենթադրվում էր, որ կանանց մոտ ախտորոշված հիվանդություններից շատերը կապված են ինքնատիրապետման կամ ինքնակառավարման բացակայության հետ: Բժիշկները պնդում էին, որ բժիշկը պետք է «խոսի հեղինակավոր տոնով, և որ «բուժված» կինը բնութագրվում է նրանով, որ նա «ընկճված է, հնազանդ, լուռ և, առաջին հերթին, ենթարկվում է բժշկի կամքին և ձայնին» [2]:

«Դեղին պատառը», ըստ էության, Գիլմանի պատասխանն էր դոկտոր Սիլաս Ուելր Միտչելին, ով նրան դեպրեսիայից ազատել էր «հանգստությամբ», և

ում ուղարկել էր իր գործի պատճենը [3]: Միտչելի համոզմամբ՝ հիվանդի նյարդայնությունը վատագույն դեպքում կնոջ թուլության վատագույն աստիճանն է, որը ֆիզիկապես հանգեցնում է խախտումների և առաջացնում հիստերիա [5, 16]:

Գործ ունենք հոգեկան հիվանդությամբ տառապող մի կնոջ հետ, ում ամուսինը նրան երեք ամիս շարունակ բանտում է արտասովոր դեղին պաստառներով պատված սենյակում՝ հանուն իր իսկ առողջության: Հերոսուհուն խաղաղություն ու հանգստություն բերողը մի մեռած թուղթ էր, որին հանձնում էր իր խելագար մտքերը: Վերջինս նկարագրում է այն առանձնատունը, որտեղ իրեն ճնշված է զգում՝ տունը նմանեցնելով ուրվականաբնակ մի վայրի: Սկսում է ապրել երևակայական պատկերներով, դեղին պաստառի անհասկանալի առեղծվածներով: «Այս վայրը արթնացնում է ուրվականների մասին մտքերս, սա վախով եմ նշում, և մինևույն է, ինչ-որ տարօրինակ բան կա այս տան մեջ, և ես դա զգում եմ» [5, 29],– խոստովանում է նա:

Գինն անտեսանելի պայքար է սկսում ամուսնու և եղբոր հետ, ովքեր բժիշկներ էին և վստահ էին՝ վերջինս նյարդային անհավասարակշիռ վիճակում է: Ուշարժան է հերոսուհու խոսքն իր ամուսնու մասին. «Ձոնը բժիշկ է, և գուցե այս պատճառով է, որ ես չեմ ապաքինվում» [5, 27]: Անընդհատ շեշտում է՝ Ձոնը չի հավատում, որ ինքը հիվանդ է, պարզապես կարծում է թեթև նյարդային լարվածություն է, և ամեն ինչ անում է իր հանգստության համար:

Գործի սկզբում շեշտը դնում է ամուսնու, նրա ցանկությունների և տարօրինակ հոգատարության վրա, իրեն համարում անշնորհակալ, որ չի կարողանում գնահատել ամուսնու հոգատարությունը, ինչպես նաև խնամել իրենց նորածին երեխային:

Իսկ Ձոնը հոգատար ամուսնու դերի մեջ էր. անհանգստանում և հոգ էր տանում իր կնոջ առողջության և հանգստության մասին: Մակայն այդ հոգատարությունը սահմաններից դուրս էր, ճնշող էր: Սենյակում փակելը, բարոյախրատական ու բժշկական մոտեցումներով կնոջ մտածողության վրա ազդելը անդառնալի հետք են թողնում նրա հոգեկան ու ֆիզիկական առողջության վրա:

Ամուսնու տարօրինակ խստության պատճառով փոխվում է հերոսուհու մտածողությունը, և սիրող ու ամուսնուն հարգող կերպարից քիչ-քիչ վերածվում է ինքնամփոփ, գաղտագողի ու երևակայական պատկերներով ապրող կնոջ կերպարի: Սկսում է չվստահել, երբեմն վախենալ ու գաղտնի գործել ամուսնուց: «Ձոնը գալիս է: Պետք է մի կողմ դնեմ: Նա ատում է նույնիսկ իմ մեկ բառ գրելը» [5, 31],– կարդում ենք գործում: Ձոնի կերպարը խիստ գիտական-բժշկական է. չի ապրումակցում կնոջը, չի փորձում հասկանալ նրան, այլ իր վերաբերմունքով, թերահավատությամբ ու հոգեբանի խիստ գնահատմամբ նրան կաշկանդում, կաղապարում է: Նրա բացակայության ժամանակ նրան փոխարինում է քույրը՝ Ջեննին, ում մասին հերոսուհին սկզբում դրական է արտահայտվում՝ խոստովանելով իր փոխարեն երբեմն Ջեննին է տնային գործերով զբաղվում: Մակայն գործողությունների հետագա ընթացքն ընդգծում է հերոսուհու դժգոհությունը:

Պաստառը, որ «տհաճ գույն ունի, գրեթե զգվելի, ծխացող կեղտոտ դեղին գույն, որը արտասովոր կերպով խամրում է դանդաղ իջնող արևի լույսի տակ» [5,

31], նպաստում է հերոսուհու հոգեկան վիճակի վատթարացմանը, բացահայտում նրա ճնշված ապրումներն ու սոցիալական սահմանափակումները: Նկատենք՝ դեղին գույնի սիմվոլիկան զանազան դրսևորումներ ունի՝ կախված տվյալ իրադրությունից ու համատեքստից: Առհասարակ դեղին գույնի հանդեպ սեր ունեցողներն ունեն ինքնաբացահայտման ուժեղ դրսևորված նպատակ: Նաև դավաճանություն է խորհրդանշում, համարվում մահացող տերևների գույն [4, 44]:

Պատումում դեղինը ճնշող ազդեցություն է թողնում հերոսուհու հոգեբանական ապրումների վրա, նպաստում նրա խելագարությանը: Պատմվածքի վերջում կինը պաստառի դեղին գույնին հակադրում է գետնի կանաչը, որի սիմվոլիկան մահվան երանգ կարող է արտահայտել, իսկ հոգեբանության մեջ՝ հանգստացնող երանգ [4, 50]:

Նկատենք նաև՝ հերոսուհին իր երևակայության մեջ անշունչ առարկաների ու մարմինների հետ է հաղորդակցվում, դրանց մարդկային հատկություններ վերագրում, ինչը սոցիալական մեկուսացման պատճառ կարող էր լինել: Հոգեբանության մեջ նմանատիպ իրավիճակների դրսևորումն անվանում են անտրոպոմորֆիզմ: Այդպիսիք էին օրագրային գրառումները՝ հեղինակի ձևակերպմամբ՝ «մեռած թղթի կտորները» [5, 27], որոնք կնոջ՝ լուռության մեջ հասկացված լինելու միակ միջոցն էին: Որքան դիմադրում էին Ձոնն ու Ձեննին, այնքան կինն ավելի էր ձգտում իր մտքերը հանձնել այդ «մեռած թղթի կտորներին»:

Քննելով կնոջ օրագրային գրառումները, դեղին պաստառի շուրջ մտորումներն ու դիտարկումները, ամուսնու հետ փոխհարաբերությունները՝ բացահայտում ենք կնոջ անգիտակցական որոշ մտքեր ու ցանկություններ. «Այստեղ նույնիսկ պարան ունեմ, որը Ձեննին /ամուսնու քույրը/ չի գտել: Եթե այդ կինը /դեղին պաստառից դուրս սողացող/ փորձի դուրս փախչել, ես նրան կկապեմ» [5, 50]: Պարանը ևս խորհրդանշանական է: Հին հռոմեական Ֆորտունա աստվածուհու այլաբանական կերպարը հաճախ պարանը պահել է որպես կյանքի մահացության խորհրդանշիչ: Հին աշխարհում պարանը նաև միջոց էր երկրից երկինք ձգվելու համար [4, 18]:

Ինչպես նկատում ենք՝ հեղինակն ամենայն մանրամասնությամբ է ընտրել հերոսուհու հետ կապված յուրաքանչյուր դետալ, որպեսզի կարողանանք ճշգրտորեն պատկերացում կազմել նրա հոգեվիճակի և բարոյահոգեբանական խնդիրների մասին: Այդ խելագար մտորումների ու անճարության արդյունքում նա պատրաստ էր դիմել հուսահատ քայլի ու պատուհանից ցած նետվել: Եվ քանի որ պատուհաններն ամուր կառուցվածք ունեին, որոշում է միաձուլվել պաստառին, սողալ բոլոր այն կանանց պես, ովքեր, իր կարծիքով, ևս դուրս են եկել այդ պաստառից: Իր ցանկությունների ու խելագարության անկման այդ բախման կետում հերոսուհուն թվում է, թե դուրս պրծավ ու ազատվեց իր բոլոր ցավերից ու տառապանքներից:

Պատմության վերջում հաղթանակի աստիճանին ֆեմինիստ շատ քննադատներ են անդրադարձ կատարել: Ոմանք պնդում են՝ պատմողը խելագարության մեջ է ընկել, ոմանք էլ ավարտը տեսնում են ամուսնության ընթացքում կնոջ ինքնավարության դրսևորման մեջ, որի ընթացքում նա իրեն թակարդում էր զգում:

Խոսուն են հերոսուհու հետևյալ խոսքերը. «Մեկ-մեկ ինձ թվում է, թե ետևում բազմաթիվ կանայք են, իսկ երբեմն՝ միայն մեկը, ու նա սողում է շատ արագ, ու դրանից էլ ամեն ինչ ցնցվում է» [5, 46]:

Կարող ենք ենթադրել՝ Գիլմանը նկատի է ունեցել, որ իր ժամանակաշրջանում նմանատիպ խնդրի առջև բազմաթիվ կանայք են կանգնած եղել:

Հիրավի, գործը 19-րդ դարի կնոջ կյանքի արտացոլանքն է, իսկ վերոնշյալ ստղերը՝ նրանց դժբախտ ճակատագրի վկան:

Եզրակացություններ

Շարլոտ Գիլմանի «Դեղին պաստառը» պատումի քննության արդյունքում եկել ենք հետևյալ եզրահանգումների.

1. Հիմք ունենալով անձնական փորձն ու հոգեբանական ծանր ապրումները՝ Գիլմանը ցույց է տվել, թե անազատությունն ինչպես կարող է կնոջ կործանման պատճառ դառնալ:
2. Գիլմանի կյանքի օրագրերն օգնում են հասկանալու, որ հեղինակն իր և հերոսուհու միջև անմիջական կապ է ստեղծել՝ ցույց տալով, թե տեղի ունեցած անթիվ դեպքերի ողբերգական հաջորդականությունն ինչպես է հիմնահատակ քանդում կնոջ կյանքն ու կործանում ճակատագիրը:
3. Հերոսուհին իր երևակայության մեջ անշունչ առարկաների ու մարմինների հետ է հաղորդակցվում, դրանց մարդկային հատկություններ վերագրում, ինչը սոցիալական մեկուսացման պատճառ կարող էր լինել:
4. Հեղինակը ներկայացրել է կնոջ փոթորկուն հոգեվիճակը, որ որոշ արտաքին ու ներքին գործոնների պատճառով (ազատության խաթարում, սոցիալական կաղապարում, մեկուսացում և այլն) կնոջը հասցնում է խելագարության, տանում կործանման:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Gilman Ch. P. Social Theories
2. The Yellow Wallpaper: https://en.wikipedia.org/wiki/The_Yellow_Wallpaper
3. Гилман Ш. П. <https://m.readly.ru/author/18901/>
4. Тресиддер Дж. Словарь символов http://lib.yso.am/disciplines_bk/be1cdb2255af5af808ba8b16e7f078aa.pdf
5. Գիլման Շ. Փ., Դեղին պաստառը https://baec.aua.am/files/2018/12/Anna_Grigoryan_The-Yellow-Wallpaper.-The-Visibility-of-the-Translator_Capstone.pdf (10.03.2025):

ТЕМА БЕЗУМИЯ В ПРОИЗВЕДЕНИИ ШАРЛОТТЫ ГИЛМАН «ЖЁЛТЫЕ ОБОИ»

Казарян Ани

*Горисский государственный университет,
«Армянский язык и литература», 2-й курс*

Научный руководитель:

кандидат филологических наук, доцент Р. Степанян

Резюме

Ключевые слова: *цветовая символика, феминизм, психическое расстройство, врач, муж, ползающие женщины, дневниковые записи*

В статье мы рассматриваем тему безумия женщины в рассказе Шарлотты Гилман «Желтые обои», факторы и воздействия, способствующие этому. Мы обратили внимание на символику цветов, значение обоев, а также на поведение и манеры героини. Для более наглядного представления и глубокого понимания помутнения разума героини были использованы интерпретационные методы, включая классический, психоаналитический и феминистский подходы, что позволило сделать соответствующие выводы.

THE THEME OF MADNESS IN CHARLOTTE GILMAN'S "THE YELLOW WALLPAPER"

Ghazaryan Ani

Goris State University,

"Armenian Language and Literature", 2nd Year

Academic Supervisor: R. Stepanyan,

Candidate of Philological Sciences, Associate Professor

Summary

Key words: *color symbolism, feminism, mental breakdown, doctor, husband, crawling women, diary notes*

In the article, we address the theme of a woman's madness in Charlotte Perkins Gilman's "The Yellow Wallpaper", as well as the factors and influences contributing to it. We focus on the symbolism of colors, the importance of the wallpaper, as well as the heroine's behavior and manners. To provide a clearer representation and deeper understanding of the heroine's mental breakdown, interpretative methods were employed, including classical, psychoanalytic, and feminist approaches, which allowed for the formulation of corresponding conclusions.

ՄԱԿԱՆՈՒՆԵՐԸ ՍԵՐՈ ԽԱՆՁԱԴՅԱՆԻ «ՄԱՏՅԱՆ ԵՂԵԼՈՒԹՅԱՆՅ»
ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄԵԶ

Ղավարարունց Անի

*Գորիսի պետական համալսարան,
«Հայոց լեզու և գրականություն», 4-րդ կուրս
Գիտական ղեկավար՝ ք. գ. թ., դոցենտ Լ. Ներսիսյան*

Հանգուցային բառեր. մականուն, մասնագիտական, իրադրային, տարածա-
շրջանային, տոհմաբանական, նկարագրական, խառնվածքային

Մականունը անհատին որևէ էական հատկանիշով բնութագրող, նրան տրվող վերադիր անուն է, որ երբեմն ավելի հաճախական է դառնում, քան նրա անձնանունը: Մականուն բառի բացատրությունը Հ. Աճառյանը տալիս է որպես. «անվան վերադիր անուն, ավել անուն» [1, 462], իսկ արևմտահայերենում մականունն նշանակում է ազգանուն: Ըստ Գ. Զահուկյանի՝ մականուն են կոչվում «այն հատուկ անունները, որոնք տրվում են անձին երկրորդաբար՝ նրա որևէ հատկությունը նշելով, թեև նա ունի և իսկական անուն» [5, 207]: Ա. Սուքիասյանը մականունը բացատրում է որպես «ավելանուն, անուն, հորջորջանք: Մակդիր» [6, 433]: Ս. Մալխասյանցի «Հայերեն բացատրական բառարանում» մականունն բառը բացատրված է երկու ձևով.

1. «Վերադիր անուն, աւել անուն, որ կցվում է որևէ մարդու անունան, նրա որևէ յատկութիւնից առնելով կամ զանազանելու համար նոյն անունը կրող ուրիշ մարդուց,
2. Մականուն ունեցող անձ, մի պատուի անուն կրող անձ» [4, 237-238]:

Մականունը, ի տարբերություն անձնանվան, որը տրվում է ծնողների կողմից, տրվում է շրջապատի կողմից մարդու կյանքի ընթացքում: Մականունը փաստական և իրավական ոչ մի հիմք չունի և ի տարբերություն անձնանվան՝ չի կարող դառնալ անձնագրային:

Մականունները կարող են տրվել անհատին համաժամանակյա (ժամանակակից) և տարաժամանակյա (պատմական) կտրվածքներով: Համաժամանակյա մոտեցման դեպքում անձը գիտի իր մականվան մասին՝ անկախ դրա դրական կամ բացասական լինելուց, իսկ տարաժամանակյա մոտեցման դեպքում մականունը դրվում է անձի մահից հետո՝ հաշվի առնելով նրա անցած ուղին:

Ստեղծագործության մեջ հանդիպում ենք մոտ 100 մականվան, որոնք մեծամասամբ դրվում են տղամարդկանց անձնանունների վրա: Ներկայացնենք, թե ինչպես է գրողն արտահայտվում քաղաքի մականունների մասին. «Այս քաղաքում մարդը մարդուն նախ և առաջ ճանաչում է նրա փոթով» [3, 486] և նշում է, որ եթե մարդուն փնտրելիս անուն-ազգանունով հարցնես, կզարմանան և կասեն, թե եղպիսի մարդ չկա, և չեն ճանաչում:

Կամ էլ նշում է. «Այս քաղաքի ամեն փողոցում ութ Հաբուղ կա: Լավ է, որ յու-

րաքանչյուր Հաբուդ փոթ-ավելորդ անուն ունի, թե չէ նրանց միմյանց հետ կշփոթեր նույնիսկ դատախազը» [3, 550]:

«Մատյան եղելությանց» ստեղծագործության մեջ հաճախ հանդիպում ենք անհատի մասնագիտության կամ աշխատանքի հետ կապված մականունների, սրանք պայմանականորեն կարող ենք կոչել **մասնագիտական** մականուններ: Այսպես օրինակ՝ Կորեմ-կցեմ Համբարձումի մականվան ձևավորման մասին (Համբարձումը տրիկոտաժի ֆաբրիկայի ձևարար է) հեղինակը գրում է. «Այս փոթը նա հետը բերել է դեռ իր մասնավոր արհեստանոցից: Երբ մեկը կտոր էր բերում՝ շորը կարելու, ասում էր.

– Վնաս չունի: Կորեմ-կցեմ մի բան շինեմ» [3, 564-565]:

Փոստատար Նիկոլը փոստատար էր, Թառչի Ղազարը թառ էր նվագում, Բուխալտեր Արտեմը անտառատնտեսության հաշվապահ էր, Մկրատ Միհրանը դերձակ էր, Կաշի Ալեքսանը կաշի և մորթի մթերող էր, Մեղր Մինասը մեղվաբույծ էր, Ավագ Վարանցովը կոմունալ բաժնում ավագ կրող էր, Պաղոշ Ածատը կոշիկ կարող էր, Բուխալտեր Մուխանը Փօկի նախագահ էր, նրան նաև Փօկի Մուխան էին ասում, Հիմնարկ Ղևոնը կոմունալ բաժնում տեսուչ էր, Գրուզ Բարսեղը բեռնատարի վարորդ էր, Տրաքցնող Կիրիկը ժայռ պայթեցնող էր (իսկական անունը Կրիքոր՝ Գրիգոր էր, Կիրիկը անվան փոխված տարբերակն է), Պարտիզան Ակին կտրիճ, կարմիր պարտիզան է եղել, Մոցսայ Գալուստը սոցսայ-բաժնի պետ էր, Ագրոնոմ Մաղաթելը գյուղատնտեսությամբ զբաղվող մարդ էր, Մապուն եփող Մարուխանը իր խանությամբ օճառ էր եփում և վաճառում, Զոտտեխնիկ Մաղեներ անասնաբույծ էր, Փայտոնչի Գրիշը կառապան էր, Պետ Հաբուդը առևտրի բաժնի վարիչ էր:

Ծմակի Մամիկոն: «Երկնահայաց փողոցը փոքր-ինչ դիք է, ծայրը ձորով կտրված: Նրա մեջտեղով է տուն գնում անտառապահ՝ Ծմակի Մամիկոնը»: Ծմակ նշանակում է խիտ անտառ: Մամիկոնը նույնպես մականունը ստացել է աշխատանքային գործունեությունից:

Խոզ Մեծապ: Առաջին հայացքից կարող է թվալ, թե Մեծապը խոզի բնավորություն ունի՝ նախանձ է, անշնորհակալ կամ փնթի, սակայն նա իր մականունը ստացել է խոզ ծախելու պատճառով:

Մականունների մյուս շարքը կապված է մարդկանց զլխով անցած իրադարձությունների հետ. սրանք պայմանականորեն կարող ենք կոչել **իրադրային** մականուններ: Այսպես, օրինակ, ստեղծագործության զլխավոր հերոսը՝ «Ավան բիձան փողոց մաքրող է: Մեր քաղաքի երևելի և ոչ երևելի մարդկանց նման նա էլ ավելորդ՝ փոթ անուն ունի՝ ճել Ավան բիձա» [3, 473], նաև հեղինակը տալիս է բացատրությունը. ««Ճելը» ևս հայոց գավառաբարբառի մնացուկ է: Նշանակում է՝ շուտ արա, շտապիր» [3, 486]: Ամեն առավոտ Ավան բիձան շտապեցնում է որդուն. «Ճել արա, Գրիգոր ջա՛ն, ճել արա՛» [3, 486]:

Հաջորդ կերպարը առաջին դպրոցի տնօրեն ընկեր Մկրտիչն է. «Ընկեր Մկրտիչը ևս փոթ ունի՝ Ձենդ, Ձենդ Մկրտիչ... Օրը հարյուր անգամ բարկանում է երեխաների վրա, օրը հարյուր անգամ գոռում.

– Դե՛ ձե՛նդ, ձե՛նդ» [3, 507]:

Կարմիր Խաչիկը իր մականունը ստացել է այն ժամանակ, երբ 15 տարեկանում ինքնակամ կարմիրբանակային է դարձել:

Արդար Հաբուղը կովապահ էր, նա էջի հետ գնում էր մարագներից դարման բերելու, իսկ հետո վերադառնալիս կողովը իր շալակին էր.

« – Դիր էջի վրա, տնաշեն մեջքդ կոտեցիր:

– Ա՛յ մարդ, բա էջը մեղք չի՞, – նեղացավ Արդար Հաբուղը:– Կողովը ծանր է: Ո՞նց դնեմ խեղճ անասունի մեջքին» [3, 551]:

Ճառ Սիմոն: «Հանդիսավոր նիստերի, ժողովների և նման բաների ժամանակ նա նստում է նախագահության կազմում... Նստում է և դառնում է շրջկոմի քարտուղարին.

– Իրավունք տվեք մի փոքրիկ, հարյուր տոկոսով փայլուն ճառ ասեմ» [3, 510]:

Նա մի օրավար ճառ է ասում, գյուղացիների բախտը բերել է, որ նա գարեջուրը չարաշահելուց ձայնը կորցրել է:

Կապիտոսը Սուդի: Երբ Ալբերտ Ալիքովիչը ընկեր Անտոնին հարցնում է, թե ինչ է նշանակում կապիտոսը, նա պատասխանում է. «այլաբանորեն խոսող» [3, 481]:

Ավան բիձայի որդին՝ Պաչխատի Ներսեսը, իր մականունը ստացել է դեռ ինը-տասը տարեկանում: «Մի արկղ շինեց իր համար, մորի ու կանաչ խոտ վաճառելուց ետ զցած կոպեկներով կոշիկ մաքրելու խոզանակ ու ներկ գնեց, նստեց Արսենի գրքի խանութի առջև քարե կլոր սյան տակ ու իր մաշված ձայնով աղերսեց.

Պաչխատի՛, պաչխատի՛,

Կոշիկ մաքրեմ, հե՛յ...» [3, 573]

Զկեռ ուտող Թուրթի: Թուրթին բոլորից շատ չի զկեռ ուտում, բայց այս փոթը հենց նրա անվանն է կպել: «Կարծես թե ողջ քաղաքում միայն այդ խեղճն է զկեռ ուտում: Զկեռ ուտող Թուրթին բթամատով ցույց է տալիս ճկույթի ծայրը:

– Ով ինձանից էս դենգնից պակաս ա զկեռ ուտում, թող շուն դառնա» [3, 569]:

«Անհամ Ալեքսանը բնավ էլ անհամ մարդ չի: Ուտող-խմող, բիլիարդ խաղացող ու մարդամոտ: Ընկեր Ալեքսանը մի շոֆերի օրենքով սահմանված ժամկետից շուտ նոր «պակրիշկա» չի տվել: Սա վրեժ է լուծել՝ իր անհամությունը շուտ տվել համով պետի գլխին» [3, 486]:

Գրաբար Գաբրիելը մի հին գրաբար օրացույցի տեր էր ու կարդացող էր: Երբ մի բանի բացատրությունը տալիս էր՝ ասում էր, որ գրաբարյան ծագում ունի, կամ թե բառաձևը գրաբարից է:

Վրիպակ Միքայելը շրջանային թերթի սրբագրիչ է:

«Բայց ահա քաղտովետի այս մի հայտարարության մեջ երեք տառասխալ կա՝ երեք ամոթ:

– Էլի վրիպակ՛կ, – գլուխը թափ է տալիս Վրիպակ Միքայելը և ձեռքը տանում ծոցագրպանում շարած ավտոմատ գրիչներին...» [3, 544]:

Մուռիկ Սամոնը, քաղաք գալով, նոր տան դարպասները տափակ շինեց: Սակայն այս նորամուծության պատճառով մեծ աղմուկ բարձրացավ: Կոմունալ բաժնի վարիչ ընկեր Երանոսյանը պարտադրեց, որ Սամոնը փոխի տան դարպասի ձևը:

«– Ինչի՞, – զարմացավ Մուռիկ Սամոնը:

– Անունդ մուռտառ է, ուզում ես քաղաքիս պատկերքն էլ մուռտառե՞ս, – պատասխանել է Երանոսյանը» [3, 475]:

Կուլտուրա Արսենը գրախանութի վարիչ է:

«– Կուլտուրան էլ է փոթ, Ավան բիձա:

– Բա ի՞նչ: Դա էլ կուլտուրական փոթ է» [3, 506]:

Նա «կուլտուրական» մարդ է: Զարերը այնպես կուլտուրական է գցում, ասես վախենում է՝ փշրվեն:

Բաջի Սանդուխտ: «Եթե այս քաղաքում որևէ կնոջ բաջի են ասում, ուրեմն նա աղքատ, չունևոր է» [3, 515]: Բաջի են ասում նաև Հաբուդի կնոջն ու Փայտ Հովագիմի կնոջը՝ Թամարին:

Սև Թուրթու մականունը կապված է իր՝ ասֆալտ փռելու հետ, իսկ տղայի՝ Սև Համլետի մականվան «սև»-ը հոր մականունից է կպել:

Փափախ Ավագը Հոաքել դայի-Տասը տարի դատախազի եղբայրն է: Նրա մականվան մասին հեղինակը գրում է. «Փափախ: Նա սկի գլխարկ չէր դնում: Ամառ-ձմեռ գլխաբաց է: Նրա ճակատին այդ պատվական փոթը նախշել են ձեռքն ընկած ձվից էլ մագ թոցնելու՝ փափախ անելու հանձարեղ ունակության համար: Տասը տարում տասներկու պահեստ, խանութ է համտես արել Փափախ Ավագը» [3, 493]:

Արաղ Իստ: Արաղ Իստն շուկայում թթի օղի և վարունգ վաճառող է:

Սպիրտ Կառլենը հարկային տեսուչ է, որ մտնում էր քաղաքային այգին ոչ թե ծաղիկ պոկելու, այլ «պերերիվին վազում է զբոսայգում եղած տաղավարում մի լիքը կոնյակ կուլ տալու» [3, 529]:

Փայտ Հովագիմը կնոջ բարկանալու պատճառով փախչում է անտառ: Այնտեղ մնում, մնում է, մի շալակ փայտ բերում, հենց շալակին ման ածում քաղաքում:

«– Լավ փա՛յտ, չոր փա՛յտ» [3, 549]:

Նա փայտը ծախում է, աշխատած գումարով ծխախոտ առնում:

Բերդի Հովագիմ: Կուլակաթափությունից հետո բոլոր կուլակ հոչակվածները վաճառում էին իրենց ունեցվածքը և մեկնում «Սրեդի Ազի»: Բերդի Հովագիմը ոչ տունը ծախեց և ոչ էլ մեկնեց քաղաքից: Նրան բռնեցին, դրին բանտ:

Գիրք Պետրուսը խելացի մարդ է, սեփական գրադարան էլ ունի, շատ բանիմաց է և գրքերի հանդեպ ուշադրություն է պահանջում. «Գիրքը մարդու հոգու հայելին է... Նրա մեջ մարդը տեսնում է ինքն իրեն: Գիրքը պետք է խնամքով պահե՛լ»: Ինչպես ասում է Ավան բիձան. «Գիրք Պետրուսը տասը լեզու գիտի, ռուսերենը ջուր է անում» [3, 538]:

Ճաճառ Մմբատ: Ճաճառ ասում են շատ խոսող մարդկանց, բայց Մմբատը ոչ միայն շատախոս չէ, այլև իրենց տանն էլ չի խոսում: Ճել Ավան բիձան անարդար է համարում նրան տված փոթը:

Գիժ Մանյան ուսումը ստացել է Մոսկվայում: Ամռանը գալիս էր և ցրում էր փողոցի մոռյուրությունը՝ դաշնամուր նվագելով: Երեկոները փողոցի աղջիկները գալիս էին Մանյայի մոտ: Սկզբում մայրերը սիրով էին ուղարկում, բայց երբ Մանյան սկսեց աղջիկներին «գիրկ-գրկի» պարել սովորեցնել, թաղն աղմուկ ընկավ: Դատախազի կինը փողոցով մեկ գոռում էր, որ Մանյան գիժ է և աղջիկներին «խտտեն-պտտեն պարել տալով՝ գլխահանում է»: Մանյան մեծերին «ձեզ»-ով էր դիմում, նա ծաղիկ այգուց հավաքելու փոխարեն գնում էր խանութից, և այս ամենը բոլորին խորթ էր:

Բարի Արշամը միլիցիայում քննիչ էր: Ով ձեռքն է ընկել, արձակել է՝ վաստակելով Բարի փոթը: Նա գրեթե երեխայի միամիտ դեմք ունի և մի փոքր էլ արագախոս է:

Հոռքել դայի-Տասը տարին դատախազ էր, քրեական օրենսգրքի բոլոր հոդվածների մեջ նա պատժաչափը միայն տասը տարի էր գտնում. ոչ ավել, ոչ պակաս: Նույնիսկ մի ծոց խնձոր թոցրած Սև Թուրթու թռռան համար տասը տարի կալանք է պահանջել:

Հաբուղներ: «...Հաբուղը պատվական Հայրապետի թերմացքն է» [3, 495]: Հաբուղ էին կոչում այն Հայրապետներին, ովքեր բարձր պաշտոն չունեին. «Մի երկու տարի կլինի, ինչ միլիտերի հայրն էլ է դեն գցել Հաբուղը: Վաթսուն տարի անխախտ Հաբուղ է եղել, հիմա՝ Հայրապետ Կարապիչ» [3, 495]: Ճել Ավան բիձան գայրանում էր Հաբուղների այդ շարքից. «- Աղա՛, է՛յ, Ֆուրաժիր Հաբուղ, մի էդ քու հարևան օղակավար Հաբուղին տնից կանչի, թող գնա ձիապահ Հաբուղին ասի՝ իրա ձին տա Կոմբայն Հաբուղին, տանի մեխանիկ Հաբուղի արհեստանոցից տեխնիկ Հաբուղի ռեմոնտ արած տրակտորի պոխեցական տա պամոշնիկ Հաբուղին, բերի էրգան Հաբուղի տա փը...» [3, 495]:

Ավան բիձան կարգը անարդար է համարում. «Եթե կարգ է, ապա ինչո՞ւ ֆինբաժնի վարիչ Մելիք Մեջլումյան Հայրապետին ևս Հաբուղ չեն ասում: Հաբուղ չեն ասում նաև Ուռած Հայրապետին: Դե, ի՞նչ անենք, որ երկուսն էլ մի ժամանակ «Վըսշիյ-նաչալնի» են ավարտել և որ Ուռած Հաբուղը շրջգործկոմում հրահանգիչ է: Կրակն ընկնենք» [3, 495]

«Մատյան եղելությանց» ստեղծագործության մեջ կան նաև մականուններ, որոնց բացատրությունը ուղղակիորեն տրված չէ հեղինակի կողմից: Բայց դրանք հնարավոր է որոշել վերլուծության միջոցով: Ինչպես օրինակ՝ Մաղդին Տիգրան, ենթադրաբար Տիգրանը կապ ունի Գորիսի տարածաշրջանի Մղեղի՝ Մաղդի լճի հետ, այդտեղից էլ ստացել է իր մականունը:

Գորողովոյ Եգոր: Հիմք ընդունելով այն, որ Եգոր անունն ունի ռուսական ծագում՝ ենթադրում ենք, որ Եգորը եկել է «Սրեղի Ազիից», այդ պատճառով էլ կոչվել է Գորողովոյ, այսինքն քաղաքի մարդ: Այդպես նաև Մեհրաբի Վարթերը երեսուն

թվականին քաղաք որպես հարս է եկել: Այս մականունները պայմանականորեն կարող ենք կոչել **տարածաշրջանային** մականուններ:

Հիբու Արշակ: Ենթադրաբար Արշակի հոր կամ մոր անունը Հիբի/Հիբա է եղել: Հիբա անունը Սյունիքի տարածաշրջանին խորթ է, սակայն Հ. Աճառյանը «Հայոց անձնանունների բառարան» աշխատության մեջ առաջ է բերում Հիպայ անունը և նշում. «ըստ իս պետք է կարդալ Հիբա և ծագումը դնել արաբ. hiba «նվեր, պարգև»» [2, 88]: Գորիսի տարածաշրջանում մարդիկ ճանաչվում են տոհմերով, հաճախ տոհմը կրում է արական ներկայացուցչի անուն, սակայն բացառություն չեն նաև կնոջ անունով կոչվող տոհմերը, որոնք մինչև հիմա էլ կան: Օրինակ՝ Շահնուբարին Ավանեսը իր փոթը կարող էր ստանալ մոր անվան կցման սկզբունքով: Մոր անունը տոհմանուն կարող է դառնալ մի շարք պատճառներով:

Բոլուն Ասաքն իր մականունը կարող էր ստանալ Բոլունց ազգանուն ունենալու պատճառով:

Չոբան Մարգսի Մուշեղը իր մականունը ստացել է հոր՝ Մարգսի մականվանը համապատասխան:

Մրանք պայմանականորեն կարող ենք կոչել **տոհմաբանական** մականուններ:

Էրզան Մուլթան: Էրզան նշանակում է երկար, հավանաբար Մուլթանը երկար հասակ է ունեցել: Լղար Սերոժը իր մականունը կարող էր ստանալ կամ շատ նիհար, կամ էլ շատ գեր լինելու պատճառով: Երկրորդ դեպքում մականունը տրվում է երգիծանքով: Կլոր Մանիկ: Մանիկին կլոր կարող էին անվանել գիրուկ լինելու պատճառով:

Զարիելի Մովսեսի մականունը կարող էր ծագել զարհուրելի բառի տառերի անկումով: Ըստ երևույթին Մովսեսը զարհուրանք պատճառող տեսք է ունեցել: Հիմք ընդունենք նաև այն, որ Մովսեսը «փայտի ածուխ անող էր», և նրա տեսքը կարող էր վախեցնել մարդկանց:

Մրանք պայմանականորեն կարող ենք անվանել **նկարագրական** մականուններ:

Բախկալ Ծատուր: Բախկալ նշանակում է նպարավաճառ, և մեծ հավանականությամբ Ծատուրը հենց նպարավաճառ է եղել:

Մրզմբզ Վլադիկ: Մրզմբզ ասում են ծանրաշարժ, դանդաղկոտ, բծախնդիր կամ կծծի՝ չափազանց ժլատ, մարդկանց: Դիք Ալբերտ, Դիք Ակն: Դիք մականունը այս մարդկանց անուններին կարող էր կցվել նրանց ցցված կեցվածքի պատճառով կամ մարդկային փոխահարաբերություններում չոր և կոպիտ պահվածքից ելնելով: Մրանք պայմանական կարող ենք անվանել **խառնվածքային** մականուններ:

Զեկայի Վրույր: ЧЕКА-ն ռուսերեն հապավում է. Чрезвычайная комиссия, որը հակահեղափոխության, սաբոտաժի և սպեկուլյացիայի դեմ պայքարելու արտակարգ հաձնաժողով է եղել, որ կազմակերպվել է 1918 թվականին և գոյություն է ունեցել մինչև 1922 թվականը: Հավանաբար Վրույրը կապ է ունեցել արտակարգ հանձնաժողովի հետ:

Չոդառ Աղալուն իր մականունը ստացած կլինի չոդարություն անելու պատճառով: Ասել է թե՛ զբաղվել է անասունների առևտրով:

Խոփ Ահուս: «Խոփ» անվանում էն գութանի կամ արորի մետաղյա այն մասը, որ խրվում է հողի մեջ և պատռում շերտը, նշենք նաև, որ Ահուսը տրակտորիստ էր, և վստահ կարող ենք ասել, որ մականունը կապված է Ահուսի կատարած աշխատանքի հետ:

Կան նաև մի շարք մականուններ, որոնց բացատրությունը տրված չէ, և ենթադրաբար դրանց մասին խոսել կամ վերլուծել չենք կարող սակավ մանրամասների պատճառով: Այսպես, օրինակ՝ Պաշտոնի գող Հմայակ, Կաշառք Սեդրակ, Սուլանին Բարոշ և այլն: Սրանցից երկուսի դեպքում հեղինակը միայն նշում է, որ նրանց մականունները կապ չունեն նրանց գործունեության հետ և արդար կերպով չեն դրվել:

Այսպիսով, Սերո Խանգաղյանի ստեղծագործության մեջ առնչվում ենք մի շարք մականունների, որոնք անմիջական և ոչ անմիջական կերպով տրվել են ստեղծագործության կերպարներին իրենց կյանքի ընթացքում: Ըստ վերոնշյալ մականունների քննության՝ կարող ենք առանձնացնել մականունների առաջացման հետևյալ տարբերակները.

1. արտաքին տվյալներից,
2. ներքին՝ բարոյական հատկանիշներից,
3. աշխատանքային գործունեության հիմքով,
4. անվան կամ ազգանվան կրճատման միջոցով,
5. որևէ իրադարձությունից,
6. բնակության վայրի հիմքով առաջացած մականուններ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աճառյան Հ. Հ., Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հատոր 3, Երևան, Հայկական ՍՍՀ Գիտությունների ակադեմիայի հրատարակչություն, 1969, 2763 էջ:
2. Աճառեան Հ., Հայոց անձնանունների բառարան, հատոր 3, Երևան, Պետական համալսարանի հրատարակչություն, 1942, 3155 էջ:
3. Խանգաղյան Ս., Երկերի ժողովածու, հ. 5, Երևան, «Սովետական գրող» հրատարակչություն, 1983, էջ 473-615:
4. Մալխասեանց Ս., Հայերեն բացատրական բառարան, հատոր 3, Երևան, Հայկական ՍՍՌ պետական հրատարակչություն, 1944, 2409 էջ:
5. Պետրոսյան Հ., Գալստյան Ա., Ղարաբյոզյան թ., Լեզվաբանական բառարան, Երևան, Հայկական ՍՍՀ Գիտությունների ակադեմիայի հրատարակչություն, 1975, 328 էջ:
6. Սուքիասյան Ա., Հայոց լեզվի հոմանիշների բառարան, Երևան, Հայկական ՍՍՀ Գիտությունների ակադեմիայի հրատարակչություն, 1967, 685 էջ:

ВЫРАЖЕНИЕ ПРОЗВИЩ В ПРОИЗВЕДЕНИИ СЕРО ХАНЗАДЯНА «ЖУРНАЛ СОБЫТИЙ»

Гавалбабунц Ани

Горисский государственный университет,

«Армянский язык и литература», 4-й курс

Научный руководитель:

кандидат филологических наук, доцент Л. Нерсисян

Резюме

Ключевые слова: *прозвище, профессиональный, ситуативный, региональный, генеалогический, описательный, темпераментный*

В произведениях Серо Ханзадяна мы сталкиваемся с рядом прозвищ, которые были даны персонажам на разных этапах их жизни, как непосредственно, так и косвенно. Анализ этих прозвищ позволяет выделить различные варианты их происхождения: некоторые возникают на основе внешних данных, другие – на основе внутренних моральных качеств, или профессиональной деятельности; часть формируется путём сокращения имени или фамилии, некоторые появляются в результате определённых событий, а другие связаны с местом проживания.

EXPRESSION OF NICKNAMES IN THE WORK OF SERO KHANZADYAN “EVENTS JOURNAL”

Ghavalbabunts Ani

Goris State University,

“Armenian Language and Literature,” 4th Year

Academic Supervisor: L. Nersisyan,

Candidate of Philological Sciences, Associate Professor

Summary

Key words: *nickname, professional, situational, regional, genealogical, descriptive, temperamental*

In the works of Sero Khanzadyan, we encounter a variety of nicknames assigned to characters at different stages of their lives, both directly and indirectly. An analysis of these nicknames allows us to identify several types of origin: some are based on physical characteristics, others reflect internal moral qualities or professional activities; some are formed by shortening a given name or surname, others arise as a result of specific events, and still others are connected to the character's place of residence.

**ԴԱՐՉՎԱԾՔՆԵՐԸ ԳՈՒՄԱՆ ԱՇՈՏԻ
ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԱՄԱՐԺԵՔՆԵՐԸ
ԳՈՐԻՍԻ ԲԱՐԲԱՌՈՒՄ**

Մկրտչյան Անի

*Գորիսի պետական համալսարան,
«Հայոց լեզու և գրականություն», 2-րդ կուրս
Գիտական ղեկավար՝ ք. գ. թ., դոցենտ Մ. Քումուկ*

Հանգուցային բառեր. դարձվածք, Գուսան Աշոտ, բարբառային համարժեք, գեղարվեստական խոսք, լեզվաբանական վերլուծություն, խոսքի արտահայտչականություն

Այս հոդվածում ուսումնասիրել ենք դարձվածքները Գուսան Աշոտի ստեղծագործություններում և դրանց համարժեք ձևերը Գորիսի բարբառում: Գուսան Աշոտի ստեղծագործություններում դարձվածքները ունեն առանցքային դեր՝ որպես գեղարվեստական արտահայտչականության միջոցներ: Դրանք արտացոլում են հուզականություն, պատկերավորություն և ազգային մտածողության առանձնահատկությունները: Քննելով Գուսան Աշոտի ստեղծագործությունները՝ հատուկ ուշադրություն ենք դարձրել դարձվածքների իմաստային, լեզվաբանական և կառուցվածքային բնութագրերին:

Դարձվածքը կառուցվածքով երկու կամ ավելի բառերի կայուն, իմաստով ամբողջական, վերաիմաստավորված այնպիսի կապակցություն է, որ խոսքում հանդես է գալիս որպես լեզվական պատրաստի միավոր [7, 296]:

Դարձվածքներում առաջին հերթին առկա են փոխաբերականությունն ու պատկերավորությունը: Որպես լեզվի իմաստային ինքնուրույն միավոր՝ դարձվածքը օժտված է բառի բոլոր հատկանիշներով՝ բառային իմաստով, քերականական ձևով և շարահյուսական կարգերով: Այն հանդես է գալիս որպես վերարտադրվող պատրաստի միավոր՝ բաղկացած վերաիմաստավորված կայուն բառային կապակցություններից [7, 296]:

Դարձվածքները լեզվի արտահայտչականության և պատկերավորման լավագույն ձևերից են: Ժողովրդախոսակցական, կենդանի լեզվից նրանք անցել են գեղարվեստական գրականության մեջ և հաճախ ենթարկվել գրականացման: Մեր ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Գուսան Աշոտի ստեղծագործությունների դարձվածքային համակարգի մեծ մասն ունի բարբառային ակունք: Այդ դարձվածքները ձևավորվել են հայ ժողովրդի առօրյայում և ներկայացնում են կենցաղային հարաբերություններ ու Սյունիք-Արցախի բարբառային տարածքի յուրահատուկ լեզվամտածողությունը: Այս դարձվածքների միջոցով Սյունյաց երգիչը հաճախ խոսքը ազատում է չորությունից և երկարաբանությունից՝ հաղորդելով խոսքին քնարականություն: Հեղինակի բանաստեղծություններում և երգերում դարձվածքներն իրենց իմաստային նրբերանգներով մտքին տալիս են դիպուկություն ու կենդանություն՝ այլաբանորեն ներկայացնելով ասելիքը [4]:

Գուսան Աշոտի ստեղծագործություններում դարձվածքները ոչ միայն պատկերում են ազգային ինքնությունն ու մշակութային արժեքները, այլև տալիս են նրանց համամարդկային հնչեղություն: Դրանք նրա ստեղծագործությունները դարձնում են յուրահատուկ, իսկ երգերին տալիս են երաժշտականություն ու ժողովրդականություն: Գուսան Աշոտի ստեղծագործությունը վաղուց արդեն մտել է ժողովրդի կենցաղի և աշխատանքի մեջ: Երգում են բանվորն ու գյուղացին, ջահել հնձվորն ու տարեց այգեպանը, հովիվն ու գութանավորը, ուսանողն ու ինտելիգենտը: Գուսան Աշոտի ստեղծագործության էական գիծը պայծառ լավատեսությունն է կյանքի, մարդու ապագայի, երկրի, այսօրվա և գալիքի նկատմամբ: Նրա երգերում արտահայտված է անսահման սեր դեպի մարդն ու հայրենիքը, դեպի եղբայրական ժողովուրդներ, քնքշանք՝ դեպի մերձավորն ու հարազատը, անկեղծ սքանչացում՝ բնության և աշխարհի գեղեցկությունների նկատմամբ: Երբեմն նրա երգերում զգացվում են նաև թախծի շեշտեր, բայց այդ թախծի թեթև երանգները ծնվում են իր հայրենի աշխարհի նկատմամբ տաժաժ բացառիկ սիրուց: Գուսանն ուզում է հավերժ ապրել իր գեղեցիկ երկրի և «ծնող մեծ ժողովրդի» հետ: Գուսան Աշոտի ստեղծագործության ամենանշանակալից և բնորոշ գծերից մեկը արդիականությունն է: Նրա երգերը արդիական են ոչ միայն նրանով, որ արձագանքում են օրվա հարցերին, այլև իրենց կենսուրախ և լավատեսական ոգով, խորապես ժամանակակից մեկնաբանություններով ու մտածելակերպով: Ամենատարբեր ժանրերին պատկանող նրա երգերի բովանդակության և հերոսների մտածելակերպում շատ ցայտուն կերպով նկատելի է սովետական մարդուն հատուկ ինքնավստահությունը, առողջ ու իրավացի հպարտությունը: Նույնքան ակնառու է մի այլ ստեղծագործական յուրահատկություն՝ մոնումենտալիզմը, որը դրսևորվում է Գուսան Աշոտի երգերում ստեղծված բնության լայն պատկերներում, կերպարների հոգեկան մեծ դիպպագոնի մեջ, հայրենասիրական և քաղաքացիական երգերի ճոխ ու հագեցած բովանդակության մեջ: Գուսան Աշոտն ուներ ստեղծագործական աշխատանքի իր առանձնահատուկ եղանակը: Նա երգի տեսքն ու մեղեդին մշակում էր միաժամանակ: Իր յուրաքանչյուր նոր երգ ընթերցում կամ կատարում էր գրասերների շրջանում, երբեմն՝ նաև գրի և գրականության հետ կապ չունեցող մարդկանց մոտ, և հաշվի էր առնում բոլոր օգտակար դիտողություններն ու խորհուրդները: Այս ձևով նա իր երգերը, նախքան տպագիր խոսքի վերածվելն ու բեմահարթակից հնչելը, ենթարկում էր ժողովրդի փորձաքննությանը՝ դրանց հավիտենական կյանքի ուղեգիր տալու համար [2]:

«Մյունյաց սարեր»

Գուսան Աշոտի «Մյունյաց սարեր» բանաստեղծության մեջ հաճախ են հանդիպում դարձվածքներ, որոնք արտահայտում են բանաստեղծի հույզերն ու աշխարհընկալումը՝ սերտորեն կապված Մյունյաց բնության հետ: Դրանք գրական իմաստի հետ մեկտեղ կրում են նաև լեզվաբարբառային արտահայտչամիջոցներ, որոնց համարժեքները գտնում ենք գործիսյան բարբառում: «Հազար ու մի երգում գովված սար եմ տեսել, բայց միշտ ձեր *կարոտը քաշել*, Մյունյաց սարեր»: Այս տողում *կարոտը քաշել* դարձվածքն նշանակում է՝ «սրտի ցավ զգալ կամ տառապել ինչ-որ մեկի բացակայությունից կամ կարոտից»: *Քաշել* բայը հանդես է գալիս

«Ծանրություն կամ տառապանք զգալու» իմաստով՝ կապված հոգեկան ծանրության հետ: Գործիայան բարբառում այս դարձվածքի համարժեքն է *հըսրաա ՞թ քաշիլ* [1, 20]:

«Ինձ մոր սրտով ձեր *գիրկն առեք*, Սյունյաց սարեր»: Այստեղ *գիրկն առնել* դարձվածքը նշանակում է «գրկել, ընդգրկել կամ պարփակել» ուղղակի կամ փոխաբերական իմաստով: Այն ցույց է տալիս բնության գրկում խաղաղություն գտնելու ցանկությունը: Գործիայան համարժեքներն են *խըտտն առնիլ, կօ ՞քն օնիլ* [1, 20]:

«Յայլաներիդ ծուխը սահող երամ դառած, իմ նագելին երամի մեջ *երազ դառած*»: Այս հատվածում *երազ դառնալ* դարձվածքը խորհրդանշում է «անհետանալը, ջրանալը, անէանալը»: Այն կարող է նշանակել նաև մի բան, որ ժամանակին իրական էր, բայց հիմա այլևս չկա: Այս համատեքստում երազ դառնալը հանդես է գալիս որպես ցավոտ անցյալի նշան: Գործիայան համարժեքն է *արազ տա ՞ռնա ՞լ* [1, 20]:

«Հովերդ ինձ *ձեռքով կանեն*, Սյունյաց սարեր»: Այստեղ *ձեռքով անել* դարձվածքը նշանակում է «կանչելու նշան անել»՝ ոչ խոսքի, այլ ժեստերի միջոցով: Բնության հովերը՝ մարդուն ժեստերով կանչելու փոխաբերական պատկերն է ներկայացված: Գործիայան բարբառում դրա համարժեքն է *հարայ տալ* [1, 20]:

«Մարդուն քաջի *ուժ կտա* ձեր օղն ու ջուրը, սուրբ մոր նման *օրոր կասի* զով զեփյուրը»: *Ուժ տալ* դարձվածքը նշանակում է «հզորություն ներշնչել», երբ շրջապատը բնությունն ու մթնոլորտը, ուժ են տալիս մարդուն: Գործիայան համարժեքն է *դուաթ տալ*: *Օրոր ասել* նշանակում է «օրորոցային երգ ասել»: Այս համատեքստում զեփյուրի մեղմ հպումը նմանեցվում է մոր օրորոցային երգին՝ հանգստություն ներշնչելով: Գործիայան համարժեքներն են՝ *քօն անիլ, լալլայ ախիլ* [1, 20]:

«*Աշխարհով մեկ* տարածվել է ձեր անունը»: *Աշխարհով մեկ* դարձվածքը նշանակում է «ամբողջ աշխարհում, տարբեր վայրերում»: Այն ցույց է տալիս Սյունիքի համբավն ու ճանաչվածությունը: Գործիայան բարբառում համարժեքներն են՝ *ըշխարավ մրն, չավ ինիլ* [1, 21]:

«Պիտի երգեն»: Գուսան Աշոտի «Պիտի երգեն» բանաստեղծության մեջ դարձվածքներն արտահայտում են բանաստեղծի ներաշխարհը, պայքարը, հոգեկան վերլուծությունները և հավատը՝ կյանքի լուսի ու պայքարի նկատմամբ: Դրանցից մի քանիսը իրենց հատուկ նշանակությունը ձեռք են բերում ոչ միայն գրական, այլև բարբառային միջավայրում: «Նա իմ բախտի վառ աստղն է, որ *լույս կտա* ճամփիս հար»: Այս տողում հիմնական դարձվածքն է *լույս տալ*, որը նշանակում է՝ «ուղեցույց կամ առաջնորդ լինել»: Այն կիրառվում է այնպիսի իրավիճակներում, երբ ինչ-որ անձ, երևույթ կամ արժեք մարդուն ուղղություն է տալիս կյանքում, դառնում է հուսալի հիմք կամ ներշնչման աղբյուր: Բախտի վառ աստղը համեմատվում է այն լուսավոր ուղենիշի հետ, որը մշտապես ցույց է տալիս ճիշտ ճանապարհը: Գործիայան բարբառում այս դարձվածքին համարժեք է *իշէղ տալ* [6, 3]:

«Մերթ ամպերն են *ճամփաս փակել*, զցել անդունդն անհատակ»: Այս հատվածում *ճամփաս փակել* դարձվածքը փոխաբերական իմաստով նշանակում է՝

«խոչընդոտել որևէ նպատակի կամ շարժման իրագործմանը», «կանգնեցնել ընթացքը»: Այստեղ ամպերը և անդունդը սիմվոլիկ կերպով ներկայացնում են կյանքի դժվարություններն ու անհաջողությունները, որոնք փակել են բանաստեղծի առաջընթացի ուղին: Գորիսյան բարբառում այս իմաստն արտահայտվում է *առաջը կը տրիչ* դարձվածքով [6, 3]:

«Սերս վանքում Տաթևի»: «Սերս վանքում Տաթևի» բանաստեղծության մեջ «Սարեր, ձորեր վկա են, հանդ ու չուր վկա են, ախս մինչ *երկինք հասալ*, երկնի աստղեր վկա են»: Այս տողերում կարևոր դարձվածք է *երկինք հասնելը*, որը փոխաբերական իմաստով նշանակում է՝ «հասնել մեծ բարձունքների, հոգևոր կամ մտավոր աճի, բարձրագույն նպատակների իրագործման»: Գրականության մեջ այն հաճախ կապված է լուսավորության, ազատության և բարոյական վերելքի հասկացությունների հետ: Գորիսյան բարբառում այս դարձվածքի համարժեքն է *լերկինք կապույտ* [6, 4]:

«Վանքի վառվող մոմերը շլացրին ինձ մի պահ, սրտիս *խոսքը չավարտած*, նայեմ, տեսնեմ՝ նա չկա»: Այստեղ դարձվածքն է *խոսքը չավարտած*, որը նշանակում է՝ «չասված կամ կիսատ մնացած խոսք»: Տվյալ տողում այն խորհրդանշում է կորուստ, անկատար սեր և հոգու մեջ մնացած զգացումներ: Միբեյի անձը հեռացել է այն պահին, երբ բանաստեղծը դեռ խոսելու բան ուներ: Գորիսյան համարժեքն է *խոսքը պիրանունը* [6, 4]:

«Լուսնի շողով փերիս գա»: «Լուսնի շողով փերիս գա» բանաստեղծության մեջ «Մարի ճամփով թե որ գա, աղբյուրները *լուր կտան*»: Այս տողում դարձվածքն է *լուր տալ*, որն նշանակում է՝ «տեղեկացնել, հաղորդել նորություն»: Աղբյուրների միջոցով՝ որպես բնության կենդանի տարր, հասկացվում է, որ նրանք կփոխանցեն լուրը սիրելիի գալուստի մասին: Գորիսյան բարբառի համարժեքն է *խաբար անիլ* [6, 32]:

«Ափսոս շուտ անցալ»: «Ափսոս շուտ անցալ» բանաստեղծության մեջ «Յարս էն գիշեր գարնան նման սիրտը բաց արեց, ասես վարդնոցի բուրմունքն առավ, իմ *սիրտը լցրեց*»: Այս տողում դարձվածքն է *սիրտը լցնել*, որը նշանակում է՝ «լցվել զգացմունքով, ներշնչմամբ կամ սրբազան ոգեշնչմամբ»: Բանաստեղծը նկարագրում է այն հոգեվիճակը, երբ սիրելիի խոսքը կամ ներկայությունը լցնում է հոգին երջանկությամբ ու սրտաբուխ ապրումով: Գորիսյան համարժեքներն են դրդոտված, սերտը պուք կա՞լ [6, 34]:

«Հեյ սարեր»: «Հեյ սարեր» բանաստեղծության մեջ «Երագներս ծաղկանց մեջ եմ միշտ տեսնում, *հուշեր դառած* գառնուկներիս հետ խոսում»: Այս տողում օգտագործված է *հուշ դառնալ* դարձվածքը, որը նշանակում է «անցյալի որևէ երևույթ, զգացողություն կամ հիշողություն վերածվել է հիշատակության, դարձել է միայն հիշողություն, ոչ վերականգնելի»: Գառնուկները՝ որպես խորհրդանիշ, ներկայացնում են մանկություն, մեղմություն, անմեղություն և խոնարհ հիշողություններ: Բանաստեղծն ապրում է իր անցյալի լուսավոր պահերով, որոնք մնացել են որպես ջերմ հիշողություններ: Դարձվածքի գորիսյան համարժեքը տվյալ դեպքում բառացի առումով բացակայում է [6, 35]:

«Նոզիս մաշվեց, ասեք ետ գա, հեյ սարեր»: Այստեղ կարևոր դարձվածքն է

հոգին մաշվել, որը խորհրդանշում է հոգեկան ծանր ապրումներ, տառապանք, մաշվածություն և լքվածության զգացողություն: Սարերին դիմելով՝ բանաստեղծը աղաչում է, որ վերադառնա անցյալը՝ որպես հանգստության ու հավերժության խորհրդանիշ: Գորիսյան բարբառով համարժեք արտահայտությունն է՝ հոգին պիրա՝նա՝վը տո՝ւս յէկու, մահտաբբ թըմամիլ [6, 35]:

«Ութսուն տարիս»: «Ութսուն տարիս» բանաստեղծության մեջ «Մորմոքելով տառապանքի ճամփա անցա»: *Ճամփա անցնել* դարձվածքը այստեղ խորհրդանշում է կյանքի դժվար ու դաժան ուղին, որը մարդը հաղթահարել է ցավով ու փորձություններով լի: Դարձվածքը արտահայտում է հաղթահարված փորձությունները և մարդու ներքին ուժը՝ դրանց միջով անցնելու համար: Գորիսյան համարժեքն է՝ *ճընսպա անց կէնալ* [1, 4]:

«Հոգուս պարտքը ազգիս տալու»: *Հոգու պարտքը* դարձվածքը փոխաբերական իմաստով նշանակում է բարոյական կամ հոգևոր պատասխանատվություն, որ մարդն ունի իր ազգի, հայրենիքի կամ մարդկության հանդեպ: Այս տողում բանաստեղծը շեշտում է իր պատկանելությունը ժողովրդին ու նրա առջև ունեցած անանց պարտավորությունները: Գորիսյան համարժեքն է՝ *խխճի պարտք* [1, 4]:

«Անձրև կենարար»: «Անձրև կենարար» բանաստեղծության մեջ «Կաթիլը գոհար-գոհար, ասես *աչքի լույս* է վառ»: Այս տողում կարևոր դարձվածք է *աչքի լույսը*, որը նշանակում է «շատ սիրելի, թանկ ու նվիրական մի բան կամ մարդ»: Այստեղ բանաստեղծը անձրևի կաթիլները համեմատում է գոհարի և *աչքի լույսի* հետ՝ պատկերավոր կերպով արտահայտելով նրանց կենսատու, սրտամոտ ու զեղազիտական արժեքը: Այս կերպ բնության այս պարզ երևույթը վերածվում է հոգևոր կարևորություն ունեցող խորհրդանիշի: Գորիսյան համարժեքը բացակայում է [1, 6]:

«Ով ահել, *սեր արա*, աշխարհը ծով սեր է»: *Սեր անել* դարձվածքը այս տողում օգտագործվում է «սիրել, սիրահարվել, կամ սիրային կապի մեջ լինել» իմաստով: Բանաստեղծը դիմում է բոլորին՝ անկախ տարիքից՝ նշելով, որ աշխարհը լի է սիրով, և յուրաքանչյուր մարդ պետք է ունենա հնարավորություն՝ զգալու ու կիսվելու այդ համամարդկային զգացմունքով: Գորիսյան համարժեքն է՝ *սիրիբիլի անիլ* [1, 6]:

«Ախ, օրերն անցնում են՝ զմրուխտ *թև առած*»: Այս տողում ընդգծված է *թև առնել* դարձվածքը, որը նշանակում է՝ «շարժման մեջ մտնել, սրընթաց անցնել»: Ժամանակը ներկայացվում է որպես զմրուխտ թռչուն, որը թևածում է արագ, աննկատ և անդառնալի: Այն ընդգծում է կյանքի անցողիկությունը: Գորիսյան համարժեքն է՝ *թև կպնիլ* [1, 6]:

«Երգ խաղաղության»: «Երգ խաղաղության» բանաստեղծության մեջ «Մենք աղավնի ենք դրել անունդ, և արծվի սիրտ ենք դրել *կրծքիդ տակ*»: Այստեղ հանդիպում է *կրծքի տակ* դարձվածքը, որը նշանակում է «մարդու սրտում, հոգում»: Այն վերաբերում է ներաշխարհի ամենանուրբ շերտերին, որտեղ պահվում են անկեղծ զգացմունքներն ու զաղափարները: Բանաստեղծական պատկերում աղավնին

խորհրդանշում է խաղաղություն, արծիվը՝ ուժ, իսկ կրծքի տակ տեղադրելն ընդգծում է, որ այդ արժեհամակարգերը դրված են մարդու էության մեջ: Գործիայան համարժեքն է՝ *դօ՞շին տակ* [6, 14]:

Աղյուսակ 1.

Դարձվածքների համարժեքը Գործիի բարբառում

Գուսան Աշոտ	Իմաստ	Գործիի բարբառ	Իմաստ	Գրական հայերեն	Իմաստ
<i>կարոտը քաշել</i>	<i>սրտի ցավ զգալ, տառապել</i>	<i>կարօտը քաշիլ</i>	<i>Սրտի ցավ զգալ, տառապել</i>	<i>կարոտ ունենալ</i>	<i>տառապել բացակայությունից</i>
<i>գիրկն առնել</i>	<i>գրկել, ընդգրկել</i>	<i>խըտետն առնիլ</i>	<i>գրկել, ընդգրկել</i>	<i>գրկել</i>	<i>սյարփակել</i>
<i>երազ դառնալ</i>	<i>իրականություն դառնալ, անհետանալ</i>	<i>արազ տա՞՞՞նա՞լ</i>	<i>իրականություն տառնալ</i>	<i>երազ լինել</i>	<i>ոչ իրական թվալ</i>
<i>ձեռքով անել</i>	<i>կանչելու նշան անել</i>	<i>հարայ տալ</i>	<i>կանչելու նշան անել</i>	<i>ձեռքով կանչել</i>	<i>հրավիրել ձեռքի շարժումով</i>
<i>ուժ տալ</i>	<i>հզորություն ներշնչել</i>	<i>դուաթ տալ</i>	<i>հզորություն ներշնչել</i>	<i>ոգևորել</i>	<i>բաջություն հաղորդել</i>
<i>աշխարհով մեկ</i>	<i>ամբողջ աշխարհում</i>	<i>չավ ինիլ</i>	<i>ամբողջ աշխարհում</i>	<i>աշխարհի տարբեր վայրերերում</i>	<i>հայտնի լինել</i>

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Գուսան Աշոտ, Լեռները կանչում են, բանաստեղծություններ, Երևան, Սովետ. գրող, 1988, 184 էջ:
2. Գուսան Աշոտ, Գուսանի սերը, sarc.am, (03.08.2016):
3. Դադայան Ա. Հ., Գուսանի սերը, Հայաստանի պետական հրատարակչություն, Երևան, 1958, 154 էջ:
4. Դարձվածքներ, milenaqamalyan.wordpress.com (06.11.2022):
5. Սահակյան Վ. Ա., Սահակյան Վ. Վ., Դպրոցական բառագիրք. հոմանիշներ, հականիշներ, դարձվածքներ, ուղղագրական, բացատրական, Երևան, «Նոր տպագիր» ՍՊԸ, 2011, 396 էջ:
6. Սիրո կրակներ. ժողովածու, «Հայաստան» հրատարակչություն, Երևան, 1971, 132 էջ:
7. Սուքիասյան Ա. Մ., Ժամանակակից հայոց լեզուն (Հնչյունաբանություն, բառագիտություն, բառակազմություն), Երևանի համալսարանի հրատարակչություն, Երևան, 2004, 352 էջ:

УСТОЙЧИВЫЕ ВЫРАЖЕНИЯ В ТВОРЧЕСТВЕ ГУСАНА АШОТА И ИХ ЭКВИВАЛЕНТЫ В ГОРИССКОМ ДИАЛЕКТЕ

Мкртчян Ани

*Горисский государственный университет,
«Армянский язык и литература», 2-й курс*

Научный руководитель:

кандидат филологических наук, доцент М. Кумунц

Резюме

Ключевые слова: *фразеологизм, Гусан Ашот, диалектный эквивалент, художественная речь, лингвистический анализ, выразительность речи*

В творчестве Гусана Ашота фразеологизмы выступают важным художественным средством, усиливающим выразительность его языка. Среди них встречаются как уникальные обороты, отсутствующие в диалектах, так и произошедшие из классического армянского языка (грабара). Эти выражения играют ключевую роль в сохранении национальной культуры и языковых традиций, передаваемых из поколения в поколение через его песни.

SET EXPRESSIONS IN THE WORKS OF GUSAN ASHOT AND THEIR EQUIVALENTS IN THE GORIS DIALECT

Mkrtchyan Ani

Goris State University,

“Armenian Language and Literature,” 2nd Year

Academic Supervisor: M. Kumunts,

Candidate of Philological Sciences, Associate Professor

Summary

Key words: *idiom, Gusan Ashot, dialectal equivalent, artistic speech, linguistic analysis, expressiveness of speech*

In the works of Gusan Ashot, idioms serve as an important artistic device, enhancing the expressiveness of his language. They include both unique expressions absent from regional dialects and those derived from Classical Armenian (Grabar). These expressions play a crucial role in preserving national culture and linguistic traditions, which are transmitted from generation to generation through his songs.

**ԿՆՈՋ ԿԵՐՊԱՎՈՐՈՒՄԸ ԱՐՓԻԱՐՅԱՆԻ
«ԿՅԱՆՔԻ ՊԱՏԿԵՐՆԵՐ» ՇԱՐՔՈՒՄ**

Պետրոսյան Գայանե

Գործիսի պետական համալսարան,

«Հայոց լեզու և գրականություն»,

մագիստրատուրա, 2-րդ կուրս

Գիտական ղեկավար՝ Բ. Գ. Թ., դոցենտ Թ. Անդրեասյան

Հանգուցային բառեր. *իրապաշտություն, կերպավորման արվեստ, համեմատական վերլուծություն, հասարակական բարքեր, սոցիալական անհավասարություն, կանանց խեղված ճակատագրեր*

Հոդվածի նպատակն է ներկայացնել կնոջ կերպակերտման արվեստը Արփիար Արփիարյանի «Կյանքի պատկերներ» շարքում: Անդրադարձել էք 19-րդ դարավերջի հայ իրականության մեջ կնոջը առաջադրվող խնդիրներին, որոնց անդրադարձել է հեղինակը թե՛ գրական-գեղարվեստական գործերում, թե՛ հրապարակախոսական հոդվածներում:

Հոդվածում առանձնացրել ենք մի շարք խնդիրներ՝

1. բացահայտել կնոջ կերպակերտման հիմնական առանձնահատկությունները Արփիարյանի գործերում,
2. ուսումնասիրել կին հերոսների սոցիալական կարգավիճակն ու հասարակական դերակատարությունը,
3. առանձնացնել գրողի՝ կնոջ կերպավորման ժամանակ կիրառած գեղարվեստական միջոցները,
4. բովանդակային վերլուծության միջոցով վեր հանել գործերի թեմատիկ-գաղափարական շերտերը:

Կիրառել ենք պատմահամեմատական, գուգադրական մեթոդները:

«Կյանքի պատկերներ» շարքում հաճախ հանդիպում ենք կանանց, որոնք ստիպված են ենթարկվել ընտանիքի, ամուսնու կամ հասարակության թելադրած կանոններին: Չնայած հասարակական զարգացումներին՝ այս խնդիրներից շատերը շարունակում են մնալ արդիական:

19-րդ դարավերջի արևմտահայ փոքր արձակյի կարևոր մասն են կազմում Արփիար Արփիարյանի նորավեպերն ու պատմվածքները: Հանդիսանալով արևմտահայ 80-ականների իրապաշտական շարժման առաջնորդը՝ Արփիարյանը պատկերեց ժամանակի կյանքը, անդրադարձավ ժամանակի համար կարևոր նշանակություն ունեցող զանազան հարցերի քննությանը: Դա իրագործեց ոչ միայն գեղարվեստական արձակով, այլ նաև հրապարակախոսությամբ:

80-ականների գրական շարժումն ստեղծեց այն գեղագիտական հայացքներն ու ըմբռնումները, որոնք պիտի ուղենիշ լինեին շարժման ճանապարհին: Այդ ըմբռնումները ձևակերպվեցին մեկ ընդհանուր բանաձևի մեջ՝ արտացոլել «կյանքն ինչպես որ է»: Այս տեսանկյունից Արփիար Արփիարյանն իրավացիորեն

գրում է. «Ազգային մատենագրությունը պետք է որ թափանցե ժողովրդին ամեն խաւերուն, ամեն դասակարգերուն մէջ...» [2, 261]: Նա ամենից առաջ հասարակական գործիչ էր, բարքերի քննադատ ու կազմակերպիչ:

Արփիարյանը կյանքի եղելությունները, դեպքերն ու դեմքերը արտապատկերում է լուսանկարչական ճշգրտությամբ՝ հաճախ կանխակալ հետևողականությամբ գրեթե բացառելով ստեղծագործական երևակայության գործոնը: Գրողի պատմվածքները քննելիս պետք է հաշվի առնել, որ դրանք նովելային-պատմվածքային արձակի առաջին փորձերն էին արևմտահայ իրականության մէջ: Ենթադրում ենք, որ նույնիսկ հնարավոր է սկսնակ հեղինակի անփորձության հետքերը երևան: Ըստ Արփիարյանի՝ գրողը «պետք է քիչ շատ ջլեբաց մը, «սան-քյուլոթ երևա», որովհետև գրականություն մը ջիղերու կարոտ է, կորովի պետք ունի, որ գորանա և գորացնէ ժողովրդին միտքն ու հոգին» [3, 3]:

Արփիարյանի նորավեպերում գրեթե բացակայում են ռոմանտիկական տարրերը: Որպես ռեալիզմի համոզված հետևորդ ու ջատագով՝ գրողը կյանքը պատկերել է ինչպես որ կա՝ ցույց տալով հասարակության մէջ ապրող աղետները, տեղ-տեղ խիստ դատողություններով հանդես եկել:

Գինը Պոլսում, ինչպես առհասարակ հայ իրականության մէջ, զրկված էր ինքնուրույնությունից: Նա օրիորդ ժամանակ հլու-հնազանդ էր ծնողներին, ամուսնությունից հետո՝ ամուսնուն: Տարիքային անհամապատասխանությամբ իրագործված ամուսնություններից սկիզբ առած դժբախտությունները սովորական երևույթ էին: Այլատրված երիտասարդների կողմից խաբվող աղջիկների ողբերգական ճակատագրերը ավարտվում էին ինքնասպանությամբ: Հասարակական կարծիքը ուրվականի նման հալածում էր այն մարդկանց, որոնք ցանկանում էին կյանքում ունենալ իրենց նախասիրած կենցաղը, փորձում էին ամուսնանալ իրենց սիրած տղամարդկանց հետ, կարդալ իրենց ցանկացած թերթերը, մասնակցել հասարակական որևէ կազմակերպության աշխատանքներին:

Անդրադարձ կատարելով Ա. Արփիարյանի «Կյանքի պատկերներ» շարքին՝ փորձեցինք մեր ուսումնասիրությամբ ցույց տալ, թե ինչպիսին է կինը գրողի ստեղծագործություններում՝ կնոջ թույլ և ուժող կողմերը, կնոջ արժանապատվության հարցը, կնոջ հասարակական դերակատարությունը: Հեղինակը համապատասխան բնորոշումներով պատկերում է կանանց տարբեր հանգամանքներում, տարբեր տեսանկյուններից քննում ամենը:

«Կյանքի պատկերներ» շարքի առաջին երեք գործերում («Դատապարտյալը», «Երագի մը գինը», «Կատակ մը») առանցքը հարուստ ընտանիքում առաջացած սիրային կոնֆլիկտն է, ժամանակի կենցաղային, բարոյական հուզող հարցերից մեկը: Պատմվածքներից երկուսի մէջ զոհը կինն է, մեկի մէջ տղամարդը: Արփիարյանը ընտրում է լարված և բարդ հոգեվիճակներ, իր հերոսներին դնում է ծայրաստիճան դժվարին կացության մէջ, ենթարկում է ճակատագրական փորձության:

«Դատապարտյալի» հերոսուհին՝ Սաթենիկը, զոհ է գնում հոր՝ Հայրապետ էֆենդու առևտրական հաշիվներին, իր կամքին հակառակ ամուսնանում է տարիքով մեծ, հարուստ Քերովբե էֆենդու հետ: Մի քանի ամիս նրա մոտ մնալուց հետո

փախչում է մոր տուն՝ հանդիպելով ծնողների արհամարհանքին: Հետագայում հանդիպում է Արամին, սիրում նրան, նրա հետ փախչում գյուղ: Արամը աստիճանաբար սառչում է Սաթենիկից, լքում նրան, ամուսնանում մի ուրիշի հետ: Երկրորդ նորավեպի բովանդակությունը շատ տարբեր չէ առաջինից: Նոր ուսումնական ավարտած Հրանտը սիրում է մի հարուստ աղջկա, որի ընկերուհին խորհուրդ չի տալիս ամուսնանալ հասարակ գրագրի հետ: Նա ընկերուհուն նամակում գրում է. «Իմ կարծիքը գիտես, հավատքս գիտես, այն ամուսինն է լավագույնը, որ ամենն ավելի ճոխ շրջագցեստ մը կարող է տալ... «Գեշ շրջագցեստի մը մեջ երջանիկ կին չկա... Այս է և այս պետք է լինի մեր մտատիպարը» [1, 56]: Աղջիկը ամուսնանում է հարուստի հետ: Հրանտը վշտից կորցնում է իրեն, ընկնում գինետները, անձրևի տակ մնալով մրսում, հիվանդանում, մեռնում:

Երբեմն Արփիարյանը նմանատիպ հանգուցալուծում է տալիս գործերին, նույնանման կերպարներ ներկայացնում: Գրողի նպատակը ոչ թե իրականությունից կտրված, երազային աշխարհով ապրող կերպարներ ներկայացնելն է, այլ այնպիսիք, որոնց ինքը տեսնում է իրականության մեջ: Նա նորովի է բացահայտում կնոջ հոգեկան բարձր արժանիքները: Հոր առևտրական հաշիվների պատճառով կյանքի հատակը նետվեց մի աղջկա ճակատագիր: Հայրը հաշվի չառավ, որ աղջիկը կարող էր ունենալ իր ցանկությունները, նախասիրությունները, հակումները: «Չէ, ասում է նա, էֆենդիմ, չէ, իրեն հարցնող չկա, թե ով կուգես, ով չես ուզեր: Մենք իրեն չափ խելք ունեինք, մենք գիտենք, թե որուն պիտի տանք, որու չը պիտի տանք» [1, 21]:

Ի տարբերություն Սաթենիկի՝ Երանիկն ուներ կյանքի մասին իր ուրույն փիլիսոփայությունը. կինը տղամարդուն հավասար իրավունքներ ունի, աղջիկը պետք է իր ողջ կյանքը վայելի, ունենա սիրելիաններ, կատարի ամեն աստիճանի սանձարձակություններ, այսպես ասած չգրկվի հաճույքներից: Ամուսնությունը վերջին տեղում է նրա դավանած փիլիսոփայության մեջ: Արփիարյանը հասարակ փաստերով հասարակության ներքին կյանքի լուսաբանման է մասնակցում:

19-րդ դարավերջին հայ կնոջ վիճակը նույն էր թե՛ արևմտահայ և թե՛ արևելահայ հատվածներում: Պատահական չէ, որ արևելահայ գրականության մեջ ևս շարունակում էին անդրադառնալ կնոջ հասարակական դերակատարությանը, փողի հիմքով ձևավորվող ընտանիքներին: Այսպես՝ Շիրվանզադեն ևս շոշափում է խնդիրը իր մի շարք գործերում՝ «Մելանիա», «Արամբի» արձակ երկերում և դրամաներում («Ունե՞ր իրավունք», «Արմենուհի», «Եվգինե» և այլն):

«Մելանիա» վիպակում տարիքն առած տղամարդը՝ Սամսոն Ֆրանգուլյանը, ամուսնանում է չունևոր ընտանիքից երիտասարդ ու գեղեցիկ աղջկա՝ Մելանիայի հետ: Սամսոնը Մելանիային շրջապատում է հոգատարությամբ: Կարծես ոչինչ չէր խանգարում Մելանիային երջանիկ լինելու համար, սակայն անցնում են տարիներ, և կնոջ փթթուն տարիքը մարմնական պահանջի մասին է խոսում: Սամսոն Ֆրանգուլյանը լուռ հետևում է օերեօր փոխվող կնոջը և այնքան է սկսում խանդել, որ մի անգամ կտրում է Մելանիայի մազերը, մի ուրիշ անգամ փորձում է քնած ժամանակ նրա դեմքին վառող հեղուկ լցնել: Վիպակի վերջում Մելանիան հեռանում է՝ թողնելով մի երկտող՝ «Ես ուզում եմ ապրել, զգալ ու ապրել» [4, 433]:

Միայն ուժեղ կինը կարող էր դեմ գնալ հասարակությանը, չհամակերպվել կյանքին, թողնել ու հեռանալ, փորձել նորից սիրել. սա խոսում է ուժեղ ու հաստատուն կամքի մասին:

Արփիարյանի «Դատապարտյալի» գլխավոր հերոսուհու՝ Սաթենիկի և տարիքով մեծ տղամարդու միջև հոգեբանական միասնություն չէր կարող լինել, այդ ներքին միասնությունը չենք տեսնում նաև Շիրվանզադեի «Մելանիա» վիպակում, «Ունե՛ր իրավունք» դրամայում:

«Ունե՛ր իրավունք» դրամայում հարուստ կալվածատեր Անտոն Բեգմուրյանը կին է առել չունևոր ընտանիքից Հերսիլեին, նրանց տարիքների տարբերությունը հասնում է քսանի: Գործում Շիրվանզադեն ընդգծում է ոչ միայն տարիքային, այլև ճաշակների և հակումների տարբերությունը, որը կարող է ընտանեկան անհաշտության ու դժբախտության պատճառ լինել:

Ա. Արփիարյանի «Կատակ մը» նորավեպում ձկնորս Նիկողոսը, տնտեսական վատ պայմաններից դրդված, իր երիտասարդ աղջկան՝ Մաքրիկին ուղարկում է մի հարուստի մոտ կար անելու: Հարուստի որդին՝ այլասերված բարքերի տեր Վահրամը, կեղծ խոստումներով խաբում է անփորձ աղջկան, խլում նրա կուսությունը և մի քանի օրից հայտնում նրան, թե ուրիշի հետ է ամուսնանում: Հուսահատ աղջիկը, չցանկանալով ապրել անպատիվ, խեղդամահ է լինում ծովում:

Ակնհայտ նմանություններ կարելի է տեսնել «Կատակ մը» գործի, Զոհրապի «Փոստալ» նորավեպի և Մուրացյանի «Հարուստները զվարճանում են» վիպակում հանդիպվող կին կերպարների՝ Մաքրիկի, Տիգրանուհու և Հեղինեի միջև: Այս երեք կանայք էլ խաբվում են տղամարդկանց կեղծ խոստումներին, նրանց զվարճանքի գոհ են դառնում անմեղ կյանքեր: Հեղինակների մոտ ընդգծվում է ֆիզիոլոգիական ձգտումները բնական համարելը: Մաքրիկը և Հեղինեն իրենց պատիվը փրկելու համար ամենահեշտ ուղին են ընտրում, կյանքին վերջ են տալիս: Հակառակ նրանց՝ Տիգրանուհին, միայնակ մնալով, շարունակում է ապրել իր դժբախտ կյանքով՝ նվիրվելով որդու հիշատակին: Այս երեք գործերը ներքին կապով շղթայվելով իրար՝ ներկայացնում են մի ամբողջ աշխարհի սոցիալ-հոգեբանական ողբերգությունը:

Թեմատիկ նույն գիծը Արփիարյանը շարունակում է «Դերասանուհին» գործում: Արեգնազը ցանկանում էր դերասանուհի դառնալ, սակայն սրիկա Երմոգեն էֆենդին կարողանում է զայթակղել նրան և խլել պատիվը: «Խեղճ աղջկան պատիվն ոչնչացած էր» [1, 173]: Սա աղջկա հորը փոխարինած ուսուցիչն էր թատրոնում: Արեգնագի կերպարն իրական կյանքից էր վերցրել Արփիարյանը, հայտնի դերասանուհի Մարի Նվարդին է փորձել ներկայացնել, թե ինչպես է խաբվում, հղիանում, վախենալով հասարակության կարծիքից, դերը կատարելուց հետո թույն խմում և մահանում:

«Ապուշը» գործում Արփիարյանը զարգացնում է կնոջ կյանքում կրթության և դաստիարակության դերակատարության խնդիրը: Գլխավոր հերոսուհին Ֆորթյունեն է (իսկական անունը Պերճիկ): Ֆորթյունեի մայրը, ցանկանում էր աղջկան շատ լավ դաստիարակություն տալ, որոշում է նրան տալ ֆրանսիական

(«ալաֆրանկա») կրթություն: Նա օտար միջավայրում սովորում է եվրոպական լեզուներ, կարդում է ֆրանսիական արկածային վեպեր ու դրանց ազդեցության տակ իրեն երևակայում է արիստոկրատական շրջանի աղջիկ: Այս փաստը միջոց է, որպեսզի հեղինակն արծարծի ժամանակի սոցիալական կյանքին վերաբերող բազմաբնույթ հարցեր և ստեղծի տիպական կերպարների մի ամբողջ շարք:

Բայց ընտանիքը նյութական վատ վիճակի մեջ էր: Աղջիկը սկսում է ատել և անիծել այն միջավայրը, որտեղ ծնվել է, արհամարհել իր ընտանիքը: Ֆորթյունների գլխավոր նպատակը աղքատ միջավայրից հեռանալն ու իր սոցիալական ծագումը թաքցնելն էր, սակայն, ինչպես հեղինակն է նկատում, «յուր աղքատությունը ճակտին վրա դրոշմված էր» [1, 122]:

Հեղինակի ուշադրության կենտրոնում կնոջ սխալ դաստիարակության հետևանքներն են: Ֆորթյունների կերպարը ավելի լավ հասկանալու համար կարևոր պայման է դիտարկել միջավայրը, որտեղ գրողը դնում է իր հերոսին. ծնվել է սովորական արհեստավորի ընտանիքում, բայց ստացել է ֆրանսիական դաստիարակություն, մտերմություն է անում բարձր հասարակության ներկայացուցիչների հետ: Հեղինակը Ֆորթյունների կերպարի օգնությամբ ցուցադրում է Կ. Պոլսի հայ երիտասարդության այլասերված բարքերը, բայց նաև ընդգծում, որ այս կնոջ կործանման պատճառը ոչ միայն միջավայրն էր, այլ նաև ստացած դաստիարակությունը: Արփիարյանը համոզիչ փաստերով ցույց է տալիս մարդու այլափոխությունը, հոգու ամայացումը, տեղի է ունենում արժանապատվության կորուստ:

Այսպիսով՝ ուսումնասիրելով Ա. Արփիարյանի՝ կնոջ կերպավորման արվեստը «Կյանքի պատկերներ» շարքում՝ հանգում ենք հետևյալ եզրակացություններին.

1. Արփիարյանի գործերում կին կերպարները բազմաշերտ են:
2. Ընդհանուր առմամբ կինը նախապաշարումների և հասարակական բարքերի գոհն է:
3. Արփիարյանի կին հերոսները հաճախ ողբերգական ճակատագիր ունեն՝ պայմանավորված հասարակության պահպանողական տրամադրություններով:
4. Առանձին դեպքերում մենք գործ ունենք նաև պայքարի և ընդդիմության դրսևորումների հետ, որոնք, սակայն, շատ թույլ են արտահայտված:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Արփիարյան Ա., Ընտիր երկեր, Երևան, Հայպետհրատ, 1951, 335 էջ:
2. Արփիարյան Ա., Կեանքի լեզուն, «Հայրենիք», Կ. Պոլիս, 1892, թիվ 261:
3. «Արևելք», 1884, թիվ 3:
4. Շիրվանզադե Ա, Երկերի ժողովածու, հատոր չորրորդ, Երևան, Հայպետհրատ, 1959, 514 էջ:

ЖЕНСКАЯ ОБРАЗНОСТЬ В СЕРИИ АРПИАРЯНА «КАРТИНЫ ЖИЗНИ»

Петросян Гаяне

*Горисский государственный университет,
«Армянский язык и литература», магистратура, 2-й курс*

*Научный руководитель:
кандидат филологических наук, доцент Т. Андреасян*

Резюме

Ключевые слова: *реализм, изобразительное искусство, сравнительный анализ, общественные нравы, социальное неравенство, искаленные судьбы женщин*

Цель статьи – представить искусство создания образа женщины в серии «Картины жизни» Арпиара Арпиаряна. В работе затрагиваются проблемы, с которыми сталкивалась женщина в армянской действительности конца XIX века, отражённые автором как в литературно-художественных произведениях, так и в публицистических статьях.

FEMALE IMAGERY IN ARPIARYAN'S SERIES "IMAGES OF LIFE"

Petrosyan Gayane

*Goris State University,
"Armenian Language and Literature," Master's Degree, 2nd Year*

*Academic Supervisor: T. Andreasyan,
Candidate of Philological Sciences, Associate Professor*

Summary

Key words: *realism, fine art, comparative analysis, social mores, social inequality, the crippled fate of women*

The aim of this article is to examine the art of constructing the female image in Arpiar Arpiaryan's "Images of Life". The study addresses the challenges faced by women in Armenian society at the end of the 19th century, as reflected by the author both in literary works and in journalistic writings.

Մարտիանյան Միլենա

«ՎՊՀ» հիմնադրամ,

«Հայոց լեզու և գրականություն»,

մագիստրատուրա, 2-րդ կուրս

Գիտական ղեկավար՝ Բ. Գ. Ղ., պրոֆեսոր Թ. Շահվերդյան

Հանգուցային բառեր. *հարանուն, համարմատ, տարարմատ, նմանահունչ, հնչյունակազմ, հարանվանական կապակցություն, ոճական առանձնահատկություն*

Բառերի ձևաիմաստային փոխհարաբերությունների, կապերի ու զուգորդումների արտահայտություններից են հարանունները: Դրանք հաճախ դուրս են մնացել բառագիտությունն ուսումնասիրողների կողմից, իսկ երբեմն էլ ներկայացվել են իբրև համանունների տարատեսակ, բնականաբար անտեսվել է նաև նրանց դերն ու ոճական արժեքը խոսքում: Հարանուններ տերմինը, որը գործածել է դեռ Արիստոտելն իր «Կատեգորիաներում», նշանակում էր «ածանցավոր բառեր»: Անցյալ դարի 60-70-ական թվականներից սկսած՝ այդ տերմինով արդեն անվանվում է լեզվական այլ իրողություն, այն է՝ բառերի հնչյունային նմանությունը դրանց իմաստային տարբերության պարագայում:

Գիտական շրջանառության մեջ է նաև paronomasia տերմինը, որը ենթադրում է համահունչ տարարմատ բառերի միտումնավոր համադրում, որը գեղարվեստական ստեղծագործության մեջ դառնում է ոճական արտահայտիչ հնարք: Այս տերմինների առկայությունը հենց վկայում է հարանունների՝ լեզվական միավորների, գնահատման տարբեր մոտեցումների մասին: Հարանունների ըմբռնման վերաբերյալ թե՛ ռուս և թե՛ հայ լեզվաբանության մեջ կան տարբեր և իրարամերժ տեսակետներ: Ռուս գրականության մեջ Պեշկովսկու, Գրիգորևի և այլոց կարծիքով հարանունները (паронимы) հիմնականում ըմբռնվում են երկու առումով՝ նեղ և լայն: Ս. Էլոյանը գրում է, որ առաջին դեպքում՝ նեղ առումով հարանուններ են կոչվում համարմատ և նմանահունչ այն բառերը, որոնց իմաստի մերձավորությունը երբեմն սխալ գործածության տեղիք է տալիս [5, 100]: Երկրորդ դեպքում՝ լայն առումով հարանուններ են դիտվում առհասարակ նման արտասանություն ունեցող կամ նմանահունչ բառերը [Տե՛ս նույն տեղում]: Հարանուն եզրույթը հունարեն *պարոնիմ* բառից է, որ նշանակում է *հարակից+անուն*: Հարանուն տերմինի առավել լայն առումով գործածության կողմնակից է Ս. Աբրահամյանը [2, 65-66]: Նա հարանուններ է դիտում առհասարակ նման հնչյունակազմ ունեցող բառերը և դրանք դասակարգում երկու խմբի՝ ձևային և ձևաիմաստային: Դրանք այն բառերն են, որոնք արտաքին հնչյունական կազմով, գրությամբ կամ արտասանությամբ իրար բավականին մոտ են կամ նման, իսկ իմաստով տարբեր՝ հարաբերակից կամ առնչակից: Արժեքավոր է նաև Ա. Մարգարյանի՝ հարանուններին տրված բնութագիրը: Հեղինակը նշում է մի շարք կարևոր հանգամանքներ, այն է՝ հարանունները ձևով նմանվում են համանուն բառերին, իսկ իմաստով՝ հոմանիշ-

ներին [6, 118-124]: Միաժամանակ գիտնականը տարբերակում է իսկական (համարմատ) և ձևային (տարարմատ) հարանուններ, որոնց համար առաջարկում է նաև «հարանվանում» տերմինը [6, 118-124]:

Հարանուն բառերի առանձնահատկությունն այն է, որ դրանք առհասարակ գործածվում են գույգերով, քանի որ հարանունությունը ենթադրում է հնչյունային նման պատկեր ունեցող բառերի համադրում: Հարանունները կարող են հանդես գալ նաև երկուսից ավելի անդամներով՝ կազմելով հարանվանական մի ամբողջ շղթա: Հաճախ հարանունությունը կարող է բառերի գործածության շփոթություն առաջ բերել, ուստի պետք է զգույշ լինել և խուսափել պատրանքից: Ինչպես օրինակ՝ ցուցում-ցուցմունք, արհեստ-արվեստ, հասկացություն-հասկացողություն: Կան հարանուններ, որոնք իմաստային ոչ մի կապ ու ընդհանրություն չունեն, իրար նմանվում են սոսկ իրենց արտաքին հնչյունական կազմով, ձևով և հաճախ սխալ կիրառությամբ փոխարինում են միմյանց, ինչպես՝ ամուլ (լծակից գութանին լծվող գույգ եզ կամ գոմեշ կամ ամուսնական գույգ) և ամուլ (չբեր), թռչել (թների օգնությամբ օդի միջով գնալ) և թրջել (որն է բան հեղուկով թացացնել) և այլն:

Քանի որ իբրև լեզվական երևույթ՝ անկախ ռճական կիրառությունից, հարանունները նշվել են ընդամենը հատուկենտ ստեղծագործություններում, ուստի այժմ կարևորվում է հարանունների քննությունը՝ որպես լեզվական իրողություն: Հայոց լեզվում հարանունների դերը բավականին մեծ է, հետաքրքրական են թե՛ ձևաբանական, թե՛ շարահյուսական արտահայտությունները: Առավել հետաքրքրական են շարադասական առանձնահատկությունները, որոնց նորարարական տարբերակով դրսևորումները հանդիպում ենք Սևակի և Թումանյանի ստեղծագործություններում: Ուստի ուսումնասիրության լեզվական նյութը քաղել ենք 20-րդ դարի նշված տաղանդավոր հայ բանաստեղծների ստեղծագործություններից:

Հարանունների հիմնահարցի ուսումնասիրությունը վկայում է այն մասին, որ տարբեր խոսքի մասերի հարանվանական կարողությունն արտահայտվում է տարբեր կերպ: Կ. Առուստամյանը նշում է. «Նյութական խոսքի մասերն ավելի մեծ չափով են օժտված գուգորդական հնարավորություններով, քան սպասարկու խոսքի մասերը: Ավելին՝ որքան լիիմաստ խոսքի մասերը լեզվի հարանվանական հատկությունների համար մեծ հնարավորություններ են դրսևորում, օժտված են սեփական բառիմաստով և ունեն հարանվանական գուգորդման լայն դաշտ, այդքան այդ հնարավորություններից գուրկ են թերիմաստ կամ սպասարկու բառերը, օրինակ՝ կապերը, շաղկապները, վերբերականները և ձայնարկությունները» [3, 24]: Նկատելի է դառնում, որ հարանվանական շղթայի մեջ գերազանցապես ընդգրկվում են գոյականներ, ածականներ ու բայեր, ավելի հազվադեպ հանդիպում են դերանունները, թվականները (բացառություն են կազմում դասական թվականները) ու մակբայների որոշ տեսակներ: Այն կապակցությունները, որոնք կազմվում են դերանունների, թվականների մասնակցությամբ, գրավում են միջանկյալ դիրք, և դժվարանում ենք դրանք իսկական հարանուններ կոչել, դիտել որպես հարանվանական գույգեր: Դրանց համար գլխավոր արգելք են հանդիսանում սպասարկու բառերի՝ շաղկապների, կապերի, վերաբերականների և ձայնարկու-

թյունների իմաստային անլիարժեքությունը: Մակայն Կ. Առուստամյանը նկատում է, որ սպասարկու բառերով հաճախ զարգանում է հարանվանական փոխազդեցությունը, դա այն դեպքում, երբ դրանք հարանվանական մեծ ներուժ ունեցող լիիմաստ բառերի շրջանում են [3, 25]:

Կ. Առուստամյանը գրում է, որ հնչողությամբ մոտ և հարանվանական կապ ստեղծող տվյալ տիպի կապակցությունները արժեքավոր են իրենց մեջ պարունակող հարանվանական կարողությամբ, որին չի կարող խանգարել անգամ բառերից մեկի թերիմաստությունը [3, 25]: Ինչպես օրինակ՝

Հիմա գուցե մեր աշխարհում
Արհավիրքից հավետ հեռու,
Մի նոր Զոյա, անհայտ դեռ մեզ,
Դեռ դեռաստի, համեստ ու հեզ,
Դասագրքերն է իր թերթում (ՊՄ, ԵԺ, 1, 539):

Լոկ ճուտ հանելիս
Թոչունի առողջ կամ լալ ձվերը
Թոչուններն իրենք՝
Երբ սկսվում է նրանց չվելը... (ՊՄ, ԵԺ, 1, 400):

Այս օրինակներում առկա են և ակնհայտ հարանուններին համապատասխանող բոլոր պայմանները՝ բաղաձայնական կազմի ամբողջական համընկնումը, հարանուն բառերի գրաված դիրքը՝ տողում կամ քառատողում, շարահյուսական կապը:

Այլ պատկեր են ներկայացնում լիիմաստ բառերով ձևավորված հարանվանական կապակցությունները: Դրանք կազմում են լիարժեք հարանուն բառերի համադրությամբ, որի արդյունքում բաղադրիչ բառերի միջև զարգանում է իմաստային կապը: Օրինակ՝

Եվ գեղն երկնային արդեն վաճառված,
Եվ *եղծված, պղծված* թովչանքը բոլոր (ՀԹ, ԵԺ, 1, 195):

Բավականին մեծ թիվ են կազմում այն հարանվանական գույգերը, որոնք կապակցվում են քերականորեն համագոր հարաբերությամբ: Դրանք կարող են լինել և միևնույն, և՛ գուգահեռ տողերում: Ինչպես՝

Մի քաղքենի թոչուն հեղուկ գեղգեղանքով
Իր խեղճ գոյությունն է երգ դարձնում անբառ՝
Սնչսելի՝ հեռվից,
Սնորսայի՝ հեռվից (ՊՄ, ԵԺ, 1, 251):

Կամ էլ՝
Ես հիմա,
Արդեն *հոգնած*, բայց *հանգիստ*,
Մեկ վայրկյանում կքնեմ արշալույսի ձեռքերին,
Մանկան նման անխռով (ՊՄ, ԵԺ, 1, 410):

Հարանունները կարող են լինել տարարմատ և ընդհանուր բաղադրիչներ ունեցող: Տարարմատ են այն հարանունները, որոնք կազմված են տարբեր արմատներից կամ արմատական բառերից և ունեն տարբեր իմաստներ [5, 101]:

Դրանք հիմնականում մեկ, մասամբ էլ երկու հնչյունի տարբերություն ունեն։ Դրանցից են օրինակ՝ *արտորում-արտերում, կիսում-կիզում, գիրք-գիրկ* և այլն։

Կըլթացնում են, *արտորում*

Արտույտները *արտերում* (ՀԹ, ԵԺ, 2, 265) և այլն։

«Ընդհանուր բաղադրիչներ ունեցող են այն հարանունները, որոնք ունեն և՛ ձևային ու արտասանական նմանություն, և՛ իմաստային զգալի ընդհանրություն, որը պայմանավորած է միանման բաղադրիչների կազմով»։ Մ. Էլոյանը նշում է, որ միանման բաղադրիչները կարող են հանդես գալ մեկ, մեկ կամ երկու և ավելի կազմով։ Օրինակ՝ *շնչում-հնչում, հյուսում-հուզում, անարդար-անդադար* և այլն։

Որ կենդանի մարդն է *հյուսում*

Ու կենդանի մարդուն *հուզում* (ՊՄ, ԵԺ, 2, 36) և այլն։

Երկու տիպի հարանուններն էլ կարող են պատկանել և՛ միևնույն, և՛ տարբեր խոսքի մասերի, ինչպես օրինակ՝ *գործուն-գործոն, հնչյուն-հնչուն, կտրիճ-կտրիչ, խոխոջուն-խոխոջյուն* և այլն։

Հարանունների հնչյունակազմային տարբերությունները կարող են երևան գալ՝

ա) բառակզբում՝ արձակ-համարձակ, անցավոր-հանցավոր, երգ-վերք, հովից-գովից և այլն։

Ո՛վ էս դուն, արի՛, այս մեր *հանցավոր*

Ուրախությանը մասնակից եղիր,

Կամ թող վայելենք մեր կյանքն *անցավոր*

Թե չէ խիստ պատժի քարերից փախիր (ՀԹ, ԵԺ, 2, 36)։

Հովից են երգում

Չովից են երգում

Որ շուտ չդադրեն տաքից ու շոգից (ՊՄ, ԵԺ, 2, 45) և այլն։

բ) բառամիջում՝ *տենչանք-տանջանք, համար-հարմար, դիտել-դիպել, չխելա-գարվեց-չխանգարվեց* և այլն։

... Օր ու կյանքի *տենչանքով*,

Հազար ու մի *տանջանքով* (ՀԹ, ԵԺ, 2, 65)։

Դիամցը կանգնած ես շատ եմ *դիտել*։

Առաջին շողը դեռ ինձ է *դիպել* (ՀԹ, ԵԺ 2, 118) և այլն։

Ընդհանուր բաղադրիչ ունեցող հարանուններից հաճախ են շփոթում կազմակերպական (կազմակերպելուն հատուկ, վերաբերյալ) և կազմակերպչական (կազմակերպչին հատուկ, վերաբերյալ), ծանրաքաշ (ծանր քաշ ունեցող) և ծանրաքարշ (ծանր բեռ քարշող, տեղափոխոխ), լողալ (լող տալ) և լողանալ (լոգանք ընդունել, մարմինը լվանալ), ամուլ (լծակից գութանին լծվող գույգ եզ կամ գոմեշ) և ամուլ (չբեր), թռչել (թռերի օգնությամբ օդի միջով գնալ) և թրջել (որևէ բան հեղուկով թացացնել) և այլն։ Մակայն հասկանալի է, որ նման հարանուններից մեկը մյուսի փոխարեն սխալմամբ գործածությունը գրեթե բացառվում է գրական լեզվի համատեքստում, օրինակ՝

Թող որ ամեն բան բաց *պատկերված* չէ,

Սակայն ամեն բան *պատկերացված* է (ՊՄ, ԵԺ, 1, 315)։

Ըստ Ս. Էլյայանի [5, 104] կատարած քննության՝ հարանուն բառերը խոսքի մեջ հանդես են գալիս հետևյալ ռճական առանձնահատկություններով.

Ա. Չափածո խոսքում հարանուն բառերը հանդես են գալիս բառավերջում՝ իբրև հանգաբառեր հետևյալ հաջորդականությամբ.

ա) մեկընդմեջ, այսինքն՝ առաջին տողի վերջին բառին իբրև հարանուն համապատասխանում է ոչ թե հաջորդ տողի վերջին բառը կամ էլ կից տողի վերջին բառը, այլ երրորդ տողի վերջին բառը, նաև երկրորդ տողի վերջին բառը՝ կարող են շատ հանգիստ հարաբերության մեջ մտնել չորրորդ բառի հետ. օրինակ՝

Վիրավոր անձի բացված երակից

Տաք արյան տեղակ պաղ կաթ է *ծորում*

Դեղձենիների անբոց կրակից

Կայծեր են թռչում դիմացի *ձորում* (ՊՍ, Եժ, 2, 30) և այլն:

Մեկընդմեջ հարանուն բառերով տողերի ավարտը խիստ տարածված միջոց է դասական և ժամանակակից գեղարվեստական չափածո գրականության մեջ: Հաճախ ստացվում է նաև այնպես, որ բանաստեղծության քառատողի վերջում մեկընդմեջ հարանունական հարաբերությամբ են կապվում նաև բառաձևերը. ինչպես, օրինակ՝

Նույն աշնան օրն է պղտոր ու խոնավ,

Նույն մառախուղն է հողը *համբուրում,*

Բայց չկա՛, չկա՛ պատկերդ խոնարհ,

Եվ չի էլ լինի,–գուր եմ *համբերում...* (ՊՍ, Եժ, 1, 254):

Այստեղ բերված երրորդ և չորրորդ, առաջին և երկրորդ տողերի հարանունները բառաձևեր են: Խոսքային մակարդակում բավականին ընդլայնվում են հարանունների կապերի սահմանները: Եվ հարանունները կարող են հանդես գալ և՛ բառերի ու բառաձևերի, և՛ բառերի ու կապակցությունների տեսքով:

բ) Կից կամ իրար անմիջաբար հաջորդող տողերում ստացվում են նմանահունչ բառերով երկուական տողերում:

Իմ բարի սըրտի էն մեծ *խոհերից,*

էն մեծ խոհերի անհուն *խորերից*

Կամեցավ՝ ելավ իմ հզոր հոգին (ՀԹ, Եժ, 2, 223) և այլն:

Ժամանակակից գրողները հաճախ են դիմում չհանգավորված բանաստեղծություններ գրելու հմտությանը: Պարույր Սևակը դրանց կողքին առավել հաճախ է ստեղծում մտածված հարանունների բազմանդամ շարքեր, որով ասելիքը մատուցում է դիպուկ ու ընդգծված, ավելի խիստ կերպով արտահայտված, գեղեցիկ ու ինքնատիպ: Այսպես օրինակ՝

Պոլի՛ս, Պոլի՛ս...

Շուք ենք տվել քեզ *դարերով,*

Մեր սրբատաշ սուր *քարերով,*

Մեր անասեղ նուրբ *կարերով,*

Մեր աչքերի փայլ ու ցուքով (ՊՍ, Եժ, 1, 175):

Հարանունների միջև ծագող իմաստային փոխհարաբերությունների զարգացումը կախված է մի շարք հանգամանքներից, որոնց շարքում կարևորվում են

հարանունների առավելագույն հնչյունային նմանությունը, շարահյուսական կապի առկայությունը և նաև նրանց դիրքը իրար նկատմամբ բանաստեղծական սահմաններում, որը թերևս ամենակարևորն է: Իր՝ «Հարանուն բառերը 20-րդ դարի հայ պոեզիայում» աշխատության մեջ Կ. Առուստամյանը գրում է, որ էթե հաշվի առնենք այս հանգամանքը և ռուս գիտնականների կողմից առաջարկված հարանունների տեղաբաշխման տեսակետները, ապա կարող ենք տարբերակել կից (կոնտակտային) և ոչ կից (դիստանտային) հարանուններ: Կարծում ենք՝ բանաստեղծական հնարավոր լավագույն տարածություն կարելի է համարել քառատողը, որի սահմաններում հնչողությամբ մոտ բառերը կարող են ընկալվել որպես հարանուններ:

Կից ենք համարում այն տարբերակը, երբ բանաստեղծական տարածության մեջ մոտ լինելով հանդերձ՝ հարանունները տեղաբաշխված են բանաստեղծության տարբեր հատվածներում, այն է՝ կից քառատողերի սահմանագծում: Այս դեպքում հարանվան բաղադրիչների միջև, բնական է, բացակայում է շարահյուսական որևէ կապ, սակայն բանաստեղծական սեղմ տարածությունը նպաստում է նմանահունչ բառերի միջև իմաստային փոխազդեցության զարգացմանը», նկատում է Առուստամյանը [3, 17]: Իբրև օրինակ կարող ենք դիտարկել հետևյալը՝

Հափշտակվե՛լս...

Այնքա՛ն նման է ուշաթափության.

Շատ կարճ է *տևում*,

Թվում է երկար (ՊՄ, ԵԺ, 1, 140):

Ոչ կից ենք համարում տարբեր քառատողերում, կից բանատողերում կամ էլ բանաստեղծական տարբեր հատվածներում, բայց տարբեր բանաստեղծական նախադասությունների մեջ տեղաբաշխված հարանուն բառերը, որոնց միջև բացակայում է շարահյուսական անմիջական կապը, սակայն դրանք առանձնանում են՝ սեղմելով բանաստեղծական տարածությունը և կապ ստեղծելով ստեղծագործության տարբեր հատվածների միջև:

Այսպես՝ դանակի սրությունն են միշտ բուրժ մատով *փորձում*:

Այսպես՝ մտովին – անգիտակցաբար մեծ մեղք են *գործում* (ՊՄ, ԵԺ, 1, 141):

Ոչ կից ենք համարում նաև միևնույն նախադասության տարբեր բանատողերում հայտնված, սակայն շարահյուսական հստակ կապ (ենթակա-ստորոգյալ, ենթակա-լրացում, կամ լրացումներ, կամ էլ ստորոգյալ-լրացումներ) չունեցող հարանունները: Օրինակ՝

Գողթան գավառի երգասաններից՝

Վիպող-վիպասան մեր գուսաններից (ՊՄ, ԵԺ, 2, 13):

Բ. Հարանունները հանդես են գալիս նաև բանաստեղծական միևնույն տողի ներսում. սակայն այս անգամ նպատակը տողի սահունությունն է, դիպուկությունն ու բարեհնչյունությունը և ոչ թե հանգավորումը: Ամփոփելով միտքը՝ կարող ենք նշել, որ հարանունները այդ կերպ մասնակցում են բանաստեղծական տողի ներքին ճիթմի ստեղծմանը. օրինակ՝

Եվ սայլերն են առաջ շարժվում

Աչքերն *ածուխ* աղջիկների *անծուխ* բոցով,

Նորածնի օրորոցով (ՊՄ, Եժ, 2, 107) և այլն:

Հարանունական շարքերը կարող են հանդես գալ և՛ միննույն, և՛ կից, և՛ մեկընդմեջ հաջորդականությամբ տողերի ներսում. ինչպես՝

Ինչքա՛ն *ցալ*՝ եմ տեսել ես,

Նենգ ու *ղալ*՝ եմ տեսել ես,

Տարել ներել ու սիրել,

Վատը *լալ*՝ եմ տեսել ես (ՀԹ, ԵԺ, 2, 261) և այլն:

Այս կերպով ևս հարանուն բառերի շարքը նպաստում է բանաստեղծական տողերի բարեհնչյունությանը, որթմին ու հանգին: Բարեհնչյուն են նաև չափածո ստեղծագործությունները, որտեղ միննույն հարանունական շարքի մեկ անդամը հանդես է գալիս տողի ներսում, իսկ մյուսը՝ նույն կամ հաջորդ տողի վերջում՝ ստեղծելով ներքին և արտաքին հանգավորման չափազանց ներդաշնակ ու համահունչ համադրություն: Դրա վառ օրինակներից հանդիպում ենք Սևակի գործերում, ինչպես՝

Բայց իմ ափը ի՞նչ է տալիս:

Ինքդ գիտես, որ մի *ափը*

Մինչև անգամ *ծափ* չի տալիս (ՊՄ, Եժ, 1, 348):

«Չափածո խոսքի մեջ հանգակերտման նպատակադրումով հաճախ տողավերջի որոշ բառերին կամ բառաձևերին նմանահունչ կարող են լինել հաջորդ տողավերջի կամ տողամիջի երկու բառեր կամ կապակցություններ», սակայն Էլոյանը դրանք դիտում է որպես խոսքային հարանուններ, և լեզվական մակարդակում հարանունական շարք չեն կազմում [5, 109]:

Օրինակ՝

Ես ճանաչում եմ և գիտե՛մ մարդուն,

Ինչ ասես չկա նրա փակ սրտում:

Գիտի *կործանել*

Բայց և *գործ անել* (ՊՄ, Եժ, 1, 405) և այլն:

Գ. Բանաստեղծական տողի ներսում կամ վերջում գործածված հարանուն բառերը հաճախ հանդես են գալիս կրկնվող մեկ կամ երկու բառերի զուգադրությամբ, դա հնարավորություն է տալիս ավելի շեշտելու արտահայտչական երանգը. օրինակ՝

Ա յն *վանքը* ողբամ,

Որ վեր է ածվել բողկի պահեստի,

Այն *վա՛նկը* ողբամ, այն վա՛նկը, որին

Զրկում են միակ իր ձայնավորից... (ՊՄ, Եժ, 1, 422) և այլն:

Էլոյանի դասակարգման մեջ հանդիպում ենք հարանուն բառերի կամ հարանունական զույգերի ու շարքերի, որոնք ոճական և իմաստային տարողունակությամբ, շեշտվածությամբ և ինքնատիպությամբ հաճախ առանցքային դեր են կատարում համատեքստում, և ըստ այդմ դրանց ստեղծումը կապվում է նախորդ բանատողի վերջին կամ տողի որևէ բառի հնչողության, նաև ձևի հետ [5, 110]: Օրինակ՝

– Մերթ օրինապահ, մերթ *աղանդավոր*,

Միշտ *տաղանդավոր* (ՊՄ, ԵԺ, 1, 156):

Այստեղ *աղանդավորը* նախապատրաստում է *տաղանդավորը* հարանունական գույգը:

Դ) Հարանուն բառերը հանդես են գալիս նաև գեղարվեստական արձակում, հրապարակախոսական ոճերում, ինչպես նաև գիտական ոճում: Այստեղ հանգավորումն այդքան էլ էական չէ, առանց դրա, ինչպես նաև առանց նպատակադրման հարանուն բառերը խոսքին հաղորդում են դիպուկություն, արտահայտչականություն, ոճավորում են այն. այսպես, օրինակ՝ Մտածում եմ՝ *զնամ-չզնամ* (ՀԹ, ԵԺ, 1, 214):

Ե) Երբեմն հարանունները կարող են հանդես գալ բառախաղային նշանակությամբ: Դա կարող է դրսևորվել թե՛ արձակ, թե՛ չափածո գեղարվեստական խոսքում: Օրինակ

– Նա ինձ համար թանկ էր, *անզին*,

Ես առաջին անգամ *հանզին*

Նրա անվամբ ծանոթացա (ՊՄ, ԵԺ, 1, 128):

Իր փա՛ռքն է ուզում, թե թագն ու *գահո՛ւյք...*

– Իր կյանքն է ուզում, իր պատիվն, իր *գույք* (ՀԹ, ԵԺ, 2, 203):

Այսպես բառախաղային ոճական արժեքով հարանուն բառերը հանդես են գալիս նաև դարձվածքներում և ասույթներում, նաև ժողովրդական այս կամ այն ասացվածքներում:

Հաճախ մենք հարանունություն ենք անվանում այն դեպքը, երբ ունենում ենք հնչյունակրկնություն: Առուստամյանը նկատում է, որ «այն բառերը, որոնք ունեն տարբեր իմաստներ, բայց հենվում են նույն բաղաձայնական կազմի վրա՝ ձևավորում են հարանվանական գույգեր: Ինչը հնարավորություն է տալիս բացահայտել նրանց իմաստներում առկա ընդհանուր տարրերը: Հարանունության մասին ավելի որոշակի կարելի է խոսել միայն այն դեպքում, երբ դրանք կազմող բաղադրիչները նմանեցվում են ոչ միայն իրենց հնչյունային պատկերով, այլև իրական շարահյուսական կապով» [3, 21]: Օրինակ՝ Կուրծքս երբեմն ետ է գալիս ու *հուզվում*.

Ես մնում եմ անշարժ, ինչպես, լուռ արձան,

Միտքս թռչում է դեպի երկինք և *սուզվում*

Տիեզերքի խորության մեջ անսահման... (ՀԹ, ԵԺ, 2, 59):

Ամփոփելով ողջ աշխատանքի արդյունքները՝ գալիս ենք հետևյալ եզրահանգումներին՝

▪ Հարանուն բառերի առանձնահատկությունն այն է, որ դրանք առհասարակ գործածվում են գույգերով, քանի որ հարանունությունը ենթադրում է հնչյունային նման պատկեր ունեցող բառերի համադրում: Հարանունները կարող են հանդես գալ նաև երկուսից ավելի անդամներով՝ կազմելով հարանվանական մի ամբողջ շղթա:

▪ Հարանուններին համապատասխանող պայմաններն են բաղաձայնական կազմի ամբողջական համընկնումը, հարանուն բառերի գրաված դիրքը՝ տողում կամ քառատողում, շարահյուսական կապը:

- Ձևաբանական տեսանկյունից նյութական խոսքի մասերն ավելի մեծ չափով են օժտված գուգորդական հնարավորություններով, քան սպասարկու խոսքի մասերը:

- Հարանունները կարող են լինել տարարմատ և ընդհանուր բաղադրիչներ ունեցող:

- Հնդհանուր բաղադրիչներ ունեցող են այն հարանունները, որոնք ունեն և՛ ձևային ու արտասանական նմանություն, և՛ իմաստային զգալի ընդհանրություն, որը պայմանավորած է միանման բաղադրիչների կազմով: Միանման բաղադրիչները կարող են հանդես գալ մեկ, մեկ կամ երկու և ավելի կազմով:

- Երկու տիպի հարանուններն էլ կարող են պատկանել և՛ միննույն, և՛ տարբեր խոսքի մասերի:

- Հարանունների միջև ծագող իմաստային փոխհարաբերությունների զարգացումը կախված է մի շարք հանգամանքներից, որոնց շարքում կարևորվում են հարանունների առավելագույն հնչյունային նմանությունը, շարահյուսական կապի առկայությունը և նաև նրանց դիրքը իրար նկատմամբ բանաստեղծական սահմաններում, որը թերևս ամենակարևորն է: Այս հանգամանքից ելնելով՝ տարբերակում ենք կից (կոնտակտային) և ոչ կից (դիստանտային) հարանուններ:

- Չափաձո խոսքի մեջ հանգակերտման նպատակադրումով հաճախ տողավերջի որոշ բառերին կամ բառաձևերին նմանահունչ կարող են լինել հաջորդ տողավերջի կամ տողամիջի երկու բառեր կամ կապակցություններ:

Այսպիսով՝ հարանուն բառերը ձևով և արտասանությամբ նման լինելու յուրահատկությամբ ժամանակակից հայերենի գեղարվեստական խոսքում, Սևակի և Թումանյանի ստեղծագործություններում, ունեն ոճական-արտահայտչական մեծ արժեք: Իբրև հարանուններ՝ կարող են հանդես գալ թե՛ բառեր, թե՛ բառաձևեր և թե՛ կապակցություններ, ինչը խոսքում բավականին ընդլայնում է հարանունական բառերի սահմանները: Հարանուն բառերը առավելապես գործածվում են գեղարվեստական չափաձո խոսքում՝ հաղորդելով նրան ուրիշ, դիպուկություն, արտահայտչականություն, նպաստելով նրա հանգավորմանը և բարեհնչյունությանը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աբեղյան Մ., Երկեր, հ. ե, Երևան, 1971, 336 էջ:
2. Աբրահամյան Ս., Ժամանակակից գրական հայերեն, Երևան, 1981, 419 էջ:
3. Առուստամյան Կ., Հարանուն բառերը 20-րդ դարի հայ պոեզիայում, Երևան, 2005, 147 էջ:
4. Եզեկյան Լ., Հայոց լեզվի ոճագիտություն, Երևան, 2003, 375 էջ:
5. Էլոյան Ս., Ժամանակակից հայերենի բառային ոճաբանություն, Երևան, 1989, 258 էջ:
6. Մարգարյան Ա., Ժամանակակից հայոց լեզու, Բառագիտություն, Երևան, 1993, 228 էջ:
7. Պետրոսյան Հ. Հայերենագիտական բառարան, Երևան, 1987, 686 էջ:

Ուսումնասիրության աղբյուրներ

Պ. Սևակ, Երկերի ժողովածու, հատոր առաջին, Երևան, 1982:

Երկերի ժողովածու, հատոր երկրորդ, Երևան, 1983:

Հ. Թումանյան, Երկերի ժողովածու, հատոր երկրորդ, Երևան, 1969:

КЛАССИЧЕСКИЕ ХАРАКТЕРИСТИКИ ПАРОНИМОВ

Տարухանյան Միլենա

*Фонд “ВГУ”, “Армянский язык и литература”,
магистратура, 2-й курс*

*Руководитель магистерской диссертации:
доктор филологических наук, профессор Т. Шахвердян*

Резюме

Ключевые слова: *паронимы, однокоренные, разнокоренные, схожее звучание, фонетическое строение, паронимическая связь, стилистические особенности*

В статье рассматривается стилистический потенциал паронимов в художественной речи современного армянского языка. Обосновывается положение о том, что сходство паронимов по форме и звучанию обуславливает их высокую выразительную значимость, особенно в произведениях Севака и Туманяна. В качестве паронимов могут выступать как слова, так и формы слов, а также сочетания, что значительно расширяет границы паронимических слов в речи. Паронимы преимущественно используются в художественной поэтической речи, придавая ей ритм, точность, выразительность, способствуя её связанности и благозвучию.

THE CLASSICAL CHARACTERISTICS OF PARONYMS

Sarukhanyan Milena

*“VSU” Foundation,
“Armenian Language and Literature”,
Master’s Degree, 2nd Year*

*Academic Supervisor: T. Shahverdyan,
Doctor of Philological Sciences, Professor*

Summary

Key words: *paronyms, homoroots, heteroroots, similar-sounding, phonetic composition, paronymic connection, stylistic peculiarities*

The article examines the stylistic potential of paronyms in the literary discourse of the modern Armenian language. It substantiates the view that the similarity of paronyms in form and sound accounts for their high expressive value, particularly in the works of Sevak and Tumanyan. Paronyms may be represented not only by words but also word forms and word combinations, which considerably broadens the boundaries of paronymic units in speech. Paronyms are predominantly used in literary poetic discourse, where they impart rhythm, precision, and expressiveness, while enhancing textual cohesion and euphony.

ԲԱՂԱԴՐՅԱԼ ԲԱՅԱԿԱՆ ՍՏՈՐՈԳՑԱԼԸ
«ԱՌԱԿՔ ՍՈՂՈՄՈՆԻ» ԱՍՏՎԱԾԱՇՆՉՅԱՆ ԳՐՔՈՒՄ

Միևնյան Աննա

«ՎՊՀ» հիմնադրամ,

«Հայոց լեզու և գրականություն»,

մագիստրատուրա, 2-րդ կուրս

Գիտական ղեկավար՝ Բ. Գ. Թ., դոցենտ Լ. Պետրոսյան

Հանգուցային բառեր. դերբայ, գրաբար, դիմավոր բայ, անդեմ բայ, բայ, բաղադրյալ ստորոգյալ, ստորոգելի

Ստորոգումն արտահայտվում է թե՛ դիմավոր բայաձևով, թե՛ առարկա կամ հատկանիշ արտահատող բառ-դիմավոր բայ կաղապարով: Այդ իսկ պատճառով էլ ստորոգյալը լինում է պարզ և բաղադրյալ [4, 363]: Բաղադրյալ ստորոգյալի համար ընդունելի է համարվում երկու տեսակ՝ բայական և անվանաբայական: Բայական բաղադրյալ ստորոգյալի կազմությանը մասնակցում են եղանակավորիչ բայերը, որոնք հանդես են գալիս հանգուցի դերով՝ եղանակավորելով անորոշ դերբայով արտահայտված բուն գործողությունը:

Առակները «Աստուածաշունչ» մատյանի Հին Կտակարանի կանոնի գիրքն է [1, 1], որ ամփոփում է իմաստալից ասույթներ և ուսուցողական խրատներ: Այստեղ արժարժված իմաստությունները կարող ենք բնութագրվել *հավերժական որոշով*, քանի որ բոլոր ժամանակների համար էլ արդիական են *արդարություն, հիմարություն, հարստություն, աղքատություն, ծուլություն, նենգություն* հասկացությունները: Սողոմոնի առակները հայ ընթերցողին ծանոթ են որպես հայերեն տառերով գրված առաջին նախադասություն. «*Ճանաչել զիմաստություն և զխրատ, իմանալ զբանս հանճարոյ*» [ԱՌ 1, 2]:

Բայական բաղադրյալ ստորոգյալի գրաբարյան արտահայտությունները և դրանց կապակցելիական, արտահայտչական հնարավորությունների բացահայտմամբ է պայմանավորված աշխատանքի **արդիականությունը**:

Աշխատանքի **նպատակն** է՝ բայական բաղադրյալ ստորոգյալների կապակցելիական հնարավորությունները պարզելով՝ բացահայտել այն հատկանիշները, որոնք վերագրվում են գործողություն կատարողներին:

Խնդիրներն են՝

- Բայական բաղադրյալ ստորոգյալի վերաբերյալ տեսական գրականության ուսումնասիրում:
- Բայական բաղադրյալ ստորոգյալի արտահայտությունների տարբերակում «Առակք Սողոմոնի» աստվածաշնչյան գրքում:
- Տարբերակված օրինակների համակարգում:
- Ստացված արդյունքների ամփոփում:

Մեթոդներներից ընտրել ենք **որոնողական-վերլուծական** ուսումնասիրության մեթոդը: Ծարադրանքը եզրափակել ենք համապատասխան եզրակացություններով:

Հատկանշական է, որ Գ. Ջահուկյանը ստորոգյալի տեսակների և նրա ձևավորման հարցերի քննությանը տալիս է հետևյալ կարգը

1. միակազմ անվանական նախադասություններ,
2. բաղադրյալ ստորոգյալ,
3. բարդ ստորոգյալ,
4. ենթակայի ու ստորոգյալի համաձայնությունը [6, 403]:

«Առակք Սողոմոնի» աստվածաշնչյան գրքից դուրս ենք գրել բոլոր բայական բաղադրյալ ստորոգյալները, կատարել վերլուծություններ՝ իրենց համապատասխան գծապատկերներով:

Գրաբարի քերականության աշխատություններում ստորոգյալի անվան տակ հասկացվում է երկու բան՝ ա) ստորոգվող (ենթակային վերագրվող) հատկանիշը և բ) այդ վիճակի կայունությունը կամ փոփոխությունը արտահայտող մասը [6, 402]: Դ. Թրակացու մեկնիչները ելնում են բայի շարահյուսական հիմնական ֆունկցիայից՝ իբրև ստորոգյալի և նույնացնում է բայը ստորոգյալի հետ: Այս առումով նրանք տարբերում են իբրև առանձին խոսքի մաս բայի դերբայական, ոչ ստորոգելիական ձևերը: Սրանք իբրև բայի և անվան ձևաբանական հատկանիշներն «ընդունող» կատեգորիա կոչում է «ընդունելություն» և սահմանում որպես «բառ ընդունական բայից ու անուանց յատկութեան. և յարևին նմա այնք, որք և բային թարց դիմաց և ներխոնարիութեանց» [7, 79]:

Բայական բաղադրյալ ստորոգյալները դասակարգել ենք՝ ըստ գործողի և գործողության փոխհարաբերության՝ առանձնացնելով դրական և ժխտական նախադասությունները:

1. Ժխտական նախադասություններ, որոնք, ըստ ստորոգյալի եղանակաժամանակային արտահայտությունների, լինում են.

Ա. Սահմանական եղանակ, ներկա անկատար + անորոշ դերբայ, օրինակ՝ Սատակումն ամպարշտաց հասցէ, զի **ո՛չ կամին առնել** զիրաւունս [ԱՌ 21, 7]: Են ճանապարհք չարք՝ առաջի առն, եւ **ո՛չ սիրէ դառնալ** ի նոցանէ. բայց **դառնալ** պա՛րտ է ի թելը եւ ի չար ճանապարհէ [ԱՌ 22, 14]: Երիւք շարժի երկիր, եւ չորորդին **ո՛չ կարէ հանդարտել** [ԱՌ 30, 21]:

Բ. Սահմանական եղանակ, անցյալ անկատար + անորոշ դերբայ, օրինակ՝ Եւ **ո՛չ կամէին անսալ** խորհրդոց իմոց, եւ արհամարհեցին զյանդիմանութիւնս իմ [ԱՌ 1, 30]:

Գ. Արգելական հրամայական + անորոշ դերբայ, օրինակ՝ Մի՛ խնայեար խրատել զտղայ, զի թէ հարկանես զնա գաւազանաւ՝ ո՛չ մեռանի [ԱՌ 23, 13]:

Դ. Արգելական հրամայական + ներկա դերբայ, օրինակ՝ Մի՛ լինիր արբեցող. եւ մի՛ նախանձիր ընդ հանգանակօրս մտոյ վաճառաց [ԱՌ 23, 20]:

Ե. Ստորադասական եղանակ, առաջին ապառնի + ներկա դերբայ, օրինակ՝ Մի՛ տար պատասխանի անզգամի ըստ նորա անզգամութեանն. զի **մի՛ լինիցիս նմանօղ** նմա [ԱՌ 26, 4]:

Զ. Ստորադասական եղանակ, երկրորդ ապառնի + անորոշ դերբայ, օրինակ՝ Որդեակ իմ՝ մի՛ նախանձիր ընդ չարս. եւ **մի՛ ցանկանայցես կա՛լ** ընդ նոսա [ԱՌ 24, 1]:

Է. Ստորադասական եղանակի առաջին ապառնի + անորոշ դերբայ, օրինակ՝ Մեծամեծքն բարկախիրոք ես, գինի մի՛ արբցեն. զի մի՛ իբրեւ արբցեն՝ մոռանայցեն զիմաստութիւն, եւ ուղիղ **ո՛չ կարիցեն դատել** զսկարն [ԱՌ 31, 5]:

2. Դրական նախադասություններ, որոնք, ըստ սորոգյալի եղանակաժամանակային արտահայտությունների, լինում են.

Ա. Սահմանական եղանակ, անկատար ներկա + անորոշ դերբայ, օրինակ՝ Որպէս սահանք ջրոց. նո յնպէս սիրտ թագաւորի ի ձեռս Աստուծոյ. ընդ որ կոյս **կամի հայեցուցանել**՝ դարձուցել զնա [ԱՌ 21, 1]: Զայր շո՛յտ եւ զգոյշ ի գործ իւր՝ թագաւորաց առաջի **պարտ է կացուցանել**. եւ ո՛չ կացուցանել առաջի արանց խօթասրտաց [ԱՌ 22, 29]: Գիտասջի՛ր թէ այնպիսի ինչ եւ քեզ **պա՛րտ է պատրաստել** [ԱՌ 23, 2]:

Բ. Անցյալ դերբայ + սահմանական եղանակի ներկա ժամանակ, օրինակ՝ Մինչեւ յե՛րբ **յորսայսեալ կաս** ո՛վ վատ, կամ ե՛րբ ի քնոյ զարթիցես [ԱՌ 6, 9]: Քանզի ի վերայ լերանց գլխաւորաց է, եւ ի մէջ շաւղաց **հասեալ կայ** [ԱՌ 8, 2]: Ի մեծութենէ վատք՝ **կարօտեալ լինին**. իսկ որ ժիրքն են՝ հաստատին մեծութեամբ [ԱՌ 11, 16]:

Գ. Ստորադասական եղանակի առաջին ապառնի + անորոշ դերբայ, օրինակ՝ Մի՛ յապաղեր բարի առնել կարօտելոյ, յորժամ **ձեռնհա՛ս իցես օգնել** նմա [ԱՌ 3, 27]: Պատճառս ինդրէ՛ այր, որ **կամիցի քակել** ի բարեկամաց իւրոց. յամենայն ժամանակի նախատ լիցի [ԱՌ 18, 1]: Որդի, որ **թողուցու պահել** զխրատ հօր, խորիի զճառս չարեաց [ԱՌ 19, 27]:

Դ. Անցյալ դերբայ + ստորադասական եղանակի առաջին ապառնի, օրինակ՝ Զչարն չար ասէ՛ որոյ զնոյն **ստացեալ ունիցի**, եւ մատուցեալ յառաջ ապա նովիմբ պարծի [ԱՌ 20, 14]:

Ե. Ստորադասական եղանակի երկրորդ ապառնի + անորոշ դերբայ, օրինակ՝ Զի եթէ եկեսցէ իմաստութիւն ի միտս քո. եւ զհանճար անձին քում բարի՛ **համարեսցիս լինել** [ԱՌ 2, 10]:

Զ. Ստորադասական եղանակի երկրորդ ապառնի + անցյալ դերբայ, օրինակ՝ Լա՛ւ է ի սկզբան օգնէ՛լ սրտիւ. քան որ վաղվաղիցէ խոստանալ եւ **կախեալ կայցէ** զյուսոյ [ԱՌ 13, 12]:

Է. Հրամայական եղանակ + անցյալ դերբայ, օրինակ՝ **Լէ՛ր յուսացեալ** ի Տէր յամենայն սրտէ քումմէ. եւ յիմաստութիւն քո մի՛ հպարտանար [ԱՌ 3, 5]:

Ը. Անորոշ դերբայի գործիական հոլով + հորդորական հրամայական եղանակ, օրինակ՝ Յորժամ նստիցիս յընթրիս ուտել ի սեղան հօրաց. **իմանալով իմասջի ր** որ ինչ առաջի դիցի, եւ ապա՛ մխեսջի՛ր զձեռն քո [ԱՌ 23, 1]:

Թ. Անորոշ դերբայի գործիական հոլով + հորդորական հրամայական եղանակ, օրինակ՝ Փորձ տե՛ս զանփորձ արծաթոյ. եւ **սրբելով սրբի** ամենայն [ԱՌ 25, 4]:

Եզրակացություն

Ուսումնասիրելով բայական բաղադրյալ սորոգյալների եղանակաժամանակային ձևերի արտահայտությունները «Առակք Սողոմոնի» աստվածաշնչյան գրքում՝ հանգեցինք հետևյալ եզրակացությունների:

Գրաբարում բայական բաղադրյալ ստորոգյալները կազմվում են ն՛ սահմանական, ն՛ ստորադասական, ն՛ հրամայական եղանակներով:

Դիմավոր բայերով բաղադրյալ բայական ստորոգյալներ են կազմվում հիմնականում անդեմ բայերի հարադրությամբ, սակայն հանդիպում են նաև դիմավոր բայերի գուգորդությամբ արտահայտություններ: Դրական և ժխտական գույգերով են հանդես եկել *կամիմ, դառնալ, լինիմ, կամ, պարտիմ, ունիմ, իմանամ, սրբեմ* կաղապարները:

Միայն ժխտական արտահայտություն ունեին *ոչ կամին առնել, ոչ սիրե դառնալ, ոչ կարե հանդարտել, ոչ կամէին անսալ, մի՛ խնայեար խրատել, մի՛ լինիր արբեցող, մի՛ լինիցիս նմանող, մի՛ ցանկայցես կալ* կաղապարները: Միայն դրական արտահայտություն ունեին *կամի հայեցուցանել, յորսայսեալ կաս, հասեալ կա, կարօտեալ լինին, ձեռնհաս իցես օգնել, կամիցի քակել, թողուցու պահել, ստացեալ ունիցի, համարեսցիս լինել, կախեալ կայցե, լե՛ր յուսացեալ, իմանալով իմասցի՛ր, սրբելով սրբի՛* կաղապարները:

1918 թ. ճակատագրական ժամանակահատված էր հայ ժողովրդի պատմական կյանքում: Թուրքիան, իրագործելով արևմտահայերի ցեղասպանությունը և օգտվելով այն հանգամանքից, որ ռուսական զորքերը հեռացել են Կովկասյան ռազմաճակատից, 1918 թ. հունվարի վերջին, խախտելով Երզնկայի զինադադարը, արշավանք է սկսում դեպի Անդրկովկաս՝ նպատակ ունենալով բնաջնջել նաև արևելահայությանը, վերացնել հայկական «սեպը» և պայմաններ ստեղծել պանթուրքիզմի գաղափարախոսության իրականացման, Մեծ Թուրանի թուրքական պետության ստեղծման համար [4]:

Բրեստ-Լիտովսկում 1918 թ. մարտի 3-ին Խորհրդային Ռուսաստանի և գերմանա-թուրքական բլոկի միջև կնքվել էր պայմանագիր, ըստ որի՝ բոլշևիկյան կառավարությունը հրաժարվում էր Արևմտյան Ուկրաինայից, Արևմտյան Բելոռուսիայից և Մերձբալթիկայից՝ հոգուտ Գերմանիայի և Արևմտյան Հայաստանից՝ հոգուտ Թուրքիայի: Դեռ ավելին՝ թուրքերին էր տրվում նաև Կարսի մարզը, որը 1878 թվականից Ռուսաստանի կազմում էր: Այս պայմանագիրը չճանաչվեց Անդրկովկասյան սեյմի կողմից, և 1918 թ. մարտին Տրապիզոնում առանձին բանակցություններ սկսեցին թուրքերի հետ: Սեյմի պատվիրակության (նախագահ՝ Ա. Չխենկելի) 12 անդամներից 7-ը մահմեդականներ էին, ուստի շուտով դրսևորվեց վերջիններիս թուրքամետ դիրքորոշումը: Թաթար պատվիրակները, ընդհանուր գնալով իրենց թուրք եղբայրների թալանչիական պահանջներին, կարծում էին, որ պետք է ճանաչել Բրեստ-Լիտովսկով նախատեսված հողերի անցումը Թուրքիային:

Վրաց պատվիրակները, թեև դեմ էին Արևմտյան Հայաստանի և Տրապիզոնի անցմանը Թուրքիային, սակայն իրականում ոչ մի լուրջ քայլ չէին կատարում թուրքերի առաջխաղացումը կասեցնելու ուղղությամբ: Պատահական չէ, որ վրացի գեներալ Օդիշելիձեի դավաճանության պատճառով և Չխենկելու հրամանով 1918 թ. ապրիլի 11-12-ին, գրեթե առանց կոլի, թշնամուն հանձնվեց բավական լավ ամրացած Կարսի բերդը: Բանակցությունները Տրապիզոնում արդյունք չտվեցին, և Սեյմի պատվիրակությունը վերադարձավ Թիֆլիս:

Ստեղծված իրադրության մեջ պարզ էր դառնում, որ թուրքերը չեն բավարարվելու Բրեստ-Լիտովսկով նախատեսված հողերի բռնագրավմամբ և ներխուժելու են նաև բուն Արևելյան Հայաստան՝ այն գրավելու և այնտեղ ևս իրականացնելու համար հայ բնակչության ոչնչացումը: Այդ ժամանակ Երևանում հայրենիքի պաշտպանության գործն իր վրա վերցրեց Արամ Մանուկյանը, որը 1917 թ. դեկտեմբերի վերջից գլխավորում էր Երևանի ազգային խորհուրդը: Շուտով Արամը ստացավ դիկտատորի լայն լիազորություններ՝ իր ձեռքը կենտրոնացնելով

Արևելյան Հայաստանի ռազմական և վարչական իշխանությունը: Նա Երևան հրավիրեց մի շարք նշանավոր զինվորականների՝ Սիլվիանին, Դանիել Բեկ-Փիրումյանին, Դրոյին, Ղորղանյանին և այլոց: Արամը կարողացավ կարգ ու կանոն հաստատել Երևանի նահանգում, սանձել ավազակային խմբերը, կազմակերպել զինական ուժեր և ուղարկել ռազմաճակատ:

Իրադրությունն Անդրկովկասում շարունակում էր ավելի վտանգավոր դառնալ: Թուրքերի ճնշման տակ Անդրկովկասյան սելյուր 1918 թ. ապրիլի 9(22)-ին վրաց մենշևիկների և աղբյուրանցի մուսավաթականների ջանքերով ընդունեց որոշում Անդրկովկասը Ռուսաստանից անջատելու մասին: Սելյուի հայ պատվիրակությունը, որ դեմ էր այդ որոշմանը, մնաց փոքրամասնության մեջ: Երկրամասի անջատումը Ռուսաստանից ավելի անկաշկանդ դարձրեց թուրքերի նվաճողական ձեռնարկումները: Մայիսի 15-ին, անցնելով Ախուրյան գետը, թուրքական հորդաները ներխուժեցին Ալեքսանդրապոլ: Այստեղ ևս բավականաչափ ուժեր կային թշնամուն դիմադրելու համար: Սակայն սելյուի ղեկավարությունը կարգադրություն արեց քաղաքը թուրքերին հանձնելու մասին: Ալեքսանդրապոլի գավթումից հետո թուրքական «Կարս» զորամիավորումը 4 ուղղություններով սկսեց առաջանալ Արևելյան Հայաստանի խորքերը: Թուրքերի 3-րդ և 4-րդ բանակային զորախմբերը հրաման էին ստացել Արարատյան դաշտով մտնել Երևան [8, 272-276]: Առաջին խմբավորումը մայիսի 21-ին հարձակվեց Սարդարապատի ուղղությամբ՝ Երևան ներխուժելու նպատակով: Թուրքական զորախմբի կազմում էին 36-րդ հետևակային դիվիզիան, հարվածային և սակրավորների մեկական գումարտակներ, հեծյալ գունդ, հետևակային մարտկոց (50 հրանոթ): Ալեքսանդրապոլից Երևան շարժվող Շևքի փաշայի 9 հազարանոց բանակը, մտնելով Արարատյան դաշտ, մայիսի 21-ին առանց կռվի գրավեց Սարդարապատ կայարանն ու գյուղը և փորձեց առաջ շարժվել դեպի Երևան: Սակայն այդ վճռական պահին վերջ տրվեց ընդհանուր հուսահատությանը: Ժողովրդի ինքնապաշտպանական բնագործ հասավ իր գագաթնակետին. Ձորքը՝ մոտ 4000 մարդ՝ հերոսական, անձնուրաց կռվի ելավ իր հայրենի հողի վերջին մնացորդները թշնամուց պաշտպանելու համար: Սարգարա-Սարդարապատ գծի վրա հավաքվեց մոտակա շրջանների հայ բնակչությունը, մասնավորապես հայ գաղթականությունը (թվով 100 հազար), և զինված ջոկատներով անհավասար մարտի մեջ մտավ ոսոխի դեմ [11, 417-418]: Երբ Արամը գնում է Էջմիածին ու կաթողիկոսին առաջարկում է տեղափոխվել Սևան կամ Բյուրական, Գևորգ 5-րդը պատասխանում է. «Ո՛չ, տղերքս, Հայոց կաթողիկոսը նահանջող չէ»: Եվ կարգադրեց խփել բոլոր զանգերը: Ապա շուտ եկավ Արամին. «Ասացեք հայ բանակին, թե ես տեղիցս չեմ շարժվի: Ես չեմ թողնի ս. Էջմիածինը: Եթե մեր զինվորներն այն չեն կարողանա պաշտպանել, և թուրքերը մտնեն ս. Էջմիածին, իմ դիակը պիտի գտնեն ս. Իջման սրբատեղում» [12, 32]: Մայիսի 22-ի վաղ առավոտյան տագնապով դողանջեցին Սուրբ Էջմիածնի Մայր տաճարի կոչնակները, բոլոր գյուղերի եկեղեցիների զանգերը: Ժողովուրդը զինվեց: Ջոկատներ կազմած աշխարհագորայինները շտապում էին միանալ հայ ազգային զորամասերին [10; 14]:

Մայիսի 22-ին հայերը գրոհով ետ են վերցնում Սարդարապատը: Հաջորդ

օրը՝ մայիսի 23-ին, թուրքական զորքերը դիմում են հարձակման և սկսում առաջանալ Էջմիածնի խճուղով: Թուրքական զորքերը գրավում են Գեչըլու գյուղն ու հասնում Ղամիշլու կիսակայարանը: Երկաթգծից դեռևս հարավ մնացած հայ զորքի և գյուղացիության համար Երևանից կտրվելու սպառնալիք է ստեղծվում: Պայքարը վեր է ածվում հաղթական հարձակման, երբ երկաթգծից հյուսիս անցած զորքը ետ է դառնում և մասնակցում ժողովրդական հերոսամարտի բնույթ ստացած կռվին: Տեղի է ունենում ուժեղ ճակատամարտ: Թուրքերը փորձում են թևանցել հայկական զորամասերը, բայց դա նրանց չի հաջողվում: Հայերը հարվածում են ճակատից և թևանցում հակառակորդին, որը սկսում է անկանոն կերպով նահանջել, տալով խոշոր կորուստ: Արարատյան դաշտի գյուղացիները խանդավառությամբ համալրում են կռվի բռնված հայ զորախմբերի շարքերը: Կռիվն ընդունում է համաժողովրդական մարտի բնույթ: Հայկական զորամասերը և աշխարհագրականները թուրքերին հետապնդում են մինչև Սոգուլու գյուղը: Բաշ-Ապարանի կողմից թուրքերին օգնության եկող հակառակորդի երկու գնդերին սկզբում հաջողվում է ետ մղել հայկական սակավաթիվ առաջավոր հեծյալ ջոկատը, բայց երկու օրվա համառ մարտերից հետո թուրքերը ետ են շարտվում [6, 43-44]:

Մարտերը շարունակվեցին մինչև մայիսի 26-ը: Ծանր կորուստներ կրելով՝ թուրքական բանակը նահանջեց դեպի Ալեքսանդրապոլ: Մարդարապատի ճակատամարտն ավարտվեց թուրքական զերակշիռ ուժերի դեմ տարած լիակատար հաղթանակով: «Բազմաթիվ կամավորներ՝ ծեր և երիտասարդ, որոնց թվում էր և Էջմիածնի միաբան գիտնական Գարեգին եպիսկոպոս Հովսեփյանցը, իբրև նոր ժամանակների Ղևոնդ Երեց, ռազմաճակատ էին շտապում»: Ընկալալից հետո հետադարձված թուրքական բանակի գնդապետ, հետագայում Հայաստանի Առաջին Հանրապետության զենեղալ-լեյտենանտ Դանիել Բեկ-Փիրումյանը, ռուսական բանակի գնդապետ, հետագայում Հայաստանի Առաջին Հանրապետության զենեղալ-մայոր Պողոս Բեկ-Փիրումյանը, փոխգնդապետ Կարապետ Հասանփաշայանը, կապիտան, հետագայում Խորհրդային Միության մարշալ Հովհաննես Բաղրամյանը, եպիսկոպոս, հետագայում Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոս Գարեգին Ա Հովսեփյանցը, ապագա գրող Ակսել Բակունցը, բազմաթիվ ֆիդայիներ: «Ճակատը զինվոր չէր միայն՝ ամբողջ երկիրը մի մարդ, մի շունչ դարձած՝ կռվում էր թշնամու դեմ՝ «ազատություն կամ մահ» վճռական կամքով» [10, 14]:

Այսպիսով, հայ ժողովրդի խիզախ դիմադրության շնորհիվ թուրքական զավթիչներին չհաջողվեց գրավել Երևանը՝ երկրի կենտրոնը: Մարդարապատի ճակատամարտը հայ ժողովրդի մահու և կենաց կռիվն էր թուրքական զավթիչների դեմ: Այդ գոյամարտը, որն ընդունեց ժողովրդազատագրական բնույթ, բախտորոշ նշանակություն ունեցավ հայ ժողովրդի համար, և պատահական չէր, որ այդ ճակատամարտին մասնակցում էին հայ հասարակության բոլոր խավերը: Մարդարապատի հերոսամարտին ակտիվ մասնակցություն ունեցան կանայք և աղջիկները, երեխաներն ու ծերերը: Դա իսկական ժողովրդական պատերազմ էր:

Հայ ժողովրդի այդ դյուցազնամարտը արժեքավորվում է նաև նրանով, որ այն

օբյեկտիվորեն նպաստեց Բաքվի կոմունայի վրա սուր բարձրացրած գերմանա-թուրքական իմպերիալիզմի դեմ մղվող պայքարին, մի պայքար, որին մասնակցում էին հայ ժողովրդի հազարավոր զավակներ [11, 417-418]:

Այս հաղթանակը ոգևորեց հայկական ուժերին: Տարբեր տեղերից սկսեցին ժամանել նորանոր ջոկատներ: Մարտիկների առջև ելույթ ունեցավ Միլիկյանը՝ հիշեցնելով Ավարայրի հերոսներին և այն մասին, որ նահանջել չի կարելի, քանզի թիկունքում Սուրբ Էջմիածինն է: Համանման ճառ արտասանեց նաև Նազարբեկյանը՝ «Մեր ապագան մեր ձեռքին է. կամ կհասնենք նրան պայքարով, կամ երբեք մենք և մեր սերունդները չեն տեսնի այն» [8, 272-276]:

Մարդարապատի ճակատամարտին զուգահեռ ակեղ մարտեր մղվեցին նաև Բաշ-Ապարանում և Ղարաքիլիսայում: Մայիսի 22-ին թուրքական մի դիվիզիա, գրավելով Համամլուն, շարժվեց դեպի Բաշ-Ապարան՝ նպատակ ունենալով Երևանի վրա գրոհել հյուսիսից, ստնել Արարատյան դաշտ և Մարդարապատի մոտ հայկական զորամասերին հարվածել թիկունքից: «Բռունցքը սեղմվելու սահման ունի, որից հետո այն դառնում է քարի պես ամուր: Մարդարապատում թուրքերը դեմ առան հայ ժողովրդի քարի պես սեղմված բռունցքին» [3, 147]: Մայիսի 23-ից Միլիկյանն իր մարտակազմի մի ջոկատ է ուղարկել Բաշ-Ապարանի ճակատ՝ Դրոյի գլխավորությամբ: Մարդարապատի հաղթության հաջորդ օրը՝ մայիսի 29-ին, զորավար Միլիկյանը դիմեց հայ ժողովրդին հետևյալ կոչով. «Հայե՛ր, մեր քաջարի զորքերի հերոսական գործունեությունը շարունակվում է, և թուրք զորքերը նահանջում են» [10, 14]: Մայիսի 24-ին Դրոյի զորաջոկատը (շուրջ 5 հազար մարդ) մտել է Ալի Քուչակ՝ Էսադ փաշայի հրամանատարությամբ դեպի Բաշ-Ապարան գնացող թուրքերին դիմակայելու նպատակով: Մայիսի 26-ին թուրք զորամասերն անցել են հարձակման: Կատաղի մարտերը շարունակվել են մինչև մայիսի 29-ը: Այդ օրը Բաշ-Ապարանի ճակատում ջախջախվել է հակառակորդի 2 գունդ, և ոչնչացվել է ծանր հրետանին: Թշնամին, մարտադաշտում թողնելով 200-ից ավելի սպանված և մեծաքանակ ռազմավար, նահանջել է: Դրոյի զորքի կազմում թուրքերի դեմ կռվում էր եզդիների 1500-հոգանոց հեծյալ ջոկատը՝ Ջհանգիր աղայի գլխավորությամբ: Ճակատամարտում զոհվել է հայտնի հարյուրապետ Ջեմյակը (Հարություն Նասամյան):

Մինչև մայիսի 27-ը տևած արյունալի մարտերից հետո հայկական ուժերը թշնամուն ետ շարտեցին մինչև Արաքս կայարանը: Ապարանի ուղղությամբ հայկական ուժերին շրջանցելու և թևերից հարվածելու թուրքերի 9-րդ դիվիզիայի ջանքերն անցան ապարդյուն: Դա տեղի ունեցավ շնորհիվ Բաշ Ապարանի ուղղությամբ հայկական զորքերի հաջող գործողությունների: Բաշ Ապարանի շրջանում աչքի ընկավ Դրաստամատ Կանայանը: Մայիսի 27-29-ի ընթացքում Բաշ Ապարանի տակ թշնամին գլխովին ջախջախվեց և ետ շարտվեց [8]:

Ականատեսները վկայում են. «Մայիսի 23-ին թշնամին մեծ ուժերով յարձակման անցավ նաև Բաշ Ապարանի ճակատին վրայ: Դրոն յաջողեցավ կասեցնել այդ յարձակումը, մեծ վնասներ պատճառելով թշնամիին, որ սակայն օրերով կրկնեց իր յարձակումները եւ միշտ ալ հանդիպեցավ հայկական ուժերու անտեղիտալի դիմադրութեան: Այստեղի կռիվները տևեցին հինգ օր և... չկարողանալով

տոկլալ հայկական գորամասերու ուժեղ հակագրոհին, թուրքերը փախուստի դիմեցին...»:

Բաշ Ապարանի ճակատամարտը նույնպես ապացույց էր ազգի համախմբման բարձրագույն հրամայականի [12, 47-48]:

Մարդարապատի և Բաշ Ապարանի շրջանում կրած պարտությունների վրեժը թուրքերը փորձեցին հանել Մեծ Ղարաքիլիսայում [8]:

Մայիսի 21-ին թուրքերը, գրավելով Վորոնցովկան, մալականներից խլեցին երկու հրանոթ և շարժվեցին Համամլուի վրա:

Մայիսի 22-ին ընկավ Համամլուն, որի երկաթուղային կայարանը թուրքերի առաջ բացում էր Երևանի ճանապարհը:

«Մշակը» հունիսի 5-ին գրում է. «Ղարաքիլիսայի ու նրա շրջակա գյուղացիներն իմանալով, որ օսմանցիները... կամենում են գրոհ տալ դեպի Ղարաքիլիսա, բոլորը մի մարդու նման ոտքի են կանգնում և որոշում են մեռնել, բայց անձնատուր չլինել: Փոքրաթիվ հայ զինվորները միացած տեղացիների հետ, ամեն ինչ անում էին թշնամու առաջխաղացումը կասեցնելու համար: Ջորամասերի մեջ են մտնում նույնիսկ ծեր, հասակավոր մարդիկ ու պատանիներ: Արջուտ կիսակայարանի մոտ սկսվում է ընդհարումը: Մեր գորամասերն ու գյուղացիները կռվի մեջ են նետվում անվախ, համարձակ» [12, 48]:

Ղարաքիլիսայի ուղղությամբ թուրքական ուժերը ձգտում էին ճեղքել դիմադրությունը և դուրս գալ Թիֆլիս: Մայիսի 24-28-ին Մեծ Ղարաքիլիսայի մարտերում աչքի ընկան գնդապետներ Բեյ-Մամիկոնյանը, Ն. Ղորղանյանը, Գ. Նժդեհը: Միայն մայիսի 30-ին մեծ կորուստների գնով թշնամին կարողացավ ներխուժել Ղարաքիլիսա: Այդուհանդերձ, ընդհանրապես մայիսյան հերոսամարտերն ավարտվեցին թշնամու ջախջախմամբ: Տալով 3500 սպանված՝ թուրքերը նահանջեցին դեպի Ալեքսանդրապոլ: Մայիսյան հերոսամարտերում, որոնք հայոց պատմության ամենապայծառ էջերից են և հայ ժողովրդի գոյատևման հզորագույն գրավականը, աչքի ընկան նաև հեծյալ ջոկատի հրամանատար Հովհաննես Բաղրամյանը, կապիտան Դոլուխանյանը, գրող Ակսել Բակունցը, լեզվաբան Գրիգոր Ղափանցյանը, ռուս զինվորականներ Պերեկրեստովը, Սիլինը, հույն Սակելարին, բազմաթիվ հոգևորականներ՝ Գարեգին Եպիսկոպոս Հովսեփյանի գլխավորությամբ և ուրիշներ [8, 272-276]:

Պատմաբան Լեոն (Առաքել Բաբախանյան) իր «Անցյալից» աշխատության մեջ մի քանի տող հատկացրել է Ղարաքիլիսայի ճակատամարտին.

«... Կրետիկական թուրքերի ժողովրդական երկու գրոհի հասկացնում էին չափ ու սահման կորցրած օսմանցիներին, թե նրանք այնքան էլ ամենակարող չեն այս փոքրիկ ազգությունների մեջ: Մի գրոհն սկսվում է Երևանից և նրա շրջակա գյուղերից տարերային հոսանքով դեպի Սարդարապատ, ուր թուրք գործերը ջարդվում են ու ետ քաշվում: Մյուս գրոհը Դիլիջանից է սկսվում... Կազմվելով իբրև զորք՝ օֆիցերների ղեկավարության տակ, այդ բազմությունը մի ճակատամարտ է տալիս օսմանյան բանակին, որ տևում է երեք օր: Հաղթել, տարաբախտաբար, նա չի կարողանում, բայց ցույց է տալիս հերոսական դիմադրություն...» [2, 66]:

«Այսպիսով՝ Ղարաքիլիսայում տեղի ունեցավ չորսօրյա արյունալի ճակա-

տամարտ՝ որտեղ հայերը կռվեցին խիզախորեն և քաղաքը թուրքերին զիջեցին թշնամու թվական ու զինական գերակշռության ճնշման տակ» [5]:

1918 թ. մայիսի 22-29-ի ընթացքում տեղի ունեցած Սարդարաբադատի, Բաշ Ապարանի, Ղարաքիլիսայի հերոսամարտերը և, ավելի վաղ սկսած, Ներքին Թափնի, Ջավախքի, Շիրակի դիմադրական մարտերը բնութագրվում են որպես գոյամարտեր [1]:

1918 թ. ապրիլի 15 (28)-ին օսմանյան կառավարությունը պաշտոնապես ճանաչեց Անդրկովկասի անկախությունը և համաձայնվեց Բաթումում չարունակել Տրապիզոնում ընդհատված հաշտության բանակցությունները: Մինչև Բաթումի բանակցությունների սկսվելը թուրքերն արդեն գրավել էին Բրեստ-Լիտովսկի հաշտությամբ իրենց հանձնվելիք տարածքները: Մայիսի 11-ին Բաթումի քաղաքային ակումբի շենքում Հալիլ բեյի նախագահությամբ Բացվեց խորհրդածողովը: Այս անգամ էլ, արբեցած ռազմական հաջողություններով, թուրքերն ամենևին մտադրություն չունեին բավարարվել Բրեստի դաշնագրի պայմաններով: Թուրքական պատվիրակության ղեկավարը մերժեց անդրկովկասյան կողմի առաջարկը Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը բանակցությունների հիմքում դնելու վերաբերյալ՝ պատճառաբանելով հանգամանքների փոփոխությամբ: Առաջին իսկ նիստում Հալիլ բեյը հայտարարեց, որ Տրապիզոնի ձախողված բանակցություններից ի վեր «դժբախտաբար արյուն է հոսել», և հետևապես ինքը չի կարող հնարավոր համարել, որ Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը դրվի ներկա բանակցությունների հիմքում [7, 18-19]:

Թուրքերը պահանջում էին նախաստորագրել պայմանագիրը և սկզբունքորեն ընդունել իրենց ներկայացրած տարածքային պահանջները՝ խոստանալով ընթացքում որոշ սրբազրման ենթարկել սահմանագիծը: Այդտեղ խոսքը միայն Հայ-թուրքական սահմանագծի մասին էր: Սահմանների ճշգրտման (սրբազրման) հետ կապված թուրքերն առաջ քաշեցին երկու տարբերակ: Մի դեպքում Թուրքիան Հայաստանին էր «զիջում» Արագածի լանջերից ու Ապարանի շրջանից 900 քառ. կմ, իսկ Երևանի նահանգից՝ 400 քառ. կմ հողատարածք: Երկրորդ տարբերակով առաջարկվում էր տարածքների փոխանակում: Հայաստանին տալ 2,5 հազար քառ. կմ տարածք՝ դրա դիմաց վերցնելով Բորչալուի գավառի կեսը: Վերջին տարբերակն ամենևին ընդունելի չէր, որովհետև Հայաստանը փաստորեն կտրվելու էր Վրաստանից: Ընդունվեց առաջին տարբերակը:

Բուն պայմանագիրը բաղկացած էր 14 հոդվածներից, որոնցից գլխավորը, թերևս, 2-րդ հոդվածն էր, որը վերաբերում էր Թուրքիայի հետ Վրաստանի ու Հայաստանի սահմանագծին: Բաթումի պայմանագրի հայ-թուրքական սահմանին վերաբերող մասով սահմանագիծը մոտավորապես սկսվում է Ախալքալաքի գավառի արևելյան անկյունից, իջնում է հարավ՝ կտրելով Ալեքսանդրապոլ-Թիֆլիս երկաթուղին՝ Աղբուլաղ կայարանից 5 կմ դեպի արևմուտք, այնուհետև՝ լեռնագագաթներով մինչև Խանվալի ավանը: Այդտեղից ուղիղ գծով իջնում է մինչև Արագածի ամենաբարձր գագաթը, որտեղից դարձյալ, ուղիղ գծով կտրելով Էջմիածին-Սարդարապատ խճուղին, իջնում է Էջմիածնից 7 կմ հարավ-արևմուտք և շրջանցում քաղաքը երկաթուղուն գրեթե զուգահեռ՝ 6 կմ բացվածքով, իսկ

Բարշեղյան ավանից 16 կմ իջնում դեպի Շարուր՝ Արփա գետի հովիտ [7, 22-24]:

«Սարդարարդատի հրաշքի» արդյունքում թուրքերը Բաթումի բանակցություններում հարկադրված «մեղմացրին» իրենց պահանջները և ստիպված համակերպվեցին Հայաստան պետություն ստեղծվելու փաստին: Բաթումում քննարկվում էր անկախ Վրաստան և Ադրբեջան ստեղծելու գաղափարը: Հայերի դիմադրությունը կանխեց թուրքերի 1918 թ. փետրվարից սկսած սրընթաց գրոհը դեպի Անդրկովկաս, ձախողեց Թիֆլիսի գրավումը և որոշ ժամանակով հետաձգեց Բաքվի անկումը: «Թեև հայերը ստորագրում են վերջնագիրը (Բաթումի պայմանագիրը),– գրում է Վեհիբ փաշան,– բայց այդ քայլը անում են մինչ վերջին շունչը կռվելուց հետո [1]:

Բաթումի պայմանագիրը միանշանակ չընդունվեց հայ գործիչների ու հասարակական-քաղաքական ուժերի կողմից: Ժողովրդական հերոս Անդրանիկը չճանաչեց Բաթումի պայմանագիրը: Նա հարկադրված էր իր արևմտահայ կամավորական ջոկատով հեռանալ Հայաստանի Հանրապետության սահմաններից դեպի Նախիջևան ու Սյունիք: ՄԴՀԿ Թիֆլիսի կենտրոնական վարչությունը պահանջեց չեղյալ համարել Բաթումի պայմանագիրը: Պայմանագրին դեմ արտահայտվեցին լայն հասարակական շրջաններ:

Խնդիրը միազգային իրավունքի տեսանկյունից քննարկելու դեպքում պետք է նշել, որ պայմանագիրն իրավական ուժ չի ունեցել, քանի որ չի վավերացվել ո՛չ Հայաստանի և ո՛չ էլ Թուրքիայի կառավարությունների կողմից: Բաթումի պայմանագիրը չճանաչվեց Խորհրդային Ռուսաստանի, Անտանտի, Քառյակ միության երկրների և այլ պետությունների կողմից: Բաթումի անարդարացի պայմանագիրը վերանայելու ակնկալիքով էր, որ հունիս ամսին Բեռլին (Հ. Օհանջանյան, Ա. Զուրաբյան) և Կ. Պոլիս (Ա. Ահարոնյան, Ա. Խատիսյան, Մ. Պապաջանյան) մեկնեցին Հայաստանի Հանրապետության պատվիրակությունները: Թեև նրանք զգալի ջանքեր թափեցին, սակայն ապարդյուն: Բաթումի պայմանագիրն իր ուժը պահպանեց մինչև Առաջին աշխարհամարտի ավարտը՝ 1918 թ. նոյեմբերը [7, 26]:

Այսպիսով Սարդարապատի, Բաշ Ապարանի և Ղարաքիլիսայի մայիսյան հերոսամարտերում հայ ժողովուրդը գերմարդկային ճիգերով կարողացավ թշնամուն արժանի հակահարված տալ և ձախողել Արևելյան Հայաստանը զավթելու ու տեղի հայությանը ոչնչացնելու երիտթուրքական ծրագրերը: Ավելին, հայ ժողովուրդը ոչ միայն պաշտպանեց իր ֆիզիկական գոյությունը, այլև ստիպեց հակառակորդին հաշվի նստել իր հետ և ճանաչել իր անկախ ապրելու իրավունքը: Մայիսյան հերոսական շաբաթը նշանավոր դարձավ ոչ միայն հաղթական ճակատամարտերով, այլև Հայաստանի անկախության հռչակումով [9]:

Եզրակացություն

Ուսումնասիրելով թեման՝ հանգել ենք այն եզրահանգման, որ Մայիսյան հերոսամարտերը հայ ժողովրդի պատմության առանցքային շրջադարձային պահերից էին, որոնք ցույց տվեցին հայության ազգային միասնականության, տոկունության և ինքնակազմակերպման ուժը:

Մայիսյան հերոսամարտերը ոչ միայն համարվում են ռազմական հաղթա-

նակներ, այլև հանդիսանում են ազգային ինքնության և միասնականության ձևավորման առանցքային փուլ: Դրանք ձևավորվեցին օրհասական պայմաններում, երբ հայ ժողովուրդը գտնվում էր ոչ միայն ֆիզիկական գոյության սպառնալիքի, այլև քաղաքական և մշակութային ոչնչացման եզրին: Այս ամենը ցույց տվեց, որ հայ ժողովուրդը, նույնիսկ դժվարագույն պայմաններում, կարող է համախմբվել, հաղթահարել արտաքին և ներքին մարտահրավերները՝ պահպանելով իր պետականությունը և մշակութային արժեքները: Այս հերոսամարտերը ոչ միայն ապահովեցին Հայաստանի անկախության համար անհրաժեշտ հիմքերը, այլև ամրապնդեցին ազգային ինքնությունը՝ դառնալով հայ ժողովրդի պատմական հիշողության և արժեհամակարգի անբաժան մասը: Դրանց դասերը կարևոր են ինչպես անցյալի, այնպես էլ ներկայի ու ապագայի համար, քանի որ նույն արժեքներն ու գաղափարները կարող են ծառայել որպես ուղեցույց մեր ժամանակների մարտահրավերները հաղթահարելու համար:

Այսօր, երբ հայ հասարակությունը կանգնած է նոր մարտահրավերների առաջ, Մայիսյան հերոսամարտերի դասերը շարունակում է մնալ արդիական: Այս հերոսական դրվագները ցույց տվեցին, որ հայ ժողովուրդը, նույնիսկ ամենադժվար պայմաններում, ունակ է համախմբվելու և պայքարելու իր պետականության և ինքնության համար: Այսպիսով, հերոսամարտերի դասերը ոչ միայն անցյալի ժառանգություն են, այլև ներկայի և ապագայի համար կարևոր ուղեցույց՝ թե՛ ազգային միասնության պահպանման, թե՛ ռազմավարական և մշակութային առաջընթացի տեսանկյունից:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Արիստակեսյան Կ. Ա., Պողոսյան Ս. Հ. և Մելիքյան Ս.Բ., 1918 թ. մայիսյան հերոսամարտերը մասնակիցների հուշերում, Երևան 2014, 224 էջ:
2. Աֆանսյան Ս., Սարդարապատի հաղթանակը, Երևան, 1991, 111 էջ:
3. Թուրշյան Հ., Սարդարապատի հերոսամարտը, Երևան, 1969, 291 էջ:
4. Խուրշուդյան Լ., 1918 թ. մայիսյան հերոսամարտերը և Հայաստանի Հանրապետության պատմական նշանակությունն ու դասերը», Պատմա-բանասիրական հանդես, 1999, թիվ 2-3, էջ 27-38:
5. Կարապետյան Ս. Ս., Հայաստանը 1912-1920 թթ., Երևան, 2003, 399 էջ:
6. Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիա, պատմության ինստիտուտ Հայ ժողովրդի պատմություն, Բաժին Ա, Երևան, 1967, 654 էջ:
7. Հայոց պատմություն, հատոր IV, գիրք առաջին, Երևան. 2010, 773 էջ:
8. Մելքոնյան Ա, Դանիելյան Է., Հայոց պատմություն, Երևան, 2008, 352 էջ:
9. Սարգսյան Ա, Հակոբյան Ա., Հայոց պատմություն, Երևան, Ճարտարագետ, 2004, 351 էջ:
10. Վրացյան Ս., Հայաստանի հանրապետություն, Երևան, 1993, 371 էջ:
11. Պարսամյան Վ., Հայ ժողովրդի պատմություն, «Լույս» հրատ., Երևան, 1979, 752 էջ:
12. Պողոսյան Ս., Պողոսյան Կ., Հայկական հարցի և հայոց ցեղասպանության պատմություն, հատոր երրորդ, գիրք Ա, մաս Բ, «Հայաստան» հրատարակչություն, Երևան, 2004, 416 էջ:

ВЛИЯНИЕ МАЙСКИХ ГЕРОИЧЕСКИХ СРАЖЕНИЙ С ТОЧКИ ЗРЕНИЯ НАЦИОНАЛЬНОЙ ИДЕНТИЧНОСТИ

Алекян Варсеник

Ширакский государственный университет,

“Начальная военная подготовка”, 2-й курс

Научный руководитель:

кандидат исторических наук, доцент А. Гаспарян

Резюме

Ключевые слова: *Брест-Литовск, Трапезунд, Арам Манукян, Сардарapat, Драстамат Канаян, Закавказский сейм, Караклис, Баш-Апаран*

В статье рассматривается влияние Майских героических сражений – Сардарapatской, Баш-Апаранской и Караклисской битв – на формирование армянской национальной идентичности. Эти сражения предотвратили массовое уничтожение армянского народа, объединили нацию, переосмыслили национальные ценности, способствовали возрождению независимой государственности и стали постоянным источником национального духа, борьбы и исторической памяти, которая актуальна и в наши дни.

THE IMPACT OF THE MAY HEROIC BATTLES FROM THE PERSPECTIVE OF NATIONAL IDENTITY

Alekyan Varsenik

Shirak State University,

“Primary Military Training”, 2nd Year

Academic Supervisor: A. Gasparyan,

Candidate of Historical Sciences, Associate Professor

Summary

Key words: *Brest-Litovsk, Trabzon, Aram Manukyan, Sardarapat, Drastamat Kanayan, Transcaucasian Sejm, Gharakilisa, Bash Aparan*

The article explores the impact of the May Heroic Battles – Sardarapat, Bash-Aparan, and Gharakilisa – on the formation of Armenian national identity. These battles prevented the massacre of the Armenian people, united the nation, redefined national values, contributed to the revival of independent statehood, and became a permanent source of national spirit, struggle, and historical memory, which remains relevant today.

Մայանյան Արմինե

Գավառի պետական համալսարան,

«Պատմություն», 3-րդ կուրս

Գիտական ղեկավար՝ պ. գ. թ. Ք. Հայրապետյան

Հանգուցային բառեր. *Սևանի ավազան, Արտաշես Ա, սահմանափակում, արձանագրություն*

Մ. թ. ա. II դարում Հայաստանը կազմում էր Առաջավոր Ասիայի հելլենիստական աշխարհի մի մասը: Այդ հասարակությունն իր բնույթով ստրկատիրական էր՝ հիմնված գյուղական համայնքի և հելլենիստական քաղաքային ու տաճարային համայնքների վրա: Ի տարբերություն կառավարման նախկին ձևերի, որ ժառանգվել էին արքանեյան տիրապետության և դրան հաջորդած ժամանակաշրջանից, Հայաստանն Արտաշես Ա-ի օրոք կարիք ուներ կենտրոնացված պետական կառավարման, որից և բխեցին երկրի ներքին զարգացումով պայմանավորված բարեփոխումները: Դրանք առաջին հերթին արտահայտվեցին ագրարային հարաբերությունների ոլորտում, որի մասին են վկայում մեզ հասած արամեատառ սահմանաքարերը, որոնք հայկական պատմական ավանդությունում անվանվում են «Արտաշիսական» [4, 129]: Դրանց ընթերցումով վավերացվում է Մովսես Խորենացու հաղորդումն Արտաշես Ա-ի միջոցառման մասին: Խորենացին գրում է. «Բոլոր առաքինական գործերից և բարեկարգություններից հետո Արտաշեսը հրամայում է գյուղերի և ագարակների սահմաններ որոշել, որովհետև նա մեր աշխարհը բազմամարդացրեց շատ ազգեր (ուրիշ երկիրներից) բերելով, որոնց բնակեցրեց լեռներում, հովիտներում ու դաշտերում: Սահմանների համար նա նշաններ սահմանեց այսպես. հրամայեց տաշել քառակուսի ձևով քարեր, մեջերը պնակի նման փոսցնել և թաղել հողի մեջ, իսկ նրանց վրա կանգնեցնել քառակուսի կոթողներ՝ գետնից քիչ բարձր: Սրա վրա նախանձելով՝ Պարսից Արտաշիթը (թագավորը), Մասանորդին, հրամայում է Պարսկաստանումն էլ նրանց տեսակ անել և իր անունով կոչել, որպեսզի Արտաշեսի անունը չհիշվի» [8; 170]:

Խորենացու երկում պահպանված այս տեղեկություններն առանձին նշանակություն են ձեռք բերել Սևանա լճի մերձակայքում հայտնաբերված արամեատառ արձանագրությունների կապակցությամբ [3, 235]:

Հայաստանում գտնվել են շուրջ 17 նման արձանագիր կոթողներ: Կոթողներից 12-ը գտնվել են Սևանի ավազանում: Սևանի ավազանում արտաշեսյան սահմանաքարերի այդքան մեծ առկայությունը բացատրվում է այն հանգամանքով, որ որպես պատմական Հայաստանի Սյունիք նահանգի անբաժանելի հատված, այստեղ հողային անհավասար բաշխումը լայն տարածում է ունեցել: Այստեղ տեղադրված սահմանաքարերն առաջին հերթին վկայում են որոշակի անձի սեփականության իրավունքի մասին տվյալ հողային ունեցվածքի նկատմամբ և սահմանաքարերը հիմնականում տեղադրվում էին միայն այն տարածքների սահմաններում:

րում, որոնք վիճարկվում էին կամ կարող էին վիճարկվել ապագայում, ծառայելով իրավական միջոց մասնավոր հողային ունեցվածքի սահմանների վերաբերյալ վեճերի կարգավորմանը: Եվ արդյունքում այս սահմանագատումը վերջ դրեց խոշոր հողատերերի ձեռքում հողի և աշխատուժի կենտրոնացման գործընթացին և նպաստեց կոլեկտիվ համայնքային սեփականության պահպանմանը գյուղական համայնքում մասնավոր, ընտանեկան հողօգտագործման առկայությամբ:

Սևանի ավազանի Արտաշեսյան սահմանաքարերին բնորոշ են հետևյալ առանձնահատկությունները.

1. Քարից են: Ունեն թագաձև ավարտ, արձանագրված իրան և պոչուկ: Պոչուկը խրվել է համապատասխան պատվանդանի մեջ: Համեմատաբար խոշոր են, հեշտ նկատելի:
2. Ունեն արամեատառ, հակիրճ, համառոտ արձանագրություն: Հիմնվել են Արտաշես Ա-ի (մ. թ. ա. 189-164 թթ.) հրամանով, նշել են գյուղերի (գյուղի) միջև եղած սահմանները:
3. Տվյալ գյուղի տարածքում նրանք կազմել են գույգեր:
4. Սահմանաքարերից չորսը (Վաղաշենիինը, Լիճքինը, Կարճաղբյուրինը և Վարդենիկի երկրորդը) ժամանակի ընթացքում վերափոխվել են խաչքարերի [7, 72-74]:

Սևանի ավազանում արտաշեսյան սահմանաքարեր հայտնաբերվել են Գավառի շրջանից՝ Կարմիրգյուղում, Մարուխանում, Լանջաղբյուրում, Մարտունու շրջանից՝ Մարտունի քաղաքում, Վաղաշենում, Լիճքում, Ծակքարում, Չորագյուղում, Վարդենիկում, Վերին Գետաշենում, Վարդենիսի շրջանից՝ Կարճաղբյուրում:

Ներկայացնենք հայտնաբերված սահմանաքարերից մի քանիսի բնութագիրը.

Կարմիրգյուղի սահմանաքարը (նկար 1): Գավառի շրջանի Կարմիրգյուղ (Ղուլալի) գյուղի սահմանաքարը հայտնաբերել է Ե. Լավայանը 1906 թ., գյուղի դամբարանադաշտում պեղումներ կատարելիս: Քարը սայլով գյուղից տեղափոխվում է Նոր Բայազետ, որտեղից հետո Հայոց Ազգագրական ընկերության հնագիտական-ազգագրական թանգարան, իսկ այնուհետև տեղափոխվում է Պետական թանգարան և արձանագրության լուսանկարն ուղարկվում Եվրոպայի հնագետներին [5, 97]:

Սահմանաքարի բարձրությունը 42 սմ է, լայնությունը՝ 30 սմ: Սահմանաքարը տեղական ամուր բազալտից է և բոլոր կողմերը մաքուր տաշված [1, 209-210]:

Սահմանաքարի վրա փորագրված է հետևյալ արձանագրությունը. «Արտաշես արքա, որդի Ջարեհի Երվանդունի» [9, 257]:

Մարուխանի սահմանաքարը (նկար 2): Գավառի շրջանի Մարուխան գյուղի սահմանաքարը հայտնաբերվել է 2001 թ. գյուղի բնակիչների կողմից, գյուղի հյուսիսային մատույցների մոտ՝ «Պալի տակ» կոչվող վայրում: Սահմանաքարը պատրաստված է բազալտից, բարձրությունը՝ 140 սմ է: Վերևում ունի երեք «սեպերից» կազմված թագ հիշեցնող ատամնաշար, արձանագրության համար նախատես-

ված՝ ուղղանկյունաձև, լավ տաշված իրան և հոծ՝ կտրվածքում կլոր պոչուկ, երկարությունը՝ 76 սմ [2, 79]:

Սահմանաքարի վրա եղած արձանագրությունը բաղկացած է հինգ հիմնական տողերից, որոնցում հեշտ տեսանելի են հետևյալ երկու տարրերը՝ արքայի անունն ու ծագումը և հողի բաժանման սեղմ բանաձևը. «Արտաշես արքան, որդին Ջարեհի բաժանեց հողը գյուղ (եր) ի միջև» [2, 82]:

Լանջաղբյուրի սահմանաքարը (նկար 3): Գավառի շրջանի Լանջաղբյուր գյուղի սահմանաքարը գտնվել է 2013 թ. «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի հնագիտական արշավախմբի կողմից՝ գյուղում դիտանցման աշխատանքներ կատարելիս: Սահմանաքարը գտնվել է գյուղի «Գևոյի հանդ» կոչվող վայրում: Սահմանաքարը բազալտից է վրան արամեերեն արձանագրություն: Ըստ լեռ հնագետ Ք. Յակուբյակի վերծանման, սահմանաքարի վրա փորագրված է հետևյալ արձանագրությունը. «Արտաշես արքան, որդին Ջարիաղբի (Ջարեհի) Երվանդական բաժանեց տարածքը գյուղերի միջև» [11, 66]:

Վարդենիկի սահմանաքարերը (նկար 4): Մարտունու շրջանի Վարդենիկ գյուղի սահմանաքարերը հայտնաբերվել են 2001 թ. Նորայր Հազեյանի կողմից: Սահմանաքարերից մեկը հայտնաբերվել է Վարդենիկ գյուղի եկեղեցու պատի մեջ, կերտված է տուֆից: Ատամները և պոչուկը կտրված են: Սահմանաքարի բարձրությունը 42 սմ է, լայնությունը՝ 28,5 սմ, հաստությունը՝ 17 սմ:

Սահմանաքարին փորագրված արամեատառ տեքստը բաղկացած է հինգ անխաթար տողերից: Ահա արձանագրությունը. «Արտաշես արքան, որդին Ջարեհի բաժանեց հողը միջև գյուղերի» [6, 76-77]:

Վարդենիկ գյուղի մյուս սահմանաքարը նույնպես տուֆակերտ է, հայտնաբերվել է նույն եկեղեցու մոտ գտնվող գերեզմանոցի տապանաքարերի մեջ: Թեթև վնասված է ատամնաշարի աջակողմյան «ատամի» դիմացի մասը, պոչուկը կտրված է: Թերևս վաղ միջնադարում սահմանաքարի հակառակ, չարձանագրված կողմում փորագրվել է հավասարաթև մի խաչ: Սահմանաքարի բարձրությունը 61,5 սմ է, լայնությունը՝ 31 սմ, հաստությունը՝ 19 սմ: Տեքստը բաղկացած է վեց տողերից: Ահա արձանագրությունը. «Արտաշես արքան, որդին Ջարեհի Երվանդական բաժանեց հողը միջև գյուղ (եր) ի» [6, 77]:

Վերին Գետաշենի սահմանաքարը (նկար 5): Մարտունու շրջանի Վերին Գետաշեն (նախկինում՝ Վերին Ղարակուխ) գյուղի սահմանաքարը հայտնաբերվել է 1932 թ., հնագետ Ս. Բարխուդարյանի կողմից: Սահմանաքարը գտնվել է գյուղի բնակիչ Արշամ Շահումյանի տան մոտ և հնագետ կողմից տեղափոխվել է Պատմության թանգարան [1, 207]: Սահմանաքարը պատրաստված է բազալտից, բարձրությունը՝ 42 սմ է, լայնությունը՝ 23 սմ, հաստությունը՝ 21 սմ: Վերին ակունքից միայն հետքեր են մնացել: Արձանագրված երեսի աջ մասը՝ ակոսի ուղղությամբ՝ վերնից ներքև ջարդված է: Չախ կողմը նույնպես ջարդված է երրորդ տողից ներքև: Տողերի քանակը հինգ է, վերջինի վրա միայն մի տառ է մնացել աջ կողմում, հավանաբար պարբերության վերջն է, որովհետև շարունակության վրա տո-

ղատեղը ջարդված չէ: Տողերի բարձրությունները տարբեր են, խորությունը 0,4 սմ է իսկ բացվածքը 0,6 սմ [1, 209]:

Սահմանաքարի վրա փորագրված է հետևյալ արձանագրությունը. «Արտաշես արքա, որդի Ջարեհի» [9, 257]:

Ծակքարի սահմանաքարը (նկար 6): Մարտունու շրջանի Ծակքար գյուղի սահմանաքարը հայտնաբերվել է 1957 թ. գյուղի դաշտում՝ կոլտնտեսական Խ. Խլղաթյանի կողմից և տեղափոխվել է Հայաստանի պատմության թանգարան: Սահմանաքարը պատրաստված է բազալտից, բարձրությունը՝ 77 սմ է, լայնությունը՝ 30 սմ, հաստությունը՝ 17 սմ [10; 105-106]:

Սահմանաքարի վրա փորագրված է հետևյալ արձանագրությունը. «Արտաշես արքան Ջարեհի որդին Երվանդական բաժանեց հողը մասերի (բաժինների)» [10; 107]:



Նկար 1. Գարմիրգյուղի սահմանաքարը



Նկար 2. Սարուխանի սահմանաքարը




Նկար 3. Լանջաղբյուրի սահմանաքարը



Նկար 4. Վարդենիկի սահմանաքարերը



Նկար 5. Վերին Գետաշենի սահմանաքարը



Նկար 6. Ծակքարի սահմանաքարը

Այսպիսով, եթե համեմատենք Սևանի ավազանի սահմանաքարերը, ապա կտեսնենք, որ դրանք ունեն ինչպես նմանություններ, այնպես էլ տարբերություններ:

Սահմանաքարերը ունեն հետևյալ հիմնական նմանությունները.

1. Բոլոր սահմանաքարերի արձանագրությունները ունեն միևնույն բովանդակությունը:
2. Կարմիրգյուղի Վարդենիկի Վերին Գետաշենի սահմանաքարերը ունեն միևնույն 42 սմ բարձրությունը,

Տարբերություններն են.

1. Բոլոր սահմանաքարերը ունեն տարբեր լայնություն, բացի Կարմիրգյուղի և Ծակքարի սահմանաքարերից,
2. բացի Վարդենիկի սահմանաքարերից, որոնք պատրաստված են տուֆից, մնացած բոլոր սահմանաքարերը պատրաստված են բազալտից:
3. բոլոր սահմանաքարերը ունեն տարբեր հաստություն:

Սևանի ավազանի արտաշեսյան սահմանաքարերի մեծ մասի պատրաստումը բազալտից և երկուսի դեպքում՝ տուֆից պատրաստ լինելու փաստը բացատրվում է հետևյալ հանգամանքով, որ բազալտը եղել է տեղական քար, այն ավելի ամուր և դիմացկուն է, ինչը հատկապես կարևոր է սահմանաքարերի համար, քանի որ դրանք պետք է դիմանային եղանակային ծանր պայմաններին և երկար ժամանակ պահպանեին իրենց կառուցվածքային կայունությունը: Բազալտի առկայությունը տեղական շրջանից դարձնում էր այն ավելի հեշտ հասանելի ու էժան նյութ՝ համեմատած այլ տարբերակների: Իսկ տուֆը, որը բերվել է Արարատյան դաշտավայրից, ցույց է տալիս այն, որ տուֆի օգտագործումը կարող է կապված լինել մի շարք գործոնների հետ: Մասնավորապես՝ տուֆը հեշտությամբ մշակվող և միաժամանակ թեթև նյութ է, սակայն այն ավելի փխրուն է բազալտի համեմատ:

Ամփոփելով հողվածը՝ կարող ենք փաստել, որ տարածաշրջանում առկա հնագույն հայկական արամեատառ սահմանաքարերը վկայում են, որ Սևանի ավազանը եղել է հայ ժողովրդի պատմական հայրենիքի անբաժանելի հատվածը՝ միշտապես բնակեցված հայերով, և այն Արտաշեսյան թագավորության շրջանում կազմել է արքունի սեփականություն:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Բարխուդարյան Ս., Երկու արամեատառ արձանագրություն, Նյութեր Հին Հայաստանի պատմության, ՄՍԽՀ կուլտուրայի պատմության ինստիտուտի աշխատություններ, Պետհրատ, Երևան, 1935, էջեր 205-214:
2. Բիշիոնե Ռաֆայել, Հակոբյան Հ., Հմայակյան Ս., Պարմեջիանի Նեղա, Արտաշես արքայի նորահայտ սահմանաքարը Մարոխանից, Հին Հայաստանի պատմության և մշակույթի հարցեր, Գևորգ Տիրացյանի հիշատակին նվիրված գիտաժողովի զեկուցումներ, Երևան, 2001, էջեր 79-82:
3. Դանիելյան Ա., Արտաշես 1-ի հաստատած սահմանաքարերի իրավական նշանակությունը, Պատմաբանասիրական հանդես, № 3, Հայկական ՄՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1977, էջեր 235-244:
4. Դանիելյան Է., Արտաշես 1-ի հողային քաղաքականության հարցի շուրջը, Պատմա-բանասիրական հանդես, № 4, Հայկական ՄՍՀ ԳԱ հրատ., Երևան 1974, էջեր 129-132:
5. Լալայան Ե., Դամբանների պեղումներ Խորհրդային Հայաստանում, Երևան, 1931, 239 էջ:
6. Հազեյան Ն., Հակոբյան Հ., Հմայակյան Ս., Երկու նոր Արտաշեսյան սահմանաքար Վարդենիկից, Հայաստանի հնագույն մշակույթը 2, Էմմա Խանգաղյանի հոբելյանին նվիրված գիտաժողովի նյութեր, Երևան, 2002, էջեր 76-77:
7. Հմայակյան Ս., Արտաշեսյան սահմանաքարերի շուրջ, Հայաստանի հնագույն մշակույթը 2, Էմմա Խանգաղյանի հոբելյանին նվիրված գիտաժողովի նյութեր, Երևան, 2002, էջ 72-76:
8. Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, «Հայաստան» հրատարակչություն, 1997, 550 էջ:
9. Տիրացյան Գ., Արտաշես I-ի ևս մեկ նորագյուտ արամեական արձանագրություն, Պատմա-բանասիրական հանդես, № 4, Հայկական ՄՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1977, էջեր 254-259:
10. Տիրացյան Գ., Արտաշես Ա-ի արամեատառ նորագյուտ արձանագրությունը, Հայկական ՄՍՌ ԳԱ տեղեկագիր, Հասարակական գիտություններ, № 10, 1957, էջեր 105-109:
11. Փիլիպոսյան Ա., Յակուբյակ Ք., Մաղայան Ս., Ջաքյան Ա., Երանյան Ն., Ջաքյան Տ., Արամեատառ արձանագրությամբ սահմանաքար Լանջաղբյուրից (Մևանա լճի ավազան), «Հայկական լեռնաշխարհի պատմամշակութային ժառանգությունը» միջազգային գիտաժողովի հիմնադրությունների ժողովածու, Երևան, 2022, էջեր 66-68:

МЕЖЕВЫЕ СТЕЛЫ БАСЕЙНА ОЗЕРА СЕВАН АРТАШЕСА

Асланян Армине

Гаварский государственный университет,

“История”, 3-й курс

Научный руководитель:

кандидат исторических наук К. Айрапетян

Резюме

Ключевые слова: *бассейн озера Севан, Арташес I, межевые стелы, надписи*

Предметом исследования данной статьи являются межевые (пограничные) стелы Арташеса I, а объектом – их применяемость. Цель статьи состоит в представлении найденных в бассейне озера Севан межевых стел Арташеса I с надписями арамейским письмом, и выявлении их структуры, а также содержания арамейских надписей посредством всестороннего и глубокого изучения ряда источников.

THE ARTASHESIAN BOUNDARY STONES OF THE SEVAN BASIN

Aslanyan Armine

Gavar State University, “History”, 3rd Year.

Academic Supervisor: K. Hayrapetyan,

Candidate of Historical Sciences

Summary

Key words: *Sevan Basin, Artashes I, boundary stones, inscriptions*

The subject of the article is the Artashesian boundary stones, and the object is their applicability. The aim of the article is to present the Aramaic-inscribed boundary stones of Artashes I, found in the Sevan Basin and to clarify their structure and the content of the Aramaic inscriptions through a comprehensive and in-depth study of various sources.

**ՀԱՅՈՑ ՑԵՂԱՄՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՃԱՆԱԶՄԱՆ
ԳՈՐԾԸՆԹԱՅԸ**

Արաբխանյան Թերեզա

*«ՎՊՀ» հիմնադրամ,
«Պատմություն», 2-րդ կուրս
Գիտական ղեկավար՝ պ. գ. թ., դոցենտ Յ. Ղուլյան*

Հանգուցային բառեր. *ցեղասպանություն, Հայկական հարց, արևմտահայություն, ազգային զարթոնք*

Հողվածի ուսումնասիրման թեման է Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացը՝ որպես 20-րդ դարի կարևորագույն և արդիական պատմական խնդիրներից մեկը: Ցեղասպանության ճանաչումը և դրա հետևանքների հաղթահարումը ոչ միայն վերաբերում է պատմական արդարության վերականգնմանը, այլև հստակ դեր է խաղում միջազգային հարաբերությունների, մարդու իրավունքների պաշտպանության և ցեղասպանությունների կանխարգելման գործընթացներում:

Հողվածի նպատակն է ներկայացնել և վերլուծել Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացի փուլերը միջազգային մակարդակներում: Գիտական նորույթն ընդգրկում է Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացի առանձնահատկությունների վերլուծությունը: Հողվածում ներկայացված են այն գործոնները, որոնք նպաստել են ճանաչման գործընթացի ձևավորմանը և դրա հիմքում ընկած գաղափարախոսական ու քաղաքական դրդապատճառները:

Արդիականությունը պայմանավորված է ժամանակակից աշխարհում ցեղասպանությունների կանխարգելման վերաբերյալ աճող քննարկումներով, ինչպես նաև Հայոց ցեղասպանության հարցի առնչությամբ տարբեր երկրների դիվանագիտական դիրքորոշումների ազդեցությամբ: Այս ուսումնասիրությունը թույլ է տալիս ավելի լավ հասկանալ ցեղասպանությունների ճանաչման գործընթացի սկզբունքները, ինչը կարևոր է պատմական արդարության վերականգնման և միջազգային իրավունքների զարգացման համար: Նպատակը նաև տարբեր երկրների կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման մասին գործընթացի դիմամիկայի ուսումնասիրությունն է՝ ցույց տալու, թե ինչպես է այն ձևավորվել և զարգացել ժամանակի ընթացքում:

Հայկական հարցը, որ ծնունդ առավ Օսմանյան կայսրության անկման շրջանում, դարձել էր XIX դարի վերջի և XX դարի սկզբի միջազգային քաղաքականության առանցքային խնդիրներից մեկը:

Հայկական հարցի բովանդակության մասին գիտական շրջանառության մեջ եղած տեսակետները բաժանվում են երեք հիմնական խմբի: Հայկական հարցը, համաձայն այդ տեսակետների՝

1. Ամբողջ Հայաստանի ազատագրության, հայ պետականության վերականգնման հարցն է:

2. Արևմտյան Հայաստանի ազատագրության հարցն է:
3. Արևմտահայության ֆիզիկական գոյության, կյանքի, գույքի ապահովության, Արևմտյան Հայաստանի բարենորոգումների հարցն է:
4. Հայկական հարցը հայ ժողովրդի ազատագրության, իր պատմական Հայրենիքում անկախ ազգային պետականության վերականգնման խնդիրն է [2; 6-7]:

Հայկական հարցը իր հանգուցալուծման կործանարար դրսևորումն ունեցավ Հայոց ցեղասպանության տեսքով՝ որպես այդ հարցի վերջնական լուծման նպատակադրված փորձ:

Հայոց ցեղասպանությունը համաշխարհային քաղաքակրթության պատմության մեջ պետական ահաբեկչության քաղաքականության առաջին և աննախադեպ ցայտուն ու դասական օրինակ է, իրականացված իշխող ազգի պետական մեքենայի կողմից հպատակ ազգերից մեկի՝ հայերի համակարգված և նպատակաուղղված ոչնչացմանը միտված: Հայոց ցեղասպանության թուրքական քաղաքականությունն իր հետապնդած տարածաշրջանային աշխարհաքաղաքական հեռահար նպատակներով իրավամբ պետք է գնահատել նաև որպես միջազգային ահաբեկչություն, քանզի այն կատարելապես խարխիւղ Մերձավոր Արևելքի ազգագրական, մշակութային և կրոնական հավասարակշռությունը: Թուրքական պետության կողմից իրականացված այդ միջազգային ահաբեկչության ակնհայտ բացասական ազդեցությունը և հետևանքները ցայտօր էապես նկատելի են և տարածաշրջանային քաղաքական ներկա զարգացումներում ոչ կառուցողական ընթացքի կարևորագույն նախապայմաններից են: Այս առումով, միջազգային ահաբեկչության դեմ մղվող համընդհանուր պայքարի համալիրում ՀՀ արտաքին քաղաքականության շրջանակներում պետք է ներկայացնել ու քննադատել թուրքերի իրականացրած ցեղասպանության քաղաքականությունը՝ որպես միջազգային ահաբեկչության առաջին և համաշխարհային հանրության կողմից անպատիժ մնացած հանրահայտ օրինակ: Հայոց ցեղասպանությունը բացառապես համաթուրանական գաղափարախոսությամբ առաջնորդվող պետական քաղաքականության արդյունք էր, որտեղ կրոնական գործոնը զուտ շղարշի դեր էր խաղում և օգտագործվում: Ցեղասպանությունն անվերապահորեն թուրքական պետության ռասիստական ազգայնամուլական քաղաքականության արդյունք էր՝ նպատակաուղղված կոնկրետ մեկ ազգի՝ հայերի ֆիզիկական ոչնչացմանը [5, 10]:

Նշենք, որ ցեղասպանության պատժելիությունը սահմանվել է նախ ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի՝ 1946 թ. դեկտեմբերի 11-ի թիվ 96 բանաձևով, իսկ արդեն 1948 թ. դեկտեմբերի 9-ին «Ցեղասպանության հանցագործությունները կանխելու և դրա պատժի մասին» կոնվենցիայով, իսկ միջազգային մի շարք այլ փաստաթղթերով սահմանված են, որ այդօրինակ հանցագործությունները վաղեմության ժամկետ չունեն, և ցեղասպանություն իրագործած յուրաքանչյուր պետություն հատուկ իրավական պատասխանատվություն է կրում, անկախ այն բանից, թե կգտնվեն և պատժի կենթարկվեն՝ ոճրագործությունների անմիջական կազմակերպիչները, թե՛ ոչ: Այդ կոնվենցիայի առաջին հոդվածում նշվում էր, որ գենոցիդը, անկախ նրանից՝ իրագործվել է պատերազմի ժամանակ, թե խաղաղության, հան-

ցագործություն է, որը խախտում է միջազգային իրավունքի նորմերը: Կոնվենցիայի երկրորդ հոդվածն ամբողջությամբ վերաբերվում է ցեղասպանական գործողությունների նկարագրությանը: Երրորդ հոդվածում նշվում էր, որ սույն կոնվենցիայում ցեղասպանություն հասկացությունը ենթադրում է այն գործողությունները, որոնք կատարվում են որևէ ազգային, էթնիկական, ռասայական կամ կրոնական խմբի՝ որպես այդպիսին ամբողջովին կամ մասամբ ոչնչացնելու մտադրությամբ.

1. այդպիսի խմբի անդամների սպանություն
2. որևէ խմբի համար կանխամտածված ձևով կյանքի այնպիսի պայմանների ստեղծում, որի նպատակն է նրան ամբողջովին կամ մասնակիորեն ոչնչացնել,
3. այդ խմբի անդամներին լուրջ մարմնական վնասվածքներ կամ մտային խանգարումներ պատճառել,
4. կազմակերպել միջոցառումներ, որոնք նպատակ ունեն կանխարգելել այդպիսի խմբի մասնակցությունը,
5. երեխաներին բռնությամբ մարդկային մի խմբից մյուսին փոխանցելը:

Հարկ է նշել, որ ՄԱԿ-ի համաձայնագրի 6-րդ հոդվածը պատժելի է համարում ցեղասպանության կազմակերպումը, իսկ ցեղասպանությամբ մեղադրվածներին պատժելու իրավունքը տալիս է նույն այդ երկրի իշխանությանը կամ միջազգային դատարանին, որը վերոհիշյալ բանաձևի նկատմամբ կարող էր իրավասություն ունենալ [7, 114]:

1915 թ. Հայոց Մեծ եղեռնից հետո, երբ հայերի պատմական հայրենիքը՝ Արևմտյան Հայաստանը, երիտթուրքական իշխանությունների կողմից իրականացված ցեղասպանության հետևանքով լիովին հայաթափվեց, հասկանալի է, որ հայկական հարցը, որը միջազգային դիվանագիտության ասպարեզ էր իջել 1878 թ. Սան Ստեֆանոյի և Բեռլինի վեհաժողովների ժամանակ՝ որպես Օսմանյան կայսրության հայկական նահանգներում հայանպաստ բարեփոխումների իրականացման խնդիր, կորցրեց իր նախկին բովանդակությունը: Սակայն աշխարհասփյուռ հայության համար այն դարձավ հայկական հողերի՝ հայրենիքի վերադարձման պայքարի հարց, որը Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո արտահայտվեց ցեղասպանության միջազգային ճանաչմանն ու հատուցմանն ուղղված շարժման ձևով՝ ստանալով «Հայ դատ» պայմանական անվանումը:

1919 թ., Առաջին աշխարհամարտում Թուրքիայի պարտությունից հետո, երկրում ծվարած բազմահազար արևմտահայ գաղթականների ճնշման տակ, մասնավորապես ի կատարումն փետրվարին տեղի ունեցած Արևմտահայերի երկրորդ համագումարի որոշումների, վարչապետ Ալ. Խատիսյանի կառավարությունը մայիսի 28-ին՝ անկախության տարեդարձի օրը, ընդունեց ազատ, անկախ ու միացյալ Հայաստանի հռչակագիրը, որով հանրապետության իշխանությունները իրենց հայտարարում էին նաև կորուսյալ Արևմտահայաստանի տեր և Անտանտի դաշնակից երկրների օժանդակությամբ հետամուտ դառնում այդ կենսական խնդրի իրագործմանը: Ինչպես հայտնի է, միջազգայնորեն հայկական հարցի

լուծումն իր փաստաթղթային ձևակերպումը գտավ 1920 թ. ապրիլին՝ Ման-Ռեմոնյում և օգոստոսին՝ Սերում կնքված պայմանագրերում: Մակայն թուրք-հայկական պատերազմի, քեմալա-բոլշևիկյան համագործակցության, արևմտաեվրոպական երկրների երկդիմի քաղաքականության արդյունքում հայկական հարցը վերջնականապես թաղվեց: Լոնդոնի (1921) և Լոզանի (1922-1923) կոնֆերանսներից հետո հայոց հարցը դուրս մղվեց միջազգային դիվանագիտության ոլորտից [6, 67-68]:

Հայկական հարցը քննարկվել է նաև Փարիզի կոնֆերանսում (1919-1920 թթ): Այստեղ շատ ավելի հետաքրքիր էր Դ. Ֆերիդի անդրադարձը աշխարհամարտի տարիներին Օսմանյան կայսրությունում ծավալված վայրագություններին. «Պատերազմի ժամանակ ամբողջ քաղաքակիրթ աշխարհը կենդանի հետաքրքրություն դրսևորեց այն հանցագործությունների նկատմամբ, - ասաց նա, - որ կատարել են թուրքերը: Ինձնից հեռու է միտումը խեղաթյուրելու այդ չարագործությունները, որոնք ի գորտ են մշտական սարսուռ առաջացնել մարդկային հոգիներում: Ես չեմ ուզում մեղմացնել այդ ողբերգության հեղինակների հանցանքները: Իմ նպատակն է աշխարհի օգնությամբ աշխարհին ցույց տալ, թե ովքեր են հեղինակներն այդ հրեշավոր հանցագործությունների: Մենք շատ լավ գգում ենք այն անբարենպաստ վերաբերմունքն ու թշնամությունը, որով շրջապատված ենք: Մենք համոզված ենք, որ Թուրքիայի համար մի դժբախտ օր մի շարք դժբախտ իրադարձություններ տեղի ունեցան: Մակայն մի անգամ ասված ճշմարտությունները քաղաքակիրթ աշխարհին և գալիք սերունդներին զերծ կպահեն մեր մասին սխալ կարծիք ունենալուց... Մեղքը ընկնում է այն մարդկանց վրա, որոնք հասարակությունից թաքուն ձևավորեցին համագործակցություն կայզերական կառավարության և 1913 թ. Հեղաշրջման միջոցով իշխանությունը գրաված հեղափոխական կոմիտեների պարագլուխների միջև: Թուրքիան սգում է իր բազմաթիվ համերկրացի քրիստոնյաների սպանությունների առթիվ, ճիշտ այնպես, ինչպես սպանված մահմեդականների համար: Միություն և Առաջադիմություն կոմիտեն ամենատարբեր միջոցներով մահվան դատապարտեց երեք միլիոն մահմեդականների: Փոքր Ասիայի խորքերում՝ առանց ապավենի ու գոյության միջոցների հարյուր հազարավոր թափառականներ կան: Եթե նրանք նույնիսկ վերադառնան իրենց բնակարանները, կկանգնեն անելանելի վիճակի առաջ, քանի որ քրիստոնեական ու մահմեդական բազմաթիվ գյուղեր ու քաղաքներ քանդվել են երկրի երեսից: Հեշտ է հասկանալ, որ ես այս վկայությունները կատարում եմ տեղերում իրականացված բռնություններից հետո: Մնում է միայն հերքել այն կարծիքը, թե դա ռասայական ընդհարում էր կամ կրոնական մոլեռանդության բռնկում... Երիտթուրքերի մեծ դատավարությունը Կ. Պոլսում հաստատեց կոմիտեի ղեկավարների պատասխանատվությունը» [8; 141-142]:

Դ. Ֆերիդի վկայությունը փաստում է, որ Հայոց ցեղասպանությունը մանրակրկիտ ծրագրված հանցագործություն էր, որի պատասխանատվությունը կրում էին Օսմանյան կայսրության ղեկավար շրջանակները:

1960-ական թվականները Հայաստանի համար նշանավորվեցին ազգային զարթոնքի նոր փուլով, որը դրսևորվեց մշակութային, գիտական, հասարակական ոլորտներում: «Ազգային զարթոնք» բնորոշմամբ հայ պատմագրության մեջ ավան-

դաբար հիշատակվում են 1960-ականների կեսին Խորհրդային Հայաստանում սկսված ազգային շարժումները, որոնց համար ազդակ հանդիսացան 1965 թ. Հայոց Մեծ եղեռնի 50-ամյա տարելիցին ցեղասպանության զոհերի հիշատակի վկայակոչման արարողությունները: Խորհրդային Հայաստանի իշխանություններին ի դեմս ՀԿԿ կենտկոմի առաջին քարտուղար Յ. Ջարոբյանի, հաջողվեց ստանալ Խորհրդային Հայաստանում առաջին անգամ հիշատակի պաշտոնական միջոցառումներ կազմակերպելու Կրեմլի համաձայնությունը: Ապրիլի 24-ին Երևանում՝ Ալեքսանդր Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի թատրոնում, բացվեց Երևանի հասարակայնության հանդիսավոր ժողովը, որում ելույթ ունեցան պետական և հասարակական խոշոր գործիչներ, մշակույթի և գիտության երախտավորներ: Ողջ հանրապետության տարածքում սկսեցին լույս տեսնել հայկական հարցի, հայոց ցեղասպանության և հայ ազատագրական պայքարի էջերը լուսաբանող գրականություն, գիտական և հրապարակախոսական հոդվածներ: Կազմակերպվում էին տարաբնույթ հանրային միջոցառումներ, գիտական քննարկումներ և այլն [1, 7]:

Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացի նոր փուլը սկսվեց 1965 թ. Մեծ եղեռնի 50-րդ տարելիցի կապակցությամբ Ուրուգվայի խորհրդարանի կողմից հատուկ բանաձևի ընդունումով: Թուրքական քաղաքական ու «գիտական» շրջանակները, խնդրի միջազգայնացման հեռանկարից անհանգստացած, որդեգրեցին ժխտողական քաղաքական ուղեգիծ [4, 56]:

12 տարի Թուրքիայի կողմից ցուցաբերվող լուրջ դիմադրությունից, բազմաթիվ խոչընդոտներից հետո՝ ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողովի կողմից 1985 թ. հուլիսի 2-ին, լավեց գեկուցումը ցեղասպանության կանխման և պատժելու վերաբերյալ, և 38-րդ նստաշրջանում ընդունած բանաձևի 24-րդ ենթակետում «1915-1916 թթ. հայերի օսմանյան ջարդը» որակվեց որպես ցեղասպանության օրինակ: 1975 թ. ապրիլի 24-ին Կիպրոսի Ներկայացուցիչների պալատը բանաձև ընդունեց այդ օրը Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի օր նշելու մասին, իսկ 1982 թ. ապրիլի 29-ին նույն մարմինը հայ ժողովրդի նկատմամբ իրականացված ոճիրը բնորոշեց որպես ցեղասպանություն: 1980 թվականին Կանադայի Քվեբեկ նահանգի Ազգային համագումարը և Օնտարիո նահանգի խորհուրդը որոշում կայացրին Հայոց ցեղասպանությունը ճանաչելու մասին և դիմեցին Կանադայի խորհրդարանին պաշտպանել այն, բայց առաջարկությունը պաշտպանություն չգտավ: 1984 թվականի ապրիլի 13-16-ը Փարիզում հրավիրված ժողովուրդների մշտական աստյանը իր նիստերից մեկում անդրադարձավ հայերի ցեղասպանության խնդրին: 1985 թ. ապրիլի 23-ին Արգենտինայի Ազգային կոնգրեսը միաձայն որոշում ընդունեց հայերի ցեղասպանությունը դատապարտելու մասին: 1987 թ. հունիսի 18-ին Եվրախորհրդարանը հատուկ բանաձև ընդունեց հայկական հարցի քաղաքական լուծման մասին: Դեռևս 1984 թվականին խորհրդարան էր ներկայացվել սոցիալիստների խմբի առաջարկությունը հայկական հարցի քաղաքական լուծման մասին: Այս առաջարկությանը նախորդել էր 1981 թվականին խորհրդարանի մի խումբ պատգամավորների դիմումը՝ հատուկ քննարկելու հայ ժողովրդի կացության մասին հարցը: Նույն հարցապնդումը կա-

տարեց նաև պատգամավոր Կոլոկոտրոնիսը 1985 թվականին, որը առաջարկում էր քննարկել Հայկական հարցը և Ապրիլի 24-ը Հայոց ցեղասպանության օր հայտարարելու մասին հարցը: Եվրոպական խորհրդարանը այդ բանաձևն ընդունեց վերոհիշյալ առաջարկությունների և հարցապնդումների, ինչպես նաև Եվրոպական խորհրդի մշակութային հարցերով նախարարների խորհրդակցության 1986 թ. նոյեմբերի 13-ին ընդունած որոշման առկայության պայմաններում: Այսպես, բանաձևում նշվում է, որ ողբերգական իրադարձությունները, որ տեղի ունեցան 1915-1917 թթ. Օսմանյան կայսրության տարածքում հայերի նկատմամբ, հանդիսանում են ցեղասպանություն՝ համաձայն ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 1948 թ. դեկտեմբերի 9-ին ընդունած «Ցեղասպանության հանցագործությունը կանխելու և դրա համար պատժելու մասին» կոնվենցիայի: Միաժամանակ նշվում էր, որ ժամանակակից Թուրքիան պատասխանատու չի կարող համարվել Օսմանյան կայսրության հայ բնակչության ողբերգության համար, և «ամենայն հաստատականությամբ» ընդգծվում էր, որ պատմական այդ իրադարձությունների ճանաչումը որպես ցեղասպանություն առիթ չի կարող հանդիսանալ քաղաքական, իրավական կամ նյութական որևէ պահանջի այսօրվա Թուրքիայի նկատմամբ: Բանաձևի երրորդ կետը պահանջում է Եվրախորհրդից ճնշում գործադրել ներկայիս թուրքական կառավարության վրա, որպեսզի վերջինս ճանաչի 1915-1917 թթ. հայերի հանդեպ կազմակերպված ցեղասպանությունը և այդպիսով նպաստի քաղաքական երկխոսության հաստատմանը Թուրքիայի և հայերի լիազոր պատվիրակների միջև: Չորրորդ կետում նշվում է, որ ցեղասպանության ճանաչումից Թուրքիայի հրաժարումը անհաղթահարելի արգելքներից մեկը կդառնա Եվրոպական տնտեսական համագործակցության մեջ Թուրքիայի հնարավոր ընդունման քննարկման համար: Թուրքիան փաստորեն, ելնելով այն իրողությունից, որ ինչպես Եվրոպական խորհրդարանը, այնպես էլ Միավորված ազգերի կազմակերպությունն իրավաբանական տեսանկյունից պատժամիջոցների կիրառման իրավունքներով օժտված չեն, ընդհանրապես հրաժարվեց բանաձևի գոյության փաստն ընդունելուց [7]:

1987 թ. հունիսի 18-ին Եվրոխորհրդարանը՝ Թուրքիայի մուտքը Եվրոխորհուրդ փակելու նպատակով «հանկարծ» հիշեց մոռացված հայ դատը միջազգային այդ հեղինակավոր կառույցի մեջ մտնելու համար թուրքական իշխանություններից ի թիվս այլ հարցերի՝ պահանջելով ճանաչել ու դատապարտել Հայոց մեծ եղեռնը:

1988 թ. հուլիսի Արցախյան շարժումը, որի ընթացքում, մասնավորապես սումգայիթյան ողբերգության առիթով, ցեղասպանության հարցը զուգահեռաբար դարձավ հասարակական քննարկումների նյութ: Հասարակական բուռն ակտիվության պայմաններում խնդիրը տրամաբանորեն հասավ մինչև Խորհրդային Հայաստանի խորհրդարան՝ Գերագույն խորհուրդ, ուր նոյեմբերի 22-ին ընդունվեց մեծ եղեռնը դատապարտող օրենք:

Ջարմանալի է, որ երբ իրադարձությունների տրամաբանական զարգացման արդյունքում Արցախյան ազատագրական շարժումը՝ հետզհետե վերածվեց անկախական շարժման, հայ դատի հարցը կամաց-կամաց դուրս մղվեց ասպարե-

զից, ապա 1990 թ. մայիսին խոհրդարանական ընտրություններից հետո նաև՝ պետական կառավարական հարթություններում առաջատար դիրքեր ապահոված Հայոց Համագրային շարժում (ՀՀՇ) կուսակցության անդուլ ջանքերի գնով: Այդ հարցում հատկապես կարծի դիրք բռնեց ՀՀՇ վարչության նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը: Հատկանշական է, որ վերջինս մեծ ջանքեր գործադրեց, որ անկախության ուղին նախանշող կարևոր փաստաթղթի՝ 1990 թ. օգոստոսի 23-ի անկախության հռչակագրում ցեղասպանության հարցը տեղ չգունի: Բայց Գերագույն խորհրդի պատգամավորները քվեարկեցին խղճի թելադրանքով, և հարցը լուծվեց հակառակ Լ. Տեր-Պետրոսյանի ցանկության:

1995 թ. ապրիլին ՀՀ ԳԱԱ-ում Մեծ եղեռնի 80-րդ տարելիցի կապակցությամբ հրավիրված միջազգային գիտաժողովում ՀՀ նախագահ Լ. Տեր-Պետրոսյանը հանդես եկավ «խրատական» ճառով, որտեղ բացի խնդրո հարցի կապակցությամբ երկրի քաղաքական ուղին նշելուց, մի շարք վտանգավոր մտքեր հայտնեց հիմնահարցի շուրջ (խնդիրը ոչ թե քաղաքական, այլ զգացական է, թուրք ժողովուրդը մեղսակցության բաժին չունի, եղեռնի դրդապատճառները տնտեսական չեն և այլն), որոնք առաջացրեցին ներկաների բուռն հակազդեցությունը: Եղան նախագահի մոտեցումները բացահայտ դատապարտող ելույթներ: Սակայն ՀՀՇ-ն շարունակեց իր «զգուշավորական» ու միաժամանակ անպտուղ քաղաքականությունը, որին Թուրքիան «մեծահոգաբար» պատասխանեց Հայաստանի շրջափակումով, Արցախի հարցում ընդգծված ադրբեջանամետ պահվածքով [6, 67-73]:

Հայոց ցեղասպանության ճանաչման ու դատապարտման միջազգային գործընթացը Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության հիմնական ուղղություններից մեկը դարձավ ՀՀ երկրորդ նախագահ Ռ. Քոչարյանի կառավարման շրջանում, ինչի շնորհիվ կրկնապատկվեցին ջանքերը այդ գործընթացում առաջընթաց ապահովելու համար: Հայկական լոբբին ակտիվ գործունեություն է ծավալում հատկապես ԱՄՆ-ում և Ֆրանսիայի Հանրապետությունում՝ Հայոց ցեղասպանությունը պաշտոնապես ճանաչելու ուղղությամբ: Ֆրանսիայի Հանրապետության կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման գործում մեծ է Ապրիլի 24-ի կոմիտեի և Հայ դատի պաշտպանության հանձնախմբի դերը: Հաշվի առնելով Ֆրանսիայի Հանրապետության պարագայում հայ համայնքի ու երկկողմ բարեկամական հարաբերությունների զարգացման ընդհանուր միտումները՝ Ֆրանսիայի ԱԺ-ն առաջիններից մեկը (1998 թ. մայիսի 29-ին) ճանաչեց 1915 թ. Հայոց ցեղասպանությունը և դատապարտեց այն: Ֆրանսիան առաջին պետություններից էր, որ ճանաչեց Հայոց ցեղասպանությունը նաև օրենքի ուժով: 2000 թ. նոյեմբերի 8-ին Ֆրանսիայի Սենատում ընդունվեց Հայոց ցեղասպանությունը օրենքի ուժով ճանաչող որոշումը, որը նախագահ Ժակ Շիրակի ստորագրելուց հետո, 2001 թ. հունվարի 3-ին մտավ ուժի մեջ: Այս ամենից հետո Թուրքիան սպառնում էր դադարեցնել համագործակցությունը Ֆրանսիայի հետ քաղաքական, տնտեսական և մշակութային բնագավառներում: Ֆրանսիական կողմը, փորձելով մեղմել իրավիճակը, Թուրքիայի հետ փոխհարաբերությունների հարցում համապատասխան քաղաքականություն էր վարում: Ժան Պիեռ Մասսեռեն, որը Ֆրանսիայի պառլամենտի զինվորականների հարցերով պետական հանձնա-

ժողովի քարտուղարն էր, 1915 թ. իրադարձությունների հարցում գտնում էր, որ «20-րդ դարի ամենադաժան ողբերգություններից մեկի համար չպետք է պատասխանատու համարել ներկայիս Թուրքիայի իշխանություններին» [3, 35-36]:

2001 թ. ԱՄՆ պետդեպարտամենտի հովանավորությամբ սկսեց գործել այսպես կոչված «Հայ-թուրքական հաշտեցման հանձնաժողովը» (ՀԹՀՀ): Չուզահեռաբար նկատվեց հայկական կողմին ցեղասպանության թեմայով բանավեճի մեջ ներքաշելու միտում և թուրքական, և եվրոպական ու ամերիկյան զանազան կազմակերպությունների, գիտահետազոտական ու կրթական կառույցների կողմից: Հստակ երևում էր, որ հայերին գիտական բանավեճի մեջ ներքաշելով, առավել ևս նրանց հետ «հաշտվելով», թուրքական դիվանագիտությունը լուծում էր մի քանի խնդիր, նախ՝ հայ գիտնականները, մասնավորապես պատմաբանները, նստելով գիտական բանավեճի թուրքերի հետ՝ եղեռնի հարցի շուրջ, ակամայից հայտնվում էին «գրոյական» վիճակում և ակամայից նույնպես կանգնում ցեղասպանության իրողությունը կասկածի տակ առնողների դիրքերում: Երկրորդ՝ թուրքական կողմը հրաշալի հնարավորություն էր ստանում աշխարհին համոզելու համար, որ առայժմ, երբ ընթանում են հայ-թուրքական գիտական վեճերը, կարիք չկա խորհրդարանական կամ այլ մակարդակով անդրադառնալ այդ խնդրին: Կավարտվեն այդ բանավեճերը, կգտնվեն դրանց լուծումները, նոր կարելի է արծարծել խնդիրը: Ինքնին հասկանալի էր, որ Արևմուտքի գործուն մասնակցությամբ հայկական կողմի համար պատրաստվում էր ծուղակ: Դժբախտաբար, հայկական կողմը, որը ներկայացնում էին նաև ճանաչված գործիչներ (ՀՀ նախկին արտգործնախարար, ՀՀԾ-ական Ալեքսանդր Արզումանյան, ռուսաստանաբնակ քաղաքագետ Անդրանիկ Միհրանյան, ամերիկահայ իրավաբան Վան Գրիգորյան և ուրիշներ), հակառակ իր բոլոր հավաստիացումներին, որ հայ դատի և ցեղասպանության հարցում որևէ զիզում չի լինելու թուրքական կողմին, ի վերջո հայտնվեց ծանր ու խաբված վիճակում և հարկադրված եղավ 2003 թ. վերջերից հակվել դեպի այդ տխրահռչակ հանձնաժողովի գործունեության դադարեցումը: ՀԹՀՀ հայ անդամները, իրենց գործելառճի ձախողումը քողարկելու նպատակով, հանդես եկան հայտարարությամբ, թե իբր հանձնաժողովի գործունեությունն ունեցել է որոշակի դրական հետևանք, և իրենք որոշակի քայլ են կատարել հայ-թուրքական լարվածության թուլացման ուղղությամբ: Իրականում այդ անփառունակ հանձնաժողովը զգալի վնասներ հասցրեց միջազգայնորեն հայ դատի ճանաչման գործին: Եղան դեպքեր, երբ տարբեր երկրների խորհրդարաններ իրենց օրակարգերից հանեցին հայոց ցեղասպանությանը վերաբերող բանաձևերի նախագծերը ՀԹՀՀ-ի աշխատանքների ավարտին սպասելու պատճառաբանությամբ (օր. Գերմանիա, Ավստրիա, Կանադա և այլն): Պատահական չէ, որ ՀԹՀՀ-ի գործունեության ընթացքում (2001 թ.- 2003 թ. նոյեմբեր) ոչ մի երկիր չքննարկեց ու չճանաչեց հայոց եղեռնը. Միայն 2003 թ. դեկտեմբերին Շվեյցարիայի, 2004 թ. սկզբին նաև Կանադայի, նոյեմբերի 30-ին՝ Սլովակիայի, տարեվերջին՝ Նիդեռլանդների խորհրդարանները պետականորեն դատապարտեցին Մեծ Եղեռնը [6, 67-73]:

Ինչ վերաբերում է Թուրքիայի Հանրապետության պաշտոնական դիրքորոշ-

մանը Հայոց ցեղասպանության հարցի առումով, այն հստակորեն արտացոլված է երկրի արտաքին գործերի նախարարության պաշտոնական կայքէջում տեղակայված «1915 թ. Իրադարձությունները և պատմության վերաբերյալ թուրք-հայկական հակասությունը» բաժնում, որտեղ հստակորեն արտացոլված են Հայոց ցեղասպանության ժխտողականության վերաբերյալ պաշտոնական Անկարայի հիմնական դիրքորոշումները: Պաշտոնական Անկարան հրաժարվել է Հայոց ցեղասպանության հարցում հայերի ոչնչացման փաստի ամբողջական ժխտումից: Այսպես, օրինակ, վերը նշված փաստաթղթում նշվում է. «Թուրքիան չի ժխտում հայերի տառապանքները, ներառյալ բազում անմեղ կյանքերի խլումը Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում: Այդուհանդերձ, մեծ թվով թուրքեր են մահացել կամ սպանվել պատերազմին նախորդող տարիներին կամ դրա ընթացքում: Առանց նվազեցնելու ցանկացած խմբի նկատմամբ ողբերգական հետևանքները Թուրքիան առարկում է այս ողբերգության միակողմանի ներկայացումը որպես մեկ խմբի կողմից մյուսի նկատմամբ իրագործած ցեղասպանություն»: Նշված ձևակերպումից պարզ է դառնում, որ հիմնական ժխտողականությունն ուղղված է ոչ թե Հայոց ցեղասպանության եղելության փաստի, այլ վերջինիս որպես ցեղասպանություն որակման ժխտման հետ [9, 29-30]:

Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործում մեծ ու անուրանալի ներդրում ունեցավ հայոց զինյալ պայքարը՝ ի դեմս Հայաստանի Ազատագրության Հայ Գաղտնի բանակի (ԱՍԱԼԱ): ԱՍԱԼԱ-ն, որը ստեղծվել է 1975-ին, զինյալ կազմակերպություն էր, որի նպատակն էր հայոց ցեղասպանության միջազգային ճանաչումը, հայկական պատմական տարածքների վերադարձը: Թեև ԱՍԱԼԱՆ հայտնի է որպես ահաբեկչական կազմակերպություն, այնուամենայնիվ, նպաստեց հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման հարցի բարձրացմանը:

Եզրակացություն

Այսպիսով՝ չնայած զգալի առաջընթացին՝ այդ թվում՝ բազմաթիվ պետությունների կողմից ճանաչմանը և միջազգային կառույցների զեկույցներին, հարցն առ այսօր մնում է չլուծված: Թուրքիան, որպես Օսմանյան կայսրության իրավահաջորդ, շարունակում է որդեգրել հետևողական ժխտողական քաղաքականություն՝ վերափոխելով պատմական իրողությունները: Թուրքիայի այս դիրքորոշումը խոչընդոտում է մասնավորապես տարածաշրջանային խաղաղության վերականգնմանը: Այսպիսով, կարող ենք եզրակացնել, որ պատմության դասերը մոռացության չեն մատնվում, և անցյալի հանցագործությունների ճանաչումն ու դատապարտումը կարևոր նախապայման են մարդկության նկատմամբ նոր ոճրագործությունների կանխման համար:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ժամհարյան Գ., Ազգային զարթոնքը Խորհրդային Հայաստանում թեմայի ուսուցումն ըստ բանավոր պատմության նյութերի, Վանաձոր, 2022, 20 էջ:
2. Խուրշուդյան Լ., Հայկական հարցը, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 1995, 97 էջ:
3. Կարապետյան Ա., Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացը Ֆրանսիայի Հանրապետությունում, «Բանբեր Երևանի համալսարանի», 2012, 137 էջ:
4. Հայոց ցեղասպանություն-100. ճանաչումից՝ հատուցում, միջազգային գիտաժողովի զեկուցումների ժողովածու, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2016, 774 էջ:
5. Հարությունյան Ա. (խմբ.), Հայոց ցեղասպանություն և Հայկական հարց. գրքերի մատենագրություն (1860-2010), Մայր աթոռ Մբ. Էջմիածին, 2014, 560 էջ:
6. Մեծ եղեռն-90, Հանրապետական գիտական նստաշրջանի նյութեր, Գյումրի, 2005, 211 էջ:
7. Նաջարյան Մ., Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացի պատմությունից (1965-1991թթ.), Երևան, «Լրաբեր հասարակական գիտությունների», 2015, հ. 1, էջ 111-123:
8. Պողոսյան Ա., Պողոսյան Կ., Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության պատմություն, Երևան, հ. երրորդ, գիրք առաջին, մաս Բ, Երևան, «Հայաստան» հրատ., 2004, 416 էջ:
9. Վարդանյան Վ., Հայոց ցեղասպանության ճանաչման, դատապարտման և հետևանքների վերացման իրավական հիմնախնդիրները, Երևան, ԵՊՀ հրատ., 2017, 173 էջ:

ПРОЦЕСС МЕЖДУНАРОДНОГО ПРИЗНАНИЯ АРМЯНСКОГО ГЕНОЦИДА

Арабхяня Тереза

Фонд “ВГУ”,

«История», 2-й курс

Научный руководитель:

кандидат исторических наук, доцент Ю. Гулян

Резюме

Ключевые слова: *Геноцид, Армянский вопрос, западные армяне, национальное возрождение*

Тема статьи – процесс признания Геноцида армян как одну из важнейших и актуальных исторических проблем XX века. Признание геноцида и преодоление его последствий касается не только восстановления исторической справедливости, но также играет важную роль в процессах международных отношений, защиты прав человека и предотвращения геноцидов.

THE PROCESS OF INTERNATIONAL RECOGNITION OF THE ARMENIAN GENOCIDE

Arabkhanyan Tereza

“VSU” Foundation,

“History”, 2nd Year

Academic Supervisor: Yu. Ghulyan,

Candidate of Historical Sciences, Associate Professor

Summary

Key words: *Genocide, Armenian Question, Western Armenians, National Revival*

The theme of the article is the process of recognizing the Armenian Genocide as one of the most significant and relevant historical issues of the 20th century. Recognition of the genocide and overcoming its consequences not only pertains to the restoration of historical justice, but also plays a key role in international relations, human rights protection, and the prevention of genocides.

**ԹԵՀՐԱՆԻ «ՇԱԻԻՂ» ԹԵՐԹԻ ԱՆԴՐԱԴԱՐՁԸ 1894-1896 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ
ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԻՆ**

Արջունց Մանե

*Գորիսի պետական համալսարան,
«Պատմություն», 3-րդ կուրս
Գիտական ղեկավար՝ Գ.-Շաբունց*

Հանգուցային բառեր. *Իրան, թերթ, կոտորած, ավերածություններ, բռնա-
գաղթ, արտատպություն*

Հայկական կոտորածներին հայկական պարբերականներից բացի անդրադարձել են նաև միջազգային պարբերականները և այլ երկրներում հրատարակվող հայկական մամուլը: Այլ երկրներում հրատարակվող հայկական մամուլի հաղորդած տեղեկությունների արձագանքը, բովանդակությունը պարզելը կարևոր է այնքանով, որ պետք է տրվի ճիշտ գնահատական՝ արդյո՞ք տվյալ պարբերական մամուլի հաղորդած տեղեկությունները փաստական աղբյուր են, և որքանով է այդ մամուլը կրում քաղաքական իշխանությունների ազդեցությունը:

Այս հոդվածում նպատակ ունենք ուսումնասիրել Իրանում ստեղծված պարբերական մամուլի՝ «Շալիղ»-ի հաղորդած տեղեկությունները՝ 1894-1896 թթ. Աբդուլ-Համիդի կազմակերպած հայկական կոտորածների մասին՝ ուշադրության կենտրոնում ունենալով հատկապես 1895 թ. իրադարձությունները:

Հոդվածի գիտական նորույթը այն է, որ հայկական կոտորածներն առաջին անգամ ուսումնասիրվել են իրանահայ պարբերական մամուլի հաղորդած տեղեկությունների միջոցով:

Ինչպես գիտենք՝ Բեռլինի վեհաժողովում Հայկական հարցի միջազգայնացումից հետո Աբդուլ-Համիդն ընտրեց Հայկական հարցի լուծման իր եղանակը՝ հայկական կոտորածները: Հայերի կոտորածներին իր առանձին համարներում անդրադարձել է «Շալիղ» թերթը, որը կարևոր աղբյուր է Արևմտյան Հայաստանում տեղի ունեցած իրադարձությունների մասին իրանահայերին տեղեկացնելու համար:

Պատմական այս իրադարձությունը ուսումնասիրելուց առաջ հարկ է նշել, որ Իրանում հայկական գաղթավայրեր առաջացել են դեռևս 3-4-րդ դարերում, նաև պարբերաբար կազմակերպվող զանգվածային բռնագաղթերի հետևանքով: Աստիճանաբար իրանահայերը կազմակերպել են իրենց համայնքը, նպաստել հայկական մշակույթի պահպանմանը, մեծ դեր ունեցել իրանական հասարակության զարգացման գործում:

Տպագրության ոլորտում իրանահայերը առաջին քայլերը կատարել են դեռևս 17-րդ դարում: Նոր Ջուղայի տպարանը առաջինն էր ամբողջ Միջին Արևելքում: Այդ մասին է վկայում հետևյալ իրողությունը. «...1968 թ. Օքսֆորդի համալսարանի գրադարանի հայկական բաժնում հայտնաբերվել է այդ տպարանի առաջին գիրքը՝ «Մաղմուս ի Դավիթ» (1638 թ.), որն անհայտ էր հայագիտությանը և համարվում է Միջին Արևելքի առաջին տպագիր գիրքը [4, 718]:

Իրանահայ առաջին պարբերական մամուլը ըստ ոմանց համարվել է «Համայնք» անունով մի լրագիր, որն իբր լույս է տեսել 1880 թ., Ռաշտ քաղաքում, «ի խմբագրութեամբ բժիշկ Ալեքսանդր Աթաբեկեանի» [3, 16]:

Սակայն որևէ հեղինակ երբևէ չի հիշատակել «Համայնք»-ի անունը, և Ջ. Գ. Հանսայանը, ուսումնասիրելով իրանահայ պարբերական մամուլը, հանդես է եկել հողվածով, որով հերքել է նշված պարբերականի գոյությունը և առաջին իրանահայ պարբերական մամուլ ներկայացրել է «Շալիդ»-ին: Այն տպագրվել է 1894 թ. Թեհրանում «Ջաւահայ» տպարանում և շարունակել է տպագրվել մինչև 1897 թվականը:

Թերթի մասին ունենք նաև հետևյալ տեղեկությունները.

«...Արտօնատերն է եղել Անդրեաս Բեգնազարեանը: Գլխ. խմբագրի պաշտօնը զբաղեցրել է վաստակաւոր թարգմանիչ եւ գրականագետ ու ազգային-հասարակական գործիչ Յովհաննէս Խան Մասեհեանը 1894-ի յունւարից մինչեւ հոկտ. 18-ը, իսկ նոյն թւականի դեկտեմբերից մինչեւ 1896 թ. յունւար խմբագրութիւնը գլխաւորել է անւանի գրող, հրապարակագիր եւ մշակութային գործիչ Վրթանէս Փափագեանը («Շալիդ» շաբաթաթերթը Անդրեաս Բեկնազարեանի անձնական թերթն էր: Սկզբի շրջանում հրատարակոււմ է Յովհ. Մասեհեանի խմբագրութեամբ: Նա չի կարողանում հանդուրժել թերթի տիրոջ վատ բնաւորութիւնը եւ հեռանում է թերթից: Յետոյ նրան փոխարինում է գրագետ Վ. Փափագեանը, որ այդ թւականներին «Հայկագեան» դպրոցի ուսուցիչ էր. բայց սա էլ ընդհարում է ունենում Բեկնազարեանի հետ եւ հեռանում: «Շալիդ»-ը դադարում է 1897 թւին: «Շալիդ»-ի հրատարակութիւնից հազիւ մի տարի յետոյ լոյս է տեսնում «Ասող Արեւելեան» շաբաթաթերթը» [2, 150]:

Թերթն ունեցել է չափավոր-լիբերալ ուղղություն, անդրադարձել է սոցիալական, քաղաքական, կենցաղային հարցերին, հանդես եկել լուսավորյալ գաղափարներով: Թարգմանաբար ներկայացրել է եվրոպական, ռուս, պարսիկ գրողների աշխատությունները: Թերթում ներկայացվել են նաև ազգային, գրական թեմաներ:

Թերթը կարևոր տեղ է տվել իրանահայ գյուղաբնակ տարբեր համայնքներին՝ Ղարաղան, Ղարաղաղ, Սոլդուզ-Սավուջբուլաղ, որտեղ կենտրոնացված էին իրանահայ բնակչության հոծ զանգվածները՝ գերակշռելով քաղաքաբնակ հայերի թվին: «Շալիդ»-ը կապ էր պահում նաև հայկական այլ գաղթավայրերի հետ: Ուներ աշխատակիցներ, որոնք թղթակցություններ էին ուղարկում թերթին:

Ուսումնասիրելով համիդյան կոտորածները, պետք է նշել, որ թերթը զգալի անդրադարձ է կատարել: Հատկապես 1895 թ. կատարված իրադարձությունների մասին կարևոր տեղեկություններ են գտնում, որոնք թերթը ներկայացրել է նաև արտատպություններ կատարելով պարսկական, թուրքական և եվրոպական մամուլից:

Ուշադրության կենտրոնում ունենալով 1895 թ. հայկական կոտորածները, փորձ կկատարենք այն հետազոտել «Շալիդ» թերթի № 5 (հրատարակվել է 1895 թ. փետրվարի 18), № 6 (հրատարակվել է 1895 թ. փետրվարի 25-ին) № 47 (հրատ. 1895 դեկտեմբերի 24-ին), № 48 (հրատ. դեկտեմբերի 30) համարներում տեղ գտած հոդ-

վածները և ըստ այդմ ներկայացնել կոտորածների մասին տեղեկությունները [1]:

Նախ 5-րդ համարը ուսումնասիրելիս մի տեղեկության ենք հանդիպում, որը կարևոր ենք համարում դիտարկման համար: Ըստ այդ տեղեկության «Մշակ» թերթին Վանից նամակով տեղեկացրել են, որ այնտեղ կարմրուկն ու դիֆթերիաը 2300 չափ մանուկ է կոտորել: չկա մի ընտանիք, որ գոնե մի գոռ չունենա: Նույնի մասին տեղեկանում են համարի «Արտաքին տեսություն» բաժնում, այս անգամ Կովկասի թերթերն են սոսկալի լուրեր հաղորդում հիվանդության մասին՝ հայտնելով, որ Վանում մանուկ չի մնացել: Էրզրումում ու Մասունում սով է, բնակիչները կոտորվում են:

Տվյալ նյութը վերլուծելով՝ մենք տեղեկանում ենք այն մասին, որ կոտորածներին զուգահեռ հայկական բնակավայրերում տարածված են եղել բազմաթիվ հիվանդություններ, առանձին շրջաններում եղել է հացի, ջրի խնդիր, ինչն էլ իր հերթին ավելի է դժվարացրել գոյության համար ստեղծված ծանր պայմաններում հայերի դրությունը:

Համար 6-րդի «Ներքին լուրեր» բաժնում հաղորդվում է Ուրմիայի հայերի հուսահատական վիճակի մասին: Նոր գործակալը նախ ծանր տուրքեր է նշանակել ձիասկատարությունների համար՝ մի թաղման աջահամբույր՝ 10 թուման: Իսկ մյուս դեպքում, հղում տալով «Մշակ»-ին, ներկայացվում է Ալեքսանդրապոլում գաղթականների թվի մեծացման մասին, ովքեր բնակվում են Ս. Աստվածածին եկեղեցու գավթում, մութ և խոնավ սենյակներում:

Սակայն հիմնական տեղեկություններ կոտորածների մասին մենք տեսնում ենք վերջին՝ «47», «48» համարներում: «47» համարում «Ներքին տեսություն» բաժինը սկսվում է Հայկական հարցի ու ջարդերի մասին հաղորդելով, ընդ որում՝ յուրաքանչյուր քաղաքում կատարված կոտորածի մասին արտատպություններ են տրվում արտասահմանյան որևէ թերթից, ինչպես՝ «Times», «L'Armenie», «Observer», «New Budget»: Օրինակ, հղում տալով «Times»-ին, նշվում է՝ Վանի փոխիդուպատոս «Համպսոնը» տեղեկություն է տվել այն մասին, որ հոկտեմբերի 4-16-ը Մասունի գյուղերը պետք է շինվեն, որպեսզի փրկեն կոտորածի վտանգի տակ գտնվող բնակիչների կյանքը: Իսկ «Daily News»-ի Կ.Պոլսի խմբագիրը նոյեմբերի 17-ին հաղորդում է այն մասին, որ Մասունի ժողովրդի ջանքերը ապարդյուն են անցել, քանզի քրդերը ավիրել են կառուցված բոլոր շինությունները:

«48»-րդ համարի ներքին լուրերը սկսվում են հենց հայկական կոտորածների մասին հայտարարությամբ, այն է՝ Զեյթունում քրդերը խառնակություններ են առաջացրել ու հատկապես խոսքը վերաբերում է տեղի կանանց նկատմամբ գործադրած բռնություններին [1]:

Թերթում հետաքրքրիչ փաստ է նշվում այս հարցի հետ կապված: Կ. Պոլսի հայ կանայք որոշում են դիմել Բարձր դռանը մյուս շրջանների կանանց վտանգից ազատելու համար, ու նշվում էր, որ կանանց թիվը մոտ 70,000 էր ու եթե անգամ նրանց մի փոքր հատվածը ոտքի ելներ, նոր իրադարձություններ տեղի կունենային: Տեղեկացվում է, որ այդ ամենը փորձում էր կանգնեցնել պատրիարքը:

Հաջորդ տեղեկությունները 1895 թ. նոյեմբերի 22-ին Մուշում տեղի ունեցած կոտորածի մասին է: Մուշում հարձակումը սկսվել է շուկայից: Բնակչությունը

կազմակերպել է դիմադրություն, սակայն շրջանի գյուղերը ավերվել են, բնակչությունը կոտորածի է ենթարկվել:

Թերթը հաղորդում է, որ դեկտեմբերին մի քանի օր շարունակ կասկածելի թուրքեր ու քրդեր են լցվել Կ. Պոլիս: Նշվում է, որ վերջինները գալիս էին Փոքր Ասիայի կողոպտված վայրերից:

Պետք է նշել, որ թուրքերն ամեն կերպ փորձում էին իրենց չարագործություններն արդարացնել պատրվակներով կամ նույնիսկ այդ ամենում մեղադրելով հայերին: Այս ամենը զուգորդվում էր հայերի ձեռքակալություններով, հայերին մեղադրելով հեղափոխություն կազմակերպելու համար: Իսկ որոշ դեպքերում էլ իշխանությունները ձևականորեն ձեռքակալում էին ջարդերն իրագործողներին, այնուհետև ազատ արձակում:

Քրդերին հայերի դեմ հրահրելու պարզ վկայությունը պաշտոնատար անձանցից մեկի նամակն է թուրքական իշխանություններին, որում նշում է. «Ջարդարարները գործում էին հիմարաբար. մենք նրանց հրաման էինք տվել ոչնչացնել հայերին, իսկ նրանք ավելի շուտ կողոպտում էին, քան թե սպանում» [4, 271]:

Տվյալ համարում անդրադարձ է կատարվել նաև դատապարտող տեղեկություններին: Հղում տալով «Köln. Zeit». Թերթին՝ նշվում է, որ Լոնդոնից Ուեսմինստրի դուքսը խնդրել է Ստամբուլի իշխանություններին վերջ դնել հայերի կոտորածներին:

Տեղեկացվում է նաև հազարավոր զոհերի, ավերված տների, քաղաքների մասին: Էրզրումում բազարի մեջ սպանել են 10 հայերի և 15-ին վիրավորել: Վանում կոտորածը սկսել է ամսի 23-ին (հավանաբար դեկտեմբերի):

Վանից գրված մի նամակում նշված էր, որ միայն 8 շրջաններում ավերված եկեղեցիների ու վանքերի թիվը հասել է 120-ի: Իսկ Մարաշում ավերվել ու սրբապղծել են նույնիսկ հայկական գերեզմաններ [4, 272]:

Ամասիայից հաղորդում են զոհերի այնպիսի մեծ թվի մասին, որ անգամ խմբագիրն է հրաժարվում նշել այն: Մյուս կողմից մարդկանց ճնշում է նաև սովը. ոսկու գնով մի կտոր հաց չէր գտնվում: Տրապիզոնում տասը սու արժեքող իրը վաճառվում էր 5 ֆրանկով: Սպանում են սկզբից տղամարդկանց, այնուհետև կանանց ու երեխաներին: Մասունում ամբողջ ազգաբնակչությունը սրի է քաշվում, և նշում, որ Ռուսիան մեծ թվերի հասնող գաղթականների պատճառով փակել է սահմանը:

1895 թ. հոկտեմբերի 26-ին կոտորածի զոհ է դառնում Խարբերդը: Ըստ թերթի տեղեկությունների՝ 1895 թ. նոյեմբերի 22-ին Խարբերդից հայտնել են, որ քաղաքում սարսափելի վիճակ է տիրում, ավերածությունները, կողոպուտը, կոտորածները շարունակվում են: Հապուսի գյուղը, որ ունեցել էր 500 տուն, ամբողջությամբ ավերվել են: Փախուստի դիմած գյուղապետն իր մարդկանց հետ հաղորդում է, որ մոտ 2000 քուրդ մուտք է գործել գյուղ ու ավերակների այն վերածել: Պատմում էին, որ 500 հայեր բարձրացել էին գյուղի եկեղեցու տանիք, սակայն քրդերը այն հրդեհել են: Հապուսի գյուղից հինգ ժամ հեռավորության վրա գտնվող Իչմեն գյուղը ևս ավերվել է, եկեղեցին վերածել են մզկիթի, ժողովարանը՝ ախոռի, և մոտ 800 բնակիչներից հազիվ 60-70 է ողջ մնացել:

Թերթի հաղորդած տեղեկություններին զուգահեռ Խարբերդի կոտորածների մասին հայտնի է նաև, որ «Խարբերդի մոտ 55 գյուղերից ոչ մեկի եկեղեցին կամ ուսումնարանն ազատ չէր մնացել ավերիչների հարձակումներից»: Այստեղ նախօրոք զինվորական պահեստներից ավազակախմբերին զենք էր բաժանվել: Ստեղծվել էին նաև հատուկ ոստիկանական ջոկատներ, որոնց խնդիրն էր իբր ապահովել հայերի պաշտպանությունը: Հենց այդ ջոկատներն էլ զիջերը գյուղացու հագուստով ուղարկվում էին հայերին կողոպտելու և կոտորելու [4, 268]:

Զանգվածային ջարդեր են կազմակերպվել նաև Ուրֆա-Եդեսիայում, սակայն հայերը կարողանում են այստեղ դիմադրություն կազմակերպել և հիսուն օր ինքնապաշտպանվել: Շապին Կարահիսարում գոհվել է 3 հազար մարդ:

Պաշտպանություն էին կազմակերպել Մալաթիայի հայերը, սակայն թշնամին կարողացել է կոտրել դիմադրությունը և սրի քաշել 3 հազար խաղաղ բնակչի:

Ամփոփելով «Շափիդ» թերթի հաղորդած տեղեկությունները՝ առաջնահերթ պետք է ընդգծել, որ հայկական սահմաններից դուրս ստեղծված մամուլը անտարբեր չէր հայ ժողովրդի հետ կատարվող իրադարձություններին: Թերևս ուսումնասիրությունների արդյունքում չհանդիպեցինք որևէ քաղաքական կաշկանդվածության կամ որևէ գործոնի, որն արգելք կհանդիսանար անդրադարձ կատարելու պատմական իրողությանը:

Իրանահայ «Շափիդ» թերթի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ պահպանված համարներում զետեղված են հայտարարություններ, որոնք հաճախ պարունակում են հղումներ կամ ամբողջական արտասպումներ արտասահմանյան մամուլի արձագանքներից: Թերթը, կապ պահպանելով Արևմտյան Հայաստանում առանձին ներկայացուցիչների հետ, կարևոր աղբյուր է հանդիսանում հենց կոտորածների օջախներից փաստական տվյալներ ստանալու համար: Որոշ տեղեկություններ ներկայացված են նաև նամակների տեսքով կամ հոգևոր ու աշխարհիկ ներկայացուցիչ տրված տեղեկություններով: Այսինքն՝ թերթը կարող ենք փաստական աղբյուր համարել, քանզի այն չունի քաղաքական կողմնորոշում, ստացված տեղեկությունները տարբեր աղբյուրներից էին, ինչը թույլ է տալիս նշված պատմական իրադարձությունը բազմակողմանի ուսումնասիրել:

Նման գործունեությամբ թերթն առաջին հերթին նպաստում է կատարված ոճրագործության լուրերը իրանահայության շրջանում տարածելուն և ապա համագործակցելով այլ թերթերի հետ՝ նպաստել հայկական կոտորածները միջազգային հանրությանը որոշակիորեն ներկայացնելուն:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. <https://tert.nla.am/mamul/shavigh/1895.html>, Գրահավաք (27.02.2025)
2. Դերենիկ Մելիքեան, XX դարասկզբի իրանահայ մամուլը (համառոտակնարկ), ՀՀ ԳԱԱ հրատ, 2017:
3. Մինասեան Լ, Իրանահայ պարբերական մամուլը 1894-1994, Տպարան Մբ. Ամենափրկիչ վանքի, 1994:
4. Հայ ժողովրդի պատմություն, հ. 6, Երևան, ՀՄՍՀ ԳԱ հրատ, 1981:

ОБЗОР ТЕГЕРАНСКОЙ ГАЗЕТЫ «ШАВИХ» НА АРМЯНСКИЕ РЕЗНИ 1894-1896 ГОДАХ

Арджунц Мане

Горисский государственный университет,

«История», 3-й курс

Научный руководитель: Г. Шабунц

Резюме

Ключевые слова: *Иран, газета, резня, разрушение, тирания, переиздание*

Помимо армянских периодических изданий, армянские массовые убийства освещались также международными периодическими изданиями и армянской прессой, издаваемой в других странах. Важно выяснить реакцию и содержание информации, сообщаемой армянской прессой, опубликованной в других странах, настолько, чтобы сделать правильную оценку того, является ли информация, сообщаемая данным периодическим изданием, фактическим источником и в какой степени эта пресса находится под влиянием политических властей.

THE RESPONSE OF "SHAVIGH" NEWSPAPER OF TEHRAN TO THE ARMENIAN MASSACRES OF 1894-1896

Arjunts Mane

Goris State University,

«History», 3rd Year.

Academic Supervisor: G. Shabunts

Summary

Key words: *Iran, newspaper, massacre, destruction, tyranny, reprint*

The Armenian massacres were reported not only in Armenian periodicals but also in international periodicals and in the Armenian press published in other countries. It is important to ascertain the reaction and content of information reported by the Armenian press published in other countries, so as to make a correct assessment of whether the information reported by a given periodical is a factual source and to what extent this press is influenced by political authorities.

1861-1865 ԹԹ. ԱՄԵՐԻԿԱՅԻ ՔԱՂԱՔԱՅԻՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ
ԱՐԶԱԳԱՆՔԸ «ՄԱՍԻՍ» ԹԵՐԹՈՒՄ

Գևորգյան Մարիամ

«ՎՊՀ» հիմնադրամ,

«Պատմություն», 4-րդ կուրս

Գիտական ղեկավար՝ պ. գ. դ., պրոֆեսոր Ֆ. Մովսիսյան

Հանգուցային բառեր. «Մասիս», Հյուսիս, Հարավ, իշխանություն, ստրկություն, բամբակ, պատերազմ, Աբրահամ Լինքոլն

Ներածություն

1861-1865 թթ. քաղաքացիական պատերազմը Ամերիկայի Միացյալ նահանգներում սկսվեց ազատ և ստրկատիրական նահանգների միջև քաղաքական և տնտեսական անզիջում տարաձայնությունների պատճառով: 1860 թ. հյուսիսը ներկայացնող հանրապետական կուսակցության անդամ Աբրահամ Լինքոլնի հաղթանակը նախագահական ընտրություններում առաջ բերեց ստրկատիրական հարավային նահանգների բուռն դժգոհությանը, որոնք, կորցնելով ԱՄՆ նախագահի պաշտոնը և քաղաքական դիրքերը Կոնգրեսում, անջատվեցին և կազմեցին հարավային նահանգների Համադաշնություն: Դա երկրում հանգեցրեց քաղաքացիական պատերազմի, որը լայն արձագանք գտավ ժամանակի հայ պարբերական մամուլում, այդ թվում՝ արևմտահայ լիբերալ հոսանքի ձայնավող «Մասիս» թերթում:

«Մասիս» թերթը լույս էր տեսնում Կ. Պոլսում 1852 թվականից, որի հրապարակմամբ նոր փուլ բացվեց արևմտահայ մամուլի և հասարակական մտքի պատմության մեջ: «Մասիս» թերթին աշխատակցում էին ժամանակի արևմտահայ գրեթե բոլոր նշանավոր դեմքերը: Թերթի խմբագիր Կարապետ Ութուճյանը փորձառու լրագրող էր, հասարակական-քաղաքական գործիչ, մանկավարժ, արևմտահայ լիբերալ հոսանքի պարագլուխը: Նա թերթի «Քաղաքական» բաժնում և հեռագրական լուրերի հիման վրա պարբերաբար լուսաբանում էր աշխարհում տեղի ունեցող իրադարձությունները: Ի սկզբանե թերթի «բովանդակությունն էր գլխաւորաբար ներքին և արտաքին քաղաքական լուրերը» [1, 126], որոնք Կ. Ութուճյանը լուսաբանում էր «չափավոր լիբերալիզմի, երբեմն ծայրահեղ գոլշավորության» դիրքերից, որն ընդգծում էին նրա ժամանակակիցները: Այնուհանդերձ «Մասիս»-ը պոլսահայ նոր շրջանի հրապարակախոսության այն պարբերականներից է, որը, հաղթահարելով 1840-ական թթ. «պաշտոնական հրապարակախոսության մեջ իշխող պահպանողական ուղղությունը, իր տպագրած հարուստ նյութերով լայն ակնու բացեց եվրոպական մակարդակի լրագրական արվեստի և հետագա դեմոկրատական մամուլի համար» [24, 233]:

Այս տեսանկյունից հայ պարբերական մամուլի և հասարակական մտքի պատմության համար կարևորություն է ներկայացնում «Մասիս» թերթի կողմից ամերիկյան քաղաքացիական պատերազմի լուսաբանումը:

«Մասիս» թերթը քաղաքացիական պատերազմի պատճառների մասին

Ամերիկյան պատերազմի պատճառները «չափազանց հակասական ու բազմաբնույթ են, որպեսզի ռիսկի դիմես դրանք արագորեն թվարկելու» [25, 4]: Այդ բազմաթիվ պատճառներից մեկը Կ. Ս. Ութունյանը համարում էր 1860 թ. նոյեմբերի 6-ի նախագահական ընտրություններում հյուսիսի ներկայացուցիչ «Աբրահամ Լինքոլն անունով խելացի մարդու» Ամերիկայի Միացյալ Նահանգների «հասարակապետության նոր նախագահ ընտրվելը»: Դեռևս փետրվարին Ա. Լինքոլնը, որն այն ժամանակ արդեն Հանրապետական կուսակցության բացահայտ առաջնորդն էր, հայտարարեց, որ ԱՄՆ կառավարությունը «չի կարող մշտապես լինել կիսով չափ ստրուկ և կիսով չափ ազատ», և որ ստրկության հակառակորդների կամ նրա կողմնակիցների լիակատար հաղթանակն անխուսափելի է [31]:

«Այս անձը,– գրում է «Մասիսը»,– Միացեալ-Նահանգաց մեջէն գերութիւն վերցնել ուզող ազատամիտներուն կարգէն ըլլալով, իր ընտրութիւնը յաղթանակ մը կը համարվի ազատամիտներուն համար: ... Լինքոլն հասարակապետութեան նոր նախագահ ընտրվեցաւ» [2]:

«Մասիս» թերթը Լինքոլնին ներկայացնում է որպես ստրկությանը չհարող նախագահ: Եվ այդպես էլ կար. նա նախագահ ընտրվեց ստրկական հարավային նահանգներից մի ձայն անգամ չստանալով:

Ստրկության հարցի կապակցությամբ արդյունաբերական հյուսիսի և ստրկատիրական հարավի միջև հակամարտությունը լքողրեն անդրադառնում էր ԱՄՆ սոցիալ-տնտեսական և հասարակական-քաղաքական զարգացման վրա, որի հիմքում ընկած էր կենտրոնական իշխանության հարցը:

Ա. Լինքոլնի և Հանրապետական կուսակցության հաղթանակը ստրկատերերի համար գործողություն սկսելու յուրատեսակ ազդանշան դարձավ: Նույնիսկ ընտրություններից առաջ հարավային հասարակությունը, ակնկալելով նման արդյունք, լայնորեն քննարկում էր հարավային նահանգների անջատման հնարավորությունը: Լինքոլնի ընտրվելուց հետո սկսվեցին խոսակցություններ նահանգների անջատման մասին, որը մեծ դժգոհություն առաջացրեց կառավարության շրջանում: Այս մասին «Մասիսը» գրում է. «Ամերիկայի Միացեալ-Նահանգաց Վաշինկթըն մայրաքաղաքէն նոյեմբեր 10 թուով լուր կուտան թէ Միացեալ-Նահանգաց հարաւային գաւառներէն մէկ քանին ոտք ելելով բաժնըվիլ եւ գատ տէրութիւն մը կազմել կուզեն: Այս բանը մեծ մտմտուք պատճառեր է Միացնալ-Նահանգաց կառաւարութեան» [3]:

Վախենալով դրանից՝ Լինքոլնը նոյեմբերի 30-ին գրեց հարավային հայտնի քաղաքական գործիչ, Համադաշնության ապագա փոխնախագահ Ա. Մթիվենսին. «Եթե դա այդպես է, ուրեմն ուզում եմ ձեզ վստահեցնել... որ նման մտավախությունների հիմքեր չկան» [25]: Բայց նույնիսկ հանրապետականների կողմից հռչակված չափավոր դոկտրինը՝ ստրկությունը սահմանափակելով իր նախկին տարածքներով, հարիր չէր ստրկատերերին:

Հարավային Գարոլինայի նահանգապետ Վ. Գիստի նախաձեռնությամբ հարավային նահանգների իշխանությունները դեռևս 1860 թվականի հոկտեմբերին գաղտնի համաձայնվել էին համատեղ անջատվել Միությունից հանրապետա-

կանների հաղթանակի դեպքում: Ընտրություններից մեկուկես ամիս անց՝ դեկտեմբերի 20-ին, Հարավային Կարոլինան դարձավ առաջին նահանգը, որն անջատվեց ԱՄՆ-ից:

Նախքան քաղաքացիական պատերազմի սկսվելը, պարբերականը համոզմունք է հայտնում, որ ԱՄՆ հարավային նահանգները հետզհետե հյուսիսային նահանգներից բաժանվելու են և «Միացեալ-Նահանգաց հարավային գաւառներեն մէկ քանին ոտք ելելով բաժնըվիլ եւ գատ տերութիւն մը կազմել կուզեն» [3]:

«Մասիսը» իրավացի էր, ԱՄՆ-ում վիճակն օրեցօր ավելի էր վատանում: Նահանգներն իրար հետևից դուրս էին գալիս պետության կազմից, որը հանգեցրեց Համադաշնության ստեղծմանը:

Իրականում հյուսիսի և հարավի երկպառակության պատճառները շատ էին, խորը և անհաղթահարելի: Առավել կարևոր էին ֆինանսական, հարկային և առևտրատնտեսական հարցերը, որոնք, հարավցիների համոզմամբ, «հյուսիսի յանկինները» իրականացնում էին ի վնաս հարավի շահերի: Դաշնային բյուջեի հարկային եկամուտների 80 տոկոսը բաժին էր ընկնում հարավին, որը հյուսիսի արդյունաբերական ապրանքների գլխավոր սպառողն էր [27, 233]:

Քաղաքացիական պատերազմի նախօրեին հարավի տնտեսությունը հիմնված էր պլանտացիոն գյուղատնտեսության վրա, որը մասնագիտացած էր բամբակի արտադրության մեջ: Միացյալ Նահանգների հարավն այդ ժամանակ գյուղատնտեսական այս կարևոր մշակաբույսի մշակման աշխարհի ամենամեծ կենտրոնն էր: Ոչ միայն հյուսիսի արդյունաբերությունը, այլև Անգլիայի հզոր տեքստիլ ձեռնարկությունները, որոնք ամերիկյան բամբակի հիմնական սպառողն էին, կախված էին ստրկատիրական պետությունների բամբակի մատակարարումներից [26, 45]:

«Մասիս» թերթը հավաստի է ներկայացնում այն փաստը, որ Անգլիան բամբակի հիմնական իրացնողն էր:

Հարավը տարեկան արտահանում էր 213 մլն. դոլարի արտադրանք, հիմնականում բամբակ, իսկ հյուսիսը՝ ընդամենը 47 մլն դոլարի: Արտահանումը հարավի նավահանգիստներից իրականացնում էին միայն հյուսիսի նահանգներին պատկանող նավերով: Հարավի 3-4 հազար ստրկատեր ընտանիքներ բամբակի արտահանումից ստանում էին շահույթի 75 տոկոսը: Նրանք ահռելի հարստության տեր էին և չէին ցանկանում կորցնել իրենց տնտեսական շահավետ դիրքերը: Հյուսիսի և հարավի տնտեսական հակասությունները սրվեցին հատկապես 1861 թ. մարտի 2-ի «Տարիֆների մասին» Ջասթին Մորրիլի հեղինակած օրենքի ընդունումից հետո, որն արտահանվող ապրանքների վրա 1857 թ. մաքսային տուրքերն ավելացնում էր 47 տոկոսով: Այս օրենքը թշնաբար ընդունվեց նույնիսկ Անգլիայում, որտեղ կողմնակից էին ազատ առևտրին [26, 46-47]:

1860 թ. դեկտեմբերի 20-ին Հարավային Կարոլինայի անջատումից հետո, 1861 թ. հունվարի 9-ին հաջորդող երեք շաբաթվա ընթացքում, ԱՄՆ-ից անջատվեցին ևս վեց հարավային նահանգներ՝ Միսիսիպին, Ֆլորիդան, Ալաբաման, Ջորջիան, Լուիզիանան և Տեխասը [28, 98-99]: Փետրվարի 4-ին ԱՄՆ-ից անջատված վեց նահանգների պատվիրակները (տեխասցիները նրանց միացան մար-

տին) հանդիպեցին Մոնտգոմերիում և ձևավորեցին Ամերիկայի Համադաշնային նահանգների ժամանակավոր կառավարությունը: Ընտրելով Ջեֆերսոն Դևիսին որպես նախագահ և Ալեքսանդր Մոլլենսին որպես փոխնախագահ, նրանք մշակեցին Սահմանադրություն, որը շատ նման էր Միացյալ Նահանգների Սահմանադրությանը:

1861 թվականի ապրիլի 12-ին Համադաշնության հրետանին առաջինը կրակեց Ֆորտ Սամթերում տեղակայված դաշնային զորքերի վրա: Հաջորդ օրը, 34-ժամյա երկարատև հրետակոծումից հետո, Ֆորտ Սամթերը անձնատուր եղավ, որը սկիզբ դրեց քաղաքացիական պատերազմի:

«Մասիս» թերթը, անրադառնալով պատերազմի ընթացքին, գրում է, որ պատերազմը օրեցօր սաստկանում է հյուսիսի և հարավի նահանգների միջև: Պարբերականի հաղորդած տեղեկություններով՝ «Ամերիկայի Միացեալ-Նահանգաց Հիւսիսային և Հարաւային գաւառներուն մէջ կռիւն օրե օր կը մեծնայ» [4]:

Հետագա իրադարձությունները ցույց տվեցին, որ լուրջ ռազմական պատրաստություններ էր ընթանում հյուսիսի և հարավի նահանգների միջև: Այս պատրաստությունները, «Մասիս» թերթի դիտարկմամբ, դժգոհություն առաջացրին հարավցիների մոտ, քանի որ դրանից տուժում էր գյուղատնտեսությունը. «Հարաւային նահանգներուն մէջ պատերազմական պատրաստութիւնները երկրագործութեան արգելք ըլլալով, տեղ տեղ ժողովրդեան մէջ տրտունջ ծագեր է հիւսիսային նահանգներէն բաժնուելու խորհուրդին դէմ» [4]:

Ապրիլի 15-ին Լինքոլնը հայտարարեց պաշարողական դրություն և զենքի տակ դրեց 75000 կամավորների, որոնց առաջարկվեց եռամսյա պայմանագիր: Դաշնային կառավարությունը չէր ակնկալում, որ հարավային ապստամբությունը կարող է շատ ավելի երկար տևել [27, 231]:

Քաղաքացիական պատերազմը չէր կարող չհայտնվել Եվրոպական երկրների ուշադրության կենտրոնում, հատկապես Անգլիայի: Դա հիմնականում կապված էր առևտրական խնդրի հետ՝ անտեսելով հարցի քաղաքական կողմը: Անգլիան բամբակը հիմնականում ներկրում էր Ամերիկայի հարավային նահանգներից: Այս հանգամանքները հաշվի առնելով՝ Գ. Ս. Ութուճյանը «Մասիս»-ում գրում է՝ «Շատերուն կարծիքն է թէ Անգղիոյ կառավարութիւնն այս սպառնալից վիճակին առաջքն առնելու համար՝ պիտի պարտաւորի հարաւային Ամերիկայի նաւահանգիստներուն բացուիլը խնդրելու հիւսիսային Ամերիկայի կառավարութենէն, և թէ որ քաղցրութեամբ ձեռք չկընայ բերել, զենքի դիմելու պիտի հարկադրի» [7]: Սենատոր Վիգֆոլի համոզմամբ՝ բամբակը թագավորում է ոչ միայն Միացյալ Նահանգներում ու բրիտանական կղզիներում, այլև ամբողջ մայրցամաքային Եվրոպայում: Եթէ «Անգլիան մի շաբաթ գրկվի բամբակից, ապա սովից կմեռնի» [26, 57]: Ելնելով այս մտայնությունից՝ խռովարար հարավի կառավարող շրջանները, փոխանակ մտահոգվեն պատերազմի մարտավարության պլաններ մշակելով, զբաղված էին նրանով, որ Անգլիան ճանաչի Համադաշնությունը որպես ինքնիշխան պետություն և իր ռազմական օգնությունը ցույց տա:

1861 թ. նոյեմբերի 8-ին անգլիական «Թրենթ» առևտրական նավի հետ կապված անգլո-ամերիկյան միջադեպ տեղի ունեցավ, որին անդրադառնում է

«Մասիսը»: Թերթի տեղեկություններով՝ Անգլիայի և Ամերիկայի Միացյալ Նահանգների միջև «տարաձայնություններ են ծագել»: Նրանց «գժտության պատճառը» պարբերականը իրավացիորեն համարում է ամերիկյան «Ման Ջասինտո» ռազմանավի հրամանատարի կողմից Անթիլյան կղզիների մոտ անգլիական «Թրեյն» շոգենավում իրականացրած գործողությունը: Նավապետն անգլիացիներին մեղադրել է զինվորական մաքսանենգության մեջ և ձերբակալել Մեյտոն և Սլիթել գործակալներին, «հարաւահին Ամերիկայի գործակալներուն բռնելին տարին», ովքեր հարավի նահանգների կողմից նամակ էին տանում Անգլիա: «Մասիս» թերթը Անգլիական «Մորնինգ փոսթ» լրագիրի տեղեկություններով հայտնում է, որ ամերիկացիները իրավունք չունենին անգլիական նավերում գտնվող մարդկանց պատանդ պահել «Ուստի Անգլիո լիակատար հատուցում պի տի ուզէ Միացեալ-Նահանգաց կառավարութենէն և թէ որ ձեռք չբերէ, այն ժամանակը իւր իրաւանց դատը զհնուց որոշմանը պիտի յանձնէ» [5]: Նույն անգլիական լրագիրը հաղորդում էր, որ «արդէն հազար թնդանոթի չափ նասական գորութիւն ունինք Ամերիկայի ծովերուն մէջ» սակայն, «Մասիս»-ի կարծիքով, Միացյալ Նահանգների կառավարությունը այնքան անհեռատես չի լինի, որ պատերազմի մեջ մտնի Անգլիայի հետ: Սա մեծ հարված կլինի Ամերիկայի տնտեսությանը: Ի վերջո Անգլիան և Ամերիկան եկան համաձայնության, և խաղաղություն տիրեց: Պարբերականը գրում է, որ այս խաղաղությանը հասնելու համար խառնվել է նաև Եվրոպան՝ «Ամերիկայի և Անգլիոյ տէրութեանց մէջ ծագած ծանր վէճը որուն առջև ուրիշ քաղաքական խնդիրները լած են Եւրոպայի մէջ բարեբաղդաբար խաղաղութեամբ լուծուելու վրայ է, և վերջին հեռագրական լուրերուն նայելով՝ արդէն լմնցած կրնալ համարուի» [6]: Ամերիկացիները գնացին այդ քայլին, որովհետև իրենց ռազմանավերը զիջում են անգլիական ռազմանավերին:

Անդրադառնալով պատերազմի հետագա ընթացքին՝ «Մասիսը» գրում է, որ առաջվա պես ընթանում է անզիջում պայքար, առանց ամենևին թուլանալու կամ դադարելու «Ամերիկայէն եկած վերջին լուրերը կը ծանուցանեն թէ ահագին պատերազմ մը եղեր է հիւսիսայնոց ու հարաւայնոց մէջ» [8]:

1862 թ. գարնանը Հյուսիսի բանակի հրամանատար Ջ. ՄաքՔլլելանի 100 հազարանոց բանակը երկու անգամ անհաջող հարձակում ձեռնարկեց Համադաշնության մայրաքաղաք Ռիչմոնդի վրա: Ըստ «Մասիս»-ի ստացած լուրերի՝ «Հիւսիսականներն հիմա Ռիչմոնտի մօտը հասած են որ հարաւայնոց գլխաւոր քաղաքն է» [9]: Օգոստոսի 30-ի երրորդ գրոհը պարզապէս կործանարար եղավ: Հարավի բանակի հրամանատար գեներալ Ռոբերտ Լին անցավ Պոտոմակն ու շարժվեց դեպի Վաշինգտոն: Դրանով չեզոքացվեցին ամռանը գեներալներ Բենջամին Բատլերի և Ուլիս Գրանտի տարած հաղթանակները: Միայն մեծ կորուստների գնով և պահեստագորային ուժերը մարտի մեջ մտցնելով հնարավոր եղավ կանխել Վաշինգտոնի անկումը:

Անդրադառնալով 1862 թ. պատերազմական հետագա գործողություններին, «Մասիսը» հակիրճ ներկայացնում է. «Ամերիկայի Միացեալ-Նահանգաց հարաւային գաւառներուն հիւսիսականաց հետ պատերազմը կը շարունակէ անորոշ կերպով» [11]:

Պարբերականի իրավացի դիտարկմամբ՝ պատերազմում հաջողության հասնելու գործում հարավցիներն իրենց հույսը դրել են Անգլիայի և Ֆրանսիայի վրա:

1862 թ. սեպտեմբերի 22-ին նախագահ Ա. Լինքոլնի հրամանագրով, եթե մինչև 1863 թ. հունվարի 1-ը խռովարար նահանգները չվերադառնային դաշնային պետության կազմը, ապա նրանց տարածքում ապրող բոլոր ստրուկները հայտարարվում էին «հավերժ ազատ»: 1863 թ. հունվարի հրամանագրով ստրկությունը հայտարարվում էր վերացված բոլոր նահանգներում [28, 420-422]: «Մասիս»-ի կարծիքով «Հարաւայնոց մէջ սաստիկ զբրգոութիւն ձգելով հիւսիսայնոց դէմ ատելութիւննին աւելի զայրացաւ», որն էլ առաջ բերեց հետագայում նոր ավելի հզոր ընդհարումների: Պարբերականը ճիշտ դատողություն է անում այն մասին, որ սա մեծ դժգոհություն է առաջացնում հարավի ստրկատերերի մոտ՝ «հետևաբար հաշտութեան յոյսերը բոլորովին կորան» [12]:

Ա. Լինքոլնը ստրուկների ազատության հարցում որևէ զիջում չէր ցանկանում անել: Նա հայտարարեց, որ «ավելի շուտ կմահանա, քան թե որևէ բան կհանի ազատության մասին հրամանագրից: Եթե իմ անունը երբևէ մտնի պատմության մեջ, – ասում էր նա, – ապա միայն այս ակտի համար, իսկ դրանում իմ ամբողջ հոգին է» [28, 428-430]:

«Մասիս» թերթը ամերիկյան քաղաքացիական պատերազմը լուսաբանելիս ընդգծում է հյուսիսի և հարավի միջև «ներքին երկպառակութեանց մեծ վնասը» ամերիկյան ժողովրդի համար: Ամերիկայի պետությունը այն եզակիներից է, որ «քաղաքակրթաբան տերութեանց մէջ առաջինն էր որուն գանձը ամենայնոք վիճակի մը մէջ էր. հստակ մը պարտք չունէր», և հարկերը բավական ցածր էին, սակայն երկրում պատերազմի առկայության դեպքում հարկերը բավականին աճում էին, իսկ պետությունը վարկ էր ձեռք բերում հետագայում գոյատևելու համար: Պարբերականը այս իրավիճակը բավական ծանր է նկարագրում. «Թե որ պատերազմը այս ընթացքով տարի մալ շարունակէ, հիւսիսային նահանգաց ելմտական վիճակը թշուառութեան կողմէն հաւասար մը չպիտի կրնայ ունենալ աշխարհի մէջ» [13]:

Ծանր կացության մեջ էր գյուղատնտեսությունը, որն ազդում էր բնակչության կեցության վրա՝ «Հարաւային Նահանգաց երկիրներուն մէջ ցորենի նուագութեան պատճառաւ տեղ տեղ նեղութիւն կը քաշուին» [14]: Չկանգնելով հացահատիկի խնդրի առաջ՝ կառավարությունը որոշ ժամանակով դադար տվեց բամբակի մշակմանը: Ըստ «Մասիս»-ի՝ «բամբակի մշակութիւնն առ այժմ ետ ձգուալ», որպիսի «հիւսիսային նահանգաց ցորենին կարօտ չըլլան և նեղութիւն չկրեն» [14]:

«Մասիսը» հստակ դիրքորոշում է արտահայտում քաղաքացիական պատերազմի վերաբերյալ՝ անվանելով այն «եղբայրասպան անխնայ պատերազմ»: Կրկին անրադառնալով Միացյալ Նահանգներում ստեղծված վիճակին՝ կարծիք է հայտնում, որ «Վնասներն ամեն պատերազմ կը բերէ իր հետ. բայց Ամերիկայի պատերազմին պատճառաձ աղէտներն անհաշուելի են» [10]:

«Մասիսը» պարբերաբար անդրադառնում է պատերազմական գործողություններին, որտեղ իր տեղեկություններով հիմնական հաղթանակները տանում է

հարավը, իսկ հյուսիսը բավականին զիճում է հարավին, քանի որ «հարաւայինք օր քան գօր կը գօրանան» [15]:

Պարբերականի դիտարկմամբ հյուսիսը արդեն բավական սպառվել է և այլևս պատերազմել չի ցանկանում, «պատերազմէն այնչափ ձանձրացեր են որ զինուորութեան չերթալու համար խռովութիւն կը հանեն»: Մինչդեռ «հարաւայինք ընդհակառակն գունդ գունդ զինուորութեան կը դիմեն, և պատերազմին շարունակիլը կուզեն» [16]: Կ. Ս. Ութուճյանի կարծիքով, եթէ հարավը շարունակի հաղթանակներ տանել, ապա հյուսիսը չի կարողանա շարունակել պատերազմը:

«Մասիսը» 1863 թվականի պատերազմական գործողությունների մասին գրում է. «Ամերիկայի մէջ պատերազմը փոխադարձ յաջողութեամբ կը շարունակէ և մօտ ժամանակէն վերջանալու յոյս չտար» [17]:

Պարբերականը մանրամասներ է ներկայացնում երկուստեք զոհերի վերաբերյալ, որոնք ըստ տեղեկությունների՝ անասելի շատ էին, և եթէ պատերազմն այսպէս շարունակվի, ապա «Միացեալ նահանգաց երկիրներուն մէջ անկարողներէ ու խեղճերից գատ մարդ չպիտի տեսնուի» [16]: Թերթը եվրոպական և ամերիկյան մամուլի հրապարակումների հիման վրա անդրադառնում է նաև վիրավորներին. «Վաշինկթընէն Լոնտրա եկող բժիշկ մը տեղեկագիր մը հրատարակած է», որ միայն «յիսուն հազար անկար և խեղ գօրական կը գըտնուի» 184 հազար մարդ պատերազմում հաշմանդամություն է ձեռ բերել [17]:

«Մասիսը» չանրադառնալով 1864 թվականի գործողություններին, սուկ փաստում է, որ պատերազմը դադարելու միտում չունի:

1864 թ. ամռանը հյուսիսը հարձակման «Անակոնդա» պլանն իրականացնելիս որոշակի դժվարություններ ունեցավ, երբ գէներալ Ու. Շերմանը կանգ առավ Ատլանտայի տակ, իսկ գէներալ Ու. Գրանտը, մեծ կորուստներ տալով, չգրավեց Ռիչմոնդը [28, 262-263]: «Ասոնց Կրանթ գօրապետը,– գրում է թերթը,– որ հարաւայնոց Ռիչմօստ մայրաքաղաքին մօտեցած էր, քանի մը անյաջող կոնիներէ ետև՝ նա քաշուելու հարկադրուէր է»: Ու. Գրանտը, կրելով հսկայական կորուստներ, երբեք չվերցրեց Ռիչմոնդը, պատերազմից հոգնած հյուսիսային շատ բնակիչներ ցանկանում էին խաղաղություն գրեթէ ամեն գնով [27, 247]:

1864 թվականին լրանում էր նախագահ Ա. Լինքոլնի նախագահության ժամկետը, և նա հույս չունէր, որ նորից կվերընտրվի՝ հաշվի առնելով երկրում տիրող քաղաքական իրավիճակը, ինչպէս նաև հյուսիսի անդադար պարտությունները: 1864 թ. հունիսի 7-ին հանրապետական կուսակցության համագումարը նախագահի թեկնածու առաջադրեց Ա. Լինքոլնին:

1864 թ. նոյեմբերի 8-ին կայացած նախագահական ընտրություններում Ա. Լինքոլնը հաղթանակ տարավ դեմոկրատական կուսակցության թեկնածու, իր կողմից պաշտոնանկ արած գէներալ Ջ. ՄաքՔլեյլանի նկատմամբ [25, 95]: «Մասիսը» Նյու Յորքից լուր է ստանում նոյեմբերի 10-ին, ըստ որի՝ «Պ. Լինքօլն՝ բաց ի երէք նահանգէ բոլոր ուրիշ նահանգաց մեջ վերստին նախագահ ընտրուեցաւ» [18]:

1864 թ. աշնանը հյուսիսը նոր հաջողություններ ունեցավ: Սեպտեմբերի 1-ին գէներալ Ու. Շերմանը գրավեց Ատլանտան, իսկ դեկտեմբերի 22-ին՝ նաև Սավան-

նան: Դեկտեմբերի 15-16-ին Ատլանտայի գրավմանը մասնակցած գեներալ Ջորջ Թոմասը (1816-1870) Նեշվիլի մոտ գլխավին ջախջախեց հարավի ուժերին:

1865 թվականի սկզբին «Մասիս»-ը տեղեկացնում է, որ «Ամերիկայի եղբայրասպան պատերազմը տակալին մի և նոյն կատաղութեամբ կը շարունակե՛ ինչպէս անցեալ տարի» [19]:

1865 թ. փետրվարի 17-ին Ու. Շերմանը գրավեց Հարավային Քարոլինայի մայրաքաղաք Կոլումբիան, իսկ մեկ օր անց տիրեց նաև Չառլստոնին [29, 308-309]:

«Մասիս» իր տեսակետն է հայտնում պատերազմի դադարեցման և հաշտություն կնքելու վերաբերյալ, որտեղ մասնավորապես գրում է. «Հիւսիսայինք Հարաւայնոց անկախութիւնը պիտի ճանաչեն և ետ քաշուին, կամ հարաւայինք դարձեալ պիտի միութիւնն ընդունին» [20]: Թերթը միաժամանակ կարծիք է հայտնում, որ պատերազմող կողմերը բավականին մեծ մարդկային և ֆինանսական կորուստներ են ունեցել, ուստի հեշտությամբ զիջումների չեն գնա:

Պարբերականի տեղեկություններով «Ամերիկայի պատերազմն արագութեամբ իր վախճանին կը, մօտենայ» [21]: 1865 թ. ապրիլի 3-ին գեներալ Ու. Գրանտը գրավել է Համադաշնության մայրաքաղաք Ռիչմոնդը, իսկ հարավի բանակի գլխավոր հրամանատար Ռ. Լին անձնատուր է եղել:

«Մասիս»-ը, հավաստի ներկայացնելով հարավի անձնատուր լինելը և թատրոնում դերասան Ջոն Բուտսի կողմից Ա. Լինքոլնի սպանությունը, բարձր է գնահատում նրա գործունեությունը, ով «գարմանալի հաստատամտութեամբը և իր անբիծ ուղղութեամբն Ամերիկայի ժողովուրդեան սիրտը գրաւած էր, և ինքն եղած էր. որ նոյն իսկ հիւսիսայնոց զէնքերուն ձախորդութեան ժամանակներն՝ առանց յուսահատութեան ճիկ մը հանելու՝ իր գործն աննկուն հաստատամտութեամբը յառաջ տարած էր» [22]:

«Մասիսի» խմբագիր Կ.Ս. Ութուճյանը Միացյալ Նահանգներում խաղաղություն և բարեկեցություն հաստատելու հարցում հույսեր չէր կապում Ա. Լինքոլնին ԱՄՆ նախագահի պաշտոնում փոխարինած Էնդրյու Ջոնսոնի հետ: Նրա կարծիքով՝ «Ամեն մարդ կը, մաղթեր որ չըլլայ թե Լինքոլնի կեանքը վտանդի մեջ ի ննայ և իր այս փոխանորդն անցնի նախագահական աթոռը»: Կ. Ս. Ութուճյանը մտածում էր, որ նա այնպես չանի, որ մարած պատերազմը ավելի բուռն վերսկսվի: Անգլիական լրագրերից ստացված լուրերով նա գրում է, որ «Պ. Ճոսոնըն զինեմով անձ մ' է կըսեին, նախագահի փոխանորդ ըլալու անարժան է» [23]:

Եզրակացություն

Ավելի քան չորս տարի ամերիկյան քաղաքացիական պատերազմի ընթացքին հետևող «Մասիս» թերթը Ամերիկայի Միացյալ Նահանգներում տեղի ունեցող իրադարձություններն իրավացիորեն գնահատում էր ազգային երկպառակություն, ազգասպան, եղբայրասպան ու քաղաքացիական պատերազմ: Թերթը պատերազմական իրադարձությունները հիմնականում լուսաբանում է «անկողմնակա ականատեսի» դիրքերից նախապատվություն չտալով ոչ արդյունաբերական հյուսիսի և ոչ էլ պլանտատորական, ստրկատիրական հարավի պայքարին:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Գալեմբեարեան, Գ. Պատմութիւն հայ լրագրութեան, Վիեննա, 1893, էջ 126:
2. «Մասիս», 1860թ, № 459, նոյեմբեր:
3. «Մասիս», 1860թ, № 460, դեկտեմբեր:
4. «Մասիս», 1861թ, № 483, մայիս:
5. «Մասիս», 1861թ, № 512, նոյեմբեր:
6. «Մասիս», 1862թ, № 517, հունվար:
7. «Մասիս», 1862թ, № 521, փետրվար:
8. «Մասիս», 1862թ, № 532, ապրիլ:
9. «Մասիս», 1862թ, № 537, մայիս:
10. «Մասիս», 1862թ, № 551, սեպտեմբեր:
11. «Մասիս», 1862թ, № 555, սեպտեմբեր:
12. «Մասիս», 1862թ, № 558, հոկտեմբեր:
13. «Մասիս», 1862թ, № 560, նոյեմբեր:
14. «Մասիս», 1863թ, № 586, մայիս:
15. «Մասիս», 1863թ, № 595, հուլիս:
16. «Մասիս», 1863թ, № 600, օգոստոս:
17. «Մասիս», 1863թ, № 616, նոյեմբեր:
18. «Մասիս», 1864թ, № 665, նոյեմբեր:
19. «Մասիս», 1865թ, № 673, հունվար:
20. «Մասիս», 1865թ, № 679, փետրվար:
21. «Մասիս», 1865թ, № 687, ապրիլ:
22. «Մասիս», 1865թ, № 689, ապրիլ:
23. «Մասիս», 1865թ, № 690, մայիս:
24. Հայ պարբերական մամուլի պատմություն XVIII-XIX դարեր հատոր 1. Խմբագրական կոլեգիա՝ Ա.Խառատյան և ուրիշներ, Գահիրէ, 2006, էջ 233:
25. Бурин С. Н. На полях сражений гражданской войны в США. М., Наука, 1988, 176 с.
26. Иванов Р. Ф. Гражданская война в США, М. 1960.
27. Иванян Э. А. История США. М., Дрофа, 2008, 576 с.
28. История США / Грег Вард; пер. с англ. И. д. Сергеевой -М.: АСТ: Астрель, 2009
29. Куропятник Г. П. Гражданская война в США. М., Наука, 2009, 354 с.
30. Маль К. Гражданская война в США 1861-1865, Минск, Харвест, 2002, 592 с.
31. Lincoln A. The Collected Works: Vol. 1-8 / Ed. by R. Basler. New Brunswick, 1953. Vol. 3. P. 517.

ОТКЛИКИ НА АМЕРИКАНСКУЮ ГРАЖДАНСКУЮ ВОЙНУ (1861-1865 ГГ.) В ГАЗЕТЕ «МАСИС»

Геворгян Мариам

Фонд “ВГУ”, История”, 4-й курс

Научный руководитель:

доктор исторических наук, профессор Ф. Мовсисян

Резюме

Ключевые слова: *«Масис», Север, Юг, власть, рабство, хлопок, война, Авраам Линкольн*

1861-1865 г. Гражданская война в Соединенных Штатах Америки началась из-за политических и экономических разногласий между свободными и рабовладельческими штатами. В 1860 г. победа Авраама Линкольна, на президентских выборах, привела к гражданской войне в стране, которая широко освещалась в армянской периодической печати того времени, в том числе в газете «Масис», рупоре западноармянского либерального течения.

THE RESPONSE TO THE AMERICAN CIVIL WAR (1861–1865) IN THE NEWSPAPER “MASIS”

Gevorgyan Mariam

“VSU” Foundation,

“History”, 4th Year

Academic Supervisor: F. Movsisyan,

Doctor of Historical Sciences, Professor

Summary

Key words: *“Masis”, North, South, power, slavery, cotton, war, Abraham Lincoln*

The American Civil War (1861–1865) began as a result of political and economic differences between the free and slave states. In 1860, Abraham Lincoln's victory in the presidential elections led to a civil war in the country, which was widely covered in the Armenian periodical press of that time, including the newspaper “Masis”, the mouthpiece of the Western Armenian liberal movement.

Դանիելյան Գայանե

«ՎՊՀ» հիմնադրամ,
«Պատմություն», 2-րդ կուրս
Գիտական ղեկավար՝ Բ. Գասպարյան

Հանգուցային բառեր. հայրենիք, ազատագրական պայքար, կամավորական ջոկատներ, դպրոց, հոգևոր ինքնություն

«Ազգի հզորությունը գալիս է նրանից, որ նա չի մոռանում իր պատմությունը»:
Ներսես Աշտարակեցի

Հայոց դարավոր պատմությունն անքակտելիորեն կապված է հայ առաքելական եկեղեցու պատմության հետ: Դարերի ընթացքում, երբ Հայաստանը զրկված էր պետականությունից, հայոց եկեղեցին եղել է ոչ միայն հոգևոր առաջնորդ, այլև ժողովրդի ինքնության, ազատության ու ազգային ինքնապահպանման գլխավոր հենարան, ոգեշնչել ու առաջնորդել է ազգային-ազատագրական պայքարը: Հայոց պատմության մեջ առանձնահատուկ տեղ ունեցող հոգևորականներից է Ներսես Աշտարակեցին: Նա եղել է ոչ միայն հոգևոր առաջնորդ, Ամենայն հայոց կաթողիկոս, այլև ազգային-քաղաքական գործիչ, որն իր ողջ կյանքը նվիրել է հայ եկեղեցու վերածնմանը, կրթական հաստատությունների հիմնադրմանը և հայ ժողովրդի հոգևոր ու ազգային զարթոնքին: Նրա գործունեությունը լուսավորված է հայրենիքի ազատության ու հոգևոր վերածննդի գաղափարներով, որոնք դարձան նրա առաքելության առանցքը:

Աշխատանքի նպատակն է ներկայացնել Ներսես Ե Աշտարակեցու կյանքն ու գործունեությունը՝ շեշտադրելով նրա ազգային, կրթական և քաղաքական դերակատարումը հայ ժողովրդի զարգացման գործում:

Ներսես Աշտարակեցու գործունեությունը և գաղափարները մեր օրերում կարևորվում են մի քանի տեսանկյուններից, այսպես.

1. Ն. Աշտարակեցին կարևորում էր հայ ժողովրդի միասնականությունը, մասնավորապես՝ արևելահայերի և արևմտահայերի փոխհարաբերությունները: Ներկայումս Հայրենիք-Սփյուռք սերտ կապերի պայմաններում համահայկական միասնության գաղափարը շարունակում է մնալ հրատապ:

2. Ն. Աշտարակեցին մեծապես նպաստել է հայ կրթության և մշակույթի զարգացմանը, հիմնել դպրոցներ և աջակցել նոր ուսումնական ծրագրերի ստեղծմանը: Այսօր էլ կրթության բարեփոխումների, հայոց լեզվի և մշակույթի պահպանման խնդիրները շարունակում են մնալ արդիական:

3. Ն. Աշտարակեցին կարևորում էր եկեղեցու դերը հասարակության կյանքում և միաժամանակ փորձում զերծ պահել նրա ինքնավարությունը պետական միջամտություններից: Եկեղեցու հասարակական դերի և քաղաքական չեզոքության հետ հարցը արդիական է նաև այսօր:

Ներսես Ե Աշտարակեցին (աշխարհիկ անունը Թորոս), ծնվել է 1770 թ. Աշտարակում, Հարություն քահանա Շահազիզյանի ընտանիքում: Ինչպես նշում է Ա. Երիցյանը, Թորոսին վաղ տարիքից ճանաչողները նրան բնութագրում էին որպես «աշխույժ և կրակոտ, խաղական այն աստիճան, որ մոտենում է չարութեան, հնարագետ, սրամիտ, զարմանալի հիշողության տեր, աշխատասեր, ընկերասեր, բայց և նախանձոտ ու վրեժխնդիր» երեխա [3, 20]:

1778 թ. պատանի Թորոսին ուղարկում են Էջմիածնում բացված Ժառանգավորաց դպրոցում սովորելու: Հ. Հովհաննիսյանն այս կերպ է նկարագրում նրան ուսումնառության տարիներին. «Արդեն պատանի հասակում Ներսեսի մոտ ձևավորված բացառիկ ունակություններն ու հաստատուն բնավորությունը նրան առանձնացրել են մյուս ուսումնականներից» [6, 80]:

1791 թ. Աշտարակեցին ձեռնադրվում է սարկավագ, իսկ 1794 թ.՝ վարդապետ և գոյություն ունեցող կարգի համաձայն ընդունում է Ներսես անունը: Սարկավագ ձեռնադրվելուց հետո Ն. Աշտարակեցին ակտիվորեն մասնակցություն է ունենում վանական, վարչական, կրթական և հայրենասիրական գործունեության մեջ՝ թե՛ Մայր Աթոռում, թե՛ տարբեր թեմերում: 1808 թ. ձեռնադրվում է որպես եպիսկոպոս:

Ներսես Ե Աշտարակեցին ակտիվ գործունեություն է ծավալել 19-րդ դարասկզբի ռուս-թուրքական և ռուս-պարսկական պատերազմների ընթացքում: Ռուսական պետությունը այս ժամանակ նպատակ ուներ գրավել Հարավային Կովկասը և հույս էր դնում հայ ժողովրդի աջակցության վրա: Այս դժվարին առաքելությունն իրականացնելու գործում ռուսական արքունիքի միակ թեկնածուն Ներսես Աշտարակեցին էր: Բայց նա ռուսական գործի հաղթանակի մեջ տեսնում էր իր ամենանվիրական երազանքի իրականացումը՝ հայ ժողովրդի ազատագրումը պարսկական տիրապետությունից: Այս է պատճառը, որ 1804 թ., երբ սկսվեց ռուս-պարսկական պատերազմը, Ն. Աշտարակեցին գործուն քայլեր ձեռնարկեց ռուսական զենքի հաղթանակին նպաստելու համար: Նա եղել է Ցիցխանովի գլխավորած գործերի կազմում, մասնակցել է գրեթե բոլոր պատերազմական գործողություններին, հանդես է եկել որպես հմուտ դիվանագետ:

Երբ Երևանի բերդը պաշարած ռուսական զորքը հայտնվել էր դժվարին կացության մեջ, վերջացել էին հացի, վառոդի և առաջին անհրաժեշտության սպարանքների պաշարները, Ներսես Աշտարակեցին Էջմիածնի պահոցներից նրանց տրամադրում է 12 հազար փութ ցորեն և այլուր, 25 փութ վառոդ և բազմակողմանի աջակցություն՝ ստեղծված իրավիճակից դուրս գալու համար: Պարսկական կառավարությունը, խիստ մտահոգված Ներսես Աշտարակեցու գործունեությունից, մերթ սիրաշահում էր նրան, մերթ բանտարկում և սպառնում մահապատժով: Սակայն Ներսեսը, ոգևորված մահմեդականների լծից իր հայրենակիցների շուտափույթ ազատագրման երազանքով, օժտված հզոր կամքով, ոչնչի առաջ կանգ չէր առնում և խիզախորեն շարունակում էր այն գործը, ինչը համարում էր իր կոչումը [11, CXXIII]:

Այս ժամանակահատվածում Մայր Աթոռում որոշում է կայացվում հիմնել բարձրագույն հոգևոր խորհուրդ՝ Սինդո, որի նախապատրաստական աշխատանքներին մասնակցում է նաև Ներսես Ե Աշտարակեցին: Այն բաղկացած էր ութ անդամներից, որոնց մեջ առանցքային դեր ունեւր Ներսես արքեպիսկոպոսը, ով փաստացի հանդիսանում էր այդ խորհրդի առաջնորդը [8, 28]:

Ներսես արքեպիսկոպոսը, գործելով կաթողիկոսի և Սինդոյի անունից, վարում էր պաշտոնական գրագրությունը Ռուսական կայսրության, Պարսկաստանի, Գերմանիայի և Ֆրանսիայի արքունիքների հետ: Շուտով Ներսեսը սկսում էր ակտիվորեն մասնակցել եկեղեցական ու ազգային հարցերի կազմակերպմանը, բարեփոխել կրթական համակարգը, արդյունքում կաթողիկոսը մղվում է 2-րդ պլան [2, 72]: Զգալով այդ՝ Եփրեմ կաթողիկոսը և մի շարք եպիսկոպոսներ ցանկանում են, որ նա հեռանա միաբանությունից: Ինչպես վկայում է Ա. Երիցյանը, Ներսեսը, տեսնելով կաթողիկոսի և միաբանների սառնությունը, նախ հրաժարական տվեց սինդոյի անդամությունից, բայց երբ հայրապետը այն չընդունեց և համոզեց շարունակել գործունեությունը, նա «բարուք համարեց մի առ ժամանակ հեռանալ ապաշնորհի միաբանութիւնից և ցանկացաւ Վրաստանի առաջնորդութիւնը» [2, 72]:

Շուտով ռուսաց արքունիքը հաստատում է Ներսեսի ընտրությունը որպէս Վիրահայոց հոգևոր առաջնորդ: 1814 թ. Աշտարակեցին «հանդիսաւոր մուտք գործեց Թիֆլիզ և փառաւոր ընդունելութիւն գտաւ» [2, 73]: Վիրահայոց թեմը, որը ընդգրկում էր զգալի տարածք՝ Սև ծովից մինչև Գանձակ, գտնվում էր անմխիթար վիճակում: Ռուսական տիրապետության հաստատումից անցել էր 13 տարի, բայց անընդհատ պատերազմների, համատարած հիվանդությունների պատճառով այնտեղ որևէ բարեկարգություն չէր կատարվել: Չկային դպրոցներ, բնակչությունը գտնվում էր խավարի մեջ, անգամ հոգևորականների մի մասը գրել-կարդալ չգիտեր [1, 5]: Ներսես Աշտարակեցին մեծ եռանդով ձեռնամուխ եղավ թեմի բարեկարգմանը: Այս առաքելության իրագործումն այնքան էլ հեշտ չէր, քանի որ դրան դեմ էին մեծահարուստ իշխանները և եկեղեցականները: Այս պայքարը տևեց երեքից չորս տարի, որի ընթացքում անհրաժեշտ եղավ նաև Եփրեմ կաթողիկոսի և ռուսական պետության միջամտությունը:

Ներսես Աշտարակեցու գործունեությունը դուրս էր գալիս հոգևոր ոլորտի սահմաններից՝ ընդգրկելով նաև հասարակական ու քաղաքական հարցերը: Վրաստանում տարածված համաճարակի օրերին, մոռանալով սեփական անվտանգության մասին, Աշտարակեցին շրջում էր ամենուր, սեփական ունեցվածքից միջոցներ տրամադրում բոլոր կարիքավորներին [11, CXXIII]:

Ն. Աշտարակեցին ձեռնամուխ եղավ կրթական գործի բարելավմանը: Նրա ջանքերով Թիֆլիսում 1824 թ. բացվեց Ներսիսյան դպրոցը: Երկու տարվա ընթացքում դպրոցի ուսանողների թիվը հասնում էր 600-ի: Բոլորը կրթվում էին անվճար, բացի հոգևոր և աշխարհիկ գիտություններից, ուսանում էին չորս լեզուներ [2, 161]:

Ներսիսյան դպրոցը իր գործունեության ընթացքում վերածվեց հայ կրթության կարևորագույն կենտրոններից մեկի: Տարիների ընթացքում դպրոցն իր շրջանավարտների միջոցով հսկայական ներդրում ունեցավ հայ մշակույթի, գիտության և արվեստի զարգացման մեջ: Նրա սաներից շատերը դարձան նշանավոր մտավորականներ ու մշակույթի գործիչներ: Ներսիսյան դպրոցը ոչ միայն իր ժամանակի ամենահեղինակավոր կրթական հաստատություններից էր, այլև կրթության ոլորտում իր ներդրումով գերազանցեց ժամանակի մյուս հայկական դպրոցներին՝ դառնալով հոգևոր, մշակութային ու ազգային գիտակցության հզոր օջախ:

Ներսես Աշտարակեցու անմիջական նախաձեռնությամբ Գևորգ աղա Արծրունին 1826 թ. Թիֆլիս փոխադրեց Ամստերդամի հայկական եկեղեցում պահվող Ոսկանի և Վանանդեցու տպարանը, այն տպարանը, որ Հակոբ Զուղայեցու ջանքերով 1664 թ. բացվել էր Ամստերդամում [8, 31]: Հեռանալով Էջմիածնից՝ Աշտարակեցին չդադարեց մտածել Մայր աթոռի և Արարատյան աշխարհի մասին՝ դրանց ազատագրման հույսը կապելով միայն Ռուսաստանի հովանավորության հետ [5, 24]:

1826 թ. սկսվեց ռուս-պարսկական պատերազմը: Ռուսական զորքերի հաջողությունները ոգևորեցին հայ ժողովրդին՝ խորացնելով նրանց հավատը պարսկական տիրապետությունից ազատագրվելու հնարավորության նկատմամբ: Այս ոգևորության հիմնական առաջնորդն ու կազմակերպիչը հենց Ներսես Աշտարակեցին էր: Նա հայրենակիցներին կոչ ուղղեց զենք վերցնելու և պայքարելու Հայաստանի ազատագրման համար՝ հայտարարելով. «Հասել է ժամը, երբ մենք աչքով պիտի տեսնենք Արարատյան աշխարհի ու մեր ազգի ազատագրությունը: Ուռքի կանգնեք, հայոց քաջեր, թոթափեք պարսից լուծը, ուրախացրեք ալեգարդ Մասիսին, մի անգամ արյունով ներկեք հայրենի հողերը և ապա ապրեք ազատ» [6, 84]:

Ն.Աշտարակեցու կոչը մեծ արձագանք գտավ ժողովրդի մեջ, և բազմաթիվ երիտասարդներ պատրաստակամություն հայտնեցին միանալու զինված պայքարին: Սկիզբ դրվեց հայկական կամավորական ջոկատների ստեղծմանը: Նրանք պետք է մասնակցեին ռուսական զորքերի ռազմական գործողություններին, հատկապես Երևանյան արշավանքներին: Կամավորական ջոկատների համար մշակվեց 34 կետից բաղկացած հասուկ կանոնադրություն, ըստ որի՝ 18-30 տարեկան հայ կամավորները կարող էին հավաքագրվել ոչ միայն Անդրկովկասից, այլև Արևելյան և Արևմտյան Հայաստանի տարբեր վայրերից: Կամավորներն ունեին իրենց ազգային դրոշը: Հրամանատարները սպայական աստիճաններ ունեցող հայ զինվորականներ էին, հրամանները տրվելու էին հայերեն լեզվով: Կամավորական այդ ջակատները, փաստո՞ւն, կազմակերպված հայկական զորական միավորներ էին [1, 6; 6, 81]:

Հայ կամավորները մեծ խիզախությամբ մասնակցեցին պատերազմական գործողություններին՝ անձնվիրաբար կռվելով թշնամու դեմ: Ռուսական զորքերի

և նրանց կազմում կռվող հայ կամավորների ուժով շուտով ազատագրվեցին Էջմիածինը, Մարդարապատը, ապա Երևանը:

1828 թ. փետրվարի 10-ին Թուրքմենչայի պայմանագրով ավարտվեց ռուս-պարսկական պատերազմը: Ներսես Աշտարակեցու նախաձեռնությամբ պայմանագրում կետ մտցվեց դեպի Հայաստան պարսկահայերի գաղթը կազմակերպելու վերաբերյալ: Նրա ջանքերով շուրջ 40,000 պարսկահայ գաղթականներ վերաբնակեցվեցին Հայաստանում:

Ներսես Աշտարակեցին չբավարարվեց պարսկահայերի, ապա նաև թուրքահպատակ հայերի՝ հայրենիք վերադառնալու գործը կազմակերպելով: Նրա և մի շարք այլ հայրենասեր գործիչների փափագը նախկինի պես շարունակում էր մնալ Ռուսական տերության օժանդակությամբ Հայաստանի անկախ պետականության վերականգնումը: Նրանք կազմում և ցարական իշխանություններին են ներկայացնում մի նախագիծ, որը, սակայն, մերժվում է: Ազգային խնդիրների վերհանման հողի վրա սրվում են Ներսես Աշտարակեցու և ռուսական պաշտոնյաների հարաբերությունները:

Պատերազմի ավարտից հետո ռուսական բանակի հրամանատար Իվան Պասկևիչը փոխում է իր քաղաքականությունը՝ նպատակ ունենալով Հայաստանը կառավարել առանց հայության և Ն. Աշտարակեցու մասնակցության: Նա ձգտում էր հեռացնել նրան հայաբնակ տարածքներից և արքունիքին ուղարկված նամակներում Աշտարակեցուն մեղադրում էր հայության շահերը պաշտպանելու, Ռուսաստանին միացվելիք հայկական տարածքներն ընդարձակելու մտադրության, Էջմիածնի հարստությունները հայ եկեղեցու տնօրինությանը հանձնելու, պետական գործերին խառնվելու մեջ: Մեղադրանքներից մեկի հիմքում Էջմիածնի վանքը պաշտպանելու համար 200 հոգուց բաղկացած մի զորաջոկատ կազմելու Ներսես Աշտարակեցու ցանկությունն էր, որում Ի. Պասկևիչը տեսնում էր հայկական բանակի ստեղծման փորձ [7, 256; 3, 490]: 1828 թ. մարտի 5-ին Աշտարակեցին զրկվում է Երևանի ժամանակավոր վարչության ղեկավարի պաշտոնից՝ մեղադրվելով Կովկասում ռուսական շահերին վնասելու մեջ: Պասկևիչի հրահանգով և կայսեր համաձայնությամբ Աշտարակեցին նշանակվում է Բեսարաբիայի թեմի առաջնորդ:

Որոշ աղբյուրներ Ներսես Ե Աշտարակեցուն Բեսարաբիայի թեմի առաջնորդ նշանակելը համարում են աքսոր, բայց դա իրականում ավելի հեռու նպատակ էր հետապնդում: Ռուս-թուրքական նոր պատերազմի նախօրեին ռուսական պետությանն անհրաժեշտ էր ստանալ Բալկանյան թերակղզում ապրող հայության աջակցությունը, այդ նպատակով դիտարկվում էր հենց Ն. Աշտարակեցին, ով կարող էր տարածել ռուսական ազդեցությունը հայոց մեջ [2, 359]:

Ներսես Աշտարակեցին ավելի հակված էր իր տեղափոխությունն աքսոր համարելուն: Այն, որ նա նեղսրտած է եղել ռուսական կառավարության այս որոշումից, երևում է Քիշնևում 1832 թվականի մայիսի 16-ին Հարություն Վարդանյանին գրած նրա նամակից: Խոսելով իրեն պատճառված նեղություններից՝ նա հայտ-

նում էր, որ մերժել է նույնիսկ Պետերբուրգ և Մոսկվա գնալու պետական առաջարկները: «Չպետք է զարմանալ թշնամիների կայտառելուն և ճախրելուն. ուռկանը ընկած ձկներն էլ են կայտառում»,– գրել է Ներսես Աշտարակեցին [7, 254]:

Ներսես Աշտարակեցուն Բեսարաբիա ուղարկելը աքսոր չի համարում նաև գեներալ Բենկենդորֆը: Իր նամակում նա նշում էր, որ ցարական կառավարությունը հրավիրում է Ներսես արքեպիսկոպոսին «Բեսարաբիայի թեմ որպես հարակից շրջանների և մարզերում ապրող հայերի թեմակալ առաջնորդ փորձառու և ջանասեր Ձեր հայրենակիցներին վերաբերող հարցերում» [7, 260]: Բենկենդորֆը կոչ է անում զգուշորեն կապ հաստատել և համագործակցել Կ. Պոլսի հայոց պատրիարքի և հոգևորականների հետ: Նամակից ակնհայտ է դառնում, որ ռուսական կառավարությունը նպատակ ուներ ռուս-թուրքական պատերազմում ստանալ ոչ միայն Բեսարաբիայի և Վալախիայի հայության աջակցությունը, այլև Կ. Պոլսի հայոց պատրիարքարանի:

1830 թ. գենարալ Ի. Պասկևիչը ևս մեկ անգամ փորձում է խանգարել Ներսես Ե Աշտարակեցու գործունեությանը: Երբ արդեն ծերացած և տկարացած Եփրեմ կաթողիկոսը հրաժարվում է կաթողիկոսական աթոռից, նշանակվում են կաթողիկոսական նոր ընտրություններ: Ժողովականների մեծ մասը հակված էր Ներսեսի թեկնածությանը, սակայն Ի. Պասկևիչը հրահանգ է տալիս Էջմիածին, որպեսզի ընտրեն հայոց եպիսկոպոսներից մեկին, որը կհամապատասխանի կոմսի պահանջներին, նրան պատրաստել հետագայում կաթողիկոսական գահի վրա բազմելու: Էջմիածնի միաբնակության մեջ «այդպիսի յարմարաւոր անձը միմիայն Յովհաննէս Կարբեցի արքեպիսկոպոսն էր» [2, 526]: 1831 թ. հունիսի 30-ին Թիֆլիսի հոգևոր առաջնորդ Կարբեցի Չովհաննէս արքեպիսկոպոսը կայսերական բարձրագույն հրովարտակով հաստատվում է ամենայն հայոց կաթողիկոս:

Դրանից հետո Ի. Պասկևիչն այլևս չի կարողանում խոչընդոտել Ն. Աշտարակեցու գործունեությանը: Երբ 1843 թ. մահանում է Չովհաննէս Կարբեցի կաթողիկոսը, և նշանակվում են կաթողիկոսական նոր ընտրություններ, «Հնդկական թեմերեն մինչև եւրոպական վիճակները, ուր ուրեք որ հայ ժողովուրդ կը գտնուէր, և այդ միաձայն յայտարարութիւնը Ներսէս Աշտարակեցիի անունը կը կրկնէր» [10, 2570]:

Նոր կաթողիկոս ընտրելու համար 1843 թ. ապրիլի 13-ին հրավիրվում է ընտրողական ժողով, որը «միաձայն, 26 ձայն, կաթողիկոս ընտրեց Ներսէսը» [10, 2571]: Նշենք, որ այս ընտրություններին Ներսես արքեպիսկոպոսը անձամբ ներկա չէր, բայց գրավոր կերպով մասնակցել է:

Ընտրություններից անմիջապես հետո ռուսաց կայսրին ներկայացնում են ընտրության արդյունքները: Կայսրն անմիջապես վավերացնում է ազգային-եկեղեցական ժողովի արժանավոր այս ընտրությունը, ցանկություն է հայտնում անձամբ տեսնել և ողջունել Ներսես Աշտարակեցուն Պետերբուրգում և իր ձեռքով հանձնել կաթողիկոսական ընտրության հաստատման հրովարտակը [4, 26]:

Հունիսի սկզբներին Ներսեսը Քիշնկից շարժվում է դեպի Պետերբուրգ, սակայն առողջական վիճակի վատթարացումը ստիպում է նրան միառժամանակ մնալ Լիպովում: Պետերբուրգ հասնելուց հետո կաթողիկոսի առողջությունը կրկին վատանում է: Քանի որ կայսրը պետք է գնար արտասահման, ուստի ներքին գործերի նախարար Պերովսկուն հանձնարարում է խնամել և առողջացնել նրան: Երեք պալատական բժիշկներ օրական երեք անգամ այցելում էին Ներսեսին՝ շարունակաբար փոխելով բուժման մեթոդները, որոնք արդյունք էին տալիս: «Այնչափ անակնկալ էր Ներսեսի ապաքինիլը, որ մինչև իսկ բժիշկներ կը յայտարարեին թե ասում են որ այժմ հրաշք է...» [10, 2572]:

1843 թ. նոյեմբերի 18-ին տեղի ունեցավ Ներսեսի ընդունելությունը ռուսաց կայսեր մոտ: Ներսեսը կայսեր վրա մեծ տպավորություն թողեց, ինչի մասին է վկայում վերջինիս գրույցը ներքին գործերի նախարարի հետ, որում մասնավորապես ասվում էր. «Ես այսօր շատ հաճելի ունկնդրություն ունեցա, շնորհակալ եմ քեզանից ընտրությանդ համար: Շատ ափսոս, որ հառաջագույն թողած ենք եղել այս արժանավոր և վաստակավոր անձին» [4, 36]:

Դրանից հետո շուրջ 5 ամիս Ներսես Աշտարակեցին մնում է Պետերբուրգում՝ երկու կարևորագույն հարցեր վճռելու, այն է՝ «Ներսեսի վերագրուած հայկական քաղաքական կեանքի մը սկզբնաւորութեան ծրագիրը, և հայոց եկեղեցւոյ դաւանութեան ռուսական կամ որսթոտոքս դաւանութեան հետ համաձայնութիւն» [10, 2575]: Առաջին հերթին ռուսական տերությունը ցանկանում էր համոզվել, արդյո՞ք Ներսեսը հին գաղափարները պահպանում է թե ոչ, և ի՞նչ ուղղությամբ է պատրաստվում գործել, իսկ երկրորդը դավանության խնդիրն էր: Ռուսական տերությունը Ներսեսին առաջարկում է հայոց եկեղեցու դավանաբը փոխել դեպի ուղղափառություն և միավորել հայոց և ռուսաց եկեղեցիները: Մաղաքիա Օրմանյանի վկայությամբ՝ Ներսես Աշտարակեցին ռուսական Սինոդին է ներկայացնում հայ եկեղեցու դավանությունը, ինպես նաև Ներսես Շնորհալու և Գրիգոր Դ Տղայի՝ Հունաց Մանուել կայսրին եկեղեցական միության առթիվ գրված թղթերի ռուսերեն թարգմանությունները, որով դադարում է «Ռուսաց կողմեն հայերը քաղկեդոնիկ դարձնելու միտքն ու ջանքերը»:

Պետերբուրգից Ներսեսը գնում է Մոսկվա, որտեղ եկեղեցական, կրթական, թեմական հարցերի շուրջ հանդիպում է նշանավոր անձանց, այցելում է Լազարյան ճեմարան: Դրանից հետո նա մեկնում է Քիշին, որտեղ մնում է 8 ամիս՝ ամբողջությամբ ապաքինվելու համար:

1846 թ. հունիսի 9-ին Կաթողիկե սբ. Էջմիածնի համազգային մեծ տոնի օրը արտակարգ ու փառահեղ հանդիսավորությամբ Մայր տաճարում կատարվում է Աշտարակեցու կաթողիկոսական օծման և գահակալության հանդիսությունը, ընտրությունից 3 տարի և 2 ամիս անց: Ձեռնադրության հանդիսությանը ներկա էին 14 եպիսկոպոս, 50 վարդապետ, 61 քահանա, 50 սարկավազ [4, 38]:

Ներսեսի համար առաջնային խնդիրներից էր Մայր Աթոռի ներքին գործերը կարգավորումը, քանի որ վանականների շրջանում տարածված էին անօրինու-

թյունները, կաշառակերությունը, ծուլությունը, ուստի «իր առաջն գործն եղաւ անկարգութեանց դարմանին ձեռնարկել» [10, 2583]: Ն. Աշտարակեցին ցանկանում էր վերակազմել Մինոդը՝ համալրելով նոր անդամներով և Մայր Աթոռում հաստատել վանական կառավարչություն: Բացի այդ, նա քայլեր է ձեռնարկում Մայր Աթոռի տնտեսական դրությունը բարելավելու և ռեսուրսները արդյունավետ օգտագործելու ուղղությամբ:

1846 թ. Ներսէսը նորից գնում է Թիֆլիս՝ այնտեղ վերակազմելու առաջնորդական թեմը: Նա միաժամանակ մի շարք քայլեր է ձեռնարկում Ներսիսյան դպրոցը բարեկարգելու առումով և անձամբ ղեկավարում է այն մինչև իր մահը՝ հասցնելով իր զարգացման բարձրակետին:

Տեսնելով Թիֆլիսի և Էջմիածնի տպագրությունների թերությունները՝ Ներսէս Աշտարակեցին Եվրոպայից բերել է տալիս չորս տպագրական մամուլ՝ գրքերի որակը բարելավելու նպատակով [9, 24]:

1848 թ. Ներսէս Աշտարակեցին պաշտոնական դիմում է ներկայացնում ցարական իշխանություններին՝ վերանայելու նոր ընդունված «Պոլոժենիեի» 32-րդ, 71-րդ, 89-րդ և 91-րդ հոդվածները, քանի որ դրանք համարում էր անհամապատասխան հայ եկեղեցու կանոններին և վանական-միաբանական կյանքի սկզբունքներին: Նրա դիմումը մնում է անպատասխան, ուստի իր առաջարկը կրկնում է նաև 1849 թ. և 1850 թ.: Վերջապես պատասխան է ստացվում, որ «Պոլոժենիեի» հոդվածները փոփոխության ենթակա չեն, և վերաքննության ժամանակ այդ հարցը կդիտարկվի [10, 2621]:

Անգամ կյանքի վերջին տարիներին Ներսէս Աշտարակեցին շարունակաբար մտածում էր, թե ինչպես կարող է օգտակար լինել հայ ժողովրդին: Մ. Լորիս-Մելիքյանի հետ զրույցում 85-ամյա հայրապետը նշել է, որ մեռնելուց չի վախենում, բայց չի ուզում մեռնել ոչ թե նրա համար, որ կյանքից էլի ինչ-որ բան վերցնի, այլ որ անելիք շատ է մնացել, ժողովրդին շատ է պարտական [1, 12]:

1857 թ. 86 տարեկանում Ներսէս Աշտարակեցին մահանում է: Ինպես նշում է Մ. Օրմանյանը, առավոտյան կաթողիկոսին գտնում են վախճանված՝ թաց գրիչը ձեռքին, իսկ սեղանին՝ մի թուղթ, որ «Ռուսաց տերութեան ներքին գործոց պաշտօնէին ուղղուած է եղեր, իսկ նիւթը կաթողիկոսական իրաւունքների համար պաշտպանութիւն, գոր կարդացողներ ալ եղեր են» [10, 2624]:

Կաթողիկոսի աճյունը հանդիսավոր պայմաններում բերվում է Էջմիածին և ամփոփվում Մայր տաճարի գավթում: Ներսէս Աշտարակեցու մահը սգում էր ողջ հայությունը: Նա մահանալով անմահացավ բոլոր ժամանակների համար: Հայ ժողովուրդն իր սերն արտահայտեց նրա նկատմամբ ընդամենը երկու բառով, որոնք փորագրված են նրա շիրմաքարին՝ «Պաշտպան հայրենյաց» [6, 89]:

Ամփոփելով աշխատանքը՝ հարկ է նշել, որ Ներսէս Աշտարակեցին հանդիսանում էր իր ժամանակի ամենամեծ ազգային գործիչներից մեկը, ազգանվեր անձնավորություն, ով կարողացավ լուսավորել հայոց հոգևոր-ազգային վերածննդի ճամփան և առաջնորդեց հայ ժողովրդին հենց այդ լույսով:

Ներսես Աշտարակեցու կյանքի ու գործունեության ամբողջական նկարագիրը հնարավոր չէ ներկայացնել մեկ փոքրածավալ աշխատանքում, սակայն, նույնիսկ այս համառոտ ներկայացումից ակնհայտ է դառնում, որ իր գործունեության յուրաքանչյուր շրջափուլում նա որոնել է հայ ժողովրդի ելքն ու փրկությունը: Աշտարակեցին ազգային և եկեղեցական այնպիսի գործիչ էր, որի անհուն եռանդն ու դիվանագիտական հմտությունը սերտորեն կապված էին հայրենիքի բարօրության անկեղծ ձգտման և ազատության համար խորությամբ կշռադատված պայքարի հետ: Նրա անունը հավերժ կմնա հայոց պատմության էջերում՝ որպես ազգի առաջնորդ, ով ոչ միայն զգաց, այլև գործեց՝ հանուն հայ ժողովրդի ապագայի: Սա է Ներսես Աշտարակեցու «Պաշտպան հայրենյաց»-ի կյանքի ու գործի արդիական խորհուրդը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Բարխուդարյան Վլ., Ներսես Աշտարակեցին և նրա ժամանակը, Երևան, Պատմաբանասիրական հանդես, թիվ 3, Գիտություն, 2004, 3-13 էջ:
2. Երիցյան Ա., Ամենայն հայոց կաթողիկոսությունը և Կովկասի Հայք 19-րդ դարում, Թիֆլիս, Մ. Շարաձեի տպարան, 1894, 658 էջ:
3. Երիցյան Ա., Նյութեր Ներսես Ե-ի կենսագրության համար, Թիֆլիս, Համբարձում Էնֆիաջյանցի տպարան, 1877, 28 էջ:
4. Հատիտյան Ա., Ներսես Ե Աշտարակեց», Էջմիածին, «Էջմիածին» հանդես, հատոր Թ, տպարան Հայրապետական աթոռոյ սբ. Էջմիածնի, 1970, 22-40 էջ:
5. Հովհաննիսյան Կ., Էջեր Արևելյան Հայաստանի ազատագրական շարժման պատմությունից, Երևան, Հայաստան, 1981, 116 էջ:
6. Հովհաննիսյան Հ., Ներսես Աշտարակեցի. Պաշտպան հայրենյաց, Էջմիածին, «Էջմիածին» հանդես, հատոր Ե, տպարան Հայրապետական աթոռոյ սբ. Էջմիածնի, 2000, 80-89 էջ:
7. Հովհաննիսյան Հ., Ներսես Աշտարակեցի – Իվան Պասկևիչ հակամարտության հարցի շուրջ, Երևան, «ՎԷՄ» համահայկական հանդես, թիվ 4, 2022, 253-270 էջ:
8. Սարուխանյան Ն., Ներսես Աշտարակեցի – պաշտպան հայրենյաց, Էջմիածին, «Էջմիածին» հանդես, տպարան Հայրապետական աթոռոյ սբ. Էջմիածնի, հատոր Բ-Գ, 1995, 27-44 էջ:
9. Տեր-Աբրահամյան Հ., Ներսես Ե վեհափառ կաթողիկոս Ամենայն հայոց 1843-1857», Սանկտ-Պետերբուրգ, 1868, 32 էջ:
10. Օրմանյան Մ., Ազգապատում, Պէրյուք, Մեւան, հատոր Գ, 1961, 954 էջ:
11. Эзов Г. А. Сношения Петра Великого с армянским народом. Документы. Санкт Петербург, 1898, 512 с.

НЕРСЕС АШТАРАКЕЦИ КАК НАЦИОНАЛЬНЫЙ ДЕЯТЕЛЬ

Даниелян Гаяне

Фонд “ВГУ”,

“История”, 2-й курс

Научный руководитель: К. Гаспарян

Резюме

Ключевые слова: *родина, освободительная борьба, добровольческие отряды, школа, духовная идентичность*

Нерсес V Аштаракети был Католикосом всех армян (1843-1857) и выдающимся национально-духовным деятелем. Он внес значительный вклад в развитие образования, культуры и церкви. Основав Нерсисянскую школу, он способствовал распространению просвещения, а в годы русско-персидских войн боролся за защиту прав армянского народа. Его деятельность сыграла важную роль в сохранении национальной идентичности, сделав его одним из величайших деятелей армянской истории.

NERSES ASHTARAKETSI AS AN ARMENIAN NATIONAL LEADER

Danielyan Gayane

“VSU” Foundation,

“History”, 2nd Year.

Academic Supervisor: K. Gasparyan

Summary

Key words: *homeland, liberation struggle, Volunteer squads, school, spiritual identity*

Nerses Ashtaraketsi served as the Catholicos of all Armenians between 1843 and 1857, and was an outstanding national-spiritual figure. He made a great contribution to the development of education, culture and the church. He founded the Nersisyan school, thus fostering the spread of illumination. He struggled for the rights of the Armenian people during the Russian-Persian wars. His activities played a great role in maintaining the national identity. Nerses V Ashtaraketsi has gone down in history as one of the greatest leaders of Armenia.

Թավադյան Այսա

*Գորիսի պետական համալսարան,
«Պատմություն», 2-րդ կուրս
Գիտական ղեկավար Գ. Շաբունց*

Հանգուցային բառեր. *Խնածախ, պատմություն, մշակույթ, ժառանգություն, հուշարձաններ, եկեղեցի, խաչքարեր*

Խնածախ գյուղը գտնվում է Հայաստանի Սյունիքի մարզում և առանձնանում է իր պատմական ու մշակութային ժառանգությամբ: Այս հողվածի նպատակն է ներկայացնել գյուղի պատմությունը, մշակույթը, բնությունը և ժամանակակից խնդիրները՝ բարձրացնելով համայնքի հանդեպ հետաքրքրությունը և առաջարկելով զարգացման հնարավոր ուղիներ:

Խնածախի կարևոր խնդիրներից է պատմամշակութային վայրերի պահպանությունն ու հանրայնացումը: Գյուղում առկա հնագույն եկեղեցիները, խաչքարերը և հուշարձանները կարիք ունեն վերականգնման և պատշաճ պահպանման: Սակայն ֆինանսավորման բացակայությունը, տեղական ռեսուրսների սղությունը և զբոսաշրջության սահմանափակ զարգացումը խոչընդոտում են այդ գործընթացը: Պահանջվում են ներդրումներ, պետական աջակցություն և համայնքային ներգրավվածություն՝ գյուղի մշակութային ժառանգության պահպանման համար:

Այսօր Խնածախը, ինչպես Հայաստանի շատ գյուղեր, կանգնած է մարտահրավերների առջև, սակայն միևնույն ժամանակ ունի զարգացման մեծ ներուժ: Պատմամշակութային վայրերի պահպանությունը, զբոսաշրջային ներուժի օգտագործումը և ենթակառուցվածքների բարելավումը կարող են նպաստել գյուղի վերածննդին: Բացի այդ, տեղական ինքնակառավարման և համայնքային ծրագրերի խթանումը կարող է մեծ դեր խաղալ Խնածախի ապագայի բարելավման գործում:

Այս հողվածը նպատակ ունի ոչ միայն ներկայացնել գյուղի անցյալն ու ներկան, այլև խթանել քննարկումները՝ ներգրավելով ավելի լայն հանրությանը Խնածախի խնդիրների լուծման գործում և խրախուսելով համայնքի զարգացումը:

Խնածախ գյուղը գտնվում է ՀՀ Սյունիքի մարզում, մարզկենտրոն Կապանից 109 կմ, խոշորացված համայնքի կենտրոն Տեղ գյուղից 17 կմ, իսկ Գորիս քաղաքից 28 կմ հեռավորության վրա: Ծովի մակերևույթից ունի 1380 մետր բարձրություն: Ըստ պատմագիր Ստեփանոս Օրբելյանի հարկացուցակի՝ գյուղը պատմական Հաբանդ գավառի կազմում է՝ 20 միավոր հարկով [3, 399]:

Ինչպես նշում է Մորուս Հասրաթյանը, 13-րդ դարից սկսած Խնածախը դառնում է Սյունիքի առաջնակարգ կենտրոնը (վարչական առումով)՝ զերազանցելով Տաթևին, Տեղին, Գորիս-Վերիշենին և Անգեղակոթին [1, 156]: Հեղինակը մի ծավալուն ուսումնասիրություն ունի՝ նվիրված Քաջաթաղ-Խնածախ բնակավայրերին

[1, 155], այնտեղ ապրած ու մեծ պատմություն կերտած մելիքական տանը, որտեղ հանգամանորեն քննում է մելիքների, նրանց ժառանգների, պատմական այդ ժամանակահատվածում նրանց թողած դերի ու նշանակության մասին: Ըստ փաստերի՝ Քաշաթաղի մելիքական տունը սերում է Վայոց ձորի Պռոշյան իշխանական տոհմից [1, 156];

Հաբանդ գավառում ձևավորված մելիքություններից ամենագորեղը մելիք Հայկազյան տունն է: Այն հիշատակվում է որպես Քաշաթաղի, իսկ ավելի ուշ՝ Խնածախի մելիքություն: 16-րդ դարի առաջին կեսին մելիք Հայկազ Ա-ի որդին՝ Հախնազարն իրենց նստավայրը Քաշաթաղից տեղափոխում է Խնածախ գյուղ, որտեղ և ծավալում է իր հետագա գործունեությունը: Տեղափոխման հիմնական պատճառն այն էր, որ մահմեդական իշխանությունները Քաշաթաղում սկսել էին քնակեցնել քրդական քոչվոր ցեղերի, որի համար էլ հայ մելիքները նման որոշում կայացրին [3, 5]: Գյուղի ձորամիջյան ճանապարհի եզրին պահպանվել է մելիքական ապարանքը, որը 16-րդ դարից մեզ հասած պալատական հազվագյուտ հուշարձան է՝ դարաշրջանին հատուկ հորինվածքով: Ապարանքը հետագայում ժառանգել է մելիք Հախնազարի որդին՝ մելիք Հայկազը (1551-1623 թթ.): Նա վայելում էր շահ Աբաս Ա-ի համակրանքը և ըստ ավանդության շահի կողմից ստացել էր «Օեր առյուծ» մականունը [1, 156]: Ապարանքը բաղկացած է եղել մի քանի շինություններից, որոնցից միայն մեկն է մեզ հասել: Պահպանված շինությունը երկհարկանի է, առաջին հարկի մուտքը հարավից է բացվում ճանապարհի վրա, իսկ երկրորդինը՝ հյուսիսից՝ բակի կողմից: Երկու հարկերն էլ թաղածածկ են: Թաղակիր կամարները, հարավային ճակատի անկյունները, մուտքի, պատուհանների շրջանակները շարված են սրբատաշ բազալտով, իսկ պատերի մնացած հատվածները՝ ձեղքված քարով և կրաշաղախով: Երկու հարկերի հատակագծերն էլ ուղղանկյուն են: Առաջին հարկի դահլիճի չափերն են՝ 3.9մx6, 2մx3.9մ, իսկ երկրորդ հարկինը՝ 3.9մx6, 6մx3.65մ: Ապարանքի պատերն ունեն 1.2մ հաստություն: Խորհրդային տարիներին այն ծառայել է որպես ռադիոհանգույց: Խնածախի մելիքական ապարանքը 16-րդ դարից մեզ հասած պալատական ճարտարապետության հուշարձան է՝ դարաշրջանին հատուկ հստակ հորինվածքով ու անշուք նկարագրով, և Քաշաթաղի ապարանքի հետ ներկայացնում է ուրույն տիպ ու լիջնադարյան մելիքական ապարանքների ձևատեղծման շղթայում:

Խնածախ գյուղի կենտրոնում է գտնվում 1625 թ. կառուցված Սբ. Հռիփսիմե եկեղեցին: Այն բազիլիկ եկեղեցի է: Մուտքերը երկուսն են՝ հարավից և արևմուտքից: 1701 թ.՝ արևմտյան կողմից եկեղեցուն կից, կառուցվել է սրբատաշ բազալտով թաղածածկ բաց գավիթը: Տանիքի վրայի զանգակատուն-աշտարակը կառուցվել է սրբատաշ բազալտով՝ 1905 թ.: Եկեղեցին շարված է ձեղքված քարով և կրաշաղախով, մույթերը, պատուհանների և մուտքերի բացվածքները շարված են սրբատաշ բազալտով: Եկեղեցու և գավթի տանիքները սալարկված են բազալտե սալիկներով: Խորհրդային տարիներին օգտագործվել է որպես պահեստ: Տեղանքի մեծ թեքության հետևանքով՝ հյուսիսային կողմում քիվերը խրվել են հողաշերտի մեջ [1, 158]:

«Բհավերի» մատուռը գտնվում է Խնածախ գյուղից 2 կմ հարավ-արևելք՝

փոքրիկ դարավանդի վրա: Թվագրվում է XIII-XIV դարերով: Արտաքին չափերը կազմում են՝ 3.8X3մ: Շարված է կապտավուն երանգի սրբատաշ բազալտով: Մուտքը արևմտյան կողմից է, պատուհաններ չունի: Մուտքից ձախ՝ պատին հենած է սլաքաձև խորան ունեցող մի սալաքար, մուտքից աջ՝ օվալաձև շրջանակով ու տարբեր չափի խաչաքանդակներով հարդարված մի գեղեցիկ խաչքար: Մուտքի դիմաց, կողք կողքի գտնվում են չորս մեծ սալատապաններ: Մատուռի հարավային կողմում ևս նկատելի են գերեզմանոցի հետքեր:

Մատուռի «Բհավեր» անունը բարբառային հնչողության արգասիք է, որը բնակչության շրջանում առավել հաճախ հնչում է «պհավեր»՝ «բահավոր», «ձեռքին բահ ունեցող» արտահայտություններով: Մատուռի կառուցման մասին պահպանված ավանդագրույցը վկայում է, որ ժամանակին այդ հողակտորը պատկանել է մի հողագործ գյուղացու: Հողագործը արտում ցանքս անելու նպատակով արևի տակ դրված ցորենի պարկը ծածկել է շորով և միայն դրանից հետո սկսել աշխատել: Աննկատ դաշտ է գալիս մանկահասակ որդին, ծածուկ մտնում պարկը ծածկող շորի տակ ու լռում: Երբ հայրը եկել է ցորենի պարկի ետևից, նկատել է, որ շորի տակ ինչ-որ բան է շարժվում: Նրան թվացել է, թե շարժվողը օձ է, և բահով ուժեղ հարվածել է: Այդպես տարաբախտ հայրը սպանել է իր որդուն: Հետագայում նույն տեղում էլ կառուցել է մի մատուռ, որին ժողովուրդը կոչել է «Բհավերի» [2, 120-122]:

1301 թվականի խաչքարը: Խաչքարը կանգնեցված է Մոթալ-դայա բլրի վրա՝ Ջումանց կալում: Խաչքարի համար պատվանդան է ծառայում մեծ անմշակ ժայռաքեկորը:

Եռաբողբոջ վերջավորություններով և արմավագարդ կենտրոնական խաչից ներքև քանդակված են 3 փոքրաչափ խաչեր, իսկ դրանցից ներքև պատկերված են երեք այլ, ավելի մեծ, միաբլթակ վերջավորություններով խաչեր: Վերջիններիս միջև է գտնվում թվականը՝ «Թվ[ին] :ՉԾ: (1301)»: Հիմնական արձանագրությունը գտնվում է եզրագոտու վրա՝ «Կաման ԱՅ, ես՝ Աւքան, կանգնեցի զխաչս ի/ փրկութե[ան] հոգո իմո, յիշեցեք ի ՔՍ »[1, 161]: Խաչքարի պատվիրատուի Օքան անունը Հասրաթյանը նույնացնում է Ուքան անվան հետ և վերագրում Վահրամ Շահունեցու և Գոնցայի կրտսեր զավակի հետ [1, 161]:

1581 թվականի խաչքարը: Խաչքարը կանգնեցված է եղել Ճղացի խութ կոչվող բլրի վրա, ներկայումս տեղում պահպանվել է միայն արձանագիր խաչքարի քիվը: 1985 թվականի մայիսի 10-ին խաչքարը կայծակնահարվել է, իսկ 1987 թվականի մայիսի 10-ին Խաչեր կոչվող հուշարձանից բերվել է այլ խաչքար և տեղադրվել նախորդի տեղում: Խաչքարի ամբողջական արձանագրությունը հրատարակել է Մ. Հասրաթյանը՝ «Ես՝ Հախնագար, կանգնեցի խաչս հարեղբար իմ Ղուլին, թվ[ին] :ՌԼ: (1581)»: Ըստ Հասրաթյանի, խաչքարի պատվիրատու Հախնագարը Մելիք Հախնագարի թոռն է՝ Մելիք Հայկազի առաջին կնոջից ունեցած որդին Աղանի եղբայրը: Իսկ Ղուլին (Ալլահդուլի) Մելիք Հայկազի կրտսեր եղբայրն է [1, 163]:

1601 թվականի խաչքարը: Երրորդ խաչքարը կանգնեցված է Յուղնատու խութ բլրի վրա: Կենտրոնական եռաբլթակ վերջավորություններով խաչից վերև

պատկերված են երկու վարդյակներ, եզրային և ստորին հատվածներում քանդակված են պարզ խաչեր: Հողմահարված արձանագրությունը զբաղեցնում է կենտրոնական խաչից վերև ընկած հատվածը և առաջ եկած քիվը: «Ես՝ Մելիք Ղիմա, կա/նկնեցի Սբ խաչս հ/օրն իմ՝ Գինոսին/ ի :ՌԾԹ: (1601)»: Ըստ Մորուս Հասարթյանի խաչքարի պատվիրատուն Գինոսն է՝ Մելիք Հախնազարի որդին՝ Մելիք Հայկազի եղբայրը [1, 163]:

1620 թվականի խաչքարը: Այս խաչքարը կանգնեցված է գյուղի հյուսիսարևելյան կողմում գտնվող բլրի վրա: Խաչքարն իր հորինվածքային լուծումներով նման է ինչպես նախորդ, այնպես էլ տարածաշրջանի 16-17-րդ դարերի մյուս օրինակներին: Խաչքարի հիմնական առանձնահատկությունը երկլեզու ընդարձակ արձանագրությունների առկայությունն է: Արձանագրության պարսկերեն հատվածը զբաղեցնում է կենտրոնական խաչի եզրային հատվածն ու ստորին հատվածում երեք տող և կարիք ունի առանձին քննության: Հայերեն հատվածը զբաղեցնում է կենտրոնական խաչից վերև ընկած հատվածը՝ «Ի թագաւորութեան Շահ Աբասին ես՝ Աղան, որդի պարոն Հայկազին, կանկնեցի խաչս անուանըն Պողոս վարդապետին բարեխօս. ԱՅ քրիստոնէից. ի թվկս հայոց :ՌԿԹ: (1620). երկրիս մոյլքն պրն Հայկազին էր»: Արձանագրության հեղինակ Աղան Մելիքը Հայկազի որդին է առաջին կնոջից, 1581 թվականի խաչքարի հեղինակ Հախնազարի եղբայրը [1, 164]:

Արցախյան 44-օրյա պատերազմից և դրան հաջորդած սահմանային փոփոխություններից հետո Խնածախ գյուղը եզերող չորս բարձունքների արժեքավոր խաչքարերը հայտնվել են սահմանից 400-960 մետր հեռավորության վրա:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Մ. Հասարթյան, Պատմահնագիտական ուսումնասիրություններ, Երևան, 1985:
2. Մ. Կարապետյան, Հայաստանի հուշարձանները, Երևան, 1999:
3. Ս. Հախվերդյան, Գորիսի ամփոփ պատմություն, Երևան, 2005:
4. Ստ. Օրբելյան, «Պատմություն նահանգին Միսական», Երևան, 1986:

ՀԱՎԵԼՎԱԾ



Նկար 1. Մնածախ գյուղը

Մնածախ գյուղը (նկար 1) գտնվում է ՀՀ Սյունիքի մարզում, մարզկենտրոն Կապանից 109 կմ, խոշորացված համայնքի կենտրոն Տեղ գյուղից 17 կմ, իսկ Գորիս քաղաքից 28 կմ հեռավորության վրա: Ծովի մակերևույթից ունի 1380 մետր բարձրություն:

Հաբանդ գավառում ձևավորված մելիքություններից ամենագորեղը մելիք-Հայկազյան տունն է (նկար 2): Ապարանքը հետագայում ժառանգել է մելիք Հայնազարի որդին՝ մելիք Հայկազը (1551-1623 թթ.): Ապարանքը բաղկացած է եղել մի քանի շինություններից, որոնցից միայն մեկն է մեզ հասել: Պահպանված շինությունը երկհարկանի է, առաջին հարկի մուտքը հարավից է բացվում ճանապարհի վրա, իսկ երկրորդինը՝ հյուսիսից՝ բակի կողմից: Երկու հարկերն էլ թաղածածկ են: Թաղակիր կամարները, հարավային ճակատի անկյունները, մուտքի, պատուհանների շրջանակները շարված են սրբատաշ բազալտով, իսկ պատերի մնացած հատվածները՝ ձեղքված քարով և կրաշաղախով: Երկու հարկերի հատակազծերն էլ ուղղանկյուն են:

Մնածախ գյուղի կենտրոնում է գտնվում 1625 թ. կառուցված Սբ. Հռիփսիմե եկեղեցին (նկար 3): Այն բազիլիկ եկեղեցի է: Մուտքերը երկուսն են՝ հարավից և արևմուտքից: 1701 թ. արևմտյան կողմից եկեղեցուն կից, կառուցվել է սրբատաշ բազալտով թաղածածկ բաց գավիթը: Տանիքի վրայի զանգակատուն-աշտարակը կառուցվել է սրբատաշ բազալտով՝ 1905 թ:



Նկար 2. Մելիք-Հայկազյան տունը



Նկար 3. Սբ. Հռիփսիմե եկեղեցին



Նկար 4. «Բհավերի» մատուռը

«Բհավերի» մատուռը գտնվում է Խնածախ գյուղից 2կմ հարավ-արևելք՝ փոքրիկ դարավանդի վրա: Թվագրվում է XIII-XIV դարերով: Արտաքին չափերը կազմում են՝ 3.8X3մ: Շարված է կապտավուն երանգի սրբատաշ բազալտով: Մուտքը արևմտյան կողմից է, պատուհաններ չունի: Մուտքից ձախ՝ պատին հենած է սլաքաձև խորան ունեցող մի սալաքար, մուտքից աջ՝ օվալաձև շրջանակով ու տարբեր չափի խաչաքանդակներով հարդարված մի գեղեցիկ խաչքար: Մուտքի դիմաց, կողք կողքի գտնվում են չորս մեծ սալատապաններ: Մատուռի հարավային կողմում ևս նկատելի են գերեզմանոցի հետքեր:

1301 թվականի խաչքարը (նկար5) կանգնեցված Մոթալուպա բլրի վրա՝ Ջուսանցկալում: Խաչքարի համար պատվանդան է ծառայում մեծ անմշակ ժայռաբեկորը: Խաչքարի պատվիրատուի Օքան անունը Հասարթյանը նույնացնում է Ուքան անվան հետ և վերագրում Վահրամ Շահունեցու և Գոնցայի կրտսեր զավակի հետ:

1581 թվականի խաչքարը (նկար6) կանգնեցված է եղել Ճղացի խութ կոչվող բլրի վրա, ներկայումս տեղում պահպանվել է միայն արձանագիր խաչքարի քիվը: 1985 թվականի մայիսի 10-ին խաչքարը կայծակնահարվել է, իսկ 1987 թվականի մայիսի 10-ին Խաչեր կոչվող հուշարձանից բերվել է այլ խաչքար և տեղադրվել նախորդի տեղում: Ըստ Հասարթյանի, խաչքարի պատվիրատու Հախնազարը Մելիք Հախնազարի թոռն է՝ Մելիք Հայկազի առաջին կնոջից ունեցած որդին՝ Աղանի եղբայրը:

1601 թվականի խաչքարը (նկար 7) կանգնեցված է Յուզնատու խութ բլրի վրա: Կենտրոնական եռաբլթակ վերջավորություններով խաչից վերև պատկերված են երկու վարդյակներ, եզրային և ստորին հատվածներում քանդակված են պարզ խաչեր: Ըստ Մորուս Հասարթյանի խաչքարի պատվիրատուն Գինոսն է՝ Մելիք Հախնազարի որդին եր՝ Մելիք Հայկազի եղբայրը:

1620 թվականի խաչքարը (նկար 8) կանգնեցված է գյուղի հյուսիս- արևելյան կողմում գտնվող բլրի վրա: Խաչքարն իր հորինվածքային լուծումներով նման է ինչպես նախորդ, այնպես էլ տարածաշրջանի 16-17-րդ դարերի մյուս օրինակներին: Խաչքարի հիմնական առանձնահատկությունը երկլեզու ընդարձակ արձանագրությունների առկայությունն է: Արձանագրության պարսկերեն հատվածը զբաղեցնում է կենտրոնական խաչի եզրային հատվածն ու ստորին հատվածում երեք տող: Արձանագրության հեղինակ Աղան Մելիք Հայկազի որդին է առաջին կնոջից, 1581 թվականի խաչքարի հեղինակ Հախնազարի եղբայրը:



Նկար 5. 1301 թ. խաչքարը



Նկար 6. 1581 թ. խաչքարը



Նկար 7. 1601 թ. խաչքարը



Նկար 8. 1620 թ. խաչքարը

ИСТОРИКО-КУЛЬТУРНОЕ НАСЛЕДИЕ СЕЛА ХНАЦАХ

Тавадян Ася

Горисский государственный университет,

«История», 2-й курс

Научный руководитель: Г. Шабунц

Резюме

Ключевые слова: *Хнацах, история, культура, наследие, памятники, церковь, хачкары*

Село Хнацах – это не только община с богатым историческим и культурным наследием, но и место с большими возможностями развития. Деревня также расположена недалеко от границы, что придает ей стратегическое значение и позволяет ей оставаться в центре исторических событий на протяжении различных периодов. Это обстоятельство придает дополнительную значимость историко-культурным объектам села, делая необходимыми их сохранение и реставрацию

THE HISTORICAL AND CULTURAL HERITAGE OF THE VILLAGE OF KHNATSAKH

Tavadyan Asya

Goris State University, Faculty of Humanities,

“History”, 2nd Year

Academic Supervisor: G. Shabunts

Summary

Key words: *Khnatsakh, history, culture, inheritance, monuments, church, cross stones*

Khnatsakh village is not only a community with a rich historical and cultural heritage, but also a place with great development opportunities. The village is located near the border, which gives it strategic significance and has placed it at the center of historical events during different periods. This circumstance further enhances the importance of the village’s historical and cultural heritage, making its preservation and restoration particularly necessary.

**ՄԱՐԻԱՄ ԻՇԽԱՆՈՒՀՈՒ ԵԿԵՂԵՑԱՇԻՆԱԿԱՆ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ**

Խաչատրյան Լենա

Գավառի պետական համալսարան,

«Պատմություն», 3-րդ կուրս

Գիտական ղեկավար՝ պ. գ. թ. Ք. Հայրապետյան

Հանգուցային բառեր. *Սևանավանք, Վանեվանի վանք, Գեղարքունիք, Մարիամ, իշխանուհի, Շողագավանք, կրթամշակութային կյանք, եկեղեցի:*

Թեմայի արդիականությունը պայմանավորված է նրանով, որ Մարիամ իշխանուհու եկեղեցաշինական գործունեության ուսումնասիրությունը կարևոր է ոչ միայն պատմամշակութային, այլև հոգևոր մշակութային կյանքի ուսումնասիրման տեսանկյունից:

Հոդվածի նպատակն է ներկայացնել Մարիամ իշխանուհու եկեղեցաշինական գործունեությունը պատմական Մեծ Հայքի Սյունիք նահանգում IX-րդ դարի վերջին և X-րդ դարի սկզբին:

Սույն հոդվածում ներկայացված է Աշոտ Առաջին Բագրատունու դստեր՝ Սյունիքի իշխանության գահերեց տիրակալի՝ Վասակ Գաբուռի կնոջ Մարիամ իշխանուհու եկեղեցաշինական գործունեությունը Սյունիք աշխարհի Սևանի ավազանում:

Մարիամ իշխանուհին աչքի է ընկել եկեղեցաշինությամբ, որոնք ոչ միայն ի շնորհակալություն էին Աստծո բարեխնամությանը, այլև կառուցվում էին ի հիշատակ ամուսնու:

Ժամանակի ընթացքում Մարիամ իշխանուհու կառուցած եկեղեցական համալիրները դառնում են դպրության կենտրոններ՝ զարկ տալով կրթամշակութային կյանքին: Առավել աչքի են ընկել Վանեվանի վանքը, Շողագավանքը, Հայրավանքը, Սևանավանքը, Մասրուց Անապատը:

Վանեվանի վանք (նկար 1): Վանեվան վանական համալիրը կառուցվել է 903 թվականին Մարիամ իշխանուհու կողմից: Վանեվան վանական համալիրը գտնվում է Մարտունու տարածաշրջանի Արծվանիստ գյուղից 24 կմ հարավ-արևելք [8; 959]:

Համալիրում աչքի է ընկնում միջին մեծություն ունեցող մի եկեղեցի, որը կոչվում է Սուրբ Գրիգոր: Ներքուստ խաչաձև է, ունի 8 կողմանի գմբեթ: Միակ մուտքը հարավից է [2, 51; 5, 35]:

Վանական համալիրը վնասված է, բայց փլատակների մեծ մասը կանգուն են մինչև օրս: Բացի գլխավոր եկեղեցուց, նրա հարավային մասում կա գավիթ, որի արևելյան մասում կան կառուցված մի քանի խցեր:

Գլխավոր եկեղեցուց բացի մյուսների պատերին արձանագրություններ չկան, և դրանց ժամանակագրությունը անհայտ է: Վանքի գերեզմանատունը գտնվում է արևելյան հատվածում գտնվող բարձր լեռան վրա, այդտեղ մինչև օրս պահպանվել են մի քանի խաչքարեր և գերեզմանաքարեր [1, 119; 6, 182]:



Նկար 1. Վանեվան

Շողագավանք (նկար 2): Շողագավանքը գտնվում է Ձորագյուղ գյուղի արևմտյան մասում, լեզվաձև բլրի վրա, կառուցվել է IX դարի վերջին տասնամյակներում՝ Գեղարքունիի մեծ տիկին, շինարար Մարիամի հովանավորությամբ:

Վանքի կառուցման մասին կա հետաքրքիր պատմություն, ըստ որի՝ Վասակ Գաբուռ իշխանը երիտասարդ հասակում վախճանվում է: Այնուհետև Երանելի Մարիամ տիկինը, նրա դին զարդարելով թագավորական զարդերով, շատ մեծ թափուրով Զաքարիա կաթողիկոսի հետ տանում և թաղում է իր նախնիների գերեզմանոցում: Այս ժամանակաշրջանում Սևանա կղզում հռչակված առաքինությամբ փայլում էր երանելի Մաշտոցը: Մեծ տիկին Մարիամը գալիս է սուրբ Մաշտոցի մոտ, բազում թախանձանքներով նրան համոզում է, և կառուցում է տասնյակ եկեղեցիներ, այդ թվում՝ Շողագավանքը: Շողագավանքն իր անվանումը ստացել է համանուն գյուղի անվանումից: Մարիամը արաբներից գնում է Շողվագ (Շողագա) գյուղը, աշխարհական բոլոր հարկերից ազատում, նվիրում է եկեղեցուն՝ որպես եկեղեցապատկան կալվածք: Վանքը հոգևոր առաջնորդ է ունեցել մինչև XVII դարի վերջերը: Այժմ ավերակ է: Կիսավեր վիճակում մնում են հյուսիսային, արևելյան և արևմտյան պատերը միայն [4, 13; 6, 174]:

Ավերվելուց հետո վանքից շատ քարեր տարել և օգտագործել են Մասրուց անապատի, գյուղական եկեղեցու և այլ շենքերի մեջ, որպես շինանյութ:

Վանքը ունեցել է արձանագրություն, որը հին սովորությամբ, մի տողով տեղավորված է պատերի վերին մասերում: Պատմագիր Ստ. Օրբելյանը օգտա-

գործել է այդ արձանագրությունը Մարիամ իշխանուհու գործունեությունը շարադրելիս:

Եկեղեցու արևմտյան կողմում կա մատուռ, որը, հավանաբար, Մարիամ իշխանուհու դամբարանատեղին է [1, 241; 6, 172-178]:



Նկար 2. Շողագավանք

Մասրուց անապատ (նկար 3): Գեղարքունիքի մարզի նշանավոր հուշարձաններից է Մասրուց Անապատը, որը գտնվում է Մարտունու տարածաշրջանի Ջորագյուղ գյուղում: Եկեղեցու կառուցման ստույգ ժամանակը հայտնի չէ, սակայն իր ճարտարապետական հորինվածքով շատ նման է Սյունյաց աշխարհի IX-X դարերի եկեղեցիներին, հավանաբար կարող ենք փաստել, որ այն կրկին կառուցվել է Մարիամ իշխանուհու կողմից:

Մասրուց անապատի՝ որպես Շողագավանքին պատկանող եկեղեցու, մասին վկայություններ են պահպանվել Ամենայն հայոց կաթողիկոս Սիմեոն Երևանցու «Ջամբո» աշխատությունում [1, 241]:



Նկար 3. Մարուց անապատ

Սուրբ Հայրավանք, Այրիվանք եկեղեցի (նկար 4): Մևանի ավազանի, ինչպես նաև պատմական Հայաստանի ճարտարապետության, հոգևոր կյանքի ու նաև հասարակական հարաբերությունների վերաբերյալ բավականին ուշագրավ սկզբնաղբյուրներից մեկն էլ Հայրավանքի վանական համալիրն է: Հայրավանքի եկեղեցին կառուցվել է 9-րդ դարում Մարիամ իշխանուհու կողմից:

Հայրավանքի վերաբերյալ մեզ է հասել է գեղեցիկ ավանդապատում: Երբ Լենկ-Թեմուրը, Հայաստանը գրավելով ու ժողովրդին կոտորելով հասնում է Այրիվանք, վանքի վանահայր Հովհաննես եպիսկոպոսը, կոտորածը չտեսնելու համար, հրաշագործ մի խաչ ուսին կապած իրեն նետում է ջուրը: Բայց Աստծո կամքով չի սուզվում, այլ վագում է ծովի վրայով: Տեսած հրաշքից ցնցված Լենկ-Թեմուրն իր մոտ է բերում վանահորը և խոստանում կատարել նրա ցանկությունը: Վանահայրը խնդրում է իրեն թողնել այնքան ժողովուրդ, որքան կտեղավորվի վանքի ներսում: Լենկ-Թեմուրը համաձայնվում է: Մարդիկ սկսում են մտնել վանքը: Ամբողջ ժողովուրդը լցվում է, դրսում ոչ ոք չի մնում: Ջարմացած Լենկ-Թեմուրը նկատում է, որ վանքի միջի մարդիկ աղավիններ են դառնում և թռչելով ազատվում են սպանդից: Այդ օրվանից վանքի անունը վանահայր Հովհաննի անունով կոչվել է Հովհաննավանք, Հայր Հովհանու վանք, նաև՝ Մարդաղավնյաց վանք, իսկ հետագայում՝ Հայրավանք:

Այս ավանդությունը գրի է առել կաթողիկոս Ղազար Ա Ջահկեցին, իսկ դեպքերը տեղի են ունեցել 1381-ին [3, 138-139]:

Եկեղեցին ունի երկու մուտք՝ արևմուտքից և հարավից: Անսովոր են նման շենքերի համար արևելյան պատի երկու անկյուններում եղած կրկնահարկ խորանները: Այդ նույն պատի տակ հետագայում զինվել է նաև բարձրություն բեմ՝ ժամասացության համար: Գրավոր տեղեկությունների պակասի և արձանագրություններից փոքր մասի հրատարակված լինելու հետևանքով գավթի շինության ժամանակը թվագրվել է ենթադրաբար և սխալ: Մասնագիտական գրականության մեջ գավթի թվագրվել է XII դարի կառուցում, ավելի որոշ՝ XII դարի երրորդ քառորդին, սակայն արձանագրական փաստերն ապացուցում են, որ այն շինվել է Ներսես և Հովասափ եղբայր առաջնորդների կողմից՝ 1211 թ. եկեղեցու նորոգման ընթացքում կամ նրանից անմիջապես հետո: Գավթի շինված է կատարյալ տեխնիկայով և այժմ էլ, դարեր հետո, մեծ նորոգումների կարիք չունի [1, 67]:



Նկար 4. Հայրավանք

Սևանավանք (նկար 5): Սևանավանքը գտնվում է Սևանի թերակղզու վրա: Սևանավանքը հիմնադրվել է 305 թվականին, երկու եկեղեցիները՝ 874 թվականին: Ըստ ավանդության՝ հեթանոսական սրբավայրերի վայրերում կառուցված եկեղեցիներն օծվել են 305 թվականին Գրիգոր Լուսավորչի կողմից: Վանքն իր ճարտարապետական ձևավորմամբ հիանալի ներդաշնակ է շրջակա բնության հետ, և, ըստ մասնագետների, զուր չէ, որ այն համարվում է միջնադարյան հայկական ճարտարապետության բացառիկ գեղատեսիլ շենքերից մեկը: Սևանավանքը ներառում է պահպանված մի քանի եկեղեցիներ [7]:

Ամուսնու մահից հետո Մարիամ իշխանուհին ամուսնու հիշատակը հավերժացնելու համար կառուցում է երկու եկեղեցի՝ Սրբոց Առաքելոց և Սուրբ Հովհան-

նու Գարապետի: Այս առիթով Ստեփանոս Օրբելյանը նշում է. «Մեծ թագուհին Մարիամ՝ ամուսին Վասակայ Մինույ, գայ առ Սուրբն Մաշտոց. և բազում թախանձանօք ի հաւան աճեալ գնա ձեռն ի գործ արկեալ շինեն զգեղապաճոյճ եկեղեցիսն յանուն Սուրբ Առաքելոց, և զվիսն, յանուն տիրուհւոյ Աստուածածնին. և զարդարեալ մեծամեծ սպասուք կանգնեն գնա տուն Աստուծոյ և բնակարան աստուածազգեաց արանց...» [6, 175]:



Նկար 5. Սևանավանք

Սուրբ Առաքելոց կամ Սուրբ Գարապետ եկեղեցի: Ըստ եկեղեցու պատի արձանագրության՝ այն կանգնեցվել է 874 թվականին՝ Աշոտ Բագրատունի թագավորի դստեր և Սյունյաց անժամանակ հանգուցյալ Վասակ իշխանի կնոջ նախաձեռնությամբ, որտեղ Մաշտոց Ա Եղվարդի կաթողիկոսը հիմնել է նաև Սուրբ Առաքելոց վանական համալիրին կից դպրոց:

Սուրբ Առաքելոց եկեղեցին հատակագծով փոքր կենտրոնագմբեթ, եռաբսիդ, խաչաձև կառույց է: Մուտքը հարավ-արևմտյան է՝ կամարակապ շրջանակով: Եկեղեցուց հարավ-արևելք պահպանվել է ավելի ուշ շրջանի մատուռ:

Սուրբ Աստվածածին եկեղեցին գտնվում է Սուրբ Առաքելոց եկեղեցուց հարավ-արևելք: Այն նույնպես կանգնեցրել է արքայադուստր Մարիամը: Ուստի երբեմն Սևանի վանքը կոչվում է նաև Մարիամաշեն: Աստվածածին եկեղեցին Սուրբ Առաքելոց եկեղեցու ժամանակակից շինությունն է և վերջինիս ավելի մեծ կրկնօրինակն է:

Ջետագայում Սուրբ Աստվածածին եկեղեցու շուրջ կառուցվել են տարբեր օժանդակ շինություններ, իսկ հարավ-արևմտյան կողմում ավելացվել է մատուռ: Արևմտյան կողմում պահպանվել են եկեղեցուն կից գավիթ-նարթեքսի հետքերը: Այսօր Հայաստանի պատմության թանգարանում են գտնվում Սուրբ Առաքելոց եկեղեցու փորագրված փայտյա դռներն ու փորագրված գավիթ խոյակները:

Երկու վանական եկեղեցիներն էլ կառուցվել են կոպիտ սրբատաշ քարերով, մաքուր սրբատաշ քարեր են օգտագործվել միայն ամենակարևոր մասերում:

Վանքի տարածքում պահպանվել են բազմաթիվ գեղատեսիլ խաչքարեր, Սուրբ Հարություն եկեղեցու մնացորդներ և օժանդակ շինություններ: Վանքը բազմիցս թալանվել և ավերվել է մոնղոլների և Լենկթիմուրի արշավանքների ժամանակ: Վանքը սկսել է վերականգնվել այն բանից հետո, երբ 1441 թվականին Էջմիածինը վերահաստատվել է որպես պատրիարքական նստավայր: Վանքի հոգևոր կյանքի վերածնունդին նպաստել է այստեղ վանական դպրոցի բացումը 1990-ականներին:

1445 թվականին Դանիել վարդապետի ջանքերով այստեղ բացվել է աստվածաբանական ճեմարան, որը գործել է որպես Էրմիտաժ՝ ըստ Բարսեղ Կեսարացու և Մարգիս Մաղոսավանեցու կազմած կանոնների: Ուսումնական գործընթացն իրականացվել է Տաթևի համալսարանի ավանդույթներով: Այստեղ իրենց անխոնջ գործունեությամբ աչքի են ընկել այնպիսի հոգևոր և գիտական գործիչներ, ինչպիսիք են կաթողիկոս Հովհաննես Ե Դրասխանակերտցին, Մխիթար Սեբաստացին և այլք [7]:

Այսպիսով, ամփոփելով Մարիամ իշխանուհու եկեղեցաշինական գործունեությունը, կարող ենք փաստել, որ Մարիամ իշխանուհու կառուցած եկեղեցական համալիրները ծառայել են ոչ միայն որպես հոգևոր կենտրոններ, այլև ժամանակի ընթացքում դարձել են դպրության կենտրոններ՝ զարկ տալով կրթամշակութային կյանքին: Դրանք, գտնվելով կարևոր առևտրային ճանապարհների վրա, նպաստել են տարածաշրջանի զարգացմանը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Բարիտուդարյան Ս., Դիվան հայ վիմագրության, Պրակ IV, Երևան, 1973, 526 էջ:
2. Լալայան Ե., Ազգագրական հանդես, հատ. XVII, Երևան, 1908, 170 էջ:
3. Լալայան Ե., Ազգագրական հանդես, հատ. XXIII, համար 2, Երևան, 1912, 242 էջ:
4. Սարգսյան Դ., Շողագա, հատոր 4, Երևան, 2002, 383 էջ:
5. Սմբատյանց Ս., Տեղագիր Գեղարքունի Օովագարդ գավառի, Վաղարշապատ, 1895, 896 էջ:
6. Օրբելյան Ս., Սյունիքի պատմություն, Երևան, 1986, 632 էջ:
7. Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» պետական ոչ առևտրային կազմակերպություն՝ <https://hushardzan.am/archives/11426>, (01.04.2024):
8. «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան, Երևան, 2002, 1070 էջ:

ЦЕРКОВНО-СТРОИТЕЛЬНАЯ ДЕЯТЕЛЬНОСТЬ КНЯГИНИ МАРИАМ

Хачатрян Лена

*Гаварский государственный университет,
“История”, 3-й курс*

*Научный руководитель:
кандидат исторических наук К. Айрапетян*

Резюме

Ключевые слова: *Севанаванк, монастырь Ваневан, Гехаркуник, Мариам, княгиня, Шогагаванк, культурно-образовательная жизнь, церковь*

Целью настоящей статьи является исследование и представление церковно-строительной деятельности княгини Мариам в исторической провинции Сюник Великой Армении в конце IX – начале X века. На основании анализа можно заключить, что церкви и монастырские комплексы, возведённые княгиней Мариам, служили не только духовными центрами, но и со временем превратились в крупнейшие образовательные и культурные центры региона, играя значительную роль в развитии образования и культуры.

THE CHURCH-BUILDING ACTIVITIES OF PRINCESS MARIAM

Khachatryan Lena

*Gavar State University, “History”, 3rd Year
Academic Supervisor: K. Hayrapetyan,
Candidate of Historical Sciences*

Summary

Key words: *Sevanavank, Vanevan Monastery, Gegharkunik, Mariam, Princess, Shoghagavank, educational and cultural life, church*

The aim of the article is to present the church-building activities of Princess Mariam in Syunik province of historical Greater Armenia in the late IX and early X centuries. Based on the analysis, we assume that the church complexes built by Princess Mariam served not only as religious centers but also gradually developed into important centers of learning, fostering educational and cultural life.

**ԿԻԼԿԻԱՅԻ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ
ՆՂՐՅԱՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ**

***Մաղաքեյան Հերիք**
«ՎՊՀ» հիմնադրամ,
«Պատմություն», 4-րդ կուրս
Գիտական ղեկավար՝ պ. գ. թ., դոցենտ Մ. Բրուտյան*

***Հանգուցային բառեր.** Բարձրաբերդ, Կոստանդին II, ռազմական օգնություն, Կղենես VI, մակուքներ, Գապանի բերդ*

XIV դարի 40-60-ական թթ. Կիլիկիայի հայկական թագավորությունը թևակոխեց ներքին և արտաքին քաղաքական բարդ ժամանակաշրջան: Ռազմաքաղաքական այս ծանր պայմաններում շրջահայաց արտաքին քաղաքականություն վարեց Նորյան¹ դինաստիան, որը Հեթումյանների ընտանիքի կողմնային ճյուղերից մեկն էր:

Արդի պատմագրության մեջ Նորյան դինաստիայի կառավարման շրջանին վերաբերող սակավ ուսումնասիրությունների ենք հանդիպում, ուստի այսօր էլ, կարևորելով այդ շրջանի պատմության ճիշտ վերլուծությունը, նպատակադրվել ենք սկզբնաղբյուրների, մենագրությունների և հոդվածների հիմնա վրա սույն հոդվածում՝ մանրամասնորեն լուսաբանել Նորյան տոհմի վարած ռազմական, քաղաքական, դիվանագիտական գործունեությունը, որը նպատակաուղղված էր փրկել Կիլիկիան կործանման բացահայտ սպառնալիքից:

Կիլիկիայի թագավոր Գվիդոն Լուսինյանի (1342-1344 թթ) սպանությունից հետո թագավոր հռչակվեց Նորյան տոհմից՝ Կոստանդին Նորեցին (1345-1363 թթ.) [5, 249-250]: Լուսինյան եղբայրների² սպանության արդյունքում հայ-պապական հարաբերությունների սպասվելիք վատթարացումը կանխելու նպատակով Կոստանդին Նորեցին սկսեց զգուշավոր քաղաքականություն վարել: Գվիդոն Լուսինյանի սպանությունից մի քանի ամիս առաջ նա Հովհաննես Կրակեցի եպիսկոպոսին երկու ասպետների ուղեկցությամբ ուղարկել էր Ավինյոն՝ 1343 թ. Սսի

¹ Նորյանները կամ Նորեցիները սերել են Հեթումյան արքայատան հետ խնամիացած Բարձրաբերդի իշխանական տնից: Եղել են Ճկեր գավառի Նորի բերդի տերը, այստեղից էլ նրանց Նորյաններ պատմական տոհմանունը: Առաջին Նորյաններից էր Կոստանդին իշխանը, որն իրեն համարել է Հեթում I թագավորահայր Կոստանդինի թոռը: Նրա որդիներն էին Վասակը, Հեթումը և Բաղդինը (Պաղտինը): Օշին թագավորի օրոք Հեթումը կարգվել է արքունի ատենապետ, ապա ջամբուլա (հազարապետ), իսկ Օշինի մահից հետո՝ նաև մանկահասակ Լևոն IV թագավորի խնամակալներից մեկը: Հեթումի եղբայր Պաղտինը վարել է մարաջախտության գործակալությունը (1329-1336):

² Խոսքը Գվիդոն և Բոհեմունդ Լուսինյանների մասին է, որոնց սպանությունը Գվիդոն Լուսինյանի վարած լատինամոլ քաղաքականության հետևանքն էր:

ժողովի³ որոշումները Կղեմես VI պապին ներկայացնելու և պապական կուրիայից և արևմտյան երկրներից օգնություն ստանալու ակնկալիքով: Դեսպանները Ավինյոնում էին, երբ ստացան Գվիդոն Լուսինյանի սպանության լուրը: Այն մտահոգեց Կղեմես VI պապին, քանի որ Կիլիկիան Հռոմի վերահսկողության տակ պահելու պապի ամենահարմար թեկնածուն Գվիդոն Լուսինյանն էր: Կղեմես VI-ը Կոստանդին Նորեցուն ճանաչեց հայոց թագավոր և Ավինյոն եկած դեսպանների հետ միասին Կիլիկիա ուղարկեց իր երկու նվիրակներին⁴ կաթոլիկություն ընդունելու պահանջով [15, 32]: Ի պատասխան պապի այդ գործողության՝ Կոստանդին II-ը Ադանայի մի փոքրիկ մատուռից Գվիդոն և Բոհեմունդ Լուսինյանների աճյունները վերահողարկավորեց Տարսուսի Սուրբ Աստվածածին եկեղեցում [3, 88]:

Պապական նվիրակները Կիլիկիայում մնացին ութ ամիս, որի ընթացքում երկրի հոգևոր և աշխարհիկ իշխանության ամբողջ վերնախավը ստորագրություններով և կնիքներով հավատարմության երդում տվեց պապին [2, 45]:

1346 թ., որպես Կոստանդին II-ի դեսպան, Ավինյոն մեկնեց ասպետ Կոստանդին Կարսիլլին, ով Հռոմի պապին ներկայացրեց 1345 թ. ժողովի որոշումը և ռազմական օգնություն խնդրեց 1346 թ. կարամանցիների և մամլուքների կողմից Կիլիկիայի վրա սպասվող արշավանքը կանխելու համար [14, 129]: Պապը համաձայնեց տասներկու հազար ոսկի և հազար ձիավոր տրամադրել Կոստանդին II-ին՝ թագավորության պաշտպանությունը կազմակերպելու համար [1, 559; 3, 89]: 1347 թ. Կոստանդինը նաև նամակագրական կապ հաստատեց Վենետիկի դոժի հետ [1, 559]:

Գահակալման երկրորդ տարում Կոստանդին Նորեցին երկրի պաշտպանության գործում հանդիպեց լուրջ դժվարությունների. 1346 թ. ապրիլին կարամանցի թուրքմենները մամլուքների հետ համաձայնեցված հարձակվեցին Կիլիկիայի հյուսիս-արևելյան շրջանների վրա: Նվաճողական այս արշավանքի նպատակը ռազմավարական մեծ նշանակություն ունեցող Կապանի բերդին⁵ տիրելն էր [3, 92; 9, 469]: Արաբ պատմիչ Աբուլ Ֆիդայի վկայության համաձայն. «Թուրքմենները խաբեությամբ տիրեցին Կապանի բերդին, որը Սսի երկրի ամենագորեղ բերդերից մեկն էր՝ Ռումի երկրին սահմանակից: Այնտեղ գտնվող մարդկանց սպանեցին և գերի վերցրին կանանց ու երեխաներին: Սսի նոր թագավորը փութաց փրկելու բերդը, բայց Իբն Դեղադերը հանկարծակիորեն հարձակվեց հայերի վրա և շատե-

³ Ժողովը հրավիրվել էր Մխիթար Ա Գռներցու և Կոստանդին Նորեցու կողմից Հռոմի պապ Բենեդիկտոս XII-ի ներկայացրած «Հարյուր տասնյոթ մոլորություններ»-ին պատասխանելու համար: Ժողովում մասնավորապես ուշադրություն է դարձվել եկեղեցիների միջև գոյություն ունեցող ծիսաբանական տարբերություններին: Քննարկված մոլորություններից գրեթե բոլորը մերժվել են [11, 340-345]:

⁴ Անտոն Գաետացուն և Հովհաննես Կորոնացուն [16, 32]:

⁵ Բերդը պաշտպանում էր Չահանի հովտի լեռնանցքը, միաժամանակ հանդիսանում էր Սսի բնական թիկունքային ամրություն:

րին սպանեց, իսկ մնացածներին էլ՝ փախուստի մատնեց» [10, 249]: Յոթ ամիս չանցած, օգտվելով թուրքմենների մոտ ծագած անհամաձայնությունից, 1346 թ. աշնանը Կոստանդին II-ը վերստին նվաճեց բերդը [10, 250]: Կապանն այն վերջին ամրություններից էր, որ թագավորության անկումից հետո մնաց հայերի վերահսկողության տակ:

1347 թ. գարնանը մամլուքյան զորքերը, անցնելով սահմանային Ջահան գետը, ներխուժեցին Կիլիկիա: Հայկական զորքերը, դաշնակցած Հռոդոսի հիվանդախնամանների և Կիպրոսի թագավորի հետ, համատեղ ուժերով ետ մղեցին նրանց և վերագրավեցին Այասը [13, 5], որը, սակայն, չկարողացան պահել իրենց ձեռքում:

1349 թ. հայ-մամլուքյան հերթական բախման ժամանակ Կոստանդին II-ը, կրկին օգնություն ստանալով Հռոդոսի ասպետներից, Կիլիկիա ներխուժած հակառակորդի զորքերին պարտության մատնեց, վերջին անգամ անցավ Ջահան գետը, հասավ Ալեքսանդրետ քաղաք՝ գրավելով այն [11, 351]: Կոստանդինին հաջողվեց ոչ միայն հետ մղել մամլուքներին Ջահան գետի աջափնյակից, այլև՝ վերագրավել Ջահանի ողջ հովիտը: Ռազմավարական այս կարևոր նվաճումը սակայն վերջինն էր և՛ Կիլիկիայի Հայոց թագավորության պատմության մեջ, և՛ կաթոլիկ եկեղեցու կողմից ռազմական աջակցության առումով:

XIV դարի 40-50 թթ. մամլուքների հարձակումները Կիլիկիայի վրա դադարեցին՝ պայմանավորված Եգիպտոսում ընթացող գահակալական կռիվներով [9, 465], ինչը Կոստանդին Նորեցու կարճատև հաջողության և ազատագրված շրջանները կարճ ժամանակով պահելու հիմնական պատճառներից մեկն էր: Եթե կառավարման սկզբնական շրջանում Կոստանդին Նորեցուն հաջողվեց վարած ճկուն դիվանագիտության արդյունքում ձեռք բերել Հռոդոսի և Կիպրոսի օժանդակությունը, ապա կառավարման երկրորդ շրջանում՝ 1355-1360 թթ., թագավորությունը եգիպտական մամլուքների դեմ պայքարում միայնակ մնաց: 1355 թ. խաթարելով կարճատև խաղաղ շրջանը՝ Հալեպի մամլուքյան կուսակալի զորքերը ասպատակեցին ողջ Դաշտային Կիլիկիան:

1361 թ. Ստում հրավիրվեց եկեղեցական նոր ժողով, որով չեղյալ հայտարարվեց նախորդ եկեղեցական ժողովներում կաթոլիկ եկեղեցու հետ միավորման և զիջումների մասին բոլոր որոշումները: Այս քայլը ենթադրում էր արտաքին քաղաքականության ուղղության փոփոխություն, ինչը, սակայն, որոշիչ չէր ստեղծված քաղաքական բարդ պայմաններում: Կիլիկիայի հայկական թագավորությունը, որը պարփակվել էր Լեռնային Կիլիկիայի շրջաններում, դատապարտված էր հավասարակշիռ քաղաքականության միջոցով պահպանել ունեցած տարածքները, դրանով էր պայմանավորված Սսի եկեղեցական ժողովի հրավիրումը [3, 102]:

Կոստանդին Նորեցին մահացավ 1362 թ. դեկտեմբերի 21-ին [12, 436]: Ունենալով ռազմական նվազ կարողություններ, այնուամենայնիվ Կոստանդին II-ին

հաջողվեց պետության գոյությունը ևս մի քանի տասնամյակով երկարաձգել: Կոստանդին II-ը արական ժառանգներ չունեի, ուստի մահից հետո նոր գահակալը կրկին պետք է ընտրվեր իշխանական ժողովի որոշմամբ: Մինչև նոր գահակալի ընտրությունը, երկրի պետական կառավարման լծակները կենտրոնացած էին Կոստանդին II-ի կնոջ Մարիոն թագուհու ձեռքում [12, 554-555]: Կիլիկիայում՝ ինչպես Կեռան թագուհու, այնպես էլ Նորեցիների օրոք Մարիոն թագուհու առկայությունն ընդգծում է Կիլիկիայի պետական կառավարման համակարգում կնոջ դերի առկայությունը, ինչը հայոց պատմության մեջ հազվադեպ հանդիպող երևույթ էր:

1365 թ. հայոց թագավոր ընտրվեց կրկին Նորյան իշխանական տնից Կոստանդին Նորեցի շեթումյանը՝ Կոստանդին III-ը [8, 193]: Կոստանդինի մասին տեղեկությունները սակավ են, առկա աղբյուրները փաստում են, որ նա շեթում Նորեցու որդին է [6, 477; 1, 413]: Իր հորեղբորորդու՝ Կոստանդին II-ի թագավորության ժամանակ զբաղեցրել է իշխանաց իշխանի բարձր պաշտոնը: Գալով իշխանության՝ Կոստանդին III-ը փորձել է շարունակել Կոստանդին II-ի քաղաքական գիծը՝ առաջնահերթ համարելով թագավորության սահմանների պաշտպանությունը, կորցրած տարածքների վերագրավումը:

1367 թ. աշնանը Կիպրոսի թագավոր Պետրոս I-ը, ով Հայոց գահի նկատմամբ հավակնություններ ուներ, Հռոդոսի ասպետների օժանդակությամբ, յոթ հազար զինվորներով և հարյուր հիսուն նավով արշավանք կազմակերպեց ծովափնյա Կիլիկիայի, մասնավորապես՝ Այասի վրա: Այսպես համատեղ ուժերով վերագրավելու համար Պետրոս I-ի և Կոստանդին III-ի նախնական պայմանավորվածության համաձայն հայկական զորքերը Պետրոս I-ին պետք է հանդիպեին Այասի մոտ: Հայոց թագավորը 1367 թ. սեպտեմբերին Պետրոսին խնդրել էր համատեղ ուժերով ազատագրել Այասը [16, 211; 8, 197]: Վերջինին հաջողվեց 1367 թ. սեպտեմբերին գրավել նավահանգիստը, սակայն Կոստանդին III-ի զորքերը այդպես էլ օգնության չեկան: Չկարողանալով գրավել միջնաբերդը՝ Պետրոս I-ի զորքը հարկադրված նահանջեց [16, 216]: Կոստանդին III-ի կողմից Պետրոս I-ի հետ ունեցած համաձայնության խախտումը պայմանավորված էր նույն թվականի մայիսին Սսի վրա Տարսուհի Մանչուկ ամիրայի հարձակումով: Թեև Կոստանդին թագավորը, գունդստաբլ Բագուն Բագունենցը և մարաջախտ Լիպարիտը սկզբում կարողացան դիմագրավել Տարսուհի ամիրային, սակայն հետագա անհաջողությունների պատճառով կորցրեցին Ջահան և Սեյհան գետերի միջև եղած նախալեռնային շրջանները [3, 114]:

Կոստանդին III-ի իշխանության վերջին տարիներին հայ ավագանու մեծ մասը Կիլիկիայի հայկական թագավորությունում ծառայած դժվարությունները հաղթահարելու միջոց համարեցին Կոստանդին III-ի փոխարինումը կա՛մ Պետրոս I-ով, կա՛մ էլ եվրոպական մեկ այլ միապետով: 1369 թ. Հալեպի կուսակալ Խոշթիմուրն ավերեց Սսի շրջակայքը, ապա պաշարեց մայրաքաղաքը, սակայն

չկարողացավ գրավել [3, 118]: 1369 թ. Տարսունի ամիրա Շահար օղլի Մանչուկը կրկին արշավեց Կիլիկիայի վրա [8, 197]: Մանչուկի վաթսուհազարանոց զորքը, սկզբում հանդիպելով համառ դիմադրության, պարտություն կրեց, այնուհետև նրանց հաջողվեց ճնշել հայերին, ներխուժել Սիս և ավերվածություններ կատարել [7, 113]: Նույն տարվա դեկտեմբերին Մանչուկը երկրորդ անգամ արշավեց և ասպատակեց թագավորության մնացած տարածքները: Այս անգամ Կոստանդին III-ը չդիմադրեց և ամրացավ Սսի միջնաբերդում, ինչն էլ ֆրանսիացի ժամանակագիր, Լևոն VI-ի խոստովանահայր Շ. Դարդելին հիմք է տվել կարծելու, որ Կոստանդին III-ը երկիրն ու ժողովրդին թողել էր անպաշտպան: Սակայն Կոստանդին III-ի 1367, 1368 և 1369 թվականներին կազմակերպած դիմադրությունը ցույց է տալիս հակառակը:

Կոստանդին III-ը սպանվեց 1373 թ. ապրիլին հայ իշխանների ձեռքով: Նրա սպանությունը ձեռնտու էր հայոց ավագանուն, ով փորձում էր Կիլիկիայի առաջ ծառայած բարդ ու կենսական քաղաքական հարցերը լուծել գահակալի փոփոխմամբ: Թեև Կոստանդին III-ը զավակներ ուներ, սակայն գահաժառանգման հարցը լուծվեց ի վնաս Նորեցիների: Մինչև 1374 թ. հուլիսը Կիլիկիայում կրկին կառավարեց Մարիոն թագուհին, որին հաջորդեց Լևոն VI-ը (1374-1375 թթ.) [4, 35]:

1375 թ. ապրիլին եռամսյա պայքարից հետո Կիլիկիայի թագավոր Լևոն VI-ը Սիսը հանձնեց այն պաշարած Հալեպի ամիրային [4, 37], որով Կիլիկիայի հայկական թագավորությունը անկում ապրեց: Մինչև XV դարի սկիզբը, Կիլիկիայի անկումից հետո Լեոնային Կիլիկիայում պահպանված հայկական իշխանություններից մեկում կառավարեց կրկին Նորյան դինաստիայից՝ Կոստանդին թագավորը [3, 144]:

Այսպիսով՝ Կիլիկիայի պատմության XIV դարի ուսումնասիրման արդյունքում կարող ենք փաստել, որ քաղաքական անկայուն պայմաններում Նորյան դինաստիային հաջողվեց դիվանագիտական գործունեության շնորհիվ թագավորությունն առժամանակ փրկել կործանումից: Նորյան գահակալների վարած արտաքին քաղաքականության, Հռոմի պապի հետ հարաբերությունների բարելավման արդյունքում թագավորությունը մամլուքների դեմ երկարատև հակամարտության ժամանակ ֆինանսական և ռազմական աջակցություն ստացավ:

Մինչև XV դարի սկիզբը, Կիլիկիայի հայկական թագավորության անկումից հետո Լեոնային Կիլիկիայում պահպանված հայկական իշխանություններից մեկում կառավարեց կրկին Նորյան դինաստիայից Կոստանդին թագավորը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ալիշան Ղ. Պ., Միսուան, համագրություն հայկական Կիլիկիո և Լևոն Մեծագործ, Վենետիկ, 1885, 592 էջ:
2. Դարդել Հ., Հայոց ժամանակագրություն, գրաբարից աշխարհաբար թարգմանությունը և առաջաբանը Գ. Բ. Թոսունյանի, Երևան, «Ջանգալ» հրատ., 2013, 168 էջ:
3. Թինոյան Դ. Ֆ., Կիլիկիո հայոց թագավորությունը և ինքնիշխան կազմավորումները 1320-1424 թթ., Երևան, 2011, 193 էջ:
4. Թինոյան Դ. Ֆ., Լևոն Լուզինյանի գահակալումը և Սսի գրավումը, Լրաբեր հասարակական գիտությունների, 2009, № 1, էջ 33-39:
5. Թինոյան Դ. Ֆ., Կոստանդին II-ի կերպարը Ժան Դարդելի ժամանակագրության մեջ, Հայոց պատմության հարցեր, 2005, № 6, էջ 248-256:
6. ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ: Կազմեց Լ. Խաչիկյան, Երևան, ՀՍՍՌ ԳԱ, 1950, 756 էջ:
7. Խաչատրյան Պ. Մ., Հովհաննես Թլկուրացու «Տաղ քաջի Լիպարիտին» պատմական ողբը, Պատմա-բանասիրական հանդես, 1964, № 2, էջ 111-120:
8. Մաթևոսյան Ա. Ս., Հեթում Ախտուց տիրոջ և Վասիլ մարաջախտի ժամանակագրությունները, Պատմա-բանասիրական հանդես, 1963, № 4, էջ 183-202:
9. Միքայելյան Գ. Գ., Կիլիկիայի հայկական պետության պատմություն, Երևան, ԵՊՀ հրատ., 2007 թ., 552 էջ:
10. Նալբանդյան Հ., Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին, Յակուտ պլ Համավի, Աբուլ Ֆիդա, Իբն Շադդադ, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատարակչություն, 1965, 367 էջ:
11. Չամչեանց Մ., Պատմություն Հայոց, սկիզբից մինչև 1784 թ., հատոր Գ, 1984, 1100 էջ:
12. Տեր-Պետրոսյան Լ. Հ., Խաչակիրները և հայերը, հատոր Բ, Երևան, 2007, 672 էջ:
13. Քիրքչեան Վ., Հայկական Կիլիկիա, Նիւ-Եորք, 1919, 75 էջ:
14. Boase T. S. R. The Cilician Kingdom of Armenia. Scottish Academic press, Edinburg. London, 1978, 206 p.
15. Recueil des Historiens des Criosades. Documents Armeniens. Volume 1, Paris, 1863, 859 p.
16. Guillaume de M. La prise d Alexandrie ou Cronique du roi pierre ler de Lusignan, Gene`ve, imprimerie Jules Guillaume Fick, 1877, 394 p.

ВНЕШНЯЯ ПОЛИТИКА КИЛИКИИ ВО ВРЕМЕНА ПРАВЛЕНИЯ ДИНАСТИИ НГРЯН

Магакелян Эрик

Фонд “ВГУ”, «История», 4-й курс

Научный руководитель:

кандидат исторических наук, доцент М. Брутян

Резюме

Ключевые слова: *Бардзраберд, Константин II, военная помощь, Климент VI, мамлюки, Капанская крепость*

В роковой для Киликии период Нгрйская династия вела расчетливую внешнюю политику. Выступив инициатором установления дипломатических отношений с Папой, нгрианцы сумели заручиться военной поддержкой в многолетней борьбе против мамлюков. Цель данной статьи – пролить свет на военно-дипломатическую деятельность правителей Нгри, в результате которой царство было временно спасено от уничтожения.

FOREIGN POLICY OF CILICIA DURING THE REIGN OF THE NGHRIAN DYNASTY

Maghakelyan Herik

“VSU” Foundation,

«History», 4th Year

Academic Supervisor: M. Brutyanyan,

Candidate of Historical Sciences, Associate Professor

Summary

Key words: *Bardzraberd, Constantine II, military aid, Clement VI, mamluks, Kapan fortress*

During a fateful period for Cilicia, the Nghrian dynasty pursued a calculated foreign policy. Acting as the initiators of diplomatic relations with the Pope, the Nghrian rulers succeeded in securing military support in their protracted struggle against the Mamluks. The purpose of this article is to shed light on the military-diplomatic activities of the rulers of Nghri, as a result of which the kingdom was temporarily saved from destruction.

Մինայան Նարինե

*Գորիսի պետական համալսարան,
«Պատմություն», 3-րդ կուրս
Գիտական ղեկավար՝ պ. գ. թ.,
իրավագիտության դոցենտ Մ. Թելունց*

Հանգուցային բառեր. *ինքնուրույն, կողմորոշում, ազատագրություն, հայրենասիրություն, իրավունք, բնական*

18-րդ դարը առանձնահատուկ տեղ է գրավում հայ ազգային-ազատագրական մտքի և շարժման պատմության մեջ:

Պետականության կորստից հետո, թեև երբեմն-երբեմն պոռթկում էին ազատագրական ոգևորումները, բայց միայն 18-րդ դարում հստակորեն մշակվում է հայ ազատագրական միտքը, և փայլուն կերպով դրսևորվում են հայ ազգային-ազատագրական շարժումները:

18-րդ դարի հենց սկզբին Իսրայել Օրին առաջ է քաշում Հայաստանի ազատագրության և պետականության վերականգնման գաղափարը: Իսրայել Օրին Հայաստանի ազատագրության կարևոր նախապայման էր համարում արտաքին օգնությունը, միայն այն տարբերությամբ, որ նա օգնություն էր ակնկալում ոչ թե Արևմուտքի երկրներից, այլ Ռուսաստանից:

Նյութի նպատակն է ներկայացնել Հովսեփ Էմինի կյանքը, նրա ազատագրական պայքարի գործունեության արդյունքները գաղափարները: Էմինը համարվում է հայ ազգային-ազատագրական շարժման հիմնադիրներից մեկը և առաջիններից էր, որ հայ ժողովրդի ազատագրման գաղափարն իր կյանքի նպատակը դարձրեց: Էմինի հիմնական նպատակն էր Հայաստանի ազատագրումն օտար լծից:

18-րդ դարի երկրորդ կեսին հայ ազատագրական շարժումն ու քաղաքական միտքը զարթոնք ապրեց: Ասպարեզ իջավ ազատագրական շարժման գործիչների մի համաստեղություն, որոնք ջանք ու եռանդ չէին խնայում հայ ժողովրդի քաղաքական ինքնագիտակցության արթնացման, պարսկա-թուրքական լծից հայրենիքի ազատագրման և հայկական պետականության վերականգնման համար: Այդ գործիչներից մեկն էր Հովսեփ Էմինը:

Հովսեփ Էմինը համարվում է հայ ժողովրդի «ինքնուրույն կողմորոշման» և ազգային ինքնագիտակցության բարձրացման նախակարապետներից մեկը: Նրա կյանքն ու գործունեությունը նշանակալի դեր են ունեցել հայ ազատագրական շարժման, գաղափարների ձևավորման և ամրապնդման գործում: Նրան կարելի է համարել այն եզակի գործիչներից, ով ոչ միայն արտահայտեց հայ ժողովրդի ազատության և ինքնուրույնության ձգտումը, այլև անմիջապես քայլեր ձեռնարկեց այդ գաղափարները կյանքի կոչելու:

Հովսեփ Էմինի կյանքը

Հովսեփ Էմինը ծնվել է 1726 թվականին Պարսկաստանի Համադան քաղաքում: 1730-ական թվականների հայտնվում է Հնդկաստանի Կալկաթա քաղաքում, որտեղ եկել հաստատվել էր իր ընտանիքը և առևտրով էր զբաղվում: Մանկուց իր ընտանիքից սովորեց հայրենասիրության ու ազգային արժանապատվության գաղափարները: Նրա կրթությունը տեղի ունեցավ բարդ սոցիալական պայմաններում, բայց նա ձգտում էր գիտելիքների՝ հասկանալու համար ժամանակի մարտահրավերները:

Այստեղ սովորելով անգլիական վարժարանում՝ 1750-ական թվականների սկզբին, հակառակ հոր ցանկության, մեկնում է Անգլիա՝ ռազմական ուսումը շարունակելու:

Անգլիայում Էմինը ծանոթանում և բավականին լայն կապեր է հաստատում շատ պետական ու հասարակական գործիչների հետ: Նա մտերմական կապերի մեջ էր Էդմոնդ Բյորքի և Ուիլյամ Ջոնսի, ինչպես նաև արքայական ընտանիքի անդամների հետ [1, 9]:

Այստեղ Էմինը իր ծանոթների օգնությամբ ընդունվում է Կուլվիչի զինվորական ակադեմիան և որոշ ժամանակ հետո մասնակցում է 1756-1763 թթ. յոթնամյա պատերազմին:

Անգլիայում գտնվելու տարիներին Էմինը խորանում է հայ ժողովրդի պատմության մեջ և համոզվում է, որ հայերի համար միակ ճանապարհը անկախությունն է: Նրա համոզմունքները հաստատվում են ֆրանսիական և ամերիկյան հեղափոխությունների գաղափարներով, որոնք ազդում են նրա ծրագրերի վրա:

Ազատագրական պայքարի գաղափարներով հարստացած Էմինը սկսում է հայ ժողովրդին ազատագրելու ծրագիրը: 1751 թվականին նա նորից վերադառնում է Կալկաթա՝ իր գաղափարների շուրջ համախմբելու հայ առևտրականներին և հոգևորականությանը: Սակայն Էմինի ծրագիրը առավել կշիռ է ստանում, երբ նա վերադառնում է Եվրոպա, ապա մեկնում Անդրկովկաս:

Անդրկովկասում նա հանդիպում է Վրաստանի Հերակլ 2-րդ թագավորին, ում աջակցությամբ փորձում է հայերին միավորել միասնական բանակի մեջ: Էմինը առաջարկում էր հայերին և վրացիներին միավորվել և համատեղ ուժերով ապստամբել օտար տիրապետողների դեմ: Սակայն այստեղ Էմինը բախվում է ինչպես արտաքին, այնպես էլ ներքին խոչընդոտների՝ հայ բարձրաստիճանների անհամախմբվածության պատճառով:

Չնայած իր ջանքերին՝ Էմինին չի հաջողվում ամբողջությամբ իրականացնել իր ծրագիրը: Նա շարունակաբար հուսախաբ է լինում հայ իշխանությունների և օտար տերությունների դիմադրության պատճառով: Օսմանյան կայսրության և Պարսկաստանի հարաձուև ճնշումների ներքո հայության համախմբումը և պայքարը դառնում է դժվարին: Նա ստիպված է լինում վերադառնալ Հնդկաստան՝ չկարողանալով գործնականում իրագործել իր հայրենասիրական ծրագրերը: Չնայած դժվարություններին՝ Էմինը չի հանձնվում և շարունակում է հայ համայնքների հետ աշխատել՝ հույս ունենալով նրանց համախմբել: Նա մեծ ազդե-

ցույց տալու է ունենում հայ երիտասարդների վրա, ովքեր նույնպես սկսում են ավելի մեծ ուշադրություն դարձնել ազգային ինքնության պահպանմանը:

Ազգային ինքնության պահպանման գաղափարները, որոնք Էմինը փորձում էր սերմանել, հետագայում ավելի շատ զարգացան և դարձան հիմք հայ ազատագրական շարժման համար: Նա մատնանշում էր, որ անհրաժեշտ է ներքին կազմակերպվածություն և համախմբվածություն՝ հաջողության հասնելու համար:

Էմինի ազգային ինքնություն կողմնորոշման և անկախության գաղափարը

1759 թվականի վերջերին և 1760 թվականին Էմինը գտնվում է Հայաստանում, հանդիպումներ ունենում հայ գյուղացիների, հոգևորականների ու առևտրականների հետ և ամենուրեք քարոզում է այն միտքը, որ պետք է նախապատրաստվել զինված ապստամբությամբ թոթափելու թուրք փաշանների ու պարսիկ խաներ ծանր լուծը:

Նրա գաղափարները հենվում էին այն համոզմունքների վրա, որ հայ ժողովուրդը պետք է ստանա իր ազգային ինքնորոշման իրավունքը և ազատվի օտարների ճնշումից իր ուժերով:

Էմինը մեծապես ազդված էր եվրոպական լուսավորական շարժումից, որի հիմնական գաղափարներից մեկն ինքնորոշման իրավունքն էր: Նա փորձել է այս գաղափարները տարածել նաև հայկական իրականության մեջ՝ կապ հաստատելով հայկական համայնքների հետ և գորակցություն ստանալու նպատակով ուղևորություններ կատարելով Հնդկաստան, Ռուսաստան և եվրոպական տարբեր երկրներ:

Հովսեփ Էմինը որպես «բնական իրավունքի» դպրոցի հիմնադիր

Հովսեփ Էմինը համարվում է բնական իրավունքի հայկական դպրոցի սկզբնական հիմնադիրներից մեկը: 18-րդ դարում, եվրոպական լուսավորական գաղափարների ազդեցության ներքո, Էմինը հանդես եկավ ազգային-ազատագրական պայքարի և հայ ժողովրդի ինքնորոշման իրավունքների պաշտպանության դիրքերից՝ միտված դեպի հայերի ազատագրումը օտար տիրապետությունից: Բնական իրավունք հասկացությունը այն ժամանակ ընդգծում էր, որ յուրաքանչյուր մարդ ի ծնե ունի ազատության, կյանքի և սեփականության իրավունք, որոնք չեն կարող խախտվել այլ պետության կամ այլ իշխանությունների կողմից: Էմինը այս գաղափարները տարածեց հայկական իրականության մեջ՝ պնդելով, որ հայ ժողովուրդը նույնպես ունի ազատ ապրելու և իր ճակատագիրը ինքնուրույն տնօրինելու իրավունք:

Քննարկելով Էմինի քաղաքական, պետաիրավական հայացքները՝ նրա մտածողության մեջ բացակայում էր հստակ պատկերացումը պետության տեղի, ձևի և կառուցվածքի մասին:

Հ. Գաբրիելյանը իր «Հայ փիլիսոփայական մտքի պատմություն» աշխատությունում պաշտպանում է այն միտքը, որ Էմինը հանրապետական կարգի կողմնակիցն է, և գրում է, որ շարունակելով Էմինի գիծը՝ Բաղդամյանը, Շահամիրյանը ուշադրություն էին դարձնում Հայաստանում հանրապետական կարգերի հաստատմանը: Իր կենսագրության մեջ, ընկերների և ծանոթների հղած նամակներ-

րում նա ոչ մի անգամ չի անդրադարձել, թե պետության ինչպիսի ձև է ցանկանում, ըստ տիպի և կառավարման և՛ ձևի, իրավունքի, դրա փոխարեն նա մատնանշում է կոնկրետ պետություն, որի կառուցվածքն ու օրենքները ինքը հավանում է: Այդ պետությունը Անգլիան է: Անգլիական կարգերը և օրենքները սկզբից մինչև վերջ մնացին Էմիլի քաղաքական իդեալը: Նա գրում է. «Ես որոշեցի գնալ Անգլիա, որպեսզի տեսնեմ իմաստուն օրենքների և օգտակար կանոնների եվրոպական հրաշալի դրությունը» [1, 67]:

Հովսեփ Էմիլը բնական իրավունքների հայկենտրոն դպրոցը զարգացնելու համար առաջարկում էր կիրառել 3 հիմնական սկզբունք՝

1. **Ազգային ինքնորոշում**՝ հայ ժողովրդի իրավունքը իր ճակատագիրը տնօրինելու և անկախ պետականություն ունենալու հարցում:

2. **Անձնական ազատություն** և պաշտպանություն՝ անհատական իրավունքների պաշտպանություն, որոնք պետք է լինեն անվերապահ և չենթարկվեն օտար իշխանությունների ճնշմանը:

3. **Համախմբում և միասնականություն**՝ հայկական համայնքների միավորումը ընդհանուր նպատակի շուրջ՝ ազգային ազատագրական պայքարի միջոցով:

Հովսեփ Էմիլի գաղափարները և գործունեությունը հիմք են հանդիսացել այնպիսի հայ գործիչների համար, ովքեր հետագայում շարունակեցին պայքարել Հայաստանի անկախության և ազգային ինքնորոշման համար: Նրա գրքերը, հատկապես «Հովսեփ Էմիլի կյանքը և արկածները» գիրքը տարածել են այս գաղափարները, և նրանց հիման վրա ձևավորվել է ազգային ազատագրական պայքարի հայկենտրոն տեսլականը, ինչը դարձավ ուղենիշ հայ ազգային շարժման համար:

Ամփոփելով Էմիլի գործունեության և հայացքների քննարկումը՝ կարող ենք նշել, որ.

1. Հովսեփ Էմիլը 18-րդ դարի հայ առաջադեմ և ինքնատիպ մտածող և քաղաքական գործիչ էր: Նա առաջիններից էր, որ իր ժողովրդի ազատագրության խնդիրը կապեց միայն ու միայն այդ նույն ժողովրդի ինքնագործունեության հետ՝ գտնելով, որ միայն սեփական ուժերով կարելի է ձեռք բերել ազատ ու անկախ պետություն: Նա ասում էր, որ ոչ մի ուրիշ պետության հետաքրքիր չէ մեկ այլ պետությանը ինքնուրույնություն շնորհելը, նրանց բոլորին հետաքրքրում են միայն ու միայն իրենց ներքին ու արտաքին նվաճողական շահերը:

2. Էմիլը մտածող էր դաստիարակված 18-րդ դարի առաջադիմական գաղափարներով, և դրանցով էր առաջնորդվում իր պրակտիկ գործունեության մեջ: Իր գաղափարները նա քարոզում և տարածում էր՝ ձգտելով դրանց նյութական ուժ հաղորդել: Այս իմաստով նա միակն էր Իսրայել Օրուց հետո, որը հետևողական գործունեություն էր ծավալել իր քաղաքական ծրագրերի իրականացման համար: Այս ամենի հետ մեկտեղ Էմիլի առաջադրած բնաիրավական տեսական դրությունները ընդհանուր հիմք, խթան հանդիսացան առաջադիմական քաղաքական-իրավական երկերի համար, ինչպիսիք են «Ռոզայթ փառացը» և «Նոր տետրակ, որ կոչի յորդորակ»-ը:

3. Էմիլի կարևոր ծառայություններից է այն, որ նա գործնական մակարդակի

վրա դրեց հայ-վրացական դաշինքի գաղափարները: Էմինը այդ դաշինքը համարում էր հիմնական տարր, օտար պետության կողմից Հայաստանի ազատագրման համար և մինչև վերջ մնաց իր կարծիքին, երբ նույնիսկ Վրաստանի հետ դաշինքը չիրականացավ:

Էմինի համար Վրաստանը, իր թագավորով հանդերձ, օտարի լծի տակ գտնվող, օտարին ենթակա, օտարի կողմից ճնշվող ու շահագործվող միապետություն էր, որը հայոց պես կարիք ուներ ազատագրվելու և անկախ դառնալու իր սեփական ուժերով:

Հովսեփ Էմինի ազատագրական գաղափարները

1. Հովսեփ Էմինը հավատում էր, որ հայերը պետք է վերականգնեն իրենց երկիրը՝ օգտագործելով սեփական ուժերը և դիվանագիտական կապերը:
2. Նա նշում էր՝ ազգային ինքնության և մշակութային արժեքների պահպանումը կարող է ապահովել ազգային ազատագրությունը:
3. Ազատության գաղափարները նա տեսնում էր համաշխարհային գաղափարների հենքի վրա:

Աշխատանքը Հնդկաստանում

Հնդկաստանում Էմինը կապ է հաստատել հայ համայնքի հետ, որը ֆինանսապես օժանդակում էր Հայաստանի ազատագրությանը: Նա հանդիպումներ էր կազմակերպում հայ գործարարների հետ, ովքեր նույնպես հետաքրքրված էին ազգային հարցերի առաջխաղացմամբ: Հնդկաստանում բնակվող հայ համայնքի գործիչները աջակցում էին Էմինին՝ հուսալով, որ նրա գաղափարները կարող են Հայաստանին օգնել ազատագրվելու: Հնդկահայ համայնքի անդամներին կոչ էր անում ֆինանսապես և գաղափարապես աջակցել հայությանը ազատագրական պայքարին՝ Օսմանյան և Պարսկական պետությունից դուրս գալու նպատակով:

Հնդկաստանում գտնվելու ժամանակ Էմինը զբաղվում էր իր կյանքի հիշողությունների՝ «Հովսեփ Էմինի կյանքը և արկածները» ստեղծագործության գրառմամբ, որտեղ արտահայտում էր իր գաղափարներն ու ծրագրերը:

Հնդկաստանում գտնվելու ժամանակ նա փորձեց աջակցություն ստանալ բրիտանական կառավարման շրջաններում՝ հայ զինվորական ուժեր ստեղծելու համար: Նա փորձեց բրիտանական ռազմական ուժերի հետ հարաբերություններ հաստատել՝ փորձելով նրանց զիտելիքները և աջակցությունը ծառայեցնել հայերի ազատագրական պայքարին:

Էմինը Հնդկաստանը դիտում էր որպես կարևոր կենտրոն, որտեղից հնարավոր էր կազմակերպել միջազգային աջակցություն: Նա փորձեց հայության խնդիրները ներկայացնել նաև բրիտանական կառավարությանը, որը Հնդկաստանում ուներ մեծ ազդեցություն:

Կալկաթայում Էմինը կապեր էր հաստատում տեղի առևտրական հայ ընտանիքների հետ, որոնք ակտիվ դերակատարում ունեին ինչպես Հնդկաստանում, այնպես էլ միջազգային առևտրում: Չնայած հաջողություններին՝ Էմինը բախվում

էր նաև ներքին անհամաձայնությունների և քաղաքական անտարբերության:

Ի տարբերություն Կալկաթայի՝ Մադրասում Էմինը համեմատաբար ավելի ակտիվ մշակութային և քաղաքական գործունեության մեջ էր գտնվում: Էմինը շփվում էր Շահամիր Շահամիրյանի և նրա գաղափարակիցների հետ: Շահամիրյանը մեծ դեր է ունեցել հայ համայնքում ազգային-ազատագրական գրականության և ծրագրերի մշակման համար, որը նպաստեց Մադրասի խմբակի գաղափարների համար, ինչպիսին էր «Որոգայթ փառաց» նախագիծը:

Էմինի աշխատանքը Հնդկաստանում հայ ժողովրդի պատմության կարևոր էջերից մեկն է, քանի որ նա դարձավ այն կամուրջը, որը միավորում էր հայոց սփյուռքը ազատագրական պայքարի գաղափարի շուրջ: Նրա գործունեությունը կարևոր ազդեցություն ունեցավ մի շարք առումներով: Նա տարածեց ազգային-ազատագրական գաղափարները հնդկահայ համայնքում, ինչն ազդեց Մադրասի խմբակի գործունեության համար: Էմինի ջանքերը բարձրացրին Հայաստանի ազատագրության հարցը միջազգային մակարդակում:

Գրական ժառանգությունը

Հովսեփ Էմինի գրական գործունեությունը ու նրա թողած ժառանգությունը կարևոր նշանակություն ունեն ոչ միայն հայ ազգային-ազատագրական շարժման պատմության, այլև հայ ժողովրդի մշակութային ու գրական զարգացումների տասանկյունից: Նրա ամենակարևոր աշխատանքը «Հովսեփ Էմինի կյանքը» ինքնակենսագրական գիրք է, որը ոչ միայն պատմական աղբյուր է, այլև քաղաքական ու փիլիսոփայական աշխատություն: Էմինի այս գիրքը կարևոր աղբյուր է 18-րդ դարի հայ ազատագրական շարժման պատմության մեջ: Այն ընդգրկում է ինչպես նրա անձնական փորձառությունները, այնպես էլ պատկերում է ժամանակի քաղաքական և հասարակական միջավայրը: Գրքում ներկայացված են նրա հանդիպումները եվրոպական քաղաքական գործիչների հետ, ինչպես նաև նրա ջանքերը՝ հայ ժողովրդի ազատագրության համար դաշնակիցներ որոնելու համար:

Էմինի գործունեությունը և գրական ժառանգությունը ներշնչանքի աղբյուր են դարձել հայ գրողների և պատմաբանների համար: Օրինակ՝ Էդուարդ Ավագյանը գրել է «Մի կյանքը քիչ է» վեպը, որը նվիրված է Հովսեփ Էմինի կյանքին և գործունեությունը:

Հովսեփ Էմինը սկսել է գրել իր ինքնակենսագրությունը 1770-ական թվականներին՝ Հնդկաստանում գտնվելու ժամանակ: Այն գրել է անգլերեն՝ նպատակ ունենալով այն հասանելի դարձնել եվրոպացի քաղաքական և մտավորական շրջանների լայն լսարանին: Գիրքը բաղկացած է մի քանի մասից՝

1. Մանկությունն ու երիտասարդություն,
2. Կրթությունը և եվրոպական շրջագայությունը,
3. Հնդկաստանում գործունեությունը,
4. Ազատագրական ծրագրերը և գործունեությունը:

Էմինի ստեղծագործությունները մեծապես նպաստեցին հայ ազգային-ազատագրական շարժման գաղափարների վրա:

«Armenians must learn to rely on their own strength rather than hope for salvation from foreign power». (Հայերը պետք է սովորեն ապավինել իրենց սեփական ուժերին՝ այլ ոչ թե փրկություն ակնկալեն օտար ուժերից):

Պայքարի ծրագրի ստեղծումը

Էմինը մշակեց հայոց ազատագրական շարժման ռազմավարություն, որը ներառում էր հայ զինվորական ուժերի ստեղծում՝ օսմանյան և պարսկական տիրապետությանը դիմակայելու համար, գազութահայերի ֆինանսական և կազմակերպչական ներուժի օգտագործում և միջազգային աջակցություն հայ ժողովրդին:

Հովսեփ Էմինը համոզված էր, որ հայ ժողովուրդը կարող է դուրս գալ օպար լծից միայն սեփական նախաձեռնությամբ և ինքնակազմակերպմամբ: Նրա գաղափարների հիմքում ընկած էր հետևյալը՝

1. Ազգային ինքնագիտակցություն. այսինքն՝ Էմինը կարծում էր, որ հայ ժողովրդի մեջ պետք է արթնացնել սեփական պատմությունը:

2. Ազգային բանակի ստեղծում՝ Հայաստանի ներսում կազմակերպել ռազմական ուժեր, որոնք պետք է պայքարեն թուրքական ու պարսկական տիրապետության դեմ:

3. Կրթություն. Էմինը գտնում էր, որ հայ երիտասարդները պետք է ստանան ժամանակակից կրթություն, որպեսզի կարողանան առաջնորդել ապագա պայքարը:

Հովսեփ Էմինը կարևորում էր եվրոպական պետությունների՝ հատկապես Անգլիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի աջակցությունը: Նա հավատում էր, որ այդ պետությունները կարող են ռազմական և քաղաքական օգնություն տրամադրել Հայաստանին ազատագրման գործում:

Չնայած Էմինի նախագծերը չիրականացվեցին իր կյանքի ընթացքում, սակայն նպաստեցին հայ ժողովրդի ազգային ինքնության և ազատության գաղափարների տարածմանը: Նրա գաղափարներն ու աշխատությունները դարձան օրինակ հայ ազգային գործիչների համար, որոնք 19-րդ դարում շարունակեցին պայքարը Հայաստանի անկախության համար: Սակայն իր գործունեության ընթացքում նա բախվեց մի շարք դժվարությունների, ինչպիսին էր գաղթօջախների համայնքների պառակտվածությանը և անտարբերությանը, ինչպես նաև ֆինանսական և ռեսուրսային սահմանափակումները:

Հովսեփ Էմինի գործունեությունը Անդրկովկասում

Հովսեփ Էմինի գործունեությունը Հայաստանում նշանավորում է նրա կյանքի ամենակենսական և պայքարի առումով ամենակարևոր փուլը: Նրա նպատակն էր ոչ միայն տեսականորեն քարոզել հայոց ազատագրության մասին, այլև գործնական քայլերով կազմակերպել ազգային պայքար: Սակայն իր ջանքերը հաճախ հանդիպում էին բարդությունների: 1763 թվականին գալով Հայաստան՝ նպատակ ուներ իր տեսական ծրագրեր իրականացնել գործնական դաշտում: Նա ուղևորվեց Ղարաբաղ՝ հանդիպելու տեղի հայ մելիքներին և նրանց հետ քննարկելու ազգային բանակի ստեղծման և անկախության կազմակերպման հարցը:

Հանդիպելով մելիքներին՝ նա առաջարկեց միավորվել, ստեղծել միասնական հայկական բանակ և սկսել հակաթուրքական ընդվզում: Մակայն մելիքներից շատերը անհավատորեն մոտեցան նրա գաղափարներին՝ համարելով, որ օտար տերությունների աջակցությունը հուսալի չէ, և իրենք չունեն բավարար ուժ այդպիսի մեծ ծրագրերի համար:

Միլիքների միջև հակասությունները խոչընդոտեցին Էմինի ծրագրերի իրականացմանը: Որոշ մելիքներ նախընտրում էին պահպանել իրենց անձնական իշխանությունը, քան միավորվել մեկ մեծ նպատակի շուրջ: Մելիքներից Մելիք Շահնագարյանը, ով գաղտնի համագործակցում էր թուրքական իշխանությունների հետ, խոչընդոտեց Էմինի գործունեությունը: Նա ոչ միայն չաջակցեց Էմինի ծրագրերին, այլ նա փորձում էր վնասել նրան:

Հովսեփ Էմինը փորձեց համագործակցել նաև Վրաց թագավոր Հերակլ II-ի հետ: Հանդիպելով Հերակլ II-ի հետ՝ Էմինը առաջարկեց համատեղ ծրագրեր՝ Կովկասի ժողովուրդների միասնական պայքար կազմակերպելու համար: Չնայած հետաքրքրությանը՝ Հերակլը չէր վստահում Էմինի հնարավորություններին և աջակցությունը սահմանափակեց միայն խորհրդատվությամբ:

Էմինը հանդիպումներ ունեցավ նաև տեղական ղեկավարների հետ: Նա այցելեց տարբեր շրջաններ, խոսեց մարդկանց և իշխանավորների հետ: Նրա նպատակն էր համախմբել նրանց ընդհանուր գաղափարների շուրջ:

Չնայած շատ ու շատ ջանքերին՝ Էմինի ծրագրերը լիարժեք իրագործվել չկարողացան: Դրա հիմնական պատճառներն էին՝ ներքին պառակտվածությունը հայոց իշխանությունների և հոգևոր առաջնորդների միջև, ինչպես նաև արտաքին ուժերի անտարբերությունը և ռեսուրսների բացակայությունը:

Էմինի ծրագրերի արդյունքները

Չնայած նրան, որ Հովսեփ Էմինը չհասավ իր հիմնական նպատակին՝ Հայաստանի ազատագրությանը, սակայն նրա գործունեությունը նշանակալի ազդեցություն ունեցավ.

1. Ազգային ինքնագիտակցության ձևավորում,
2. Կապեր եվրոպական պետությունների հետ,
3. Մաղրասի խմբակի վրա ազդեցությունը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Թելունց Մ., Հայ ազգային-ազատագրական շարժումը XVIII դարի երկրորդ կեսին և իրավաքաղաքական միտքը, Երևան, «Գիտություն» հրատարակչություն, 1995:
2. Հովսեփ Էմինի կյանքը և արկածները, Բեյրութ, 1958:

ЖИЗНЬ И ДЕЯТЕЛЬНОСТЬ ОВСЕПА ЭМИНА

Минасян Нарине

Горисский государственный университет,

«История», 3-й курс

Научный руководитель: кандидат исторических наук,

доцент М. Телунц

Резюме

Ключевые слова: *независимый, ориентация, освобождение, патриотизм, право, естественный*

Деятельность Овсеп Эмина, несмотря на отсутствие немедленных результатов, оказала значительное влияние на развитие армянских национальных движений. Его усилия показали, что национально-освободительная борьба требует не только военной силы, но и политической подготовки, национального единства и внешней поддержки. Литературное наследие Эмина, в частности «Автобиография», стало ценным источником по истории Армении и освободительного движения, а идеи и программы Эмина оставили значительное наследие для армянского народа.

THE LIFE AND ACTIVITY OF HOVSEP EMIN

Minasyan Narine

Goris State University,

“History”, 3^d Year

Academic Supervisor: M. Telunts,

Candidate of Historical Sciences, Associate Professor

Summary

Key words: *independent, orientation, liberation, patriotism, right, natural*

The activities of Hovsep Emin, despite yielding no immediate results, had a profound impact on the development of Armenian national movements. His efforts demonstrated that a successful national liberation struggle requires not only military strength but also political preparation, national unity, and external support. Emin's literary legacy, particularly his Autobiography, became a valuable source for the history of Armenia and its liberation movement, while his ideas and programs left a lasting imprint on the Armenian people.

Նիկողոսյան Էրիկ

«ՎՊՀ» հիմնադրամ,

«Պատմություն», 2-րդ կուրս

Գիտական ղեկավար՝ պ. գ. թ., դոցենտ Մ. Բրուտյան

Հանգուցային բառեր. Շահ-Աբաս, թուրք-պարսկական պատերազմ, Երևանի բերդի պաշարում, հայերի բռնագաղթ, «այրված հողի» մարտավարություն, հայ առևտրականներ և արհեստավորներ, Նոր Ջուղա բնակավայրի հիմնումը

Թեմայի արդիականությունը. Հայոց պատմության էջերում կան պատմական իրադարձություններ, որոնք ևս մեկ անգամ կարիք ունեն ուսումնասիրման հատկապես մեր օրերում: Դրանցից մեկը Շահ-Աբասի բռնագաղթն է: Նմանօրինակ պատմական իրադարձությունները պետք է մեր մեջ արթուն պահեն այն գաղափարը, որ առանց պետականության հայ ժողովուրդը կրկին հայտնվելու է այն նույն կարգավիճակում, ինչպես Շահ-Աբասի կողմից կազմակերպած հայերի բռնագաղթի տարիներին:

Թեմայի նպատակն է հանգամանորեն ներկայացնել բռնագաղթի հետևանքները, ընդգծել պետականության բացակայության բացասական հետևանքները:

Գիտական նորույթը. Շահ-Աբասի հայերի բռնագաղթի կազմակերպման մշակած մարտավարության մեջ առանցքային կարևորություն է ներկայացնում «Տնտեսական պատերազմի տեսությունը», որի միջոցով Շահ-Աբասը կարողացավ տնտեսական խորը ճգնաժամի մեջ գցել Օսմանյան կայսրությանը՝ դրա հետ մեկտեղ հզորացնելով Սեֆյան Պարսկաստանի տնտեսությունը, որը պատերազմող պետության հաղթանակի գլխավոր գրավականն է: Այս տեսանկյունից թուրք-պարսկական XVI- XVII դդ. պատերազմների այս հատվածը և Շահ-Աբասի բռնագաղթի պատմությունը քիչ է ուսումնասիրված:

16-17-րդ դդ. թուրք-պարսկական հարաբերությունների և պատերազմների պատմությունը սերտորեն առնչվում է հայ ժողովրդի պատմության հետ: Պետք է նշեմ, որ 1045 թվականին Բագրատունյաց թագավորության անկումից հետո հայ ժողովուրդը կորցրել էր պետականությունը և հազիվ էր դիմակայում օտար զավթիչների արշավանքներին, որոնք հիմնականում տեղի էին ունենում Հայաստանի տարածքում:

1590 թվականի մարտի 21-ին Կոստանդնուպոլսում կնքվում է հաշտության պայմանագիր Իրանի համար ծանր պայմաններով՝ Օսմանյան կայսրությանը զիջվեց Արևելյան Հայաստանը, Իրանական Քրդստանը, Լուրիսթանի մի մասն ու Արաբական Իրաքը: Շահ-Աբասը պարտավորվում էր տարեկան 200 բեռ (59 հազար կգ) մետաքս տրամադրել օսմանցիներին, որպես ռազմատուգանք [3, 261]:

1590 թվականի Կ. Պոլսի հաշտության պայմանագիրը, սակայն, ժամանակավոր բնույթ էր կրում, տնտեսական, քաղաքական ծանր վիճակում գտնվող Պարս-

կաստանին հարկավոր էր ժամանակ՝ ուժերը վերադասավորելու, անհրաժեշտ չափով պատրաստվելու, երկրի քայքայված տնտեսությունը վերականգնելու և նոր հարձակում իրականացնելու համար: Պարսկական ռազմական ուժն աչքի էր ընկնում իր թուլությամբ. կանոնավոր բանակի բացակայությունը, թույլ և փոքրաթիվ հետևակը, բավարար քանակությամբ հրետանու բացակայությունը, բացասաբար էին ազդում բանակի հեղինակության վրա [2, 141]: Շահ-Աբասը արագ կարողացավ հաղթահարել երկրում սկսված ներքին երկպառակությունները՝ ճնշեց Գիլանում և Գորգանում դեռևս Խուդաբանդայի օրոք (1577-1587 թթ.) ծագած ապստամբությունները և Պարսկաստանին միացրեց այդ մարզերը [2, 144]: Պարսկաստանի համար նպաստավոր էր նաև արտաքին քաղաքական իրավիճակը, Օսմանյան կայսրությունում գլուխ էին բարձրացրել ներքին ապստամբություններն ու խռովությունները՝ պաշտոնյաների աննախընթաց չափերի հասնող կամայականությունների, խիստ ծանր հարկերի պատճառով [2, 145]:

Աղբյուրներից մեկի՝ Մատենադարանի հնագույն ձեռագրերի վկայությամբ XVI դարի 80-ական թվականների վերջերին Կոստանդնուպոլսում տեղի է ունեցել «ապստամբություն մի մեծ և սաստիկ ահարկու»: [6, 228ա]: Զորքը չէր ենթարկվում, դրա մասին են վկայում 1599 թվականին տեղի ունեցած ենիչերիական ապստամբությունը և Օսմանյան կայսրության ասիական մարզերում ծագած խռովություններ [6, 253ա]:

Շահ-Աբասը, օգտվելով իր համար նպաստավոր ներքին և արտաքին պայմաններից, 1603 թվականին սկսեց պատերազմը Օսմանյան կայսրության դեմ՝ նպատակ ունենալով չեղարկել 1590 թվականի պայմանագիրը և վերականգնել 1555 թվականին կնքված Ամասիայի հաշտության պայմանագիրը, քանի որ այն բխում էր Պարսկաստանի շահերից [2, 199]:

Այս ժամանակաշրջանում թե՛ Արևելյան, թե՛ Արևմտյան Հայաստանը գտնվում էին տնտեսապես քայքայված վիճակում: Աննախադեպ չափերի էին հասնում թուրքերի ու պարսիկների կողմից գանձվող հարկերը:

«Հետզհետե պարտքը դիզվում էր տոկոսների ծանրությունից, այնպես որ հասաւ մինչեւ 50 հազար դահեկանի. Երկրի մէջ փող չկար, սովը պատել էր» [7, 40]:

Էջմիածնի Մելիքսեթ կաթողիկոսը, Հավուց թառի Մանվել եպիսկոպոսը և Գեղարդի Աստվածատուր եպիսկոպոսը, իմանալով, որ Պարսկաստանը Հայաստանի վրայով արշավանք է կազմակերպում դեպի Օսմանյան կայսրություն, ժողով են գումարում Տաթևում, որոշում պատվիրակություն ուղարկել Պարսկաստան, և շահին հայտնել իրենց աջակցությունը: Ըստ Ա. Դավրիժեցու՝ «Շահը, լսելով այդ, հոգով ցնձաց, մտքով ուրախացավ, որովհետև այդ օրը նրա ուրախությունը ավելի մեծ եղավ, քան իր ողջ կյանքի ընթացքում էր եղել: ... Միրաշահեղով նրանց, ինքը իրեն նրանց վստահելի ու բարեկամ էր ձևացնում, դատարկ ու պատիր խաբեությամբ իրեն կեղծելով նրանց մտերիմ ցույց տվեց, մինչև որ նրանց սրտերի բոլոր գաղտնիքները դուրս քաշեց, նրանց երկրների վերուղիքն ու իշխանավոր անձանց իմացավ» [1, 26]:

Այսպիսով, Շահ-Աբասը, խախտելով 1590 թվականի հաշտության պայմանագիրը, 1603 թվականին նոր պատերազմ սկսեց Օսմանյան կայսրության դեմ: Ինչպես Դավրիժեցին է վկայում, շահի բանակը սկզբում շարժվեց Թավրիզի վրա և հոկտեմբերի 21-ին Սոֆիանի դաշտում՝ Թավրիզից ոչ շատ հեռու, մղեց ճակատամարտ, որը ավարտվեց Մեֆյան Պարսկաստանի հաղթանակով: Կարճատև պաշարումից հետո Թավրիզը 18 տարվա ընդմիջումից հետո կրկին դարձավ Մեֆյան Պարսկաստանի մասը: [2, 200]: Այնուհետև շահը գորքով շարժվեց Նախիջևան: Այս և հարակից բնակավայրերում տեղակայված օսմանյան զորքերը, գիտակցելով իրենց պարտությունը, մտադրվում են նահանջել՝ նախապես կողոպտելով հայկական բնակավայրերը: Օսմանցիների այս մտադրությունը հատկապես Ջուղային էր վերաբերվում, քանի որ Ջուղան աչքի էր ընկնում իր առևտրականներով և ունևոր բնակչությամբ: Ջուղայի բնակչությունը կոտորածից խույս տալու նպատակով փախավ մոտակա լեռները: Շահը, իմանալով օսմանցիների կազմակերպած թալանի մասին, շտապում է Ջուղա: Օսմանյան զորքերը նահանջեցին դեպի Երևանի բերդը, որպեսզի կարողանան դիմակայել ոտքի ելած շահի բանակներին [1, 28-29]:

Ըստ Դավրիժեցու՝ «Շահը Ջուղայում մնաց երեք օր, իսկ ջուղայեցիները պատվեցին նրան համադամ կերակուրներով և ծաղկահամ զինով: Իսկ անդնդային վիշապ Շահ-Աբասը, որ հենց սկզբից օձաբար էր տրամադրված ընդդեմ քրիստոնյանների, երբ տեսավ սրանց այդքան հարստությունն ու բարեվայելչությունը, սիրտը մաղձով լցվեց: Երեք օր մնալուց հետո ելավ Ջուղայից, գնաց Նախիջևան՝ տիրեց այդ քաղաքին առանց պատերազմի, առանց որևէ ջանքի» [1, 32]:

Շահ-Աբասը, տեղյակ լինելով հայ առևտրականների և արհեստավորների տաղանդի մասին, նպատակադրվեց հայ բնակչությանը Պարսկաստան տեղափոխել: Դրանով շահը նպատակ ուներ տնտեսապես հզորացնել Պարսկաստանը, տեղի ժողովրդին ծանոթացնել հայ արհեստավորների և առևտրականների հմտություններին:

Շահը Նախիջևանը գրավելուց հետո գորքով շարժվեց դեպի Երևան, հեշտությամբ պաշարեց քաղաքը, քանի որ շրջակա բնակավայրը, որ շեն էր ու ամեն բարիքներով լի, ենթարկվեց իր հրամանին, և սպասում էր բերդի պարիսպների մոտ [1, 32]:

Երևանի բերդը պաշարելուց հետո, Շահ-Աբասը կանչում է իր մոտ Դավիթ ու Մելիքսեթ կաթողիկոսներին և ասում. «Այս երկիրը առաջ պատկանում էր օսմանցիներին, իսկ այժմ մերն էղավ. այդպես էլ ամեն ինչք և ունեցվածք, որ անտեր է մնացել, պետք է դառնա պետական ունեցվածք: Արդ՝ ձեզ մոտ են գտնվում օսմանցիների շատ գանձեր, ուստի պետք է դրանք ամբողջը տաք ինձ» [1, 34]:

Կաթողիկոսները շահին են հանձնում եկեղեցու գանձերն ու ունեցվածքը: Քանի դեռ Երևանի բերդը պաշարված էր, Շահ-Աբասը հրամայում է արշավել հարակից հայկական բնակավայրեր՝ մասնավորապես զորք ուղարկելով դեպի Կարին, պարսկական զորքերը գրավում են Բասեն և Խնուս գավառները, այնու-

հետև Արճեշը, Արծկեն, Վանը, Բերկրին՝ ամենուր կոտորելով տղամարդկանց, կանանց ու մանուկներին գերեվարում են և բերում Երևան [1, 35]:

Երևանի բերդը պաշարված մնաց շուրջ 8 ամիս և 9-րդ ամսին՝ 1604 թվականին հանձնվեց [1, 38]:

Բերդը գրավելուց հետո Շահ-Աբասը առաջարկում է օսմանցիներին կամ հնազանդվեն իրեն, կամ խաղաղությամբ հեռանան: Օսմանյան փաշաներից ոմանք նախընտրեցին իրենց հպատակությունը հայտնել շահին, իսկ ոմանք էլ նախընտրեցին վերադառնալ իրենց երկիրը: Չնայած իր առաջարկին, շահը հրամայում է հետապնդել նրանց, հարձակվել ու կոտորել նահանջողներին [1, 39]:

Գրավելով Երևանի բերդը Շահ-Աբասը հրաման է տալիս, բերդի բնակչությանը գաղթեցնել Պարսկաստան [1, 40]:

Հայաստանում տեղի ունեցող քառասային վիճակը Ա. Դավրիժեցին այսպես է ներկայացնում. «Հայոց ազգից ոմանք իրենց կամքով ու մատով կուրացրին իրենց աչքերը, որովհետև իրենք կործանեցին իրենց թագավորությունը՝ իրենց նենգությունը, անհնազանդությամբ և եղան այլ ազգերի ու թագավորների ոտքերի կոխան, ծառաներ, գերիներ, և երբ ինչ-որ նեղություններ են վրա հասնում՝ որևէ տեղից օգնություն չգտնելով ու ճարահատ մնալով փախստական լինելով ճողոպրում են այստեղ-այնտեղ» [1, 123]:

Շահն իր բռնագաղթը իրականացրեց նախապես մշակված մարտավարությամբ՝ հատկապես «Այրված հողի» մարտավարությամբ, այն է՝ ամայացնել այն բնակավայրերն ու տարածքները, որոնցով պետք է անցնեին օսմանյան բանակները, կտրելով նրանց ապաստարանից ու սննդի պաշարներից, ստեղծելով բնակչությունից զուրկ սահմանային գոտի [5, 147]: (Նույն մարտավարությունը, այլ աղբյուրներում կոչվում է «մեռյալ գոտու» ռազմավարություն [4, 31]):

Մյուս կարևոր մարտավարությունը հայ առևտրական կապիտալին տիրելն էր, հայերն ունեին խոշոր կապիտալ: Լինելով ժամանակի համար կարևոր Մետաքսի ճանապարհի գլխավոր ուղիների մոտ, տիրապետում էին ոչ միայն առևտրային նրբություններին, այլև օտար լեզուներին, ինչը հնարավորություն էր տալիս հաղորդակցվել օտար առևտրականների հետ: Սա կարևոր հանգամանք էր երկրում տնտեսական կյանքի աշխուժացման համար: Հայ արհեստավորների բռնի գաղթեցումը Պարսկաստան հնարավորություն կտար նաև երկրում մշակութային կյանքի աշխուժացմանը, մի բան, որին ևս կարևորություն էր տալիս շահը [2, 207]:

Օսմանյան կայսրության տնտեսական անկման կողքին նկատելի է Մեֆյան Պարսկաստանի տնտեսական վերելքը: Լինելով խելացի քաղաքագետ, շահը տնտեսության զարգացման գլխավոր աղբյուրը համարում էր առևտուրը, որի զարգացման համար անհրաժեշտ պայմաններ ստեղծվեցին: Արտաքին առևտրով զբաղվում էին հայերը, որի արդյունքում շահական գանձարանը հսկայական եկամուտներ էր ստանում առևտրից, մասնավորապես մետաքսի գծով [2, 236-237]:

Բացի այդ, Օսմանյան կայսրությունը անկում էր ապրում, նրա գլխավոր հակառակորդը գնալով ուժեղանում էր: Թուրքերը դուրս մնացին Եվրոպայի տնտեսական զարգացման հուժկու երթից: Սպառազինության՝ թնդանոթների, հրացանների արտադրությունը Եվրոպայից հետ էր մնում առնվազն 150 տարով» [3, 310-311]:

Մատենադարանի հնագույն ձեռագրերի գրքի հեղինակը գրում է որ. «Ներքուստ ու արտաքուստ օր ըստ օր է կործանիւր թագաւորութիւն թուրքաց»:

Շահ-Աբասի կողմից հայության բռնագաղթը սկսվեց 1603 թվականին, երբ գրավեց Թավրիզն ու Նախիջևանը: Բռնագաղթը մեծ չափերի հասավ 1604 թվականի օգոստոսից: Բռնագաղթի են ենթարկվել Հայաստանի գրեթե բոլոր բնակավայրերը, այդ թվում նաև Արցախը: Գաղթեր են կազմակերպվել՝ Ոսկանապատ գյուղից, Հաթերքից, Խաչենից, Դիզակից, Խանածախ գյուղից [5, 146]: Թե որքան հայ է բռնագաղթի ենթարկվել, ստույգ հայտնի չէ, ըստ Առաքել Դավրիժեցու. «Գավառների բոլոր բնակիչներին բերին լցրեցին Արարատյան գավառը: Նրա լայնանիստ դաշտը ծագեճագ լցրին, որովհետև Գառնիի լեռներից մինչև Արաքս մեծ գետը բանակի լայնքն էր, իսկ երկայնությունը ըստ այդ լայնության դու կշռադատիր, ես կասեմ մի օրվա ճանապարհ, բայց այլուր տեսա՝ գրված էր հինգ օրվա ճանապարհ: Հայոց թվականը նոր էր վերջացել, մտել էինք 1603 թվականի հայոց նավասարդ առաջին ամիս, երբ երկիրը տարագրվեց» [1,43]: Հաշվի առնելով ավերված բնակավայրերը՝ կա կարծիք, որ բռնագաղթի է ենթարկվել 60000 ընտանիք... Բազմահազար խաղաղ բնակիչներին բանակի առաջ գցելով՝ զազանային բռնություններով ստիպեցին արագորեն առաջ շարժվել: Գաղթեցվում էր մոտ 350 հազար բնակչություն, որը ոտքով պետք է անցներ ավելի քան հազար կիլոմետր տարածություն [2,209]: Մեկ այլ կարծիքի համաձայն «Պարսկաստանի խորքերը քշվեցին շուրջ 300 հազար հայեր, որը կործանարար եղավ հայ ժողովրդի համար» [5, 147]:

Շահ-Աբասը, ամայացնելով ողջ Հայաստանը, բացի այն, որ գրկում էր օսմանյան զորքերին պարենից, այնպես էր անում, որ Պարսկաստան տեղափոխվող բնակչությունը այլևս չվերադառնա իր բնակավայրերը:

Հայաստանի առանձին բնակավայրեր փորձեցին խույս տալ բռնագաղթից և դիմադրել պարսկական զորքին: Օրինակ՝ Գառնի գյուղի բնակիչները՝ մոտ հազար հոգի պատասպարվել էին Գառնու քարանձավներից մեկում [7, 55]: Դավրիժեցին պատմում է, որ «մեծ ամբոխ կազմած՝ սրով, քարերով, փայտով խփեցին, վիրավորեցին նրանց ու իրենցից հեռացրին, և ոչ մի տեղ չգնացին: Պարսկական զորքը, սակայն, կրկին հարձակվեց, նույն Գառնի գյուղի տղամարդկանց բռնեց, խոշտանգումների ենթարկեց և իսկույն տեղահանեց դեպի պարսից աշխարհը» [1, 48]:

Դավրիժեցին առանձնակի մանրամասնությամբ է նկարագրում գաղթեցվողների Արաքսն անցնելու տեսարանը. «Իսկ թշվառ ժողովուրդը նայում էր առջևը, տեսնում էր ծովի նման անհուն գետը, որ խեղդում էր, իսկ ետևից պարսից սուրն

էր, որ սպանում էր, և փախուստի ոչ մի հնար չկար: Ընդհանուր կերպով աղիողորմ ողբեր, հորդ արցունքներ աչքերից թափվելով երկրորդ Արաքս էին գոյացնում, բայց ողորմություն և փրկություն ոչ մի տեղից չկար: Նրանք, որոնք լողալ չգիտեին, ծերեր, պառավներ, մատղաշ մանուկներ. լցված էին ջրի երեսը, և գետը քշած տանում էր նրանց իբրև չոր ճյուղ գարնան ժամանակ: Թեպետ անցնողները անցան, բայց շատերը նրանք էին, որ ջրում խեղդվելով մեռան» [1, 45-46]:

Ջուղայեցիների գաղթեցումը ընդհանուր տարագրությունից առանձին կազմակերպվեց: Ջուղայեցիները հավաքվեցին Ս. Աստվածածին եկեղեցու առաջ, հրաժեշտ տվեցին իրենց հայրենիքին, իսկ քահանաները, առնելով եկեղեցու բանալին, գեցին Երասխ գետը՝ նրա պահպանությանը հանձնելով իրենց հայրենիքը [7, 62]: Շահը հատուկ վերաբերմունք էր ցուցաբերում Արաքսի ափին գտնվող Ջուղա քաղաքի բնակչության նկատմամբ, որոնք հիմնականում զբաղվում էին եվրոպա-ասիական առևտրով [4, 319]:

Երբ Ջուղայի բնակիչները հավաքվել էին գետի ափին, Շահ-Աբասը, առանձին հոգատարություն ցուցաբերելով խոջաների նկատմամբ, հրամայեց իր ենթականերին՝ օգնել Ջուղայի բնակչությանը անցնելու գետը Թավրիզ հասցնելու համար [2, 212]:

Գերված բնակչությանը բազում զրկանքների գնով հասցրին Սպահան:

Երբ Ջուղայից բռնագաղթվող ժողովրդի հիմնական մասին տեղափոխեց Թավրիզ, շահը կրկին զորք է ուղարկում Ջուղա, հրամայում մնացած ժողովրդին բերել հասցնել այստեղ՝ միաժամանակ հրամայելով, որ նրանք, ովքեր կհակադրվեն հրամանին՝ սպանել, իսկ ժողովրդին Ջուղայից հանելուց հետո այրել բնակավայրերը, դաշտերն ու ամբարները [1, 59]:

Հայաստանից տեղահանված բնակչությանը Շահ-Աբասի հրամանով բնակեցրին Սպահանի շրջակա գյուղերում, ապա ջուղայեցիներին հասցրին Թավրիզ, ապա քչեցին Սպահանի կողմերը [2, 214]:

Հայերը, հաստատվելով այստեղ, կառուցեցին Նոր Ջուղա բնակավայրը՝ լավագույն շենքերով, եկեղեցիներով, այգիներով ու լայն փողոցներով [2, 215]:

Շահ-Աբասը առանձնակի վերաբերմունք էր ցուցաբերում հայերի նկատմամբ. Նախ թագավորական տուրքը, որ քրիստոնյաները վճարում էին, թեթև էր գանձվում, եթե վեճ էր լինում քրիստոնյաների ու մահմեդականների միջև, քրիստոնյային արդարացնում է, մահմեդականին՝ դատապարտում: Երբ քրիստոնյաները բերվեցին Սպահան, մահմեդական բնակչության մի մասին արտաքսեց, նրանց տներն ու արտերը տվեց քրիստոնյաներին: Շահը որոշ տոների՝ Հարություն, Համբարձման և այլն ժամանակ այցելում էր ջուղայեցիներին [1, 61-62]:

Շահի վարած այս «քրիստոնյամետ» քաղաքականությունը, առաջացնում է տեղի մահմեդական բնակչության դժգոհությունը: Շահը պատասխանում է հետևյալ կերպ.

«Ի՞նչ այս դատարկ սիրալիրության համար, որ տածում եմ քրիստոնյաների նկատմամբ, մի վշտանաք ու ինձ մեղադրեք, որովհետև ես ծախսեցի, ջանքերով

հազիվ կարողացա բերել այստեղ: Ես նրանց չբերեցի իրենց օգուտի համար, այլ որպեսզի մեր երկիրը շենացվի ու մեր ազգը ավելանա: Արդ, եթե դուք էլ եք կամենում մեր ազգի շահը, դուք էլ արեք այնպես, ինչպես ես եմ անում» [1, 62-63]:

Բավկանին ծանր էր բռնագաղթից խույս տված հայերի վիճակը: Նրանց մասին Դավրիժեցին գրում է, «Օշական կոչվող գյուղում մի մարդ սպանել էր իր տանը հյուրընկալած մարդուն, պահել իր տանը փորած փոսի մեջ, որպես սնունդ, մեկ այլ դրվագով պատմում է, թե մի անգամ Բջնի գյուղում տներից մեկի երդիկից ծուխ էր դուրս գալիս, նկատելով դա գնում են այդ տուն, տեսնում 2 կին պուտուկի մեջ ինչ-որ բան են եփում, բացելով այն տեսնում են մարդու ձեռքեր ու բազուկներ, որը եփում էին, որպեսզի ուտեին» [1, 79]:

Այսպիսով, օգտագործելով հայ ժողովրդի պետականագուրկ վիճակը, միաժամանակ առաջ քաշելով «Տնտեսական պատերազմի տեսությունը»՝ երբ Շահ-Աբասը հստակ մարտավարությամբ կարողացավ հայերի բռնագաղթը ոչ միայն ռազմավարական, այլև տնտեսական գենք օգտագործել Օսմանյան կայսրության դեմ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ա. Դավրիժեցի; Պատմություն, Երևան, «Սովետական գրող» հրատ., 1988, 592 էջ:
2. Նաջարյան Հ. Խ., Թուրք-իրանական հարաբերությունները 16-17-րդ դարի առաջին կեսին և Հայաստանը; Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 1961, 312 էջ:
3. Բայբուրդյան Վ. Ա., Օսմանյան կայսրության պատմություն, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2011, 718 էջ:
4. Բայբուրդյան Վ. Ա., Իրանի պատմություն, Երևան, «Զանգակ-97», 2005, 784 էջ:
5. Բալայան Վ., Արցախի պատմությունը հնադարից մինչև մեր օրեր, Երևան, Ամարաս, 2002, 409+40 էջ նկարներ:
6. Նյութեր հայ ժողովրդի պատմության, գիրք 14. Կազմ. Վ. Հակոբյան, Ա. Հովհաննիսյան, Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ (1601-1620 թթ.), Երևան, Հայկական ՄՍՀ ԳԱ հրատարակչություն, 1974, 828 էջ:
7. Առաքելյան Հ., Պարսկաստանի հայերը, Վիեննա, Մխիթարյանների տպարան, 1911, 97 էջ:

ДЕПОРТАЦИЯ ШАХ-АББАСА И ЕЕ ПОСЛЕДСТВИЯ

Никогосян Эрик

Фонд “ВГУ”, «История», 2-й курс

Научный руководитель:

кандидат исторических наук, доцент М. Брутян

Резюме

Ключевые слова: *Шах-Аббас, турецко-персидская война, осада Ереванской крепости, депортация армян, тактика «выжженной земли», армянские купцы и ремесленники, основание поселения Нор Джуга*

На страницах армянской истории существуют события, которые необходимо еще раз исследовать, особенно в наши дни. Одним из упомянутых нами событий является депортация Шах-Аббаса. Анализ подобных исторических событий позволяет по-новому взглянуть на вопросы государственности и национальной устойчивости: без государственности армянский народ вновь предстанет в том же статусе, что и во время депортации Шах-Аббаса.

THE FORCED DEPORTATION BY SHAH ABBAS AND ITS CONSEQUENCES

Nikoghosyan Erik

“VSU” Foundation,

“History”, 2nd Year.

Academic Supervisor: M. Brutyian,

Candidate of Historical Sciences, Associate Professor

Summary

Key words: *Shah-Abbas, turkish-persian war, the capture of Yerevan fortress, the deportation of Armenians, a scorched-earth strategy, Armenian merchants and artisans, the foundation of New Julfa settlement*

Within the history of Armenia there are events that require renewed examination, particularly in the present day. One such event is the deportation carried out by Shah Abbas. The analysis of such historical events makes it possible to reconsider the issues of statehood and national resilience: without statehood, the Armenian people may once again find themselves in a situation similar to that which existed during the deportation of Shah Abbas.

ԴԻՆԱՍՏԻԱԿԱՆ ՊԱՇՏԱՍՈՒԼՔԻ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ
ՊՏՂՈՄԵՅԱՆ ԵԳԻՊՏՈՍՈՒՄ ԵՎ ԹԱԳՈՒՅԻՆՆԵՐԸ ՆՐԱ ԾԻՐՈՒՄ

Շեկոյան Միլենա

*«ՎՊՀ» հիմնադրամ,
«Պատմություն», 2-րդ կուրս
Գիտական ղեկավար՝ պ. գ. թ., դոցենտ Ա. Մելիքյան*

Հանգուցային բառեր. Պտղոմեոս I, Պտղոմեոս II, դինաստիական պաշտամունք (արքայական պաշտամունք), Փրկիչ աստված, Բերենիկե, Արսինոե

Նախնյաց պաշտամունքը այս կամ այն չափով գոյություն է ունեցել բոլոր հին հասարակություններում: Բայց մինչև Ք. ա. IV դ. այն շատ հազվադեպ, և շատ կարճ ժամանակով է վերածել կառավարող արքայի և արքայատան պաշտամունքի: Մինչդեռ Ք. ա. III-I դդ. այդ երևույթը դարձավ արևելյան հելլենիստական միապետությունների ամենաբնորոշ կողմը: Ինքնատիպ երանգավորումներով այն դրսևորվել է Պտղոմեյան Եգիպտոսում, Սելևկյան տերության մեջ, Մեծ Հայքում, Պարթևական տերության մեջ, Էյրումայիսում, հելլենիստական Բակտրիայում, Կոմագենեում և այլուր:

1. Քաղաքական կրոնը որպես հելլենիստական դարաշրջանի ֆենոմեն

Ընդունված կարծիքի համաձայն, կառավարող արքայի աստվածարկության պրակտիկան սկսվել է Ալեքսանդր Մակեդոնացուց: Սակայն այդքան էլ հեշտ չէ այդ կարծիքին անվերապահորեն համաձայնել, քանի որ Ֆայումում Ամոնի քրմության կողմից Ալեքսանդրին Ամոն-Ռայի որդի հռչակվելը եգիպտական աշխարհընկալման պահանջն էր և բնավ էլ չհանգեցրեց Արգեառյան արքայատան աստվածացմանը: Իրականում **«քաղաքական կրոն»** անունը ստացած այդ երևույթը հաստատվել է միայն Ալեքսանդրի հետևորդների՝ (դիադոքոսների) և սրանց ժառանգորդների (էպիգոնների) օրոք: Դրա ձևավորումն ու տարածումը պայմանավորված էր, մի կողմից, հելլենական հասարակության մեջ օլիմպական դիցերի նկատմամբ հավատի թուլացման հանգամանքով, մյուս կողմից, օտար էթնոմշակութային միջավայրերում իրենց իշխանությունը ուժային մեխանիզմներից զատ լրացուցիչ միջոցներով ամրապնդելու Ալեքսանդրի հետևորդների մտայնությամբ: Հասարակական գիտակցության մեջ արքայի և արքայատան աստվածայնության մասին պատկերացման հաստատման առումով շատ կարևոր գործոն էր նաև հելլենիստական արքաների մեծագործությունը. տնտեսական անկման և քաղաքական անկայունության այդ դարաշրջանում նրանք առանձին պոլիսների և ամբողջ տարածաշրջանների բնակչության համար հաճախ դառնում էին կործանարարներ, այլ դեպքերում՝ իրական փրկիչներ: Բսկ, ինչպես Սբ. Հիերոնիմոսն էր նշում, **«հեթանոսների մոլորությունը կայանում է այն բանում, որ նրանք աստված են կոչում այն ամենը, ինչը սովորական մարդկայինից վեր է»:** Հիերոնիմոսի այս գնահատականի տեսանկյունից թեմայի ուսումնասիրությունը

մշտապես արդիական է, քանի որ նույն պատճառով խարիզմատիկ առաջնորդի պաշտամունքի երևույթը հարատևել է մինչև XX-XXI դդ.:

2. Դինաստիական պաշտամունքի հաստատումը Պտղոմեյան Եգիպտոսում

Դինաստիական պաշտամունքն իր հելլենիստական ձևաչափով, սկզբնավորվել է Եգիպտոսում, որտեղ Ք. ա. 223 թ, ի վեր կառավարող Պտղոմեոս Լագոսն իրեն հռչակեց արքա (Ք. ա. 305-283 թթ.)՝ հիմք դնելով համանուն արքայատանը (Ք. ա. 305-30 թթ.): Ինչպես Ալեքսանդրը, Պտղոմեոս I-ն էլ իր իշխանության օրինականության և շարունակականության համար ընդունեց փարավոն-արքայի աստվածային ծագման մասին եգիպտական դրույթը [9, 203]: Ավելի քան 2000-ամյա այդ գաղափարը եգիպտական հասարակության գիտակցության մեջ առանցքային նշանակություն ուներ այն աստիճան, որ հակառակը պնդելն այդ հասարակության համար հավասարազոր կլիներ աշխարհի վերջին: Հետևաբար, Ք. ա III դ. եգիպտական հասարակության աշխարհընկալման տեսանկյունից կատարվածին միայն քաղաքական դեր ու նշանակություն տալն այնքան էլ արդարացի չէ, քանի որ մակեդոնացի արքայի աստվածարկումը պարտադրված էր ոչ թե «վերևից», այլ «ներքևից» [6, 2241]: Այսպիսով, իր թագադրության ակտով իսկ մակեդոնացի արքան տեղական ավանդույթի ուժով դարձավ Ռայի որդին և Հորուսի ժառանգորդը: Սակայն դա դեռևս դինաստիական պաշտամունքի հաստատում չէր, քանի որ տեղական կրոնական պատկերացումներում արքան ավանդական աստվածներին հավասարազոր դից չէր, այլ հանդես էր գալիս որպես մարդկության ներկայացուցիչ և միջնորդ աստվածների առջև [6, 2241]: Բավական է նշել, որ այդպես էին ընկալվել Աքեմենյան արքաները Կամբյուսես II-ից մինչև Դարեհ III-ը, թեպետ նրանցից ոչ մեկը Եգիպտոսի սահմաններից դուրս երբեք աստվածային պատիվների չի արժանացել:

Սկզբնապես այլ էր Եգիպտոսում հաստատված հելլենական բնակչության և հատկապես հելլենական զորքի վերաբերմունքը Պտղոմեոս I-ի նկատմամբ: Նրա զորքի և մերձավոր զինակիցներից մի մասը դեռևս Ալեքսանդրի օրոք իր բացասական վերաբերմունքն էր դրսևորել արքայի աստվածարկման փաստին՝ համարելով այն հունական աշխարհին խորթ երևույթ: Նրանց համար շարունակում էր նախընտրելի մնալ ուժեղ, բայց կանխատեսելի կառավարիչ ունենալը: Բայց իրականությունն այլ պահանջներ էր թելադրում: Դիադոնների պայքարի շրջանում, երբ ողջ Արևելյան Միջերկրածովքը տակնուվրա էր լինում Ալեքսանդրի հետևորդների պատերազմների հետևանքով, հունական շատ պոլիսներ ու երկրամասեր պաշտպանության կամ հովանավորության դիմաց սկսեցին դիադոններին (Անտիգոնոս, Դեմետրիոս և այլք) քծնանքով դիցական էպիտետներ շռայլել: Պտղոմեոսը բացառություն չէր:

Համաձայն Պավսանիասի՝ Պտղոմեոսին առաջինը աստվածային «փրկիչ» (Σωτήρ) էպիտետով մեծարել են Գիկլադյան արշիպելագի հույները, որոնց նկատմամբ նա Ք. ա. 308 թ. հաստատել էր իր հովանավորությունը [2, I.8.6]: Ավելի ուշ՝ Ք. ա. 305 թ., Եգիպտոսի ավերի մոտ նավաբեկությունից փրկված և ապաստան ստացած երեք հռոդոսցի հույներ նորաթուխ արքա Պտղոմեոսին և Բերենիկե I

թագուհուն մեծարել են որպես «փրկիչ աստվածներ» (*Σωτήρες Θεοί*) [1,65]: Դժվար է ճշտել, այդ ակտը փրկվածների անկեղծ երախտագիտության, կամ քճանաքի՞ դրսևորում է եղել, թե՛ ուղղորդված է եղել հենց արքայի կողմից: Փաստը մնում է այն, որ աստվածային էպիտետի յուրացումը Պտղոմեոս I-ի և Բերենիկե թագուհու կողմից կատարվել է դեռ նրանց կենդանության օրոք՝ նախքան գահակալությունը: Պտղոմեոս II-ը (Ք. ա. 285-246/5 թթ.) ծնողների մահվանից հետո պաշտոնապես աստվածացրեց նրանց: Այդ քաղաքական քարոզչությունը, որն ուղղված էր Եգիպտոսի թե՛ բնիկ, թե՛ հունա-մակեդոնական բնակչությանը, հաջողվեց մի քանի առումներով. 1. արքայի աստվածայնության գաղափարը դարձավ համահասարակական, անկախ այն բանից, որ Եգիպտական և հելլենական բնակչությունը տարակերպ էին ընդունում այն, 2. Եգիպտոսում չնչին փոքրամասնություն կազմող հելլենական բնակչությունն իր արտոնյալ դիրքն ու իշխանությունը պահելու մտայնությամբ ստիպված էր համակերպվել վերոնշյալ իրողությանը, 3. Պտղոմեոս II-ը հող նախապատրաստեց կենդանության օրոք սեփական անձի աստվածարկման համար, քանի որ հունական ռացիոնալիզմի տեսանկյունից աստծային գույգի որդին ինքնաբերաբար դառնում էր աստված: Հասարակական գիտակցության մեջ այդ դրույթն ամրապնդելու նպատակով Պտղոմեոս II-ը նախևառաջ արքայատունը նկատելիորեն անջրպետեց Եգիպտոսում հաստատված հելլենական բնակչությունից: Նույն նպատակին ծառայեցվեց նրա ամուսնությունը քրոջ՝ Արսինոյեի հետ, որի անբնական եռանդն ու փառասիրությունը ամբողջապես նպատակաուղղվեց արքայական գույգի և հարազատ արքայատան աստվածարկմանը: Արյունակից եղբոր և քրոջ ամուսնությունը սովորական երևույթ էր Եգիպտացիների մեջ և համապատասխանում էր թե՛ փարավոնների, թե՛ Եգիպտական աստվածների ավանդույթին: Եգիպտացու ընկալման մեջ Օսիրիսի և Իսիդայի ամուսնությունը ոչ միայն բնական, այլ նույնիսկ անհրաժեշտ էր՝ տիեզերական և երկրային կարգի և շարունակականության պահպանման համար: Եվ թեպետ հույների ամուսնաընտանեկան հարաբերություններում արյունակցական ամուսնությունը չտեսնված բան էր, այնուամենայնիվ հույները շատ լավ գիտեին, որ Ջևսը և Հերան նույնպես եղբայր և քույր են: Իրենց կրոնա-քաղաքական նպատակին հասնելու համար Պտղոմեոս II-ն ու Արսինոեն շեշտը դրեցին հենց դիցական նախադեպերի վրա. Եգիպտոսի հելլենական բնակչությանն ուղղված հրովարտակում, որը պահպանվել և հասել է մեր օրերը, արքայական գույգը հայտարարում է. *«Ինչպես Օսիրիսը և Իսիդան (Ջևսը և Հերան), նույնպես և մենք, որոշեցինք միավորվել սրբազան ամուսնության կապով, որպեսզի մեր աստվածային արյունը անխառը մնա մահկանացուների արյունից* [3, 45]: Այսպիսով, օգտագործելով հունական և Եգիպտական պաշտամունքների ընդհանրությունը, Պտղոմեոս II-ն ու Արսինոե II-ը իրագործեցին միանգամից երկու նպատակներ. 1. Աստվածարկվեցին կենդանության օրոք՝ դառնալով կենդանի աստվածներ (*σύγγοι θεοί*), 2, հղելով Եգիպտական և հունական ծիսական ընկալմաների այն դրույթին, որ *ինչը չի կարելի մահկանացուներին, կարելի է աստվածներին*, նրանք իրավական հստակ սահմանագիծ տարան դիցարկված արքայա-

կան գույգի և հպատակների միջև [5, 215; 1, 85]: Հաջորդած արքաները իշխանության օրինականացման, կարգավիճակի և պետական կառավարման համակարգի ամրապնդման նպատակով շարունակեցին հենվել եգիպտական և հունական կրոնական ընդհանրությունների վրա: Արդյունքում՝ կառավարող արքաների և արքայատան աստվածայնության մասին հունական և եգիպտական ընկալումների համակցումը (*sinkretizatia*) դարձավ վերևից ուղղորդվող գործընթաց, որտեղ յուրաքանչյուր տարր ուներ հստակ քաղաքական նշանակությունը [6, 2242]: Ըստ էության, այս նույն սխեմայով են առաջնորդվել նաև Սելևկյանները, Արտաշեսյանները, Արշակունիները, Կամսակիրեսյանները և այլք:

Պտղոմեյանների պաշտամունքի տարածման գործում մեծ դեր է խաղացել տեղական քրմական դասը, որն ավանդաբար հարգանք էր վայելում հասարակության մեջ: Քրմերը հանդես էին գալիս որպես միջնորդներ դինաստիայի և եգիպտական աստվածների միջև: Նրանց ճանաչումն անհրաժեշտ էր, որպեսզի նոր պաշտամունքը համարվեր օրինական: Նոր պաշտամունքների հաստատման գործընթացը հաճախ պահանջում էր քրմական ժողովներ (սինոդներ), որտեղ մշակվում էին պաշտամունքի կանոնները: Օրինակ՝ Կանոփոսի հրովարտակը (Ք. ա. 238 թ.), որը հրատարակվել էր Պտղոմեոս III-ի կողմից և վավերացվել քրմական սինոդով, ներառում էր աստվածացված Պտղոմեոսի և նրա կնոջ պաշտամունքի դրույթները [10]: Ըստ Ջոնսոնի՝ քրմությունը «*միաժամանակ ծառայում էր և՛ կրոնական, և՛ վարչական համակարգին*», ինչի շնորհիվ կարողանում էր վերահսկել և ուղղորդել պաշտամունքային նախաձեռնությունները [8, 15]: Քրմությունը վերահսկում էր մեծ տաճարային տնտեսությունները, որոնց ռեսուրսներն օգտագործվում էին պաշտամունքների կազմակերպման, զոհաբերությունների, փառատոների և պաշտամունքային կառույցների պահպանման համար: Քրմերը ներգրավված էին նաև գաղափարական համադրումների մեջ՝ ստեղծելով հիբրիդային պատկերներ, որտեղ թագուհիներ (օր.՝ Արսինոե II) նույնացվում էին ավանդական աստվածուհիների հետ (Բսիս, Հաթոր, Դեմետրա և այլն): Այդ համադրումները թույլ էին տալիս տեղական բնակչությանը ավելի հեշտությամբ ընդունել նոր պաշտամունքը [11, 3]: Քրմերը կատարում էին առօրեական ծեսերը դինաստիական պաշտամունքի սրբավայրերում՝ զոհաբերություններ, օծումներ, երգեցողություն և աղոթքներ՝ հաստատելով պաշտամունքի կայունությունը: Քրմական համակարգը անվերապահորեն հովանավորում և աջակցում էր այն կառավարական նախաձեռնություններին, որոնք նպատակ ունեին ամրապնդել թագավորի հեղինակությունը» [8, 81]:

Այսպիսով, դինաստիական պաշտամունքը Պտղոմեյան Եգիպտոսում պարզապես կրոնական խանդավառության դրսևորում չէր: Այն խորը քաղաքական մեխանիզմ էր՝ միտված դարերի ընթացքում ձևավորված եգիպտական աստվածային արքայության իդեալների միջոցով թագավորական իշխանության, հաստատուն ինքնության և հասարակական համաձայնության ստեղծմանն ու ամրապնդմանը:

2. Թագուհիները Պտղոմեյանների դինաստիական պաշտամունքի ծիրում

Անտիկ պատմագրությունը, շեշտելով Պողոմեյան թագուհիների պատվա-
վոր դիրքի մասին, տերություն հասարակական-քաղաքական կյանքում նրանց
դերակատարության մասին մանրամասն տեղեկություններ չի հաղորդում: Դրա
վառ օրինակ է Արսինտե II-ի մայրը՝ Բերենիկե I-ը, որը Պողոմեոս I-ի կանանց
մեջ առանձնանում էր իր խորամանկությամբ ու ազդեցությամբ: Բայց աղբյուր-
ները ցավալիորեն լռում են, թե որն է եղել նրա ազդեցության ու կարգավիճակի
պատճառը: Պատկերը նկատելիորեն այլ է Պողոմեոս I-ի և Բերենիկե I-ի դստեր՝
Արսինտե II-ի դեպքում: Աղբյուրները փաստում են տերության քաղաքական
կյանքում նրա ակտիվության մասին [11, 4]: Մասնավորապես, Արսինտեն մեծ դեր
էր խաղացել Անտիգոնոս Գոնատի դեմ Հերմոնիոյան դաշինքի կնքման գործում
[11, 5]:

Սակայն Արսինտե II-ի դերը մեծ է հատկապես Պողոմեյանների դինաստիա-
կան պաշտամունքի կազմակերպման գործում: Աղբյուրները նրան նկարագրում
են որպես եռանդուն, նախաձեռնող, իշխանատենչ, հակառակորդների նկատ-
մամբ հիշաչար և անհանդուրժող կնոջ, որը նախքան եղբոր հետ ամուսնությունը
հաջորդաբար եղել էր Լիսիմաքոսի և Պողոմեոս Կերավնոսի թագուհին [1, 87]:
Թերևս զարմանալի չէ, որ թեպետ առաջինը աստվածային էպիտետի արժանացել
էր Բերենիկե I-ը, այնուամենայնիվ, տաճարային մակարդակում թագուհիների
պաշտամունքի սկիզբը դրվեց հենց Արսինտե II-ի դիցարկմամբ: Դա կատարվել է
մոտ. Ք. ա. 270 թ. Մենդեսի հրովարտակով և Պողոմեոս II-ի կողմից աստվածային
զույգերի (*Θεοι Άδελφοι*) պաշտամունքի հաստատմամբ [4, 3]:

Արսինտե II-ի նախաձեռնությամբ Եգիպտոսի տարածքում ստեղծվեցին
տարբեր մակարդակի պաշտամունքային կենտրոններ, որտեղ համադրվում և
միախառնվում էին ոչ միայն տեղական և հունական պաշտամունքային տար-
րերը, այլև դրանց կրոնական սիմվոլիզմը: Թագավորական պաշտամունքը, որը
սկզբնապես սիմվոլիկ էր, աստիճանաբար դարձավ ինստիտուցիոնալացված՝
բյուրոկրատիայի և տաճարական համակարգի միջոցով ընդգրկելով ոչ միայն
արքունիքը, այլ նաև տեղական հասարակական շերտերը: Թագավորները պատ-
կերացվում էին որպես Դիոնիսոս, Ջևս կամ Օսիրիս, իսկ թագուհիները՝ որպես
Աֆրոդիտե, Դեմետրա, Հաթիոր կամ Իսիս [11, 88-81]: Հատկապես ուշագրավ է
Արսինտե II-ի դեպքը, ով ոչ միայն աստվածացվեց կենդանության օրոք (*ωσ θεά
ζώσα*), այլև ներկայացվեց որպես «Արսինտե Աֆրոդիտե Ձեֆիրիտիս»՝ մի կերպար,
որը միավորում էր հունական և տեղական աստվածությունների հատկանիշները
[9, 215]: Նրա պաշտամունքը տարածվեց ոչ միայն Եգիպտոսում, այլև Կիպրոսում,
Ասիայի ավերին ու Էգեյան կղզիներում [7, 61-65]:

Հունական աստվածությունների հետ Արսինտե պաշտամունքի կապը նպաս-
տեց նրա քաղաքական ազդեցության ու դերի բարձրացմանը: Պողոմեոս II-ի ժա-
մանակաշրջանից սկսած թագուհիները ոչ միայն աստվածների համախոհներն
էին, այլև ունեին են իրենց քրմուհիները, օրինակ՝ հիշատակվում են Արսինտեի
զամբյուղակիքը (կանեֆորոս), Բերենիկեի մրցանակակիրը (աթլոֆորոս) և Կլեո-
պատրա III-ի «սուրբ քուռակը» և այլք [6, 2241]:

Արսինտեն դարձավ Եփեսոսի նոր պաշտպան աստվածուհին (քաղաքը ի պատիվ նրա վերանվանվել էր **Արսինտա**): Թեոկրիտոսը նրա գեղեցկությունը համեմատել է Հեղինեի հետ, իսկ պոետ Կալիմաքոսը նրան անվանել է իր Մուսա և Նիմֆա: Թագավորական ծովակալ Կալիկրատեսը Ք. ա. 280-260 թթ. հիմնել է մի սրբավայր՝ նվիրված **«Արսինտե Աֆրոդիտե Ջեֆիրիտիս»**-ին: Անգամ գինու մառանները, որոնք օգտագործվում էին նրա պատվին կազմակերպված տոների ընթացքում, կոչվում էին **«Ազաթե Տյուխե Արսինտե Ֆիլադելֆա Բսիս»**: Արսինտեի համբավի մասին է վկայում նաև այն փաստը, որ անգամ հռոմեական դարաշրջանում Ալեքսանդրիայի փողոցների անունները շարունակում էին կրել նրա անունը՝ համակցված Աֆրոդիտեի, Աթենասի, Դեմետրայի և Հերայի հետ կապված դիցական էպիտետներով [11, 3]: Արսինտեն ու իր եղբայրը հիշատակվում են որպես քույր-եղբայր (*Θεοι Αδελφοι*) աստվածություններ [6, 2241]: Տաճարային պատկերներում նրանք կրում են կոտոշներ, որը խորհրդանշում է նրանց երկվորյակ կարգավիճակը [12, 90]:

Պտղոմեյան թագուհիների պաշտամունքի տարածման գործում մեծ դեր էին հատկապես խաղում նրանց նվիրված փառատոնները: Դրանցից ամենատարածվածը Արսինտեին նվիրված Արսինտեիա տոնակատարությունն էր, որն ուներ հատուկ մշակված արարողակարգ: Այն նշվում էր Ալեքսանդրիայում: Սատրուսի «Ալեքսանդրիայի դեմոսների» փաստաթղթում մեջբերվում է սրբազան օրենքի տեքստը՝ Արսինտե Ֆիլադելֆոսի համար իրականացվող քայլերի վերաբերյալ, որտեղ մարդիկ հրավիրվում են պատրաստելու իրենց սեղանները և մատուցելու զոհաբերություններ այն փողոցներում, որոնցով անցնելու էր երթը» [5, 81]: Եգիպտական տաճարական վավերաթղթերում վկայվում են դեպի Ալեքսանդրիա մասնակիցների շարժման վերաբերյալ [5, 81]:

Արսինտեի պաշտամունքում ամենատարածված զոհաբերությունները խոզերն են, երբեմն մատուցված նաև այծերի հետ: Խոզերի զոհաբերությունը հիշատակվում է Թեոադեիֆեյայում՝ Ալեքսանդրիայում դիցարկված արքայական գույզի պատվին կազմակերպվող տոնակատարության կապակցությամբ: Խոզերի զոհաբերության մասին փաստը ցույց է տալիս, որ Արսինտե II-ի պաշտամունքը կապված է եղել Դեմետրա դիցուհու հետ, այլ ոչ թե Աֆրոդիտեի, քանի որ վերջինիս համար խոզը սովորաբար զոհաբերության արգելված տեսակ էր Հունաստանում: Եգիպտական կողմում խոզի զոհաբերությունը աստվածացված թագուհուն տեղադրում է Բսիս դիցուհու պաշտամունքի ոլորտում, որը եգիպտական միակ դիցուհին է, որն ընդունում է խոզի զոհաբերություններ [5, 82]:

Սատիրուսի կողմից մեջբերված «սրբազան օրենքում» նշված են զոհաբերությունների տեսակները, որոնք թույլատրվում են ընթացիկ արարողության ընթացքում: Սրանից երևում է, որ համեմված բանջարեղեններից բացի, թույլատրվել են նաև թռչունների զոհաբերությունները:

Հունարենում «բասիլիսսա» (թագուհի) տիտղոսը, որը Պտղոմեյան թագուհիների շնորհիվ է՝ սկսած Բերենիկե I-ից, հարգանքի արտահայտություն էր, բայց չէր ենթադրում թագուհու քաղաքական իշխանություն: Ավելի կարևոր է, որ

Եզրիպտոսում կային շատ տերմիններ, որոնք հազվադեպ կամ երբեք չեն կիրառվել թագուհիների համար մինչև Բերենիկե II կամ Կլեոպատրա I-ը: Այդ տերմիններից են՝ «Հեկան» (Կին իշխանավոր), «Թաթիթ» (Կին վեզիր), «Նեբ(տ) Տաուի» (Երկու Երկրների Տիրակալ կամ Տիրուհի), «Պեր'աթ» (Կին փարավոն), և հատկապես «Հորտ» (Հորուսի կանացի տարբերակը): Թագուհիների ծիսական կարևորությունը տեսանելի է օրինակ, Թեբեում՝ Էվերգետեսի դռների վրա (այժմ Կառնակ) և Կոմ Էլ-Հիսնի սթելայում: Այս պատկերներում Բերենիկե II-ը ներկայացվում է ծիսական հագուստով, որը կարելի է համեմատել թագավորի Հաբ-Մեդի հագուստի հետ: Տանիսից մի պատկերաքանդակում Պտղոմեոս IV-ը և Արսինոե III-ը ցուցադրվում են նույն հագուստով: Փարավոնների շրջանում թագուհիների նման տեսանելի պատկերները հազվապես էին, և դրանց հետ կարելի է համեմատել միայն Նեֆերտիտի ու Նեֆերտարի նախադեպերը [11, 84]:

Կլեոպատրա III-ն իր ամուսնու՝ Պտղոմեոս X-ի հետ ստացել էր «մայրասեր, փրկիչ աստվածներ» (*Θεοι Φιλομητορ Σωτήρες*) տիտղոսը: Պտղոմեոս XII-ը Ավլետը և Կլեոպատրա VI-ը Տրիֆենան միասին հայտնի էին որպես «հայրասեր, որդիասեր աստվածներ» (*Θεοι Φιλοπατεροι Φιλადήλφοι*): Բսկ Կլեոպատրա VII-ը վերցրեց «Ֆիլոպատր» տիտղոսը: Եթե շոշափում ենք առավել տարածված պաշտամունքային «Մայր-սիրող» և «Հայր-սիրող» տիտղոսները, անմիջապես պարզ է դառնում նրանց ընտանեկան կապերի երկլիմաստ կարևորությունը:

Պտղոմեյան արքայական զույգերի նման զույգ ներկայացումը հատկապես պատկերավորվել է տաճարներում՝ նախնիների երթերի տեսարաններում: Պետք է նշենք, որ նման տեսարանների տարածումը, հատկապես արքայատան կանանց պատկերավոր ներկայացումը, փարավոնների ավանդույթում աննախադեպ էր [11, 103]: Տաճարային տեսարաններում Պտղոմեյան արքաների կողքին թագուհիների ներկայությունը պարզորոշ խոսում է թագավորի ամուսնության վիճակի նշանակությունը: Դրամների, քարերի, կնիքների, արձանների և ռելիեֆների վրա թագավորական զույգերի համատեղ ներկայացումները նույնպես վկայում է դրա կարևորությունը: Նման պատկերները նաև ենթադրում են Պտղոմեյան թագավորների և թագուհիների նույնացումը աստվածությունների հետ, ինչպես օրինակ՝ Ջևս և Հերա կամ Դիոնե, Իսիս և Օսիրիս, Դեմետրա և Դիոնիսոս: Այս ցուցակին կարելի է ավելացնել այլ աստվածային զույգեր, որոնց հետ նույնացվում էին Պտղոմեյան թագավորներն ու թագուհիները, ինչպես Աֆրոդիտե և Ադոնիս, Հաթոր և Ամոն-Ռա (կամ այլ գլխավոր տեղական աստված, օրինակ՝ Պտահը՝ Մեմֆիսից), Հերկուլես և Հեբե, Ագաթոդեմոն և Ագաթե Տյուլես, և գուցե Պլուտոն և Պերսեպոնե» [11, 103]:

Պտղոմեյան մի քանի թագուհիներ նույնացվել են «Մեծ մայր աստվածուհի» (լատ. Magna Mater, հույն. Μεγάλη Μετηρ, եզրիպտ. Mut A'at կամ Urt) անունով, կամ որոշ դեպքերում կապվել են Ասթարտեի հետ [11;503]: Ըստ վան Օպպենի՝ աստվածուհիների ցանկի մեջ անհրաժեշտ է նաև ներառել Կիբելա և Իշտար-Ինանա աստվածուհիներին, որոնք կարևոր դեր են խաղացել պտղաբերության և մայրության և, նույնիսկ, ամուսնության և ինցեստի թեմաների հետ [11, 504]:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Беван Эд. Династия Птолемеев. История Египта в эпоху эллинизма, Москва, 2011.
2. Павсаний Описание Эллады, т. 1, Москва, 2002, 492 с.
3. Тарн В. Эллинистическая цивилизация, Москва, 1949, 370 с.
4. Brophy E. Greek Kings as Egyptian Gods: Location and Purpose of the Cult Statues of the Ptolemies in the Egyptian Temples, 2016, 14 p. https://www.academia.edu/9625268/Greek_Kings_as_Egyptian_Gods
5. Caneva S. The Materiality of Hellenistic Ruler Cults, 2022, 299 p.
6. Clarysse W. Dynastic Cults, Egypt, The Encyclopedia of Ancient History, 1st Edition, 2012, pp. 2241–2243.
7. Grabowski T. The Cult of the Ptolemies in the Aegean in the 3rd Century BC, ELECTRUM, vol. 21, 2014, pp. 21-41.
8. Johnson J. The Role of the Egyptian Priesthood in Ptolemaic Egypt, Brown University Press, University Press of New England, Hanover and London. 1986, 14 p.
9. Michels Ch. Cultural Politics in Ptolemaic Egypt: Greek and Egyptian Cults in the Fayum, Stuttgart, 2017, 287 p.
10. Canopus Decree, available at: <http://attalus.org/docs/ogis/s56.html>
11. Oppen B. The Religious Identification of Ptolemaic Queens with Aphrodite, Demeter, Hathor and Isis, New York, 2007, 610 p.
12. Smith A. Queens. Empresses as Goddesses: The Public Role of the Personal Tyche in the Graeco-Roman World. Yale University Art Gallery Bulletin, 1994, pp. 86-105.

ЦАРИЦЫ В РАМКАХ ДИНАСТИЧЕСКОГО КУЛЬТА ПТОЛЕМЕЕВ

Шекоян Милена

Фонд “ВГУ”, “История”, 2-й курс

Научный руководитель:

кандидат исторических наук, доцент А. Меликян

Резюме

Ключевые слова: *Птолемей I, Птолемей II, династический культ (культ правителя), Бог-Спаситель, Береника, Арсиноя*

Одной из определяющих черт эллинистических монархий было обожествление царя и царской семьи - явление, которое в науке часто называют «политической религией». Впервые эта концепция сформировалась в Птолемеевском Египте, возникнув на основе слияния исконно египетских традиций, касающихся божественной природы фараона, и эллинистической практики наделяния правителей божественными эпитетами. В становлении династического культа Птолемеев исключительно важную роль сыграла царица Арсиноя II; благодаря ее непосредственному покровительству, культ превратился в постоянный институт.

QUEENS WITHIN THE FRAMEWORK OF THE PTOLEMAIC DYNASTIC CULT

Shekoyan Milena

“VSU” Foundation,

“History”, 2nd Year

Academic Supervisor: A. Melikyan

Candidate of Historical Sciences, Associate Professor

Summary

Key words: *Ptolemy I, Ptolemy II, dynastic cult (ruler cult), savior God, Berenice, Arsinoe*

One of the defining features of Hellenistic monarchies was the deification of the king and the royal family, a phenomenon in scholarship often referred to as “political religion”. This concept first took shape in Ptolemaic Egypt, emerging from a fusion of native Egyptian traditions concerning the divine nature of the pharaoh and the Hellenistic practice of bestowing divine epithets upon rulers. In establishing the Ptolemaic dynastic cult, Queen Arsinoe II played an exceptionally significant role; through her direct patronage, the cult evolved into a permanent institution.

1722-1730 ԹԹ. ՍՅՈՒՆԻՔԻ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ
ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ

Մահական Անուշ

*Գորիսի պետական համալսարան,
«Պատմություն», մագիստրատուրա, 2-րդ կուրս
Գիտական ղեկավար՝ Գ. Շաբունց*

Հանգուցային բառեր. *ազատագրական շարժում, Պարսկաստան, ռուսական կողմ, նախադրյալներ, գոյության պայքար*

«Հայ ժողովրդի ազատության ու անկախության գաղափարը կարմիր թելի պես անցնում է նրա բազմադարյան պատմության միջով: Գտնվելով արևելքի և արևմուտքի կամրջակետին՝ Հայաստանը եղել է ոչ միայն համաշխարհային պատմության ու քաղաքականության օրրաններից մեկը, այլև օտար նվաճողների ավերիչ պատերազմների ու ասպատակությունների թատերաբեմ» [4, 219]:

18-րդ դարի առաջին կեսի հայ ազատագրական շարժումների մեջ նշանավոր տեղ է զբաղեցնում Սյունիքի հերոսական ազատագրական շարժումը:

Նշենք, որ պատմությունն ընդարձակ ձևով գրել է Լեոն: Նա ազատագրական շարժումը դիտարկել է որպես ազգամիջյան կռիվ: Հեղինակն անտեսում էր հայ ժողովրդի մեջ այն ժամանակ առկա դասակարգային էական տարբերությունները և դրա փոխարեն նշում էր արտաքին թշնամու դեմ մղվող ընդհանուր պայքարը:

16-րդ դարի սկզբից պարսկական և օսմանյան բռնապետությունների միջև Անդրկովկասը դարձել էր պատերազմների թատերաբեմ: 1639 թ. երկու պետությունների միջև կնքվում է խաղաղության դաշնագրություն, որի համաձայն ամբողջ Արևելյան Անդրկովկասն անցնում է Պարսկաստանի տիրապետության տակ, իսկ Արևմտյան Վրաստանը և Հայաստանի հարավ-արևմտյան նահանգներն անցնում են Օսմանյան տիրապետության տակ:

Սեֆյան Պարսկաստանը հիշյալ տարածքներում իր երկրի վարչական համակարգի համաձայն կազմակերպում է խանություններ (Շիրվանի, Ղուբայի, Շաքիի, Բաքվի, Թալիշի, Գանձակի և Երևանի, Նախիջևանի և Ղարաբաղի) և վալիություններ (Քարթլիի և Կախեթի): Պետք է նշել, որ վալիությունները խանությունների համեմատությամբ ավելի արտոնյալ վիճակում էին, դրանցում կառավարում էին վրացական ազնվական դասի ներկայացուցիչները, որոնք ենթարկվում էին պարսիկներին և նրանց կողմից անվանվում վալիներ, այստեղից էլ առաջացել է վալիություններ բառը (վրացական իրականության մեջ վալի նշանակում է թագավոր):

«... Զի որպես է սովորութիւն երկրիս, որք ի յամենայն գեօղօրայս, գոր ինչ սերմանեն ի հնգէն մէկ զհնգորդ տան յարքունիս, որ բահրայ ասի և ի տասնէն մէկ գտասանորդ տան մլքատեառն, որ մուլք ասի և յայս ասացեալ ջրոցս վերայ սեր-

մանացելոցն միայն զհնգէն մին տան և զմուլք ինչ ոչ տան ումեք ով ոք իցէ և զինչ և սերմանեսցէ» [3, 198]:

Այդ հարկերից բացի հայ գյուղացիությունը վճարում էր նաև մի շարք այլ հարկեր: Հայերն ու վրացիները, որպես այլադավաններ՝ քրիստոնյաներ, վճարում էին նաև գլխահարկ:

Պատմիչ Եսայի-Ջալալյանի «Պատմութիւն Ադուանից» աշխատությունից գիտենք, որ Շահ Հուսէյնի հրամանով աշխարհագիր էր կատարվել 1699-1702թթ, դրա համաձայն հաշվառվել են տասնհինգ տարեկանից բարձր արական սեռին պատկանող բոլոր գյուղացիները, վաճառականները, արհեստավորները, հոգևորականներն ու նրանց ունեցվածքը:

Պարսիկները տարբեր տարածքներում կողոպտում էին վանքերը, սպանում վանականներին, առևանգում աղջիկներին, սակայն այդ ամենը մնում էր անպատիժ: 1699 թ. Շահ Հուսէյնը հրամայում է հարեմի համար աղջիկների հավաք կատարել, որոնցից մի մասին ուղարկում են շահին, մյուսներին՝ վաճառում: Այդ է պատճառը, որ աղջիկների պատիվը փրկելու նպատակով ծնողներն իրենց աղջիկներին ամուսնացնում էին տասը տարեկան հասակից:

17-րդ դարի վերջին Սեֆյան Պարսկաստանի կառավարության թուլացման հետևանքով երկրում ներքին անկարգություններ են ծավալվում: Պատճառներից մեկը հաճախ փոփոխվող խաների կողմից տնտեսության, շինարարության, առևտրի ու ժողովրդի ապահովության հարցերով չզբաղվելն էր:

Պարզ է, որ այդպիսի քաղաքականության արդյունքում հայ աշխատավորությունը, ունևոր դասերի ստվար մասը աղքատանալու էր: Այդ իրավիճակից Արևելյան Հայաստանը ելք էր որոնում, որպեսզի վերականգնի նաև վաղեմի անկախությունը:

«Տամանակի առաջավոր հայ գործիչները հայրենիքի ազատագրության ուղիներ էին որոնում մերթ հեռավոր Արևմուտքում, մերթ մերձակա Հյուսիսում և մերթ հանգում այն համոզման, որ սեփական բազկի գորությամբ միայն կարելի է ձեռք բերել բաղձալի ազատությունը» [5, 8]:

Նշենք, որ աշխատավոր գյուղացիությունը եկեղեցու և հոգևորականության կողմից ևս ենթարկվում էր շահագործման, որի արդյունքում տնտեսական վիճակը, ինչու չէ, նաև իրավականը, կարելի էր համարել ճորտական:

«Հայ գյուղը նեղվում էր ոչ միայն խանական, այլև եկեղեցական վարչության չարաշահումներից: Օրիի թղթերից տեղեկանում ենք, որ Մյունխաց մելիքները 2000 քսակ արծաթ էին վճարել Հակոբ կաթողիկոսի և նույնչափ՝ Եղիազարի պարտքերի դիմաց» [1, 130]:

18-րդ դարի վերջերին, երբ հայ ժողովրդի առջև ոչ թե հարստահարման կամ հալածանքների, այլ ֆիզիկական գոյության սպառնալիք կար, գրեթե բոլորը երկրի անկախության հարցով էին մտահոգված՝ անտեսելով մինչ այդ եղած հակասությունները:

Հարկ է նշել, որ Շահ Հուսեյնի տիրապետության ժամանակաշրջանում (1694-1722) Պարսկաստանը ճգնաժամ էր ապրում: Երկրի պետական գանձարանը դատարկ էր, պաշտոնները վաճառվում էին, տնտեսական և առևտրային կյանքը քայքայվել էր, կաշառակերությունը հասել էր ահռելի չափերի, ամենուրեք ինքնիշխան դառնալու ձգտումներ էին նկատվում, երկրի ռազմական վիճակը նույնպես վատ վիճակում էր:

Այս մասին վկայել է Խաչատուր Ջուղայեցին, ով իր «Պատմութիւն Պարսից» աշխատության մեջ խոսել է երկրում տիրող իրավիճակի, արքայի պորտաբույծ լինելու և յուրաքանչյուր անձի կողմից հոգուտ իրեն գործելու վերաբերյալ: Հեղինակի վկայությունները լրացնում է ռուս դեսպան Վոլինսկու զեկուցագիրը, որը գրվել է 1717 թ.: Այդ զեկուցագիրն ուղղված է եղել Պետրոս 1-ին:

Եվ իրոք, տնտեսական ու ազգային ճնշումները, կրկնվող միջխանական կռիվները, ինչպես նաև կողոպուտները սովորական էին դարձել բոլորի համար, ինչը կատարյալ անիշխանության նշան էր, որն էլ աղետալի էր հատկապես ենթակա ժողովուրդների համար:

Այս առիթով Ջուղայեցին նշել է մի դեպք, երբ Սպահանից մի փոքր հեռու գտնվող վայրում ժողովրդին հալածել, կողոպտել են, Շահ Հուսեյնը պարզապես նշել է, թե այդ գյուղը հինգ փարսաղ հեռու է գտնվում և իրեն բավական է միայն Սպահանը:

Իրավիճակը դառնում է առիթ, որ նվաճված ժողովուրդները ազատագրական շարժում սկսեն և առաջինն այդ գործն անում է աֆղան ժողովուրդը (1709 թ.): Շարժման ղեկավար Միր Վեյսը կոչ է անում վրեժ լուծել թշնամուց, որն իբրև տգրուկ խմել է իրենց արյունը: Աֆղանները սպանում են Գիորգի խանին, ով Աֆղանստանի պարսկական կառավարիչն էր, որից հետո Աֆղանստանը հայտարարում են անկախ:

Երկրի այդ կողմում ծագած ազատագրական շարժումը հետզհետե ծնում է նորերը, արդյունքում շարժման ալիքը տարածվում է ամբողջ պետության մեջ:

Այդ ժամանակ Թահմազ միրզան (Շահ Հուսեյնի որդին) հոր գահընկեցության լուրը լսելուց հետո ինքն իրեն շահ է հայտարարում և սկսում իշխել այն տարածքներում, որտեղ Միր Մահմուդը չէր կարողանում իշխանություն տարածել, սակայն ինքն էլ հաստատուն կարգեր չստեղծելու պատճառով ձախողում է այդ գործում և անիշխանության մատնում Արևմտյան Պարսկաստանն ու Անդրկովկասը: Վերջինս ավերվում է միջխանական կռիվների և լեռնաբնակ ցեղապետների ասպատակությունների պատճառով:

Շաքիի, Գանձակի և Շամախու շրջանների թույլ գորքերը ջախջախվում են, որից հետո հարձակումների արդյունքում ավերվում են ոչ միայն ներքոնշյալ, այլև այլ տարածքներ (Արևելյան Վրաստանը և Հայաստանի հյուսիսային շրջանները): 1722 թ. ավագակախմբերը մտնում և ավերում են Ղարաբաղի Բարգուշատի, Դիզակի, Խաչենի, Ջրաբերդի և Վարանդայի գավառները:

Պարսկաստանում քաղաքական խռովությունները շարունակվում էին, որոնք էլ առիթ հանդիսացան, որ ռուսական կողմը շվեդական կողմի նկատմամբ տարած հաղթանակից հետո արագ կազմակերպի նոր արշավանքը դեպի Անդրկովկաս:

Հայերը լավ էին հասկանում, որ ռուսական կողմը միայն իրենց օգնելու նպատակով չէ, որ արշավելու է, սակայն նախընտրում էին լինել Ռուսաստանի տիրապետության տակ և այլևս չպայքարել գոյության համար:

Պարսկական կողմի թուլացումից օգտվելով՝ Թուրքիան, որին եվրոպական մի շարք պետությունների դեսպաններն իրենց երկրների շահերից ելնելով օգնություն էին առաջարկել, ոտքի է կանգնում:

Թուրքական կողմը որոշում է ռուսական կողմի առաջխաղացումը կանցնելու նպատակով մուտք գործել Անդրկովկաս: Արդեն իսկ հասկանալի է, որ ռուս-թուրքական պատերազմն անխուսափելի էր, սակայն հաշվի առնելով, որ շվեդական կողմի հետ նոր էր պատերազմ տարել և տնտեսապես չունեի այն նույն հզորությունը, ինչ մինչ պատերազմը, ռուսական կողմը որոշում է սահմանափակվել մերձկասպյան պարսկական նահանգների գրավումով:

Դեպքերին զուգահեռ, Պարսկաստանի թուլությունից օգտվելով, հայ և վրաց ժողովուրդները իրենց ազատության և անկախության համար ազատագրական շարժման դրոշ են բարձրացնում:

«XVII-XVIII դդ. Հայոց պատմության բացառիկ հետաքրքրություն ներկայացնող ժամանակաշրջաններից են: Մեր պատմության նոր ժամանակաշրջանը սկզբնավորող այս դարերը պարզորոշ արտացոլեցին հայ ժողովրդի ազատասիրական ոգին, մշակութային և գիտական վիթխարի ներուժը, սեփական վերականգնված պետության մեջ ապրելու և արարելու անմար բաղձանքը» [2, 295]:

Նշենք նաև, որ Օսմանյան կայսրությունը մինչև 17-րդ դարի վերջը վարել է պատերազմներ, որոնց նպատակը տերության ընդարձակումն էր, սակայն 17-18-րդ դարերի սահմանազլխում կայսրությունում սկսվել է տնտեսական և քաղաքական ճգնաժամ:

Թուրքիան անցնում է հարձակողական գործողությունների, և 1723 թ. Իբրահիմ փաշայի հրամանատարությամբ թուրքական բանակը գրավում է Քարթլին և Կախեթը, իսկ վրաց թագավորը մեկ տարի Կրաստանում մնալուց հետո հեռանում է Ռուսաստան:

Այս հաջողությունը թուրքական կողմի համար դիտվում էր որպես դանդաղ կատարվող գործողություն, որի արդյունքում Իբրահիմ փաշան պաշտոնաթող է արվում, և նրան փոխարինում է Մուստաֆան, որի հրամանատարությամբ պետք էր Հյուսիսային Ղարաբաղի և Գանձակի ուղղությամբ շտապել Կասպից ծով:

1724 թ. Մուստաֆա փաշայի հրամանատարությամբ թուրքական բանակը գրավում է Գանձակը և ներխուժում Լեռնային Ղարաբաղի սահմանները, դրան զուգահեռ նաև Էրզրումից Երևան է շարժվում Քոփրուլու Աբդուլլահ փաշան իր

բանակով, որպեսզի հարավարևմտյան նահանգները նվաճելու միջոցով դուրս գան Կասպից ծով:

Օսմանյան գորքերը նվաճված վայրերում հայ և վրաց ժողովուրդների նկատմամբ իրականացնում էին արդեն ավանդույթ դարձած վայրագ հալածանքը: Բազմաթիվ կանայք և աղջիկներ ենթարկվում են բռնության, ուժեր էլ չէին դիմանում և մահանում էին, ոչ թե թաղվում էին, այլ պարզապես գցվում էին որևէ տեղ, որտեղ նրանց մարմինը շները կամ այլ կենդանիներ հոշոտում էին: Տասնյակ հազարավոր հայեր ու վրացիներ կտրվում են հայրենի հողից, վաճառվում Պոլսի և Թուրքիայի մի շարք այլ քաղաքների շուկաներում:

Ռուսական գործողություններին զուգահեռ ընթանում էր նաև ռուս-թուրքական դիվանագիտական պայքար, բանակցություններն այնքան սուր էին, որ հաճախ ընդհատվում էին: Դրանց ժամանակ երկու կողմերն իրար հորդորում էին այս կամ այն տարածքով բավարարվել և չխանգարել մյուսին: Պոլսում գտնվող Ավստրիայի, Վենետիկի և Անգլիայի դեսպանները հրահրում էին, որ Թուրքիան պատերազմի ռուսական կողմի դեմ, քանի որ համարում էին, որ այն շահավետ է:

Ռուսական կողմի համար պարզ էր, որ մերձկասպյան պարսկական գավառները կկարողանան հեշտ գրավել, սակայն կասպիական ափերից դեպի հարավարևմուտք դժվար կլինի, քանի որ ստիպված կլինեն պատերազմել Թուրքիայի հետ, իսկ վերջինիս կօգնեն եվրոպական պետությունները, մասնավորապես Անգլիան: Այսպես.

«Բացի այդ, հասկանալի դարձավ, որ առանց թուրքերի հետ պատերազմելու հնարավոր չպիտի լիներ տիրանալ լեզգիների գրաված Շիրվանին ու առաջ շարժվել հայ-վրացական ուժերին միանալու համար: Պարզվում էր նաև, որ երկարատև շվեդական պատերազմից նոր ելած Ռուսաստանի համար դյուրին չէր այդ պատերազմը: Այն էլ մի պետության դեմ, որի թիկունքում կանգնած էին Անգլիան և Ֆրանսիան, և որոնք Ռուսաստանին ներհակող իրենց գաղութատիրական շահերն ունեին թե՛ Իրանում և թե՛ Թուրքիայում» [1, 148]:

Ռուսաստանի դեսպանի կողմից հենց այդ հարցն էլ քննարկվում էր Պոլսում, որտեղ 1724 թ. հունիսի 12-ին կնքվում է ռուս-թուրքական պայմանագիր, ըստ որի մերձկասպյան պարսկական նահանգները մնում են Ռուսաստանին, իսկ Վրաստանը, Հայաստանը անցնում են Թուրքիային: Թուրքիայի, Պարսկաստանի և Ռուսաստանի միջև սահմանակետ է նշանակվում Արաքս և Կուր գետերի միախառնման կետը:

Թուրքական կողմը շտապում էր արագ հասնել նոր սահմաններ, իսկ ռուսական կողմը շարունակում էր տեղեկություններ հավաքել հայ և վրաց ժողովուրդների մասին, քանի որ պայմանագիրը դիտում էր որպես ժամանակավոր դադար:

Պայմանագրի վավերացման համար ռուս դեսպան Ալեքսանդր Ռումյանցևը ուղևորվում է Պոլիս: Նրա առաջադրանքն էր պարզել նավարկելի է արդյոք Կուր գետը, որքան ժամանակ կանցնի Բաքվից մինչև Վրաստան, հնարավոր գորքի համար որքան պաշար պետք կլինի և թե ինչպես են հայերն ու վրացիները:

Այս փաստով ենք բացատրում նաև այն հանգամանքը, որ պայմանագրից կնքումից հետո ռուսական կողմը միևնույն է շարունակում էր քաղաքական կապեր պահել հայկական կողմի հետ և հուսադրել ազատագրման գործում:

Ուսումնասիրելով 1722-1730 թթ. Սյունիքի ազատագրական շարժման պատմական նախադրյալները՝ հանգել ենք հետևյալ եզրակացություններին.

- Սյունիքի ազատագրական շարժման նախադրյալներ էին Պարսկաստանի ներքաղաքական խռովություններն ու թուլացումը, ռուսական կողմի արշավանքը դեպի Անդրկովկաս, Օսմանյան կայսրության հարձակողական գործողություններն ու գոյության խնդիրը:
- Ազատագրական շարժմանը նպաստող կարևոր գործոն էին նաև հայերի հարստահարումն ու այն հալածանքները, որոնք կրում էին բարձր դասի կողմից:
- Կարևոր է նաև այն հանգամանքը, որ Սյունիքը սահմանակից էր Պարսկաստանին, հետևաբար, հալածանքների անմիջապես կրողն էր, ինչը ևս նպաստել է ազատագրական պայքարի սկսվելուն:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աղայան Է., Առաքելյան Բ., Հայ ժողովրդի պատմություն, հտ. 4, Ե., ՀՄՄՀ ԳԱ հրատ., 1972, 685 էջ:
2. Սյվազյան Ա., Հայոց եկեղեցին XVIII դարի հայ ազատագրական շարժման քառուղիներում, Ե., Լուսակն հրատ., 2003, 343 էջ:
3. Երևանցի Ս., Ջամբո, Ե., Մեսրոպ Մաշտոցի անվ. Մատենադարան, 2022, 463 էջ:
4. Պարսամյան Վ., Պատմագիտական աշխատություններ, Ե., Լույս հրատ., 1985, 368 էջ:
5. Սեբաստացի Ղ., Դավիթ-բեկի պատմությունը, Ե., Արևիկ հրատ., 1988, 44 էջ:

ПРЕДПОСЫЛКИ ОСВОБОДИТЕЛЬНОГО ДВИЖЕНИЯ В СЮНИКЕ В 1722–1730 ГГ.

Саакян Ануш

*Горисский государственный университет,
«История», магистратура, 2-й курс
Научный руководитель: Г. Шабунц*

Резюме

Ключевые слова: *освободительное движение, Персия, российская сторона, предпосылки, борьба за существование*

В статье рассматривается политическая ситуация в Персии, экспансионистские устремления Османской и Российской империй, а также положение армянского народа, лишённого своих прав на родной земле.

Цель статьи – всесторонне представить исторические предпосылки и политическую ситуацию, предшествовавшую освободительной борьбе Сюника в 1722–1730 гг.

Задача статьи – раскрыть факторы, способствовавшие подъёму освободительного движения.

В работе применены историко-сравнительный и сопоставительный методы.

PREREQUISITES OF THE SYUNIK LIBERATION STRUGGLE IN 1722-1730

Sahakyan Anush

*Goris State University,
“History”, Master’s Degree, 2nd Year
Academic Supervisor: G. Shabunts*

Summary

Key words: *Liberation movement, Persia, Russian side, prerequisites, struggle for existence*

In the article, we presented the political situation on the Persian side, the selfish aspirations of the Turkish and Russian sides, and the status of the Armenian people deprived of their rights in their homeland.

The purpose of the article is to comprehensively present the historical background and the political situation preceding the liberation struggle of Syunik in 1722-1730.

The objective of the article is to reveal the factors that contributed to the rise of the liberation movement.

The study employs historical-comparative and comparative analytical methods.

ԻՆՖՈՐՄԱՏԻԿԱ
ИНФОРМАТИКА
INFORMATICS

ԸՍՏ ԺԱՆՐԵՐԻ ԳՐՔԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՄԱՐ ԳՐԱԿԱՆ
ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԵՓԱԿԱՆ ԲԱԶՄԱՅԻ ՍՏԵՂԾՈՒՄ՝
ՀԱՅՏՆԻ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ

Վարդանյան Հայարփի

«ՎՊՀ» հիմնադրամ,
«Ծրագրային ճարտարագիտություն»,
մագիստրատուրա, 1-ին կուրս
Գիտական ղեկավար՝ տեխ. գ. թ., դոցենտ Հ. Օհանյան

Հանգուցային բառեր. գրականության էլեկտրոնային ռեսուրսներ, տվյալների հավաքագրում, pdf ֆայլեր, բնական լեզվի մշակման ծառայություններ

Ներկայումս ներդրումային ցանցերի և մեքենայական ուսուցման կիրառմամբ ծառայություններն ավելի ու ավելի մեծ ճանաչում են ստանում: Դրանք օգնում են մարդկանց ինչպես առօրյա կյանքում, այնպես էլ աշխատանքային գործընթացներում: Կազմակերպություններն էլ ձգտում են ներդնել ինչպես պատրաստի ծառայությունները արհեստական բանականության (AI) կիրառմամբ, այնպես էլ ստեղծել ներդրումային ցանցերի սեփական մոդելներ՝ իրենց կարիքները բավարարելու համար: Այս միտումներից չեն ցանկանում հետ մնալ նաև գրքերի առցանց խանութները, քանի որ տարեցտարի մեծանում է հրատարակված գրական ստեղծագործությունների ծավալը: Գրքերի և հոդվածների քանակի մշտական աճի պայմաններում հաճախ դժվար է միայն վերնագրի կամ նկարագրության հիման վրա որոշել ստեղծագործության ժանրը: Գրական ստեղծագործությունների ժանրային դասակարգման համար նախատեսված ծառայությունը կարող է պարզեցնել էլեկտրոնային գրքերի դասակարգման գործընթացը:

Գրականությունը խոսքի արվեստը մարմնավորող առանցքային արվեստներից է: «Գրականություն» տերմինը ներառում է գրավոր ձևով արձանագրված և հասարակական արժեք ունեցող մարդկային մտքի բոլոր ստեղծագործությունները [1]: Գոյություն ունեն գրականության հետևյալ տեսակները, որոնցից յուրաքանչյուրն ունի իր նշանակությունը և հստակ նպատակը. գեղարվեստական գրականություն, վավերագրական արձակ, գիտական գրականություն, տեղեկատու գրականություն, ուսումնական գրականություն, տեխնիկական գրականություն [2]: Սակայն, սովորական և ավելի նեղ իմաստով, «գրականություն» ասելով նկատի են ունենում գեղարվեստական և գրավոր ստեղծագործությունները:

Աշխատանքի նպատակն է ներկայացնել մեքենայական ուսուցման մեթոդների կիրառմամբ գրական ստեղծագործություններն ըստ ժանրերի դասակարգող ծրագրի համար էլեկտրոնային գրքերի սեփական տվյալների բազայի ստեղծման գործընթացը:

XX դարի վերջից սկսեցին ի հայտ գալ նոր կրիչներ, ուստի՝ նաև գրականության նոր տեսակներ: Գրքային (կամ նաև ասում են ֆիզիկական) տեսակի հետ համատեղ հայտնվեցին աուդիոգրքեր և էլեկտրոնային գրքեր: Ակնկալվում է, որ

սմարթֆոնների և բազմալեզու էլեկտրոնային գրքերի կիրառման կտրուկ աճը կհանգեցնի էլեկտրոնային գրքերի համաշխարհային պահանջարկի աճին: Այդ ամենը կնպաստի ինչպես թվային ծառայություններից օգտվող օգտատերերի թվի աճին, այնպես էլ տարբեր հեղինակների նոր գրական ստեղծագործությունների աճին:

Շուկայում առկա են հայտնի ընկերությունների էկոհամակարգերում ներդրված բնական լեզուների տեքստերի մշակման ծառայություններ, օրինակ.

- Amazon Comprehend-ը բնական լեզվի մշակման (NLP) ծառայություն է, որը տեքստում տեղեկատվության որոնման համար օգտագործում է մեքենայական ուսուցման մեթոդներ [3],
- IBM Watson Natural Language Understanding-ն օգտագործում է խորը ուսուցում՝ հստակ կառուցվածք չունեցող տեքստային տվյալներից իմաստի և մետատվյալների դուրսբերման համար [4],
- Natural Language AI-ը բնական լեզվի մշակման և վերլուծության ծառայություն է [5] և այլն:

Այս ծառայություններն ունեն մի շարք առավելություններ և թերություններ:

Սույն աշխատանքում ուսումնասիրվում է ըստ ժանրերի գրքերի դասակարգման խնդրի սկզբնական փուլը. հայտնի էլեկտրոնային ռեսուրսներից գրքերի հավաքագրման գործընթացը սեփական բազայի ստեղծման նպատակով, որը հետագայում հիմք կծառայի ուսուցման գործընթացի համար. մեքենայական ուսուցման ալգորիթմների օգտագործման համար պարտադիր պահանջվում է տվյալների հավաքածու:

Գրքերի հավաքագրման համար սկզբում անհրաժեշտ է գտնել այնպիսի կայքեր, որոնք հնարավորություն կտան ներբեռնել էլեկտրոնային գրքեր համակարգչի կամ հեռախոսի վրա՝ դրանք հետագայում առանց ինտերնետային կապի ընթերցելու համար AvidReaders [6], Flibusta [7]: Համապատասխան կայքերից ընտրվել է Flibusta-ն, որը հայտնի է որպես էլեկտրոնային գրքերի հասանելի աղբյուր: Այն մասնավորապես կենտրոնացած է ռուսալեզու գրքերի վրա, սակայն այդտեղ կարելի է գտնել նաև անգլերեն և այլ լեզուներով գրքեր: Կայքում առկա են բազմաթիվ գրքեր՝ գեղարվեստական, գիտական, պատմական և այլ ժանրերի, որոնք հասանելի են pdf, epub, fb2 և այլ ձևաչափերով:

Որպես ծրագրավորման լեզու ընտրվել է Python-ը, քանի որ տվյալների հավաքագրման և մշակման համար այն ունի բազմաթիվ հզոր գրադարաններ և մոդուլներ, օրինակ՝ requests, BeautifulSoup և այլն: Բացի այդ, քանի որ մշակվող հավելվածը հետագայում պահանջելու է մեքենայական ուսուցման ալգորիթմների կիրառում, Python-ն ունի նաև համապատասխան հզոր գործիքներ (scikit-learn, TensorFlow, PyTorch):

Նշված կայքից համապատասխան ֆունկցիայի (create_book_dataset) միջոցով իրականացվել է տվյալների ավտամատ հավաքագրում: Տվյալ ֆունկցիան շատ կարևոր և անհրաժեշտ է, քանի որ մեծ տվյալների հավաքածուի ձեռքով հավաքագրումը չափազանց ժամանակատար է: Այդ ֆունկցիան կարելի է օգտագործել տարբեր լեզուներով գրքերի հավաքագրման համար:

def create_book_dataset (genre_url: str, klass: str, pages: int = 60) -> None:

create_book_dataset ֆունկցիան, ներբեռնում է գրքեր *flibusta.one* կայքի՝ հիմնվելով տրված ժանրի *url*-ի վրա: Ֆունկցիան ընդունում է 3 պարամետր.

- *genre_url* – գրքերի ժանրի էջի *url*,
- *klass* – ժանրի անունը, որը կօգտագործվի որպես այդ ժանրի գրքերի պահպանման ֆայլի անուն,
- *pages* – մշակման ենթակա տվյալ ժանրի էջերի քանակը (լռելիությամբ՝ 60):
main_url = "https://flibusta.one"

Կայքի հիմնական հասցեն պահպանվում է *main_url* փոփոխականի մեջ, հետագայում գրքերի հղումների լրիվ հասցեն ձևավորելու համար:

for i in range(1, pages + 1):

Այժմ մեկնաբանենք ֆունկցիայի հիմնական ցիկլի աշխատանքը: Ցիկլով իրականացվում է անցնում ժանրի նշված էջերով:

time.sleep(0.1)

Հարցումների (*request*) ինտենսիվությունը նվազեցնելու նպատակով ծրագրի կատարումը դադարեցվում է 0.1 վայրկյանով յուրաքանչյուր էջում:

os.makedirs(f"booky/{klass}/{klass}_books", exist_ok=True)

Ստեղծվում է համապատասխան դիրեկտորիաները, որտեղ պետք է պահվեն բեռնված գրքերը. *f"booky/{klass}/{klass}_books"* տողով ձևավորում է ֆայլի ուղին ֆայլային համակարգում, եթե նույնիսկ այդ ֆայլն արդեն գոյություն ունի, ապա սխալ չի առաջանում (*exist_ok=True*):

r = requests.get(genre_url + f"?page={i}", headers=headers)

Կատարվում է HTTP GET հարցում նշված *url*-ին. *genre_url + f"?page={i}"* 2 մասից ձևավորում է հարցման հասցեն, որտեղ *genre_url*-ը որոշակի ժանրի էջը նշող հիմնային *url*-ն է, իսկ *f"?page={i}"*-ն էջի համարը սահմանող հարցման պարամետրն է: *headers=headers* պարամետրն ավելացնում է HTTP հարցման վերնագրերը (*headers*):

Այսպիսով *r* փոփոխականում պահպանվում է տվյալ էջի պարունակությունը, որն արտածվում է *print("Request",r)* հրամանով:

print(genre_url + f"?page={i}", r.status_code)

Հրամանն արտածում է էջի հղումը և պատասխանի *status code*-ը (օրինակ՝ 200 հաջողված հարցման համար):

soup = BeautifulSoup(r.text, "html.parser")

Օգտագործվում է *BeautifulSoup* գրադարանը *html r.text* էջի պարունակությունը վերլուծելու համար, որտեղ *"html.parser"*-ը ներկառուցված *html* վերլուծիչ է, որը *BeautifulSoup*-ն օգտագործում է *html* փաստաթղթերը մշակելու համար: Հրամանի կատարման արդյունքում ստանում ենք *BeautifulSoup* օբյեկտ (*soup*), որը պարունակում է տվյալ էջի ամբողջ կառուցվածքը և թույլ է տալիս հետագայում գտնել ու մշակել դրա տարրերը, օրինակ՝ գտնել բոլոր հղումները, նկարները, աղյուսակները և այլն:

books = soup.find_all("a", attrs={"class": "th-in with-mask"})

Նշված հրամանը փնտրում և հավաքում է բոլոր *<a>* (հղում) էլեմենտները,

որոնք ունեն "th-in with-mask" դասը. `soup.find_all()`-ը `BeautifulSoup`-ի մեթոդ է, որը որոնում և վերադարձնում է `html`-ի բոլոր այն տարրերը, որոնք համապատասխանում են տրված պայմաններին, այս մեթոդի "a" պարամետրը նշանակում է, որ փնտրվում են բոլոր `<a>` տեգերը, `attrs={"class": "th-in with-mask"}` պարամետրը նշանակում է, որ ընտրում ենք միայն այն `<a>` տեգերը, որոնք ունեն `class="th-in with-mask"` դասը/հատկությունը: Հրամանի կատարման արդյունքում, `books`-ը կպարունակի տվյալ էջում գտնվող և կոնկրետ դաս ունեցող բոլոր գրքերի հղումները, `books`-ն արտածվում է `print("Books", books)` հրամանով:

Այժմ ներկայացնենք ցիկլը, որով անցնում ենք ստացված գրքերի հղումների ցանկով. *for book in books*:

```
print(main_url + book.get("href"), i)
```

`book.get("href")`-ը հանում է հղման `url`-ը (`href` հատկությունը) յուրաքանչյուր `<a>` տեգից և քանի որ `book.get("href")`-ը սովորաբար պարունակում է հարաբերական (`relative`) `url`, ապա `main_url + book.get("href")`-ի միջոցով այն միացվում է `main_url`-ի (`https://flibusta.one`) հետ, որպեսզի ստացվի ամբողջական հղում: Արտածվում է նաև էջի համարը `i`-ն, որից ստացվել է տվյալ գրքի հղումը:

```
time.sleep(0.1)
```

Ծրագրի կատարումը դադարեցվում է 0.1 վայրկյանով:

```
try:
```

```
book_page = requests.get(main_url + book.get("href"), headers=headers)
```

`requests.get()` մեթոդն օգտագործվում է վեբ-էջից տվյալներ բեռնելու համար: *except requests.exceptions.TooManyRedirects*:

Եթե հարցումը չափազանց շատ վերահղումներ (`redirects`) ստանա, ապա դա նշանակում է, որ կայքը կա՛մ արգելափակում է հարցումները, կա՛մ սխալ է հղման կառուցվածքը:

```
continue
```

Եթե բացառություն է առաջանում, ցիկլն անտեսում է այդ գիրքը և անցնում է հաջորդ գրքին:

```
sup = BeautifulSoup(book_page.text, "html.parser")
```

Օգտագործվում է `BeautifulSoup` գրադարանը `html` էջի պարունակությունը վերլուծելու համար:

```
lnk1 = sup.find("span", class="link pdf")
```

`BeautifulSoup` գրադարանի `find()` մեթոդի միջոցով `html` էջում որոնում է `` տարր, որն ունի `class="link pdf"` դասը/հատկությունը:

```
try:
```

```
lnk = lnk1.get("data-link")
```

Փորձում է `lnk1`-ից (``) ստանալ "data-link" ատրիբուտի արժեքը:

```
except AttributeError:
```

Եթե հղումը չկա, մշակվում է համապատասխան բացառությունը և պարզապես անցնում է կատարվում հաջորդ գրքին:

```
continue
```

```
print(lnk + " fg1bkf1ndb")
```

Հղումն արտածում է `print(lnk + " fg1bkf1ndb")` հրամանով:

```
time.sleep(0.1)
```

```
with tempfile.TemporaryFile() as file:
```

Հրամանն ստեղծում է ժամանակավոր ֆայլ, որն ավտոմատ կջնջվի, երբ այն փակվի, կամ դուրս գանք `with` բլոկից:

```
try:
```

```
while True:
```

```
try:
```

```
download_zip = requests.get(lnk, headers=heads, timeout=10)
```

Կատարում է GET հարցում `lnk`-ի վրա, որը պարունակում է pdf ֆայլի հասցեն, `headers = heads`-ն ավելացնում է HTTP հարցման վերնագրերը (`headers`), իսկ `timeout=10`-ը նշում է, որ հարցումը պետք է ավարտվի 10 վայրկյանում, եթե դրա պատասխանն ուշանում է:

```
except requests.exceptions.ConnectionError:
```

Կապի խնդիր (`ConnectionError`) առաջանալու դեպքում իրականացվում է համապատասխան բացառության մշակում (ծրագիրն սպասում է 2 րոպե և անցնում առաջ):

```
print("Waiting 2 minutes...")
```

```
time.sleep(120)
```

```
continue
```

```
else:
```

Եթե հարցումը հաջող է, ապա կգործի `else` բլոկը, որը պարզապես դուրս կգա `while` ցիկլից ավարտելով բեռնումը:

```
break
```

```
file.write(download_zip.content)
```

Հաջողությամբ բեռնված ֆայլի բովանդակությունը գրառվում է ժամանակավոր ֆայլում:

```
file.seek(0)
```

`file.seek(0)` հրամանով ֆայլի ցուցիչը տեղափոխվում է սկիզբ:

```
with zipfile.ZipFile(file) as fzip:
```

Ժամանակավոր ֆայլը բացվում է որպես `zip` ֆայլ:

```
fzip.extractall(path=f"booky/{klass}/{klass}_books")
```

`zip` ֆայլն ապափաթեթավորվում է, և գրքերը պահվում են համապատասխան ուղիով:

```
except zipfile.BadZipFile:
```

Եթե `zip` ֆայլը սխալ է (վնասված է կամ սխալ ձևաչափով), արտածվում է համապատասխան հաղորդագրությունը, և այն պարզապես բաց է թողնվում:

```
print(f"BadZipFile error with link: {lnk}")
```

```
continue
```

Այսպիսով իրականացվում է նաև համապատասխան բացառությունների մշակում:

Ֆունկցիայում օգտագործվել են հետևյալ գրադարանները և մոդուլները:

- os մոդուլը. թույլ է տալիս փոխազդել օպերացիոն համակարգի հետ, աշխատել ֆայլերի և դիրեկտորիաների հետ [8]:

- time մոդուլը. տրամադրում է ժամանակի հետ աշխատելու տարբեր ֆունկցիաներ, չնայած մոդուլը միշտ հասանելի է, սակայն ոչ բոլոր ֆունկցիաներն են հասանելի բոլոր հարթակներում [9]:

- requests մոդուլը. թույլ է տալիս ուղարկել HTTP հարցումներ Python-ի օգտագործմամբ: HTTP հարցումը վերադարձնում է Response Object (պատասխանի օբյեկտ) բոլոր տվյալներով (context, status և այլն) [10]:

- Python-ի Beautiful Soup գրադարան. նախատեսված է HTML և XML ֆայլերից տվյալներ դուրս բերելու համար, այն աշխատում է ծրագրավորողի կողմից նախընտրելի վերլուծիչի (parser-ի) հետ՝ ապահովելով ծառի վերլուծության (parse tree) նավիգացիայի, որոնման և փոփոխման հարմարավետ մեթոդներ [11]:

- Python-ի tempfile մոդուլ. թույլ է տալիս ստեղծել ժամանակավոր ֆայլեր և դրանց հետ կատարել տարբեր գործողություններ, ժամանակավոր ֆայլերը կարող են պահանջվել ծրագրի կատարման ընթացքում տվյալների ժամանակավոր պահպանման համար կամ մեծածավալ տվյալների հետ աշխատելու համար, ընդ որում, tempfile մոդուլով ստեղծված ֆայլերն անմիջապես հեռացվում են դրանց փակման ժամանակ: Ժամանակավոր ֆայլերն ստեղծվում են tempfile մոդուլի TemporaryFile() ֆունկցիայի միջոցով: Լռելիությամբ ֆայլը բացվում է w+b ռեժիմում, այսինքն՝ կարելի է և՛ կարդալ, և՛ գրել ֆայլում: Բինար ռեժիմն օգտագործվում է, որպեսզի ֆայլերը կարողանան աշխատել տվյալների բոլոր տիպերի հետ: Այս ֆայլը ֆայլային համակարգում կարող է տեսանելի անուն չունենալ [12]:

- Python-ի zipfile ներկառուցված մոդուլ. նախատեսված է Zip ֆայլերի հետ աշխատելու համար: Zip-ը ֆայլերի արխիվացման և սեղմման ամենատարածված ձևաչափն է: Այս մոդուլի միջոցով կարելի է ստեղծել, կարդալ, գրել Zip ֆայլերում, ստանալ դրանց պարունակությունը և ավելացնել նոր ֆայլեր: zipfile մոդուլում Zip ֆայլերը ներկայացնելու համար սահմանված է ZipFile դասը [13]:

Տվյալների հավաքածուն ձևավորելուց և մշակելուց հետո կարելի է դրանք օգտագործել ուսուցման գործընթացում:

Ներկայացնենք կազմած ֆունկցիայի (create_book_dataset) աշխատանքի մի քանի օրինակներ.

```
Books [<a class="th-in with-mask" href="/books/146583-iskusstvo-ponimat-zadachi/">
<div class="th-img img-resp-vert">

</div>
<div class="th-desc">
```

Նկար 1. url-ը և status code-ը


```
Request <Response [200]>
https://flibusta.one/books-genres/89-effektivnost-biznesa/?page=1 200
Soup <!DOCTYPE html>

<html lang="ru">
<head>
<title>Эффективность бизнеса скачать бесплатно в формате epub, fb2, mobi, pdf | Flibusta.one</title>
<meta content="width=device-width, initial-scale=1, maximum-scale=1, user-scalable=0" name="viewport"/>
<meta content="100%" name="MobileOptimized"/>
<meta content="flibusta.one" property="og:site_name"/>
<link href="/favicon/apple-touch-icon.png" rel="apple-touch-icon" sizes="180x180"/>
<link href="/favicon/favicon-32x32.png" rel="icon" sizes="32x32" type="image/png"/>
<link href="/favicon/favicon-16x16.png" rel="icon" sizes="16x16" type="image/png"/>
```

Նկար 2. a տեղ, որն ունի տրված դասը/հատկությունը

```
<span class="link fb2" data-format="fb2.zip" data-link="https://www.litres.ru/gettrial/?art=71345113&format=fb2.zip&amp;from=924100312" title="Скачать книгу в fb2 формате">fb2/</span>
<span class="link pdf" data-format="a4.pdf" data-link="https://www.litres.ru/gettrial/?art=71345113&format=a4.pdf&amp;from=924100312" title="Скачать книгу в pdf формате">PDF/</span>
<span class="link mobi" data-format="mobi" data-link="https://www.litres.ru/gettrial/?art=71345113&format=mobi&amp;from=924100312" title="Скачать книгу в mobi формате">mobi/</span>
```

Նկար 3. span-ը link pdf դասով/հատկությամբ



Նկար 4. Բեռնված գրքեր

Աշխատանքում անդրադարձ է կատարվել գրքերի վերլուծության և դասակարգման գործընթացում օգտագործվող բնական լեզվի մշակման տարբեր ծառայություններին, քննարկվել է ներդրումային ցանցերի և մեքենայական ուսուցման կիրառման հնարավորությունը գրական ստեղծագործությունների ժանրային դասակարգման համար: Հոդվածում ներկայացվել է աշխատանքի առաջին փուլը՝ սեփական տվյալների բազայի ստեղծման գործընթացը, որի համար մշակվել է գրքերի ավտոմատ հավաքագրման մեթոդ՝ Flibusta ռեսուրսից տվյալների ստացման ֆունկցիայի միջոցով:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Литературный энциклопедический словарь. <http://niv.ru/doc/encyclopedia/literature/articles/83/literatura.htm>
2. Литература: определение, термин, история, форма, место. <https://litpr.ru/literatura/>
3. Amazon Comprehend: <https://aws.amazon.com/ru/comprehend/features/>
4. IBM Watson Natural Language Understanding: <https://www.ibm.com/products/natural-language-understanding>
5. Демоверсия Natural Language API: <https://cloud.google.com/natural-language#demo>
6. AvidReaders: <https://avidreaders.ru/genre/>
7. Flibusta: <https://flibusta.one/books-genres/>
8. Модуль os: <https://pythonworld.ru/moduli/modul-os.html>
9. Time access and conversions: <https://docs.python.org/3/library/time.html>
10. Python Requests Module: https://www.w3schools.com/python/module_requests.asp
11. Beautiful Soup Documentation: <https://www.crummy.com/software/BeautifulSoup/bs4/doc/>
12. Create temporary files and directories using temporary files: <https://www.geeksforgeeks.org/create-temporary-files-and-directories-using-python-tempfile/>
13. Запись и чтение архивных zip-файлов: <https://metanit.com/python/tutorial/4.7.php>

СОЗДАНИЕ СОБСТВЕННОЙ БАЗЫ ЛИТЕРАТУРНЫХ ПРОИЗВЕДЕНИЙ ДЛЯ КЛАССИФИКАЦИИ КНИГ ПО ЖАНРАМ НА ОСНОВЕ ИЗВЕСТНЫХ ЭЛЕКТРОННЫХ БИБЛИОТЕК

Варданын Айарпи

Фонд “ВГУ”, “Программная инженерия”,

магистратура, 1-й курс

Руководитель магистерской диссертации:

кандидат технических наук, доцент Г. Оганян

Резюме

Ключевые слова: электронные ресурсы литературы, сбор данных, pdf-файлы, сервисы обработки естественного языка

В статье представлены различные сервисы обработки естественного языка, используемые в процессе анализа и классификации книг, а также обсуждается возможность использования нейронных сетей и машинного обучения для жанровой классификации литературных произведений. В статье представлен первый этап работы – процесс создания собственной базы данных, для чего был разработан метод автоматического сбора книг с использованием функции получения данных с ресурса Flibusta.

CREATION OF A PERSONAL DATABASE OF LITERARY WORKS FOR CLASSIFYING BOOKS BY GENRE BASED ON WELL-KNOWN ELECTRONIC LIBRARIES

Vardanyan Hayarpi

“VSU” Foundation, “Software Engineering”,

Master’s Degree, 1st Year

Academic Supervisor: H. Ohanyan,

Candidate of Technical Sciences, Associate Professor

Summary

Key words: electronic literary resources, data collection, pdf files, natural language processing services

The article presents various NLP services used in the process of analyzing and classifying books, and discusses the possibility of using NN and ML for genre classification of literary works. The article also presents the first stage of the work – the process of creating our own database, for which a method for automatically collecting books was developed using the function of obtaining data from the Flibusta.

ՖԻԶԻԿԱ

ФИЗИКА

PHYSICS

Դավթյան Գոհար

«ՎՊՀ» հիմնադրամ,

«Ֆիզիկա», 2-րդ կուրս

Գիտական ղեկավար՝ ֆ.-մ. գ. թ., դոցենտ Վ. Քոչարյան

Հանգուցային բառեր. *վիճակագրական ֆիզիկա, N-չափանի Էվկլիդյան տարածություն, ֆազային տարածություն, գնդի ծավալ, գամմա ֆունկցիա*

Մեթոդական աշխատանքում բերված են վիճակագրական ֆիզիկայում և թերմոդինամիկայում լայնորեն ընդունված N-չափանի օրթոնորմավորված Էվկլիդյան ֆազային տարածությունում N-չափանի գնդի ծավալի և նրա դիֆերենցիալի կիրառման ոլորտները, և ներկայացված է այդ մեծությունները հաշվելու պարզ մեթոդ: Ստացված արտահայտությունը հնարավորություն է տալիս հաշվել N-չափանի գնդի ծավալը N-ի ցանկացած արժեքի համար: Ցույց է տրված, որ շատ մեծ N-երի դեպքում գնդի ծավալը կենտրոնացված է նրա N-չափանի մակերևույթի մոտ բարակ շերտում:

Վիճակագրական ֆիզիկայում մեխանիկական համակարգի շարժման նկարագրման համար հաճախ օգտագործվում է Γ ֆազային տարածություն հասկացությունը: Ենթադրենք N մասնիկից կազմված համակարգը նկարագրվում է s ընդհանրացված կոորդինատներով և նրանց համապատասխան s ընդհանրացված իմպուլսներով: Ֆազային տարածություն կամ s ազատության աստիճան ունեցող Γ տարածություն հասկացության ներքո հասկացվում է $2s$ չափումներով արստրակտ Էվկլիդյան օրթոնորմավորված տարածություն, որիս առանցքները $q_i (i = 1, 2, \dots, s)$ ընդհանրացված կոորդինատներն են, իսկ մյուս s առանցքները՝ p_i ընդհանրացված իմպուլսները [1, 20]:

q_i և p_i մեծությունները ունեն տարբեր չափողականություն: Դա էական նշանակություն չունի, քանի որ բազմաչափ տարածության մեջ կոորդինատային առանցքների երկարության միավորները կարող ենք ներկայացնել q_i և p_i մեծություններով արտահայտված ինչ-որ միավորով: Այս դեպքում օրթոնորմավորված ուղղանկյուն դեկարտյան համակարգում «հեռավորության» քառակուսին՝ հաշված կոորդինատների սկզբնակետից մինչև տարածության ինչ-որ (q_i, p_i) կետը, հավասար է

$$l^2 = \sum_{i=1}^s (q_i^2 + p_i^2) \tag{1}$$

Համակարգի մեխանիկական վիճակը ֆազային տարածության մեջ պատկերվում է որոշակի կետով (ֆազային կետ): Համակարգի շարժման ժամանակ ֆազային կետի շարժումը նկարագրվում է $2s$ -չափանի տարածությունում մեկ չա-

փանի կորով (ֆազային հետագիծ), որի պարամետրային հավասարումը ունի հետևյալ տեսքը

$$q_i = q_i(t; q_w^0, p^0), p_i = p_i(t; q^0, p^0) \quad (i = 1, 2, \dots, s) \quad (2)$$

որտեղ q_i^0 և p_i^0 կոորդինատի և իմպուլսի սկզբնական արժեքներն են:

Եթե համակարգը փակ է և կոնսերվատիվ, ապա նրանում էներգիան պահպանվում է, այսինքն՝ այն շարժման ինտեգրալ է

$$H(q, p) = E = const \quad (3)$$

Այս դեպքում մեկ չափանի ֆազային հետագիծը ընկած է $(2s - 1)$ -չափանի հիպերմակերևույթի վրա, որի հավասարումն ունի (3) տեսքը:

Γ տարածության անվերջ փոքր $d\Gamma$ ծավալը, որի կետերն ընկած են q_i, p_i և $q_i + dq_i, p_i + dp_i$ միջակայքում, այսինքն $2s$ -չափանի dq_i, dp_i կողմերով անվերջ փոքր գուգահեռանիստի ներսում, հավասար է

$$d\Gamma = dq_1 dq_2 \dots dq_s dp_1 dp_2 \dots dp_s = \prod_{i=1}^s dq_i dp_i = (dq)(dp) \quad (4)$$

$q_i \cdot p_i$ արտադրյալի չափողականությունը հավասար է

(էներգիա \times ժամանակ) = (գործողություն) = ML^2T^{-1}

Այստեղից հետևում է, որ Γ տարածության չափողականությունը s ազատության աստիճան ունեցող համակարգի համար հավասար է (գործողություն) s :

Եթե տրված է համակարգի E էներգիան և համակարգը վերջավոր է, այսինքն նրա q_i կոորդինատները կարող են փոփոխվել վերջավոր միջակայքերում, ապա $H(q, p) = E$ հիպերմակերևույթը փակ է և սահմանափակում է $2s$ -չափանի ծավալ ֆազային տարածությունում, որը հավասար է

$$\Gamma(E) = \int_{H(q,p) \leq E} \dots \int dq_1 dq_2 \dots dq_s dp_1 dp_2 \dots dp_s \quad (5)$$

$H(q, p) = E$ և $H(q, p) = E + dE$ էներգիաների միջակայքում ընկած Γ տարածության շերտի ծավալը հավասար է $d\Gamma(E) = g(E)dE$, որտեղ $g(E) = \frac{d\Gamma(E)}{dE}$ մեծությունը կոչվում է համակարգի վիճակագրական կշիռ [1, 41]:

Մակրոսկոպական համակարգերի համար, որը կազմված է մեծ թվով մասնիկներից ($N \sim 10^{23}$), $g(E) = \frac{d\Gamma(E)}{dE}$ մեծությունը E էներգիայից կախված արագ աճող ֆունկցիա է:

Համաձայն (4)-ի

$$\Gamma(E) = \int_{\mathbf{H}(q,p) \leq E} \dots \int dx_1 dy_1 dz_1 \dots dz_N dp_{1x} dp_{1y} \dots dp_{Nz} \quad (6)$$

$$\text{որտեղ } \mathbf{H} = \sum_{i=1}^N \left(\frac{1}{2m} (p_{ix}^2 + p_{iy}^2 + p_{iz}^2) + u(x_i, y_i, z_i) \right) = E :$$

Ըստ յուրաքանչյուր ատոմի կոորդինատների ինտեգրումը սահմանափակված է մասնիկները պարունակող անոթի V ծավալով, այդ պատճառով ըստ բոլոր N ատոմների կոորդինատների ինտեգրումը տալիս է VN բազմապատկիչը: Ըստ իմպուլսների տարածության ինտեգրումը բերում է $R = \sqrt{2mE}$ շառավղով $3N$ չափանի գնդի ծավալի որոշմանը: Քանի որ $3N$ չափանի իմպուլսների տարածությունում ծավալի չափը հավասար է (իմպուլս) $3N$, իսկ գնդի ծավալը որոշվում է նրա շառավղով, ապա $R = \sqrt{2mE}$ շառավղով գնդի ծավալը կլինի

$$C_N R^{3N} = C_N (2mE)^{\frac{3N}{2}} \quad (7)$$

որտեղ C_N -ը N -ից կախված անչափ բազմապատկիչ է:

Այսպիսով

$$\Gamma(E) = V^N C_N (2mE)^{\frac{3N}{2}}$$

և

$$g(E) = \frac{d\Gamma(E)}{dE} = V^N C_N (2m)^{\frac{3N}{2}} \frac{3N}{2} E^{\frac{3N}{2}-1} \approx B_N E^{\frac{3N}{2}} \quad (8)$$

Քանի որ N -ը շատ մեծ է, (8)-ում $\frac{3N}{2} - 1$ ցուցիչը փոխարինել ենք $\frac{3N}{2}$ -ով, որը գործնականում չի փոխել $g(E)$ ֆունկցիայի կախվածությունը E -ից և BN բազմապատկիչը կախված չէ E -ից [1, 48]:

Այսպիսով ստացանք, որ վիճակների խտությունը (վիճակագրական կշիռը) ստանալու համար անհրաժեշտ է հաշվել Γ ֆազային տարածության մեջ գնդի ծավալը և $d\Gamma$ էլեմենտար ծավալը:

N -չափանի էվկլիդեսյան օրթոնորմավորված տարածությունում գնդի ծավալը հաշվելու համար կան տարբեր եղանակներ [3, գլուխ 3]: Մենք կօգտվենք [2, 50]-ում ներկայացված պարզ մեթոդից:

N -չափանի գնդի շառավղի

$$R = \sqrt{x_1^2 + x_2^2 + \dots + x_N^2} \quad (9)$$

որտեղ x_1, x_2, \dots, x_N -ը օրթոնորմավորված կոորդինատային համակարգում գնդի մակերևույթի կետերի կոորդինատներն են:

Քանի որ գնդի ծավալը կարող է կախված լինել միայն իր շառավղից, հետևում է, որ N -չափանի գնդի ծավալը կլինի

$$V_N = C_N R^N \quad (10)$$

որտեղ C_N -ը չափ չունեցող գործակից է:

N -չափանի տարածությունում C_N գործակիցը որոշելու համար օգտվենք հայտնի արժեք ունեցող $\int_{-\infty}^{\infty} e^{-ax^2} dx = 2 \int_0^{\infty} e^{-ax^2} dx = \frac{\sqrt{\pi}}{a^{1/2}}$ որոշյալ ինտեգրալից:

Մի կողմից՝

$$I = \int_{-\infty}^{\infty} \dots \int \exp\{-a(x_1^2 + x_2^2 + \dots + x_N^2)\} dx_1 dx_2 \dots dx_N = \left[\int_{-\infty}^{\infty} e^{-ax_1^2} dx_1 \right]^N = \left(\frac{\pi}{a} \right)^{\frac{N}{2}} \quad (11)$$

(10)-ից հետևում է, որ անվերջ բարակ գնդային շերտի ծավալը հավասար է՝

$$dV_N = C_N N R^{N-1} dR \quad (12)$$

Հետևաբար (11) ինտեգրալը կարող ենք հաշվել և այսպես

$$I = \int_0^{\infty} e^{-aR^2} C_N N R^{N-1} dR \quad (13)$$

$z = aR^2$ ինտեգրման փոփոխականը ներմուծելուց հետո կստանանք.

$$I = C_N \frac{N}{2a^{1/2}} \int_0^{\infty} z^{\frac{N}{2}-1} e^{-z} dz = C_N \frac{N}{2a^{1/2}} \Gamma\left(\frac{N}{2}\right) \quad (14)$$

որտեղ $\Gamma\left(\frac{N}{2}\right)$ -ը գամմա ֆունկցիան է [3]:

Հավասարեցնելով (11) և (14), կստանանք

$$C_N = \frac{\pi^{\frac{N}{2}}}{\Gamma\left(\frac{N}{2} + 1\right)} \quad (15)$$

Համաձայն սահմանման $\Gamma(z)$ գամմա-ֆունկցիան որոշվում է

$$\Gamma(z) = \int_0^{\infty} x^{z-1} e^{-x} dx \quad (16)$$

հավասարության միջոցով [1, 413]:

Աջ մասի որոշյալ ինտեգրալը x փոփոխականով կախված է z պարամետրից: $\Gamma(z)$ ֆունկցիայի (16) սահմանումից, գամմա-ֆունկցիայի համար ստացվում է հետևյալ ռեկուրենտ առնչությունը.

$$\Gamma(z+1) = z\Gamma(z) \quad (17)$$

z -ի ամբողջ և կիսամբողջ արժեքների համար $\Gamma(z)$ ֆունկցիայի մեծությունները հաշվելու համար, որոշենք $\Gamma(1)$ և $\Gamma\left(\frac{1}{2}\right)$ արժեքները:

$$\Gamma(1) = \int_0^{\infty} e^{-x} dx = 1 \quad \Gamma\left(\frac{1}{2}\right) = \int_0^{\infty} x^{-\frac{1}{2}} e^{-x} dx = \sqrt{\pi}, \quad (18)$$

Օգտագործելով (17) և $\Gamma(1)$, $\Gamma\left(\frac{1}{2}\right)$ արժեքները, կստանանք

$$\Gamma(2) = 1, \Gamma(3) = 1 \cdot 2, \Gamma(4) = 1 \cdot 2 \cdot 3, \Gamma(n) = (n-1)! \quad (19 \text{ ա})$$

$$\begin{aligned} \Gamma\left(\frac{3}{2}\right) &= \frac{1}{2} \sqrt{\pi}, \Gamma\left(\frac{5}{2}\right) = \frac{3}{2} \cdot \frac{1}{2} \sqrt{\pi} = \frac{3\sqrt{\pi}}{4}, \\ \Gamma\left(\frac{7}{2}\right) &= \frac{5}{2} \cdot \frac{3}{2} \cdot \frac{1}{2} \sqrt{\pi} = \frac{15\sqrt{\pi}}{8}, \\ \Gamma\left(\frac{2n+1}{2}\right) &= \frac{(2n-1)!!}{2^n} \sqrt{\pi} \end{aligned} \quad (19 \text{ բ})$$

որտեղ $(2n-1)!!$ 1-ից մինչև $(2n-1)$ հաջորդական կենտ թվերի արտադրյալն է:

Եթե հաշվի առնենք, որ $\Gamma\left(\frac{N}{2}+1\right) = \left(\frac{N}{2}\right)\Gamma\left(\frac{N}{2}\right)$, ապա (15)-ից հետևում է, որ

$$C_2 = \pi, \quad C_3 = \frac{4\pi}{3}, \quad C_4 = \frac{\pi^2}{2}, \quad C_5 = \frac{8\pi^2}{15}, \quad C_6 = \frac{\pi^3}{6} \text{ և այլն:}$$

Ստանանք արտահայտություն N -չափանի տարածության մեջ R -ից $R + \Delta R$ միջակայքի գնդային շերտի ΔV_N ծավալի համար:

$$\Delta V_N = C_N R^N - C_N (R - \Delta R)^N = C_N R^N \left[1 - \left(1 - \frac{\Delta R}{R} \right)^N \right] \quad (20)$$

$\Delta R \ll R$ դեպքում $\left(1 - \frac{\Delta R}{R} \right)^N$ արտահայտությունը շարքի վերածելը արդյու-

նավետ չէ, քանի որ N -ը շատ մեծ է և շարքի երկրորդ, երրորդ, չորրորդ

անդամների համար ստացվում են մեծ թվեր (օրինակ՝ $N = 10^{20}$ և $\left(\frac{\Delta R}{R}\right) = 10^{-10}$ դեպքում ստացվում են 10^{10} , 10^{20} , 10^{29} կարգի մեծություններ):

Մյուս կողմից

$$\left(1 - \frac{\Delta R}{R}\right)^N = \left[1 - \frac{N\left(\frac{\Delta R}{R}\right)}{N}\right]^N \rightarrow e^{-N\frac{\Delta R}{R}} \quad (21)$$

Եթե N շատ մեծ է $N \cdot \left(\frac{\Delta R}{R}\right)$ համեմատ: Մյուս դեպքում (20)-ից հետևում է, որ

$$\Delta V_N = V_N \left(1 - e^{-N\frac{\Delta R}{R}}\right) \quad (22)$$

և եթե $N \cdot \left(\frac{\Delta R}{R}\right) \gg 1$, որը միշտ տեղի ունի $\left(\frac{\Delta R}{R}\right) \ll 1$ դեպքում, կստանանք, որ $\Delta V_N \approx V_N$, այսինքն գնդի V_N ամբողջ ծավալը կենտրոնացված է նրա մակերևույթի մոտ բարակ շերտում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ансельм А. И. Основы статистической физики и термодинамики. Москва: «Наука», 1973.
2. Кубо Р. Статистическая механика. Москва: Мир, 1967.
3. Смирнов В. И. Курс высшей математики. Москва: «Высшая школа», том 3, ч. 2, гл. 3, 1953.

ОБЪЕМ ШАРА В N-МЕРНОМ ЭВКЛИДОВОМ ПРОСТРАНСТВЕ

Давтян Гоар

Фонд "ВГУ",

"Физика", 2-й курс

Научный руководитель:

кандидат физико-математических наук, доцент В.Кочарян

Резюме

Ключевые слова: *статистическая физика, N-мерное Эвклидовое пространство, фазовое пространство, объем шара, гамма-функция*

В методической работе приведены области применения в широко принятой в статистической физике и термодинамике N-мерном ортонормированном Эвклидовом фазовом пространстве объема N-мерного шара и его дифференциала и представлен простой метод вычисления этих величин. Полученное выражение позволяет вычислить объем N-мерного шара для любого значения N. Показано, что при очень больших N объем шара сосредоточен в тонком слое вблизи его N-мерной поверхности.

THE VOLUME OF A BALL IN THE N-DIMENSIONAL EUCLIDEAN SPACE

Davtyan Gohar

"VSU" Foundation,

"Physics", 2nd Year

Academic Supervisor: V. Kocharyan,

Candidate of Physical and Mathematical Sciences, Associate Professor

Summary

Key words: *statistical physics, N-dimensional Euclidean space, phase space, the volume of a ball, gamma function*

The fields of application in the N-dimensional orthonormalized Euclidean phase space widely accepted in statistical physics and thermodynamics are given in the volume of an N-dimensional ball. Its differential and a simple method for calculating these quantities are presented in the methodical work. The obtained expression allows us to calculate the volume of an N-dimensional ball for any value of N. The article shows that in the case of very large N-s, the volume of the sphere is confined to a thin layer near its N-dimensional surface.

ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ
ՔԻՄԻԱ

БИОЛОГИЯ И
ХИМИЯ

BIOLOGY AND
CHEMISTRY

ՄԻԿՐՈԿԱՆԱԶԻՆԵՐԻ ՎԻՏԱՄԻՆԱՅԻՆ ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ
ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅՈՒՆԸ ԴՐԱՆՑ ՀԱՍՈՒՆ ՀԱՄԱՐԺԵՔՆԵՐԻ ՀԵՏ

Բարայան Մարտա

«ՎՊՀ» հիմնադրամ,

«Կենսաբանություն», 4-րդ կուրս

Գիտական ղեկավար՝ կ. գ. թ., դոցենտ Վ. Հովսեփյան

Հանգուցային բառեր. *միկրոկանաչի, սովորական կանաչի, բանջարեղեն, վիտամինային կազմ, վիտամին C, միկրո ռուկկոլա, միկրո բողկ, միկրո հազար*

Կանաչեղենը և բանջարեղենը մարդու սննդակարգում ավանդաբար համարվում են կարևոր բաղադրիչ՝ հանդիսանալով վիտամինների, հանքանյութերի և կենսաբանորեն ակտիվ միացությունների հարուստ աղբյուր: Ներկայումս մեծ ուշադրություն է դարձվում հատկապես միկրոկանաչիների ուսումնասիրությանը՝ որպես բարձր սննդային արժեք ունեցող նորարարական սննդային բաղադրիչներ: Միկրոկանաչները երիտասարդ բույսեր են, որոնք հավաքում են առաջին իսկական տերևների ձևավորումից անմիջապես հետո և աչքի են ընկնում ինտենսիվ սննդային կազմով:

Սովորական կանաչները, ինչպիսիք են մաղադանոսը, համեմը, սամիթը, երկար ժամանակ օգտագործվել են որպես սննդի հիմնական բաղադրիչներ: Դրանք հարուստ են վիտամիններով և հանքանյութերով՝ հատկապես հարուստ են վիտամին A-ով, վիտամին C-ով և ֆոլաթթվով: Մակայն, դրանց սննդային արժեքը կարող է տարբեր լինել՝ կախված աճեցման պայմաններից, տեսակից և կարող է զգալիորեն զիջել միկրոկանաչիների սննդային արժեքին [2]:

Միկրոկանաչները հասուն բույսերի երիտասարդ տարբերակներն են, որոնք կարելի է օգտագործել առաջին իսկական տերևների հայտնվելուց հետո: Դրանք լայնորեն հայտնի դարձան 1980-ականներին, երբ առաջին անգամ սկսեցին հայտնվել Կալիֆոռնիայի ռեստորաններում [4]:

Բազմազան գույներով աչքի ընկնող միկրոկանաչները ունեն բավականին տարբերվող արտաքին տեսք և ավելի վառ արտահայտված համ, քան հասուն կանաչները: Այս բուրավետ կանաչները հիանալի գունային հավելում են տարբեր համեղ ուտեստների համար: Միկրոկանաչները, որոնք բավականին տարածված են արտասահմանյան երկրներում և բոլորովին վերջերս են մուտք գործել հայկական շուկա, հիմնականում օգտագործում են աղցանների, տաք ուտեստների և այնպիսի ըմպելիքների պատրաստման համար, ինչպիսիք են օրինակ՝ սմուդլները և դետոքս ըմպելիքները: Առավել հաճախ օգտագործվող միկրոկանաչներից են միկրոռուկկոլան, միկրոամարանտը, միկրոբողկը, միկրոարևածաղիկը, միկրոլոռը, միկրոբրոկոլին և այլն:



Նկար 1. Տարբեր տեսակի միկրոկանաչիներ

Չնայած իրենց փոքր չափերին՝ միկրոկանաչիները հարուստ են սպիտակուցներով և հաճախ պարունակում են ավելի շատ սննդարար նյութեր, քան հասուն բանջարեղենը: Հետևաբար, դրանք շահավետ հավելում են ցանկացած սննդակարգի համար և ներկայումս մեծ տարածում են գտնում թե՛ երիտասարդների, թե՛ տարեցների շրջանում:

Միկրոկանաչիները, ի տարբերություն սովորական կանաչիների, ունեն մի շարք առավելություններ. [2]

- **Դրանք պահանջում են կարճ աճեցման շրջան,** ինչի շնորհիվ նվազում է հիվանդությունների և վնասատուների ազդեցությունը դրանց վրա: Սովորաբար միկրոկանաչիները աճեցվում են 7-14 օրվա ընթացքում: Եվ հաշվի առնելով միկրոկանաչիների կյանքի կարճ տևողությունը խորհուրդ է տրվում դրանք օգտագործել հնարավորինս թարմ, գերադասելի է ենթաշերտից բաժանվելուց անմիջապես հետո:

- **Միկրոկանաչիները հարուստ են վիտամիններով** (մասնատրապես C, E, K վիտամիններ), հանքանյութերով, հակաօքսիդանտներով և այլ կենսաբանորեն ակտիվ նյութերով: Հատկապես անուշաբույր միկրոկանաչները (ռեհան կամ համեմ) պարունակում են տարբեր եթերայուղեր, որոնք դրական են ազդում մարտդոության վրա և բարելավում են նյութափոխանակությունը: Վիտամին C-ի, կարոտինոիդների, վիտամին K-ի և վիտամինի E-ն ամենաբարձր կոնցենտրացիան ունեն համապատասխանաբար կարմիր միկրոկաղամբը, միկրոհամեմը, միկրոամարանթը և կանաչ միկրոդայկոնը:

- Միկրոկանաչիները ոչ միայն ավելի հարուստ են վիտամիններով, այլև **ունեն ավելի ինտենսիվ համ և բուրմունք:**

- **Դրանք պահանջկոտ չեն լույսի և ջերմության նկատմամբ.** կարող են աճել տարբեր աստիճանի լուսավորության պայմաններում, և՛ արհեստական, և՛ բնա-

կան լույսի ազդեցության ներքո և նույնիսկ մթության պայմաններում: Սակայն տարբեր աստիճանի լուսավորության պայմանները կարող են էականորեն ազդել միկրոկանաչիների քիմիական կազմի և համի վրա: Օրինակ, միկրոեզիպտացորենը մթության մեջ աճեցվելու դեպքում ձեռք է բերում քաղցր համ, մինչդեռ լույսի ազդեցության դեպքում դառն է:

▪ **Միկրոկանաչիների աճեցումը կարելի է կազմակերպել փակ տարածքներում՝ օգտագործելով նվազագույն ջրային և հողային ռեսուրսներ:** Այս հանգամանքը հատկապես կարևոր է կլիմայական փոփոխությունների և սննդային անվտանգության համատեքստում: [2]

Տարբեր հետազոտություններ ցույց են տվել, որ միկրոկանաչիները վիտամինային և հակաօքսիդանտային կազմով հաճախ գերազանցում են հասուն կանաչիներին: Ըստ այդ հետազոտությունների՝ միկրոկանաչիները պարունակում են 4-ից 40 անգամ ավելի խտացված սննդանյութեր, քան իրենց հասուն համարժեքները: Օրինակ՝ կարմիր կաղամբի միկրոկանաչիները պարունակում են 40 անգամ ավելի շատ վիտամին E և վեց անգամ ավելի շատ վիտամին C, քան հասուն կարմիր կաղամբը: [3]

Հատկապես ուշագրավ է միկրոկանաչիների էթերայուղերի պարունակությունը, որոնք ոչ միայն տալիս են յուրահատուկ բուրմունք, այլև ունեն արտահայտված հակամանրէային և հակաօքսիդանտային հատկություններ:

Միկրոկանաչիների առանձնահատկությունների և կիրառման վերաբերյալ տվյալները ներկայացված են աղյուսակ 1-ում [3, 5]:

Հետազոտության նպատակն է՝ համեմատել միկրոկանաչիների և դրանց հասուն համարժեքների վիտամին C պարունակությունը, ինչպես նաև գնահատել դրանց սննդային արժեքի տարբերությունները:

Ուսումնասիրության մեթոդները: Հետազոտական աշխատանքի ընթացքում ուսումնասիրվել են միկրոկանաչիների հետևյալ տեսակները՝ միկրոռուկկոլա, միկրոբողկ, միկրոհազար և դրանց հասուն համարժեքները: Ուսումնասիրության ընթացքում որոշել ենք այդ բույսերում ասկորբինաթթվի պարունակությունը և իրականացրել համեմատական վերլուծություն՝ նպատակ ունենալով որոշել, թե որ տեսակներն են առանձնանում վիտամին C-ի առավել շատ պարունակությամբ:

Հետազոտությունը սկսելուց առաջ նախապես աճեցվել են նշված միկրոկանաչիները:



Նկար 2. Միկրոկանաչիների աճեցումը

Միկրոկանաչիների առանձնահատկությունները և կիրառությունը

Անվանումը	Միկրո բողկ	Միկրո ռուկոլա	Միկրո հագար
Համային հատկությունները	Թթեթևակի կծու բողկի համ	Նման է ընկուզի և պղպեղի համերի խառնուրդին որոշակի կծու նրբերանգով:	Նման է հազարի և բողկի համերի խառնուրդին թեթևակի կծու նրբերանգով
Բույրը	Թարմ բողկի բույր	Վառ արտահայտված ռուկ-կոլայի բույր:	Թթեթևակի արտահայտված կաղամբի բույր
Ազդեցությունը օրգանիզմի վրա	<ol style="list-style-type: none"> 1. Կանխարգելում է քաղցկեղի որոշ տեսակներ: 2. Օգնում է պահպանել սեռադուրությունը: 3. Նվազեցնում է սրտանոթային հիվանդությունների ռիսկերը: 	<ol style="list-style-type: none"> 1. Նվազեցնում է քաղցկեղի հավանականությունը: 2. Ապահովում է ոսկրային ամրություն: 3. Նվազեցնում է թթվայնությունը և պաշտպանում խոցերից: 4. Բարելավում է սեռադուրությունը: 	<ol style="list-style-type: none"> 1. Բարելավում է ստամոքս-ղիքային համակարգի գործունեությունը: 2. Մաքրում է օրգանիզմը ստրսիներից: 3. Իջեցնում է արյան ճնշումը:
Վիտամինների և հանքային նյութերի պարունակությունը	Պարունակում է վիտամին C, A, K, E, Բետա-կարոտին, լուտեին, ֆոսֆոր:	Պարունակում է վիտամին C, Բետա-կարոտին, կալիում, կալցիում, մագնեզիում:	Պարունակում է վիտամին C, A B, կալցիում, յոդ, երկաթ:
Կիրառությունը	Այն կարող է լինել հում բանջարեղենային աղցանների, մսային ուտեստների և սառը ապուրների հիանալի կծու հավելում:	Օգտագործվում է սենվիչների և աղցանների ամբողջական տեսք և համ հարդելու համար:	Կիրառվում է թարմ վիճակում, որպես մսային ուտեստների և աղցանների հավելում:

Հետազոտության ընթացքում՝ պատրաստեցինք միկրոկանաչիների և դրանց հասուն համարժեքների ֆիլտրատները:



Նկար 3. Միկրոկանաչիների փորձանմուշները

Վիտամին C-ի պարունակությունը որոշեցինք յոդաչափական եղանակով, որը հիմնված է յոդի օքսիդավերականգնիչ հատկության վրա: Վիտամին C-ի քանակությունը որոշվել է կալիումի յոդատով տիրտրման միջոցով: Մեթոդի էությունը այն է, որ կալիումի յոդատը ասկորբինաթթվի (վիտամին C-ի) ակտիվության հետևանքով վերականգնվում է ազատ յոդի, որը ներկվում է օսլայի լուծույթով: Հետազոտության ստացված արդյունքները ներկայացված են ստորև բերված աղյուսակում:

Ուսումնասիրության արդյունքները. Հետազոտության արդյունքներից պարզ դարձավ, որ միկրոկանաչիներում վիտամին C-ի քանակությունը ավելի բարձր է, քան հասուն կանաչիներում: Ինչպես տեսնում ենք աղյուսակ 2-ից, վիտամին C-ի քանակությունը ամենաբարձրը միկրոբոդկի բաղադրության մեջ է և կազմում է 46,5 մգ %:

Միկրոբոդկի մեջ վիտամին C-ի քանակությունը 3 անգամ ավելի բարձր է, քան հասուն բոդկի մեջ: Վիտամին C-ի քանակությամբ երկրորդ տեղն է զբաղեցնում միկրոռուկկոլան, որտեղ այն կազմում է 42,6 մգ %:

Աղյուսակ 2

Վիտամին C-ի պարունակությունը միկրոկանաչիների և համապատասխան հասուն բույսերի փորձանմուշներում

<i>Հետազոտվող բույս</i>	<i>Ասկորբինաթթվի քանակությունը մգ %</i>
Միկրոհազար	15,5
Հազար	5,3
Միկրոբոդկ	46,5
Բոդկ	14,3
Միկրոռուկկոլա	42,6
Ռուկկոլա	13

Վերլուծելով հետազոտության արդյունքները՝ կարելի է եզրակացնել, որ միկրոկանաչիները վիտամին C-ի պարունակությամբ զգալիորեն գերազանցում են դրանց հասուն ձևերին: Ուստի, միկրոկանաչիները կարող են դիտարկվել որպես արժեքավոր սննդային բաղադրիչներ և առաջարկվում են կանոնավոր օգտագործման համար:

Բացի վիտամին C-ի բարձր պարունակությունից՝, միկրոկանաչիները հարուստ են նաև այլ կենսաակտիվ նյութերով, ներառյալ ֆլավոնոլիդները, կարոտինոլիդները և ֆենոլային միացությունները, որոնք հայտնի են իրենց հակաօքսիդանտային հատկություններով: Այս միացությունները կարող են նպաստել օրգանիզմի օքսիդատիվ սթրեսի նվազեցմանը, ուժեղացնել իմունային համակարգը և նվազեցնել քրոնիկ հիվանդությունների զարգացման ռիսկը [3]:

Հաշվի առնելով միկրոկանաչիների բարձր սննդային արժեքը՝ դրանց ընդգրկումը սննդակարգում կարող է բարենպաստ ազդեցություն ունենալ առողջ ապրելակերպի խթանման համար, անհրաժեշտ են հետագա ուսումնասիրություններ՝ միկրոկանաչիների կենսաբազմազանության հնարավոր ազդեցությունները գնահատելու և դրանց օգտակար հատկությունների առավել արդյունավետ կիրառման ուղիները սահմանելու համար:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աղաջանյան Ա., Թոչունյան Ա., Բույսերի կենսաքիմիա, ԵՊՀ, 2017, 152 էջ:
2. Синицын А. Н., Новосельцев А. О. Модуль для выращивания микрозелени из семян растений и способ выращивания микрозелени из семян растений, Санкт-Петербург, 2021, 23 стр.
3. Khan F. A., Bhat S. A., Imtiyaz M., Fouzia Sh., Padder S. A., Saima Wani M. Microgreens and their potential health benefits. Division of Basic Sciences and Humanities, Shalimar (Srinagar), J&K, 2022, 8 p.
4. Negi P. Microgreen Farming, Times of agriculture. A resonance in agriculture monthly agriculture E-Magazine, SBS University, Dehradun, 2024, 11 p.
5. Кресс-салат как биоиндикатор, <http://school155ufa.ru/arhiv/bio/salat.pdf> (20.03.2025)

СРАВНЕНИЕ УРОВНЯ ВИТАМИНОВ В МИКРОЗЕЛЕНИ И ЗРЕЛЫХ АНАЛОГАХ

Бабаян Марта

Фонд “ВГУ”,

«Биология», 4-й курс

Научный руководитель:

кандидат биологических наук, доцент В. Овсепян

Резюме

Ключевые слова: *микروزель, обычная зелень, овощи, витаминный состав, витамин С, микроруккола, микроредис, кресс-салат*

Зелень и овощи традиционно считаются важной составляющей рациона человека, поскольку являются богатым источником витаминов, минералов и биологически активных соединений. В настоящее время особое внимание уделяется изучению микрозелени как инновационного пищевого ингредиента с высокой питательной ценностью. Микрозель – это молодые растения, которые собирают сразу после появления первых настоящих листьев и отличаются высокой концентрацией полезных веществ.

COMPARISON OF VITAMIN LEVELS IN MICROGREENS AND THEIR MATURE COUNTERPARTS

Babayan Marta

“VSU” Foundation,

“Biology,” 4th Year

Academic Supervisor: V. Hovsepyan,

Candidate of Biological Sciences, Associate Professor

Summary

Key words: *microgreens, greens, vegetables, vitamin composition, vitamin C, micro arugula, micro radish, micro watercress*

Greens and vegetables have traditionally been considered an essential part of the human diet, as they are a rich source of vitamins, minerals, and bioactive compounds. Recently, increasing attention has been given to the study of microgreens as an innovative food ingredient with high nutritional value. Microgreens are young plants harvested immediately after the first true leaves appear, characterized by a high concentration of nutrient.

ՄԱՄԱՆ ՌԵԺԻՄԻ ՃԻՇՏ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ
ԺԻԼԲԵՐԻ ՀԱՄԱԽՏԱՆԻՇ ՈՒՆԵՑՈՂ ՄԱՐԴԿԱՆՑ ՄՈՏ

Խառատյան Ալեքսան

*«ՎՊՀ» հիմնադրամ,
«Կենսաբանություն», 4-րդ կուրս
Գիտական ղեկավարներ՝ կ. գ. թ., դոցենտ Հ. Գրիգորյան,
կ. գ. թ., դոցենտ Ա. Ջաղինյան*

Հանգուցային բառեր. առողջություն, Ժիլբերի համախտանիշ, ժառանգական հիվանդություն, բժշկություն, սննդակարգ, դիետա, բուժում

«Եթե մարդն ինքը հետևում է իր առողջությանը, ապա դժվար թե գտնվի բժիշկ, որն ավելի օգտակար լինի իր առողջության համար, քան ինքը»:

Սուղբատես

Ժիլբերի համախտանիշը լյարդի տարածված, «թեթև» հիվանդություն է, որի ժամանակ լյարդը պատշաճ կերպով չի մշակում բիլիռուբինը: Բիլիռուբինը առաջանում է արյան կարմիր բջիջների քայքայման արդյունքում՝ հեմոգլոբինից [3]:

Ժիլբերի համախտանիշը ժառանգական հիվանդություն է, որը 2-րդ քրոմոսոմի *UGT1A1* գենի մուտացիան է: Մրա ժամանակ առաջանում է արյան մեջ չկապված բիլիռուբինի քանակի բարձրացում, որը արտահայտվում է դեղնուկային համախտանիշով: Շատ անգամ այս հիվանդությունը չի ախտորոշվում, քանի որ հիվանդը շատ սակավ գանգատներ է ունենում և դեղնուկային համախտանիշն էլ պարբերական է լինում: Օրինակ՝ լինում է երկարատև սովի ժամանակ, հետո կարող է միանգամից անցնել (դեղնում են մաշկը, աչքի սպիտակուցաթաղանթը և լորձաթաղանթները), լինում է ֆիզիկական ծանրաբեռնվածության, հոգեհուզական լարվածության ժամանակ: 7 տարեկանից արդեն սկսվում է դրսևորվել, բայց, շատ հաճախ հայտնաբերվում է մեծ տարիքում [2]:

Ժիլբերի համախտանիշը վիճակ է, որով հիվանդը ապրում է մինչև իր կյանքի վերջ: Այն չունի բուժում, քանի որ ժառանգական է և հենց այդ պատճառով էլ պետք է հայտնաբերել, փոխել ապրելակերպը՝ հարմարվելով հիվանդության հետ: Անհրաժեշտ է երկար սոված չմնալ, չունենալ ֆիզիկական գերծանրաբեռնվածություն, այսինքն՝ հիվանդը, հասկանալով, որ ունի այդպիսի գենետիկական հիվանդություն, պետք է սկսի փոխել իր «կյանքի ոճը» [2]:

Ժիլբերի համախտանիշը կարող է խորանալ, եթե երկարատև պահպանվում է դեղնությունը կամ արյան մեջ բիլիռուբինի բարձր քանակությունը, ապա հնարավոր է ունենալ լյարդի տարբեր ախտահարումներ [2]:

Ժիլբերի հիվանդությունը ապացուցվում է գենետիկական անալիզի միջոցով,

որի արդյունքում հնարավոր է երեք պատասխան՝ *մուտացիա չկա, մուտացիա կա՝ հոմոզիգոտ տեսակը*, այսինքն՝ երկու ծնողներից է անցել, և *մուտացիա կա՝ հետերոզիգոտ տեսակը*, այսինքն՝ միայն մեկ ծնողից է անցել: Հոմոզիգոտ տեսակի կլինիկական տվյալները ավելի ծանր են, քան հետերոզիգոտ տեսակի, բայց, ամեն դեպքում, չկա սպեցիֆիկ, հատուկ բուժում ժիլբերի համախտանիշի համար [2]:

Որքան էլ տարօրինակ թվա, սակայն ժիլբերի համախտանիշ ունենալը, բացի որոշակի անհանգստություն պատճառելուց, կարող է որոշակի առավելություններ ունենալ.

- *պաշտպանություն սրտանոթային հիվանդությունների առաջացման ռիսկից,*

Դեռևս պարզ չէ, թե ինչով է պայմանավորված բիլիռուբինի հակաօքսիդանտ ազդեցությունը, սակայն տարբեր վերլուծություններ ցույց են տվել, որ սրտի իշեմիկ հիվանդության առաջացման ռիսկը զգալի նվազում է ժիլբերի համախտանիշով հիվանդների մոտ [3]:

- *պաշտպանում է աթերոսկլերոզից,*

Բարձրացած բիլիռուբինի ամենակարևոր առավելությունը աթերոսկլերոտիկ ինֆիլտրացիայի կուտակման նվազումն է [3]:

- *պաշտպանում է քրոնիկ շնչառական հիվանդություններից,*

Մեծ Բրիտանիայում գիտնականները ուսումնասիրել են ժիլբերի համախտանիշով 1946 թվականին ծնված մարդկանց մոտ շնչառական հիվանդությունների առաջացման ռիսկը: Այս խմբի շատ մարդիկ ծխել են, և ժիլբերի համախտանիշով հիվանդների մոտ COPD կամ ասթմայի առաջացման հավանականությունը ավելի քիչ էր, քան առողջ մարդկանց մոտ:

- *պաշտպանում է յարդը ճարպակալումից* [4]:

Դիետա ժիլբերի համախտանիշի ժամանակ

Հիվանդներին խորհուրդ է տրվում սնվել հավասարակշռված և առողջ սննդակարգով, խմել շատ չգազավորված հեղուկներ, ինչպիսիք են ջուրը և մրգային բնական հյութերը, խուսափել ճարպային կամ քաղցր մթերքներից: Որոշ հիվանդներ կարող են նաև վիտամիններ և կենսաբանական հավելումներ պահանջել [4]:

Ժիլբերի համախտանիշով հիվանդների սննդակարգի հսկողությամբ նպատակ է դրված օգտագործել մթերքներ, որոնք կարող են օգնել «յարդի աշխատանքին»: Մտման ամենակարևոր կետերից մեկը կերակուրից չիրաժարվելն ու երկարատև ծոս չպահելն է: Եթե անհրաժեշտ է անցնել դիետայի, որոնք ուղղված են քաշի կորստին, ապա խորհուրդ է տրվում դիմել մասնագետներին, ովքեր կարող են գնահատել կալորիակալության օպտիմալ արժեքը [4]:

Ընդհանուր առմամբ, ժիլբերի համախտանիշը բուժում չի պահանջում, բայց եթե ախտանշանները անհանգստություն են առաջացնում, կարելի է ուղիներ փնտրել դրանք մեղմելու կամ վերահսկողության տակ պահելու համար.

1. սնվել ռացիոնալ,
2. ֆիզիկական վարժություններ կատարել,
3. պահպանել քնի ռեժիմը,
4. սթրեսի կարգավորում:

Ժիլբերի համախտանիշի «բուժումը» պետք է ուղղված լինի գլյուկոբոնիդացման միջոցով հեռացվող տոքսինների նվազեցմանը կամ գլյուկոբոնիդացման և UGT (Ուրիդին 5-դիֆոսֆո-գլյուկոբոնոտրանսֆերազ) ֆերմենտների աշխատանքի բարելավմանը: Պետք է ակտիվացնել սպիտակուցների և ճարպերի սպառումը: Դեռևս բավարար ուսումնասիրություններ չեն կատարվել, սակայն *պալեո** կամ *կետո** դիետան* կարող է բարելավել բիլիռուբինի մակարդակը [4]:

Խաչածաղկավոր բանջարեղենների օգտագործումը օրգանիզմում մեծացնում է UGT1A1 ֆերմենտի արտադրությունը: Խաչածաղկավոր բանջարեղեններից են բրոկկոլին, կաղամբը, բրյուսելյան կաղամբը, ծաղկակաղամբը [4]:

Չուտելով բավականաչափ խաչածաղկավոր բանջարեղեն, ապա հասանելի են *IBC* և *DIM* (դիինդոլիլմեթան) հավելումները: Դրանք արտադրվում են խաչածաղկավոր բանջարեղենի այն մասից, որն առաջացնում է UGT1A1 [4]:

Կվերցետինը (*ֆլավոնոիդային հավելում*) և քուրքումինը (*քրքումից*) բարձրացնում են UGT ֆերմենտի ակտիվությունը, որն ապացուցվել է ըստ կենդանիների վրա կատարված ուսումնասիրության [4]:

«ԵՐԵՎԱՆ ԲԺՇԿԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ»-ի գաստրոնտերոլոգների կողմից խորհուրդ է տրվում առողջ սննդակարգի հետևյալ ցանկը.

1. Հրաժարվել ծխելուց և հնարավորինս պակասեցնել ալկոհոլի օգտագործումը,
2. Մտունդ ընդունել փոքր չափաբաժիններով և հաճախակի՝ օրական 4-5 անգամ,
3. Ուտել դանդաղ ծամելով,
4. Մտունդ ընդունելիս հեղուկներ չօգտագործել,
5. Օրական օգտագործել 1,5-2 լ ջուր՝ ուտելուց կես ժամ առաջ կամ մեկ ժամ հետո,
6. Սննդակարգից հնարավորինս բացառել բոլոր տեսակի զազավորված ըմպելիքները,
7. Սննդակարգում սահմանափակել կծու, թթու, յուղոտ ուտեստները, արգանակները (բուլիոն), պահածոները, քաղցրավենիքները, ապխտած մսամթերքը,
8. Քնելուց երեք ժամ առաջ սնունդ չընդունել, հատկապես՝ միրգ,
9. Չուտել ցածր սեղանի շուրջ կամ պառկած դիրքում,
10. Ուտելուց անմիջապես հետո չպառկել, չկռանալ,
11. Սննդակարգում ներառել բավարար քանակության մրգեր, բանջարեղեններ,
12. Միրգ, բանջարեղեն օգտագործել օրվա առաջին կեսին, հիմնական ուտե-

լուց 1 ժամ ինտերվալով,

13. Սուրճ թույլատրվում է 1-2 բաժակից ոչ ավել՝ հիմնական ուտելուց հետո [1]:

Ժիլբերի համախտանիշով հիվանդների համար արգելված մթերքներ

Խորհուրդ է տրվում առողջ սնվել և բավարար քանակությամբ բանջարեղեն ու մրգեր օգտագործել: Կարևոր է նաև ոչ մի կերակուր բաց չըռողնել, այսինքն՝ օրական բավականաչափ կալորիաներ ուտել և ծոմ չպահել: Լյարդը առողջ պահելու համար կարևոր է ներառել բջջահյութով հարուստ մթերքներ: Մեր առօրյա կյանքում պետք է ներառել մրգեր, բանջարեղեններ, ձավարեղեն և լոբազգիներ: Ջրագրկումը նույնպես կարող է առաջացնել Ժիլբերի համախտանիշ (ջրագրկումը կարող է առաջացնել բիլիռուբինի մակարդակի բարձրացում): Կոֆեինը կարող է նաև հանդես գալ որպես միզամուղ միջոց, սակայն, պետք է վերահսկել սուրճի ընդունումը: Միակ սնունդը, որը կարելի է նվազեցնել կամ վերացնել՝ ավկոհոլն է [4]:

Այսպիսով, կարող ենք ասել, որ Ժիլբերի սինդրոմը իրենից չի ներկայացնում ծանր հիվանդություն, սակայն ռացիոնալ սնվելը, ֆիզիկական վարժությունների կատարումը և այլ խորհուրդներ կնպաստեն ավելի թեթև տանելու սրանից բխող «սրացումները»:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. «Երևան» բժշկագիտական կենտրոն, Առողջ սննդակարգ. Գասարոնէստերոլոգների խորհուրդները:
2. <https://youtube.com/> – Բուժ Ինֆո / Buj Info – Ժիլբերի համախտանիշ:
3. <https://www.mayoclinic.org/> - Gilbert syndrome.
4. <https://munkombucha.com/> - All about Gilbert syndrome.
5. <https://www.news-medical.net/> -Gilbert's syndrome treatment.

ПРАВИЛЬНАЯ ДИЕТА ДЛЯ ЛЮДЕЙ С СИНДРОМОМ ЖИЛЬБЕРА

Харатян Алексан

Фонд “ВГУ”,

«Биология», 4-й курс

Научные руководители:

кандидат биологических наук, доцент А. Григорян,

кандидат биологических наук, доцент А. Джагинян

Резюме

Ключевые слова: *здоровье, синдром Жильбера, наследственное заболевание, медицина, питание, диета, лечение*

В данной статье описан синдром Жильбера, а также правильное питание при наличии этого наследственного заболевания. В статье описаны как отрицательные, так и положительные стороны этого синдрома, а также опасное и полезное питание. Узнав об этом заболевании, принципах правильного питания, пациенты с этим синдромом могут вести полноценную и благоприятную жизнь, несмотря на наличие заболевания. Это само по себе является первым шагом к саморазвитию и углублению знаний о собственном организме.

CORRECT DIET FOR PEOPLE WITH GILBERT'S SYNDROME

Kharatyan Aleksan

“VSU” Foundation,

“Biology”, 4th Year

Academic Supervisors:

H. Grigoryan, Candidate of Biological Sciences, Associate Professor,

A. Jaghinyan, Candidate of Biological Sciences, Associate Professor

Summary

Key words: *health, Gilbert's syndrome, hereditary disease, medicine, nutrition, diet, treatment*

This article describes Gilbert's syndrome, as well as proper nutrition in the presence of this hereditary disease. The article describes both negative and positive aspects of this syndrome, as well as dangerous and healthy nutrition. With proper awareness of this condition and adherence to the principles of appropriate nutrition, patients with this syndrome can lead a full and productive life despite the disease. This, in itself, represents the first step toward self-development and a deeper understanding of one's own body.

ԿԱՂԱՄԲԱԹԻԹԵՈՒ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ «ԴԻԼԻՁԱՆ»
ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԿԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ
(ԴԱՇՏԱՅԻՆ ԵՎ ԼԱԲՈՐԱՏՈՐ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ)

Ռատոայան Ալեքսան

«ՎՊՀ» հիմնադրամ,
«Կենսաբանություն», 4-րդ կուրս
Գիտական ղեկավար՝ կ. գ. թ., դոցենտ Հ. Գրիգորյան

Հանգուցային բառեր. թրթուրների զարգացում, թիթեռների թռիչք, վնասատու, հարսնյակավորում, կաղամբ, ձվադրում, հետազոտման մեթոդներ
Կաղամբաթիթեռը պատկանում է թեփուկաթևավորների (*Lepidoptera*) կարգին, ճերմակաթիթեռների (*Pieridae*) ընտանիքին [8, 411] (նկ.1):



Նկար 1. Կաղամբաթիթեռի արուն և էգը:

Կաղամբաթիթեռը տարածված է Արևելյան Եվրոպայի բոլոր երկրներում, ինչպես նաև Հյուսիսային Աֆրիկայում, Ասիայի որոշ շրջաններում մինչև Ճապոնիա: Կաղամբաթիթեռը հայտնվել է նաև Հարավային և Կենտրոնական Ամերիկայում [11]: Միջատը վնասում է նաև շաղգամբ, բողկը, մշակովի բողկը, գոնգեղը, հլածուկը, մանանեխը, կծվուկը: Հանդիպում են նաև տխի, սխտորի, կապառի, հնդկոտեմի հափրուկի վրա [7, 8]:

Համարվելով կաղամբի լուրջ վնասատու և ունենալով լայն տարածում՝ այն ուսումնասիրվել է բազմաթիվ գիտնականների կողմից [4, 5; 67-68; 6, 8; 58-59; 9]: Այս վնասատուն տարածված է նաև Հայաստանի բոլոր մարզերում [1; 2, 201-202; 3, 421; 9]:

Այս թիթեռին կարելի է հանդիպել ամենուր՝ բնական բիոտոպներում (մարգագետիններ, անտառեզրեր, բացատներ), մեծ քաղաքներում և այլ բնակավայրերի մոտ, դաշտերում, այգիներում, զբոսայգիներում: Մարերում հանդիպում է մինչև 2000 մ բարձրության վրա: Երբեմն նկատվում է այս թիթեռի գանգվածային բազմացում, ընդ որում դրանք լինում են երկրորդ, երրորդ սերունդների թիթեռներ:

Անցյալում այս թիթեռն այսքան տարածված չի եղել: Սակայն, երբ մարդն սկսեց գանգվածային ձևով կաղամբ աճեցնել, թրթուրների համար ստեղծվեցին բարենպաստ պայմաններ (նկ. 3): Մյուս կողմից՝ շատանում էին նաև կաղամբաթիթեռի բնական թշնամիները՝ հեծյալները, որոնք կանխում էին այս վնասատուի ինտենսիվ բազմացումը [10] (նկ. 2):

Կաղամբաթիթեռի պոպուլյացիայի էկոլոգիական ուսումնասիրությունը կարևոր է ինչպես դրա կենսաբանական առանձնահատկությունների բացահայտման, այնպես էլ գյուղատնտեսական վնասների գնահատման և կառավարման ռազմավարությունների մշակման համար [11]: Թիթեռի տարածվածությունը, վարքագծային առանձնահատկությունները և շրջակա միջավայրի գործոնների ազդեցությունը դաշտային պայմաններում կարող են բացահայտել դրա պոպուլյացիոն դինամիկան ու աղապտացիոն մեխանիզմները [11]:

Լոռու մարզում կաղամբաթիթեռի վերաբերյալ վերջին լուրջ ուսումնասիրությունները կատարվել են 2018 թվականին [2], իսկ կաղամբաթիթեռը Տավուշի մարզում գրեթե ուսումնասիրված չէ, չնայած նրան, որ այս մշակաբույսը ունի լայն տարածում՝ պայմանավորված տնտեսական նշանակությամբ [2]: Ունենալով ցածր կալորիականություն՝ այն հանդիսանում է վիտամինների, սպիտակուցային նյութերի, ածխաջրերի, ինչպես նաև ֆոսֆորի, կալիումի, երկաթի, պղնձի, շաքարի և թաղանթանյութի աղբյուր [5]:



**Նկար 2. Կաղամբաթիթեռը
ձվադրելիս:**



**Նկար 3. Չվից նոր դուրս եկած
թրթուրները:**

Կաղամբաթիթեռը տարածված է կաղամբի աճեցման բոլոր վայրերում: Տավուշի մարզում մեր կողմից ուսումնասիրությունները կատարվել են «Դիլիջան» ազգային պարկի Շամախյան և Հաղարծին տեղամասերում:

Սույն հետազոտության նպատակն է ուսումնասիրել կաղամբաթիթեռի էկոլոգիական առանձնահատկությունները տարբեր տեղանքներում, իրականացնել դաշտային նմուշառում, ինչպես նաև լաբորատոր պայմաններում վերլուծել նրա կենսաբանական ցուցանիշները:

Կաղամբաթիթեռի տարածվածությունը պարզելու նպատակով կատարվել են երթուղային հետազոտություններ: Հետազոտությունները կատարվել են «Դիլիջան» ազգային պարկի Շամախյան և Հաղարծին տեղամասերում՝ կաղամբի ամբողջ վեգետացիայի շրջանում: Կլիմայական պայմաններից ելնելով՝ ուսումնա-

սիրությունները սկսել ենք մայիսի վերջից: Պարբերաբար ուշադիր գննել ենք կաղամբի սածիլների տերևների ստորին մակերեսները՝ կաղամբաթիթեռի ձվակույտեր հայտնաբերելու նպատակով: Նոթատետրում կատարել ենք նշումներ թիթեռների ձվադրման սկզբի վերաբերյալ: Չվակույտեր հայտնաբերելու դեպքում վերցրել ենք նմուշը, տեղավորել բանկաների մեջ և տեղափոխել լաբորատորիա, որտեղ հետևել ենք ձվերի ինկուբացիային (նկ. 4): Բանկաների բերանը կապել ենք թանզիֆով (մարլայով) օդի ազատ թափանցման համար (նկ. 5):



Նկար 4. Կաղամբաթիթեռի ձվերի հավաքման ընթացքը:

Դիտումների ընթացքում նոթատետրում պարբերաբար կատարել ենք համապատասխան նշումներ: Թրթուրները դուրս գալուց հետո նրանց տեղափոխել ենք այլ բանկաների մեջ և դարձյալ հետևել նրանց զարգացման ընթացքին:

Բանկաներում գտնվող թրթուրներին ամբողջ զարգացման ընթացքում կերակրել ենք կաղամբի թարմ տերևներով (թառամած տերևները հեռացվել են): Հետևել ենք թրթուրների հարսնյակավորման սկզբին, ինչպես նաև հնարավոր է եղել հետևել հարսնյակների զարգացմանը և թիթեռների դուրս գալուն:

Կաղամբաթիթեռի ուսումնասիրությունները Տավուշի մարզի պայմաններում ցույց տվեցին, որ այն տարածված է մարզի բոլոր տնտեսություններում և լուրջ վնաս է հասցնում սպիտակագլուխ կաղամբին: Վնասում են թրթուրները: Երիտասարդ թրթուրները քերում են տերևների վերին շերտը, առաջացնում են անցքեր, իրենց արտաթորանքով կեղտոտում են կաղամբի տերևները, իսկ հասուն թրթուրներն ուսում են տերևները եզրերից, թողնելով միայն հաստ շղերը:

Բացի թրթուրները, հասուն կաղամբաթիթեռներին բռնել ենք միջատաբանական ցանցով, որը պատրաստվել է մեր կողմից՝ ըստ համապատասխան հրահանգի (նկ. 6):



Նկար 5. Թրթուրներով լցված տարրա:



Նկար 6. Թիթեռնորսի և գրանցման համար նախատեսված գործիքներ:

Մեր դաշտային և լաբորատոր ուսումնասիրությունների միջոցով հնարավոր եղավ վերլուծել կադամբաթիթեռի զարգացման բոլոր փուլերը՝ ձվադրումից մինչև հասուն թիթեռների առաջացում: Տվյալ սեզոնին տեղամասերում նկատվեց կադամբաթիթեռների զանգվածային բազմացում, ինչը պայմանավորված էր բարենպաստ ջերմաստիճանային և խոնավության պայմաններով:

Հետազոտությունների ընթացքում դիտարկված թիթեռների մեծ քանակը վկայում է այն մասին, որ այս շրջաններում պարբերաբար առաջանում են բազմացման «բռնկումներ»: Դրա մասին տեղեկացանք նաև գյուղացիներից:

Լաբորատոր պայմաններում ուսումնասիրվել են կադամբաթիթեռի զարգացման փուլերը՝ ձվադրման պահից մինչև հասուն թիթեռների (իմագո) դուրս գալը: Դաշտային նմուշառումներից ստացված ձվերը տեղադրվել են համարակալված տարաներում՝ տեղամասերին համապատասխան: Լաբորատոր պայմաններում կատարված դիտարկումները ցույց տվեցին.

- կադամբաթիթեռի ձվերը դեղնավուն են, երկարավուն, դրվում են տերևների ստորին մակերեսին՝ խմբերով (միջինում 20-50 հատ մեկ ձվակույտում),
- թրթուրների դուրս գալը ձվից տեղի է ունեցել 4-7 օրվա ընթացքում՝ կախված ջերմաստիճանից և խոնավությունից,
- հարսնյակավորման փուլը տևել է 14-16 օր՝ կախված սնման ինտենսիվությունից և միջավայրային պայմաններից,
- թիթեռների դուրս գալուց հետո նկատվել են նրանց ակտիվության տարբերություններ՝ պայմանավորված լույսի և ջերմաստիճանի փոփոխություններով:

Այս տվյալները համադրելով դաշտային դիտարկումների հետ՝ կարելի է եզրակացնել, որ 2024 թ. հետազոտությունների ընթացքում կադամբաթիթեռի զարգացման ցիկը զգալիորեն արագացել էր, ինչը համապատասխանում է զանգվածային բազմացման փուլերին:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ավագյան Ա. Մ., Կաղամբի տերևակեր գլխավոր վնասատուների դեմ էկոլոգիական սկզբունքով ինտեգրված պայքարի մշակում Լոռու մարզի պայմաններում: Մեդ. կ. գ. թ., Երևան, 2012, 23 էջ:
2. Գրիգորյան Հասմիկ, Պապոյան Հեղինե, Կաղամբաթիթերը և նրա զարգացման առանձնահատկությունները Լոռու մարզում, Վանսաձոր, 2018:
3. Հակոբյան Գ. Ա., Ալեքսանյան Վ. Ա., Նազարյան Ա. Բ., Գյուղատնտեսական մշակաբույսերի վնասատուները և հիվանդությունները ու նրանց դեմ կիրառվող պայքարի միջոցառումները (Ուսումնական ձեռնարկ), Երևան, ՀՊԱՀ, 2010, 335 էջ:
4. Հայաստանի Բնաշխարհ: Հայկական հանրագիտարան, Երևան, 2006, 691 էջ:
5. Багров Р. А. Совершенствование технологических элементов защиты от вредителей капусты белокачанной в Нечерноземной зоне. Москва, 2006, 20 с.
6. Леонтян П. И. Главнейшие вредители капусты в Молдавии и меры борьбы с ними. Тираспольб, 1983, 21 с.
7. Липп Л. Е. Вредители капусты белокачанной, биологические и химические меры борьбы с ними в северной лесостепи Челябинской области. Челябинск, 2009, 20 с.
8. Некрутенко Ю. П. Семейство белянки – Pieridae. Киев: Урожай, 1974, 440 с.
9. Проворотова Г. М. Капустная белянка в Красноярском крае, Иркутск: Иркутский СХИ, 1974, с. 58-59.
10. Терлемезян Г. Л. Вредная фауна овощных культур Араратской равнины, биоэкологические особенности главнейших видов и интегрированная борьба против них, 1996, 42 с.
11. Gullan & Cranston. The Insects: An outline of entomology, 5th edition, Canberra, 2014.
12. <https://ru.wikipedia.org/>, Капустница (бабочка).

**ЭКОЛОГИЧЕСКИЕ ОСОБЕННОСТИ КАПУСТНОЙ БАБОЧКИ
НА ТЕРРИТОРИИ НАЦИОНАЛЬНОГО ПАРКА «ДИЛИЖАН»
(ПОЛЕВЫЕ И ЛАБОРАТОРНЫЕ ИССЛЕДОВАНИЯ)**

Харатян Алексан

Фонд “ВГУ”,

«Биология», 4-й курс

Научный руководитель:

кандидат биологических наук, доцент А. Григорян

Резюме

Ключевые слова: *развитие гусениц, полёт бабочек, вредитель, окукливание, капуста, откладывание яиц, методы исследования*

В ходе исследования была проведена полевая и лабораторная работа по изучению капустной белянки (*Pieris brassicae*), ее распространения, развития и влияния на сельскохозяйственные культуры в Тавушской области.

Исследования проводились в Национальном парке «Дилижан» (участки Шамахян и Агарцин) в течение всего вегетационного периода капусты. Основное внимание уделялось изучению яиц, гусениц и куколок в природных и лабораторных условиях.

**ECOLOGICAL CHARACTERISTICS OF THE CABBAGE BUTTERFLY
IN THE TERRITORY OF THE “DILIJAN” NATIONAL PARK
(FIELD AND LABORATORY STUDIES)**

Kharatyan Aleksan

“VSU” Foundation,

“Biology”, 4th Year

Academic Supervisor: H. Grigoryan,

Candidate of Biological Sciences, Associate Professor

Summary

Key words: *caterpillar development, butterfly flight, pest, pupation, cabbage, egg-laying, research methods*

The study involves both field and laboratory research on the cabbage butterfly (*Pieris brassicae*), focusing on its distribution, development, and impact on agricultural crops in the Tavush region.

The research was conducted in the "Dilijan" National Park (Shamakhyan and Haghartsin areas) throughout the entire cabbage growing season. Particular attention was paid to the study of eggs, caterpillars, and pupae in natural and laboratory conditions.

**ՄԱՍԻԹԻ (ANETHUM GRAVEOLENS) ՏԵՐԵՎՆԵՐՈՒՄ ՀԱՆՔԱՅԻՆ
ՏԱՐԵՐԻ ՈՐԱԿԱԿԱՆ ԵՎ ՔԱՆԱԿԱԿԱՆ ԲԱՂԱԴՐՈՒԹՅԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ**

Նավասարդյան Ռուզաննա

Գորիսի պետական համալսարան,

«Կենսաբանություն», 2-րդ կուրս

Գիտական ղեկավար՝ ք. գ. դ., դոցենտ Լ. Վարդանյան

Հանգուցային բառեր. *Anethum graveolens*, սամիթ, հանքային տարրեր, կենսաբանական կլանման գործակից, մոլիբդեն, ծանր մետաղներ, ICP OES վերլուծություն

Անօրգանական տարրերը, հատկապես կենսածինները (K, Na, Fe, Mn, Mg, Zn, Cu և այլն), կարևոր դեր են խաղում ինչպես բույսերի, այնպես էլ կենդանի օրգանիզմների կենսագործունեության մեջ: Դրանց մեջ առանձնահատուկ տեղ են զբաղեցնում ծանր մետաղները (ՄՄ) [1]: Իրականում դրանցից որոշները՝ պղինձը, ցինկը, մոլիբդենը, կոբալտը, մանգանը, երկաթը, որոշակի կոնցենտրացիաներում կենսաբանական մեծ նշանակություն ունեն: Օրինակ, լինելով կապված ֆերմենտային համակարգերի հետ, օրգանիզմում նրանք մասնակցում են օքսիդավերականգնման գործընթացներին, ազդում են օրգանական միացությունների սինթեզի վրա և այլն: Սակայն, երբ նրանց կոնցենտրացիան գերազանցում է առավելագույն թույլատրելի կոնցենտրացիան (ԱԹԿ), նրանք դառնում են թունավոր [2, 3]: Օտար մետաղներից որոշները միայն բացասական ազդեցություն ունեն [4]: Դրանք են սնդիկը, կադմիումը և կապարը: Ընդհանուր առմամբ, դրանք համարվում են շրջակա միջավայրի առավել հավանական և վտանգավոր աղտոտիչներ:

Անօրգանական տարրերի պարունակությունը բույսերի մեջ փոփոխական է: Այն կախված է ոչ միայն բույսի տեսակից, այլև հողի և կլիմայական պայմաններից: Բույսերի որոշ տեսակներ կարող են ընտրողական կուտակել մեկ կամ մի քանի տարրեր [5]: Հետևաբար, եթե հայտնի է, թե որ բույսն ինչ տարր է առավելապես կուտակում, ապա այն կարելի է օգտագործել որպես տվյալ տարրի կուտակող բույս: Անշուշտ, պետք է նկատի ունենալ նաև այն փաստը, որ բույսերի օգտագործումը, որոնք պարունակում են ԱԹԿ-ն գերազանցող ծանր մետաղներ, կարող է հանգեցնել կենդանի օրգանիզմների, այդ թվում՝ մարդու թունավորման:

Այս առումով գիտական հետաքրքրություն է ներկայացնում սամիթը (*Anethum graveolens*), որը *Apiaceae* (նեխուրագինների) ընտանիքի ներկայացուցիչ է և լայնորեն կիրառվում է սնդիկ արդյունաբերության, բժշկության և կուսմետիկ ոլորտներում: Այն պարունակում է տարբեր կենսաբանական միացություններ, որոնք պայմանավորում են նրա հակաբակտերիալ, հակաօքսիդանտ և բուժիչ հատկությունները: Սամիթի քիմիական բաղադրության և կենսաբանական ակտիվության ուսումնասիրությունը մեծ հետաքրքրություն է առաջացրել գիտական

շրջանակներում: Մի շարք հետազոտողներ իրենց աշխատություններում մանրամասնորեն վերլուծել են այս բույսի բաղադրիչների հատկությունները: Մասնավորապես, ուսումնասիրության արդյունքում հայտնաբերվել է, որ սամիթի էթերային յուղը պարունակում է կարվոն, լիմոնեն և անտեյլոն, որոնք ապահովում են նրա հակաօքսիդանտ և հակաբորբոքային հատկությունները [6]: Մեկ այլ հետազոտության շրջանակներում ցույց է տրվել, որ նրա տերևներից և ցողունից պատրաստած թուրմերը օգտագործում են հիպերտոնիայի դեպքում, ինչպես նաև որպես միզամուղ միջոց: Իսկ նրա պտուղներից ստանում են հակասպազմոլիտիկ ազդեցություն ունեցող դեղամիջոցներ, որոնք կիրառվում են մի շարք հիվանդությունների՝ մասնավորապես ներոզի, որովայնային օրգանների մկանային սպազմի բուժման համար [7]:

Այս ուսումնասիրությունների արդյունքներից ելնելով՝ մենք ևս նպատակահարմար գտանք անդրադառնալ սամիթի քիմիական բաղադրությանը՝ շարունակելով այս ուղղությամբ գիտական հետազոտությունները և լրացնելով առկա տվյալները նոր փորձարարական փաստերով:

Մեր աշխատանքի նպատակն էր ուսումնասիրել սամիթի (*Anethum graveolens*) տերևներում հանքային տարրերի որակական և քանակական բաղադրությունը: Հետազոտության օբյեկտը եղել է Հայաստանի Գորիսի տարածաշրջանում աճող սամիթի (*Anethum graveolens*) չորացած վերգետնյա մասը:

Նյութ և մեթոդ

Մեր կողմից ուսումնասիրված բուսահումքը հավաքվել է 2024 թ. մայիս ամսին, բույսի ծաղկման շրջանում, Գորիս քաղաքի մերձակա լեռնային հատվածներից: Հումքի հավաքը և չորացումը կատարվել է ըստ ֆարմակագնոզիայի ցուցիչների: Չորացված բուսահումքը մանրացվել է: Անալիտիկ կշեռքով կշռվել է 0.2 գ չոր նյութ: Կշեռանքի վրա ավելացվել է 1 մլ 5 %-ոց ազոտական թթու և տեղափոխվել ջրային բաղնիք, որտեղ ջրի ջերմաստիճանը կազմել է 80-85° C: Թթվի ավելացումից սկսվում է գորշ ծխարձակում, որը տևում է 40-60 րոպե: Այնուհետև ավելացվել է 2.5 մլ արքայաջուր ($\text{HNO}_3:3\text{HCl}:1\text{H}_2\text{O}$) և ջրային բաղնիքում պահվել ևս 1.5 ժամ: Ստացված զանգվածը հովացնելուց հետո ավելացվել է 1 մլ HCl և 11 մլ թորած ջուր, ապա ֆիլտրվել:

Նմուշների տարրային բաղադրության ուսումնասիրությունն իրականացվել է ինդուկտիվ կապված պլազմայով օպտիկաէմիսիոն սպեկտրոմետրի՝ Agilent (5110 ICP-OEC) միջոցով: Մինչև նմուշների տեղափոխումը սարք՝ պատրաստվել են ստանդարտ կալիբրման համար ռեֆերենս-լուծույթներ, ապա ըստ դրանց կատարվել է նմուշների վերլուծություն: Թվային տվյալները մշակվել են Microsoft Office Excel ծրագրի օգնությամբ:

Ընդհանրապես, տարբեր ծագում ունեցող նմուշների տարրային բաղադրության որոշման մի շարք մեթոդներ կան կիրառության մեջ դրված, սակայն մեր կողմից ընտրված մեթոդը աչքի է ընկնում իր բարձր ճշգրտությամբ և իրականացվել է ըստ “Ultra-fast ICP-OES determinations of soil and plant material using next generation sample introduction technology” մեթոդական ցուցումների [8]:

Փորձերի արդյունքում վերլուծվել է սամիթի (*Anethum graveolens*) վերգետնյա հատվածից պատրաստված երկու նմուշներ, որոնցից յուրաքանչյուրից պատրաստվել են երեքական փորձանմուշներ:

Արդյունքներ և քննարկում

ICP OES մեթոդով սամիթ բույսի և հողի հանքային կազմի վերլուծության արդյունքում հաջողվել է որոշել 30 տարրերի քանակական պարունակությունը: Տարրերի կենսաբանական կուտակման գնահատման համար մենք նաև որոշել ենք կենսաբանական կլանման գործակիցը ($ԿԿԳ$), որը բիոերկրաքիմիական էմպիրիկ ցուցանիշ է [9]: Եթե $ԿԿԳ > 1$, դա նշանակում է, որ տվյալ տարրերը կուտակվում են բույսերում (կոնցենտրատոր տարրեր), իսկ եթե $ԿԿԳ < 1$, ապա այդ տարրերը նվազ կլանվող են բույսերի կողմից (դեստրուկտոր տարրեր):

Ստացված տվյալները ներկայացված են աղյուսակ 1-ում: Արդյունքներից երևում է, որ սամիթը կուտակում է մեծ քանակությամբ հետևյալ տարրերը՝ $P > S > Mg > Na > Fe > Al > Mn > Cu > K$, որոնք կենսականորեն կարևոր տարրեր են [10]: Նշված տարրերից կոնցենտրատորներ են միայն $K, S, և P$:

Սամիթում կուտակվում է նաև մոլիբդեն (Mo), որի $ԿԿԳ = 5,77$ է: Եթե համեմատենք կոնցենտրատոր տարրերի $ԿԿԳ$ արժեքները, ապա դրանք կարելի է դասավորել հետևյալ հաջորդականությամբ՝ $K > Mo > S > P$:

Վերլուծելով աղյուսակի տվյալները՝ մենք կարող ենք հասկանալ սամիթի (*Anethum graveolens*) կողմից կուտակվող տարրերը, դրանց կենսաբանական և քիմիական առանձնահատկությունները:

Ինչպես երևում է, սամիթը մեծ քանակությամբ կուտակում է կալիում, որը կենսականորեն կարևոր տարր է բույսերի և կենդանիների օրգանիզմում: Այն մասնակցում է բջջային օսմոտիկ ճնշման կարգավորմանը, ֆերմենտների ակտիվացմանը, նյարդային ազդակների փոխանցմանը և մկանների կծկմանը: Սամիթը, որպես կալիումի աղբյուր, օգտակար է սրտանոթային համակարգի համար:

Հաջորդ կոնցենտրատոր տարրը համարվում է մոլիբդենը: Ինչպես երևում է, մոլիբդենը սամիթի կողմից կլանվում է բավականին մեծ քանակությամբ: Այն դասվում է կենսականորեն կարևոր միկրոէլեմենտների շարքին: Մոլիբդենն աճեցվող բույսերում մասնակցում է ինչպես ազոտային փոխանակության ֆերմենտային ռեակցիաներին, այնպես էլ ազոտի ձևավորման գործընթացին: Սակայն, միևնույն ժամանակ, մոլիբդենը համարվում է թունավոր տարր բարձր կոնցենտրացիաների դեպքում: Դրա բարձր կոնցենտրացիան բացասաբար է ազդում մարդու մարտդակային և սրտանոթային համակարգերի վրա, խախտում է նյութափոխանակությունը և այլն [11]:

Կոնցենտրատոր տարրեր են նաև ծծումբը և ֆոսֆորը: Ծծումբը անհրաժեշտ է սպիտակուցների, ֆերմենտների և վիտամինների ($B1, B7$) կազմության համար: Այն հատկապես կարևոր է լյարդի ֆունկցիայի, մաշկի և մազերի առողջության համար: Ֆոսֆորը օգտակար է էներգետիկ համակարգի, ոսկորների ամրության համար, բայց ավելցուկը կարող է խաթարել կալցիումի յուրացումը:

Աղյուսակ 1.

**Տարրերի պարունակությունը հողում և սամիթի վերգետնյա մասում
(ներկայացվում է մգ/կգ չոր նյութի հաշվով) և ԿԿԳ արժեքները:**

Տարր	Ալիքի երկարություն, նմ	m, մգ/կգ		ԿԿԳ
		Հող	Բույս Սամիթ	
Al	308.215	18813.3	222.026	0.01
As	188.979	8.262	2.169	0.26
Ba	233.527	340.241	19.267	0.06
Ca	317.933	9.042	2.062	0.23
Cd	214.440	0.914	0.148	0.16
Co	228.616	10.849	0.245	0.023
Cr	205.560	33.655	2.549	0.076
Cu	324.752	102.541	20.958	0.20
Fe	259.939	26436.49	369.50	0.01
K	766.490	0.748	6.809	9.10
La	408.672	22.533	0.462	0.02
Li	670.784	17.075	0.431	0.03
Mg	279.077	10231.34	4795.5	0.47
Mn	257.610	908.034	73,526	0.08
Mo	202.031	2.591	14.958	5.77
Na	589.592	2168.494	1183.814	0.55
Ni	231.604	43.284	2.859	0.01
P	178.221	5295.679	6578.078	1.24
Pb	220.353	30.883	2.197	0.07
S	181.975	1034.647	5321.300	5.14
Sb	206.836	2.493	0.00	0.00
Sc	361.383	3.800	0.073	0.02
Sn	189.927	1.282	0.039	0.03
Sr	421.552	377.831	86.661	0.23
Ti	337.279	519.898	7.026	0.01
V	292.402	48.969	1.035	0.02
W	224.876	8.397	0.668	0.08
Y	371.029	11.125	0.156	0.01
Zn	206.200	276.296	55.953	0.20
Zr	343.823	9.153	0.633	0.07

Վերոնշյալից պարզ է դառնում, որ եթե բույսը կուտակի մեծ քանակությամբ մոլիբդեն, ապա դրա օգտագործումը սննդում կարող է ունենալ թունավոր ազդեցություն մարդու օրգանիզմի վրա: Քանի որ սամիթը լայնորեն կիրառվում է խոհանոցում և ժողովրդական բժշկության մեջ, անհրաժեշտ է միշտ հաշվի առնել, որ այն կարող է մեծ քանակությամբ կուտակել մոլիբդեն:

Եզրակացություն

Այսպիսով, առաջին անգամ ուսումնասիրվել է Հայաստանում, Գորիսի տարածաշրջանում աճող սամիթի տարրային կազմը: Տարրային բաղադրության բազմազանության շնորհիվ այն կարող է հանդիսանալ բազմաթիվ էական միկրո և մակրոտարրերի աղբյուր: Սամիթը, որը ակտիվորեն մշակվում է, կուտակում է մեծ քանակությամբ մոլիբդեն և կարող է օգտագործվել որպես մոլիբդենի կուտակող բույս:

Ներկայացված տվյալներից ելնելով՝ ակնհայտ է, որ անհրաժեշտ է վերահսկել սամիթում մոլիբդենի, ինչպես նաև մյուս ծանր մետաղների թույլատրելի սահմանաչափի պարունակությունը, նախքան այն կիրառելը ինչպես խոհարարության, այնպես էլ բուժական միջոցների պատրաստման համար: Եթե այն աճեցվել է մաքուր հողում, այն կարող է լինել հիանալի բնական հավելում առողջ սննդակարգում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ильин В. Б. Тяжелые металлы в системе почва-растение. Новосибирск: Наука, 1991, - 150 с.
2. Исаев Ю. А. Лечение микроэлементами, металлами и минералами. Киев, Здоровье, 1992, - 118 с.
3. Ловкова О. А., Рабинович А. М., Пономарева С. М. Почему растения лечат? Москва: Наука, 1990, - 256 с.
4. Sharma R., Agrawal M. Biological Effects of Heavy Metals (an overview) // Environmental Journal, Moscow, N26, 2005, pp. 301-313.
5. Щербинина Е. Ф. Фармакогностическое изучение синюхи голубой флоры Западной Сибири, 1990, Пятигорск, - 24 с.
6. Fatima I., Waheed S., Zaidi J. Elemental analysis of Anethum graveolens, Sismbrium Irio Linn and Veronia Anthelmintica seeds by instrumental neutron activation analysis, 2013, pp. 57-61.
7. Джолимбетов О. Н., Давлетов Т. Т. Значение укропа пахучего (Anethum Graviolens L.), 2021, - 3 с.
8. www.agilent.com/chem/5110icpoe
9. Юлдашев Г. Ю., Исагалиев М. Т. Биогеохимия почв, 2014, - 352 с.
10. Скальный А. В., Рудаков И. А. Биоэлементы в медицине. Москва: Мир. 2004, 272 с.
11. Авцын А. П., Жаворонков А. А., Риш М. А., Строчкова Л. С. Микроэлементы человека, Москва: Медицина, 1991, - 496 с.

КАЧЕСТВЕННЫЙ И КОЛИЧЕСТВЕННЫЙ АНАЛИЗ МИНЕРАЛЬНЫХ ЭЛЕМЕНТОВ В ЛИСТЬЯХ УКРОПА (ANETHUM GRAVEOLENS)

Навасардян Рузанна

Горисский государственный университет,

“Биология”, 2-й курс

Научный руководитель:

кандидат химических наук, доцент Л. Варданыян

Резюме

Ключевые слова: *Anethum graveolens, укроп, минеральные элементы, коэффициент биологического поглощения, молибден, тяжелые металлы, ICP OES анализ*

В ходе исследования изучен качественный и количественный состав минеральных элементов в листьях укропа (*Anethum graveolens*), произрастающего в Горисском регионе Армении. С помощью метода ICP OES было определено содержание 30 элементов и рассчитан коэффициент биологического поглощения (КБП). Выявлено, что укроп накапливает большое количество P, S, Mg, Na, Fe, Al, Mn, Cu и K, из которых концентраторами являются K, S и P.

QUALITATIVE AND QUANTITATIVE ANALYSIS OF MINERAL ELEMENTS IN DILL (ANETHUM GRAVEOLENS) LEAVES

Navasardyan Ruzanna

Goris State University,

“Biology”, 2nd Year

Academic Supervisor: L. Vardanyan,

Candidate of Chemical Sciences, Associate Professor

Summary

Key words: *Anethum graveolens, dill, mineral elements, biological absorption coefficient, molybdenum, heavy metals, ICP OES analysis*

The study investigated the qualitative and quantitative composition of mineral elements in dill (*Anethum graveolens*) leaves growing in the Goris region of Armenia. Using the ICP OES method, the content of 30 elements was determined and their biological absorption coefficient (BAC) was calculated. It was revealed that dill accumulates large amounts of P, S, Mg, Na, Fe, Al, Mn, Cu, and K, among which K, S, and P are concentrators.

**ԿԱԹՈՒՅՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԿԵՂՉՄԱՆ ՀԱՅՏՆԱԲԵՐՄԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԻ
ՀԱՄԵՄՍՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ**

Սամսոնովա Վիտայինա

«ՎՊՀ» հիմնադրամ,

«Դեղագործական քիմիա», 4-րդ կուրս

Գիտական ղեկավար՝ ք. գ. թ., դոցենտ Ա. Ղազարյան

Հանգուցային բառեր. լակտոզայի քանակություն, կաթի սպիտակուցներ, կաթի յուղայնություն, կաթի թթվայնություն, կաթի խտություն, կաթի կեղծում

Կաթը լակտացիայի ընթացքում մարդու և կաթնասուն կենդանիների կաթնագեղձում սինթեզվող սպիտակ գույնի սննդարար արտազատուկ է, ֆիզիոլոգիական նշանակությամբ՝ նորածին երեխայի կամ ձագի անփոխարինելի սնունդ [1]: Կաթը կարգավորում է մարսողական տրակտի գործունեությունը և ճնշում է այնտեղ ընթացող նեխման պրոցեսները: Դրա հետ մեկտեղ կաթը խթանում է աղիների և երիկամների գործունեությանը: Ոչ մի սննդամթերք չի կեղծվում այնպիսի չափերի, ինչպիսին կաթն է: Կաթի կեղծումը կարող է լինել բնական կամ արհեստական: Բնական կեղծման ժամանակ մտածված վաճառքի է հանվում հիվանդ կենդանիներից ստացված կաթը, իսկ արհեստական կեղծման դեպքում կաթին ավելացնում են տարբեր նյութեր, ծավալը մեծացնելու, իրացման ժամկետում կաթի թթվելը կանխելու համար և այլն: Հետևաբար ամեն մի աշխատանք, որը միտված է վեր հանել և քննարկել կաթի կեղծման հայտնաբերման մեթոդները, խիստ արդիական է [3]:

Խմելու կաթի կեղծման ամենատարածված տեսակը որակական կեղծիքն է: Ոչ մի սննդամթերք չի կեղծվում այնպիսի չափերի, ինչպիսին կաթն է: Ամենից հաճախ կաթը նոսրացնում են ջրով, որի ժամանակ փոխվում են կաթի օրգանալեպտիկ, ֆիզիկական և քիմիական պարամետրերը:

Աշխատանքի նպատակն է ներկայացնել կաթի ցուցանիշներն ու դրանց կեղծման հայտնաբերման եղանակները:

Որպես հետազոտման առարկա ուսումնասիրվել են տարբեր կաթեր և նրանց կեղծումը:

Ցույց է տրվել, որ ֆիզիկաքիմիական եղանակներով կարելի է որոշել ջրով կաթի կեղծումը: Քննարկվում է մի շարք քիմիական նյութերով, այդ թվում կերակրի սողայով և օսլայով կաթի կեղծման հայտնաբերման եղանակները:

Փորձնական մաս

Որպես հետազոտման մեթոդ աշխատանքում կիրառվել են բեկումնաչափական կամ ռեֆրակտոմետրիկ, տիտրաչափական և Հերբերի մեթոդները:

Կաթի որակի ցուցանիշներն են օրգանոլեպտիկ ցուցանիշները՝ համը, հոտը և գույնը, ջրի, յուղի, սպիտակուցների, կաթնաշաքարի պարունակությունը, չոր մնացորդը, չոր անյուղ կաթնային մնացորդը, թթվայնությունը, խտությունը, սառեցման ջերմաստիճանը:

Ըստ օրգանադրության ընդհանուր կաթի գույնը պետք է լինի սպիտակ, ամբողջ զանգվածով միատարր, հալած և ստերիլիզացված կաթի համար կաթնագույն երանգով, յուղազերծված կաթի համար՝ մի փոքր կապտավուն երանգով: Համն ու հոտը՝ առանց կողմնակի համերանգների և հոտերի: Կաթի համի և հոտի գնահատման բալային սանդղակը բերված է աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1.

Կաթի համի և հոտի գնահատականը

Բալեր	Կաթի գնահատականը	Համ ու հոտ
1	վատ	Դառը կաթնամթերքի համ և հոտ, դեղերի, մաքրող միջոցների և այլ քիմիկատների հոտ
2	վատ	Արտահայտված կերային, այդ թվում սոխ, սխտոր և այլ բույսերի համ, որոնք կաթին տալիս են դառը համ, աղի, թթված, լիպոլիզային
3	բավարար	Թեթև կերային, թեթևակի թթված, թեթևակի կեղտոտ
4	լավ	Ոչ ամբողջովին արտահայտված, մաքուր
5	գերազանց	Մաքուր, դուրեկան, թեթև քաղցրահամ

Ուսումնասիրվել է լակտոզայի քանակությունը ռեֆրակտոմետրիկ եղանակով 3 տեսակի կաթերի մեջ:

Աղյուսակ 2.

Հետազոտվող կաթերի մեջ լակտոզայի քանակություն





Կաթի տեսակ	Բեկման ցուցիչ	Լակտոզայի քանակ
Գնված կաթ	1,341	4,85 %
Կովի կաթ	1,3405	4,60 %
Ոչխարի կաթ	1,339	3,88 %

Ընդհանուր սպիտակուցների, կազեինի և պրոտեինի քանակի որոշումը կաթի մեջ որոշվել է տիտրաչափական և բեկումնաչափական եղանակով: Տվյալները բերված են աղյուսակ 3-ում:

Աղյուսակ 3.

Հետազոտվող կաթերի ընդհանուր սպիտակուցների, կազեինի, պրոտեինի քանակի որոշում

Կաթի տեսակ	Ընդհանուր սպիտակուց	Կազեին	Պրոտեին
Գնված կաթ	3,93x0,959 =3,76 %	3,93x0,755=2,967 %	1,354 (բեկման ցուցիչ)
Կովի կաթ	3,1x0,959=2,97 %	3,1x0,755=2,34 %	1,348 (բեկման ցուցիչ)
Ոչխարի կաթ	3,98x0,959=3,816 %	3,98x0,755=3,0049 %	1,355 (բեկման ցուցիչ)



Նկար 3. Կաթի մեջ սպիտակուցի քանակի որոշումը և սարքեր

Կաթի յուղայնության որոշումը ուսումնասիրվել է կաթի անալիզատոր կոչվող սարքով և որոշվել է 3 տեսակ կաթերի յուղայնությունը: Մտացված տվյալները բերված են աղյուսակ 4-ում:

Աղյուսակ 4.

Կաթի յուղայնության որոշումը

Կաթի տեսակ	Ցուղայնություն
Գնված կաթ	3,49 %
Կովի կաթ	4,62 %
Ոչխարի կաթ	7,69 %



Նկար 4. Կաթի յուղայնության որոշումը կաթի անալիզատորով

Կաթի թթվայնության որոշման եղանակները
Հետազոտվող կաթերի թթվայնությունը որոշվել է տիտրաչափական
եղանակով

Տվյալները բերված են աղյուսակ 5-ում:

Աղյուսակ 5.

Կաթերի թթվայնության որոշումը

Կաթի տեսակ	Թթվայնություն
Գնված կաթ	2,8x10=28 ⁰ Թ
Կովի կաթ	2,3x10 =23 ⁰ Թ
Ոչխարի կաթ	1,8x10 =18 ⁰ Թ



Նկար 5. Կաթի տիտրվող թթվայնության որոշումը, տիտրում




Թթվայնության որոշման սահմանային եղանակ

Արդյունքները բերված են աղյուսակ 6-ում:

Աղյուսակ 6.

Հետազոտվող կաթերի սահմանային թթվայնության որոշումը

Կաթի տեսակ	Սահմանային թթվայնություն
Գնված կաթ	18 ⁰ Թ-ի դեպքում բարձր է 20 ⁰ Թ-ի դեպքում բարձր է
Կովի կաթ	18 ⁰ Թ-ի դեպքում բարձր է 20 ⁰ Թ-ի դեպքում բարձր է
Ոչխարի կաթ	18 ⁰ Թ-ի դեպքում հավասար 20 ⁰ Թ-ի դեպքում ցածր է



Նկար 6. Կաթի սահմանային թթվայնության որոշումը

Կաթի թթվայնության որոշման եռացման եղանակ

Աղյուսակ 7.

Հետազոտվող կաթերի մակարդեղիությունը եռացման եղանակով


<i>Կաթի տեսակ</i>	<i>Մակարդեղիություն</i>
Գնված կաթ	Մակարդվում է
Կովի կաթ	Թույլ է մակարդվում
Ոչխարի կաթ	Չի մակարդվում

Կաթի թթվայնության որոշումը սպիրտային եղանակով

Աղյուսակ 8.

Կաթի թթվայնության որոշման սպիրտային եղանակ

<i>Կաթի տեսակ</i>	<i>Փաթիլավորում</i>
Գնված կաթ	Փաթիլավորում կա
Կովի կաթ	Թույլ փաթիլավորում
Ոչխարի կաթ	Փաթիլավորում չկա



Նկար 7. Կաթի թթվայնության որոշման սպիրտային եղանակ



Կաթի խտության որոշումը

Փորձերը կատարվել են կաթի անալիզատոր սարքով, և որոշվել է յուղայնությունը:

Տվյալները բերված են աղյուսակ 9-ում:

Հետազոտվող կաթերի խտություն

Կաթի տեսակ	Խտություն
Գնված կաթ	31,81 կգ/մ ³ × 10 = 1,03181 գ/սմ ³
Կովի կաթ	26,10 կգ/մ ³ × 10 = 1,02610 գ/սմ ³
Ոչխարի կաթ	32,65 կգ/մ ³ × 10 = 1,03265 գ/սմ ³



Սկար 8. Կաթի խտության որոշումը կաթի անալիզատորով

Կաթի մեջ չոր մնացորդի քանակի որոշում

Հաշվարկները կատարվել են բանաձևով. m_0 -ն տարայի զանգվածն է, m -ը կաթի և տարայի զանգվածն է՝ նախքան լուծիչի հեռացումը, m_1 -ը կաթի և տարայի զանգվածն է լուծիչի հեռացումից հետո:

$(m_1 - m_0)$

$C = \frac{\quad}{\quad} \times 100$

$m - m_0$

Գնված կաթի ցուցանիշներ

$m_0 = 21,2$

$m = 29$

$m_1 = 22,21$

Կովի կաթի ցուցանիշներ

$m_0 = 21,2$

$m = 26$

$m_1 = 21,78$

Ոչխարի կաթի ցուցանիշներ

$m_0 = 21,2$

$m = 28,7$

$m_1 = 22,2$

Հետազոտվող կաթերի մեջ չոր մնացորդի քանակ

Կաթի տեսակ	Չոր մնացորդի քանակ
Գնված կաթ	13,1 %
Կովի կաթ	12,08 %
Ոչխարի կաթ	13,33 %

Ըստ չոր մնացորդի քանակության որոշեցինք կաթերի խոնավությունը՝ օգտագործելով հետևյալ բանաձևը.

$$W=100-C$$

Աղյուսակ 11.

Հետազոտվող կաթերի խոնավություն

<i>Կաթի տեսակ</i>	<i>խոնավություն</i>
Գնված կաթ	W=100-13,1 %=86,9 %
Կովի կաթ	W=100-12,08 %= 87,2 %
Ոչխարի կաթ	W=100-13,33 %=86,67 %



Նկար 9. Կաթի մեջ չոր մնացորդի որոշումը չորացնող պահարանի միջոցով

Կաթի կեղծումը ջրով


Կաթի անալիզատոր սարքի միջոցով ուսումնասիրվել է կաթի կեղծումը ջրով:

Տվյալները բերված են աղյուսակ 12-ում:

Աղյուսակ 12.

Հետազոտվող կաթերի ջրով կեղծման առկայություն

<i>Կաթի տեսակ</i>	<i>Ջրով կեղծում</i>
Գնված կաթ	Կեղծում կա
Կովի կաթ	Կեղծում չկա
Ոչխարի կաթ	Կեղծում չկա



Նկար 10. Կաթի ջրով կեղծման որոշումը կաթի անալիզատորով

Կաթի կեղծումը օւլայով


Կապույտ գույնի առաջացումը վկայում է կեղծման մասին, իսկ նստվածքի առաջացումը՝ ալյուրի առկայության մասին: Կատարելով փորձը՝ գրանցվեցին հետևյալ արդյունքները:

Տվյալները բերված են աղյուսակ 13-ում:

Աղյուսակ 13.

Հետազոտվող կաթերի օւլայով կեղծում

Կաթի տեսակ	Օւլայով կեղծում
Գնված կաթ	Թույլ կապույտ երանգ, այսինքն կեղծում կա
Կովի կաթ	Կեղծում չկա
Ոչխարի կաթ	Կեղծում չկա



Նկար 11. Կաթի օւլայով կեղծման որոշումը

Աղյուսակ 14.

Կաթերի բաղադրության ստանդարտ նորմաները

Տեսակ	Ջուր %	Չոր նյութեր %	Կաթնա-յուղ %	Սպիտա-կուց %	Կաթնա-շաքար %	Հանքային նյութեր %
Գնված	88 %	12,0 %	3,5 %	1,7(1,1) %	6,5 %	0,3 %
Կովի	87 %	13,0 %	3,8 %	3,5(2,8) %	4,7 %	0,7 %
Ոչխարի	81 %	13,6 %	6,8 %	5,8(4,8) %	4,8 %	0,9 %

Ստացանք հետևյալ ցուցանիշները:

Լակտոզայի քանակությունը: Գնված կաթի և կովի կաթի լակտոզայի քանակությունները համապատասխանում էին լակտոզայի անհրաժեշտ նորմային: Իսկ ոչխարի կաթում լակտոզայի քանակը 0,92 %-ով պակաս էր նորմայից:

Սպիտակուցների քանակությունը: Գնված կաթում սպիտակուցի քանակությունը 0,26 %-ով գերազանցում է նորմային: Կովի կաթինը 0,1 %-ով նորմայից պակաս է: Ոչխարի կաթի սպիտակուցների քանակը 1,0 %-ով պակաս էր նորմայից:

Յուղայնությունը: Գնված կաթի յուղայնությունը համապատասխանում է

նորմային: Կովի կաթի յուղայնությունը 0,82 %-ով բարձր է նորմայից: Ոչխարի կաթի յուղայնությունը 0,89 %-ով բարձր է նորմայից:

Տիտրվող թթվայնություն: Գնված կաթի տիտրվող թթվայնությունը 3 ՕՄ-ով բարձր է նորմայից: Կովի կաթի տիտրվող թթվայնությունը նորմայի սահմանում է, բայց նկատվում է համով ընկալվող թույլ թթվայնություն: Ոչխարի կաթի տիտրվող թթվայնությունը նորմայի սահմանում է: Այս պատճառով խանութի կաթը եռացնելիս արագ մակարդվեց, կովի կաթը համեմատաբար թույլ մակարդվեց, իսկ ոչխարի կաթը շատ թարմ էր և չմակարդվեց:

Խտությունը: Գնված կաթի խտությունը համապատասխանում է նորմային: Կովի կաթի խտությունը 0,0009 %-ով պակասում է նորմայից: Ոչխարի կաթի խտությունը 0,00065 %-ով բարձր է նորմայից:

Չոր մնացորդի քանակ: Գնված կաթի չոր մնացորդի քանակը 0,1 %-ով բարձր է նորմայից: Կովի կաթի չոր մնացորդի քանակը 0,2 %-ով պակաս է: Իսկ ոչխարի կաթի չոր մնացորդի քանակը 0,27 %-ով պակաս է:

Ջրով կեղծում: Գնված կաթը կեղծված էր: Կովի կաթը կեղծված չէր: Ոչխարի կաթը կեղծված չէր:

Օսլայով կեղծում: Գնված կաթը կեղծված է օսլայով: Իսկ կովի և ոչխարի կաթում օսլայով կեղծում չնկատվեց:

Այսպիսով՝ իմ կողմից ուսումնասիրված փորձանմուշներից գնված կաթը ուներ կեղծման փոքր ցուցանիշ, իսկ կովի և ոչխարի կաթերը կեղծված չէին: Հետևաբար 3-ն էլ անվտանգ էին և պիտանի էին օգտագործման համար: Սակայն գերադասելի է օգտագործման համար առավելությունը տալ կովի և ոչխարի կաթին:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Դիլանյան Ջ. Ք., Կաթի և կաթնամթերքի տեխնոլոգիա, Երևան, Հայպետհրատ, 1962, 407 էջ:
2. Բեզլարյան Ռ. Ա., Բեզլարյան Ա. Ռ., Կաթի և կաթնամթերքի տեխնոլոգիա, Երևան, ՀԳԱ, 2003, 88 էջ:
3. Աղաբաբյան Ա.Ա., Կաթի ֆիզիկա և քիմիա, 1998, 107 էջ:
4. http://publishing.yso.am/files/Snndi_qimia-1617378855-.pdf
5. https://library.asue.am/open/341_2.pdf
6. <https://www.arlis.am/documentview.aspx?docID=93049>
7. <https://www.fdalab.am/am/mo/534/>
8. <https://testslab.ru/stati/sposoby-falsifikacii-moloka-i-metody-ih-vyyavleniya/>
9. <https://www.milkbranch.ru/publ/view/543.html>
10. <https://www.laboratuvar.com/hy/gida-analizleri/fiziksel-analizler/yagsiz-kuru-madde-tayini>
11. https://docs.eaeunion.org/docs/hy-am/01119848/clcd_13112017_145_doc.docx
12. <https://bonilat.am/need-milk/>
13. http://publishing.yso.am/files/Tatevik_Sargsyan.pdf

СРАВНИТЕЛЬНЫЙ АНАЛИЗ МЕТОДОВ ВЫЯВЛЕНИЯ ФАЛЬСИФИКАЦИИ ПОКАЗАТЕЛЕЙ МОЛОКА

Самсонова Виталина

Фонд "ВГУ",

«Фармацевтическая химия», 4-й курс

Научный руководитель:

кандидат химических наук, доцент А. Казарян

Резюме

Ключевые слова: содержание лактозы, молочные белки, жирность молока, кислотность молока, плотность молока, фальсификация молока

Целью статьи является представление показателей молока и методов выявления их фальсификации. В качестве объекта исследования рассматривалось молоко и его фальсификация. В статье показано, что физико-химические методы могут быть использованы для определения фальсификации молока водой. Также обсуждаются методы обнаружения фальсификации молока рядом с химикатами, включая пищевую соду и крахмал.

COMPARATIVE ANALYSIS OF METHODS FOR DETECTING FALSIFICATION OF MILK INDICATORS

Samsonova Vitalina

"VSU" Foundation,

«Pharmaceutical Chemistry», 4th Year

Academic Supervisor: A. Ghazaryan,

Candidate of Chemical Sciences, Associate Professor

Summary

Key words: lactose content, milk proteins, milk fat, milk acidity, milk density, milk adulteration

The purpose of the following article is the representation of milk indicators and methods of identifying their falsification. Milk and its falsification were considered an object of the research. It is shown that physical and chemical methods can be used to determine adulteration of milk with water. Methods for detecting adulteration of milk with a number of chemicals, including baking soda and starch, are discussed.

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ЭКОНОМИКА

ECONOMY

**ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՅՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՄՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ**

Ալեքսանյան Նազելի

*Գործիսի պետական համալսարան,
«Տնտեսագիտություն», 3-րդ կուրս
Գիտական ղեկավար՝ տ. գ. թ. Ս. Պետրոսյան*

Հանգուցային բառեր. *զբոսաշրջություն, Սյունիքի մարզ, զբոսաշրջային գրավչություն, զբոսաշրջային այցելություն*

Հետազոտական աշխատանքում ներկայացվել է զբոսաշրջության դերն ու նշանակությունը երկրի սոցիալ-տնտեսական զարգացման և համաշխարհային տնտեսությանն ինտեգրման գործում: Ներկայացվել է Սյունիքի մարզը՝ որպես լավագույն զբոսաշրջային վայրերից մեկը: Ուսումնասիրության են ենթարկվել Սյունիքի մարզի զբոսաշրջային ներուժն ու զբոսաշրջության զարգացման հնարավորությունները: Վեր են հանվել մարզում զբոսաշրջության զարգացմանը խոչընդոտող առկա խնդիրներն ու առաջարկվել դրանց լուծման ուղիներ և մեխանիզմներ, ինչը կնպաստի Սյունիքի զբոսաշրջային կենտրոն դառնալուն և մարզի տնտեսության զարգացմանը բոլոր առումներով:

Զբոսաշրջությունը տնտեսության այն ոլորտն է, որի շնորհիվ միլիոնավոր մարդիկ ճամփորդում են ամբողջ աշխարհով: Այն համաշխարհային տնտեսության զարգացման շարժիչ ուժն է, որն ապահովում է բարձր մրցակցային միջավայր ինչպես տարբեր զբոսաշրջային ուղղությունների միջև, այնպես էլ դրանց ներսում [4, 301]: Զբոսաշրջային արդյունքը տրանսպորտի, հյուրանոցային տնտեսության, առևտրի, էքսկուրսիոն, կուլտուր-տեսարժան, մարզական, կոմունալ-կենցաղային, բուժական հիմնարկների ու ձեռնարկությունների փոխադարձ կապերի մեջ գտնվող սպասարկման տարրերի համալիրն է: Զբոսաշրջիկների թվի աճը նպաստում է տնտեսության զարգացմանը և ապահովում է արտարժույթի ներհոսք:

Զբոսաշրջությունն ամբողջ աշխարհում խթանում է տնտեսական աճը և հանդիսանում է զարգացման միջոլորտային շարժիչ ուժ: Զբոսաշրջությունն աշխարհում երկրորդ ամենաարագ զարգացող ոլորտն է՝ մոտ 4 % տարեկան աճով [1, 2]: Զբոսաշրջային արդյունաբերությունն ունի հսկայական ներուժ երկրի զարգացման հետազոտվող վերափոխելու համար: Ամբողջ աշխարհում զբոսաշրջությունը նպաստում է տնտեսության զարգացմանը՝ ստեղծելով աշխատատեղեր զբոսաշրջության արժեքային շղթայի ողջ երկայնքով և հարակից ոլորտներում (օրինակ՝ շինարարություն, գյուղատնտեսություն, սննդի արդյունաբերություն, մանրածախ առևտուր և այլն): Զբոսաշրջությունը նաև կանխում է գյուղական բնակավայրերից բնակչության արտահոսքը և աշխատուժի արտագաղթը՝ քաղաքային միջավայրից դուրս ստեղծելով աշխատատեղեր և հնարավորություններ [1, 3]: Զբոսաշրջությունը նպաստում է ազգային և տարածաշրջանային ինքնության

ձևավորմանը՝ բնակչության մեջ սերմանելով բնական և մշակութային ժառանգությունը պահպանելու արժեքներ: Ճիշտ կազմակերպելու պարագայում զբոսաշրջությունը կարող է նպաստել կայունությանը և օժանդակել ցանկացած երկրի առաջխաղացմանը:

Աղյուսակ 1.

ՀՀ այցելած զբոսաշրջիկների աշխարհագրական բաշխվածությունը 2024 թ. [3, 144]

<i>Ըստ քաղաքացիության</i>	<i>Զբոսաշրջիկների թվաքանակը, մարդ</i>	<i>Տեսակարար կշիռ, %</i>
Ռուսաստան	937823	42.5
Վրաստան	266048	12.1
Իրան	176453	8
ԱՄՆ	58965	2.7
Հնդկաստան	43672	2
Ֆրանսիա	30194	1.4
Ուկրաինա	28238	1.3
Գերմանիա	28717	1.3
այլ երկրներ	324393	14.5
Ընդամենը	2208179	100

Բերված ցուցանիշները վկայում են, որ 2024 թ. 2023 թ. համեմատ զբոսաշրջիկների թիվը նվազել է 4.7 %-ով (2023 թ. ՀՀ այցելած զբոսաշրջիկների թիվը կազմել է 2.32 մլն մարդ): Հայաստան ացելող զբոսաշրջիկների մեծ մասը գալիս են Ռուսաստանից, Վրաստանից, Իրանից, Հնդկաստանից, Գերմանիայից, ԱՄՆ-ից, Ֆրանսիայից: Ցուցանիշները ցույց են տալիս, որ առաջին տեղում Ռուսաստանն է: Վերջին տարիներին մեծանում է նաև եվրոպական երկրների հետաքրքրությունը Հայաստանի նկատմամբ: Ընդ որում, զբոսաշրջիկների 64 %-ը ժամանում են օդային ճանապարհով:

Զբոսաշրջությունը Հայաստանի տնտեսական և սոցիալական աճի ամենագորեղ շարժիչ ուժերից մեկն է: Որպես Հայաստանում արդեն ինքնուրույն զարգացող ոլորտ՝ զբոսաշրջության շարունակական աճը շատերի համար հզոր խթան կարող է հանդիսանալ: Այն մարդկանց առաջարկում է կենսամակարդակը բարձրացնելու ավելի մեծ հնարավորություններ՝ ունենալով ոլորտ մուտք գործելու ավելի փոքր արգելքներ՝ համեմատած արդյունաբերության այլ ոլորտների հետ: Հայաստանի զբոսաշրջության ոլորտի զարգացմանն աջակցելու համար նախահրաժեշտ է բարելավել զբոսաշրջային ենթակառուցվածքները, մատուցվող ծառայությունների որակը, բազմազանեցնել զբոսաշրջային առաջարկները, ընդլայնել ներքին զբոսաշրջության ծավալները, քայլեր ձեռնարկել ընդլայնելու զբոսաշրջիկների Հայաստանում մնալու տևողությունը և ծախսերը, բարելավելու Հայաստանի դիրքերը զբոսաշրջության համաշխարհային քարտեզի վրա, զբոսաշրջության ոլորտի օրենսդրական դաշտը, կատարելագործելու զբոսաշրջության կրթական և որակավորման համակարգը:

Հայաստանի Հանրապետության զբոսաշրջության առանցքը երկրի հարուստ պատմությունն ու մշակույթն է, որը գրավում է զբոսաշրջիկներին իր եկեղեցիներով, պատմական վայրերով ու անտիկ պատմությամբ: Երկրի բնական միջավայրը ևս մեկ գրավիչ կողմ է այն այցելուների համար, որոնք փնտրում են բնություն և արկածային ժամանց Հայաստանի լեռներում, լճերում ու հովիտներում: Հայաստանի ինտեգրումը զբոսաշրջության համաշխարհային աճող շուկային և առանց վիզայի հասանելիությունը բազմաթիվ երկրների այցելուների համար դարձնում են այն այցելության ցանկալի ուղղություն:

Մյունիքի մարզը Հայաստանի լավագույն զբոսաշրջային վայրերից է, քանի որ հարուստ է անտառներով, լեռներով, պատմամշակութային արժեքներով, բնության հուշարձաններով և, իհարկե, բուժիչ ջրաղբյուրներով: Հայաստանի բնության հատուկ պահպանվող տարածքների զգալի մասը գտնվում է հենց այս մարզում: Մյունիքի մարզի գլխավոր զբոսաշրջային գրավչություններից են Տաթևի վանական համալիրը, Քարահունջի աստղադիտարանը և Հայաստանի ամենաերկար ճոպանուղին:

Աղյուսակ 2.

ՀՀ և Մյունիքի մարզ այցելած զբոսաշրջիկների թվաքանակը 2018-2024 թթ. (մարդ) [2, 162]

Տարեթիվ	ՀՀ այցելած զբոսաշրջիկների թվաքանակը	Մյունիքի մարզ այցելած զբոսաշրջիկների թվաքանակը
2018	1651782	152952
2019	1894377	155983
2020	360338	32220
2021	875772	67743
2022	1665658	86187
2023	2316666	86889
2024	2208179	84511

Ինչպես երևում է աղյուսակ 2-ից, ՀՀ-ում զբոսաշրջային այցելությունների թվաքանակը կտրուկ անկում է ապրել 2020 թ.-ին՝ նախորդ տարվա համեմատ կրճատվելով մոտ 81 %-ով: Դա մեծապես պայմանավորված էր COVID-19 համավարակով և Արցախյան պատերազմով, ինչը հանգեցրեց ՀՀ այցելող զբոսաշրջիկների թվաքանակի նվազման: Մակայն հաջորդ տարիներին զբոսաշրջային այցելությունների թիվը կտրուկ աճ է գրանցել՝ 2023 թ. կազմելով մոտ 2.32 մլն մարդ, 2024 թ.՝ 2.2 մլն մարդ: Ինչ վերաբերում է Մյունիքի մարզ այցելած զբոսաշրջիկների թվաքանակին, քանի որ պաշտոնական վիճակագրական տվյալները բացակայում էին, հիմք է ընդունվել Տաթևեր ճոպանուղու այցելուների քանակը 2018-2024 թթ. (հիմք են ընդունվել հարցման արդյունքում ստացված պաշտոնական տվյալները): Վիճակագրական տվյալները փաստում են, որ 2018-2024 թթ. ամենացածր ցուցանիշը գրանցվել է 2020 թ.՝ կազմելով 32.2 հազ. մարդ: Չնայած նրան, որ ցուցանիշը հաջորդ տարիներին որոշակիորեն բարելավվել է, սակայն հարկ է ընդգծել, որ ի

համեմատ 2019 թ.-ի 2024 թ. զբոսաշրջիկների թվաքանակը կրճատվել է մոտ 2 անգամ՝ կազմելով 84.5 հազ. մարդ: Ընդ որում՝ 2024 թ. ՀՀ այցելած զբոսաշրջիկների ընդամենը 3.8 %-ն է այցելել Մյունխիքի մարզ:

Մյունիքը բազմաշերտ զբոսաշրջային ուղղություն է, որն ապահովում է հետաքրքրությունների լայն շրջանակ պատմությունից և մշակույթից մինչև արկածային զբոսաշրջություն և էկոտուրիզմ: Նրա գեղեցկագույն լանդշաֆտները, հնագույն ժառանգության վայրերը, վառ ավանդույթները դարձնում են այն լավագույն վայր ճանապարհորդների համար: Չնայած նրան, որ Մյունիքը կարող է դառնալ առաջատար զբոսաշրջային ուղղություն Հայաստանում, սակայն հարկ է ընդգծել, որ մարզում առկա են ոլորտի զարգացմանը խոչընդոտող մի շարք խնդիրներ.

- Մյունիքի մարզում զբոսաշրջության զարգացմանը խոչընդոտող խնդիրներից է պետության ոչ բավարար աջակցությունը: Բացի այդ կարևոր խնդիր է «պետություն-մասնավոր» համագործակցային թույլ կապը, որի ուժեղացումը մեծապես կնպաստի ոլորտի զարգացմանը:

- Առաջարկվող զբոսաշրջային փաթեթների բազմազանեցման խնդիրը նույնպես արդի է Մյունիքի մարզում: Զբոսաշրջիկներին առաջարկվող փաթեթների մեջ ներառված են հիմնականում ճանաչողական էքսկուրսիաներ, որոնց նպատակն է մարզի պատմամշակութային ժառանգության հետ ծանոթացումը: Այդ պատճառով մարզ գալիս են հիմնականում միջինից բարձր տարիքային խմբի զբոսաշրջիկները, որոնց հետաքրքրում է պասիվ հանգիստը:

- Մարզում զբոսաշրջության ոլորտում կան նաև այնպիսի խնդիրներ, որոնք կապված են զբոսաշրջիկների հետ շփվելիս տեղացիների փորձառության ցածր մակարդակի, օտար լեզվի չիմացության, ներդրումների ցածր մակարդակի, ուղղորդող վահանակների և ցուցանակների, հանրային զուգարանների, ժամանցի վայրերի բացակայության հետ:

- Շատ զբոսաշրջիկներ ծանոթ չեն մարզի հարուստ մշակութային ժառանգությանը: Մյունիքը միջազգայնորեն հայտնի չէ որպես զբոսաշրջային ուղղություն: Կան սակավ առցանց ռեսուրսներ՝ տարածաշրջանի մասին տեղեկատվություն տրամադրելու համար: Մյունիքում քիչ են կազմակերպվում տոնավաճառներ, փառատոներ, մշակութային և գիտական մրցաշարեր:

- Ոլորտում աշխատող կադրերի ոչ մասնագիտացված լինելը, լեզվի չիմացությունը, որակավորված կադրերի պակասը, որը ոլորտի զարգացման համար ամենաէական հիմնախնդիրներից է: Մարզում համապատասխան գիտելիքներ, հմտություններ, ունակություններ ունեցող կադրերը շատ քիչ են, իսկ զբոսաշրջիկների ստացած տպավորությունների վրա մեծապես ազդում է ծառայությունների մատուցման որակյալությունն ու միջազգային ստանդարտներին համապատասխանությունը, լեզվին տիրապետելը, կիրթ, բարեհամբույր վերաբերմունքը:

- Արցախյան 44-օրյա պատերազմից հետո բազմակի կրճատվել է Մյունիքի զբոսաշրջությունը, և մարզը ՀՀ քաղաքացիների ու օտարերկրացիների համար որոշ չափով կորցրել է գրավչությունը, ինչի հետևանքով հյուրատներ են փակվել, շատերն էլ ծանր կացության առաջ են կանգնել: Սահմանային իրադրությունը

կրճատում է տարածաշրջանի նկատմամբ զբոսաշրջիկների հետաքրքրությունը:

Նշված խնդիրների առկայությունը փաստում են նաև Սյունիքի մարզում զբոսաշրջության, հյուրանոցային, սպասարկման ոլորտներում գործունեություն իրականացնող տնտեսվարող սուբյեկտների շրջանում իրականացված հարցումների արդյունքները:

Սյունիքի մարզում զբոսաշրջության զարգացման համար անհրաժեշտ է.

- Զբոսաշրջության զարգացման համալիր ծրագրի մշակում, որն իր մեջ կընդգրկի առկա ներուժի ամբողջական ուսումնասիրությունը, իրավիճակի գնահատականը և զարգացման ուղղությունների նախանշումը: Արդյունավետ գործելու դեպքում մարզի տնտեսության մեջ զբոսաշրջության մասնաբաժինը կարելի է հասցնել ցանկալի արդյունքի և այն կարող է առաջնային տեղ զբաղեցնել լեռնահանքային արդյունաբերության, էներգետիկայի և գյուղատնտեսության կողքին:

- Զբոսաշրջության զարգացման համար առաջնահերթ է եկթակառուցվածքների ներդաշնակ զարգացումը՝ հյուրանոցային համալիրների, հանգստյան տների վերանորոգում, վերակառուցում, մարզում առկա մշակութային ժառանգության՝ պատմամշակութային հուշարձանների գույքագրում, Տաթևի համալիրի վերանորոգման, Վահանավանքի և մարզի մյուս համալիրների վերանորոգման ավարտում, առանձին համալիրների վերանորոգում, վերակառուցում կամ մասնակի նորոգում, դեպի պատմամշակութային հուշարձաններ տանող ավտոճանապարհների վերանորոգում:

- Մարզի տարածքում Էկոտուրիզմի զարգացման խթանում:

- Ակտիվ և արդյունավետ մարքեթինգային քաղաքականության իրականացման միջոցով ՀՀ Սյունիքի մարզի՝ որպես զբոսաշրջության համար բարենպաստ և գրավիչ երկրամասի նկարագրի ձևավորում և միջազգային շուկայում ներկայացում ու ամրապնդում:

- Համացանցում Սյունիքի մարզի զբոսաշրջության վերաբերյալ վեբ էջի ստեղծում և էջի արհեստավարժ կառավարում:

- Սփյուռքի հետ կապերի համատեքստում, արտասահմանում գտնվող հայության շրջաններում Սյունիքի զբոսաշրջային գրավչության բարձրացում, բարենպաստ ներդրումային միջավայրի ստեղծում մեր հայրենակիցների համար:

Այսպիսով՝ ՀՀ Սյունիքի մարզում զբոսաշրջության զարգացմանը խոչընդոտող արդի խնդիրների լուծման արդյունքում Սյունիքը հնարավորություն կստանա դառնալու ՀՀ զբոսաշրջային կենտրոններից մեկը՝ ի հաշիվ իր բնության գեղեցկության, պատմամշակութային ժառանգության, ավանդույթների և զբոսաշրջության համար առկա հնարավորությունների:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Հայաստանի Հանրապետության զբոսաշրջության զարգացման 2021-2030 թթ. Ռազմավարություն:
2. Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2023 թվականի հունվար-դեկտեմբերին, տեղեկատվական ամսական զեկույց, Երևան, 2024, 404 էջ:

3. Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2024 թվականի հունվար-դեկտեմբերին, տեղեկատվական ամսական զեկույց, Երևան, 2025, 385 էջ:
4. Пьянкова С., Митрофанова И., Ергунова О. Индустрия туризма в условиях "новой нормальности": вызовы и перспективы, Экономика. Информатика, 2023, с. 301.

ВОЗМОЖНОСТИ РАЗВИТИЯ ТУРИЗМА В СЮНИКСКОЙ ОБЛАСТИ

Александр Назели

Горисский государственный университет,

«Экономика», 3-й курс

Научный руководитель:

кандидат экономических наук С. Петросян

Резюме

Ключевые слова: туризм, Сюникская область, туристическая достопримечательность, туристический визит

В исследовательской работе рассматривается роль и значение туризма в социально-экономическом развитии страны и интеграции в мировую экономику. Сюникская область представлена как одно из лучших туристических направлений. Изучены туристический потенциал и возможности развития туризма в Сюникской области. Были выделены существующие проблемы, препятствующие развитию туризма в регионе, и предложены пути и механизмы их решения, что будет способствовать превращению Сюника в туристический центр и развитию экономики региона во всех аспектах.

TOURISM DEVELOPMENT OPPORTUNITIES IN SYUNIK REGION

Aleksanyan Nazeli

Goris State University,

"Economics", 3rd Year

Academic Supervisor: S. Petrosyan,

Candidate of Economic Sciences

Summary

Key words: tourism, Syunik region, tourist attraction, tourist visit

The research work presents the role and significance of tourism in the socio-economic development of the country and its integration into the global economy. Syunik region is presented as one of the best tourist destinations. The tourism potential of Syunik region and the opportunities for tourism development have been studied. The existing problems, hindering the development of tourism in the region, have been identified, the ways and mechanisms for their solution have been proposed. The above-mentioned initiatives will contribute to the development of Syunik as a tourist center and will foster the overall economic growth of the region.

ԳՆԱԳՈՑԱՅՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՀՀ ԿԱԹՒ ՇՈՒԿԱՅՈՒՄ

Ավդոյան Իննա

«ՎՊՀ» հիմնադրամ,

«Կառավարում», 2-րդ կուրս

Գիտական ղեկավար՝ տ. գ. թ., դոցենտ Հ. Պապոյան

Հանգուցային բառեր. *գնագոյացում, համաշխարհային տենդենցներ, կաթի շուկա, ազդող գործոններ, կաթնամթերք*

Գինը և գնագոյացումը շուկայական տնտեսության առանցքային տարրերն են: Գները սպասարկում են ապրանքների ձեռքբերման և իրացման ողջ շրջանառությունը: Գինն ապրանքը բնութագրող ցուցանիշ է, որ հավասարապես հաշվի է առնում ապրանքափոխանակության գործընթացի բոլոր մասնակիցների՝ արտադրողների և սպառողների շահերը [1, 8]:

Արտադրանքի վերջնական գնի վրա ազդում են բազմաթիվ գործոններ: Այդ գործոնները հասկանալու համար պահանջվում է, որ մարքեթաբանները հետազոտեն, թե ինչ է տեղի ունենում ընկերության կողմից սպասարկվող յուրաքանչյուր շուկայում, քանի որ այդ գործոնների ազդեցությունը կարող է շատ տարբերվել շուկայից շուկա [1, 36]:

Հոդվածի **նպատակն** է վերլուծել վերջին տարիների համաշխարհային կաթի շուկայի դինամիկան, համադրելով այն Հայաստանում տեղի ունեցող փոփոխությունների հետ, ուսումնասիրել կաթնամթերքի ոլորտի զարգացման հիմնական միտումներն ու կանխատեսումները, բացահայտել կաթնամթերքի գների և պահանջարկի վրա ազդող գործոնները:

Հոդվածի **խնդիրներն** են հետազոտել արտադրության և սպառման վերաբերյալ վիճակագրական տվյալները: Վերլուծել կարգավորող միջոցները և դրանց ազդեցությունը կաթի շուկայի վրա: Պարզել սպառողների նախասիրությունները կաթնամթերքի իրացման ոլորտում:

Թեմայի արդիականությունը այն է, որ կաթը միլիոնավոր մարդկանց սննդակարգի մի մասն է կազմում, և դրա պահանջարկն աճում է, քանի որ բնակչության թիվը և նախասիրությունները փոխվում են: Կաթնամթերքի ոլորտը կարևոր նշանակություն ունի գյուղատնտեսության համար, քանի որ ազդում է ՀՆԱ-ի և գյուղական շրջանում զբաղվածության վրա: Տեխնոլոգիաները և նոր մտեցումները ձևավորում են շուկայի սպազան:

Շուկայական հարաբերությունների հակասություններն ու յուրահատկությունները ազդել են գյուղատնտեսության բոլոր ոլորտների վրա, այդ թվում՝ կաթնամթերքի: Կաթի շուկայի գնագոյացումը բազմաբարդ գործընթաց է, որը կախված է բազմաթիվ գործոններից: Վերջին տարիներին համաշխարհային և տեղական շուկաներում տեղի ունեցած փոփոխությունները էականորեն ազդել են կաթի և կաթնամթերքի գների վրա: Այսինքն՝ համաշխարհային տնտեսական միտում-

ները, պետական քաղաքականությունը, եղանակային պայմանները, արտադրական ծավալները, պահանջարկը, սպառումը շարունակում են փոփոխվել տարբեր միջավայրերում և ազդել կաթի շուկայի վրա:

Կաթի արտադրության և սպառման գործընթացները տարբեր երկրներում ունեն իրենց առանձնահատկությունները, սակայն ընդհանուր առմամբ այն ենթարկվում է համաշխարհային և տեղական շուկաների ազդեցությանը:

Կաթի գները ձևավորվում են որոշակի գործոնների ազդեցության ներքո, որոնք մեր կողմից դասակարգել և խմբավորվել են հետևյալ ձևով.

1. Տնտեսական գործոններ. այս գործոնների շարքին է դասվում գնաճը: Անասունների կերերի, էներգիակիրների գները, վառելիքի արժեքը, աշխատուժի ծախսերը, արտադրության այլ բաղադրիչների գների աճը հանգեցնում է կաթի ինքնարժեքի բարձրացմանը: Հաջորդը փոխարժեքի տատանումներն են, որոնք հատկապես կարևոր են այն երկրների համար, որոնք ներկրում են անասնակեր, սարքավորումներ կամ վերամշակված արտադրանք: Նույնպես կարևոր գործոն են պետական սուբսիդիաները, այսինքն կաթնամթերքի ոլորտին աջակցությունը կարող է նվազեցնել արտադրության ծախսերը:

2. Սեզոնային և կլիմայական գործոններ. Այս գործոնների շարքից կարևոր է առանձնացնել եղանակային պայմանները: Երաշտները, ցրտահարությունը, հորդառատ անձրևները կարող են նվազեցնել կերային մշակաբույսերի բերքատվությունը, ինչի հետևանքով բարձրանում է կերի արժեքը, որն էլ իր հերթին հանգեցնում է կաթի գների աճին: Հաջորդ կարևոր գործոնը արտադրության սեզոնայնությունն է: Ամռանը կովերը թարմ կերի շնորհիվ ավելի շատ կաթ են տալիս, ինչն էլ հանգեցնում է ցածր գների: Ձմռան ամիսներին կաթնատվությունը նվազում է, ինչն էլ հանդիսանում է բարձր գների պատճառը:

3. Արտադրության գործոններ. կաթի արտադրության ծավալներն անմիջականորեն կապված են գյուղատնտեսական տեխնոլոգիաների զարգացման և գյուղացիների աշխատանքային պայմանների հետ: Ֆերմերային տնտեսությունների ազդեցությունն արտադրման գործընթացի վրա կարևոր դեր ունի մատակարարման հարցում: Կարևոր է նաև հաշվի առնել կենդանիների հիվանդությունները: Համաճարակները, ինչպիսին են յաշուրը կամ լեյկոզը, կարող են նվազեցնել կաթնատու կովերի քանակը: Ժամանակակից տեխնոլոգիաները, ավտոմատացումը, ցեղատեսակի ճիշտ ընտրությունը կարող են նվազեցնել կաթի ինքնարժեքը:


4. Շուկայական գործոններ. այս գործոնների շարքում առանձնացնում ենք առաջարկը և պահանջարկը: Եթե, օրինակ, կաթնամթերքի նկատմամբ պահանջարկը մեծանում է, գները կարող են աճել՝ կախված առաջարկից:

5. Պետական կարգավորումներ. որոշ երկրներում կառավարությունները խթանում են կաթի արտադրությունը՝ առաջարկելով սուբսիդիաներ կամ հարկային արտոնություններ, ինչը կարող է ազդեցություն ունենալ գնագոյացման վրա:

6. Առևտրի համաձայնագրեր և գլոբալ շուկաներ. կաթի և կաթնամթերքի արտաքին առևտրի պայմանները ևս ազդում են գների վրա: Այս գործոնների մեջ կարող ենք ներառել արտահանումը և ներմուծումը, կաթի և դրա փոխարինիչների միջազգային գները, փոխադրման լոգիստիկ ծախսերը և այլն:

Միջազգային բորսաներում կաթի կշիռը որոշելու համար (նկատի ունենանք, որ բորսաներում կաթը վաճառվում է քաշային միավորներով), օգտագործվում է այնպիսի անսովոր քաշի միավոր, ինչպիսին է ձեռքի քաշը: Ամերիկյան Handweight (նաև կոչվում է Short Handweight կամ American Hwt) ավանդաբար օգտագործվում է գյուղատնտեսական արդյունաբերության մեջ քաշը չափելու համար: Այն ճիշտ հավասար է 100 առևտրային ֆունտի, որը կազմում է 45, 359237 կիլոգրամ, և նշվում է CWT հապավումով (որում «WT»-ն անգլերեն քաշի հապավումն է, իսկ «C»-ն հռոմեական թիվն է 100 թվի համար) [3]:

2022-2025 թթ. կաթի համաշխարհային բորսայական գների դինամիկան պատկերված է ստորև բերված գրաֆիկով [3].



Նկար 1. Կաթի համաշխարհային բորսայական գների դինամիկան


2022 թվականին հումքի կաթի գները նախորդ տարվա համեմատ 18-22 %-ով բարձր են մնացել: Դա պայմանավորված էր արտադրության ծավալների ավելացմամբ և կաթնամթերքի հիմնական կատեգորիաների ներմուծման փոփոխություններով [7]:

2023 թվականի հունվարին հում կաթի գինը համաշխարհային շուկայում, ըստ IFCN-ի, 100 կգ-ի համար կազմում էր 42 դոլար: Արտադրության գծով առաջատար դիրքերը զբաղեցրել են Եվրամիությունը (143 մլն տոննա), ԱՄՆ-ն (104 մլն տոննա) և Հնդկաստանը (99 մլն տոննա) [8]:

2024 թվականի հոկտեմբերին կաթի մթերման համաշխարհային գները կտրուկ բարձրացան: Եթե հունվարից հոկտեմբեր դրանք կազմել են 0, 39 եվրո մեկ լիտրի դիմաց, ապա դեկտեմբերին հասել են 0, 50 եվրոյի մեկ լիտրի համար [9]:

2025 թվականի հունվարին ՊԳԿ-ի կաթնամթերքի գների ինդեքսը կազմել է

142, 9, ինչը 2, 4 տոկոսով բարձր է 2024 թվականի դեկտեմբերի ցուցանիշից: 2025 թվականի փետրվարի 28-ի դրությամբ կաթի համաշխարհային գները կազմել են 0, 446 ԱՄՆ դոլար մեկ կիլոգրամի դիմաց [10]:



Նկար 2. 2024-2025 համաշխարհային շուկայում կաթի գների դինամիկան [3]:

Ստորև ներկայացված են կաթի գները որոշ երկրներում [2].

Աղյուսակ 1.

Կաթի գները որոշ երկրներում

Երկիր	Գին (USD)
Հոնկոնգ	3, 46
Մակաո	2, 90
Կոտ դ'իվուար	2, 89
Սինգապուր	2, 62
Կանադա	2, 55
Նորվեգիա	2, 12
Շվեդիա	2, 12
Գերմանիա	2, 10
Ռուսաստան	1, 85
Արգենտինա	0, 81
Պակիստան	0, 77
Հնդկաստան	0, 70
Բելառուս	0, 66
Իրան	0, 64
Թունիս	0, 43

Այս տվյալները ցույց են տալիս, որ կաթի արժեքը կախված է բազմաթիվ գործոններից, այդ թվում՝ տեղական տնտեսական պայմաններից, արտադրության ծախսերից և կառավարության գյուղատնտեսական քաղաքականությունից:

Հայաստանում կաթի մթերման շուկայում չկան գերիշխող դիրք ունեցող ընկերություններ: Այս ապրանքային շուկայում գործունեություն է իրականացնում մոտ 250 տնտեսավարող սուբյեկտ [5]:

Այնուամենայնիվ կաթնամթերք արտադրողները մեծ հնարավորություն ունեն միակողմանիորեն ազդելու շուկայում մրցակցության հիմնական գործոն հանդիսացող կաթի մթերման գների վրա՝ հաշվի առնելով, որ կաթը հանդիսանում է շուտ փչացող ապրանք, և գյուղացիական տնտեսությունները շուկայում չեն կարող միասնական ուժ ներկայացնել և ունենալ հում կաթի իրացման գնի շուրջ բանակցելու կարողություն [5]:


Բացի այդ, գյուղացիական տնտեսությունները մասնագիտացված չեն հում կաթի արտադրության մեջ, չեն բավարարում կաթնամթերքի արտադրությամբ զբաղվող տնտեսավարող սուբյեկտների համար անհրաժեշտ որակական չափանիշները, մասնավորապես՝ սահմանված թթվայնության, յուղայնության մակարդակը և պաթոգեն մանրէների ցուցանիշը: Կաթ արտադրողները հում կաթի շուկայում չեն մրցակցում՝ ըստ որակի [5]:

Որոշ ընկերություններում մթերման գները նույնն են տարվա ընթացքում, իսկ մյուս ընկերություններում փոխվում են՝ կախված սեզոնայնությունից. ամռան ամիսներին հում կաթն ավելի էժան է, քան ձմռանը [5]:

- Արտոսային շրջան (ամառ)՝ 1 լիտրի գինը 120-140 դրամ է:
- Ձմեռային շրջան. գներն աճել են մինչև 140-160 դրամ մեկ լիտրի համար:


Գյուղացիական տնտեսությունների և հում կաթ ձեռք բերողների միջև կնքած պայմանագրերում սահմանվում է 3.6 % յուղայնություն ունեցող կաթի բազիսային գին, սակայն բազիսային գնի հաշվարկման որևէ մեխանիզմ չի նշվում: Բազիսային գինը կաթ արտադրողին հայտնի է դառնում միայն տվյալ ամսվա սկզբին կամ նախորդող ամսվա վերջում: Գյուղացիական տնտեսությունների և ֆերմերների համար առկա է անորոշություն բիզնեսի կառավարման և մրցակցության տեսանկյունից [5]:

Մթերվող կաթի գինը, ըստ վիճակագրական կոմիտեի, վերջին 5 տարում տատանվել է 140-220 դրամի սահմաններում: Սրանք միջինացված տվյալներ են, և ներառում են բոլոր մարզերի մեծ ու փոքր տնտեսությունների վաճառած կաթը: Հիմա գները համեմատաբար ցածր են [4]:




Նկար 3. Կաթի 1 լիտրի իրացման միջին գինը 2020-2024 թթ.

Դրա վրա էապես ազդում են կաթի փոշու ներկրումները: Վերջին 5 տարում Հայաստան է ներկրվել 100 միլիոն դոլարի կաթի փոշի: Ընդ որում՝ այն ամիսներին, երբ Հայաստանում կաթի գինը բարձր է եղել, դրսից ավելի շատ են կաթի փոշի բերել: Եղել են ամիսներ, որ 3-4 միլիոն դոլարի կաթի փոշի է եկել Հայաստան [4]:



Գրաֆիկ 1. Կաթի փոշու ներկրումը 2020-2024 թթ.



Պրաֆիկ 2. Կաթի մթերման ծավալը 2021-2024 թթ.

Մեր հետազոտությունների արդյունքում պարզվեց, որ կաթի մթերումները տարեցտարի նվազում են [6].

- 2021 թվականին կաթի մթերումը նվազել է մինչև 670 հազար տոննա:
- 2022 թվականին մթերվել է 623 հազար տոննա կաթ, որը վերջին 5 տարիների ամենացածր ցուցանիշն է:
- 2023 թվականին մթերման ծավալը կազմել է 590 հազար տոննա:
- 2024 թվականին կաթի մթերումը նվազել է մինչև 575 հազար տոննա:

Մթերման ծավալի նվազումը, ըստ մի շարք ուսումնասիրությունների, կապված է կաթի մթերման գների նվազեցման հետ: Մթերման գները հիմնականում իջեցնում են գարնան վերջին, երբ անասունն արոտ է դուրս գալիս: Դրա հետևանքով ֆերմերները շահույթ չեն ստանում:

Այստեղ հարց է առաջանում, թե ինչպես է ազգաբնակչությունը բավարարում իր պահանջումները, թե նվազում է և ներմուծումը, և տեղական արտադրությունը:

Ըստ կատարված հետազոտությունների, մենք պարզեցինք, որ ազգաբնակչությունը, կրճատելով կաթի սպառումը, փոխարինում է այն բուսական ծագում ունեցող կաթով, այլ կալցիում պարունակող մթերքներով:

Աղյուսակ 2.

Հայկական արտադրության ապրանքանիշների կաթի գները

<i>Բրենդի անվանումը</i>	<i>Ծավալը (լ)</i>	<i>Գինը (դրամ)</i>
Yeremyan products	750	950
Դիլի	750	940
MARIANNA	1000	500
TAMARA	1000	530
Աշտարակ կաթ	1000	500
Kateni	750	900

Կատարված հետազոտությունների արդյունքում պարզեցինք, որ մանրածախ առևտրում պատկերն այսպիսին է: Խանութներում կաթի գները տատանվում են, կախված ապրանքանիշից, յուղայնությունից և ծավալից: Այսինքն՝ սպառողները ավելի շատ նախընտրում են իրացնել այս ապրանքանիշների արտադրանքը: Ներկայացնենք տարբեր հայկական արտադրության ապրանքանիշների կաթի գները:

Մանրածախ առևտրում կաթի մեկ լիտրի միջին գինը 500 դրամ է, իսկ կաթը միջնորդներին վաճառում են միջինում 170 դրամով: Հարց է առաջանում, թե ինչու գնաճը չի ազդում մթերվող կաթի գնի վրա:

Մանրածախ առևտրային կետերում կաթի գնի և մթերման գնի էական տարբերությունները պայմանավորված են մի շարք գործոններով, որոնցից ամենամեծ ազդեցությունն ունեն հետևյալները.

- Մատակարարման և լոգիստիկ ծախսերը,
- Վերամշակման հետ կապված վերադիր ծախսերը,
- Լրացուցիչ օղակներում գեներացվող շահույթը,
- ԱԱՀ և այլ հարկեր:

Այս բոլոր գործոնների ազդեցության պատճառով մանրածախ առևտրում գները էապես տարբերվում են մեծածախ առևտրից:

Եզրակացություն

Կաթի շուկան դինամիկ և բազմաբնույթ ոլորտ է, որի կարևորությունը պետք չէ թերագնահատել: Հողվածը ցույց է տալիս, որ կաթի գնագոյացման վրա ազդում են բազմաթիվ գործոններ՝ ներառյալ տնտեսական, սեզոնային, արտադրական, շուկայական, պետական կարգավորումները և միջազգային առևտրային հարաբերությունները: Բնակչության աճի և սպառողների նախասիրությունների փոփոխության հետ մեկտեղ կաթնամթերքի նկատմամբ պահանջարկը շարունակում է աճել:

Հայաստանում կաթի շուկան առանձնանում է որոշակի խնդիրներով, ինչպիսիք են՝

- Մթերման գների անկայունությունը և գյուղացիական տնտեսությունների թույլ բանակցային դիրքը:
- Կաթի որակի տարբերությունները, որոնք ազդում են արտադրության արդյունավետության վրա:
- Կաթի փոշու մեծածավալ ներմուծումը, որը նվազեցնում է տեղական արտադրողների մրցունակությունը:
- Մեզոնային գործոնների ազդեցությունը մթերման գների վրա, երբ ամռանը գները նվազում են, իսկ ձմռանը՝ բարձրանում:

Արտաքին շուկաներում կաթի գների փոփոխություններն անմիջականորեն անդրադառնում են նաև Հայաստանի շուկայի վրա: Վերջին տարիներին համաշխարհային բորսայական գների տատանումները և միջազգային մրցակցային ճնշումը էական ազդեցություն են ունեցել կաթնամթերքի գների վրա:

Հետազոտության արդյունքում պարզվել է, որ Հայաստանի կաթնամթերքի շուկայի զարգացման համար անհրաժեշտ է ներդնել նոր տեխնոլոգիաներ, բարելավել լոգիստիկան, խթանել տեղական արտադրությունը պետական աջակցության միջոցով և զարգացնել ֆերմերային տնտեսությունները՝ բարձր որակի արտադրանք ապահովելու համար:

Ընդհանուր առմամբ կաթի շուկայի կայուն զարգացման համար պահանջվում են ինչպես կառավարչական, այնպես էլ ռազմավարական լուծումներ ուղղված արտադրության արդյունավետության բարձրացմանը, մրցակցության արդարացմանը և ֆերմերների եկամուտների կայունացմանը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Վարդանյան Գ., Գինը մարքեթինգային համալիրում: Ուսումնական ձեռնարկ: Մասն. խմբ.՝ Ա. Ե. Զաքարյան, Երևան, Տոտեսագետ, 2011, 178 էջ:
<https://search.app/DDprqArpVtYZYyeU6> (հասանելի է 23.03.2025)
2. <https://search.app/o7BF3BCaEKS6BcTBA> (հասանելի է 28.02.2025)
3. <https://search.app/g7BFx1KS39KmasLZ7> (հասանելի է 20.03.2025)
4. <https://a1plus.am/hy/article/482370> (հասանելի է 08.03.2025)
5. <https://www.panorama.am/am/news> (հասանելի է 20.03.2025)
6. <https://dairynews.today/kz/news/v-armenii-v-2024-godu-proizvodstvo-moloka-sokratilos-do-575-tysyach-tonn.html?utm> (հասանելի է 03.03.2025):
7. <https://ikar.ru/1/lenta/755/?utm> (հասանելի է 03.03.2025):
8. <https://world-food.ru/ru/media/news/2024/june/17/rynok-molochnoy-produkcii/?utm> (հասանելի է 03.03.2025):
9. <https://rus.lsm.lv/statja/novosti/obschestvo/08.12.2024-ceny-na-molocnuyu-produkciyu-prodolzat-rasti.a579289/?utm> (հասանելի է 05.03.2025)
10. <https://index.minfin.com.ua/markets/commodities/milk/?utm> (հասանելի է 06.03.2025):

ОСОБЕННОСТИ ЦЕНООБРАЗОВАНИЯ НА МОЛОЧНОМ РЫНКЕ РА

Авдоян Инна

Фонд “ВГУ”,

“Управление”, 2-й курс

Научный руководитель:

кандидат экономических наук, доцент Г. Папоян

Резюме

Ключевые слова: *ценообразование, мировые тенденции, рынок молока, влияющие факторы, молочные продукты*

В статье рассматриваются особенности ценообразования на рынке молока РА, сравнивая их с тенденциями мирового рынка. Представлены основные факторы, влияющие на цены молока, включая экономические, сезонные, производственные, рыночные, государственные тенденции и международные торговые отношения. Результаты исследования показывают, что рынок молока в Армении сталкивается с рядом проблем, таких как волатильность закупочных цен, слабозразвитые отношения фермеров, влияние импорта сухого молока и сезонные колебания.

FEATURES OF PRICING IN THE MILK MARKET OF THE REPUBLIC OF ARMENIA

Avdoyan Inna

“VSU” Foundation,

“Management”, 2nd Year

Academic Supervisor: H. Papoyan,

Candidate of Economic Sciences, Associate Professor

Summary

Key words: *pricing, global trends, milk market, influencing factors, dairy products*

The article examines the pricing characteristics of the dairy market in Armenia, comparing them with global market trends. It presents the key factors influencing milk prices, including economic, seasonal, production, market-related, governmental regulations, and international trade relations. The research findings indicate that Armenia’s dairy market faces several challenges, such as unstable procurement prices, weak bargaining power of agricultural households, the impact of imported milk powder, and seasonal fluctuations.

**ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ ԵՎ
ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆ**

Բալայան Արամ

*«ՎՊՀ» հիմնադրամ,
«Հանրային կառավարում»,
մագիստրատուրա, 1-ին կուրս
Գիտական դեկավար՝ տ. գ. թ., դոցենտ Լ. Ավդալյան*

***Հանգուցային բառեր.** մարդկային ռեսուրսների կառավարում (ՄՌԿ), հանրային կառավարման համակարգ, կադրերի կառավարման մեխանիզմներ, աշխատանքի արդյունավետության գնահատում, ՄՌԿ բարեփոխման ռազմավարություններ, ՄՌԿ բարեփոխումներ, թվայնացում և կառավարման արդիականացում*

Ժամանակակից հասարակություններում մարդկային ռեսուրսների կառավարումը (ՄՌԿ) դարձել է ռազմավարական նշանակության գործոն, որն ուղղակիորեն ազդում է պետական կառավարման արդյունավետության վրա: Պետական կառավարման համակարգի հիմնական նպատակներից է բարձրակարգ մարդկային ռեսուրսների ձևավորումն ու արդյունավետ կառավարումը, ինչը հնարավորություն է տալիս ոչ միայն բարելավել հանրային ծառայությունների որակը, այլև ապահովել պետական մարմինների կայուն զարգացումը:

Հայաստանի Հանրապետությունում ՄՌԿ-ի ոլորտում վերջին տարիներին իրականացվող բարեփոխումները միտված են պետական կառավարման արդյունավետության բարձրացմանը, սակայն համակարգում դեռ առկա են բազմաթիվ մարտահրավերներ: Մարդկային ռեսուրսների կառավարման բարեփոխումները ոչ միայն անհրաժեշտություն են, այլև ժամանակի հրամայական՝ ապահովելու համար թափանցիկություն, մասնագիտական զարգացում և արդյունավետ կառավարման մեխանիզմների ներդրում:

Մարդկային ռեսուրսների կառավարման մեխանիզմների տեսական հիմքերը

ՄՌԿ-ն հանրային կառավարման համակարգում ներառում է մի շարք գործառնություններ: «Մարդկային ռեսուրսների կառավարում» հասկացությունը համեմատաբար նոր է և սկսեց գործածվել իր ժամանակակից իմաստով հիմնականում 1980-ական թվականներից: Մինչ այդ գոյություն ունեին մարդկային ռեսուրսների կառավարման տարբեր մոտեցումներ, որոնք սահմանում էին կազմակերպություններում աշխատուժի ներգրավման, զարգացման և արդյունավետ օգտագործման սկզբունքները [1]:

Մարդկային ռեսուրսների կառավարման (ՄՌԿ) ժամանակակից հայեցակարգի հիմքը ձևավորվել է արդյունաբերական հեղափոխության ընթացքում՝ որպես «Կադրերի կառավարում» մոտեցման շարունակական զարգացման և կատարելագործման արդյունք:

Կադրերի կառավարման սկզբնական հայեցակարգի համաձայն՝ աշխատակիցները պարտավոր էին կատարել իրենց աշխատանքը՝ ստանալով դրա դիմաց համապատասխան վարձատրություն: Այս մոդելում աշխատակիցների մասնակցությունը որոշումների ընդունման գործընթացում գրեթե բացակայում էր, իսկ նրանց և ղեկավարության միջև շփումը սահմանափակ էր: Կադրերի ղեկավարի հիմնական դերն էր սպասեցնել աշխատանքային բոլոր գործընթացների համապատասխանությունը օրենսդրությանը, իսկ աշխատակիցները հիմնականում դիտվում էին որպես ծախսային ռեսուրս, այլ ոչ թե ներդրում և արժեքավոր ակտիվ:

Կադրային կառավարման մասնագետների գործառույթները կենտրոնացած էին կարգապահական վերահսկողության վրա, իսկ աշխատողների հետ ճկուն և ինտերակտիվ հարաբերությունների ձևավորումը այդքան էլ առաջնահերթություն չէր:

ՄՌԿ-ի հիմնախնդիրները և մարտահրավերները ՀՀ պետական կառավարման համակարգում

Հայաստանում ՄՌԿ համակարգը գործում է «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի շրջանակներում, որը սահմանում է պետական պաշտոնների և քաղաքացիական ծառայության հիմնական չափանիշները: Հայաստանի պետական կառավարման համակարգում մարդկային ռեսուրսների կառավարման հիմնական առանձնահատկությունները ներառում են՝

- Կենտրոնացված կառավարման համակարգ՝ բյուրոկրատական մեխանիզմներով,
- Վերապատրաստման սահմանափակ հնարավորություններ՝ կարիերայի զարգացման խոչընդոտներով,
- Աշխատավարձերի անհամաչափ համակարգ՝ մասնավոր հատվածի համեմատ ցածր վարձատրությամբ,
- Թվայնացման դանդաղ ընթացք՝ պետական կառավարման թվային գործիքների անբավարար կիրառում,
- Կադրերի հավաքագրման թափանցիկության պակաս՝ մրցակցային ընտրության ոչ լիարժեք կիրառմամբ,
- Աշխատանքի կատարողականի գնահատման անարդյունավետ համակարգ,
- Աշխատակիցների մոտիվացիոն մեխանիզմների բացակայություն [2]:

Այս խնդիրները խոչընդոտում են պետական կառավարման համակարգի արդյունավետության բարձրացմանը և պահանջում են խորքային բարեփոխումներ: Մասնավորապես, թվայնացման դանդաղ գործընթացը խոչընդոտում է կառավարման արդիականացմանն ու արդյունավետությանը, ինչը պահանջում է խելացի կառավարման համակարգերի ներդրում:

ՄՌԿ բարեփոխումների անհրաժեշտություն և հնարավոր ուղղություններ

Մասնավոր հատվածում յուրաքանչյուր ընկերություն կարող է մշակել և կիրառել կադրային քաղաքականություն, որը համապատասխանում է օրենսդրությանը՝ ունենալով որոշակի ազատություն աշխատողների կառավարման մե-

թողների ընտրության հարցում: Սակայն պետական մարմիններում այդ ազատությունն ավելի սահմանափակ է, այստեղ գործում են խիստ օրենքներ, կանոնակարգեր և կանոններ, որոնք ավելի շատ նպատակ ունեն ապահովել միասնական և ստանդարտացված մոտեցում, քան կառավարման ճկունություն:

Ավանդաբար, կադրերի բաժնի դերը պետական կառավարման համակարգում սահմանափակվել է երկու հիմնական գործառնություն՝

1. Վարչական գործընթացների իրականացում, որը ներառում է աշխատակիցների փաստաթղթավորման, կենսաթոշակի անցնելու և այլ սոցիալական արտոնությունների հետ կապված հարցերը,

2. Օրենսդրության և կանոնակարգերի պահպանման ապահովում, ինչը ենթադրում է համապատասխանություն գործող օրենքներին և կարգավորող դրույթներին:

Կադրային կառավարման համակարգը հիմնականում կենտրոնացած էր կանոնների պահպանման վրա՝ առանց նորարարական մոտեցումների և մարդկային ռեսուրսների կառավարման մեխանիզմների ներդրման: Արդյունքում ձևավորվել է կարծր կառավարման համակարգ, որը չէր դիտարկում ՄՌԿ բարեփոխումների անհրաժեշտությունը և չուներ դրանց իրականացման նպատակադրումը [3]:

Այս մարտահրավերը բնորոշ է ոչ միայն Հայաստանի Հանրապետությանը, այլև գրեթե բոլոր վարչական համակարգերին աշխարհում: Երբ պետական կառույցները փորձում են բարեփոխումներ իրականացնել՝ ուղղված ՄՌԿ-ի հումանիզացմանը, կառավարման համակարգի ճկունության բարձրացմանը և արդյունավետության ապահովմանը, արդյունքները հաճախ չեն համապատասխանում ակնկալիքներին:

Հենց այդ պատճառով շատ երկրներում մշակվում են մարդկային ռեսուրսների կառավարման բարեփոխումների հատուկ ռազմավարություններ, որոնք նպատակ ունեն ոչ միայն բարձրացնել պետական կառավարման մարմինների արդյունավետությունը, այլև ստեղծել ժամանակակից, ճկուն և գործունակ պետական ծառայություն:

Այս համատեքստում առանձնահատուկ կարևորություն ունի Ազգային ապակենտրոնացման ռազմավարությունը (ԱԱՌ), որի հիմնական նպատակն է՝

- հանրային ծառայությունների մատուցման որակի բարձրացում՝ նվազագույն ծախսերով,
- պետական կառույցների արդիականացում,
- ավելի արդյունավետ կառավարման համակարգի ձևավորում, որը կենտրոնացած է հասարակության կարիքներին համապատասխանող քաղաքականության մշակման վրա [4]:

Այսպիսով, ապակենտրոնացման ջանքերը ոչ միայն նպաստում են հանրային ծառայությունների մատուցման բարելավմանը, այլև հնարավորություն են տալիս կառավարման մեխանիզմները դարձնել ավելի հարմարեցված, ճկուն և արդյունավետ՝ նվազեցնելով բյուրոկրատական խոչընդոտները և խթանելով մարդկային ռեսուրսների կառավարման արդիականացումը:

Նորարարական մեխանիզմների ներդրման հնարավորությունները

Տարբեր ժամանակաշրջաններում և հասարակական կառուցվածքներում մարդու որպես աշխատանք իրականացնող սուբյեկտի նկատմամբ ձևավորվել են տարբեր մոտեցումներ: Սկզբնապես աշխատողը դիտարկվել է որպես ապրանք, այնուհետև՝ որպես աշխատուժ, իսկ հետագայում՝ որպես ռեսուրս: Եթե նախկինում աշխատակիցը ընկալվում էր գուտ որպես կազմակերպության նպատակներն իրագործելու միջոց, ապա ժամանակակից մոտեցումները նրան դասում են որպես կազմակերպության ամենակարևոր ռեսուրս, առանց որի անհնար է արդյունավետ գործունեության ապահովումը [5]:

Այս համատեքստում հետաքրքիր է հասկանալ, թե Հայաստանում մարդկային ռեսուրսների կառավարման (ՄՌԿ) համակարգն այսօր զարգացման որ փուլում է գտնվում, և ինչ քայլեր են ձեռնարկվում դրա կատարելագործման ուղղությամբ: Այս հարցի ուսումնասիրությունը պահանջում է դիտարկել իրավիճակը թե՛ մասնավոր, թե՛ հանրային հատվածներում: Ուսումնասիրությունների արդյունքները վկայում են, որ ՄՌԿ-ի ժամանակակից մոտեցումները Հայաստանում առավելապես կիրառվում են մասնավոր հատվածում, այն էլ՝ հիմնականում միջազգային ֆինանսական կազմակերպություններում, հատկապես բանկային համակարգում և տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում:

Այս կազմակերպություններում, որպես կանոն, առկա են ՄՌԿ առանձին բաժիններ, որոնք զբաղվում են մարդկային ռեսուրսների կառավարման տարբեր գործառնություններով, այդ թվում՝

- աշխատակիցների հավաքագրում և տաղանդների ներգրավում,
- վարչական գործընթացների կազմակերպում,
- դասընթացների և վերապատրաստման ծրագրերի իրականացում,
- Կորպորատիվ մշակույթի ձևավորում,
- աշխատակիցների մոտիվացիայի և զարգացման ապահովում [6]:

Հետևաբար, մասնավոր հատվածում ձևավորվել է համեմատաբար զարգացած և ժամանակակից ՄՌԿ համակարգ: Սակայն պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում իրավիճակը զգալիորեն տարբերվում է. այս կառույցներում դեռևս գերիշխում է կադրային կառավարման հին մոտեցումը:

Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում ՄՌԿ-ի հիմնական օրենսդրական հիմքը «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքն է, որն ընդգրկում է պետական, համայնքային ծառայությունը և հանրային պաշտոնները: Այս համակարգի շրջանակներում մարդկային ռեսուրսների կառավարման գործընթացները մեծամասամբ շարունակում են գործարկվել ավանդական, կադրային աշխատանքի շրջանակներում, և առկա են մի շարք արգելակող գործոններ, որոնք խոչընդոտում են ՄՌԿ-ի ամբողջական ներդրումը:

Հայաստանի Հանրապետության կայուն և անվտանգ զարգացումը պայմանավորված է կառավարման համակարգի արդյունավետության բարձրացմամբ: Այս իրողությունը հաշվի առնելով՝ ՀՀ կառավարությունը նախաձեռնել է համապարփակ բարեփոխումներ, որոնք ուղղված են պետական կառավարման համակարգի արդիականացմանը, քաղաքական ինստիտուտների կայացմանը, կայու-

նույնպես անհավանական, ժողովրդավարական արժեքների ամրապնդմանը, ինչպես նաև քաղաքացու իրավունքների ու ազատությունների պաշտպանությանը և քաղաքացիական հասարակության զարգացմանը:

Կառավարման էֆեկտիվության բարձրացման ռազմավարություններ

ՀՀ ազգային անվտանգության ռազմավարությունից բխող արդյունավետ պետական և տեղական ինքնակառավարման համակարգերի ձևավորումը համարվում է կառավարության առաջնահերթություններից մեկը: Այս ուղղությամբ իրականացվող բարեփոխումները միտված են կառավարման գործընթացների կատարելագործմանը, պետական կառույցների գործունակության բարձրացմանը և դրանց հասարակության պահանջներին առավել համահունչ դարձնելուն [7]:

Պետական կառավարման համակարգի բարեփոխումների արդյունքում նախատեսվում է ստեղծել բարձրակարգ հանրային ծառայությունների մատուցման մշակույթ, որը թույլ կտա՝

- վերացնել հասարակության հոռետեսական վերաբերմունքը երկրի ապագայի նկատմամբ,
- խթանել քաղաքացիների ներգրավվածությունը որոշումների կայացման գործընթացներում,
- ձևավորել ապագայի զարգացման միասնական տեսլական և ամրապնդել հանրային վստահությունը պետական կառույցների նկատմամբ:

Քանի որ արդյունավետ և ճկուն կառավարման համակարգի ձևավորումը պահանջում է պետական կառավարման ինստիտուտների հետևողական բարեփոխում, Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և էկոնոմիկայի նախարարության 2008-2010 թթ. ռազմավարությունը հստակ արտացոլել է այս գործընթացների նկատմամբ կառավարության հանձնառությունը: Այս ռազմավարական ծրագրի շրջանակներում նախատեսվել են ինստիտուցիոնալ բարեփոխումներ, որոնք ուղղված են կառավարման համակարգի օպտիմալացմանը, հանրային ծառայությունների որակի բարձրացմանը և կառավարման արդյունավետության ամրապնդմանը [8]:

Այսպիսով, Հայաստանի Հանրապետության կառավարությունը հետևողականորեն շարունակում է բարեփոխումների իրականացումը՝ ստեղծելով արդյունավետ, հաշվետու և քաղաքացիակենտրոն պետական կառավարման համակարգ, որն ունակ է արձագանքել ժամանակակից մարտահրավերներին և ապահովել երկրի կայուն ու ներառական զարգացումը:

Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում ՄՌԿ-ի գործառույթները հիմնականում իրականացվում են մեկ միասնական բաժնի կամ վարչության կողմից, որի հիմնական գործառույթները մեծ մասամբ սահմանափակվում են կադրային գործընթացներով: Այս իրավիճակը խոչընդոտում է պետական կառավարման համակարգում մարդկային ռեսուրսների կառավարման ժամանակակից մոտեցումների ներդրմանը, քանի որ աշխատանքի կառավարման ռազմավարությունը հիմնականում կենտրոնացած է ձևական գործընթացների վրա՝ առանց բավարար ուշադրություն դարձնելու աշխատակիցների զարգացմանը, մոտիվացիային և արդյունավետության բարձրացման մեխանիզմներին [9]:

Կարող ենք եզրահանգել, որ հայաստանյան իրականության մեջ մարդկային ռեսուրսների կառավարման ժամանակակից մոտեցումը դեռևս իր ամբողջ ներուժով չի գործարկվել, բացառությամբ որոշ միջազգային կազմակերպությունների, որոնք գործում են մասնավոր հատվածում: Մինչ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում շարունակում է կիրառվել ավանդական կադրային կառավարման մոդելը, անհրաժեշտ է մշակել և ներդնել ժամանակակից ՄՌԿ ռազմավարություն, որը կխթանի մարդկային ռեսուրսների առավել արդյունավետ օգտագործումը և կառավարման համակարգի կատարելագործումը:

Այս համատեքստում առաջնահերթ է՝

- Մարդկային ռեսուրսների կառավարման համակարգի բարեփոխումը պետական կառավարման մարմիններում:
- Աշխատակիցների վերապատրաստման և ատեստավորման պարբերականության վերանայումը:
- Աշխատավարձերի ու խրախուսման մեխանիզմների կատարելագործումը:
- ՄՌԿ-ի առանձին ստորաբաժանումների հզորացումն ու գործառնությունների ընդլայնումը [10]:

Միայն այսպիսի մոտեցման դեպքում հնարավոր կլինի պետական կառավարման մարմիններում ապահովել մարդկային ռեսուրսների առավել արդյունավետ կառավարում և բարձրացնել պետական ծառայությունների որակը:

Եզրակացություն

ՀՀ հանրային կառավարման համակարգում ՄՌԿ բարեփոխումները դարձել են ժամանակի հրամայական: Համակարգային փոփոխությունների բացակայությունը կարող է հանգեցնել մասնագետների արտահոսքի, պետական կառավարման անարդյունավետության և հանրային ծառայությունների որակի անկման:

Անհրաժեշտ բարեփոխումների իրականացումը թույլ կտա ՀՀ պետական կառավարման համակարգին հարմարվել ժամանակակից պահանջներին, ապահովել արդյունավետություն և բարձրացնել հանրային ծառայությունների որակը: Հայաստանի համար ՄՌԿ բարեփոխումները պետք է լինեն առաջնահերթություն, որպեսզի պետությունը կարողանա արդյունավետորեն իրականացնել իր ռազմավարական նպատակները և ապահովել կայուն կառավարում:

Ուսումնասիրության արդյունքում պարզ դարձավ, որ Մարդկային ռեսուրսների կառավարման (ՄՌԿ) համակարգի արդիականացումը հանդիսանում է պետական կառավարման համակարգի արդյունավետության բարձրացման կարևոր նախապայմաններից մեկը: Հայկական իրականության մեջ դեռևս գերակշռում է կադրային կառավարման ավանդական մոդելը, որը սահմանափակում է ժամանակակից մեխանիզմների ներդրումը և արդյունավետ կառավարման իրականացման հնարավորությունները:

Առաջարկություններ:

1. Հիմք ընդունել միջազգային լավագույն փորձը և մշակել ՄՌԿ-ի նոր ռազմավարական ծրագիր ուղղված պետական կառավարման համակարգի արդիականացմանը:

2. Բարելավել կադրերի հավաքագրման և ընտրության մեխանիզմները՝ ապահովելով թափանցիկություն և մրցակցային մոտեցում:
3. Ներդնել աշխատանքի կատարողականի գնահատման արդի մեխանիզմներ, որոնք կապահովեն աշխատանքի որակի և արդյունավետության բարձրացում:
4. Խթանել աշխատակիցների մասնագիտական զարգացումը՝ նախատեսելով պարբերական վերապատրաստումներ և կրթական ծրագրեր:
5. Բարելավել աշխատավարձային համակարգը և մոտիվացիոն մեխանիզմները՝ բարձր որակավորում ունեցող մասնագետների ներգրավման և պահպանման նպատակով:
6. Զարգացնել կառավարման թվայնացման համակարգը՝ կիրառելով ավտոմատացված գործիքներ և նորարարական տեխնոլոգիաներ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Վարդանյան Ջ., Մարդկային ռեսուրսների կառավարումը, հեղինակային հրատարակություն, 2022:
2. Ваганян Г. Кадровая политика в Армении: блеск или нищета? vahanyan.vahanian.am/articles/kadrovaya-politika.html
3. Сердюк Н. В., Лозовицкая Г. П., Семченко А. С., и др. Формирование кадровой политики и управление персоналом государственной службы: Учебное пособие. Москва: Академия управления МВД России, 2019.
4. Badalyan M. Civil Service System in the Republic of Armenia. *International Journal of Civil Service Reform and Practice*, no. 3, 2014, pp. 35–45.
5. Кибанов А. Я. Управление персоналом. 3-е изд., Москва: Дело, 2005.
6. World Bank. Implementation Completion and Results Report: 2nd Public Sector Modernization Project (Armenia). documents.worldbank.org/curated/en/099012224210031920/pdf/P175033160472e08e18bfa12e4d9979e2e7.pdf.
7. ՀՀ կառավարության որոշում № 183-Լ (11 փետրվարի 2021) «Հայաստանի թվայնացման ռազմավարությանը, ռազմավարության միջոցառումների ծրագրին և արդյունքային ցուցանիշներին հավանություն տալու մասին». Հրապարակված է 16.02.2021 միասնական կայքում. ARLIS, 2021, www.arlis.am/DocumentView.aspx?docID=149957.
8. Հայաստանի Հանրապետության կառավարություն. ՀՀ կառավարության որոշում № 691-Լ (13 մայիսի 2022) Պաշտոնական հրապարակում՝ 19.05.2022. ARLIS, 2022, www.arlis.am/DocumentView.aspx?docID=181462.
9. Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով. «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենք (HO-205-Ն, ընդունվել է 23.03.2018, ուժի մեջ՝ 01.07.2018). ARLIS, 2018, www.arlis.am/DocumentView.aspx?DocID=138910.
10. Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով. «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենք (HO-172-Ն, ընդունվել է 26.05.2011). ARLIS, 2011.

МЕХАНИЗМЫ УПРАВЛЕНИЯ ЧЕЛОВЕЧЕСКИМИ РЕСУРСАМИ И НЕОБХОДИМОСТЬ РЕФОРМ

Балаян Арам

Фонд “ВГУ”,

“Общественное управление”, магистратура, 1-й курс

Руководитель магистерской диссертации:

кандидат экономических наук, доцент Л. Авдалян

Резюме

Ключевые слова: управление человеческими ресурсами (УЧР), система государственного управления, механизмы кадрового управления, оценка эффективности работы, стратегии реформ УЧР, реформы УЧР, цифровизация и модернизация управления, проблемы и вызовы УЧР

В данной статье проанализировано текущее состояние управления человеческими ресурсами (УЧР) в системе государственного управления Республики Армения и необходимость проведения реформ. Результаты исследования показывают, что для повышения эффективности системы государственного управления необходимо пересмотреть существующую систему УЧР, внедрить инновационные механизмы и улучшить практику управления кадрами. Необходимые реформы должны включать модернизацию механизмов управления, улучшение программ профессионального развития сотрудников и применение новых подходов для повышения эффективности работы.

HUMAN RESOURCE MANAGEMENT MECHANISMS AND THE NEED FOR REFORMS

Balayan Aram

“VSU” Foundation,

“Public Administration”, Master’s Degree, 1st Year

Academic Supervisor: L. Avdalyan,

Candidate of Economic Sciences, Associate Professor

Summary

Key words: Human Resource Management (HRM), Public Administration System, Personnel Management Mechanisms, Performance Evaluation, HRM Reform Strategies, HRM Reforms, Digitalization and Management Modernization, HRM Issues and Challenges

The following article analyzes the current state of Human Resource Management (HRM) in the public administration system of the Republic of Armenia and the need for reforms. The results of the study show that in order to enhance the efficiency of the public administration system, it is necessary to revise the HRM system, implement innovative mechanisms, and improve personnel management practices. The required reforms should include the modernization of management mechanisms, improvement of employee professional development programs, and the application of new approaches to increase work efficiency.

ԱՊՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԸ ՀՀ-ՈՒՄ

Թալադյան Ռուզաննա

*«ՎՊՀ» հիմնադրամ,
«Հանրային կառավարում», 1-ին կուրս
Գիտական դեկավար՝ տ. գ. թ., դոցենտ Ն. Քարսեղյան*

Հանգուցային բառեր. *ապահովագրություն, ապահովագրական վճար, ապահովագրական ընկերություն, ՀՀ ապահովագրական շուկա, ՀՀ ապահովագրական ընկերությունների կայացում, տնտեսական կայունություն, բնակչության բարեկեցություն*

Ապահովագրությունը հասարակության տնտեսական հարաբերությունները կարգավորող կարևոր օղակներից է: Այն հնարավորություն է տալիս ապագայի անորոշ, խոշոր ֆինանսական կորուստները վերածել ներկայի նախօրոք սահմանված և համեմատաբար փոքր ծախսերի՝ ապահովագրական վճարների տեսքով:

Ապահովագրական ֆոնդերի բավականին մեծ չափերը՝ ձևավորված բազում, չնայած և փոքրածավալ ներդրումներից, և ժամանակահատվածը, որի ընթացքում ապահովադիրների միջոցները կուտակվում են ապահովագրական ընկերություններում, դարձնում են դրանց հզոր ֆինանսավարկային հաստատություն, որոնց հնարավորությունները դժվար կլինի թերագնահատել ժամանակակից տնտեսական հարաբերություններում:

ՀՀ ֆինանսական համակարգի կայացման, հասարակության կայունության ու տնտեսության անխափան կենսագործունեության համար իր ռազմավարական դերակատարությունն ունի ապահովագրական գործունեությունը: Ապահովագրական շուկայի գործունեության կայունությունը և կարգավորվածության բարձր մակարդակը երաշխավորում են պետության տնտեսական և սոցիալական կայունությունը, որով էլ պայմանավորված է ապահովագրական շուկայի կարգավորման կարևորությունը:

Չնայած ՀՀ ապահովագրական շուկայի կայացման որոշակի մակարդակին և զարգացման միտումներին՝ այն դեռևս չի դասվում զարգացած ապահովագրական շուկաների շարքին, ինչը հիմնականում պայմանավորված է ՀՀ ապահովագրական համակարգի՝ որպես նոր զարգացող ֆինանսական ինստիտուտի առկա խնդիրներով և թերություններով: Այս համատեքստում ՀՀ ապահովագրական շուկայում առկա խնդիրներից են ապահովագրական ընկերությունների գործունեությունը կարգավորող օրենսդրական դաշտի անկատարությունը, ՀՀ ապահովագրական ընկերությունների կայացման, ապահովագրական ծառայությունների նկատմամբ հանրային վերաբերմունքի փոփոխման խնդիրները, ապահովագրական ընկերությունների ռիսկերի կառավարման գործընթացի ոչ լիարժեք պատկե-

րացման և հիմնական դիսկերի կառավարման հստակ մեխանիզմների բացակայության խնդիրները, ինչպես նաև կադրային կազմի բարելավման և նոր պրոդուկտների ձևավորման և կիրառման խնդիրները:

Առկա խնդիրների լուծումը կրերի ապահովագրական ընկերությունների գործունեության կարգավորման, տնտեսական կայնության բարձրացման, բնակչության բարեկեցության աճի, ապահովագրական ընկերությունների ծառայությունների ընդլայնման, ավելի շատ հաճախորդների ներգրավման հնարավորության: Այս խնդիրների ուսումնասիրության և լուծման ուղիների բացահայտումը պայմանավորում է աշխատանքի կարևորությունը և արդիականությունը:

Նպատակը: Աշխատանքի նպատակն է գնահատել Հայաստանի ապահովագրական շուկայի ընդհանուր վիճակը, իրականացնել ապահովագրական ընկերությունների գործունեության վերլուծությունը, ինչպես նաև իրականացնել ապահովագրական ծառայությունների ուսումնասիրությունը՝ ինչպիսի ապահովագրական ծառայություններ են առաջարկվում, ինչ պահանջարկ ունեն, և որոնք են զարգացման հնարավոր ուղղությունները:

Բովանդակություն: Ապահովագրությունը յուրաքանչյուր երկրի ֆինանսական շուկայի լոկոմոտիվներից մեկն է՝ բանկային համակարգի հետ զուգահեռ: Զարգացած երկրներում ապահովագրական ընկերությունների տնօրինության ներքո հաճախ ավելի շատ ակտիվներ են գոյանում, քան բանկերի: Դրանց հիմնական գործառույթը բնակչության եկամուտների բաշխումն ու վերաբաշխումն է [3]:

Ապահովագրությունը արդեն իսկ ապացուցել է տնտեսության զարգացման գործիքի իր դերը սոցիալական և տնտեսական ցանկացած ուղղություն ունեցող ոլորտում:

Հայաստանում ապահովագրական համակարգը դեռևս չի գտնվում այն մակարդակի վրա, որի վրա գտնվում է զարգացած կամ այլ զարգացող երկրներում: Այստեղ բանկերը դեռևս պահում են իրենց մենաշնորհային դիրքը՝ ֆինանսական շուկան առաջ մղելու մեջ:

Հայաստանի ապահովագրական շուկան ձևավորվել ու սկսել է զարգանալ 1996 թ.-ին, երբ նոյեմբերի 19-ին ընդունվեց «Ապահովագրության մասին» առաջին օրենքը: Այն մեծ դեր խաղաց ապահովագրական ոլորտի արագ զարգացման և կայունացման գործում, և 2000 թ.-ի դրությամբ երկրում գործում էին 25 լիցենզավորված ապահովագրական ընկերություններ: Այդ ժամանակ շուկայի կարգավորումն իրականացնում էր ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունը, սակայն ՀՀ կառավարության որոշմամբ, 2006 թ. հունվարի 1-ին այդ գործառույթի իրականացումն անցավ ԿԲ-ին: Վերջինս քայլեր ձեռնարկեց վերահսկելու ապահովագրական գործընթացին առնչվող որոշումներն ու ընդունեց ոլորտը կարգավորող ենթօրենսդրական ակտեր: ՀՀ օրենսդրական դաշտի կարգավորվելուն պես ապահովագրական ընկերությունների թիվը սկսեց նվազել՝ աստիճանաբար հասնելով ընդամենը 6 ապահովագրական ընկերության:

Ապահովագրական ոլորտը Հայաստանում բուռն զարգացում ապրեց 2011 թ.-

ից, երբ ներդրվեց ավտոքաղաքացիական պատասխանատվության պարտադիր ապահովագրությունը (ԱՊՊԱ): ՀՀ Կենտրոնական բանկը ԱՊՊԱ համակարգի ներդրման, վերահսկման և հետագա սպասարկման համար հիմնադրեց Ավտո-ապահովագրողների բյուրոն, որը նպաստեց ոլորտի արագ զարգացմանը, ինչպես նաև վարորդների մոտ առաջացող խոչընդոտների արագ հաղթահարմանը:

ԱՊՊԱ համակարգը մարդկանց դրդեց ավելի լավ հասկանալ ապահովագրության հայեցակարգն ու տեսնել, որ այն իսկապես շահավետ է և միտված է լուծել լուրջ սոցիալական խնդիրներ: Պարտադիր ապահովագրությանը զուգահեռ ՀՀ քաղաքացիները սկսեցին առնչվել նաև ապահովագրության կամավոր ճամփորդության, առողջության, բնակարանների, ԿԱՍԿԻ և այլ տեսակների հետ [3]:

2025 թ.-ի փետրվարի դրությամբ, ՀՀ ապահովագրական շուկայում գործում են հետևյալ ապահովագրական ընկերությունները.

- «ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ» ապահովագրական ընկերություն,
- «ԼԻԳԱ Ինշուրանս» ապահովագրական ընկերություն,
- «Նաիրի Ինշուրանս» ապահովագրական ընկերություն,
- «ՌԵԳՈ Ինշուրանս» ապահովագրական ընկերություն,
- «Արմենիա Ինշուրանս» ապահովագրական ընկերություն,
- «ՄԻԼ Ինշուրանս» ապահովագրական ընկերություն,
- ԷՖԵՍ» ապահովագրական ընկերություն:

Այս ընկերությունները միասին ապահովագրական շուկայում առաջարկում են տարբեր ծառայություններ՝ ներառյալ ԱՊՊԱ, առողջության ապահովագրություն, գույքի ապահովագրություն և այլ տեսակներ:

2024 թվականի երրորդ եռամսյակի տվյալներով շուկայի առաջատարներն են՝

- «ԼԻԳԱ Ինշուրանս»՝ ընդհանուր ապահովագրավճարներով,
- «Նաիրի Ինշուրանս»՝ ԱՊՊԱ ոլորտում,
- «ԷՖԵՍ»՝ կամավոր ապահովագրության ոլորտում [5]:

2023 թվականի ապրիլի 1-ից Հայաստանում իրականացվել է ԱՊՊԱ սակագների ազատականացում, ինչը հնարավորություն է տվել ապահովագրական ընկերություններին ինքնուրույն սահմանել սակագները՝ հիմնվելով իրենց հիմնավորված հաշվարկների վրա [3]:

2024 թվականի 1-ին կիսամյակի արդյունքների համաձայն՝ շուկայի մասնակիցների հավաքագրած ցուցանիշները նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ շարունակում են մնալ ցածր: Հավաքագրված ապահովագրավճարները նվազել են մոտ 4 %-ով: Հավաքագրվել է 37,7 մլրդ ՀՀ դրամ ապահովագրավճար՝ նախորդ տարվա 39,2 մլրդ ՀՀ դրամի փոխարեն: Նշվում է, որ ցուցանիշների նվազումը կատարվել է կամավոր ապահովագրատեսակների գծով՝ մոտ 10 %-ով (2,3 մլրդ ՀՀ դրամ), պարտադիր ապահովագրատեսակների գծով առկա է աճ՝ մոտ 1 մլրդ ՀՀ դրամի չափով: Նշված անկման հիմնական պատճառը այս տարի գյուղատնտեսության ապահովագրության բացակայությունն է՝ մոտ 1,8 մլրդ ՀՀ դրամ:

Աղյուսակ 1.

Հավաքագրած ապահովագրավճարներ՝ ըստ ապահովագրության տեսակների,
2024 թ. 1 կիսամյակ, հզ. ՀՀ դրամ

Ապահովագրության տեսակ	2024 թ.	2023 թ.	Փոփոխություն	Փոփոխություն (%)
ԱՊՊԱ	13.309.596	12.326.375	983.221	8
Առողջության ապահովագրություն, ներառյալ սոց. փաթեթը	12.953.302	13.543.420	-590.118	-4
Բեռների ապահովագրություն	1.083.469	1.003.057	80.412	8
Տրանսպորտային միջոցների ապահովագրություն (ԿԱՄԿՈ)	2.448.513	2.024.629	423.884	21
Դժբախտ պատահարներից ապահովագրություն	1.099.466	1.194.863	-95.397	-8
Գույքի ապահովագրություն	4.916.822	6.666.172	-1.749.349	-26
Ընդհանուր պատասխանատվության ապահովագրություն	536.728	535.635	1.093	0
Ֆինանսական ռիսկերի ապահովագրություն	394.252	453.868	-59.616	-13
Ճամփորդության ապահովագրություն	639.111	597.182	41.929	7
Ավիացիոն ռիսկերի ապահովագրություն	217.815	195.295	22.520	12
Վարկի ապահովագրություն	70.168	53.067	17.101	32
Երաշխիքի տրամադրում	20.292	467.448	-447.156	-96
ԱՊԿԱ	57.781	74.202	-16.421	-22
Ընդամենը	37.747.315	39.135.211	-1.387.896	-4

Նախորդ ժամանակաշրջանի համեմատ, 2024 թ-ին առողջության ապահովագրությունն իր «առաջատարի» դիրքը զիջել է ԱՊՊԱ-ին: ԱՊՊԱ տեսակի գծով հավաքագրված ապահովագրավճարների գծող որևէ էական փոփոխություն չի նկատվել և ներկայումս այն հանդես է գալիս շուկայի 35 % մասնաբաժնով:

Թեպետ այս անգամ «հաղթանակի գավաթ»-ը ԱՊՊԱ-ի ձեռքում է, բայց պետք է նշել, որ առողջության ապահովագրության ցուցանիշները ևս բարձր են: Ապահովագրության այս տեսակի գծով հավաքագրվել է շուրջ 13 մլրդ ՀՀ դրամ, որն իր մեջ ներառում է նաև առողջության պարտադիր ապահովագրությունը կամ «սոցփաթեթը» (այն կազմում է մոտ 4,2 մլրդ ՀՀ դրամ): Նշվում է, որ «սոցփաթեթ»-ի շրջանակներում հավաքագրված ապահովագրավճարների գծով գրեթե

տեղաշարժ չի եղել, և ցուցանիշի նվազումը արձանագրվել է կամավոր առողջության ապահովագրության հաշվից, ինչն այդքան էլ ողջունելի չէ: Գույքի ապահովագրությունը կազմում է շուկայի 13 %-ը, ԿԱՍԿՈ-ն՝ 6 %-ը՝ նախորդ տարվա համեմատ ունենալով 21 % աճ:

Աղյուսակ 2.

Հավաքագրած ապահովագրավճարներ՝ ըստ ապահովագրական ընկերությունների, 2024 թ. 1 կիսամյակ, հզ. ՀՀ դրամ

<i>Ապահովագրության տեսակ</i>	<i>Ինգո</i>	<i>Լիզա</i>	<i>Նաիրի</i>	<i>Ռեզո</i>	<i>Արմենիա</i>	<i>Սիլ</i>	<i>ԷՖԵՍ</i>
Դժբախտ պատահարներից ապահովագրություն	83,614	147,325	135,520	132,096	109,389	76,697	414,825
Առողջության ապահովագրություն	976,767	1,725,700	2,034,011	157,123	629,208	515,506	2,803,100
ԿԱՍԿՈ	190,688	541,347	434,137	135,216	79,715	274,141	793,269
Բեռների ապահովագրություն	30,494	265,918	277,803	43,465	131,988	275,539	58,262
Գույքի ապահովագրություն	272,738	685,204	263,944	202,109	89,691	89,422	2,765,995
Վարկի ապահովագրություն	-	21,700	-	-	48,468	-	-
Ֆինանսական ապահովագրություն	47,137	116,780	7,948	8,039	3	48,067	166,278
Սոց. փաթեթ	1,427,824	1,384,892	-	255,955	466,116	577,100	-
ԱՊՊԱ	1,715,198	2,910,431	3,182,410	1,162,461	2,184,418	2,154,678	-

Աղյուսակից երևում է, որ «Լիզա Ինշուրանս» զբաղեցնում է առաջատար դիրքը ընդհանուր ապահովագրավճարի բացարձակ չափով՝ գրեթե 8 մլրդ ՀՀ դրամ ապահովագրավճարով, որը կազմում է ամբողջ շուկայի 21 % մասնաբաժինը: Նրան հաջորդում են «ԷՖԵՍ»-ը՝ շուկայի 20 % մասնաբաժնով, «Նաիրի Ինշուրանսը»՝ շուկայի 17 % մասնաբաժնով: Մյուս ապահովագրական ընկերությունները կազմում են համեմատաբար ավելի փոքր մասնաբաժիններ:

Կամավոր ապահովագրության հատվածում առաջին տեղը զբաղեցնում է «ԷՖԵՍ» ապահովագրական ընկերությունը, որն այժմ սպասարկում է ՀՀ ապահովագրական շուկայի կամավոր պորտֆելի շուրջ 36 %-ը: «ԷՖԵՍ»-ն առաջատարն է հետևյալ ապահովագրատեսակների գծով՝

- Առողջության ապահովագրություն (սոցփաթեթը հաշվի չառած),
- Գույքի ապահովագրություն,
- Ֆինանսական ապահովագրություն,

- Ճամփորդության ապահովագրություն,
- ԴՊ,
- Կասկո ապահովագրություն:

Բեռների ապահովագրության գծով առաջատարը «Նաիրի Ինշուրանս» է, հետո «Սիլ Ինշուրանսը», «Սոցփաթեթի» գծով առաջատար տեղում է «Ինգո Արմենիան»:

Կամավոր ապահովագրության տեսակներով հաջորդ մասնակիցը «Լիգա Ինշուրանս» է՝ շուկայի 18 % մասնաբաժնով: «Նաիրի Ինշուրանսը» և «Սիլ Ինշուրանսը» զբաղեցնում են 3-րդ և 4-րդ տեղերը՝ համապատասխանաբար 17 % և 11 % մասնաբաժիններով:

Աղյուսակ 3.



**Համախառն ապահովագրավճարները և հատուցումները,
2024 թ. 1 կիսամյակ (հզ. ՀՀ դրամ)**

<i>Ապահովագրության տեսակ</i>	<i>Ապահովագրավճար</i>	<i>Հատուցում</i>
Դպ	1,099,466	169,942
Առողջության ապահովագրություն	8,841,415	7,4478,923
ԿԱՍԿՈ	2,448,513	1,018,850
Բեռների ապահովագրություն	1,083,469	268,574
գույքի ապահովագրություն	4,369,103	2,141,244
Վարկի ապահովագրություն	70,168	0
Տնտեսական ապահովագրություն	394,252	253,087
Սոց. փաթեթ	4,111,887	695,389
Աջակցություն	639,111	88430
ԱՊՊԱ	13,309,596	9,926,228

Հատուցումների մասով առկա է ցուցանիշների կտրուկ աճ՝ 15 %՝ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ: Խոշոր հատուցումներ են տրվել.


- ԱՊՊԱ-ի գծով՝ շուրջ 10 մլրդ ՀՀ դրամի չափով,
- Առողջության ապահովագրության գծով (միայն կամավոր)՝ մոտ 7,5 մլրդ ՀՀ դրամի չափով,
- Գույքի ապահովագրության գծով՝ շուրջ 2 մլրդ ՀՀ դրամի չափով: Նախորդ ժամանակաշրջանի համեմատ աճ է գրանցվել.
- կամավոր առողջության ապահովագրության գծով՝ շուրջ 25 % աճ,
- գույքի ապահովագրության գծով՝ մոտ 50 %, այսինքն՝ ցուցանիշները կրկնապատկվել են:

- Լիզա Ինշուրանս
- Ինգո Արմենիա
- Նաիրի Ինշուրանս
- Սիլ Ինշուրանս
- Արմենիա Ինշուրանս
- Ռեգո Ինշուրանս
- ԷՖԵՍ



Գծապատկեր 1. Հատուցումների տեսակար կշիռը՝ ըստ ընկերությունների, 2023/2024 թ. 1 կիսամյակ

Ընկերությունների հատուցումների բաշխումից ակներև են դառնում համախառն հատուցումների տոկոսային փոփոխությունները երկու տարիների ընթացքում: 2024 թ. առաջին կիսամյակում հատուցումների գերակշիռ մասը բաժին է ընկնում «Լիզա Ինշուրանսին»՝ 25 % մասնաբաժնով: Դրան հաջորդում է «Ինգո Արմենիան»՝ 21 % մասնաբաժնով, այնուհետև «Նաիրի Ինշուրանսը»՝ 17 % մասնաբաժնով:




Գծապատկեր 2. Զուտ շահույթ, 2024 թ. 1-ին կիսամյակ

Շուկայի գուտ շահույթը 2024 թ.-ին այդքան էլ բարձր չէ, ընդամենը 947,961 մլն ՀՀ դրամ, ինչը պայմանավորված է նաև տրված հատուցումների մոտ 15 % աճով:

2024 թ. 1-ին կիսամյակում ապահովագրական ընկերություններից առավել շահութաբերը «Նաիրի Ինշուրանսն» է՝ 532,596 մլն ՀՀ դրամ: Երկրորդ տեղը զբաղեցնում է «Արմենիա Ինշուրանսը»՝ գրեթե 365,378 մլն ՀՀ դրամ, իսկ երրորդը՝ «Ռեգո Ինշուրանսը»՝ մոտ 190,00 մլն ՀՀ դրամ: Շահույթի դրական շեմի վրա է գտնվում նաև «Սիլ Ինշուրանսը»՝ 180,181 մլն ՀՀ դրամ շահույթով: Մյուս 3 ապահովագրական ընկերությունները դեռ ցուցաբերում են վնասի ցուցանիշներ [4]:

Ամփոփելով 2024 թ.-ի 1-ին եռամսյակի արդյունքները՝ կարելի է նշել, որ հա-

վաքազրված ապահովագրավճարներով նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ շուկայում նկատվել է ցուցանիշների անկում՝ մոտ 7 %-ով կամ 1,5 մլրդ դրամի չափով: Հավաքագրվել է 22 մլրդ ՀՀ դրամ ապահովագրավճար՝ նախորդ տարվա 23,5 մլրդ ՀՀ դրամի փոխարեն [6]:



Գծապատկեր 3. Հավաքագրած ապահովագրավճարներ, 2024 թ. 1-ին եռամսյակ, հզ. ՀՀ դրամ

Գերակշիռ մասը կազմում է առողջության ապահովագրությունը, որն իր մեջ ներառում է նաև առողջության պարտադիր ապահովագրությունը կամ «սոցփաթեթը» (այն կազմում է մոտ 4 մլրդ ՀՀ դրամ): Նշվում է, որ հավանաբար 2024 թ. 1-ին կիսամյակից հետո «սոցփաթեթով» այլևս ապահովագրական ընկերությունները չեն զբաղվի, և այն կհանձնվի նոր ստեղծվող Առողջության Համապարփակ ապահովագրության Հիմնադրամին [6]:


Նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ առողջության ապահովագրության գծով հավաքագրած ապահովագրավճարները նվազել են մոտ 6 %-ով՝ զբաղեցնելով շուկայի 38 %-ը: Հատկանշական է, որ պորտֆելում պարտադիր առողջության ապահովագրության մասը գրեթե մնացել է անփոփոխ, և նվազել են կամավոր առողջության ապահովագրության ցուցանիշները:

Հավաքագրած ապահովագրավճարներով շուկայում երկրորդ տեղը պատկանում է ԱՊՊԱ տեսակին՝ շուկայի մոտ 30 % մասնաբաժնով: Նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ նկատվում է չնչին, բայց դրական աճ: Այսպիսով, առաջին եռամսյակի տվյալներով երևում է, որ ԱՊՊԱ սակագների ազատականացումն էական ազդեցություն չի ունեցել շուկայի չափի վրա:

Գույքի ապահովագրությունը կազմում է շուկայի 18 %-ը, որը նախորդ տարվա համեմատ գրանցել է աճ՝ 9 %-ով [6]:

Ցուցանիշի դրական տեղաշարժ է գրանցվել նաև ԿԱՍԿՈ ապահովագրության գծով՝ 20 % աճ՝ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ: Մասնավորապես ապահովագրական շուկայում հայտնված նոր «ԷՖԵՍ» ապահովագրական ընկերությունը կարողացել է կենտրոնացնել պորտֆելի գերակշիռ մասը և ներկայումս սպասարկել պորտֆելի շուրջ 37 %-ը: Հաջորդ բարձր արդյունքները «Լիգա Ինշուրանս», «Նաիրի Ինշուրանս» և «Սիլ Ինշուրանս» ընկերություններին են պատկանում: ԿԱՍԿՈ ապահովագրատեսակի գծով խիստ նվազել են «Ինգո Արմենիայի» ցուցանիշները՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ունենալով ցուցանիշի մոտ 80 % նվազում [6]:

Աճ գրանցվել է նաև բեռների ապահովագրության գծով՝ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ ավելանալով մոտ 22 %-ով: Կամավոր ապահովագրատեսակների պորտֆելը նախորդ տարվա առաջին եռամսյակի համեմատ գրանցել է 13 % անկում և ներկայումս զբաղեցնում է շուկայի մոտ 52 %-ը:



Գծապատկեր 4. Հավաքագրած ապահովագրավճարները՝ ըստ ընկերությունների, 2024 թ. 1-ին եռամսյակ, հազ. ՀՀ դրամ

2024թ. 1-ին եռամսյակի հավաքագրված ապահովագրավճարներով շուկայի առաջատարը 2023-ի հուլիսի 25-ին լիցենզիա ստացած «ԷՖԵՍ»-ն է՝ հավաքագրելով ավելի քան 5 մլրդ ՀՀ դրամ ապահովագրավճար և գրավելով շուկայի 23 %-ը: Հատկանշական է, որ ԷՖԵՍ-ը ներգրավված չէ ԱՊՊԱ և «սոցիալաթեթի» մեջ, այսինքն այս ցուցանիշը գեներացվել է բացառապես ապահովագրության կամավոր տեսակներով [6]:

Հաջորդում է «Լիգա Ինշուրանսը»՝ 22 % մասնաբաժնով (4,8 մլրդ ՀՀ դրամ), «Նաիրի Ինշուրանսը»՝ 15 % (մոտ 3,6 մլրդ ՀՀ դրամ), «Ինգո Արմենիան», «Սիլ Ինշուրանսը», «Արմենիա Ինշուրանսը» և «Ռեգո Ինշուրանսը»՝ համապատասխանաբար 13 %, 12 %, 10 % և 5 %:

Կամավոր տեսակներով առաջատարը նույնպես «ԷՖԵՍ»-ն է՝ 44 %՝ հավաքագրելով 5 մլրդ ՀՀ դրամ ապահովագրավճար: «Լիգա Ինշուրանսը», հավաքա-

գրելով ավելի քան 2 մլրդ ՀՀ դրամ ապահովագրավճար, զբաղեցնում է շուկայի 18 %-ը, «Նաիրի Ինշուրանսը» 1,6 մլրդ ՀՀ դրամով՝ 15 %, իսկ «Արմենիա Ինշուրանսը», «Սիլ Ինշուրանսը», «Բնգո Արմենիան» և «Ռեգո Ինշուրանսը» համապատասխանաբար՝ 7 %, 9 %, 5 % և 3 % [6]:

«ԷՖԵՍ»-ն առաջատարն է հետևյալ ապահովագրատեսակներով՝

1. Առողջության ապահովագրություն,
2. ԿԱՄԿՈ,
3. Գույքի ապահովագրություն,
4. Դժբախտ պատահարներից ապահովագրություն,
5. Ճամփորդության ապահովագրություն:

«Լիգա Ինշուրանսը» առաջատարն է պատասխանատվության ապահովագրության գծով, «Նաիրի Ինշուրանսը»՝ ԱՊՊԱ, իսկ «Արմենիա Ինշուրանսը»՝ երաշխիքի ապահովագրության գծով: Այսպիսով՝ ՀՀ ապահովագրական շուկայում էական վերադասավորումներ են տեղի ունենում, մասնավորապես.

- ԷՖԵՍ ապահովագրական ընկերությունը մեծ թափով մուտք է գործում ապահովագրության կամավոր տեսակներ,
- 2024 թ. կեսից սպասվում է առողջության պարտադիր ապահովագրության հատվածի «փոխանցում» պետական կառավարման,
- 2024 թ. կեսից սպասվում է էական տեղաշարժ ճամփորդության ապահովագրության պորտֆելում՝ կախված Վրաստանում ապահովագրության պարտադիր պահանջի հետ [6]:

2024 թվականը ՀՀ ապահովագրական շուկայի համար ընդհանուր առմամբ պասիվ տարի էր, ինչը արտացոլվում է շուկայի մեծության գրեթե անփոփոխ վարքագծով: Շուկայում տեղի են ունեցել պորտֆելների վերաբաշխումներ և ընկերությունների վերադիրքավորումներ, բայց ընդհանուր շուկայի ծավալը մնում է անփոփոխ: 2023 թ.-ի 3-րդ եռամսյակի համեմատ ապահովագրական շուկան աճել է ընդամենը 1 %-ով, ընդ որում՝ կամավոր ապահովագրության գծով արձանագրվում է անկում 6 %-ով, իսկ ԱՊՊԱ գծով՝ աճ 11 %-ով [5]:

Կամավոր ապահովագրության գլխավոր տեսակը՝ առողջության ապահովագրությունը, գրանցել է գրեթե նույն ցուցանիշները, ինչ նախորդ տարվա 3-րդ եռամսյակում: Հատկանշական է ավտոմեքենաների կամավոր ապահովագրության՝ ԿԱՄԿՈ տեսակի 24 % աճը, ինչը ցույց է տալիս ապահովագրության տվյալ տեսակի նկատմամբ բնակչության շարունակական հետաքրքրությունը:

2024 թ. գրեթե վաճառքներ չեն իրականացվել գյուղատնտեսության ապահովագրության գծով, որը հաշվառվում է գույքի ապահովագրության ներքո, և ցուցանիշից երևում է, որ անցած տարվա նկատմամբ այս տարվա անկման պատճառը հենց դա է [5]:

Աղյուսակ 4.

2024 թ. 3-րդ եռամսյակի դրությամբ հավաքագրված ապահովագրավճարները՝
ըստ ապահովագրության տեսակների, հզ. ՀՀ դրամ

Ապահովագրության տեսակ	2024 թ.	2023 թ.	Փոփոխություն	Փոփոխություն (%)
ԱՊՊԱ	20,623,170	18,598,911	2,024,259	11
Առողջության ապահովագրություն, ներառյալ սոց. փաթեթը	16,446,415	16,352,690	96,725	1
Բեռների ապահովագրություն	1,509,284	1,468,051	41,233	3
Տրանսպորտային միջոցների ապահովագրություն (ԿԱՄԿՈ)	3,820,437	3,092,503	727,934	24
Դժբախտ պատահարներից ապահովագրություն	1,481,554	1,561,777	-80,223	-5
Գույքի ապահովագրություն	6,207,616	7,585,537	-1,377,921	-18
Ընդհանուր պատասխանատվության ապահովագրություն	783,134	689,719	93,415	14
Ֆինանսական ռիսկերի ապահովագրություն	406,805	661,513	-254,708	-39
Ճամփորդության ապահովագրություն	1,077,141	1,000,206	76,935	8
Ավիացիոն ռիսկերի ապահովագրություն	220,273	271,858	-51,858	-19
Վարկի ապահովագրություն	106,441	103,522	2,919	3
Երաշխիքի տրամադրում	23,091	849,527	-826,436	-97
ԱՊԿԱ	55,467	111,296	-55,829	-50
Ընդամենը	52,762,852	52,349,133	413,719	1

2024 թ.-ի 3-րդ եռամսյակի դրությամբ հավաքագրված ապահովագրավճարների մեծությամբ առաջատարը Լիզա Ինշուրանսն է՝ 11,155,898 հազ ՀՀ դրամով կամ շուկայի 21 % մասնաբաժնով:

ԱՊՊԱ շուկայի առաջատարը Նաիրի Ինշուրանսն է՝ 22 % մասնաբաժնով:

Կամավոր ապահովագրության շուկայի առաջատարը ԷՖԵՍ ապահովագրական ընկերությունն է՝ 9,196,265 հազ ՀՀ դրամով կամ կամավոր շուկայի 33 %-ով: ԷՖԵՍ-ը շարունակում է կամավոր ապահովագրության շուկայում իր դիրքերի ամրապնդումը՝ ընդամենը 1 տարվա մեջ գրավելով կամավոր ապահովագրության տեսակներից մեծ մասի առաջատարի դիրքը:

Աղյուսակ 5.

**2024 թ. 3-րդ եռամսյակի դրությամբ հավաքագրված ապահովագրավճարները՝
ըստ ապահովագրության տեսակների և ապահովագրական ընկերությունների,
հզ. ՀՀ դրամ**

Ապահովագրության տեսակ	Բնժո	Լիզա	Նաիրի	Ռեզո	Արմենիա	Սիլ	ԷՖԵՍ
Դժբախտ պատահարներից ապահովագրություն	133.376	186.167	165802	214.602	161.366	119.877	500.364
Առողջության ապահովագրություն	1.496.925	2.461.132	2.837.606	423.672	745.360	876.879	3.482.150
ԿԱՍԿՈ	415.277	824.446	627.164	235.075	117.221	359.856	1.241.398
Բեռների ապահովագրություն	80.683	423.290	372.742	65.606	182.237	290.049	94.677
Գույքի ապահովագրություն	415.801	939.786	356.138	275.641	158.267	777.126	3.294.857
Վարկի ապահովագրություն	-	25.118	-	-	81.323	-	-
Ֆինանսական ապահովագրություն	71.962	219.785	11.303	29.281	3	74.471	-
Սոց. փաթեթ	1.427.824	1.388.186	-	255.955	466.116	584.610	-
ԱՊՊԱ	2.320.791	4.305.133	4.599.116	2.148.906	3.767.628	3.481.596	-

ԼԻԳԱ-ն առաջատարն է հետևյալ ապահովագրատեսակների գծով՝

- Բեռների ապահովագրության,
- ԱՊԿԱ,
- Ֆինանսական ռիսկեր,
- Ընդհանուր պատասխանատվություն:

Ավիացիոն ապահովագրության առաջատարը ՍԻԼ-ն է:

«Սոցփաթեթի» գծով առաջատար է «ԲՆԳՈ»-ն:

Բոլոր ընկերությունները միասին 2024 թ.-ի 3-րդ եռամսյակի դրությամբ վերաապահովագրավճար են հաշվեգրել 9,590,542 հազ ՀՀ դրամ, որի 59 %-ը կամ 5,613,707 հազ ՀՀ դրամը՝ ԷՖԵՍ ապահովագրական ընկերությունը: 2-րդ ցուցանիշը Լիզա Բնշուրանսինն է՝ 1,423,702 հազ ՀՀ դրամ կամ 15 % մասնաբաժին [5]:

**2024 թ. 3-րդ եռամսյակի դրությամբ հաշվեզրված հատուցումները՝
ըստ ապահովագրության տեսակների, հզ. ՀՀ դրամ**

<i>Ապահովագրության տեսակ</i>	<i>2024 թ.</i>	<i>2023 թ.</i>	<i>Փոփոխություն</i>	<i>Փոփոխություն (%)</i>
ԱՊՊԱ	15.496.150	8.839.206	6.656.944	75.31
Առողջության ապահովագրություն	11.295.310	7.597.140	3.698.170	48.68
Բեռների ապահովագրություն	636.866	311.137	325.729	104.69
Տրանսպորտային միջոցների ապահովագրություն (ԿԱՍԿՈ)	1.679.934	766.358	913.576	119.21
Դժբախտ պատահարներից ապահովագրություն	266.902	111.780	155.122	138.77
Գույքի ապահովագրություն	2.496.942	3.365.767	-868.825	-25.81
Ընդհանուր պատասխանատվության ապահովագրություն	54.513	46.691	7.822	16.75
Ֆինանսական ռիսկերի ապահովագրություն	-302.496	240.236	-542.732	-225.92
Ճամփորդության ապահովագրություն	88.685	104.711	-16.026	-15.30
Ավիացիոն ռիսկերի ապահովագրություն	7.865	-9	7.874	-87488.89
Վարկի ապահովագրություն	-	-	-	0.00
Երաշխիքի տրամադրում	25.577	40.313	-14.736	-36.55
ԱՊԿԱ	4.046	5.112	-1.066	-20.85
Ընդամենը	33.0445.403	22.176.763	10.868.640	49.01

Չնայած ապահովագրական շուկան աճել է ընդամենը 1 %-ով,՝ հատուցումները աճել են մոտ 49 %-ով, ընդ որում՝ կամավոր ապահովագրության հատուցումները՝ 29 %-ով:

Հատուցումների աճ է արձանագրվել ապահովագրության գրեթե բոլոր հիմնական տեսակներում՝

- ԱՊՊԱ – 75 %
- Առողջության կամավոր ապահովագրություն – 48,68 %
- ԿԱՍԿՈ – 119 %
- Բեռներ – 104 %, և այլն:

ՀՀ ապահովագրական ընկերությունների շահույթը 2024 թ.

Ապահովագրական ընկերություն	Չուտ շահույթ 2024 թ.
ԻՆԳՈ	231,137
ԼԻԳԱ	437,940
ՆԱԻՐԻ	448,112
ՌԵԳՈ	273,903
ԱՐՄԵՆԻԱ	510,054
ՍԻԼ	168,861
ԷՖԵՍ	13,972
Հնդամենը	717,881

ՀՀ ապահովագրական շուկան 2024 թ. -ի 3-րդ եռամսյակի դրությամբ ստացել է 717,881 հազ ՀՀ դրամ շահույթ, ընդ որում՝ 7 ընկերություններից 3-ը աշխատել են վնասով: Ամենամեծ շահույթը գրանցել է «Արմենիա Բնշուրանսը»՝ 510,054 հազ. ՀՀ դրամով, իսկ ամենամեծ վնասը՝ «Լիգա Բնշուրանսը»՝ 437,940 հազ. ՀՀ դրամով [5]:

Եզրակացություն և առաջարկություններ: Հայաստանի ապահովագրական ընկերությունները պետք է մշտապես զարգացնեն իրենց բիզնես մոդելները, ներդնեն ժամանակակից տեխնոլոգիաներ, դիվերսիֆիկացնեն ծառայությունները և բարձրացնեն հաճախորդների վստահությունը: Թվայնացումը, արդյունավետության բարձրացումը, նոր ծառայությունների ներդրումը և հաճախորդակենտրոն մոտեցումը կարող են ապահովել ապահովագրական շուկայի երկարաժամկետ աճը և կայուն զարգացումը:

Կատարված վերլուծությունների արդյունքում առաջարկվում է՝

1. Թվային լուծումների ակտիվացում- Ստեղծել օնլայն հարթակներ և բջջային հավելվածներ, որտեղ հաճախորդները կարող են արագ և հեշտորեն ձևակերպել ապահովագրություն, ստանալ տեղեկատվություն և օգտվել արագացված ծառայություններից:

2. Հաճախորդների իրազեկվածության բարձրացում – Մշակել գովազդային և կրթական արշավներ, որոնք կբարձրացնեն հանրային իրազեկվածությունը ապահովագրության կարևորության վերաբերյալ:

3. Ապահովագրական ծառայությունների դիվերսիֆիկացում – Ապահովագրական փաթեթները դարձնել ավելի ճկուն՝ հարմարեցնելով դրանք հաճախորդների անհատական պահանջներին:

4. Գործառնական արդյունավետության բարձրացում – Կրճատել ծախսերը՝ ավտոմատացման, ապահովագրական գործարքների թվայնացման միջոցով:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. http://xn--https-8kg//insurebusiness.am/armenian-insurance-market-2024-q3/?utm_source (հասանելի է 28. 04. 2025 թ.):
2. https://finport.am/full_news.php?id=47945&lang=1&utm_source
3. <https://insurebusiness.am> (հասանելի է 28. 04. 2025 թ.):

4. <https://insurebusiness.am> (հասցեի է 29. 04. 2025 թ.):
5. https://insurebusiness.am/armenian-insurance-market-2024-q3/?utm_source (հասցեի է 28. 04. 2025 թ.):
6. <https://insurebusiness.am/armenian-insurance-market-q1-2024/> (հասցեի է 28. 04. 2025 թ.):

АНАЛИЗ ДЕЯТЕЛЬНОСТИ СТРАХОВЫХ КОМПАНИЙ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

Тавадян Рузанна

Фонд “ВГУ”, “Общественное управление”, 1-й курс

Научный руководитель:

кандидат экономических наук, доцент Н. Барсегян

Резюме

Ключевые слова: *страхование, страховой взнос, страховая компания, страховой рынок РА, становление страховых компаний РА, экономическая стабильность, благосостояние населения*

Страховой рынок Армении продолжает развиваться, следуя мировым тенденциям. Страховые компании Армении сегодня сосредоточены не только на традиционных услугах, но и на активное внедрение новых продуктов, таких как гибкие программы для жизни и здоровья, а также страховые пакеты для бизнеса. Несмотря на трудности, страховые компании увеличивают свои доходы, внедряют новые технологии и пытаются расширить свою рыночную долю, предлагая более разнообразные услуги.

ANALYSIS OF INSURANCE COMPANIES' ACTIVITIES IN THE REPUBLIC OF ARMENIA

Tavadyan Ruzanna

“VSU” Foundation, “Public Administration”, 1st Year

Academic Supervisor: N. Barseghyan,

Candidate of Economic Sciences, Associate Professor

Summary

Key words: *insurance, insurance premium, insurance company, insurance market of the Republic of Armenia, establishment of insurance companies in the Republic of Armenia, economic stability, population welfare*

The insurance market in Armenia continues to develop, keeping pace with international trends. Nowadays, Armenian insurance companies focus not only on traditional services but also actively introduce new products, such as flexible programs related to life and health, as well as insurance packages for businesses. Despite the challenges, insurance companies are increasing their revenues, implementing new technologies, and trying to expand their market share by offering more diversified services.

**ՎԵՆՉՈՒՐԱՅԻՆ ՏԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԱՐՏԵՐԿՐՈՒՄ ԵՎ ՀՀ-ՈՒՄ**

Հարությունյան Լուսինե

«ՎՊՀ» հիմնադրամ,

«Կառավարում», 4-րդ կուրս

Գիտական ղեկավար՝ տ. գ. թ., դոցենտ Ն. Բարսեղյան

Հանգուցային բառեր. *վենչուրային ֆինանսավորում, վենչուրային ֆոնդեր, ներդրումներ, նորարարական նախաձեռնություններ, ստարտափ միջավայր*

«Վենչուրային կապիտալ» հասկացությունն առաջացել է անգլերեն "venture" բառից, որը նշանակում է ռիսկային ձեռնարկում կամ նախաձեռնողականություն: Վենչուրային ներդրողները ներդրումներ են կատարում փոքր և միջին ձեռնարկություններում, հետևաբար նրանք ստանձնում են բավականին բարձր ռիսկ, որից բխում է բարձր եկամտաբերությունը: Վենչուրային ներդրումներն իրենց բնույթով տարբերվում են մնացած այլ ֆինանսավորման եղանակներից: Վենչուրային ներդրողը մասնակցում է ֆինանսավորված ծրագրի բոլոր փուլերի կառավարմանը՝ սկսած գաղափարի փորձարարական աշխատանքներից մինչև նոր ստեղծված ձեռնարկության բաժնետոմսերի իրացվելիության ապահովում: Վենչուրային ֆինանսավորումը չի պահանջում տոկոսային գումարների, շատ հաճախ նաև ներդրված գումարի վերադարձ: Ի տարբերություն դասական ներդրումային ռազմավարության՝ վենչուրային ներդրողները չեն ձգտում ստանձնել կազմակերպության վերահսկողությունը, այլ անում են խելամիտ չափով ներդրումներ, որոնք հանգեցնելու են կազմակերպության ավելի արդյունավետ գործունեությանը՝ ֆինանսական լծակի ազդեցության հաշվին:

Հոդվածում կիրառվել են **համեմատական վերլուծության և գործնային վերլուծության վիճակագրական մեթոդները:**

Բովանդակություն

Վենչուրային բիզնեսը կարևոր նշանակություն ունի յուրաքանչյուր երկրի տեխնոլոգիական զարգացվածության համար: Այսօր, ի հայտ են գալիս բազմաթիվ նորարարական գաղափարներ, որոնք բիզնեսի վերածվելու համար ֆինանսական աջակցության կարիք ունեն: Հետազոտության **նպատակն է՝** ուսումնասիրել վենչուրային էկոհամակարգի առանձնահատկությունները տարբեր տարածաշրջաններում, պետություններում և ՀՀ-ում:

ԱՄՆ: Վենչուրային ձեռնարկչատիրությունը ԱՄՆ-ում սկսեց ձևավորվել 20-րդ դարում, երբ մասնավոր ներդրողները սկսեցին օգնել նորաստեղծ ընկերություններին իրենց միջոցներով: Օրինակ հարուստ դինաստիաները, ինչպիսիք էին Մեյլոնները, Ռոքֆելերները, Վանդերբիլթները, սկսեցին ներդրումներ կատարել էրիտասարդ ընկերություններում, այնուհետև սկսեցին ստեղծել իրենց սեփական վենչուրային ներդրումային հիմնադրամները (Venrock, GH Whitney): ԱՄՆ-

ում վենչուրային ձեռներեցության ի հայտ գալու պաշտոնական ամսաթիվը համարվում է 1946 թ.-ը, երբ ստեղծվեց առաջին ներդրումային ընկերությունը՝ «Ամերիկյան հետազոտությունների և զարգացման կորպորացիան» (ARDC), որի բաժնետոմսերը ազատ վաճառվում էին արժեթղթերի բաց շուկայում: Այդ ժամանակից ի վեր ԱՄՆ-ում սկսեց աճել ներդրումային ընկերությունների և ֆոնդերի թիվը, և այդպիսով վենչուրային կապիտալի արդյունաբերությունը սկսեց ձևավորվել 1973 թ.-ին ԱՄՆ-ի «Վենչուրային կապիտալի ազգային ասոցիացիայի» ստեղծման աջակցությամբ [1]:

ԱՄՆ-ում վենչուրային կապիտալի ամենահաջողակ ընկերություններ համարվում են այն ընկերությունները, որոնք զգալի ներդրումներ են կատարել ոլորտի առաջատար ընկերություններում: Այդպիսի ընկերություններ են «Andreessen Horowitz», «Greylock Partners», «Kleiner Perkins Caufield & Byers», «Accel Partners», «Sequoia Capital»-ը, որոնք աջակցել են աշխարհի խոշորագույն ընկերություններին, ինչպիսիք են «Facebook»-ը, «Google»-ը, «Uber»-ը և «Slack»-ը: Վենչուրային կապիտալի ընկերություններ են նաև «Benchmark Capital», «New Enterprise Associates (NEA)», «First Round Capital», «Foundry Group and Index Ventures», որոնք ներդրումներ են կատարել բազմաթիվ հաջողակ նորաստեղծ կազմակերպություններում, ինչպիսիք են «Dollar Shave Club»-ը, «Warby Parker»-ը և «Jet.com»-ը: Այս ընկերությունները ներդրումներ են կատարել նաև զարգացող ոլորտներում, ինչպիսիք են՝ բլոկչեյնը, վիրտուալ իրականությունը, արհեստական բանականությունը [2]:

ԱՄՆ-ում վենչուրային կապիտալի ընկերությունների համար ամենատարածված ոլորտներն են տեխնոլոգիաները, առողջապահությունը և ֆինանսական ծառայությունները: Այս երեք ոլորտների ընկերությունները հակված են ունենալ աճի ավելի բարձր ներուժ, քան մյուս ոլորտները, ինչպիսիք են մանրածախ առևտուրը, հյուրանոցային ծառայությունները և այլն: Բացի այդ, վենչուրային կապիտալիստները նախընտրում են ներդրումներ կատարել ավելի խոշոր քաղաքներում, որտեղ զարգացած է տեխնոլոգիական էկոհամակարգը, ինչպիսիք են՝ Սան Ֆրանցիսկոն, Նյու Յորքը, Լոս Անջելեսը: ԱՄՆ-ում վենչուրային կապիտալիստները սովորաբար ներդրումներ կատարում են մի քանի 100 հազ.-ից մինչև տասնյակ միլիոնավոր դոլարներ:

ԱՄՆ-ում վենչուրային կապիտալի ներդրման միտումների և ազդեցությունների վերլուծությունը ցույց է տալիս, որ 2024 թ.-ին գործարքների թիվը նվազել էր, ինչը պայմանավորված է եղել գործարքների արժեքի աճով: ԱՄՆ-ում արհեստական ինտելեկտի նորարարական նախագծերը կազմում էին վենչուրային կապիտալի գործարքների ընդհանուր արժեքի 46.4 %-ը և գործարքների ընդհանուր քանակի 28,9 %-ը: Լավագույն գործարքները եղել են արհեստական ինտելեկտի վաղ փուլում գտնվող ստարտափների ֆինանսավորումները, ինչը փաստում է, որ չնայած դժվարություններին, 2024 թ.-ը կարևոր տարի էր շարունակելու հիմքեր դնել տեխնոլոգիաների համար, որոնք հեռանկարում կփոխեն յուրաքանչյուր ոլորտի աշխատանքը [3]:

Ճապոնիա: 20-րդ դարի վերջին Ճապոնիայում տեղի ունեցած տնտեսական

ճգնաժամը պահանջում էր ցուցաբերել ճկուն մոտեցումներ տնտեսության վերականգնման համար: Այս շրջանում մեծ զարգացում ապրեց փոքր և միջին բիզնեսը: Հատկանշական է, որ «Տնտեսական պլանավորման գործակալության» ծրագիրը փոքր և միջին ձեռնարկություններին անվանում է «Ճապոնիայի տնտեսության դինամիկ զարգացման աղբյուրը»: Երկրի տնտեսության աճի բարձր տեմպերի վերականգնմանն ուղղված միջոցառումների շարքում 1999 թ.-ին կառավարությունը մատնանշեց ուղղակի ներդրումների ընդլայնված օգտագործման կարևորությունը փոքր և միջին ընկերությունների համար, այդ թվում՝ նորաստեղծ ձեռնարկությունների ֆինանսավորման համար հիմնադրամների ստեղծման կարևորությունը, որոնց համար հատկացվել էր 10 տրլն իեն: Դեռևս 1996 թ.-ին վենչուրային բիզնեսի զարգացման համար հիմք են հանդիսացել հետազոտությունների ոլորտում գործող ավելի քան 18000 կազմակերպություններ [4]:

Սկզբնական շրջանում ճապոնական վենչուրային ձեռնարկությունները այնպիսի խոշոր ֆինանսական հաստատությունների դուստր ընկերություններ էին, ինչպիսիք են ապահովագրական ընկերությունները կամ բանկերը, որոնց առանձնահատկությունը այն էր, որ դրանք ֆինանսավորում էին միայն իրենց մայր ընկերություններին և մասնակցություն չէին ունենում ստարտափների ֆինանսավորման գործում: Հատկանշական է այն, որ նմանատիպ ընկերությունները ժամանակի ընթացքում անկախանում էին իրենց մայր ընկերությունից և ֆինանսավորում այլ կազմակերպությունների նույնպես: Օրինակ՝ Jasco ընկերությունը, որը ստեղծվել էր 1973 թ.-ին, իր մայր ընկերությունից՝ Nomura Holdings-ից անկախացավ 2017 թ.-ին:

Ճապոնիայում վենչուրային կապիտալի հիման վրա գործող ընկերությունները հիմնականում նախընտրում են ֆինանսավորել վաղ փուլի ընկերություններին, որոնք գործունեություն են ծավալում SS, արհեստական ինտելեկտի, ռոբոտաշինության, էլեկտրոնային առևտրի ոլորտներում: Ֆինանսավորելով վաղ փուլի նորաստեղծ կազմակերպություններին՝ վենչուրային կապիտալի ձեռնարկությունները նպատակ ունեն դրանք դարձնելու տնտեսության համար զգալի աճ ապահովող, ինչպես նաև հասարակության համար արժեք ստեղծող ընկերություններ:

Ճապոնական վենչուրային կապիտալի շուկան համեմատաբար ավելի փոքր է, քան ԱՄՆ-ի վենչուրային կապիտալի շուկան: Այնուամենայնիվ, հաշվի առնելով, որ Ճապոնիայում ստարտափների էկոհամակարգը աճում է մեծ արագությամբ, վերջին տարիներին նկատվել է ընդհանուր աճի միտում: Ներդրումներ կատարող ընկերությունները մեծապես ներգրավված են նոր ձևավորվող ընկերություններում, քանի որ նպատակ ունեն բացահայտելու բիզնես հնարավորությունները, որոնք ապահովում են տնտեսական մեծ ակտիվություն և նորարարություններ, որոնք բարելավում են հասարակության կյանքը:

Քանի որ ներդրողների թիվը մեծանում է, իսկ ճապոնական նորաստեղծ էկոհամակարգը հասունանում է, ակնկալվում է, որ ճապոնական վենչուրային շուկան կշարունակի ընդլայնվել և զարգանալ: Եվ դա մեծ ազդեցություն կունենա վենչուրային կապիտալի համաշխարհային արդյունաբերության վրա, քանի որ

ենթադրվում է, որ ճապոնական ընկերությունները ներդրումներ կանեն միջազգային ստարտափներում՝ դրանով էլ տարածելով իրենց դերն ու ազդեցությունը ամբողջ աշխարհում:

Չինաստան: Չինաստանում տեխնոլոգիաները և նորարարությունները շուկայի մեծ մասի հիմնական գրավչությունն են: Չինաստանում արհեստական ինտելեկտի, ներառյալ գեներատիվ արհեստական ինտելեկտի զգալի ներդրումները խթանում են նորաստեղծ ձեռնարկությունների զգալի աճը, հատկապես կարևոր ոլորտներում: Այս աճը մեծապես պայմանավորված է կառավարության բարենպաստ քաղաքականությամբ. կառավարության ուժեղ ներգրավվածությունը վստահություն է ներշնչում վենչուրային կապիտալ ներդրողների մեջ: Էլեկտրական մեքենաների ոլորտը զգալի ակտիվություն է գրանցել վերջին տասնութ ամիսների ընթացքում: Այս ընկերություններից շատերը, հատկապես EV OEM-ը, այժմ ձգտում են զարգանալ ինչպես տարածաշրջանային, այնպես էլ միջազգային մակարդակով:

Չինաստանը ահռելի մեծ ներուժ ունի և խթանում է ժամանակակից տեխնոլոգիաների, կրիպտո արժույթների և բլոկչեյնի, արհեստական ինտելեկտի և էլեկտրոնային առևտրի ոլորտներում գործունեություն սկսող և իրականացնող կազմակերպություններին, որոնք մի կողմից հնարավորություն են տալիս զարգացնելու երկրի տնտեսությունը, մյուս կողմից էլ իրենց արտադրանքի միջոցով լուծում են մարդկանց առօրյա խնդիրները:

Գերմանիա: Այսօր կորպորատիվ վենչուրային գործունեությունը կայացած ընկերությունների գործունեության իրականացման ռազմավարական կարևոր բաղադրիչն է: Նորարարության ներքին խոչընդոտները հաղթահարելու համար ընկերությունները կիրառում են տարբեր կազմակերպչական քայլեր՝ նորամուծությունները կլանելու համար: Մյուս կողմից, սկսնակ ձեռնարկությունները պահանջում են ֆինանսավորում՝ իրենց գաղափարը կյանքի կոչելու համար: Գերմանիայում կորպորատիվ վենչուրինգը կորպորացիաների կարողությունները, ռեսուրսներն ու կարիքները համատեղելու և փոխադարձ օգուտներ ստանալու հիանալի միջոց է սկսնակ ձեռնարկությունների համար: Կորպորատիվ վենչուրային կորպորացիաների միջոցով հնարավոր է ուսումնասիրել շուկան գալիք նորամուծությունների և տեխնոլոգիաների զարգացման համար: Գերմանական մասնավոր կապիտալի և վենչուրային կապիտալի ասոցիացիայի տվյալների համաձայն՝ Գերմանիան վերջին տարիներին ունեցել է վենչուրային կապիտալի կայուն ներգրավվածություն: Տեխնոլոգիաները համարվում են առաջատար ոլորտ՝ վենչուրային ձեռնարկություններից ֆինանսավորում ստանալու համար: Էլեկտրոնային առևտուրը մնում է ներդրումների համար կենսունակ ոլորտ, չնայած նրա նկատմամբ հետաքրքրությունը նվազում է:

Գերմանիայում վենչուրային ձեռնարկատիրությունը բավականին զարգացած է և կարողանում է ֆինանսավորել ոչ միայն հայրենական, այլ նաև օտարերկրյա և միջազգային կազմակերպություններին: Օրինակ՝ Heartcore վենչուրային հիմնադրամը ֆինանսավորել է Quesma և Nūmi ընկերություններին, որոնցից

առաջինը գործունեություն է իրականացնում SS ոլորտում, իսկ երկրորդը մասնագիտացած է սննդի ոլորտում: Այս երկու կազմակերպություններն էլ օտարերկրյա կազմակերպություններ են՝ լեհական և ֆրանսիական կապիտալով, ինչը փաստում է, որ Heartcore ընկերությունը ֆինանսավորում է ոչ միայն հայրենական, այլ նաև օտարերկրյա կազմակերպություններին:

Գերմանական վենչուրային կազմակերպությունները ֆինանսավորում իրականացնելու համար հիմնական ուշադրությունը դարձնում են այն ընկերություններին, որոնք գործունեություն իրականացնում են ֆինանսական, ապահովագրական, SS, էլեկտրոնային առևտրի, ինչպես նաև սննդի ոլորտներում և կարող են լինել թե՛ վաղ փուլի, և թե՛ արդեն զարգացած և կայացած ընկերություններ:

Ֆրանսիա: Ֆրանսիայում վենչուրային կապիտալի ամենաակտիվ ընկերություններն են Idinvest Partners-ը, Partech Ventures-ը, Serena Capital-ը և Ventech-ը: Այս կազմակերպությունները երկար տարիներ եղել են ֆրանսիական ստարտափ էկոհամակարգի հիմնական խաղացողներ, որոնք միլիոնավոր եվրոներ են ներդրել բազմաթիվ ոլորտների հեռանկարային ընկերություններում: Կան տասնյակ ավելի փոքր վենչուրային ընկերություններ, որոնք մասնագիտացած են կոնկրետ ոլորտներում կամ տարածաշրջաններում: Օրինակ՝ Airlight Ventures-ը, որը կենտրոնանում է անօդաչու թռչող սարքերի և այլ օդային տեխնոլոգիաների վրա, և Kima Ventures-ը, որը մասնագիտացած է ֆրանսիական տեխնոլոգիական լանդշաֆտում հիմնական ներդրումների մեջ:

Ընդհանուր առմամբ, Ֆրանսիան վերջին տասնամյակի ընթացքում դարձել է վենչուրային կապիտալի գործունեության հիմնական կենտրոն, որտեղ բազմաթիվ ընկերություններ ամեն տարի զգալի գումարներ են ներդնում խոստումնալից ստարտափներում: Աճող ներդրումներով ձեռներեցների համար հսկայական ներուժ է հայտնվում հաջողության հասնելու համար՝ օգտագործելով այդ կազմակերպությունների տրամադրած ռեսուրսները: Հետևաբար, զարմանալի չէ, որ վենչուրային կապիտալիստները շարունակում են կենտրոնանալ Ֆրանսիայում, քանի որ ավելի շատ բիզնեսներ ստեղծվում և փնտրում են ֆինանսավորում Ֆրանսիայում [5]:

Հայաստան: Վենչուրային կապիտալի ոլորտն առանցքային նշանակություն ունի ՀՀ ստարտափ ընկերությունների զարգացման, նրանց միջազգային շուկա մուտք գործելու և արագ աճի առումով: Հայաստանում վենչուրային կապիտալի ոլորտը դեռ զարգացման փուլում է, և չնայած որոշակի առաջընթացին՝ ոլորտում առկա են լուրջ խնդիրներ՝ երկրի ներդրումային գրավչության պակասը, պետության անբավարար օժանդակությունը, միջազգային վենչուրային ներդրողների շրջանում հայկական ստարտափ ընկերությունների ոչ բավարար հեղինակությունը:

ՀՀ-ում գործում է «Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամը», որն աջակցում է ՀՀ-ում տեղեկատվական և հեռահաղորդակցության տեխնոլոգիաների ոլորտի աճին և տրամադրում է բիզնես խորհրդատվություններ, իրականացնում կադրերի պատրաստում, տրամադրում գործունեության համար տարածք-

ներ ամսական վարձավճարների հիման վրա: Մակայն, ի տարբերություն վենչուրային հիմնադրամների, «Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամը» չի տրամադրում ֆինանսական աջակցություն:

ՀՀ-ում գործող վենչուրային հայկական հիմնադրամների թիվը սակավ է, ինչը խոսում է ՀՀ-ում վենչուրային էկոհամակարգի նոր ձևավորման մասին: Այդ մասին փաստում է նաև «Վենչուրային գրավչության ինդեքսը», համաձայն որի՝ ՀՀ-ն զբաղեցնում է 99-րդ տեղը 125 երկրի շարքում (28.1 միավոր՝ 100-ից): Այս ինդեքսը հաշվարկելիս դիտարկվել են հետևյալ ցուցանիշները՝ տնտեսական ակտիվություն, կապիտալի շուկա, հարկային համակարգ, ներդրողների իրավունքների պաշտպանություն և գործարար մշակույթ [6]:

ՀՀ վենչուրային ֆոնդերի առանձնահատուկ կողմերը.

1. Granatus Ventures – Հիմնադրվել է 2013 թ.-ին: Համարվում է միկրովենչուրային ֆոնդ, այսինքն դրա մեծությունը չի գերազանցում 100 մլն դոլարը, և ընկերությունը ֆինանսավորում է հիմնականում զարգացման վաղ փուլում գտնվող ընկերություններին: Ընկերության ներդրման միջին չափը կազմում է 250000-300000 դոլար:

2. Hive Ventures – Ստեղծվել է 2014 թ.-ին: Ընկերության առաքելությունն է ոչ միայն իրականացնել վենչուրային ֆինանսավորում, այլ նաև առաջարկել մենթորության ծրագրեր՝ օգնելով ստարտափներին ընդլայնվել և դուրս գալ Միլիկոնյան հովիտ: Ընկերության ներդրման միջին չափը կազմում է 100000 դոլար և այն հիմնականում ֆինանսավորում է SS ոլորտի տարբեր ստարտափների:

3. SmartGate – Հիմնադրվել է 2017 թ.-ին: Հիմնադրամը հիմնականում ֆինանսավորում է արհեստական բանականության և կենսատեխնոլոգիայի ոլորտներում գործունեություն իրականացնող, նախասաղմնային փուլում գտնվող ստարտափներին: Հիմնադրամը համագործակցում է Հարավարևելյան Եվրոպայի եվրոպական հիմնադրամի (EFSE) հետ: Համագործակցության նպատակն է ֆինանսավորման նոր մոդելների մշակումը:

Վենչուրային կապիտալի ոլորտի խթանման համար Հայաստանում պետության կողմից նախատեսվող կարևոր և հիմնական նախաձեռնություններից է Ազգային վենչուրային ֆոնդի (ԱՎՖ) ստեղծումը, որի նպատակն է մեղմել ստարտափ ընկերությունների ֆինանսավորման ոլորտում առկա խնդիրները և բարելավել երկրի էկոհամակարգը, խթանել ոչ միայն հայաստանյան ստարտափ ընկերությունների ընդլայնումը, այլև աջակցել տարածաշրջանային ստարտափ ընկերություններին, որոնք հետաքրքրված կլինեն գործելու Հայաստանում:

Չնայած առաջընթացին, ոլորտում առկա են բազմաթիվ խնդիրներ, որոնք հրատապ լուծում են պահանջում, մասնավորապես ներդրումային շահութաբերություն արձանագրող փուլերում վենչուրային կապիտալի ներդրման համար ոչ բավարար ֆինանսական միջոցները, վենչուրային կապիտալի միջազգային խոշոր ֆոնդերի բացակայությունը ՀՀ-ում և հայկական ստարտափ ընկերությունների ոչ բարձր հեղինակությունն այդ ֆոնդերի շրջանում, ինչը բարդություններ է ստեղծում վենչուրային կապիտալի միջազգային ֆոնդերից ներդրումներ ներգրա-

վելու հարցում: Այս խնդիրների լուծման ուղղությամբ քայլերը կնպաստեն ՀՀ-ում վենչուրային կապիտալի ոլորտի զարգացմանը, ինչը կխթանի տնտեսության աճը երկրում և ֆինանսական օգուտներից բացի՝ կապահովի նաև ոչ ֆինանսական օգուտներ, մասնավորապես հայկական ստարտափ էկոհամակարգի զարգացում, նոր աշխատատեղերի ստեղծում, արտահանման ծավալների ավելացում, օտարերկրյա աշխատուժի ներհոսք, հայրենադարձության խթանում և այլ հնարավոր օգուտներ:

Եզրակացություն

Այսպիսով, ինչպես ցույց է տալիս վերլուծությունը՝ տարբեր երկրներում վենչուրային ֆինանսավորումն ունի տարբեր առանձնահատկություններ, որոնք մեծապես ածանցվում են տվյալ երկրի տնտեսության զարգացվածության մակարդակից: Այնուամենայնիվ, հարկ է նշել, որ յուրաքանչյուր երկրի զարգացման շարժիչ ուժերից են նորարարական նախաձեռնությունները կամ ստարտափները: Հետևաբար, այդ ստարտափները կյանքի կոչելու համար անհրաժեշտ է վենչուրային հիմնադրամների կողմից իրականացնել ֆինանսավորում, որը կխթանի յուրաքանչյուր ստարտափի գործունեությունը: Առաջատար երկրներում, ինչպիսիք են՝ ԱՄՆ-ն, եվրոպական և աֆիական երկրները, վենչուրային համակարգը բավականին զարգացած է: Իսկ Հայաստանում կարող ենք ասել, որ վենչուրային համակարգը վերջին տարիներին է սկսել զարգանալ, ինչը պայմանավորված է տեխնոլոգիական ստարտափների ստեղծումով: ՀՀ Կառավարությունը նպատակ ունի ՀՀ-ն դարձնել տեխնոլոգիական երկիր, և այս նպատակով վերջին տարիներին ստեղծվել են վենչուրային ֆոնդեր, ինչը ՀՀ տնտեսական կյանքի համար մեծ առաջընթաց է: Չնայած առաջընթացին՝ ՀՀ վենչուրային էկոհամակարգում առկա են թերություններ, որոնք հնարավորինս շուտ շտկելու դեպքում կարելի է ՀՀ-ն դարձնել տեխնոլոգիապես զարգացած երկիր:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. file:///C:/Users/Zmix/Downloads/osobennosti-venchurnogo-finansirovaniya-v-ssha.pdf
2. https://vc-mapping.gilion.com/venture-capital-firms/united-states?bbfb7c17_page=2
3. <https://www.bipventures.vc/news/2024-venture-capital-investment-trends-and-impacts-report>
4. file:///C:/Users/Zmix/Downloads/osobennosti-venchurnogo-kapitala-v-yaponii.pdf
5. <https://vc-mapping.gilion.com/venture-capital-firms/france#:~:text=>
6. <https://blog.iese.edu/vcpeindex/ranking/>

ОСОБЕННОСТИ ВЕНЧУРНОГО ФИНАНСИРОВАНИЯ ЗА РУБЕЖОМ И В АРМЕНИИ

Арутюнян Лусине

Фонд "ВГУ",

"Менеджмент", 4-й курс

Научный руководитель:

кандидат экономических наук, доцент Н. Барсегян

Резюме

Ключевые слова: *венчурное финансирование, венчурные фонды, инвестиции, инновационные инициативы, среда стартапов*

Проведённый анализ показал, что венчурное финансирование в различных странах имеет свои особенности, которые тесно связаны с уровнем экономического развития. При этом важную роль в развитии национальных экономик играют инновационные инициативы и стартапы. Их успешное становление и развитие во многом зависит от финансирования со стороны венчурных фондов, обеспечивающих необходимые ресурсы для реализации стартап-проектов. В развитых странах, таких как США, европейские и азиатские страны, венчурная система достаточно развита.

VENTURE FINANCING FEATURES ABROAD AND IN ARMENIA

Harutyunyan Lusine

"VSU" Foundation,

"Management" 4th Year

Academic Supervisor: N. Barseghyan,

Candidate of Economic Sciences, Associate Professor

Summary

Key words: *venture financing, venture funds, investments, innovative initiatives, startup environment*

The conducted analysis showed that venture financing in different countries has its own distinctive features, which are closely related to the level of economic development. At the same time, innovative initiatives and startups play a significant role in the development of national economies. Their successful establishment and growth largely depend on funding from venture capital funds, which provide the necessary resources for the implementation and scaling of startup projects.

Մինայան Լուսինե

Գործիսի պետական համալսարան,
«Տնտեսագիտություն», 3-րդ կուրս
Գիտական ղեկավար՝ դոցենտ Մ. Առուստամյան

Հանգուցային բառեր գործազրկություն, նվազում, աճ, զբաղվածություն, աշխատանքի պահանջարկ և առաջարկ

Գործազրկությունը տնտեսական հիմնախնդիր է, որը բնորոշ է յուրաքանչյուր երկրի: Այն արտահայտում է աշխատանք չունեցող, բայց ակտիվորեն աշխատանք փնտրող անձանց թիվը: Գործազրկության մակարդակը կարող է փոխվել տարբեր գործոնների ազդեցությամբ, ինչպիսիք են տնտեսական աճը, արտադրության զարգացումը, տեխնոլոգիական փոփոխությունները և պետական քաղաքականությունը:

Հայաստանում գործազրկության մակարդակը վերջին տարիներին դինամիկ փոփոխություններ է կրել: Տարբեր մարզերում և Երևանում գործազրկության աստիճանը տարբեր է, ինչը պայմանավորված է ինչպես տնտեսական հնարավորություններով, այնպես էլ աշխատանքի առաջարկի և պահանջարկի կառուցվածքային անհամապատասխանությամբ: 2023-2024 թվականների ընթացքում գործազրկության ցուցանիշները ցույց են տալիս ընդհանուր նվազման միտում, ինչը վկայում է պետական և մասնավոր հատվածների ջանքերի մասին՝ ուղղված աշխատաշուկայի բարելավմանը:

Գործազրկությունը տնտեսական երևույթ է, երբ տնտեսապես ակտիվ բնակչության մի մասը կազմում են գործազուրկները: Գործազուրկ են համարվում բոլոր նրանք, ովքեր չեն աշխատում, զբաղվածությամբ պայմանավորված որևէ եկամուտ չեն ստանում, բայց ակտիվորեն փնտրում են աշխատանք:

Քանի որ աշխատանքի շուկաները շատ դինամիկ են, ամեն մի տվյալ պահից հետո գործազուրկի կարգավիճակ ունեցող մարդը կարող է գտնել աշխատանք, իսկ զբաղվածը՝ կորցնել այն, ոչ ակտիվ բնակչության կազմում գտնվողը կորոշի աշխատանք փնտրել և այլն: Աշխատանքի շուկայում այդ մշտական հոսքերը նպաստում են նրան, որ փոփոխվում են ինչպես զբաղվածների, այնպես էլ գործազուրկների թիվը [2, 154]:

Կարելի է առանձնացնել գործազրկության առաջացման մի քանի հայտնի տեսակետներ.

1. Մալթուսի ավելցուկային բնակչության տեսությունը,
2. Մարքսի հարաբերական գերբնակչության տեսությունը,
3. Տեխնիկական առաջադիմությամբ պայմանավորված գործազրկություն կամ տեխնոլոգիական գործազրկություն,
4. Ամբողջական կամ շուկայական պահանջարկի անբավարարվածությամբ պայմանավորված գործազրկություն կամ քեյնսյան տեսություն:

Թ. Մայթուսը, XIX դարի սկզբներին ուսումնասիրելով Հյուսիսային Ամերիկայի բնակչության և նյութական բարիքների արտադրության աճի տեմպերի փոխհարաբերությունները, հանգեց մի հետևության. բնակչությունն աճում է ավելի արագ տեմպերով, քան նյութական բարիքների արտադրությունը: Հետևաբար, անխուսափելի է, որ բնակչության մի մասը գրկվի աշխատանք ունենալուց և զբաղված բնակչության համեմատ դառնա ավելցուկ: Նա Հյուսիսային Ամերիկայի բնակչության աճը դիտում էր որպես բնական աճ և այդ օրինաչափությունը տարածում բոլոր երկրների վրա՝ որպես ընդհանուր երևույթ:

Կ. Մարքսը համաձայն չէր Մայթուսի հետ. խիստ քննադատելով նրա տեսակետը՝ գտնում էր, որ գործազրկության պատճառը պետք է փնտրել կապիտալիստական արտադրանեղանակի էության մեջ: Նա հիմնավորում էր, որ կապիտալիստները ձգտում են ստանալ առավելագույն շահույթ, ըստ այդմ՝ մեծացնում են կապիտալի չափերը: Կապիտալիստները շատ շահույթ ստանալու նպատակով շարունակ կապիտալ են կուտակում և ընդլայնում արտադրությունը: Եվ թվում է՝ գործազրկությունը պետք է կրճատվի, սակայն տեղի է ունենում հակառակ երևույթը: Մարքսը դա պատճառաբանել է նրանով, որ արտադրության ընդլայնման համար կիրառվող նոր կապիտալը բոլորովին այլ հարաբերությամբ է բաժանվում արտադրության միջոցների և աշխատուժի գնման ծախսերի: Իրականում նույն մեծության նոր կապիտալից հարաբերականորեն ավելի փոքր մասն է օգտագործվում նոր աշխատուժ գնելու համար, ուրեմն աշխատուժի պահանջարկը ֆիրմաների կողմից հարաբերականորեն կրճատվում է, և մեծանում է գործազրկությունը:

Գործազրկության առաջացման տեխնոլոգիական տեսությունը պայմանավորվում է տեխնիկայի և տեխնոլոգիայի զարգացման ու կատարելագործման գործընթացներով: Ըստ էության, դրանք բնական գործընթացներ են, որոնցից խուսափել չի կարող և ոչ մի երկիր կամ տնտեսական համակարգ: Երբ գիտության ու տեխնիկայի զարգացումը հասնում է որոշակի աստիճանի, անպայման առաջանում է գործազրկություն, հետևաբար պետք է ընդունել այդ փաստը և փորձել հարմարվել ձևավորված նոր իրավիճակին:

XX դարի կեսերին, հատկապես ամերիկյան մեծ ճգնաժամի ազդեցությունը նկատի ունենալով, Քեյնսն առաջարկեց գործազրկության առաջացման նոր տեսակետ՝ հիմքում դնելով շուկայական կամ ամբողջական պահանջարկի փոփոխության երևույթը: Նա ևս գործազրկությունը համարում էր անխուսափելի երևույթ, որը, սակայն, կարելի է կրճատել: Ըստ նրա՝ շուկայական ամբողջական պահանջարկը կարելի է մեծացնել՝ ընդլայնելով արտադրությունը և նոր աշխատատեղեր ստեղծելով: Դրա համար նախ պետք է խթանել, ապահովել ընդհանուր կամ ամբողջական պահանջարկի աճ, որը ավելի արդյունավետ կարելի է կատարել պետության աջակցության և մասնակցության դեպքում [1, 611-612]:

Գործազրկությունը բացասաբար է ազդում երկրի տնտեսության վրա, քանի որ ոչ միայն նվազում է աշխատանքի արդյունավետությունը, այլև բարձրանում է

սոցիալական խնդիրների, օրինակ՝ աղքատության մակարդակը: Գործազրկության բարձր մակարդակը կարող է հանգեցնել հասարակական լարվածության և սոցիալական անհավասարության, քանի որ մարդիկ չունեն բավարար միջոցներ՝ պահպանելու իրենց կենսամակարդակը: Բացի այդ, բարձր գործազրկությունը կրճատում է հարկերի հավաքագրումը, ինչը կարող է վնաս հասցնել պետական բյուջեին:

Աղյուսակ 1.

**Աշխատանք փնտրողների (պաշտոնապես գրանցված) թվաքանակն՝
ըստ ՀՀ մարզերի և ք. Երևանի, մարդ [3]**

	2023 թ.	2024 թ.
Ընդամենը	64190	56575
ք. Երևան	6165	4615
Արագածոտն	5688	5508
Արարատ	9453	9993
Արմավիր	6307	5413
Գեղարքունիք	4445	3874
Լոռի	7351	6381
Կոտայք	8777	8937
Շիրակ	7371	6114
Սյունիք	2517	1963
Վայոցձոր	1364	821
Տավուշ	4752	2956

Աղյուսակ 1-ից երևում է, որ 2023 թվականին պաշտոնապես գրանցված աշխատանք փնտրողների ընդհանուր թիվը եղել է 64190, իսկ 2024 թ. այն նվազել է՝ հասնելով 56575-ի, ինչը նշանակում է 7615 մարդով նվազել է: Սա կարող է վկայել այն մասին, որ կամ ավելի շատ մարդիկ են գտել աշխատանք, կամ աշխատանք փնտրողների պաշտոնական գրանցումը նվազել է:

Աշխատանք փնտրողների թիվը նվազել է գրեթե բոլոր մարզերում, ինչը դրական միտում է: Մասնավորապես՝ Երևանում՝ 1550, Արմավիրում՝ 894, Գեղարքունիքում՝ 571, Լոռիում՝ 970, Շիրակում՝ 1257, Սյունիքում՝ 554, Վայոցձորում՝ 543, Տավուշում՝ 1796 մարդ: Այս մարզերում նվազումը կարող է պայմանավորված լինել աշխատաշուկայի որոշակի վերականգնմամբ, պետության կամ մասնավոր հատվածի կողմից իրականացված ծրագրերով կամ մարդկանց արտագաղթով:

Արարատի մարզում աշխատանք փնտրողների թիվը աճել է 540-ով, իսկ Կոտայքում՝ 160-ով: Սա կարող է վկայել այդ մարզերում աշխատատեղերի պակասի կամ տնտեսության դանդաղ վերականգնման մասին:

Աղյուսակ 2. Գործազուրկները (պաշտոնապես գրանցված)¹
ըստ ՀՀ մարզերի և ք. Երևանի, մարդ [3]

	2023 թ.	2024 թ.
Ընդամենը	46019	38804
ք. Երևան	4361	3559
Արագածոտն	2998	2961
Արարատ	4941	4873
Արմավիր	4087	3268
Գեղարքունիք	3660	3225
Լոռի	6718	5749
Կոտայք	5734	5640
Շիրակ	6007	4439
Սյունիք	2195	1709
Վայոցձոր	1091	616
Տավուշ	4227	2765

Աղյուսակ 2-ում ներկայացված տվյալները ցույց են տալիս աշխատանքային գործունեության վիճակը 2023-2024 թվականների ընթացքում՝ ըստ գործազուրկների: 2024 թվականին, համեմատած 2023-ի հետ, գրանցվել է ակնհայտ դրական միտում՝ գործազրկության մակարդակի նվազում տարբեր մարզերում: Երբ նայում ենք երկրի մասշտաբով, երևում է, որ գրեթե բոլոր մարզերում ու քաղաքներում նկատվում է մի փոքրիկ, բայց կարևորվող նվազում: Սա կարող է վկայել այն մասին, որ տարբեր ծրագրերի կամ տնտեսության բարելավման հետևանքով ստեղծվել են նոր աշխատատեղեր, ու մարդկանց գործազրկությունը նվազել է:

Երևանը՝ որպես գլխավոր քաղաք, շարունակում է գրանցել մեծ թվով գործազուրկներ, սակայն նույնիսկ այստեղ նկատվում է դրական միտում, ինչը կարող է կապված լինել տնտեսական զարգացման հետ:

Սա ցույց է տալիս, որ տնտեսական իրավիճակը Հայաստանում որոշակի բարելավվում է, և մարդկանց հնարավորությունները ընդլայնվում են, բայց դեռ պետք է տարվեն աշխատաշուկայի հետագա բարեփոխումներ, ու ուշադրություն դարձվի մարզային զարգացումներին:

Այսպիսով՝ հաշվի առնելով գործազրկության մակարդակի փոփոխությունները և դրա հիմնական պատճառները, կարելի է առաջարկել մի քանի լուծումներ, որոնք կօգնեն նվազեցնել գործազրկությունը և բարելավել աշխատաշուկայի վիճակը Հայաստանում:

- Կենտրոնացնել ներդրումները մարզերում՝ ստեղծելով նոր աշխատատեղեր:
- Զարգացնել գյուղատնտեսական և արտադրական ձեռնարկությունները, հատկապես մարզերում, որտեղ աշխատատեղերի պակաս կա:
- Խթանել տուրիզմը որպես աշխատատեղեր ստեղծող ոլորտ, հատկապես Սյունիքում, Վայոց Ձորում և Տավուշում:

- Կազմակերպել անվճար կամ մատչելի մասնագիտական վերապատրաստման ծրագրեր գործազուրկների համար:
- Ներդնել ճկուն կրթական համակարգ, որը կապահովի համապատասխան հմտություններ՝ աշխատաշուկայի պահանջներին համահունչ:
- Աջակցել երիտասարդներին ու նորավարտներին՝ փորձաշրջաններով և պրակտիկաներով ապահովելու միջոցով:
- Նվազեցնել հարկային բեռը նորաստեղծ ՓՄՁ-ների համար:
- Մուբսիդավորել ձեռներեցության ծրագրերը, որպեսզի մարդիկ հնարավորություն ունենան սկսելու իրենց սեփական գործը:
- Ապահովել փոքր բիզնեսների մուտքը արտասահմանյան շուկաներ՝ արտահանման հնարավորությունները մեծացնելու համար:
- Աջակցել կանանց՝ ստեղծելով հեռավար կամ ճկուն աշխատանքային հնարավորություններ:
- Նպաստել երիտասարդների զբաղվածությանը՝ տրամադրելով դրամաշնորհներ, կրթաթոշակներ և պրակտիկաներ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Կիրակոսյան Գ. Ե. և Խլղաթյան Ի. Ե., Տնտեսագիտության տեսություն, Երևան, «Տնտեսագետ» հրատարակչություն, 2009, 759 էջ:
2. Համբարձումյան Ա. Հ. , Մարդկային ռեսուրսներ և աշխատանքի էկոնոմիկա, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2016, 278 էջ:
3. Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2024 թվականի հունվար-դեկտեմբերին, Երևան, 2025:

БЕЗРАБОТИЦА В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

Минасян Лусине

Горисский государственный университет,

«Экономика», 3-й курс

Научный руководитель:

доцент, М. Арустамян

Резюме

Ключевые слова: *безработица, экономика Армении, рынок труда, экономический рост, государственная поддержка, экономическая стабильность*

Безработица остается одной из важных составляющих экономической системы Армении. Анализ уровня безработицы за 2023-2024 годы показывает тенденцию к её снижению, что может быть обусловлено экономическим ростом, реализацией программ по улучшению функционирования рынка труда, а также мерами государственной поддержки. В целом снижение уровня безработицы является положительной тенденцией. Вместе с тем дальнейшие реформы и меры, направленные на развитие рынка труда, будут продолжать играть важную роль в обеспечении экономической стабильности Армении.

UNEMPLOYMENT IN THE REPUBLIC OF ARMENIA

Minasyan Lusine

Goris State University,

"Economics", 3rd Year

Academic Supervisor: M. Arustamyan,

Associate Professor

Summary

Key words: *unemployment, Armenia's economy, labor market, economic growth, government support, economic stability*

Unemployment remains one of the important components of the economic system of Armenian. An analysis of the unemployment rate for 2023-2024 indicates a downward trend, which may be attributed to economic growth, the implementation of programs aimed at improving the functioning of the labor market, as well as government support measures. Overall, the decline in the unemployment rate represents a positive trend. At the same time, further reforms and measures aimed at developing the labor market will continue to play an important role in ensuring the economic stability of Armenia.

**ՊԵՏԱԿԱՆ ԳԼՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԹՎԱՅՆԱՑՄԱՆ ԵՎ
ԱՐՀԵՍԱԿԱՆ ԲԱՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ (ԱԲ) ՆԵՐՈՐՄԱՆ
ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ**

Մկրտչյան Մարտա

«ՎՊՀ» հիմնադրամ,

«Հանրային կառավարում», 1-ին կուրս

Գիտական ղեկավար՝ տ. գ. թ., դոցենտ Ն. Բարսեղյան

***Հանգուցային բառեր.** պետական գնումներ, թվայնացում, արհեստական բանականություն (ԱԲ), թափանցիկություն, կոռուպցիոն ռիսկեր, տվյալահեն կառավարում, կիրճանվտանգություն, օպտիմալացում*

Արհեստական բանականությունը (ԱԲ) արդի տեխնոլոգիական առաջընթացի առանցքային գործոններից մեկն է՝ փոխակերպելով գլոբալ քաղաքական, տնտեսական և սոցիալական համակարգերը: Այն սահմանվում է որպես համակարգչային համակարգերի կարողություն՝ լուծելու այնպիսի խնդիրներ, որոնք սովորաբար պահանջում են մարդկային բանականություն, ներառյալ վերլուծություն, որոշումների ընդունում և կանխատեսում: ԱԲ-ի ներդրումը տարբեր ոլորտներում, այդ թվում՝ պետական կառավարման համակարգում, հնարավորություն է տալիս բարձրացնել արդյունավետությունը, թափանցիկությունը և հաշվետվողականությունը:

Վերջին տարիներին բազմաթիվ երկրներ որդեգրել են ԱԲ-ի վրա հիմնված նորարարական լուծումներ՝ պետական կառավարման գործընթացները թվայնացնելու և բարելավելու նպատակով: ԱԲ-ի կիրառությունը հանրային կառավարման ոլորտում կարող է նպաստել կոռուպցիոն ռիսկերի նվազեցմանը, պետական գնումների գործընթացի օպտիմալացմանը և վարչական բյուրոկրատիայի կրճատմանը: Այս համատեքստում կարևոր է ուսումնասիրել, թե ինչպիսի մարտահրավերներ և հնարավորություններ կարող են առաջանալ ԱԲ-ի ներգրավմամբ՝ հատկապես Հայաստանի պետական գնումների համակարգում:

Աշխատանքի նպատակն է ուսումնասիրել, թե ինչպես կարելի է պետական գնումների համակարգում ներառել թվայնացման և արհեստական բանականության (ԱԲ) նորարարական լուծումները՝ բարձրացնելու համար համակարգի թափանցիկությունը, արդյունավետությունը և մրցունակությունը, աջակցել պետական ֆինանսների խնայողական ու ռացիոնալ օգտագործմանը:

Պետական գնումների համակարգն առանցքային դերակատարություն և նշանակություն ունի յուրաքանչյուր պետության և շուկայական տնտեսության համակարգում: Պետության կողմից իրականացվող գնումների արդյունավետ, հուսալի և մատչելի համակարգի ձևավորումը, ինչը երաշխավորում է հանրային միջոցների առավել արդյունավետ և խնայողաբար օգտագործում, բոլոր ժամանակների և պետությունների տնտեսական կայունության ապահովման գրավականներից է: Պետության գնումների համակարգի գերակա նպատակը պետական

միջոցների արդյունավետ օգտագործումն է՝ ապահովելով գնի և որակի համաչափ հարաբերակցությունը: Մինևույն ժամանակ անհրաժեշտ է հետևել Եվրոպական միության (ԵՄ) պահանջներին, ինչպես նաև ազգային օրենսդրությանը և քաղաքականությանը: Արդյունավետության չափումը նպատակ ունի պատասխանել հիմնարար հարցին՝ արդյո՞ք գնումների համակարգը և գործարքները իրականացվում են սահմանված հիմնական նպատակներին համապատասխան: Մի շարք հեղինակներ առաջարկում են էլեկտրոնային գնումների համակարգի արդյունավետության բարձրացման տարբեր մոդելներ, սակայն գրեթե բոլորը նշում են, որ գնման գործընթացը պետք է կազմակերպվի միասնական կանոններով՝ հիմնվելով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական սկզբունքների վրա: Այս սկզբունքների պահպանմամբ ապահովվում է ավելի արդյունավետ, հաշվետու և վստահելի պետական գնումների համակարգ:

ՀՀ-ում պետական գնումների համակարգը տնտեսական քաղաքականության կարևորագույն բաղադրիչներից մեկն է, որը նպատակ ունի ապահովել պետական բյուջեի ռացիոնալ կառավարումը, խթանել մրցակցային շուկայի զարգացումը և նվազեցնել կոռուպցիոն ռիսկերը: Համակարգի գործունեությունն իրականացվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի կարգավորումների շրջանակում, որը սահմանում է պետական միջոցների օգտագործման օրինական, թափանցիկ և հաշվետվողական մեխանիզմներ:

ՀՀ պետական գնումների գործընթացը կազմակերպվում է էլեկտրոնային հարթակի միջոցով, ինչը հնարավորություն է տալիս ապահովել մատակարարների համար հավասար հնարավորություններ, ինչպես նաև բարձրացնել գնումների մրցակցային մակարդակը: Գործող իրավական կարգավորումները ներառում են գնումների տարբեր մեթոդներ, ինչպիսիք են՝ բաց մրցույթը, հրատապ գնումը, մեկ անձից գնումը, ինչպես նաև պայմանագրերի կատարման նկատմամբ վերահսկողության մեխանիզմները:

ՀՀ պետական գնումների համակարգում շարունակաբար իրականացվել և իրականացվում են մի շարք բարեփոխումներ, ներդրվել է նաև գնումների էլեկտրոնային համակարգ, սակայն, այնուամենայնիվ, պետք է նշել, որ պետական գնումների համակարգում դեռևս աչքի են ընկնում այնպիսի թերություններ, ինչպիսիք են թափանցիկության, հրապարակայնության և մրցակցության ցածր մակարդակը, իսկ գնումների էլեկտրոնային համակարգը դեռևս օգտատերերի համար հանրաճանաչ չէ, խրթին է և դժվարամատչելի:

ՀՀ պետական գնումների համակարգը ներդրվել է դեռևս 2000 թվականին՝ սկզբնապես հաղիսանալով որպես կենտրոնացված համակարգ: 2005 թվականին անցում է կատարվել մասնակի կենտրոնացված համակարգի: Հետագա զարգացումների շնորհիվ՝ 2011 թվականին, գնումների պետական համակարգն ամբողջությամբ ապակենտրոնացվել է: Գնումների ոլորտի ռիսկերը նվազեցնելու նպատակով թե՛ ներպետական օրենսդրությունը, թե՛ գնումները կարգավորող միջազգային պայմանագրերը, վեր հանելով պրակտիկայի բացերը, մշտապես կատարելագործվում են: ՀՀ պետական գնումների համակարգի ներդրման պահից «Գնումների մասին» օրենքը փոփոխվել է չորս անգամ, իսկ 2017 թվականի ապրիլի 25-ից

ուժի մեջ մտած և այս պահին գործող օրենքում մինչ օրս շուրջ վեց լրացումներ և փոփոխություններ են կատարվել: Էլեկտրոնային գնումների համակարգը գործում է Հայաստանի Հանրապետությունում 2012 թվականից, և չնայած Էլեկտրոնային գնումների համակարգը կատարելագործելուն ուղղված մի շարք բարեփոխումներին՝ որոնց հիմքում դրվել են շուկայական տնտեսվարման սկզբունքները, այնուամենայնիվ պետք է նշել, որ գնումների համակարգում դեռևս առկա է ռիսկերի բարձր մակարդակ [1]:

ՀՀ պետական գնումների համակարգում թվայնացման և ԱԲ-ի ներդրման հիմնական նպատակն է հաղթահարել այն հիմնարար խնդիրները, որոնք խոչընդոտում են համակարգի արդյունավետությանը, թափանցիկությանը և մրցակցային միջավայրի ձևավորմանը: Թվային տեխնոլոգիաների կիրառումը հնարավորություն է տալիս նվազեցնել մարդկային միջամտությունը, բարձրացնել վերահսկողության մակարդակը և ապահովել գործընթացների ավտոմատացում:

Թվայնացման շնորհիվ գնումների բոլոր փուլերը՝ հայտերի ներկայացումից մինչև պայմանագրերի կնքումը, կարող են իրականացվել առցանց հարթակներում, ինչը նվազեցնում է թղթային փաստաթղթաշրջանառության անհրաժեշտությունը, արագացնում գործընթացները և ապահովում տվյալների հասանելիություն բոլոր շահագրգիռ կողմերի համար:

ՀՀ պետական գնումների թվայնացման գործընթացում անհրաժեշտ է.

- **Արհեստական բանականության և մեքենայական ուսուցման գործիքների ներդրում**՝ տվյալների վերլուծության, կոռուպցիոն ռիսկերի նվազեցման և գնային կանխատեսումների համար:
- **Համակարգերի ամբողջական ինտեգրում**՝ ARMEPS-ի կապակցում հարկային, մաքսային և պետական ֆինանսական կառավարման համակարգերի հետ՝ տվյալների ամբողջականության ապահովման համար:
- **Բաց տվյալների քաղաքականության զարգացում**՝ գնումների տվյալները հանրային վերահսկողության ենթարկելու և անկախ վերլուծությունների համար:
- **Կադրային վերապատրաստում**՝ պետական ծառայողների համար թվային հմտությունների զարգացում՝ նորարարական գործիքների արդյունավետ կիրառման նպատակով [3]:

Արհեստական բանականության ներդրումը պետական գնումների ոլորտում նոր որակ է հաղորդում կառավարման գործընթացին՝ այն դարձնելով առավել կանխատեսելի: ԱԲ-ի ալգորիթմներն ունակ են մշակելու մեծածավալ տվյալներ, բացահայտելու գնումների գործընթացում առկա օրինաչափություններն ու հնարավոր խախտումները, ինչպես նաև օժանդակելու օպտիմալ որոշումների ընդունմանը: Այս առավելությունները համակարգում հանգեցնում են թվայնացման հետևյալ հիմնական ձեռքբերումներին.

1. Առցանց գնումների հարթակ՝ ARMEPS

ՀՀ պետական գնումների համակարգում թվայնացման առանցքային քայլերից մեկը **ARMEPS (Armenian Electronic Procurement System) հարթակի** ներդրումն էր: Այս համակարգը հնարավորություն է տալիս գնումների բոլոր փուլերն

(հայտարարում, հայտերի ընդունում, գնահատում, պայմանագրերի կնքում) իրականացնել առցանց:

- Իրականացնել մրցույթների ավտոմատացված գնահատում և որոշումների կայացում:
- Ապահովել գնումների գործընթացի թափանցիկությունը՝ մատակարարներին տրամադրելով հավասար պայմաններ:
- Կրճատել փաստաթղթաշրջանառության ծախսերը և նվազեցնել մարդկային միջամտությունը [4]:

ARMEPS համակարգը հանդես է գալիս որպես պետական գնումների հիմնական հարթակ՝ հեշտացնելով մատակարարների գրանցումը, առաջարկների ներկայացումը և գործընթացների մշտադիտարկումը: Սա նվազեցնում է վարչարարական բեռը և ապահովում ավելի բաց ու վերահսկելի համակարգ [1]:

Համակարգը գործում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի հիման վրա, որը սահմանում է պետական գնումների իրավական հիմքերը: Այն կառավարվում է Ֆինանսների նախարարության Գնումների աջակցության կենտրոնի (ԳԱԿ) կողմից:

ARMEPS-ը համահունչ է միջազգային լավագույն փորձին և Հայաստանի ստանձնած պարտավորություններին, այդ թվում՝ Առևտրի համաշխարհային կազմակերպության կառավարական գնումների համաձայնագրին (WTO GPA) [4]:

Սակայն ARMEPS-ը դեռևս ունի սահմանափակումներ և որոշակի խոչընդոտներ, օրինակ՝ համակարգը չի կիրառում արհեստական բանականության գործիքներ, չունի ամբողջական ինտեգրում ֆինանսական կառավարման համակարգերի հետ և սահմանափակ է տվյալների վերլուծության և կանխատեսման գործառնություններով:

2. Կանոնակարգային և իրավական բարեփոխումներ

Պետական գնումների թվայնացումը ուղեկցվել է նաև օրենսդրական փոփոխություններով, որոնք սահմանում են գնումների գործընթացի կանոնակարգերը, թվայնացված գործիքների կիրառության շրջանակները և թափանցիկության ապահովման մեխանիզմները: 2022 թ. -ից պետական գնումների գործընթացների մեծ մասը պետք է իրականացվի ARMEPS հարթակի միջոցով: Հաստատվել են կանոններ, որոնք պարտադրում են տվյալների հրապարակայնություն և հանրային վերահսկողություն:

3. Պետական գնումների տվյալների բաց հասանելիություն

ՀՀ-ն ձեռնամուխ է եղել **Open Data (Բաց տվյալների) քաղաքականության** խթանմանը՝ գնումների գործընթացի տվյալները հրապարակայնորեն հասանելի դարձնելու միջոցով: Այս մոտեցումը թույլ է տալիս արհեստական բանականության և տվյալների վերլուծության գործիքների կիրառման միջոցով հայտնաբերել ռիսկային գործարքներ և անկախ վերլուծաբաններին ու հասարակական կազմակերպություններին մոնիթորինգ կատարել գնումների վերաբերյալ:

Չնայած ձեռքբերումներին՝ ՀՀ պետական գնումների թվայնացումը դեռևս բախվում է մի շարք խնդիրների և մարտահրավերների, որոնք խոչընդոտում են համակարգի ամբողջական արդյունավետությունը: Դրանց թվին կարող են

դասվել տվյալների անբավարար վերլուծությունը, համակարգերի ինտեգրման բացակայությունը, կադրային պակասը և թվային գրագիտության խնդիրները:

Բացի գործընթացների թվայնացումից՝ մեծ ուշադրություն է դարձվում վերահսկողության ու կոռուպցիոն ռիսկերի նվազեցման մեխանիզմներին: Հաշվեքննիչ պալատը կիրառում է տվյալահեն վերլուծության գործիքներ, որոնք հնարավորություն են տալիս հայտնաբերել պայմանագրային խախտումներ, գնային անոմալիաներ և ռիսկային գործարքներ: Մեքենայական ուսուցման ալգորիթմների կիրառումը թույլ է տալիս կանխատեսել հնարավոր խախտումները՝ նպաստելով գնումների գործընթացի անվտանգության բարձրացմանը:

Տվյալների պաշտպանությունն ու գործարքների վավերականությունն ապահովելու համար քննարկվում է նաև բլոքչեյն տեխնոլոգիայի կիրառումը, ինչը կնպաստի գնումների համակարգի վստահելիության բարձրացմանը: 2023 թվականին ուշադրության կենտրոնում է եղել արհեստական բանականության (ԱԲ) ներգրավումը, որը կարող է նպաստել ռիսկերի վերլուծության, կոռուպցիոն շղթաների բացահայտման և գնումների համակարգի արդիականացմանը: Այս տեխնոլոգիաների ներդրումը Հայաստանը կարող է դարձնել պետական գնումների թվային կառավարման առաջատար օրինակներից մեկը՝ միջազգային լավագույն փորձի հիման վրա:

Համակարգը լիովին ինտեգրված չէ հարկային և ֆինանսական կառավարման հարթակների հետ, ինչը նվազեցնում է տվյալների համադրման ու վերահսկողության արդյունավետությունը: Նորարարական գործիքների կիրառումը սահմանափակվում է նաև գնումների մասնագետների թվային հմտությունների պակասով, ինչն էլ դանդաղեցնում է համակարգի արդիականացումը: Թվայնացման փուլը ընթացել է որոշակի փոփոխությունների հաջորդականությամբ (աղյուսակ 1):

Աղյուսակ 1.

Պետական գնումների համակարգի թվայնացման փուլերը ՀՀ-ում

<i>Թվայնացման փուլ</i>	<i>Տարի</i>	<i>Հիմնական փոփոխություններ</i>
1-ին փուլ	2011	Էլեկտրոնային գնումների համակարգի (ARMEPS) ներդրում
2-րդ փուլ	2017	ARMEPS-ի կատարելագործում, ավելի շատ կազմակերպությունների ներգրավում
3-րդ փուլ	2022	AI-ի և մոնիթորինգի գործիքների փորձարկում
4-րդ փուլ	2025 (նախատեսվող)	AI-ի կիրառման լիարժեք ավտոմատացում գնումների հսկողության համար

ՀՀ պետական գնումների թվայնացումը և արհեստական բանականության (ԱԲ) ներդրումը կապահովեն.

- **Թափանցիկություն և հաշվետվողականություն** – Թվայնացված հարթակները նվազեցնում են մարդկային գործոնը, ապահովում հանրային վերահսկողություն և գնումների գործընթացի բացություն:

- **Կոռուպցիայի կանխարգելում** – ԱԲ-ն վերլուծում է տվյալները, հայտնաբերում կոռուպցիոն գործարքների նախանշանները, ինչպես նաև բռնկչեյն տեխնոլոգիան ապահովում է գնումների անփոփոխելի փաստաթղթավորում:
- **Օպիսների օպտիմալացում** – ԱԲ-ն կանխատեսում է գնային տատանումները, վերլուծում շուկայի միտումները, ընտրում առավել բարենպաստ առաջարկները և նվազեցնում անարդյունավետ ծախսերը:
- **Գնումների գործընթացի արագացում** – Թվայնացված հարթակները հեշտացնում են մրցույթների կազմակերպումը, պայմանագրերի կնքումը և մատակարարման կառավարումը՝ նվազեցնելով բյուրոկրատական քաշքշուկը:
- **Տվյալահեն որոշումների ընդունում** – ԱԲ-ն կարող է գնահատել մատակարարների վարկանիշը, կանխատեսել ռիսկերը և օժանդակել ռազմավարական պլանավորմանը՝ հիմնվելով համակարգված առկա տվյալների վրա:
- **Միջազգային ստանդարտներին համապատասխանություն և ստանդարտների ներդրում** – Բազմաթիվ երկրներում, այդ թվում՝ ԵՄ-ում, ԱՄՆ-ում և Մինգապուրում (Cloud Security, Blockchain, GDPR, NIS) թվայնացումը զգալիորեն բարձրացրել է գնումների արդյունավետությունը, ինչը Հայաստանը ևս կարող է կիրառել՝ ինտեգրվելով գլոբալ թվային գնումների համակարգերին:
- **Տվյալների անվտանգություն և կիբեռնիսկերի կառավարում** – Պետական գնումների թվայնացման գործընթացում կարևոր է ապահովել տվյալների պաշտպանությունը՝ նվազեցնելով կիբեռնահարձակումների ու չարտոնված մուտքի ռիսկերը:
- **Հիմնական սպառնալիքներ** – DDoS (Distributed Denial-of-Service) հարձակումներ, ֆիշինգ, չարտոնված մուտք, մալվեր (Malware)[3]:
- **Պաշտպանության մեխանիզմներ** – Բազմաստիճան նույնականացում (MFA), կենսաչափական տվյալների կիրառում, պետական աշխատակիցների ուսուցում:

Միջազգային փորձը ցույց է տալիս, որ պետական գնումների թվայնացումը և ԱԲ-ի ներդրումը կարող են զգալիորեն բարելավել կառավարման գործընթացները՝ նվազեցնելով մարդկային գործունի ազդեցությունը, բարձրացնելով գործարքների թափանցիկությունը և օպտիմալացնելով ծախսերը: Հետևաբար, ՀՀ պետական գնումների համակարգի շարունակական զարգացումը և տեխնոլոգիական արդիականացումը կարող են նպաստել հանրային ռեսուրսների առավել արդյունավետ բաշխմանը և պետական կառավարման որակի բարձրացմանը:

Տարբեր երկրներում գնումների թվայնացումն իրականացվում է տարբեր մոդելներով, սակայն դրանց բոլորի հիմքում գործընթացների ավտոմատացումն է: ԵՄ-ն ներդրել է TED հարթակը, որը ապահովում է մրցույթային հայտերի հրապարակում և մատակարարների թվայնացված ընտրություն նպաստելով թափանցիկությանը: ԱՄՆ-ում SAM.gov հարթակը միավորում է բոլոր պետական գնում-

ները՝ ավտոմատ կերպով համեմատելով պայմանագրային գները շուկայական արժեքների հետ: Մեծ Բրիտանիայում Contracts Finder և Digital Marketplace հարթակները ապահովում են գնումների տեսանելիություն և խորհրդատվական ծառայությունների թվայնացված կառավարում: Մինգապուրի GeBIZ համակարգը լիովին ավտոմատացրել է գործընթացները՝ ստեղծելով մատակարարների միավորված բազա: Այս փորձը ցույց է տալիս, որ գնումների թվայնացումը բարձրացնում է արդյունավետությունը, նվազեցնում բյուրոկրատիան և ապահովում թափանցիկություն: Հայաստանի համար կարևոր է կիրառել միջազգային լավագույն պրակտիկաները՝ պետական գնումների արդիականացման, ԱԲ-ի գործիքների ներդրման և տվյալահեն որոշումների կայացման համար: Տարբեր երկրներում հիմնականում կիրառվում են առանձնացված և սեփական տնտեսությանը հարմարեցված տեխնոլոգիաներ և ծրագրեր, որոնք կարող են դրական կերպով ազդեցություն ունենալ պետական գնումների կառավարման արդյունավետության վրա (աղյուսակ 2)[6]:

Աղյուսակ 2.

Համեմատություն այլ երկրների գնումների համակարգում կիրառվող տեխնոլոգիաների և վերջնաարդյունքների հետ

Երկիր	AI-ի ներդրման մակարդակ	Կիրառվող տեխնոլոգիաներ	Գործող ծրագրեր	Արդյունք
Էստոնիա	Բարձր	AI մոնիթորինգ, կոռուպցիայի կանխարգելման ալգորիթմներ	e-Procurement համակարգ, Transparency AI	Գնումների գործընթացի արագացման 35 %-ով աճ, կոռուպցիայի նվազում 20 %-ով
Մեծ Բրիտանիա	Միջին	Խելացի գնանշման (Smart Bidding) համակարգ, Chatbot-ներ մատակարարների համար	Crown Commercial Service AI	Շախտերի կրճատում 15 %-ով, գնումների գործընթացի թափանցիկության բարձրացում
Չինաստան	Բարձր	AI կանխատեսող մոդելներ, Big Data, մատակարարների վարկանիշավորման համակարգ	National Public Resource AI System	Գնումների ռիսկերի նվազեցում 30 %-ով, գործընթացի ավտոմատացում
Հայաստան	Սկզբնական փուլ	Պետական գնումների թվայնացում, AI-ի փորձնական ներդրման հայեցակարգ	ARMEPS (թվայնացված, բայց ոչ AI-ով կառավարվող)	Դեռևս չափելի արդյունքներ չկան, պիլոտային ծրագրերի փուլում

Տվյալների վերլուծության համար մեծ նշանակություն ունի թափանցիկությունը, որի մակարդակը տարբեր երկրներում ունի տարբեր ցուցանիշներ (աղյուսակ 3) [5]:

Աղյուսակ 3.

Համեմատություն այլ երկրների գնումների համակարգերի հետ

<i>Հատկանիշ</i>	<i>Թափանցիկություն</i>	<i>Էլեկտրոնային մրցույթներ</i>	<i>Արհեստական բանականություն և տվյալների վերլուծություն</i>
ARMEPS (Հայաստան)	Բարձր, բայց բարելավման կարիք ունի	Առկա է	Հիմնական գործիքներ
ProZorro (Ուկրաինա)	Շատ բարձր (ամբողջական թափանցիկություն)	Ամբողջությամբ թվայնացված	Առկա է կոռուպցիայի բացահայտման գործիքակազմ
GePS (Հարավային Կորեա)	Բարձր	Ամբողջությամբ թվայնացված	Արհեստական բանականության վրա հիմնված անալիտիկա
TED (ԵՄ)	Շատ բարձր	Առկա է	Բարձր մակարդակի հաշվետվություններ

- Ուկրաինայի ProZorro համակարգը **հայտնի է իր «բոլորը տեսնում են ամեն ինչ» սկզբունքով, որը մեծացնում է գնումների թափանցիկությունը: Հայաստանը կարող է որդեգրել նման մոտեցում՝ հանրային վստահությունը բարձրացնելու համար:**
- **Հարավային Կորեայի GePS համակարգը** ամենաառաջադեմներից է՝ ապահովելով մատակարարների՝ արհեստական բանականության վրա հիմնված ընտրություն և ֆինանսական ու մաքսային համակարգերի ինտեգրում:
- **ԵՄ TED (Tenders Electronic Daily) հարթակը** կենտրոնացված համակարգ է, որը հրապարակում է ողջ Եվրոպայի պետական գնումների հայտարարությունները: Հայաստանի համար այս համակարգի հետ ավելի սերտ համագործակցությունը կարող է խթանել միջազգային մրցակցությունը [6]:

Թեև ARMEPS-ը զգալիորեն նպաստել է գնումների թվայնացմանը, օգտագործման հարմարավետության, համակարգերի ինտեգրման, թափանցիկության և տվյալների վերլուծության կատարելագործումը կարող են այն դարձնել ավելի արդյունավետ: **ProZorro, GePS և TED** համակարգերի փորձի ուսումնասիրությունը կարող է աջակցել Հայաստանի գնումների համակարգի արդիականացմանը:

Շուկայական տնտեսության փուլում կարևոր է միջազգային փորձի ուսում-

նասիրումն ու համապատասխան լավագույն պրակտիկայի ներդրումը, ինչը թույլ կտա Հայաստանի պետական գնումների համակարգին դառնալ ավելի արդյունավետ, թափանցիկ և հուսալի: Հայաստանի համար կիրառելի կարող են լինել հետևյալ լուծումները.

- **Մատակարարների վարկանիշավորման AI-հիմքով համակարգ**՝ հիմնված Չինաստանի մոդելի վրա, որը գնահատում է մատակարարների հուսալիությունը՝ բազմաչափ տվյալների վերլուծությամբ:
- **Խելացի գնագոյացման մեխանիզմ**՝ Մեծ Բրիտանիայի մոդելի վրա հիմնված օրինակով, որն օգտագործում է մեքենայական ուսուցման ալգորիթմներ գնառաջարկների օպտիմալացման համար:
- **Կոռուպցիոն գործարքների կանխատեսման ալգորիթմներ**՝ հիմնված Էստոնիայի փորձի հիման վրա, որոնք թույլ են տալիս վաղ հայտնաբերել կասկածելի ֆինանսական հոսքերը և շահերի բախման հնարավորությունները:

Արհեստական բանականության (ԱԲ) ներդրումը պետական գնումների համակարգում կարող է բարելավել նաև հետևյալ գործընթացները՝

1. **Հանրային մրցույթ**

ԱԲ-ն կարող է ավտոմատացնել մրցութային գործընթացները՝ էֆեկտիվ ու ժամանակակից վերլուծական գործիքներով: Օրինակ՝ ԱԲ կարող է վերլուծել հայտերը, գնահատել առաջարկների որակը և ընտրել լավագույն առաջարկը՝ նվազեցնելով մարդկային միջամտությունը, սխալներն ու քաջքշուկները: Նույնիսկ մոնիթորինգի և գնահատման գործընթացները կարող են կատարվել ԱԲ-ի միջոցով՝ ապահովելով գործընթացի թափանցիկությունը:

2. **Անհատական բանակցություններ (մեկ անձի գնում)**

ԱԲ կարող է օգտագործվել մեկ անձից գնման գործընթացում՝ նախատեսելով դինամիկ տվյալների վերլուծություն, որը կօգնի ավելի օպտիմալ որոշումներ կայացնել՝ ինչպես ընտրել մատակարարին կամ գնահատել նրա առաջարկների համապատասխանությունը: ԱԲ-ն կարող է նաև կանխատեսել համաշխարհային շուկայի միտումները, ինչն օգնում է նախապատրաստել լավագույն առաջարկներ:

3. **Փոքր գումարով գնումներ (նվազագույն գումարի գնումներ)**

ԱԲ կարող է ներդրվել այս գործընթացում՝ ավտոմատացնելով փոքր չափի գնումների կառավարումը: Հատուկ ծրագրերը և ալգորիթմները կարող են պարզեցնել հայտերի ընդունումը, գնահատումն ու աշխատանքային գործընթացները՝ բարձրացնելով արդյունավետությունը:

4. **Երկնային մրցույթ (կատարելիություն ունեցող մրցույթ)**

Այս կարգը կարող է օգտագործել ԱԲ՝ մատակարարների մասին տվյալների վերլուծության միջոցով նախապատվություն տալ այն անձանց, ովքեր լավագույնը համապատասխանում են պահանջներին: ԱԲ-ն կարող է դիտարկել ոչ միայն փաստաթղթերը, այլև դրա հետ կապված տարբեր շուկաներից եկող տվյալները՝ օպտիմալ տարբերակ ընտրելու համար:

5. Պետական գնումների էլեկտրոնային համակարգ

ԱԲ-ի ներդրումը հատկապես այս եղանակով է դառնում շատ կարևոր: ԱԲ-ն կարող է արդյունավետորեն ավտոմատացնել գնումների ընթացակարգերը՝ ներկայացնելով լուծումներ, որոնք միաժամանակ նվազեցնում են մարդկային միջամտությունն ու թյուրիմացությունները: Պետք է նաև նշել, որ էլեկտրոնային մրցութներում ԱԲ-ն կարող է օգտագործվել տվյալների վերլուծության, նախագծերի գնահատման, համակարգի սպասարկման և մրցակցային միջավայրի պահպանման համար:

Այսպիսով, ԱԲ-ի ներդրումը այս բոլոր եղանակներում հնարավորություն է տալիս բարելավելու գործընթացների արդյունավետությունը, ապահովելու ավելի բարձր մակարդակի թափանցիկություն և նվազեցնելու կոռուպցիոն ռիսկերը:

Արհեստական բանականության (ԱԲ) և առաջադեմ տվյալների վերլուծության գործիքների ներդրումը հնարավորություն կտա՝

- Ավտոմատացնել գնումների գործընթացը՝ նվազեցնելով բյուրոկրատիան և ավելորդ ծախսերը,
- Բարելավել գնային կանխատեսումները և օպտիմալացնել պետական ֆինանսական միջոցների կառավարումը,
- Բարձրացնել գործընթացի թափանցիկությունն ու նվազեցնել կոռուպցիոն ռիսկերը,
- Ապահովել խարդախությունների հայտնաբերում և կանխարգելում՝ հիմնված տվյալների խորը վերլուծության վրա:

Այս բարեփոխումները կնպաստեն պետական միջոցների առավել նպատակային օգտագործմանը, մրցակցային պայմանների բարելավմանը և պետական գնումների համակարգի շարունակական զարգացմանը:

Եզրակացություն և առաջարկություններ: ՀՀ պետական գնումների թվայնացումն ու արհեստական բանականության (ԱԲ) ներդրումը կարևոր քայլեր են համակարգի թափանցիկության, արդյունավետության և հաշվետվողականության բարձրացման համար: Չնայած իրականացված բարեփոխումներին, համակարգում դեռ առկա են մի շարք խնդիրներ, ինչպիսիք են կոռուպցիոն ռիսկերը, թվային գրագիտության պակասը, համակարգերի ոչ ամբողջական ինտեգրումը և տեխնոլոգիական հարթակների կատարելագործման անհրաժեշտությունը: Միջազգային փորձը ցույց է տալիս, որ ԱԲ-ի ու տվյալահեն որոշումների ընդունումը նպաստում են գնումների գործընթացի օպտիմալացմանը, ծախսերի կրճատմանը և ռիսկերի նվազեցմանը:

Կատարված վերլուծությունների արդյունքում առաջարկվում է՝

▪ **Պետական գնումների թվայնացման խթանում** – Շեշտադրել, որ անհրաժեշտ է շարունակաբար բարելավել պետական գնումների էլեկտրոնային հարթակը՝ ապահովելով ավելի մեծ թափանցիկություն, արդյունավետություն և տվյալների հասանելիություն:

▪ **Արհեստական բանականության ներդրման ռազմավարություն** – Առաջարկել մշակել և ներդնել արհեստական բանականության (ԱԲ) կիրառման

ռագմավարություն պետական գնումների գործընթացում՝ օպտիմալացման, կանխատեսման և կոռուպցիոն ռիսկերի նվազեցման նպատակով:

▪ **Օրենսդրական բարեփոխումների իրականացում** – Նշել, որ անհրաժեշտ է կատարել օրենսդրական փոփոխություններ՝ ապահովելու համար ԱԲ-ի և թվայնացման ամբողջական և արդյունավետ կիրառումը՝ սահմանելով հստակ կանոնակարգեր և չափանիշներ:

▪ **Մասնագետների վերապատրաստում և կարողությունների զարգացում** – Առաջարկել պետական գնումների ոլորտում ներգրավված անձանց համար կազմակերպել վերապատրաստման ծրագրեր՝ նրանց հմտությունները համապատասխանեցնելու թվայնացման և ԱԲ-ի կիրառման նոր պահանջներին:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ՀՀ օրենքը գնումների մասին:
2. https://epfarmeria.am/sites/default/files/Document/DATA_Research_E_Procurement_Hakobyan.pdf (20.03.2025)
3. <https://gnumner.minfin.am/> (20.03.2025)
4. <https://armeps.am/ppcm/public/reports> (20.03.2025)
5. <https://www.oecd.org/en/topics/public-procurement.html> (20.03.2025)
6. https://geopolitika.am/dir/wp-content/blogs.dir/1/files/2023_2_132_139.pdf (20.03.2025)

ПЕРСПЕКТИВЫ ЦИФРОВИЗАЦИИ СИСТЕМЫ ГОСУДАРСТВЕННЫХ ЗАКУПОК РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ И ВНЕДРЕНИЯ ИСКУССТВЕННОГО ИНТЕЛЛЕКТА (ИИ)

Мкртчян Марта

Фонд “ВГУ”,

“Общественное управление”, 1-й курс

Научный руководитель:

кандидат экономических наук, доцент Н. Барсегян

Резюме

Ключевые слова: *государственные закупки, цифровизация, искусственный интеллект (ИИ), прозрачность, коррупционные риски, управление на основе данных, кибербезопасность, оптимизация*

В эпоху технологического прогресса и цифровой трансформации, применение искусственного интеллекта (ИИ) в сфере государственного управления становится неизбежной необходимостью. Цифровизация системы государственных закупок Армении и внедрение ИИ могут повысить прозрачность, снизить коррупционные риски и обеспечить управление на основе данных. Статья анализирует потенциал их применения, основываясь на международном опыте и текущих развитиях в Армении.

PROSPECTS FOR THE DIGITALIZATION OF THE PUBLIC PROCUREMENT SYSTEM OF THE REPUBLIC OF ARMENIA AND THE IMPLEMENTATION OF ARTIFICIAL INTELLIGENCE (AI)

Mkrтчyan Marta

“VSU” Foundation,

“Public Administration”, 1st Year

Academic Supervisor: N. Barseghyan,

Candidate of Economic Sciences, Associate Professor

Summary

Key words: *public procurement, digitalization, artificial intelligence (AI), transparency, corruption risks, data-driven management, cybersecurity, optimization*

In the era of technological progress and digital transformation, the use of artificial intelligence (AI) in public administration becomes an unavoidable necessity. The digitalization of Armenia’s public procurement system and implementation of AI can enhance transparency, reduce corruption risks, and ensure data-driven governance. The article analyzes the potential of their application, based on international experience and current developments in Armenia.

ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ
ՍՈՑԻՈԼՈԳԻԱ

ПСИХОЛОГИЯ И
СОЦИОЛОГИЯ

PSYCHOLOGY AND
SOCIOLOGY

ԴԵՌԱՀԱՍՆԵՐԻ ԱՂԻԿՏԻՎ ՎԱՐՔԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ
ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ

Բարսեղյան Գարինե

«ՎՊՀ» հիմնադրամ,

«Հոգեբանություն», 4-րդ կուրս

Գիտական ղեկավար՝ Խ. Գ. Թ., դոցենտ Վ. Միրզոյան

Հանգուցային բառեր. *դեռահասություն, աղիկտիվ վարք, աղիկտ, սիրային, կրոնական, սննդային աղիկցիաներ, ինքնազնահատական, տազնապայնություն*

Վերջին տարիներին դեռահասների շրջանում հաճախակի է դարձել աղիկտիվ վարքի դրսևորումը՝ պայմանավորված երկրի անկայուն վիճակով, հետպատերազմյան սթրեսով, սոցիալական ցանցերի մասշտաբայնությամբ: Դեռահասության տարիքը հարուստ է դրամատիկ փորձառություններով, դժվարություններով և ճգնաժամերով: Զարգացման այս շրջանում շատ դեռահասներ ունենում են բնավորության շեշտվածություններ՝ անհատական բնավորության գծերի որոշակի սրացում, որը ստեղծում է նրա որոշակի խոցելիությունը: Նրանք բախվում են մի շարք մարտահրավերների, որոնք կարող են հանգեցնել կախվածությունների և բացասաբար ազդել նրանց հոգեհուզական վիճակի վրա: Այս համատեսքատում կարևոր նշանակություն է ստանում աղիկտիվ վարքի ուսումնասիրությունը, որը կարևոր է դրա առաջացման պատճառներն ու հետևանքները հասկանալու համար:

Առաջին անգամ «աղիկտիվ վարք» հասկացությունը առաջարկվել է 1964 թվականին Առողջապահության համաշխարհային կազմակերպության թմրամիջոցների չարաշահման փորձագիտական կոմիտեի կողմից [15, 161]: Աղիկտիվ վարքը (անգլերեն addiction բառից՝ վատ սովորություն, արատավոր միտում) հանդիսանում է շեղվող վարքի տիպերից մեկը, որը դրսևորվում է իրականությունից հեռանալու ձգտումով՝ սեփական հոգեվիճակը արհեստական միջոցներ ընդունելու, ուշադրությունը գործունեության որոշակի ձևերի վրա կենտրոնացնելու, ամրապնդելու՝ ինտենսիվ հույզեր զարգացնելու և պահպանելու նպատակով [2, 5]: Այն համեմատաբար նոր հասկացություն է, և ներկայումս հոգեբանների միջև մեծ անհամաձայնություն կա դրա սահմանման վերաբերյալ: Է. Պ. Իլլինը աղիկտիվ վարքը դիտարկում է որպես դեռահասների և երիտասարդների վատ սովորությունների հետևանքով ձևավորված վարք: Ա. Բ. Ֆոմինայի սահմանման համաձայն աղիկտիվ վարքը վերաբերում է տարբեր նյութերի չարաշահմանը, որոնք փոխում են հոգեկան վիճակը՝ նախքան դրանցից կախվածություն առաջանալը [5]: Վ. Է. Կազանը սահմանում է աղիկտիվ վարքը որպես նյութերի չարաշահում, որոնք փոխում են հոգեկան վիճակը (ծխախոտ, ալկոհոլ, թմրանյութեր և ոչ թմրամիջոցներ)՝ առանց ֆիզիկական կախվածություն զարգացնելու. սա հիվանդություն չէ, այլ վարքային խանգարում [1, 6]:

Աղիկտիվ վարքը իրենից ներկայացնում է աղիկցիայի զարգացման շարու-

նակական գործընթաց: Աղիկցիան վիճակ է, երբ մարդը կախվածություն է զգում ինչ-որ բանից կամ ինչ-որ մեկից: Սա կապվածության պաթոլոգիական ձև է, որը զգալիորեն սահմանափակում է աղիկտի կենսագործունեությունը և ազդում այլոց հետ նրա փոխազդեցության վրա [4]: Անհրաժեշտ է նշել, որ աղիկտը այն մարդն է, ով ինչ-որ բանի կամ ինչ-որ մեկի հանդեպ մոլուցքային կապվածություն և պահանջմունք է զգում, բայց տառապում է, երբ այն բավարարվում է [16]:

Աղիկտիվ վարքի կործանարար էությունը դրսևորվում է նրանով, որ այս գործընթացում հուզական հարաբերություններ և կապեր են հաստատվում ոչ թե այլ մարդկանց, այլ անշունչ առարկաների կամ երևույթների հետ: Մարդկանց հետ հուզական հարաբերությունները կորցնում են իրենց նշանակությունը և դառնում մակերեսային: Աղիկցիան փոխարինում է ընկերությանը, սերը և գործունեության տարբեր տեսակները [13, 3]:

Կարող ենք ասել, որ աղիկցիան փախուստ է իրականությունից՝ խաղերի, հոգեակտիվ նյութերի, մոլուցքային գործողությունների միջոցով [11]: Մարդը փնտրում է գոյատևման իր ճանապարհը: Սուբյեկտիվ տպավորություն է ստեղծվում, որ որոշ առարկաներով կամ գործունեության որոշ տեսակներով կլանված լինելը թույլ է տալիս չմտածել սեփական խնդիրների, հոգսերի մասին, փախչել բարդ իրավիճակներից՝ օգտագործելով աղիկտիվ վարքի տարբեր տեսակներ [1, 7]:

Որպես կանոն, աղիկտիվ վարքը համարվում է մի շարք անբարենպաստ գործոնների ազդեցության հետևանք: Տարբեր աղիկցիաների նկատմամբ հակումը առավելագույնը դրսևորվում է մոտավորապես 12 տարեկան հասակում [6]: Աղիկտիվ վարքի ձևավորման համար չկա կոնկրետ որևէ պատճառ, քանի որ տարբեր անձանց մոտ աղիկցիաները ձևավորվում են որոշակի պայմանների ազդեցությամբ [12]:

Ընդհանուր առմամբ, աղիկտիվ վարքի ձևավորմանը նպաստող գործոնները պայմանականորեն կարելի է բաժանել՝ սոցիալական, սոցիալ-հոգեբանական, անհատական-հոգեբանական և կենսաբանական գործոնների [1, 9-12]:

Դեռահասների մոտ աղիկտիվ վարքի ձևավորման ռիսկի գործոններն են՝ էզոցենտրիզմի բարձրացումը, դիմադրությունը, համառությունը, բողոքը, բնավորության ամբիվալենտությունը, ձգտումը դեպի անհայտը, ռիսկայինը, ընտանիքից առանձնանալու և անկախանալու ցանկությունը, սեռական հասունացման փոփոխությունների և իրադարձությունների հանդեպ ցավոտ հակազդեցությունը, խնդիրների բարդության աստիճանը չափազանցելու հակումը, ինքնության ճգնաժամը, բացասական կամ չձևավորված «ես» կոնցեպցիան, դժվարությունների նկատմամբ ցածր հանդուրժողականությունը, սթրեսային իրավիճակների հաղթահարման ժամանակ պասիվ ռազմավարությունների գերակշռությունը [1, 16]:

Գոյություն ունի կարծիք, որ աղիկտիվ վարքի առաջացման պատճառները կապված են ժառանգականության հետ: Եթե ծնողները նման խնդիր ունեն, ապա մեծ է հավանականությունը, որ երեխայի մոտ աղիկցիա կարող է առաջանալ:

Ադիկտիվ վարքի ձևավորման գործոնները

Սոցիալական	<ol style="list-style-type: none"> 1. հասարակության անկայունությունը, 2. հոգեակտիվ նյութերի մատչելիությունը, 3. սոցիալական և մշակութային դրական ավանդույթների բացակայությունը, 4. մարդկանց կենսամակարդակի հակադրությունները, 5. միգրացիայի բարձր մակարդակը:
Սոցիալ-հոգեբանական	<ol style="list-style-type: none"> 1. կոլեկտիվ տազնապայնության բարձր մակարդակը, 2. զարգացման անբարենպաստ միկրոսոցիալական միջավայրը, 3. ոչ պատշաճ ընտանեկան դաստիարակությունը, 4. դեռահասի պատկանելությունը ասոցիալ խմբին, 5. կոլեկտիվ գիտակցության մեջ դեհանտ վարքագծի գերաբժնորումը:
Անհատական-հոգեբանական	<ol style="list-style-type: none"> 1. տարիքային առանձնահատկություններ, 2. հոգեկան զարգացման շեղումները, 3. անհատական հակվածությունը ադիկտիվ վարքին, 4. իրավիճակային-անձնական վարքային ռեակցիաները, 5. բնավորության շեշտվածության առանձնահատկություններ:
Կենսաբանական	<ol style="list-style-type: none"> 1. գենետիկական նախատրամադրվածությունը, 2. նեյրոքիմիական գործընթացները, 3. ուղեղի կառուցվածքային և ֆունկցիոնալ առանձնահատկությունները, 4. հորմոնալ գործոնները, 5. ֆիզիոլոգիական առանձնահատկությունները:

Ըստ բժշկական գիտությունների դոկտոր, բժշկական հոգեբան, հոգեբույժ Վ. Է. Կազանի՝ դեռահասության տարիքում ադիկտիվ վարքի ձևավորումն ընթանում է երեք փուլով: Առաջին փուլը համարվում է առաջին փորձերի շրջանը, որը սովորաբար կատարվում է հասակակիցների ընկերախմբում կամ ինչ-որ մեկի ազդեցության տակ: Առաջին փուլում մարդը ծանոթանում է այն օբյեկտի հետ, որը հետագայում ձեռք է բերում հատուկ նշանակություն: Երկրորդը որոնողական ադիկտիվ վարքի փուլն է: Այս փուլը համարվում է տարբեր տեսակի հոգեակտիվ նյութերի (ալկոհոլ, թմրանյութեր, դեղամիջոցներ, տնային և արդյունաբերական քիմիական նյութեր) փորձարկման փուլ: Այն բնորոշ է վաղ դեռահասության տարիքին: Երկրորդ փուլին բնորոշ է կախվածության օբյեկտի հանդեպ ձգտման աստիճանական աճը: Ադիկտը ավելի հաճախ է կրկնում փորձը՝ բաց չթողնելով հաճույք ստանալու հնարավորությունը: Երրորդ փուլում տեղի է ունենում ադիկտիվ վարքի անցումը հիվանդության: Երրորդ փուլում փորձի կրկնության մասին մտքերը չեն լքում մարդուն [7]:

Ադիկցիաների բոլոր տեսակները, ըստ Ց. Պ. Կորոլենկոյի, կարելի է միավո-


րել 2 մեծ խմբերի մեջ՝ քիմիական և ոչ քիմիական (վարքային) աղիկցիաներ: Քիմիական աղիկցիաները ներառում են կախվածության բոլոր ձևերը, որոնք կապված են քիմիական նյութերի օգտագործման հետ՝ հոգեմետ դեղեր, ալկոհոլ, թմրանյութեր, ծխախոտ: Սա ներառում է նաև կախվածությունը սուրճից, թեյից, քաղցրավենիքից: Ոչ քիմիական կամ վարքային աղիկցիաները շատ բազմազան են՝ համակարգչային, սիրային, սեռական, խաղային կախվածություններ, շոպոգոլիզմ, խուսափողական աղիկցիա, աշխատամոլություն և այլն: Որոշ հեղինակներ վարքային աղիկցիաների շարքին են դասում նաև կրոնական, սննդային աղիկցիաները, աղիկցիան հեռուստացույցից, տեխնիկական սարքերից, համակարգչից, հեռախոսից [3, 12]: Աղիկցիաները լինում են սոցիալապես ընդունելի, որոնք հասարակության կողմից համարվում են նորմալ և անզամ խրախուսվում են, չնայած որ կարող են վնասել մարդու առողջությունը կամ սոցիալական հարաբերությունները, և սոցիալապես վտանգավոր, որոնք բացասական ազդեցություն են ունենում ոչ միայն անձի, այլև շրջապատի վրա [10]: Աղիկցիայի յուրաքանչյուր տեսակ ունի իրեն բնորոշ ախտանշանները և հուզական փորձի առանձնահատկությունները:

Մեր օրերում դեռահասը գնալով ավելի հակված է դառնում աղիկցիաների տարբեր տեսակներին: Ամենից հաճախ խոսքը վերաբերում է հոգեակտիվ նյութերին (ալկոհոլ, ծխախոտ, թմրանյութ), համակարգչային և խաղային աղիկցիաներին:

Հոդվածի նպատակն է ուսումնասիրել իզական և արական սեռի դեռահասների մոտ աղիկցիաները և դրանց կապը ինքնագնահատականի, տագնապայնության հետ: Նպատակը իրագործելու համար իրականացրել ենք հետազոտություն 14-15 տարեկան դեռահասների հետ:


Որպես հետազոտության մեթոդիկա ընտրվել են է Ս. Վ. Կովալյովի «Ինքնագնահատականի մակարդակի ախտորոշման» [8], Չ. Դ. Սպիրբերգերի «Տագնապայնության սանդղակ» [14] և Գ. Վ. Լոգովայայի «Կախվածությունների 13 տեսակների հակվածության» [9] հարցարանները:

Դեռահասների մոտ աղիկցիաների տարբեր տեսակների նկատմամբ հակվածությունը բացահայտելու համար իրականացրել ենք Գ. Վ. Լոգովայայի «Կախվածությունների 13 տեսակների հակվածության» հարցարանը, որի ցուցանիշներ ներկայացված են ստորև:



Տրամագիր 1. Գախվածությունների դրսևորումը տղաների մոտ

Ինչպես երևում է տրամագիր 1-ից տղաների մոտ ամենամեծ հակվածությունը դրսևորվում է դեպի սիրային և կրոնական կախվածությունները, իսկ ամենացածր հակվածությունը՝ թմրանյութերի և ծխախոտի նկատմամբ:



Տրամագիր 2. Գախվածությունների դրսևորումը աղջիկների մոտ

Տրամագիր 2-ից երևում է, որ աղջիկների մոտ կա հակվածություն դեպի աննդային և սիրային կախվածությունները:

Դեռահասների ինքնագնահատականի մակարդակը որոշելու համար կիրա-

ոել ենք Ս. Վ. Կովալյովի «Ինքնագնահատականի մակարդակի ախտորոշման» հարցարանը: Հետազոտության արդյունքները հետևյալն են.


8 % տղաների մոտ առկա է ինքնագնահատականի բարձր մակարդակ,

40 %-ի մոտ՝ միջին,

52 %-ի մոտ՝ ցածր:

Աղջիկների դեպքում նրանց 24 %-ի մոտ գրանցվել է միջին մակարդակ, իսկ 76 %-ի մոտ՝ ցածր:

Ստորև տրամագրի տեսքով կներկայացնենք հետազոտության արդյունքները:




Տրամագիր 3. Ինքնագնահատականի ցուցանիշները դեռահասների մոտ

Ինչպես երևում է տրամագիր 3-ից, աղջիկների մոտ չի գրանցվել ինքնագնահատականի բարձր մակարդակ, և թե տղաների, թե աղջիկների մոտ գերակշռում է ցածր մակարդակը, ինչը կարող է պայմանավորված լինել սոցիալական ճնշմամբ և հասակակիցների հետ համամատությամբ, որը կարող է առաջացնել թերարժեքության բարդույթ, ինչպես նաև կարող է պայմանավորված լինել սեռահասունացման ընթացքում մարմնական փոփոխությունների և ծնողների կողմից աջակցության բացակայության հետ և այլն:

Տագնապայնության մակարդակը ուսումնասիրելու համար կիրառվել է Չ. Դ. Սպիրբերգերի «Տագնապայնության սանդղակ» հարցարանը, որի արդյունքները ներկայացված են տրամագիր 4-ում:

Ինչպես երևում է տրամագրից, դեռահասների մոտ գերակշռում են տագնապայնության միջին և բարձր մակարդակները: Այս ցուցանիշը կարող է պայմանավորված լինել նախ ուսումնական ծանրաբեռնվածությամբ և առաջիկա քննություններով, ինչպես նաև ծնողների, ուսուցիչների և հասակակիցների ակնկալիքները արդարացնելու ձգտմամբ: Բացի այս ամենը՝ իրենց ազդեցությունը կարող են ունենալ սոցիալական կայքերը, ինչը կարող է մեծացնել մեկուսացման և անինքնավստահության զգացումը:



Տրամագիր 4. Տազնապայնության ցուցանիշները դեռահասների մոտ

Դեռահասների մոտ ինքնագնահատականի, տազնապայնության և կախվածությունների հակվածության միջև կապը բացահայտելու համար իրականացվել է համահարաբերակցական վերլուծություն, ըստ որի

Աղյուսակ 2.

Ինքնագնահատականի և տազնապայնության կապը կախվածությունների հակվածության հետ

Աղիկցիա	Ինքնագնահատական	Տազնապայնություն
	r= 0,5	r= 0,4

Մրա հիման վրա կարող ենք եզրակացնել, որ ինքնագնահատականի և աղիկցիայի միջև կա ուղիղ համահարաբերակցական կապ: Համահարաբերակցական հետազոտությունից պարզ է դառնում նաև, որ տազնապային դեռահասները ավելի հակված են աղիկցիայի:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Белова Л. А., Сафонова А. Н. Работа с подростками, склонными к аддиктивному поведению. Майкоп, 2009, - 53 с.
2. Гоголева А. В. Аддитивное поведение и его профилактика. Москва, Воронеж, 2003, - 111 с.
3. Фенько А., Левин М. И. Теории аддиктивного поведения. Москва: Проспект, 2008, - 13 с.
4. Ганджалиев А. А. Аддикция. <https://rehabfamily.com/articles/addiktsiya/>
5. Ганишина А. С., Ганишина И. С. Теоретические основы исследования аддиктивного поведения личности в отечественной и зарубежной литературе. <https://novainfo.ru/article/9042>
6. Даниил Т. Аддитивное поведение: понятие, примеры, причины, виды. <https://dnevnik-znaniy.ru/psixologiya/addiktivnoe-povedenie.html>
7. Ключова О. В. Аддитивное поведение как психологическая проблема в подростковом возрасте. <https://nadejdaarh.ru/poleznaya-informatsiya/rekomendatsii-dlya-roditelej-i-pedagogov/669-addiktivnoe-povedenie-kak-psikhologicheskaya-problema-v-podrostkovom-vozzraste>
8. Ковалёв С. В. Определение уровня самооценки. https://infourok.ru/test-oprosnik-opredelenie-urovnya-samoocenki_s.v.kovalev-374172.htm
9. Лозовая Г. В. Диагностика склонности к 13 видам зависимостей. <https://kmc23.ru/press-center/psihologicheskaya-kopilka/837>
10. Минеев В. П. Аддикции и их особенности. <https://drmineev.ru/articles/addiktsii-i-ikh-osobennosti-osnovnye-vidy-zavisimostey-cheloveka>
11. Мирошкина А. М. Причины возникновения аддиктивного поведения у подростков. <https://nsportal.ru/shkola/materialy-metodicheskikh-obedinenii/library/2020/04/26/prichiny-vozniknoveniya-addiktivnogo>
12. Михайловна К. А. Причины аддиктивного поведения и факторы защиты. <https://nsportal.ru/nachalnaya-shkola/materialy-mo/2018/05/27/prichiny-addiktivnogo-povedeniya-i-factory-zashchity>
13. Пидпомога А. Ю. Аддитивное поведение у подростков и возможности его коррекции средствами физического воспитания. <https://studfile.net/preview/9049013/page:3/>
14. Спилбергер Ч. Д. Тест тревожности. <https://therapy.irkutsk.ru/doc/spilberg.pdf>
15. Тетерина В. И. Факторы формирования зависимого поведения. <https://elib.bsu.by/bitstream/123456789/280765/1/161-165.pdf>
16. Что такое аддикт? <https://ippss.ru/glossary/addikt>

ПСИХОЛОГИЧЕСКИЕ И СОЦИАЛЬНЫЕ ФАКТОРЫ ФОРМИРОВАНИЯ АДДИКТИВНОГО ПОВЕДЕНИЯ У ПОДРОСТКОВ

Барсегян Карине

Фонд “ВГУ”,

«Психология», 4-й курс

Научный руководитель:

кандидат психологических наук, доцент В. Мирзоян

Резюме

Ключевые слова: *подростковый возраст, аддиктивное поведение, аддикт, любовная, религиозная, пищевая аддикция, самооценка, тревожность*

В данной статье описывается аддиктивное поведение у подростков, ее виды, причины, факторы и этапы развития, а также взаимосвязь с самооценкой и тревожностью. В ходе исследования был использован опросник С. В. Ковалёва «Определение уровня самооценки», опросник Г. В. Лозовой «Диагностика склонности к 13 видам зависимостей», а также опросник Ч. Д. Спилбергера «Шкала тревоги». На основе результатов исследования выявили половые различия в аддикциях: девушкам свойственна пищевая и любовная аддикция, а мальчикам – религиозная и любовная аддикция.

PSYCHOLOGICAL AND SOCIAL FACTORS IN THE FORMATION OF ADDICTIVE BEHAVIOR IN ADOLESCENTS

Barseghyan Karine

“VSU” Foundation,

“Psychology”, 4th Year

Academic Supervisor: V. Mirzoyan,

Candidate of Psychological Sciences, Associate Professor

Summary

Key words: *adolescence, addictive behavior, addict, love, religious, food addictions, self-esteem, anxiety*

This article describes addictive behavior in adolescents: its types, causes, factors and stages of development, as well as the connection with self-esteem and anxiety. During the study, the S. V. Kovalev's questionnaire “Determining the level of self-esteem”, G. V. Lozovaya's questionnaire “Diagnostics of the tendency to 13 types of addictions”, as well as C. D. Spielberger's questionnaire “Anxiety scale” were used. Based on the results of the study, gender differences in addictions were revealed. Girls are characterized by food and love addiction, and boys by religious and love addiction.

**ՍԹՐԵՍԱԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՐՄԱՐՎՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ ԷՔՍՏՐՈՎԵՐՏՆԵՐԻ ԵՎ
ԻՆՏՐՈՎԵՐՏՆԵՐԻ ՄՈՏ**

Գործրյան Գրեեսա

«ՎՊՀ» հիմնադրամ,

«Հոգեբանություն», 4-րդ կուրս

Գիտական ղեկավար՝ Կ. Գ. Թ., դոցենտ Վ. Միրզոյան

Հանգուցային բառեր. սթրեսակայունություն, հարմարվողականություն, էքստրավերտ, ինտրովերտ, հոգեկան և ֆիզիկական առողջություն

21-րդ դարում սթրեսակայուն լինելը ոչ միայն ցանկալի է, այլև անհարժեշտ: Դիմակայել վայրկյան առաջ զարգացող տեխնոլոգիական աշխարհում, որը մուտք է գործել կյանքի գրեթե բոլոր ոլորտներ՝ իր հետ բերելով տեղեկատվության հոսք, դրա հետ մեկտեղ՝ սթրես, շատ դժվար է: Անընդհատ փոփոխվող աշխարհում պետք է նաև ճկուն լինել: Մարդը ստիպված է լինում մշտապես հարմարվել աշխարհում տեղի ունեցող փոփոխություններին: Սթրեսակայունությունը և հարմարվողականությունը նպաստում են սթրեսորներին դեմ պայքարելուն, «կոմֆորտ գոտուց» դուրս գործունեություն ծավալելուն, հոգեբանորեն և ֆիզիկապես առողջ լինելուն, կյանքում առաջընթաց ու հաջողություն ունենալուն:

Յուրաքանչյուր մարդ խնդիրներին արձագանքում է յուրովի, ինչը պայմանավորված է անձի տիպով: Անձի տարբեր տիպերի մոտ սթրեսակայունության և հարմարվողականության մակարդակը տարբեր է: Անկախ անձի տիպից՝ սթրեսակայուն լինելը նպաստում է առողջ հոգեկան վիճակին:

Սթրեսակայունությունը անհատական հոգեբանական հատկանիշ է, որն ապահովում է կենսաբանական, ֆիզիոլոգիական և հոգեբանական հումեոստազը [15]: Այն թույլ է տալիս մարդուն դիմակայել հոգեբանական ծանրաբեռնվածությանը՝ առանց իր հոգեկանի վրա բացասական հետևանքների [4]: Ըստ Շ. Մելնիկի՝ մեզանից շատերը նույնիսկ չեն գիտակցում, թե որքան ցածր է մեր սթրեսակայունությունը: Քնի խանգարումները, մկանային լարվածությունը, թույլ կենտրոնացումը հաճախ պայմանավորված են քրոնիկ սթրեսով [3]: Բ. Հ. Վարդանյանը սթրեսակայունությունը սահմանում է որպես մտավոր գործունեության հատուկ փոխադրվածություն, այդ թվում՝ հուզական: Նա գրում է, որ սթրեսակայունությունն ապահովում է ներդաշնակ հարաբերություններ մտավոր գործունեության բոլոր բաղադրիչների միջև և դրանով իսկ նպաստում է գործունեության հաջող իրականացմանը [2]: Բ. Հ. Վարդանյանի և Ս. Վ. Մուլբրոտիսի սահմանումներում նկատվում է սթրեսակայունության երկակիություն՝ որպես գործունեության արդյունքի վրա ազդող հատկություն (հաջողություն կամ ձախողում) և որպես անձի հումեոստազն ապահովող հատկանիշ [7]:

Մեր նպատակն էր ուսումնասիրել նաև հարմարվողականություն եզրույթը և դրա դրսևորումները անձի էքստրովերտ և ինտրովերտ տիպերի մոտ:

Չոզեֆանության մեջ «հարմարվողականություն» եզրույթը վերաբերում է անհատի հոգեկանի վերակառուցմանը՝ շրջակա միջավայրի օբյեկտիվ գործոնների ազդեցության տակ: Այն ենթադրում է նաև մարդու կարողությանը հարմարվելու շրջակա միջավայրի պահանջներին՝ առանց ներքին անհանգստության և առանց շրջակա միջավայրի հետ կոնֆլիկտի [5]: Ա. Ա. Նալչաջյանը մեկնաբանում է հարմարվողականությունը որպես «սոցիալ-հոգեբանական գործընթաց, որը բարենպաստ ընթացքով տանում է անհատին դեպի հարմարվողական վիճակ» [8]: Նա բնութագրում է սոցիալ-հոգեբանական հարմարվողականությունը «որպես անհատի և խմբի միջև հարաբերությունների վիճակ, երբ.

1. անհատն արդյունավետորեն իրականացնում է իր առաջատար գործունեությունը առանց երկարատև արտաքին և ներքին հակամարտությունների.
2. անհատը բավարարում է իր հիմնական սոցիալական պահանջները, լիովին բավարարում է այն դերի ակնկալիքները, որոնք ուղղորդող խումբը դնում է իրեն.
3. անհատն ապրում է ինքնահաստատման և իր ստեղծագործական կարողությունների ազատ արտահայտման վիճակներ» [12]:

Որոշ հեղինակներ կարծում են, որ հարմարվողականության գործընթացը մշտական է, մյուսները պնդում են, որ այն մարդու մոտ առաջանում է այն դեպքերում, երբ նա հայտնվում է սթրեսային իրավիճակում [6]: Հարմարվողականությունը սովորաբար հասկացվում է որպես որոշակի անհատական հատկանիշների առկայություն, որոնք թույլ են տալիս անհատին առավելագույնս արագ և համարժեք լուծել խնդրահարույց իրավիճակները՝ նորմալացնելով նրա փոխգործակցությունը շրջակա միջավայրի հետ [14]:

Հարմարվողականությունը դիտարկվում է որպես գործընթաց, վիճակ, հատկանիշ:

Հարմարվողականությունը որպես գործընթաց ուսումնասիրելիս դիտարկվում են դրա փուլերի փոփոխությունը, մի փուլից մյուսին անցնելու ընթացքում հուզական, վարքային և ճանաչողական բաղադրիչների փոփոխությունների դինամիկան: Որպես վիճակ նկատի ունեն տվյալ պահին անհատի հարմարվողականության աստիճանը: Որպես հատկանիշ դիտարկվում է անձի հարմարվողական բնութագրերը, վարքագծի հարմարվողական ռազմավարությունները և այլն [1]: Հարմարվողականության հայեցակարգի զարգացման գործում կարևոր ներդրում է կատարել է Ջ. Պիաժեն: Նրա հայեցակարգի համաձայն՝ հարմարվողականությունը և՛ կենսաբանության, և՛ հոգեբանության մեջ դիտվում է որպես հակադիր գործընթացների միասնություն՝ հարմարեցում և ձուլում: Դրանցից առաջինը (այն, ըստ էության, նշվում է «հարմարվողականություն» տերմինով, օգտագործելով վերջինս ավելի տարածված, նեղ իմաստով ապահովում է օրգանիզմի աշխատանքի կամ սուբյեկտի գործողությունների փոփոխությունը՝ շրջակա միջավայրի հատկություններին համապատասխան: Երկրորդ գործընթացը փո-

խում է այս միջավայրի որոշ բաղադրիչներ՝ մշակելով դրանք ըստ օրգանիզմի կառուցվածքի կամ ներառելով սուբյեկտի վարքագծի օրինաչափություններում: Այս գործընթացները սերտորեն կապված են միմյանց հետ և միջոտրում են միմյանց [1]:

Անձի հարմարվողականությունը հմտություն և հատկություն է, որը թույլ է տալիս մարդուն հարմարեցնել գործողություններն ու մտքերը՝ հիմնվելով նոր տեղեկատվության, անսպասելի խնդիրների կամ հանգամանքների վրա: Անձնական մակարդակում հարմարվողականությունը մեծացնում է ճկունությունը. ճկունությունը և հարմարվողականությունը մարդկանց էներգիա են տալիս՝ փոխվելու և սովորությունները կոտրելու, իրենց մարտահրավեր նետելու, երբ հանգամանքները փոխվում են: Ամենայն հավանականությամբ, հարմարվողականությունը նաև որոշում է հուզական ինտելեկտի զարգացման բարձր մակարդակը. նման մարդիկ հակված չեն հույզերին ենթարկվելու և ինքնատիրապետումը կորցնելու [9]:


Այսպիսով՝ հարմարվողականությունը ապահովում է օրգանիզմի գոյությունը, հոգեկան և ֆիզիկական առողջությունը: Ինչպես սթրեսակայունության դեպքում, այնպես էլ հարմարվողականության՝ կարևոր են շրջակա միջավայրը, նյարդային համակարգի տիպը, փորձառությունը և հոգեբանական մի շարք գործոններ: Մենք կներկայացնենք սթրեսակայունության և հարմարվողականության կապը անձի տիպերի հետ:

Անձի էքստրավերտ և ինտրովերտ հասկացություններն առաջին անգամ ներմուծել է Կ. Գ. Յունգը, «Չոգեբանական տիպեր» գրքում: Կ. Գ. Յունգը կարծում էր, որ էքստրավերտներն ու ինտրովերտները տարբերվում են մտփվացիայով, զգայունությամբ, ընկալումով, հաղորդասիրությամբ, մտածողությամբ, հուզականությամբ, վարքով, ինտուիցիայով:

Էքստրավերտներն իրենց կյանքում ավելի մեծ տեղ են տալիս շրջապատող աշխարհին, արտաքին օբյեկտներին, իսկ ինտրովերտները կենտրոնացած են իրենց վրա [10]:

Մեր հոդվածի նպատակն՝ ուսումնասիրել էքստրովերտ և ինտրովերտ տիպերի մոտ սթրեսակայունության և հարմարվողականության մակարդակը: Որպեսզի բացահայտենք էքստրովերտ և ինտրովերտ երիտասարդների մոտ սթրեսակայունության և հարմարվողականության մակարդակները, իրականացրինք հետազոտություն: Հետազոտությունը իրականացրել ենք 20-25 տարեկան երիտասարդնրի հետ: (Ընդհանուր հետազոտությանը մասնակցել են 30 հոգի):

Հետազոտության համար կիրառել ենք Հ. Այզենկի «Անձնային հարցաթերթը» [11], Թ. Հովմսի և Ռ. Ռահեի «Սթրեսակայունության և սոցիալական հարմարվողականության» մեթոդիկան [13], Կ.Ռոջերսի և Ռ. Դայմոնդի «Սոցիալ-հոգեբանական հարմարվողականության հարցաթերթիկը» [12]:



Տրամագիր 1. Սթրեսակայունության արդյունքները էքստրովերտների և ինտրովերտների մոտ

Ինտրովերտների՝ 20 %-ի մոտ գրանցվել սթրեսակայունության ցածր ցուցանիշ է գրանցվել, իսկ էքստրովերտների 26 %-ի մոտ է գրանցվել սթրեսակայունության ցածր ցուցանիշ: Այսինքն՝ հետազոտվողների մոտ նկատվում է սթրեսային ծանրաբեռնվածություն, նրանք բավականին շատ էներգիա են ծախսում սթրեսի արդյունքում առաջացող բացասական հոգեբանական վիճակների դեմ պայքարի վրա: Մա ենթադրում է, որ անհարաժեշտություն կա մտածելու սթրեսակայունության կառավարման գործիքներ ձեռք բերելու մասին:

Ինտրովերտների 40 %-ի մոտ սթրեսակայունության միջին կամ շեմային ցուցանիշ է, իսկ էքստրովերտների 26 %-ի մոտ է գրանցվել սթրեսակայունության միջին ցուցանիշ: Այսինքն՝ նրանց բնորոշ է սթրեսին դիմակայելու միջին աստիճանը, որը մարդկանց 80 %-ի մոտ է գրանցվում: Սթրեսակայունությունը իջնում է, քանի որ սթրեսային իրավիճակները շատանում են, ինչպես նաև նյարդային համակարգն ունի իր դերը: Այս մարդիկ ևս ունեն սթրեսակայունության կառավարման հետ կապված խնդիրներ, նրանց բնորոշ է միջին խուճապայնությունը սթրեսային իրավիճակներում:


Ինտրովերտների 13 %-ի մոտ գրանցվել է սթրեսակայունության բարձր ցուցանիշ, իսկ էքստրովերտների՝ 48 %-ի մոտ է գրանցվել սթրեսակայունության բարձր ցուցանիշ, ինչը վկայում է սթրեսային ծանրաբեռնվածության ցածր աստիճանի մասին: Այս մարդիկ չեն վատնում իրենց էներգիան և ռեսուրսները՝ պայքարելու բացասական հոգեբանական վիճակների դեմ, որոնք առաջանում են սթրեսի ժամանակ: Այսինքն կարող ենք խոսել սթրեսակայունության կառավարման գործիքներով զինված լինելու մասին: Այս տիպի մարդիկ անսպասելի իրավիճակներում դրսևորում են ճկուն մտածողություն, ունեն նյարդային համակարգի կայու-

նություն և հիմնականում ֆլեգմատիկ են, բարձր սթրեսակայունությունը լավ է անդրադառնում կյանքի որակի վրա:

Ինտրովերտների 27 %-ի մոտ գրանցվել է բավականաին բարձր սթրեսակայունություն, ինչը վկայում է, որ այս մարդիկ անգամ արտակարգ իրավիճակներում բավականին հանգիստ են և ճկուն են գործում: Նրանք արդյունավետ են գործում ցանկացած իրադրությունում և ունեն կայուն նյարդային համակարգ, հուզական ֆոն: Էքստրավերտների մոտ չի գրանցվել սթրեսակայունության բավականին բարձր ցուցանիշ, այսինքն՝ էքստրավերտները հիմնականում սթրեսակայուն են բարձր ցուցանիշի մակարդակում:

Արդյունքում պարզվեց, որ էքստրավերտների մոտ գերակայում է սթրեսակայունության բարձր մակարդակը, իսկ ինտրովերտների մոտ՝ միջին: Մինևույն ժամանակ էքստրավերտները բավականին բարձր ցուցանիշներ չեն գրանցել, իսկ ինտրավերտները գրանցել են: Այսինքն՝ ինտրավերտների միջին և բավականին բարձր սթրեսակայունությունը պայմանավորված է նրանց ներաշխարհի վրա կենտրոնացված լինելու և շրջակա միջավայրի հետ ավելի քիչ փոխազդելու հետ, քանի որ միջին կամ շեմային սթրեսակայունությունը վկայում է, որ անձը չի կարողանում կամ դժվարությամբ է ռեալիզացվում հասարակության հետ, որը իրականացվում է մեծ էներգիայի և ռեսուրսների հաշվին, իսկ բավականին բարձր սթրեսակայունությունը վկայում է, որ մարդը հեշտությամբ է սթրեսը հաղթահարում և հաջողում կյանքում:

Էքստրավերտ և ինտրավերտ տիպերի հետ կիրառելով Կ. Ռոջերսի և Ռ. Դայմոնդի «Սոցիալ-հոգեբանական հարմարվողականության հարցաթերթիկը», ստացանք հետևյալ արդյունքները:



Տրամագիր 2. Հարմարվողականության արդյունքները էքստրավերտների և ինտրավերտների մոտ

Տրամագիր 2-ում երևում է էքստրավերտների և ինտրավերտների հարմարվողականության մակարդակը: Ըստ տվյալների՝ ինտրավերտները ավելի հար-

մարվող են, քան էքստրավերտները, քանի որ ինտրավերտները գրանցել են հարմարվողականության ցածր ցուցանշում՝ 33 %, իսկ էքստրավերտները՝ 40 % և հարմարվողականության միջին ցուցանիշը ինտրավերտների մոտ՝ 67 % և էքստրավերտների մոտ՝ 60 %: Բարձր ցուցանիշ չի գրանցվել ո՛չ էքստրավերտների, ո՛չ ինտրավերտների մոտ: Հարմարվողականությունը բացահայտում է հասարակության մեջ անձի հարմարվողականության մակարդակը՝ տվյալ հասարակության պահանջներին և սեփական պահանջմունքներին, դրդապատճառներին և շահերին համապատասխան:

Կորելացիոն վերլուծությունը ցույց տվեց, որ գոյություն ունեն հետևյալ կապերը.

	<i>էքստրովերտ</i>	<i>ինտրովերտ</i>
Սթրեսակայունություն	$r = 0,1$	$r = 0,2$
Հարարվողականություն	$r = -0,5$	$r = 0,2$

Էքստրովերտների մոտ գրանցվեց ստրեսակայունության $r=0,1$ համահարաբերակցական թույլ կապ, իսկ հարմարվողականության $r=-0,5$ հակադարձ ուժեղ նշանակալի կապը, այսինքն՝ անձի էքստրավերտ տիպի մարդիկ ավելի քիչ հարմարվողական են, որը պայմանավորված է նրանց ակտիվությանը, շրջակա միջավայրի ընկալմամբ և ընդհանուր առմամբ անձնային առանձնահատկություններով: Էքստրավերտների մոտ սթրեսակայունության թույլ կապը նշանակում է, որ ոչ կոմֆորտ իրավիճակներում նրանք ավելի իմպուլսիվ են:

Ինտրավերտների մոտ և՛ սթրեսակայունության, և՛ հարմարվողականության $r=0,2$ կապը գրանցվեց, այսինքն՝ նրանց մոտ և՛ սթրեսակայունությունը, և՛ հարմարվողականությունը զարգացած են չափավոր, այսինքն՝ նրանք ոչ կոմֆորտ գոնայում ավելի կայուն են, քան էքստրավերտները:

Եզրակացություն

Կատարված հետազոտության արդյունքում եկանք այն եզրակացության, որ սթրեսակայունությունը էքստրավերտների մոտ ավելի բարձր է՝ ըստ սթրեսակայունության բարձր ցուցանիշի, իսկ ինտրավերտների մոտ ավելի բարձր է՝ ըստ սթրեսակայունության բավականին բարձր ցուցանիշի, ինչը պայմանավորված է օբյեկտ-սուբյեկտ ուղղվածությամբ, հասարակական գործունեությամբ և փորձառության:

Հարմարվողականությունը ինտրավերտների մոտ ավելի բարձր է, քան էքստրավերտների՝ պայմանավորված իրավիճակի ավելի խորը վերլուծությամբ, ներաշխարհի վրա կենտրոնացմամբ, ավելի քիչ հասարակության մեջ ներգրավվածությամբ:

Ըստ համահարաբերակցական վերլուծության՝ ինտրավերտները ավելի սթրեսակայուն և հարմարվողական են, քան էքստրավերտները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Балл Г. А. Понятие адаптации и его значение для психологии личности. Москва, 1989, с. 92-100.
2. Варданян Б. Х. Механизмы регуляции эмоциональной устойчивости. Категории, принципы и методы психологии. Психические процессы. Москва, 1983, с. 542
3. Дьяченко М. И., Пономаренко В. А. О подходах к изучению эмоциональной устойчивости. Вопросы психологии, 1990, № 1, с. 106-112.
4. Карпов А. В. Психология менеджмента. Москва, Гардарика, 2012, 584 с.
5. Постовалова Г. И. О факторах, определяющих адаптационную способность человека. Психологические и социально-психологические особенности адаптации студентов, Ереван, 1973. с. 18-19.
6. Реан А. А. К проблеме социальной адаптации личности. Вестник СПбГУ. Сер. 6. 1995. Вып. 3. № 20. с. 74-79.
7. Реан А. А., Баранов А. Р. Психология адаптации личности. Анализ. Теория. Практика. Санкт-Петербург: ПРАЙМ-ЕВРОЗНАК, 2006. 479, с. 195.
8. Налчаджян А. А. Психологическая адаптация: механизмы и стратегии. Москва: Эксмо. 2010, с. 12.
9. Адаптивность личности: как стать человеком, который готов к любым переменам https://ast-academy.ru/blog/adaptivnost_licnosti/
10. Евгений Б. Интроверт или экстраверт: как понять себя? <https://www.b17.ru/article/144939/>
11. Личностный опросник «ЕРІ» (методика Г. Айзенка) <https://psylaser.ru/practice/practice-general-psychology/psychological-tests-generalpsychology/epi-personality-questionnaire.html>
12. Даймонд Р. Методика диагностики социально-психологической адаптации. <https://psylab.org.ua/tools>
13. Методика определения стрессоустойчивости и социальной адаптации Холмса и Рае <https://psikholog.info/testy/metodika-opredeleniya-stressoustoychivosti-i-socialnoyadaptacii-holmsa-i-raise/>
14. Мельникова Н. Н. Адаптивные свойства личности: проблемы изучения» <http://myakushkin.ru/ru/biblioteka/37/adaptivnye-svoystva-lichnostiprobлемy-izucheniya.html>
15. Различные определения стрессоустойчивости <https://studfile.net/preview/7668396/page:39/>

ИССЛЕДОВАНИЕ СТРЕССОУСТОЙЧИВОСТИ И АДАПТИВНОСТИ У ЭКСТРАВЕРТОВ И ИНТРОВЕРТОВ

Гокорян Грета

Фонд "ВГУ",

«Психология», 4-й курс

Научный руководитель:

кандидат психологических наук, доцент В. Мирзоян

Резюме

Ключевые слова: *стрессоустойчивость, адаптивность, экстраверт, интроверт, психическое и физическое здоровье*

В 21-м веке быть стрессоустойчивым не только желательно, но и необходимо. Противостоять быстро развивающемуся технологическому миру, который проник в почти все сферы жизни и принес с собой огромный поток информации, а вместе с ним и стресс, становится очень трудно. В постоянно меняющемся мире нужно также быть гибким. Человек вынужден постоянно адаптироваться к изменениям, происходящим в мире. Стрессоустойчивость и адаптивность помогают бороться с стрессорами, выходить из «зоны комфорта», быть психически и физически здоровым, достигать успеха и прогресса в жизни.

STUDY OF STRESS RESISTANCE AND ADAPTABILITY IN EXTRAVERTS AND INTROVERTS

Gokoryan Greta

"VSU" Foundation,

"Psychology", 4th Year

Academic Supervisor: V. Mirzoyan,

Candidate of Psychological Sciences, Associate Professor

Summary

Key words: *stress resistance, adaptability, extravert, introvert, mental and physical health*

In the 21st century, being stress-resistant is not only desirable but essential. It is extremely difficult to withstand the rapidly developing technological world, which has penetrated nearly every aspect of life, bringing with it an enormous flow of information and, consequently, stress. In a constantly changing world, it is also necessary to be flexible. A person is forced to constantly adapt to changes happening in the world. Stress resistance and adaptability help fight against stressors, engage in activities outside the "comfort zone", maintain mental and physical health, and achieve success and progress in life.

ՈՐԴԵԿՈՐՈՒՅՍ ՄԱՅՐԵՐԻ ՀՈԳԵԿԱՆ ՎԻՃԱԿՆԵՐԻ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ

Կոռյան Միլենա

«ՎՊՀ» հիմնադրամ,

«Հոգեբանություն», 4-րդ կուրս

Գիտական ղեկավար՝ հ. գ. թ., դոցենտ Վ.Միրզոյան

Հանգուցային բառեր. *կորուստ, վիշտ, սթրեսակայունություն, տազնապայ-
նություն, ֆրուստրացիա, ռիզիդություն, ագրեսիվություն*

Հոգվածի նպատակն է ուսումնասիրել որդեկորույս մայրերի սթրեսակայու-
նությունը, հոգեկան վիճակները: Սույն հոդվածում ներկայացվել են «կորուստ» և
«վիշտ» եզրույթները, կորստի ֆիզիկական և հոգեբանական դրսևորումները,
վշտի փուլերը:

Իրականացվել է հետազոտություն, որին մասնակցել են 44 օրյա պատերազ-
մում իրենց որդիներին կորցրած մայրերը: Ուսումնասիրվել են վերջիններիս մոտ
տարբեր հոգեվիճակներ. անհանգստություն, ֆրուստրացիա, ռիզիդություն, ագրե-
սիվություն: Կատարվել է համեմատական վերլուծություն:

Կորուստը մարդու անձնական աշխարհի փոփոխությունն է, որը խախտում
է նրա էմոցիոնալ կայունությունը, ինքնագնահատականը՝ առաջ բերելով հուզա-
կան ցավ և հարմարվելու անհրաժեշտություն: Կորուստը կյանքի իրադարձու-
թյուն է, երբ մարդը զրկվում է ինչ-որ արժեքավոր բանից կամ իր համար թանկ
մարդուց:

Կորուստն ունենում է ֆիզիկական և հոգեբանական դրսևորումներ: Կորստի
ֆիզիկական դրսևորումներից են են շնչառության հետ կապված դժվարություն-
ները, հոգնածությունը, քնի և ախորժակի խանգարումները, սոմատիկ ցավերը:
Կորստի հոգեբանական դրսևորումներն են՝ շոկը, ցասումը, զայրույթը, ապա-
թիան, դեպրեսիան:

Վիշտը խոր և ցավոտ հոգեկան վիճակ է, որն առաջանում է կորստի, հատ-
կապես մարդկային կորստի դեպքում: Վիշտը բնական արձագանք է կորստին:
Վիշտն իրենից ներկայացնում է ցավ, տխրություն, դատարկություն, կարոտ [5]:

Վիշտ ապրող մարդու մոտ պարբերաբար նկատվում են «ցավային հարձա-
կումներ», որոնք տևում են մի քանի րոպեից մինչև մի քանի ժամ, ուղեկցվում են
կոկորդային սպազմներով, շնչահեղձության զգացումով, որովայնի խռոչում դա-
տարկության զգացումով, խորը շունչ քաշելու մշտական կարիքի զգացումով:
Խորը վշտի ապրման ժամանակ մարդը կորցնում է իրականության զգացումը, և
իրականության զգացողության կորստի ֆոնին վշտացող մարդը կարող է պատ-
րանքներ ունենալ, որոնք կարող են լինել տեսողական, լսողական և համակցված:
Այս վիճակում, եթե կորուստը մարդկային է, մարդուն թվում է, թե տեսնում է
կորցրած մարդուն, լսում է նրա ձայնը, շնչում է նրա օծանելիքի բույրը: Նման
պատրանքները միշտ ուղեկցվում են հուզական զգայունության բարձրացմամբ:

Այս մակարդակում իրականի և պատրանքի սահմանը գործնականում վերանում է: Մա նորմալ վիճակ է, որը հանդիպում է գրեթե բոլորի մոտ, ովքեր զգացել են մարդկային կորուստը, և այն չի համարվում հոգեկան խանգարում [1]:

Ամերիկացի հոգեբան Էլիզաբեթ Կյուբեր-Ռոսն առանձնացրել է վշտի հաղթահարման հինգ փուլ՝ ժխտում և մեկուսացում, զայրույթ, գործարք, դեպրեսիա, ընդունում: Կյուբեր-Ռոսը, նկարագրելով այս փուլերը, նշեց, որ դրանք բոլորը մարդկային նորմալ արձագանքներ են ողբերգական լուրերին՝ անվանելով դրանք պաշտպանական մեխանիզմներ: Ըստ Կյուբեր-Ռոսի՝ այդ փուլերը կարող են ունենալ տարբեր տևողություններ և կարող են միմյանց հաջորդել կամ գոյություն ունենալ միաժամանակ: Այդ փուլերն են.

Առաջին փուլ՝ ժխտում և մեկուսացում: Ժխտումը սովորաբար ժամանակավոր պաշտպանություն է համարվում: Այս փուլում մարդը չի հավատում կատարվածին կամ շոկ ապրելով՝ մեկուսանում է: Նա զգում է հուսալքություն, անօգնականություն, կարող է ունենալ ինքնասպանության մասին մտքեր:

Երկրորդ փուլ՝ զայրույթ: Ի տարբերություն ժխտման փուլի՝ զայրույթի փուլում գտնվող մարդը չի կարողանում հաղորդակցվել ընտանիքի և շրջապատի մարդկանց հետ: Պատճառը այն է, որ զայրույթը հստակ չունի թիրախ և տարածվում է բոլորի վրա: Այս փուլում մարդիկ հաճախ իրենց հարց են տալիս, թե ինչու են հենց իրենց հետ պատահել այդ դեպքը, ու որ դա արդար չէ: Մարդը դառնում է ագրեսիվ, դյուրագիզիռ, ունենում է հուզական պոռթկումներ:

Երրորդ փուլ՝ գործարք: Այս փուլում մարդը փորձում է ուղիներ փնտրել իր վիճակը հաղթահարելու համար, փորձում է հասկանալ, թե ինչ է կատարվել: Այս փուլում թուլանում է նրա լարվածությունը, նա զգում է վախ, բայց միևնույն ժամանակ նաև ապրելու հույս է արթնանում:

Չորրորդ փուլ՝ դեպրեսիա: Այս փուլում կորուստ ունեցող անձը մտածում է, որ ելք չկա, որ բոլորն անտարբեր են իր ցավի և իր նկատմամբ, և որ ինքը մենակ է: Առաջանում է տագնապ, մահվան վախ, մեղքի և ամոթի զգացում:

Հինգերորդ փուլ՝ ընդունում: Վշտի մեջ գտնվող մարդն սկսում է մտածել իր մոտալուտ մահվան մասին, բայց միևնույն ժամանակ ունենում է ապրելու ցանկություն: Նա հաճախ զգում է հոգնածություն և թուլություն: Որպես կանոն շատ է քնում: Մա նշանակում է, որ դիմադրությունը թուլանում է, բայց սա պայքարի ավարտը չէ: Մարդն այս փուլում գրեթե զուրկ է զգացմունքներից, հետաքրքրությունների շրջանակը նեղանում է, նա ավելի շատ ժամանակ է անցկացնում միայնակ [2]:


Վերոնշյալ փուլերի հաջորդականությունը անհատական է՝ կախված անձի հոգեբանական առանձնահատկություններից [6]:

Որդեկորույս մայրերի մոտ նկատվում են խորը վիշտ, մեղքի զգացում, ինքնության խաթարում, դեպրեսիա, հետտրավմատիկ սթրեսային խանգարումներ, դեպրեսիա, ապաթիա, ֆրոստրացիա, տագնապայնություն, կյանքի իմաստի կորուստ, հոգեկան և ֆիզիկական առողջության կորուստ:

Որդեկորույս մայրերի հոգեվիճակն ուսումնասիրելու համար իրականացրինք հետազոտություն: Հետազոտությանը մասնակցել են 40-65 տարեկան 40

մայրեր, որոնցից 20-ը եղել են որդեկորույս, 20-ը՝ ոչ: Հետազոտությունն իրականացվել է 2023-ին՝ պատերազմից 3 տարի հետո: Բոլոր որդեկորույս մայրերը կորցրել էին իրենց տղաներին 44-օրյա պատերազմի ժամանակ: Որպես հետազոտության մեթոդիկաներ են Հ. Այգենկի «Հոգեկան վիճակների ինքնագնահատում» [3] և Հովսեփ-Ռահեի «Մթերսակայունություն» թեստերը [5]:

Հ. Այգենկի «Հոգեկան վիճակների ինքնագնահատում» հարցարանի արդյունքները ներկայացված են տրամագիր 1-ում:



Տրամագիր 1. Որդեկորույս մայրերի հոգեկան վիճակների ինքնագնահատումը

Տրամագրից կարող ենք եզրակացնել, որ.

50 %-ի մոտ արձանագրվել էր տագնապայունության բարձր մակարդակ, ինչը նշանակում է, որ մարդն զգում է վախ, անհանգստություն, հուզական լարվածություն, խուճապի նոպաներ, տրամադրության փոփոխություններ, սոցիալական շփումներից հեռացում, կոնֆլիկտներ, ագրեսիայի պոտենցիալներ, լաց, դյուրագրգռություն, քնի խանգարումներ, հաճախակի հոգնածություն, քնկոտություն, ցավ, գլխացավ, ստամոքսի ցավ, աղեստամոքսային տրակտի խանգարումներ, սրտխառնոց, փսխումներ:

35 %-ի մոտ տագնապայունությունը եղել էր միջին մակարդակի վրա, ինչը նշանակում է, որ վերը նշված ախտանշաններն առկա են, սակայն ծայրահեղորեն արտահայտված չեն: Եթե ճիշտ ժամանակին անձը, ով գտնվում է այս մակարդակի վրա, չդիմի հոգեբանին և համապատասխան հոգեբանական օգնություն չստանա, նրա մոտ ախտանիշները կարվեն:

15 %-ի մոտ տագնապայունությունը ցածր մակարդակի վրա էր: Նրանց ախտանշանները դեռևս կառավարելի փուլում են գտնվում:

60 %-ի մոտ ֆրուստրացիայի բարձր մակարդակ էր: Սա նշանակում է, որ այս մարդիկ բավականին հիասթափված են, գտնվում են մի իրավիճակում,

որտեղ չեն կարողանում բավարարել իրենց պահանջմունքներն ու ցանկությունները: Ֆրուստրացիայի բարձր մակարդակի ժամանակ վախը, սթրեսները, որոնք առաջացել էին կորստի հետևանքով, թույլ չեն տալիս նրան հասնել իր նպատակին: Մարդը գտնվում է ապատիկ վիճակում, դյուրագրգիռ է, զգում է անզորություն և ապակողմնորոշված է:

40 %-ի մոտ ֆրուստրացիան միջին մակարդակի վրա էր, ինչը նշանակում է, որ մարդը ֆրուստրացված է: Նա տխուր է, անհանգիստ, անվստահ, և դա վկայում է այն մասին, որ կարող են հասնել բարձր մակարդակի:

Բոլոր հետազոտվողները, ըստ թեստի արդյունքների, եղել են ագրեսիվ: Նրանց բնորոշ են թշնամական գործողությունները, բացասական հույզերի բուռն արտահայտումը, պոռթկումները: Շատ հաճախ նրանք դիմացինի մեջ տեսնում են թշնամու կերպար, վերջիններիս խոսքերն ընկալում որպես թշնամական: Այսպիսի մարդիկ շատ են ցանկանում կառավարել այլոց:

60 %-ի մոտ առկա էր ռիզիդության բարձր մակարդակ: Մարդիկ նոր հանգամանքների հանդեպ ունեն վախեր, հարմարվողականության ցածր մակարդակ, դժվար են իրենց սովորություններից բաժանվում, հնից նորին անցնում:

25 %-ի մոտ եղել էր ռիզիդության միջին մակարդակ, ինչը ցույց է տալիս, որ նրանք առաջնորդվում են սոցիալական կարծրատիպերով և այլոց գաղափարներով:

15 %-ը ռիզիդ չէին:


Ինչպես տեսնում ենք, որդեկորույս մայրերի մոտ ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է ագրեսիայից: Այս փաստը կարող ենք բացատրել նրանով, որ 2023 թվականին տեղի է ունեցել Արցախի հանձնում, ինչը նրանց մոտ աջաջացրել է զայրույթ և բողոք: Նրանցից շատերը հենց այդ ժամանակ ասում էին, որ եթե Արցախը հանձնվելու էր, ապա ում էին պետք այդքան կորուստները: Նրանք կրկին վերապրել էին կորստի ցավը:

Որպեսզի մեր հետազոտությունը լիներ հիմնարար և համոզվեինք, որ ստացված արդյունքները պայմանավորված էին հենց կորստով, այլ ոչ թե այլ գործոններով, նույն թեստն իրականացրինք ստուգիչ խմբի հետ: Ստուգիչ խմբում ընդգրկված էի մայրեր, որոնք որդիներ չեն կորցրել:

Հետազոտության արդյունքները ներկայացված են 2-րդ տրամագրում:


Տրամագրից կարող ենք եզրակացնել, որ փորձարարական և ստուգիչ խմբերի մոտ գրանցվել են զգալի տարբերություններ: Այսպես, կորուստ չունեցող մայրերն ավելի պակաս տագնապային, ագրեսիվ, ռիզիդ և ֆրուստրացված են: Հատկապես ուշագրավ է այն փաստը, որ եթե կորուստ ունեցող մայրերի մոտ ագրեսիվության բարձր ցուցանիշ է գրանցվել, ապա ստուգիչ խմբի մոտ այն բացակայել է: Ինչ վերաբերում է տագնապայնությանը, ապա այն նվազել է 25 միավորով: Ֆրուստրացիայի բարձր մակարդակ ստուգիչ խմբի ոչ մի մասնակցի մոտ չի գրանցվել: Ռիզիդության ցուցանիշը ևս նվազել է 23 միավորով:

Այսպիսով՝ կատարելով համեմատական վերլուծություն, կարող ենք ասել, որ կորուստ ունեցող մայրերի մոտ, ի տարբերություն կորուստ չունեցողների, հոգեվիճակն ավելի ծանր է, քան կորուստ չունեցող անձանց մոտ:



Տրամագիր 2. Կորուստ չունեցող մայրերի մոտ հոգեկան վիճակների ինքնագնահատումը

Մեր հետազոտության նպատակն էր ուսումնասիրել նաև սթրեսակայունությունը երկու խմբերի մոտ: Իրականացնելով Հոլմս-Ռահեի «Սթրեսակայունություն» թեստը՝ ստացանք հետևյալ արդյունքները (տրամագիր 3):



Տրամագիր 3. Կորուստ ունեցող և չունեցող մայրերի սթրեսակայունության ցուցանիշները

70 %-ի մոտ գրանցվել էր սթրեսակայունության ցածր մակարդակ, այսինքն՝ նրանք դիմացկուն չեն նոր սթրեսածին գործոնների, սթրեսային իրավիճակների նկատմամբ:

30 %-մոտ առկա էր սթրեսակայունության միջին մակարդակ: Սա նշանակում է որ կորուստ ունեցող մայրերը սթրեսային իրավիճակներում կարողանում են հստակ գնահատել իրավիճակը և գտնել այն հաղթահարելու լավագույն լուծումը:

Կորուստ չունեցող մայրերի մոտ նկատվել էին հետևյալ ցուցանիշները.

15 %-ի մոտ գրանցվել էր ցածր մակարդակ: Այս դեպքում օրգանիզմն այլևս չի կարողանում դիմադրել սթրեսածին գործոնների ազդեցությանը: Տվյալ դեպքում մարդն անհանգիստ է, չի կարողանում վերլուծել սթրեսային իրավիճակը:

20 %-ի մոտ սթրեսակայունությունը գտնվում էր միջին մակարդակի վրա: Մարդու օրգանիզմը դեռևս սթրեսի պատճառով չի հյուծվել, բայց նվազել է նրա դիմադրողականությունը:

45 %-ի մոտ առկա էր սթրեսակայունության բարձր մակարդակ: Դա նշանակում է, որ այս մարդիկ կարողանում են դիմադրել սթրեսներին, դրսևորում են կայունություն:

20 %-ի մոտ գրանցվել էր սթրեսակայունության շատ բարձր մակարդակ: Նրանց բնորոշ է սթրեսային ծանրաբեռնվածության նվազագույն աստիճանը:

Այսպիսով՝ կատարելով համեմատական վերլուծություն կորուստ ունեցող և չունեցող մայրերի սթրեսակայունության ցուցանիշների վերաբերյալ՝ կարող ենք եզրակացնել, որ կորուստ ունեցող մայրերը, ի տարբերություն չունեցողների, քիչ սթրեսակայուն են:

Ամփոփելով հետազոտության արդյունքները՝ կարող ենք եզրակացնել, որ որդեկորույս մայրերը սթրեսակայուն են, բայց միևնույն ժամանակ նրանց մոտ առկա է ազդեցիկությունը, տազնապայնությունը, ֆրուստրացիան, դիզիդուսթյունը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Китаев-Смык Л. А. Психология стресса, Москва, 1983, 36 с.
2. Кюблер Э. Р. О смерти и умирании, Москва, 1969, 32-42 с.
3. http://garmoniya.uglich.ru/uploads/files/1563539995_oproshnik-g.ajzenka-samoocenka-psikhicheskikh.pdf
4. <https://hrliga.com/index.php?module=news&op=view&id=21977>
5. <https://old.gbanapa.ru/index.php/meditsinskaya-profilaktika/902-palliativnaya-pomoshch-pyat-stadij-gorya-modeli-kyubler-ross>
6. <https://psy.su/feed/12255/>
7. <https://dzen.ru/a/XqtBMUnWwxMlrWIu> 06.03.2024

ИЗУЧЕНИЕ ПСИХИЧЕСКОГО СОСТОЯНИЯ МАТЕРЕЙ, ПОТЕРЯВШИХ СЫНОВЕЙ

Кроян Милена

Фонд “ВГУ”,

«Психология», 4-й курс

Научный руководитель:

кандидат психологических наук, доцент В. Мирзоян

Резюме

Ключевые слова: *утрата, горе, стрессоустойчивость, тревожность, фрустрация, ригидность, агрессивность*

Цель статьи – изучить стрессоустойчивость матерей, потерявших и не потерявших детей, а также их психическое состояние. В данной статье представлены термины «утрата» и «гор», физические и психологические проявления утраты, а также этапы горя. Проведено исследование с участием матерей, потерявших сыновей в 44-дневной войне. Изучались различные психические состояния последних: тревожность, фрустрация, ригидность, агрессивность. Проведен сравнительный анализ.

A STUDY OF THE PSYCHOLOGICAL STATE OF MOTHERS BEREAVED OF THEIR SONS

Kroyan Milena

“VSU” Foundation,

“Psychology”, 4th Year

Academic Supervisor: V. Mirzoyan,

Candidate of Psychological Sciences, Associate Professor

Summary

Key words: *loss, grief, stress tolerance, anxiety, frustration, rigidity, aggressiveness*

The article aims to examine the stress tolerance and mental states of bereaved mothers who have experienced the loss of their sons. The article explores the concepts of “loss” and “grief,” their physical and psychological manifestations of loss, and the stages of grief. A study has been conducted among mothers who lost their sons in the 44-day war. Various psychological states have been examined, including anxiety, frustration, rigidity, and aggression. A comparative analysis has been also carried out.

**ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՄՈՏ ԱՆՈՐՈՇՈՒԹՅԱՆ ՀԱՆԴԵՊ
ՀԱՆԴՈՒՐԺՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆՁՆԱՅԻՆ ՈՐԱԿՆԵՐԻ ԿԱՊԻ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ**

Ղանաղյան Ավետիք

«ՎՊՀ» հիմնադրամ,

«Հոգեբանություն», 3-րդ կուրս

Գիտական ղեկավար՝ ի. Գ. Թ., դոցենտ Մ. Մազմանյան

Հանգուցային բառեր. *անորոշություն, հանդուրժողականություն, էքստրավերսիա, կապվածություն, ինքնավերահսկողություն, հուզական անկայունություն, էքսպրեսիվություն*

Ներածություն

Վերջին տարիներին Հայաստանի Հանրապետությունում և ամբողջ աշխարհում տիրող սոցիալական, ռազմաքաղաքական և տնտեսական վիճակը հանգեցնում է մարդու կյանքում անորոշության կտրուկ ավելացման, ինչն էլ արդիական է դարձնում անորոշության հանդեպ հանդուրժողականության հետ կապված ուսումնասիրությունների իրականացումը: Անորոշության հանդեպ հանդուրժողականության և անձնային որակների կապի ուսումնասիրության արդիականությունը պայմանավորված է մի շարք գործոններով, որոնք արտացոլում են ժամանակակից սոցիալական, տնտեսական և հոգեբանական իրականությունը: Այդ գործոններից են՝ ժամանակակից աշխարհում անորոշության և անկայունության աճը, բնակչության հոգեբանական բարեկեցությունը, մասնագիտական գործունեությունը, սոցիալական ադապտացիան և այլն: Հետազոտությունն ուղղված է հայտնաբերելու և ուսումնասիրելու անորոշության հանդեպ հանդուրժողականության և մի քանի անձնային որակների միջև եղած կապը: Անձնային որակները ուսումնասիրվել են շատ հետազոտվողների կողմից, այդ հետազոտողներից են Լյուիս Գոլդբերգը, Հանս Այզենկը, Ռեյմոնդ Քեթթելը և այլք: Անորոշության հանդեպ հանդուրժողականությունը ուսումնասիրվել է Դեյվիդ Մաքլեյնի, Տատյանա Կորնիլովայի, Ստենլի Բադների, Ռոբերտ Լիհիի և այլոց կողմից:

Հետազոտությունն անց է կացվել երիտասարդների շրջանում, քանի որ նրանց մոտ առաջանում են տարբեր հոգեբանական փոփոխություններ, որոնցից են անորոշության հանդեպ հանդուրժողականության մակարդակի փոփոխությունը, անձնային տարբեր որակներին (էքստրավերտություն, կապվածություն, ինքնավերահսկողություն, հուզական անկայունություն, էքսպրեսիվություն) վերաբերող փոփոխությունները և այլն: Երիտասարդների մոտ նշված փոփոխությունները ավելի խորը և ընդգծված են: Այդ փոփոխությունների առաջացումը կապված է տարիքային առանձնահատկությունների, անցումային շրջանի և այլ գործոնների հետ:

Հոդվածի բովանդակությունը

Անորոշությունը ներկա իրադարձությունների կամ ապագա արդյունքների

մասին տեղեկատվության պակասի գիտակցումն է: Անորոշությունը շրջապատում է մարդուն իր ամբողջ կյանքի ընթացքում: Երբ ասում ենք, որ իրավիճակն անորոշ է, մենք կամ չենք տիրապետում ամբողջ ինֆորմացիային, կամ չունենք բավարար տեղեկատվություն տվյալ իրավիճակում կոնկրետ որոշում կայացնելու համար: Անորոշությունը փաստ է, որի հետ պայքարելուն պետք է պատրաստ լինեն կյանքի բոլոր ձևերը: Կենսաբանական բարդության բոլոր մակարդակներում առկա է անորոշություն նշանների, գրգռիչների նշանակության կամ գործողությունների հնարավոր հետևանքների նկատմամբ: Եթե անորոշությունը կյանքի փաստ է, ապա անորոշության հանդեպ հանդուրժողականությունը այն պարամետրն է, որը ընդհանրացնում է անհատի ճանաչողական և հուզական գործընթացները՝ բնութագրելով ճանաչողական ոճը, համոզմունքների համակարգը, միջանձնային և սոցիալական հարաբերությունները, խնդիրների լուծման ժամանակ ցուցաբերված վարքագիծը: Անորոշության և դրա հանդեպ հանդուրժողականության մասին հետևյալ կարծիքները արտահայտել են հոգեբաններ Ամոս Տվերսկին, Դանիել Կանեմանը և Պոլ Սլովիկը [3; 4; 5]:

Հոգեբանության մեջ էքստրավերսիան անձնային որակների մի շարք է, որոնք որոշում են մարդու կոմունիկատիվությունը և շփվող լինելու հակումը: Այս հասկացության, ինչպես նաև ինտրովերսիայի սահմանումը տվել է շվեյցարացի հոգեբան և հոգեբույժ Կարլ Գուստավ Յունգը: Էքստրավերսիայի առանձնահատկությունն այն է, որ մարդն ունի բարձր, բայց ոչ շատ երկարաժամկետ արտադրողականություն, ինչը հանգեցնում է պաշտպանական մեխանիզմների թուլացման: Տիպիկ էքստրավերտները շփվող են, սիրում են խմբակային միջոցառումներ, ունեն ընկերների և ծանոթների մեծ շրջապատ, զգում են մարդկանց հետ շփվելու կարիք, ում հետ կարող են խոսել և լավ ժամանակ անցկացնել, ձգտում են զվարճանքի, չեն սիրում իրենց ծանրաբեռնել աշխատանքով կամ ուսմամբ, ձգտում են սուր տպավորությունների, հաճախ ռիսկի են դիմում, գործում իմպուլսիվ և չմտածված: Էքստրավերտները անհոգ են, լավատես և սիրում են փոփոխություններ: Նրանց մոտ հույզերի և արարքների նկատմամբ վերահսկողությունը թույլ է, ուստի նրանք հակված են դյուրագրգռության և ագրեսիվության: Աշխատանքում, որպես կանոն, կենտրոնացած են առաջադրանքը արագ կատարելու վրա, միապաղաղ գործունեությունից արագ ձանձրանում են: Էքստրավերտները նախընտրում են աշխատել մարդկանց հետ: Էքստրավերտներն իրենց ավելի առույգ են զգում երեկոյան ժամերին, իսկ կեսօրին ավելի լավ և արդյունավետ են աշխատում: Բրիտանացի հոգեբան Հանս Այգենկը փոխառել է Յունգի ներդրած տերմինները՝ ավելացնելով մի շարք բնութագիրներ: Սկզբում նա դիտարկեց այս հասկացությունները գրգռման և արգելակման գործընթացների տեսանկյունից, բայց հետո կենտրոնացավ ներքին որակների վրա[1; 6; 11]:

Կապվածության բարձր ցուցանիշը ցույց է տալիս մարդու դրական վերաբերմունքը մարդկանց նկատմամբ: Նման մարդիկ զգում են այլ մարդկանց կողքին լինելու անհրաժեշտություն: Անձնային այս որակն ունեցող մարդիկ որպես կանոն բարի, արտացավ մարդիկ են, լավ են հասկանում այլ մարդկանց, զգում են անձնական պատասխանատվություն նրանց բարեկեցության համար, հանդուր-

Ժող են այլ մարդկանց թերությունների նկատմամբ: Նրանք կարողանում են կարեկցել, աջակցել: Կապվածությունը խորը հուզական կապ է մեկ այլ մարդու հետ: Այս հասկացության մեջ կարող են համատեղվել տարբեր վիճակներ, հույզեր, զգացմունքներ՝ հետաքրքրություն, սեր, երախտագիտություն, նվիրվածություն, համակրանք: Կապվածությունը երեխայի մոտ սկզբում առաջանում է մոր հետ, այնուհետև այլ նշանակալից մեծահասակների հետ: Շատ հոգեբաններ կարծում են, որ առանց մանկության տարիքում հաստատված կապվածության զգացողության, մարդը զրկվում է մեծ տարիքում կապվածություն (ընկերություն, սեր) դրսևորելու հնարավորությունից, ինչը ազդում է նրա սոցիալականացման գործընթացի վրա և կարող է առաջացնել անձի հակասոցիալական խանգարում: Հոգեբանական կապվածությունը կարող է լինել և՛ առողջ, և՛ անառողջ: Առողջ կապվածություն հուզական կապն է, երբ դա անհրաժեշտ է, և այդ կապը դադարեցնելու ունակությունը, երբ դա տեղին չէ: Երբ կապվածությունը դադարում է լինել կառավարելի ու սկսում է ցավ պատճառել, խոսում ենք անառողջ կապվածության մասին [1; 7; 9]:

Ինքնավերահսկողությունը իրականացվում է վարքի կամային կարգավորման միջոցով: Ինքնավերահսկողության բարձր ցուցանիշ ունեցող մարդկանց բնորոշ են բարեխղճությունը, պատասխանատվությունը, պարտավորվածությունը, ճշգրտությունը և կոլիկությունը աշխատանքում: Նման մարդիկ սիրում են կարգուկանոն, նրանք համառ են իրենց գործունեության մեջ և սովորաբար բարձր արդյունքների են հասնում: Նրանք հավատարիմ են բարոյական սկզբունքներին, չեն խախտում հասարակությունում ընդունված նորմերը և պահպանում են դրանք նույնիսկ այն դեպքում, երբ նորմերն ու կանոնները թվում են դատարկ ձևակերպություններ: Նման մարդիկ հազվադեպ են ազատություն տալիս իրենց զգացմունքներին: Ինքնավերահսկողությունը ներառում է հուզական վերահսկողություն և վարքային ինքնատիրապետում: Վարքային ինքնատիրապետումը սեփական գործողությունների, ազդեցությունների և հակազդեցությունների վերահսկումն է: Հուզական վերահսկողությունը սեփական հույզերի և հուզական վիճակների տիրապետումն է [1, 8]:

Հուզականորեն անկայուն մարդիկ չեն կարողանում կառավարել իրենց հույզերը և իմպուլսիվ մղումները: Հուզական անկայունությունը դրսևորվում է մարդու վարքում: Նման մարդիկ իրենց անօգնական են զգում, չեն կարողանում հաղթահարել կյանքի դժվարությունները: Նրանց պահվածքը մեծապես կախված է իրավիճակից: Նրանք անընդհատ սպասում են ինչ-որ անհաջողությունների, ձախողումների դեպքում հեշտությամբ ընկնում են հուսահատության և դեպրեսիայի մեջ: Նման մարդիկ սթրեսակայունության ցածր մակարդակ ունեն, սթրեսային իրավիճակներում նրանց աշխատունակությունը կտրուկ նվազում է, նրանք որպես կանոն ունեն ցածր ինքնագնահատական և նեղացկոտ են: Հուզական անկայունությունը ենթադրում է հոգեբանական խնդիրների կամ անձնային խանգարումների առկայություն, որոնք բնութագրվում են տրամադրության փոփոխություններով, իմպուլսիվ վարքով ու խոսքով, թուլացած ինքնատիրապետմամբ: Հուզական անկայունություն կարող է առաջանալ մշտական հուզական լարվա-

ծության, հաճախակի սթրեսների, հոգեբանական տրավմաների, սումատիկ բնույթի հուզական խանգարումների հետևանքով: Հուզական անկայունությունը կարող է լինել 2 տեսակի՝ իմպուլսիվ և սահմանային [1, 12]:

Էքսպրեսիվությունը անձնային հատկանիշ է: Այս հատկանիշն ունեցող մարդուն բնորոշ է կյանքի նկատմամբ թեթև վերաբերմունքը, նա անհոգ և անպատասխանատու մարդու տպավորություն է թողնում, ով չի հասկանում նրանց, ովքեր հաշվարկում են իրենց ամեն քայլը և իրենց ուժերը ծախսում են նյութական բարեկեցության ստեղծման համար: Նման մարդը կյանքին վերաբերվում է ինչպես խաղի՝ կատարելով արարքներ, որոնք մյուսները համարում են անլրջության դրսևորում: Էքսպրեսիվ մարդը հեշտությամբ է սովորում, բայց բավականաչափ լուրջ չի վերաբերվում համակարգված գիտական գործունեությանը և հազվադեպ է մեծ հաջողությունների հասնում գիտության մեջ: Այսպիսի մարդիկ հաճախ վստահում են իրենց զգացմունքներին և ինտուիցիային, ունեն զարգացած գեղագիտական ճաշակ [1, 10]:

Հոդվածում ներկայացված հետազոտության նպատակն է եղել բացահայտել անորոշության հանդեպ հանդուրժողականության և անձնային տարբեր որակների միջև փոխադարձ կապերը:

Վարկած

Ելնելով հետազոտության նպատակից՝ սահմանվել է վարկած, որ առավել սերտ հակադարձ կապ կարող է լինել հուզական անկայունության և անորոշության հանդեպ հանդուրժողականության միջև:

Հետազոտության մեթոդիկաների և ընտրակազմի նկարագրությունը

Հետազոտության կատարման համար ընտրվել են հետևյալ մեթոդիկաները՝

1. Դ. Մակլեյն, «Անորոշության հանդեպ հանդուրժողականության սանդղակ» [2],


2. Հ. Տույի, «Անձի հնգագործոն հարցարան» [1]:

Հետազոտությանը մասնակցել են 18 ից 20 տարեկան 30 անձինք:

Հետազոտությունն անց է կացվել 2 մեթոդիկաների միջոցով: Հետազոտվողներին ներկայացվել են «Անորոշության հանդեպ հանդուրժողականության սանդղակ» մեթոդիկան և «Անձի հնգագործոն հարցարան» մեթոդիկան:

Արդյունքների վերլուծություն

Առաջին մեթոդիկայի վերլուծության արդյունքները ներկայացված են տրամագիր 1-ում:




Տրամագիր 1. Անորոշության հանդեպ հանդուրժողականության ցուցանիշներ

Առաջին մեթոդիկայի միջոցով ստացված արդյունքների վերլուծությունից պարզ դարձավ, որ 30 հետազոտվողներից անորոշության հանդեպ հանդուրժողականության բարձր մակարդակ է գրանցվել 10 %-ի մոտ, միջին մակարդակ՝ 76,67 %-ի մոտ և ցածր մակարդակ՝ 13,33 %-ի մոտ:

Երկրորդ մեթոդիկայի վերլուծության արդյունքները ներկայացված են 2-րդ տրամագրում:

Երկրորդ մեթոդիկայի միջոցով ստացված արդյունքների վերլուծությունից պարզ դարձավ, որ 30 հետազոտվողներից Էքստրավերսիայի բարձր մակարդակ գրանցվել է 56,67 %-ի մոտ, միջին մակարդակ՝ 36,67 %-ի մոտ, իսկ ցածր մակարդակ՝ 6,66 %-ի մոտ: Կապվածության բարձր մակարդակ գրանցվել է 76,67 %-ի մոտ, իսկ միջին մակարդակ՝ 23,33 %-ի մոտ: Ինքնավերահսկողության բարձր մակարդակ գրանցվել է 86,66 %-ի մոտ, միջին և ցածր մակարդակներ՝ 6,67 %-ի մոտ: Հուզական անկայունության տոկոսային ցուցանիշները բոլոր 3 մակարդակների համար էլ հավասար են և կազմում են 33,33 %: Էքսպրեսիվության բարձր մակարդակ գրանցվել է 90 %-ի մոտ, միջին մակարդակ՝ 6,67 %-ի մոտ, իսկ ցածր մակարդակ՝ 3,33 %-ի մոտ:



Տրամագիր 2. Էքստրավերսիայի, կապվածության, ինքնավերահսկողության, հուզական անկայունության և էքսպրեսիվության ցուցանիշներ

Աղյուսակ 1.

Անորոշության հանդեպ հանդուրժողականության և անձնային որակների միջև Սպիրմենի ռանգային կորելացիայի ցուցանիշներ

	Անորոշության հանդեպ հանդուրժողականություն
Էքստրավերսիա	0.42 (p=0.05)
Կապվածություն	0.1
Ինքնավերահսկողություն	0.33 (p=0.1)
Հուզական անկայունություն	-0.52 (p=0.01)
Էքսպրեսիվություն	0.31 (p=0.1)

Հետազոտության արդյունքում պարզվեց, որ.

1. Անորոշության հանդեպ հանդուրժողականության և էքստրավերսիայի

միջև կորելացիայի գործակիցը, ըստ Սպիրմենի, կազմում է 0.42 (չափավոր կապ): Կորելացիայի սխալի հավանականության գործակիցը կազմում է 0.05:

2. Անորոշության հանդեպ հանդուրժողականության և ինքնավերահսկողության միջև կորելացիայի գործակիցը, ըստ Սպիրմենի, կազմում է 0.33 (չափավոր կապ): Կորելացիայի սխալի հավանականության գործակիցը կազմում է 0.1:

3. Անորոշության հանդեպ հանդուրժողականության և հուզական անկայունության միջև կորելացիայի գործակիցը, ըստ Սպիրմենի, կազմում է -0.52 (նկատելի կամ միջին ուժի, հակադարձ կապ): Կորելացիայի սխալի հավանականության գործակիցը կազմում է 0.01:

4. Անորոշության հանդեպ հանդուրժողականության և էքսպրեսիվության միջև կորելացիայի գործակիցը, ըստ Սպիրմենի, կազմում է 0.31 (չափավոր կապ): Կորելացիայի սխալի հավանականության գործակիցը կազմում է 0.1:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Хромов А. Б. Пятифакторный опросник личности. Учебно-методическое пособие. Курган: КГУ, 2000, с. 18-22.
2. Леонтьев Д. А., Осин Е. Н., Луковицкая Е. Г. Диагностика толерантности к неопределенности: Шкалы Д. Маклейна. Москва: Смысл, 2016.
3. Канеман Д., Словик П., Тверски А. Принятие решений в неопределенности: Правила и предубеждения. Харьков: гуманитарный центр, 2005, с. 632.
4. Леонов И. Н. Толерантность к неопределенности как психологический феномен: история становления конструкта. Вестник Удмуртского университета. Вып. 4, 2014, стр. 43.
5. Вовчек А. Что движет нами в ситуации неопределенности? <https://www.irk.ru/news/articles/20191024/uncertainty/>
6. Козлов Н. И. Экстраверт <https://psychologos.ru/articles/view/ekstravert>
7. Козлов Н. И. Как формируется психологическая привязанность? <https://psychologos.ru/articles/view/kak-formiruetsya-psihologicheskaya-privyazannost>
8. Козлов Н. И. Самоконтроль <https://psychologos.ru/articles/view/samokontrol>
9. Глоссарий: Психологический словарь. Привязанность: <https://www.psychologies.ru/glossary/15/privyazannost/>
10. Экспрессивность: <https://psychologos.ru/articles/view/ekspressivnost>
11. Экстраверсия: <https://blog.wikium.ru/ekstraversiya.html>
12. Эмоциональная неустойчивость: <https://mosmd.ru/mosmed-klinika-funktsionalnyih-narusheniy/napravlenie-funktsionalnaya-nevrologiya/neustojchivost>

ИССЛЕДОВАНИЕ ВЗАИМОСВЯЗИ ТОЛЕРАНТНОСТИ К НЕОПРЕДЕЛЕННОСТИ И ЛИЧНОСТНЫХ КАЧЕСТВ У МОЛОДЕЖИ

Ганадян Аветик

Фонд “ВГУ”,

“Психология”, 3-й курс

Научный руководитель:

кандидат психологических наук, доцент М. Мазманиян

Резюме

Ключевые слова: *неопределенность, толерантность, экстраверсия, привязанность, самоконтроль, эмоциональная нестабильность, экспрессивность*

В статье представлено исследование толерантности к неопределенности и экстраверсии, привязанности, самоконтроля, эмоциональной нестабильности, а также экспрессивности и связи между ними у молодежи. Полученные в ходе исследования данные показывают, что толерантность к неопределенности имеет положительную связь с экстраверсией, самоконтролем и экспрессивностью, тогда как между эмоциональной нестабильностью и толерантностью к неопределенности существует отрицательная связь.

STUDY OF THE RELATIONSHIP BETWEEN TOLERANCE FOR UNCERTAINTY AND PERSONAL QUALITIES IN YOUNG PEOPLE

Ghanadyan Avetik

“VSU” Foundation,

Psychology, 3rd Year

Academic Supervisor: M. Mazmanyanyan,

Candidate of Psychological Sciences, Associate Professor

Summary

Key words: *uncertainty, tolerance, extraversion, attachment, self-control, emotional instability, expressiveness*

The article presents a study of tolerance for uncertainty and extraversion, attachment, self-control, emotional lability, as well as expressiveness in young people and the interrelation between them. The data obtained from the study show that tolerance for uncertainty has positive relationships with extraversion, self-control, and expressiveness, while there is a negative link between emotional instability and tolerance for uncertainty.

ԽԱՌՆՎԱԾՔԻ ԵՎ ԲՆԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՇԵՇՏՎԱԾՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Ղանաղյան Ավետիք, Անայան Անի

«ՎՊՀ» հիմնադրամ,

«Հոգեբանություն», 3-րդ կուրս

Գիտական ղեկավար՝ Տ. Մալումյան

Հանգուցային բառեր. *խառնվածք, խառնվածքի տիպեր, բնավորություն, բնավորության շեշտվածություններ, էքստրավերսիա, նեյրոտիզմ, դեռահասության տարիք*

Հոդվածում ներկայացվում է դեռահասների շրջանում բնավորության շեշտվածության և խառնվածքի տիպերը որոշող հատկությունների՝ էքստրավերսիայի և նեյրոտիզմի միջև կապի ուսումնասիրությունը: Հոդվածի հիմնական նպատակն է բացահայտել, թե խառնվածքը ինչպես է ազդում բնավորության շեշտվածությունների ձևավորման վրա: Հետազոտության համար տեսական հիմք են հանդիսացել խառնվածքի վերաբերյալ Այզենկի, Պավլովի, Կրեյչմերի, Շելդոնի տեսությունները և Լիչկոյի, Լեոնհարդի բնավորության շեշտվածության վերաբերյալ մոտեցումները: Հետազոտության նպատակից բխում են մի քանի հիմնական խնդիրներ՝

1. ուսումնասիրել թեմայի վերաբերյալ առկա տեսական և փորձարարական գրականությունը,
2. ուսումնասիրել խառնվածքը և բնավորության շեշտվածությունները դեռահասության տարիքում,
3. բացահայտել խառնվածքի տիպերը որոշող գործոնների՝ էքստրավերսիայի և նեյրոտիզմի ու բնավորության շեշտվածությունների միջև առկա կապերը դեռահասների շրջանում:

Խառնվածքի և բնավորության շեշտվածության ուսումնասիրության կարևորությունը դրսևորվում է նրանում, թե ինչպես են տարբեր անհատական առանձնահատկություններն ազդում մարդու վարքի և հույզերի վրա, ինչպես նաև անձի բնածին առանձնահատկությունների ազդեցությունը կյանքի ընթացքում առաջացող առանձնահատկությունների ձևավորման վրա:

Որպես հետազոտության արդյունք՝ հոդվածում ներկայացված են դեռահասների մոտ գրանցված խառնվածքի տիպերի և բնավորության շեշտվածությունների դրսևորվածության ցուցանիշները, խառնվածքի որոշման համար նախատեսված 2 հատկությունների՝ էքստրավերսիայի և նեյրոտիզմի կապը բնավորության շեշտվածությունների հետ և ստացված արդյունքների մեկնաբանությունները:

Ներածություն

Մարդկության պատմության ընթացքում փիլիսոփաները, մանկավարժները, հոգեբանները, առնչվելով մարդկային բազմազանության և բարդության հետ, փորձել են առանձնացնել որոշակի տիպեր՝ անձը բնութագրելու համար: Առա-

ջարկվել են տարբեր դասակարգումներ, որոնց մի մասը հիմնվում էր տեսական, իսկ մյուս մասը փորձնական տվյալների վրա: Մարդու վարքի առանձնահատկությունները պայմանավորված են ինչպես նրա ներքին դրդապատճառներով, այնպես էլ արտաքին գործոններով: Սակայն մարդու ակտիվության վրա էական ազդեցություն են ունենում նաև խառնվածքի և բնավորության առանձնահատկությունները: Այսպիսով, խառնվածքը մարդու անհատական առանձնահատկությունների ամբողջությունն է, որը պայմանավորում է նրա հոգեկան գործունեությունը և վարքի դինամիկան: Խառնվածքը անձի կայուն անհատական առանձնահատկությունների օրինաչափ հարաբերակցությունն է, որը բնութագրում է հոգեկան գործունեության դինամիկայի տարբեր կողմերը [1]:

Խառնվածքով է պայմանավորված հոգեկանի գործունեության բնույթը.

1. հոգեկան գործընթացների արագությունը (օրինակ՝ ըմբռնման արագությունը, մտքի արագությունը),
2. հոգեկան գործընթացների տեմպը և ռիթմը,
3. հոգեկան գործընթացների ինտենսիվությունը (օրինակ՝ հույզերի ուժը),
4. հոգեկան գործունեության ուղղվածությունը որոշակի օբյեկտի վրա (օրինակ՝ մարդու մշտական ձգտումը նոր մարդկանց հետ շփվելու, նոր տպավորություններ ստանալու) [1]:

Խառնվածքի տիպերի դասակարգման առաջին փորձը պատմության մեջ հանդիսանում է հումորալ տեսությունը: Այն հիմնված է մ. թ. ա. 5-րդ դարում հին հույն բժիշկ Հիպոկրատի առաջ քաշած հեղուկների մասին տեսության վրա: Համաձայն այդ տեսության՝ մարդու օրգանիզմում եղած չորս հեղուկների՝ արյան, լիմֆայի, դեղին լեղիի և սև լեղիի օպտիմալ հարաբերության խախտումը հանգեցնում է տարբեր հիվանդությունների, իսկ պահպանումը ապահովում է առողջ վիճակը: Ընդ որում Հիպոկրատը ոչ մի կապ չէր հաստատում այդ հեղուկների քանակի հարաբերության և մարդու հոգեկան հատկությունների մեջ: Դա արեց հռոմեացի բժիշկ Կլավդիոս Գալենը, և ըստ այն բանի, թե այդ հեղուկներից որն է գերակշռում օրգանիզմում՝ արյունը, լիմֆան, դեղին լեղին, թե սև լեղին, նա մարդկանց ըստ խառնվածքի տիպերի բաժանեց 9 խմբի, որոնցից սակայն հետագայում մնացին չորսը՝ սանգվինիկ, ֆլեգմատիկ, խոլերիկ և մելանխոլիկ տիպերը: Ըստ Գալենի՝ սանգվինիկների մոտ գերակշռում էր արյունը, ֆլեգմատիկների մոտ լիմֆան, խոլերիկներ մոտ դեղին լեղին, իսկ մելանխոլիկներ մոտ՝ սև լեղին [8, 9]:

Խառնվածքի ամենահայտնի տեսություններից մեկը Պավլովի տեսությունն է: Պավլովը նշում էր, որ խառնվածքի հիմքում բարձրագույն նյարդային համակարգի տիպն է և դրա դրսևորումները

1. գրգռման և արգելակման գործընթացի ուժը, որը պայմանավորված է նյարդային բջիջների աշխատունակությամբ,
2. նյարդային համակարգի հավասարակշռությունը, այսինքն՝ գրգռման ուժի համապատասխանության աստիճանը արգելակման ուժին,
3. նյարդային պրոցեսների շարժունակությունը, այսինքն՝ գրգռումից արգելակման փոփոխման արագությունը:

Այսպիսով՝ Պավլովը խառնվածքի տիպերը բնութագրում էր հետևյալ կերպ.

- ուժեղ, հավասարակշռված, շարժուն՝ սանզվինիկ,
- ուժեղ, հավասարակշռված, իներտ՝ ֆլեգմատիկ,
- ուժեղ, անհավասարակշռված, շարժուն՝ խոլերիկ,
- թույլ, անհավասարակշռված, իներտ՝ մելանխոլիկ [1, 5]:

Խառնվածքի ուսումնասիրման պատմության մեջ փոփոխվում են նրա ֆիզիոլոգիական հիմքերի վերաբերյալ գաղափարները: Սկսում են ձևավորվել կոնստիտուցիոնալ տեսությունները: 20-րդ դարում փորձում էին կապ գտնել մամնի կազմվածքի և անձի հատկությունների միջև: Բոլոր կոնստիտուցիոնալ (մարմնակազմվածքային) տեսությունները հիմնվում են երկու դրոյթների վրա, որոնք կոչվում են «կոնստիտուցիոնալ վարկած». առաջին հերթին մարմնի կազմվածքը և վարքը նշանակալիորեն կապված են միմյանց հետ, երկրորդ հերթին այդ կապն ունի «կոնստիտուցիոնալ» բնույթ, այսինքն ավելի շուտ հիմնված է ժառանգականության վրա: Մարդու մարմնի կառուցվածքային տիպերի և հոգեբանական տիպերի միջև կապերի հետևողական հետազոտությամբ առաջինը զբաղվել է գերմանացի հայտնի հոգեբույժ Կրեչմերը, ապա այն զարգացվեց ամերիկացի հոգեբան Շելդոնի հետազոտություններում:

Ձևաբանության տեսանկյունից Կրեչմերը առանձնացրել է 3 հոգեսոմատիկ տիպեր, որոնց անվանումները վերցրել է հունական արմատներից:

1. Պիկնիկ
2. Աստենիկ կամ լեպտոսոմատիկ
3. Ատլետիկ

Այս դասակարգմանը ավելացնում են նաև 4-րդ տիպը.

4. Դիսպլաստիկ

Մարդու հոգեբանական հատկանիշների մյուս տիպաբանությունը ֆիզիկական բնութագրումների հիման վրա պատկանում է Ուիլյամ Շելդոնին: Ի սկզբանե Շելդոնը չէր առանձնացնում հստակ սահմանված տիպեր: Շելդոնը իր դասակարգման հիմքում դրեց մարդու օրգանիզմում սաղմի հյուսվածքներից մեկի գերակշռությունը՝ էնդոդերմի, որից կազմավորվում են մարսողության օրգանները, մեզոդերմի, որից կազմավորվում են ոսկորները, մկանները և թոքերը, կամ էկտոդերմից, որից կազմավորվում են մաշկը, մազերը, եղունգները, նյարդային համակարգը և ուղեղը: Վերլուծելով քուլեջի ուսանողների 4000 լուսանկարներ և կատարելով կորեյացիոն վերլուծություն արտաքին հատկանիշների և 50 վարքային բնութագրումների միջև՝ նա առաջարկեց տարբերակել անձի 3 հետևյալ տիպերը.

1. Էնդոմորֆ,
2. Մեզոմորֆ,
3. Էկտոմորֆ:

Շելդոնի կողմից ստեղծված տիպաբանությունը կոնստիտուցիոնալների մեջ համարվում է ամենահիմնավորվածը և վիճակագրորեն հաստատվածը [7, 10]:

Խառնվածքի մեկ այլ հայտնի տեսություն է Այգենկի տեսությունը, որի վրա էլ հիմնված է նրա ստեղծած անձնային հարցարանը: Այգենկի հարցարանում խառնվածքի տիպը որոշվում է 2 սուպերգործոնների միջոցով, դրանք են՝ նեյրո-

տիզմը և էքստրավերսիան: Նեյրոտիզմը ցույց է տալիս անձի ինտենսիվ բացասական հույզեր ապրելու հակումը: Նեյրոտիզմի բարձր մակարդակ ունեցող անձինք հակված են տագնապի և անհանգստության: Էքստրավերսիան ցույց է տալիս անձի ուղղվածությունը դեպի սոցիալական շփումները, կոնտակտները: Էքստրավերստները առանձնանում են շփվողականությամբ, ակտիվությամբ, իմպուլսիվությամբ և այլն [11]:

Բնավորությունն անձի էական հատկանիշների ամբողջությունն է, որը բնութագրում է մարդու վերաբերմունքը շրջապատող աշխարհի և ինքն իր նկատմամբ ու դրսևորվում է նրա վարքում, արարքներում: Մարդու բնավորությունը ձևավորվում է նրա խառնվածքի հիման վրա, բայց դաստիարակության որոշիչ ազդեցությամբ: Բնավորությունը մարդու կյանքի ընթացքում ենթարկվում է բազմաթիվ փոփոխությունների:

Մարդու բնավորության գծերը հիմնականում բաժանվում են 4 խմբի.

1. Ինքն իր նկատմամբ վերաբերմունքի գծեր
2. Ուրիշների նկատմամբ վերաբերմունքի գծեր
3. Գործի նկատմամբ վերաբերմունքի գծեր
4. Սեփականության հանդեպ վերաբերմունքի գծեր:

Լեոնհարդը կազմել է բնավորության շեշտադրումների դասակարգում: Նա բնավորության շեշտադրումները համարում էր նորմայի ծայրահեղ դրսևորումներ: Լեոնհարդը առանձնացնում էր բնավորության 4 շեշտադրումներ և խառնվածքի 6 շեշտադրումներ:

Նրա առանձնացրած բնավորության շեշտադրումներն են.

1. Ցուցադրական տիպ
 2. Մանրախնդիր տիպ
 3. Արգելակվող տիպ
 4. Գրգռվող տիպ
- Լեոնհարդի առանձնացրած խառնվածքի շեշտադրումներն են.

1. Հիպերտիմիկ տիպ
2. Դիստիմիկ տիպ
3. Տագնապային-վախկոտ տիպ
4. Ցիկլոտիմիկ տիպ
5. Հուզական տիպ
6. Աֆեկտիվ տիպ [3, 12]:

Շեշտազայում Լիչկոն, զարգացնելով Լեոնհարդի գաղափարները, ստեղծում է մի դասակարգում, որը շատ հարցերում նման է և հատվում է Լեոնհարդի դասակարգման հետ: Լիչկոն ստեղծել է նաև դեռահասների և մեծահասակների բնավորության շեշտվածության որոշման համար հատուկ հարցարան: Լիչկոն առանձնացնում էր բնավորության շեշտվածության 11 տիպեր:

1. Հիպերտիմ տիպ – բնութագրվում է բարձր կենսունակությամբ, ակտիվությամբ և լավատեսությամբ:
2. Ցիկլոտիկ տիպ – բնութագրվում է ակտիվության և կենսունակության փոփոխականությամբ, պասիվության և ճնշվածության ֆազաներով:

3. Լաբիլ տիպ – բնութագրվում է տրամադրության փոփոխություններով՝ առանց որևէ ակնհայտ պատճառի:
4. Ասթենո-նևրոտիկ տիպ – բնութագրվում է բարձր զգայունությամբ, անհանգստության և տագնապայնության հակումով:
5. Մենսիտիվ տիպ – բնութագրվում է բարձր զգայունությամբ, անհանգստության և տագնապայնության հակումով:
6. Պսիխաստենիկ տիպ – բնութագրվում է մտածմունքների, անվճռականության, անհանգստության և ներհայեցողության հակումով:
7. Շիզոիդ տիպ – բնութագրվում է մեկուսացվածությամբ, հուզական շփումներից կտրվածությամբ և ինդիվիդուալիզմով:
8. Էպիլեպտիդ տիպ – բնութագրվում է ագրեսիայի, դյուրագրգռության և գերիշխանության հակումներով:
9. Հիստերիկ տիպ – բնութագրվում է թատերական վարքով, ուշադրության կենտրոնում լինելու ցանկությամբ և հուզական շարժունությամբ:
10. Անկայուն տիպ – բնութագրվում է թուլակամությամբ, հաճույք ստանալու և պատասխանատվությունից խուսափելու հակումով:
11. Կոնֆորմ տիպ – բնութագրվում է ընդօրինակելու հակումով, դատողություններում և վարքում անկախ լինելու անկարողությամբ [4, 13]:

Հետազոտության մեթոդիկաները և ընտրակազմը.

Հետազոտության իրականացման համար ընտրվել են հետևյալ մեթոդիկաները՝

1. Ն. Այգենկ «Անձնային հարցարան» [6]
2. Ն. Շմիշեկ «Անձնավորության շեշտվածության հարցարան» [2]

Հետազոտության ընտրանքն են կազմել 13 ից-15 տարեկան 15 աղջիկներ և 15 տղաներ:


Արդյունքների վերլուծություն

Մեր կողմից առաջադրված խնդիրները լուծելու համար իրականացվել է փորձարարական հետազոտություն: Փորձարարական հետազոտության շրջանակներում կիրառվել են 2 մեթոդիկաներ: Մեր կողմից կիրառված առաջին մեթոդիկան է Այգենկի խառնվածքի հարցարանը, որը նախատեսված է անձի խառնվածքի տիպը որոշելու համար: Ըստ կիրառված հարցարանի խառնվածքի տիպը որոշվում է երկու գործոնների՝ էքստրավերսիայի և նեյրոտիզմի միջոցով: Բնավորության շեշտվածությունները որոշելու համար կիրառվել է Շմիշեկի հարցարանը, որում առանձնացվում են բնավորության շեշտվածությունների 10 տիպեր, դրանք են՝ գերշարժուն, դիստիմիկ, ցիկլոտիմիկ, հուզական, ցուցադրական, խցանվող, պեդանտիկ, տագնապային, գրգռվող և էկզալտիվ տիպերը: Մեթոդիկաներից յուրաքանչյուրի միջոցով ստացված արդյունքները վերլուծվել և մեկնաբանվել են, ինչպես նաև փորձարարական հետազոտության շրջանակներում իրականացվել է կորելացիոն վերլուծություն՝ համաձայն Սպիրմենի ռանգային կորելացիայի: Հետազոտության արդյունքները կներկայացնենք ստորև:

Դեռահասների շրջանում խառնվածքի տիպերի ցուցանիշներ

<i>Սանգվինիկ</i>	<i>Ֆլեգմատիկ</i>	<i>Խոլերիկ</i>	<i>Մելանխոլիկ</i>
26,67 %	13,33 %	36,67 %	23,33 %

Հետազոտվողների ընդհանուր թվից (30) 11-ի մոտ հայտնաբերվել է խառնվածքի խոլերիկ տիպ (36,67 %), 8-ի մոտ սանգվինիկ տիպ (26,67), 7-ի մոտ մելանխոլիկ տիպ (23,33 %), իսկ 4-ի մոտ ֆլեգմատիկ տիպ (13,33 %):



Տրամագիր 1. Դեռահասների շրջանում խառնվածքի որոշման հիմնական գործոնների՝ էքստրավերսիայի և նեյրոտիզմի ցուցանիշները

Տրամագրում ներկայացված տվյալներից պարզ է դառնում, որ հետազոտվողների մեծ մասը (63,33 %) էքստրավերտ է, այսինքն՝ ուղղված է դեպի արտաքին աշխարհ, շփվող է, ակտիվ: Ինտրովերտների թիվը համեմատաբար ավելի փոքր է (36,67 %), նրանք ունեն ներքին ուղղվածություն, շփումների նեղ շրջանակ և ինքնամփոփ են: Հետազոտվողների մեծ մասի մոտ գրանցվել է նեյրոտիզմի բարձր մակարդակ (60 %), որը խոսում է գրգռվողականության, անհանգստության և տագնապայնության բարձր մակարդակի մասին: Նեյրոտիզմի ցածր մակարդակը (40 %) խոսում է ավելի կայուն և հավասարակշռված հուզական ոլորտի առկայության մասին:

Աղյուսակ 2.

Դեռահասների շրջանում բնավորության շեշտվածությունների դրսևորման ցուցանիշներ

<i>Տիպեր</i>	<i>Ցուցանիշ</i>
Գերշարժուն տիպ	60 %
Դիստիմիկ տիպ	16,67 %
Ցիկլոտիմիկ տիպ	23,33 %
Հուզական տիպ	40 %
Ցուցադրական տիպ	13,33 %
Խցանվող տիպ	20 %
Պեղանտիկ տիպ	16,67 %
Տազնապային տիպ	10 %
Գրգռվող տիպ	16,67 %
Էկզալտիվ տիպ	66,67 %

Ստացված արդյունքներից պարզ է դառնում, որ հետազոտվողների շրջանում գերակշռում են էկզալտիվ (66,67 %) և գերշարժուն (60 %) բնավորության շեշտվածությունները, իսկ ավելի հազվադեպ են հանդիպում տազնապային (10%), ցուցադրական (13,33%), պեղանտիկ (16,67%), գրգռվող (16,67%) և դիստիմիկ (16,67%) բնավորության շեշտվածությունները: Խցանվող բնավորության շեշտվածությունը դրսևորվել է հետազոտվողների 20%-ի մոտ, ցիկլոտիմիկը՝ 23,33%-ի մոտ, իսկ հուզականը 40%-ի մոտ: Հարկավոր է նշել, որ միևնույն անձի մոտ կարող են արտահայտված լինել մի քանի բնավորության շեշտվածություններ:

Աղյուսակ 3.

Դեռահասների շրջանում խառնվածքի տիպերի որոշման հիմնական գործոնների էքստրավերսիայի, ներոտիզմի և բնավորության շեշտվածությունների միջև կորելացիոն կապերի ցուցանիշները

	<i>Էքստրավերսիա</i>	<i>Ներոտիզմ</i>
Գերշարժուն տիպ	0,34	-0,32
Դիստիմիկ տիպ	-0,44	0,17
Ցիկլոտիմիկ տիպ	0,22	0,3
Հուզական տիպ	-0,08	0,43
Ցուցադրական տիպ	-0,05	0,17
Խցանվող տիպ	-0,3	-0,01
Պեղանտիկ տիպ	-0,29	0,43
Տազնապային տիպ	-0,12	0,66
Գրգռվող տիպ	0,08	0,53
Էկզալտիվ տիպ	-0,17	0,36

Աղյուսակում ներկայացված են էքստրավերսիայի, ներոտիզմի և բնավորության շեշտվածության միջև առկա կապերը ըստ՝ Սպիրմենի ռանգային կորելացիայի: Աղյուսակում ներկայացված տվյալներից հետևում է, որ գերշարժուն

տիպի և էքստրավերսիայի միջև առկա է կորելացիոն կապ, որի դեպքում կորելացիայի սխալի հավանականության գործակիցը կազմում է 0,1: Այս կապի առկայությունը կարող է պայմանավորված լինել այն հանգամանքով, որ գերշարժուն տիպին բնորոշ է ակտիվությունը, շփվողությունը, եներգիայով լի լինելը, որոնք էլ հանդիսանում են էքստրավերսիայի անմիջական դրսևորումներ: Գերշարժուն տիպի և նեյրոտիզմի միջև հայտնաբերվել է բացասական կորելացիոն կապ, որի դեպքում ևս կորելացիայի սխալի հավանականության գործակիցը 0,1 է: Այս բացասական կապը կարող է պայմանավորված լինել այն հանգամանքով, որ գերշարժուն տիպի մոտ հույզերը ավելի կայուն են և հիմնականում ունեն դրական բովանդակություն, ինչը չի կարելի ասել նեյրոտիզմի արդյունքում դրսևորվող հույզերի մասին: Չափավոր բացասական կապ է հայտնաբերվել դիստիմիկ տիպի և էքստրավերսիայի միջև, որը կարող է պայմանավորված լինել նրանով, որ դիստիմիկ տիպը աչքի է ընկնում մոայլությամբ, ցածր շփվողականությամբ, հոռետեսությամբ, իսկ էքստրավերսիայի դեպքում առկա են լրիվ հակառակ դրսևորումները: Այս կապի դեպքում կորելացիայի սխալի հավանականության գործակիցը կազմում է 0,05: Չափավոր կորելացիոն կապեր են հայտնաբերվել հուզական տիպի և նեյրոտիզմի, ինչպես նաև պեղանտիկ տիպի և նեյրոտիզմի միջև, որոնց դեպքում կորելացիայի սխալի հավանականության գործակիցը կազմում է 0,05: Հուզական տիպի և նեյրոտիզմի միջև կապը կարող է պայմանավորված լինել այն հանգամանքով, որ երկուսի դեպքում էլ դրսևորվում են դյուրագրգռություն, զգայունություն, խորը հուզական դրսևորումներ: Իսկ պեղանտիկ տիպի և նեյրոտիզմի միջև առկա կապը կարելի է բացատրել այն հանգամանքով, որ պեղանտիկ տիպի տարբեր դրսևորումների կասկածամտության, ցածր արդյունավետության, չափից դուրս մանրախնդրության պատճառով անձի մոտ հաճախակի կարող են առաջ գալ բացասական հույզեր, նեյրոտիզմի դրսևորումներ, որոնք էլ հիմք կարող են հանդիսանալ մեր կողմից հայտնաբերված կապի համար: Տազնապային տիպի և նեյրոտիզմի միջև հայտնաբերվել է նկատելի կորելացիոն կապ, որը բացատրվում է այն հանգամանքով, որ տազնապային տիպի հիմնական դրսևորումներից տազնապը, սուր բացասական հույզերը, անվստահությունը, անհանգստությունը պատկանում են նաև նեյրոտիզմի գլխավոր դրսևորումների շարքին: Այս կորելացիոն կապի դեպքում սխալի հավանականության գործակիցը կազմում է 0,001: Մյուս կորելացիոն կապը հայտնաբերվել է գրգռվող տիպի և նեյրոտիզմի միջև: Այս կապը կարելի է բացատրել այն հանգամանքով, որ գրգռվողականությունը և հուզական անկայունություն, որոնք հանդիսանում են նեյրոտիզմի դրսևորումներ, բնորոշ են գրգռվող տիպի անձանց: Այս դեպքում կորելացիայի սխալի հավանականության գործակիցը կազմում է 0,01: Վերջին կորելացիոն կապը հայտնաբերվել է էկզալտիկ տիպի և նեյրոտիզմի միջև: Այս կապը կարող է պայմանավորված լինել այն հանգամանքով, որ էկզալտիկ տիպի անձինք աչքի են ընկնում հուզական ապրումների լայն սպեկտրով, որը իր մեջ ներառում է ոչ միայն խորը դրական, այլ նաև խորը բացասական ապրումներ, ինչն էլ բնորոշ է նեյրոտիզմին: Այս կապի դեպքում կորելացիայի սխալի հավանականության գործակիցը կազմում է 0,1:

Եզրակացություն

Տեսական հետազոտության արդյունքում պարզ դարձավ, որ մեր կողմից ուսումնասիրվող երևույթների վերաբերյալ առկա են բազմաթիվ տեսական և փորձարարական հետազոտություններ, ինչպես նաև բազմաթիվ տեսություններ և մոտեցումներ: Տեսական հետազոտության արդյունքում հաստատվեց նաև այս երկու երևույթների փոխկապակցվածության փաստը: Փորձարարական հետազոտության միջոցով պարզվեցին դեռահասների շրջանում խառնվածքի տիպերի և բնավորության շեշտվածությունների դրսևորման ցուցանիշները: Հետազոտության արդյունքում պարզ դարձավ, որ ընտրանքի շրջանում առավել հաճախ հանդիպում է խառնվածքի խուլերիկ տիպը և բնավորության շեշտվածության էկզալտիկ տիպը: Խառնվածքի առավել հազվադեպ հանդիպող տիպը ֆլեգմատիկ տիպն է, իսկ բնավորության շեշտվածության առավել հազվադեպ հանդիպող տիպը հանդիսանում է տագնապային տիպը: Հետազոտության արդյունքում հայտնաբերվեցին բազմաթիվ կորելացիոն կապեր բնավորության շեշտվածությունների և խառնվածքի տիպը որոշող գործոնների էքստրավերսիայի և նեյրոտիկվմի միջև: Հայտնաբերված կապերը թույլ են տալիս վստահորեն խոսել այն մասին, որ անձի խառնվածքի տիպը ազդում է բնավորության շեշտվածությունների ձևավորման վրա:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ազատյան Ն. Գ., Ավետիսյան Ք. Ս., Առաքելյան Տ. Ա., Բժշկական հոգեբանություն, ուսումնական ձեռնարկ, Երևան, ԵՊԲՀ, 341 էջ
2. Գալստյան Ա. Ս, Պապոյան Վ. Ռ., Սարգսյան Դ. Յ., Հոգեբանական գնահատման գործիքակազմ, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2024, 238 էջ
3. Леонгард К. Акцентуированные личности. Ростов-на-Дону. Феникс, 2000, - 530 с.
4. Личко А. Е. Типы акцентуаций характера и психопатий у подростков. Москва: Эксмо, 1999, - 407 с.
5. Хьелл Л., Зиглер Д. Теории личности: Основные положения, исследования и применение, 1992, 609 с.
6. Практикум по психодиагностике. Психодиагностические материалы, Москва: МГУ, 1988.
7. Психология индивидуальных различий. Тексты под ред. Ю. Б. Гиппенрайтер, В. Я. Романова, Москва, 1982, 317 с.
8. Խառնվածքի տիպերը ըստ Հիպոկրատի-<https://psychologos.ru/articles/view/typy-temperamenta-po-gippokratu> (06.02.2025)
9. Խառնվածքի տիպեր-<https://4brain.ru/blog/типы-темперамента/> (06.02.2025)
10. Խառնվածքի տիպերը ըստ Շելլոնի և Կրեյմերի-<https://psyera.ru/konstitucionalnyy-podhod-k-temperamentu-264.htm> (06.02.2025)
11. Այզենկի անձնային տեսություն-<https://bigenc.ru/c/teoriia-lichnosti-aizenka-ee856f> (07.02.2025)

12. Բնավորության շեշտադրումները ըստ Լեոնհարդի-<https://blog.studylicie.ru/klassifikacija-k-leongarda/> (07.02.2025)
13. Բնավորության շեշտադրումները ըստ Լիչկոյի-<https://testometrika.com/blog/accentuation-of-character-licko/> (07.02.2025)

ИЗУЧЕНИЕ ТЕМПЕРАМЕНТА И АКЦЕНТУАЦИЙ ХАРАКТЕРА

Ганадян Аветик, Ананян Ани

Фонд “ВГУ”,

“Психология”, 3-й курс

Научный руководитель: Т. Малумян

Резюме

Ключевые слова: *темперамент, типы темперамента, характер, акцентуации характера, экстраверсия, нейротизм, подростковый возраст*

В статье представлено исследование взаимосвязи акцентуаций характера и черт, определяющих типы темперамента, экстраверсию и нейротизм у подростков. Основная цель статьи – выявить, как типы темперамента влияют на формирование акцентуаций характера. Теоретической основой исследования послужили теории Айзенка, Павлова, Кречмера, Шелдона и подходы Личко, Леонгарда к акцентуациям характера. В статье представлены показатели проявления типов темперамента и акцентуаций характера, зафиксированные у подростков, взаимосвязь 2 качеств темперамента – экстраверсии и нейротизма – с акцентуациями характера и комментарии к полученным результатам.

THE STUDY OF TEMPERAMENT AND CHARACTER ACCENTUATION

Ghanadyan Avetik, Ananyan Ani

“VSU” Foundation,

“Psychology”, 3rd Year

Academic Supervisor: T. Malumyan

Summary

Key words: *temperament, temperament types, character, character accentuation, extraversion, neuroticism, adolescence*

The article studies the relationship between character accentuation and the traits that determine temperament types, extraversion and neuroticism, among adolescents. Its main goal is to reveal how temperament types influence the formation of personality traits. The study was grounded in the theories of temperament proposed by Eysenck, Pavlov, Kretschmer, and Sheldon, as well as in the approaches to character accentuation developed by Lichko and Leonhard. As a result of the research, the article presents the indicators of the manifestation of temperament types and character accentuations recorded in adolescents, the relationship of the two traits intended for determining temperament – extraversion and neuroticism – with character accentuations, and the interpretations of the results obtained.

**ՀՈՒԶԱԿԱՆ ԻՆՏԵԼԵԿՏԻ ՄԱԿԱՐԴԱԿԻ և ՄԵՂՔԻ ԶԳԱՅՄԱՆ ՄԻՋև
ՓՈՒԿԱՊԱԿՑՎԱԾՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ**

Ոսկանյան Մարիամ

*«ՎՊՀ» հիմնադրամ,
«Հոգեբանություն», 3-րդ կուրս
Գիտական ղեկավար՝ Տ. Մալումյան*

***Հանգուցային բառեր.** Հույզ, հուզական ինտելեկտ, ինտելեկտուալ աճ, մեղքի գագառում, սոցիալական նորմ*

Հուզական ինտելեկտ տերմինն առաջին անգամ ներմուծվել է 1985 թվականին Վ. Փեյնի դոկտորական ատենախոսության սահմաններում: 1990 թվականին հրատարակվել է ամերիկացի հետազոտողներ Ջ. Մայերի և Պ. Մալովեյի աշխատանքը, որտեղ նկարագրվել է հուզական ինտելեկտի հայեցակարգը [8]: Այս հեղինակների կողմից ձևակերպված հուզական ինտելեկտի ամենավերջին սահմանումներից մեկը հետևյալն է. «Հուզական ինտելեկտը հույզերը խորապես ընկալելու, գնահատելու և արտահայտելու կարողությունն է, ինչպես նաև հույզերը կառավարելու կարողությունը, որը նպաստում է անձի հուզական և ինտելեկտուալ աճին» [8]: Ըստ Մալովեյի և Մայերի՝ մարդկային մտածողությունը չի սահմանափակվում ռացիոնալ հաշվարկներով, թեև հույզերի և ինտելեկտի միջև փոխհարաբերությունները շատ բազմազան են, դրանցից միայն մի քանիսն են նպաստում անձի ինտելեկտուալ աճին: Եվ վերոնշյալ փոխազդեցության այս բավականին սահմանափակ ոլորտը կարող է սահմանվել որպես հուզական ինտելեկտ: Լայն իմաստով հուզական ինտելեկտը ներառում է հույզերը ճանաչելու, հասկանալու և կառավարելու կարողությունը, ինչը վերաբերում է թե՛ սուբյեկտի սեփական հույզերին, թե՛ այլ անձանց հույզերին [7]: Հուզական ինտելեկտն ընդլայնում է գոյություն ունեցող գիտական պատկերացումները մարդկային կարողությունների բազմազանության մասին՝ դրանով իսկ հարստացնելով դիֆերենցիալ հոգեբանությունը: Հուզական ինտելեկտի հայեցակարգը համապատասխանում է նաև Հ. Գարդների «բազմակի ինտելեկտի» տեսությանը, հատկապես միջանձնային և ներանձնային ինտելեկտի վերաբերյալ նրա տեսակետերին [6]: Մեկ այլ հայեցակարգ է առաջադրվել Դանիել Գոուլմանի կողմից, որը ներառեց «հուզական ինտելեկտ» հասկացությունը սոցիալական և (ավելի լայն), այսպես կոչված, «լիդերական ինտելեկտի» կառուցվածքում: Ըստ Գոուլմանի՝ հուզական ինտելեկտը «մարդու կարողությունն է մեկնաբանելու իր և ուրիշների հույզերը, որպեսզի օգտագործի ստացված տեղեկատվությունը իր նպատակներն իրականացնելու համար» [7]: Գոուլմանը պնդում է, որ հուզական ինտելեկտը հենց ինտելեկտուալ կարողություն է: Ըստ Դ. Վեքսլերի՝ «ինտելեկտը նպատակաուղղված, ռացիոնալ և արդյունավետ գործելու ունակությունն է՝ տվյալ պայմաններում հաջողության հասնելու համար» [4]: Ըստ Գոուլմանի՝ նման մեկնաբանու-

թյունը ենթադրում է ոչ միայն մտքի գործընթաց, այլ նաև բազմաթիվ ոչ ինտելեկտուալ գործոններ» [7]: Ըստ Ղ. Գոուլմանի՝ հուզական ինտելեկտի կառուցվածքը ներառում է տարբեր որակի և նույնիսկ տարբեր ուղղությունների մի շարք պարամետրեր: Նախ՝ սեփական հույզերը, նպատակները և վարքի արդյունքները հասկանալու և միևնույն ժամանակ այլ մարդկանց հույզերն ու վարքագիծը հասկանալու կարողություն, հույզերն ու վարքագիծը կարգավորելու և այլ մարդկանց վարքագծի վրա ազդելու կարողություն: Առանձնացվում են 4 հատկանիշներ՝ ինքնագիտակցություն (Էմոցիոնալ ինքնագիտակցություն, ճշգրիտ ինքնագնահատական, ինքնավստահություն), ինքնատիրապետում (հույզերի վերահսկում, աղապտիվություն, նախաձեռնողականություն, լավատեսություն), սոցիալական զգայունություն (կարեկցանք, գործնական իրազեկում, քաղաքավարություն), հարաբերությունների կառավարում (ոգեշնչում, ազդեցություն, ինքնակատարելագործման աջակցություն, փոփոխությունների խթանում, կոնֆլիկտների լուծում, թիմային աշխատանք և համագործակցություն) [7]:

Էքզիստենցիալիստ փիլիսոփաներ (Ս. Կիերկեգոր, Մ. Հայդեգգեր, Պ. Թիլլիչ) և նրանց հետնորդները՝ էքզիստենցիալ-հումանիստական հոգեբանության ներկայացուցիչներ (Ջ. Բուգենտալ, Ռ. Կոչունաս, Ռ. Մեյ, Ի. Յալոմ և այլք), մեղքի զգացումը կապում են իդեալի կորստի հետ: Մեղքի զգացումը բարդ հոգեբանական երևույթ է՝ իր կառուցվածքով և գործառույթներով, ինչի կառուցվածքում հետազոտողները առանձնացնում են երեք բաղադրիչ՝ հուզական, ճանաչողական և մոտիվացիոն [2]: Հուզական բաղադրիչը ներառում է տհաճ ներքին լարվածություն: Եթե անձն ընդունում է մեղքը, նա ցանկություն է ունենում այն ուղղելու, փոխհատուցելու պատճառով վնասը, ինչի էությունը մեղքի զգացման մոտիվացիոն բաղադրիչն է: Ավելի բարդ և կարևոր է մեղքի զգացման ճանաչողական բաղադրիչը: Նախ, անձը պետք է ճանաչի իր վարքի վնասակար հետևանքները, և դա պահանջում է պատճառահետևանքային կապեր առանձնացնելու և դրանց հիման վրա հետևություններ կատարելու կարողություն [3]: Ե. Ս. Կուբանին բացահայտեց ճանաչողական բաղադրիչի 4 մաս, որոնք կապված են անձի՝ այն իրադարձության մեջ իր դերի մասին համոզմունքների հետ, որն առաջացրել է մեղքի զգացում.

1. Բացասական հետևանքների համար պատասխանատվության ընդունում:
2. Ինքնաքննադատություն:
3. Գիտակցում, որ անձը խախտել է իր բարոյական սկզբունքները:
4. Մտքեր այն մասին, թե ինչպես կարելի էր խուսափել բացասական արդյունքից կամ կանխել այն [4]:


Մեղքի զգացումը կատարում է մի շարք գործառույթներ: Այն գործում է որպես բարոյական կարգավորիչ՝ սոցիալապես ընդունելի վարքի նորմերը պահպանելու համար: Այս առումով Էդնա Ռոուլինզը [5] առանձնացնում է մեղքի երկու ձև՝ ռեակտիվ և կանխարգելիչ: Ռեակտիվ մեղքի զգացումը անձի հուզական արձագանքն է ընդունելի վարքի սեփական ինտերիորիզացված նորմերի փաս-

տացի խախտմանը, որը հոգեբանության մեջ ընկալվում է որպես մեղքի զգացում՝ որպես հույզ կամ վիճակ: Կանխարգելիչ մեղքի զգացումը հուզական փորձ է, որը կապված է ինտերիորիզացված նորմերի հնարավոր խախտման հետ, որը հոգեբանության մեջ հասկացվում է որպես մեղքի զգացում՝ որպես որակ: Իր հերթին, կանխարգելիչ մեղքը թույլ է տալիս կանխել նորմին հակասող գործողության կատարումը: Հետևաբար, մեղքի զգացումը զգացվում է որպես անհարմար վիճակ, որն առաջանում է որևէ արտաքին կամ ներքին նորմի խախտման ժամանակ [1]:

Հետազոտության փորձարարական մասի համար ընտրվել են Ն. Հոլլի «Հուզական ինտելեկտի հարցարան»-ը, Կ. Կուզլերի և Վ. Ջոնսի (Ի. Բեյլիկի ադապտացիայով) «Մեղքի զգացման հարցարան»-ը, որոնք հնարավորություն են տվել վերոնշյալ հոգեբանական երևույթները ուսումնասիրել խորքային կերպով՝ հաշվի առնելով նրանց բազմաբաղադրիչ լինելու ասպեկտը: Հետազոտական ընտրանքն են կազմել 30 ծնողներ, որոնք լիարժեք ընտանիքի անդամ են, ունեն 5+ տարվա ծնողավարման փորձ և նորմալ զարգացում ունեցող 2 երեխա: Հետազոտության առաջին փուլում ծնողներին տրվել է Ն. Հոլլի «Հուզական ինտելեկտի հարցարան»-ը, որը հնարավորություն է տվել ուսումնասիրել նրանց հուզական տեղեկացվածության, սեփական հույզերի կառավարման, ինքնամոտիվացիայի, ապրումակցման և ուրիշների հույզերի կառավարման մակարդակները: Հուզական տեղեկացվածությունը սեփական հույզերի գիտակցումն ու հասկացումն է: Սեփական հույզերի կառավարումը հուզական ապրումները կամային կերպով կառավարելու կարողությունն է: Ինքնամոտիվացիան վարքի կառավարումն է հուզական ոլորտի կառավարման հաշվին: Ապրումակցումն այլ անձանց հույզերը հասկանալու կարողությունը և նրանց աջակցելու պատրաստակամությունն է: Ուրիշների հույզերի կառավարումը այլ անձանց վրա նրանց հուզական վիճակների միջոցով ներգործելու կարողությունն է:

Կ. Կուզլերի և Վ. Ջոնսի (Ի. Բեյլիկի ադապտացիայով) «Մեղքի զգացման հարցարան»-ը հնարավորություն է տվել ուսումնասիրել հետազոտվողների մեղքի զգացումը՝ որպես վիճակ և որակ, ինչպես նաև նրանց բարոյական նորմերին հակվածության մակարդակը: Մեղքի զգացումը՝ որպես վիճակ, իրենից ենթադրում է ժամանակավոր հուզական վիճակ, որն ապրվում է տվյալ պահին որևէ կատարված կամ կատարվելիք գործողության համար: Մեղքի զգացումը՝ որպես որակ, հանդիսանում է բնավորության կայուն գիծ, որը վկայում է անձի մոտ ավստսանքի, սխալներն ուղղելու ցանկության, ինչպես նաև սեփական անձի նկատմամբ ատելության զգացման մասին: Բարոյական նորմերին հակվածությունը բարոյական նորմերին, արժեքներին և սկզբունքներին պարտադրված լինելու հիման վրա մեղքի զգացում ունենալու միտումն է:


Այսպիսով, Ն. Հոլլի «Հուզական ինտելեկտի հարցարան»-ի միջոցով ստացված տվյալներն են.



Տրամազիր 1. Հուզական ինտեկտի բաղադրիչների մակարդակի միջինացված ցուցանիշներ:

Հետազոտության արդյունքները փաստում են, որ տվյալ հետազոտական խմբի հուզական տեղեկացվածությունը 27,8 միավոր է, ինչը միջին մակարդակի սահմաններում է: Մեֆական հույզերի կառավարումը 21,4 միավոր է, ինչը ցածր մակարդակի սահմաններում է, սակայն ունի միտվածություն դեպի միջին մակարդակը: Ինքնամոտիվացիան (25,3 միավոր), ապրումակցումը (26,8 միավոր) և ուրիշների հույզերի կառավարումը (27,9 միավոր) միջին մակարդակի սահմաններում են:

Կ. Կուզերի և Վ. Ջոնսի (Ի. Բելիկի ադապտացիայով) «Մեղքի զգացման հարցարան»-ի միջոցով ստացված տվյալներն են.



Տրամազիր 2. Մեղքի զգացման մակարդակի միջինացված ցուցանիշներ:

Հետազոտության արդյունքները փաստում են, որ տվյալ հետազոտական ընտրանքի մեղքի զգացման մակարդակը՝ որպես վիճակ, 25,8 միավոր է, ինչը համապատասխանում է հարցարանի հեղինակի կողմից սահմանած միջին մակարդակին: Մեղքի զգացումը՝ որպես որակ, 49 միավոր է, որը նույնպես հանդիսանում է միջին մակարդակ: Բարոյական նորմերին հակվածությունը տվյալ հետազոտական խմբում նույնպես գտնվում է միջին մակարդակի վրա (44,3 միավոր):

Աղյուսակ 1.

Հուզական ինտելեկտի բաղադրիչների և մեղքի զգացման միջև կորրելյացիոն կապեր

	<i>Մեղքի զգացում (վիճակ)</i>	<i>Մեղքի զգացում (որակ)</i>	<i>Բարոյական նորմեր</i>
Հուզական տեղեկացվածություն	-0,17	-0,31	-0,16
Սեփական հույզերի կառավարում	-0,10	-0,28	0,33
Ինքնամոտիվացիա	-0,29	-0,29	0,18
Ապրումակցում	-0,02	-0,12	0,22
Ուրիշների հույզերի կառավարում	0,13	-0,17	0,12

Վիճակագրական տվյալների միջինացված վերլուծությունը թույլ է տալիս արձանագրել, որ վերոնշյալ մեթոդիկաների կիրառման արդյունքում ստացված տվյալների միջև հաստատվել են հետևյալ կորրելյացիոն կապերը: Միջին ինտենսիվության ուղիղ համեմատական կապ է հաստատվել սեփական հույզերի կառավարման և բարոյական նորմերին հակվածության միջև (0,33): Միջին ինտենսիվության հակադարձ համեմատական կապեր են հաստատվել հուզական տեղեկացվածության և մեղքի զգացման /որակ/ միջև (-0,31), սեփական հույզերի կառավարման և մեղքի զգացման /որակ/ միջև (-0,28), ինչպես նաև ինքնամոտիվացիայի և մեղքի զգացման /վիճակ և որակ/ միջև (-0,29): Վերոնշյալ փաստերից ելնելով կարող ենք ենթադրել, որ սեփական հույզերի կառավարումը և հակվածությունը բարոյական նորմերին ինչ-որ չափով փոխապայմանավորում են միմյանց: Ինչքան բարձր է անձի հուզական տեղեկացվածությունը, այնքան ցածր է մեղքի զգացման /որակ/ մակարդակը: Տվյալ օրինաչափությունը գործում է նաև սեփական հույզերի կառավարման և մեղքի զգացման /որակ/ միջև: Ինքնամոտիվացիայի բարձր մակարդակը պայմանավորում է մեղքի զգացման /վիճակ և որակ/ ցածր մակարդակը:

Եզրակացություն

Հետազոտության շրջանակներում ստացված փորձարարական տվյալները փաստում են, որ ծնողների հուզական ինտելեկտի տարբեր բաղադրիչների և մեղքի զգացման տարբեր ձևերի միջև գոյություն ունի փոխկապվածություն, որում

գերակշռող են հակադարձ համեմատական կապերը, հետևաբար հուզական ինտելեկտի մակարդակի բարձրացումը զգալի ազդեցություն է ունենում մեղքի զգացման մակարդակի նվազման վրա:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Белик И. А. Дифференцированный анализ эмоций: различия между виной и стыдом. Ежегодник Российского Психологического Общества: Материалы III всероссийского съезда психологов. Санкт-Петербург: Изд-во СПбГУ, 2003, т. 1, с. 375-379.
2. Белик И. А. Концепция вины и ее измерение // Ананьевские чтения: Материалы научно-практической конференции «Ананьевские чтения», Санкт-Петербург: изд-во СПбГУ, 2004, - 687 с.
3. Белик И. А. Чувство вины в связи с особенностями развития личности, диссертация, 2006.
4. Дружинин В. Н. Психология общих способностей, Санкт-Петербург, 2000, - 302 с.
5. Стернберг Р. Интеллект, приносящий успех, Минск: «Попурри», 2000, - 250 с.
6. Gardner H. Multiple intelligence. N.Y., 1993.
7. Goleman D. Primal leadership. Boston, MA: Harvard Business School Press, 2002.
8. Mayer J. D. The intelligence of emotional intelligence, 1993, v. 17.

ИССЛЕДОВАНИЕ ВЗАИМОСВЯЗИ МЕЖДУ УРОВНЕМ ЭМОЦИОНАЛЬНОГО ИНТЕЛЛЕКТА И ЧУВСТВОМ ВИНЫ

Восканян Мариам

Фонд “ВГУ”,

“Психология”, 3-й курс

Научный руководитель: Т. Малумян

Резюме

Ключевые слова: *эмоции, эмоциональный интеллект, интеллектуальный рост, вина, социальная норма*

В статье рассматривается связь между уровнем эмоционального интеллекта родителей и чувством вины. Также анализируются теоретические и экспериментальные подходы к изучению родительской вины, влияние когнитивных факторов на эмоциональное состояние родителей. Исследование актуально тем, что необходимо согласовать существующие данные, полученные учеными об эмоциональном интеллекте и психологическом феномене вины, а также в дальнейшем изучить этот сложный и противоречивый эмоциональный опыт.

RESEARCH ON THE RELATIONSHIP BETWEEN EMOTIONAL INTELLIGENCE AND GUILT

Voskanyan Mariam

“VSU” Foundation,

“Psychology”, 3rd Year

Academic Supervisor: T. Malumyan

Summary

Key words: *emotions, emotional intelligence, intellectual growth, guilt, social norm*

The article examines the connection between the level of emotional intelligence of parents and the sense of guilt, analyzes theoretical and experimental approaches to the study of parental guilt, as well as the influence of cognitive factors on the emotional state of parents. The study is relevant because it is necessary to reconcile the existing data obtained by scientists about emotional intelligence and the psychological phenomenon of guilt, as well as to study further this complex and contradictory emotional experience.

ՄԱՆԻՊՈՒԼՅԱՏԻՎ ՎԱՐՔԻ ԵՎ ՀՈՒՋԱԿԱՆ ԻՆՏԵԼԵԿՏԻ
ՓՈՒՄԱՂԱՐՁ ԿԱՊԸ ԴԵՌԱՀԱՍՆԵՐԻ ՄՈՏ

Չորակյան Անահիտ

«ՎՊՀ» հիմնադրամ,

«Հոգեբանություն», 4-րդ կուրս

Գիտական ղեկավար՝ Կ. Գ. Թ., դոցենտ Հ. Ավագիմյան

Հանգուցային բառեր. *հուզական ինքնակարգավորում, ինքնագիտակցություն, խմբային ճնշում, մանիպուլյացիայի մեխանիզմներ, սոցիալական հարաբերություններ*

Ներածություն

Դեռահասության շրջանը մարդու հոգեբանական զարգացման առանցքային փուլերից մեկն է, երբ ձևավորվում են ինքնության հիմնական բաղադրիչները, սոցիալական հմտությունները և հուզական ինքնակարգավորումը: Ժամանակակից հասարակությունում, որտեղ թվային հաղորդակցությունը և սոցիալական փոխգործակցությունը մեծ ազդեցություն ունեն, դեռահասների մոտ հաճախ ի հայտ են գալիս մանիպուլյատիվ վարքի դրսևորումներ, որոնք կարող են ազդել նրանց սոցիալական հարաբերությունների, հուզական ինքնազարգացման և հոգեբանական բարեկեցության վրա:

Մանիպուլյատիվ վարքի ուսումնասիրությունը հատկապես կարևոր է դեռահասների շրջանում, քանի որ այդ տարիքում սոցիալական միջավայրը մեծ ազդեցություն ունի անձի ձևավորման վրա: Մանիպուլյացիան կարող է ծառայել ինչպես պաշտպանական մեխանիզմ, այնպես էլ լինել սոցիալական ներգործության գործիք: Սակայն, եթե այն դառնում է վարքային հիմնական ռազմավարություն, կարող է բացասաբար ազդել անձնային աճի և սոցիալական ինտեգրման վրա:

Այս համատեքստում առանձնահատուկ կարևորություն ունի հուզական ինտելեկտի (ՀԻ) դերը: Հուզական ինտելեկտը ներառում է սեփական և շրջապատի մարդկանց հույզերը ճանաչելու, դրանք կառավարելու, ինչպես նաև էմպատիայի և հաղորդակցման հմտությունները:

Մանիպուլյատիվ վարքի և հուզական ինտելեկտի ուսումնասիրման ուղղությամբ կարևոր ներդրում են ունեցել մի շարք հեղինակներ: Մանիպուլյատիվ վարքը՝ որպես սոցիալ-հոգեբանական երևույթ, դիտարկվել է Է. Լ. Դոցենկոյի, Ֆինկոյի և Կրիվցովկայի աշխատություններում, որտեղ անդրադարձ է կատարվում դրա դրսևորման ձևերին ու գործառնություններին դեռահասների շրջանում: Իսկ հուզական ինտելեկտի ուսումնասիրմամբ զբաղվել են Դ. Գոլմանը, Յու. Վ. Դավիդովը, Լ. Դ. Կամիշնիկովան, Բ. Բ. Վետրովան, Բ. Ն. Անդրեևան և Ա. Ա. Ալեքսանդրովան՝ շեշտադրելով հույզերի ճանաչման, կարգավորման և հաղորդակցման հմտությունների կարևորությունը դեռահասի անձնային և սոցիալական զարգացման գործընթացում:

Այսպիսով, մանիպուլյատիվ վարքը և հուզական ինտելեկտը կարևոր դեր են

խաղում դեռահասների սոցիալական հարաբերությունների ձևավորման մեջ: Եթե մանիպուլյացիան դառնում է հիմնական վարքային ռազմավարություն, դա կարող է խոչընդոտել անձնային աճը, մինչդեռ բարձր հուզական ինտելեկտն օգնում է զարգացնել առողջ փոխհարաբերություններ և հուզական ինքնակարգավորում:

Հոդվածի նպատակն է ուսումնասիրել դեռահասության տարիքում հուզական ինտելեկտի և մանիպուլյատիվ վարքի հակվածության միջև կապը:

Առաջադրված նպատակին համապատասխան անհրաժեշտ է լուծել հետևյալ խնդիրները.

1. Ուսումնասիրել մանիպուլյատիվ վարքի սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունները դեռահասների մոտ:
2. Ուսումնասիրել հուզական ինտելեկտի առանձնահատկությունները դեռահասների մոտ:
3. Բացահայտել դեռահասների մանիպուլյատիվ վարքի և հուզական ինտելեկտի մակարդակը:
4. Ուսումնասիրել մանիպուլյատիվ վարքի և հուզական ինտելեկտի միջև առկա կապը:

Առաջադրված խնդիրները լուծելու համար օգտագործվել են հետևյալ մեթոդները.

1. գիտական գրականության տեսական վերլուծություն,
2. հոգեախտորոշիչ մեթոդիկաներ՝
 - Տ. Բանտի «Մանիպուլյատիվ վերաբերմունքի ախտորոշում» մեթոդիկան:
 - Ն. Շոլլի «Հուզական ինտելեկտի ախտորոշում» թեստը:

Հիմնախնդրի տեսական վերլուծություն

Դեռահասության տարիքը ուսումնասիրվել է մի շարք հեղինակների կողմից. Լ. Ս. Վիգոտսկի, Գ. Գրիմ, Ջ. Բիրենի, Դ. Բ. Բրոմլիի, Դ. Բ. Էլկոնին և ուրիշներ: Դեռահասության տարիքում երեխան ենթարկվում է որակական ուժեղ փոփոխությունների, որոնք ազդում են նրա կյանքի բոլոր ոլորտների վրա: Դեռահասները դառնում են ավելի ինքնուրույն, բայց միևնույն ժամանակ նրանց սոցիալական և հուզական պահանջները կտրուկ մեծանում են: Նրանց համար դժվար է ներդաշնակություն գտնել ընտանեկան հարաբերություններում, սակայն մեծ նշանակություն ունի նաև ընկերների և հասակակիցների ազդեցությունը: Այդ շրջանում հիմնականում ձևավորվում են այն մոտեցումները, որոնք ուղորդում են նրանց վարքը՝ որպես կախվածություն հենց հասակակիցների կարծիքներից [1]:

«Մանիպուլյացիա» տերմինը գրականության մեջ կարելի է գտնել՝ սկսած 20-րդ դարի 20-ական թվականներից: Տերմինը հոգեբանական գրականության մեջ ունի երեք իմաստ: Առաջին երկու իմաստները կապված են տեխնոլոգիայի և կենդանիների ակտիվ գործողությունների հետ, մինչդեռ երրորդը վերաբերում է միջանձնային հարաբերություններում ազդեցություն գործելու մեթոդներին՝ հաճախ թաքնված կամ չնախատեսված նպատակներով:

Է. Լ. Դոցենկոն, վերլուծելով այլ հեղինակների կողմից առաջարկված մանիպուլյացիայի սահմանումները, բացահայտեց դրա հիմնական էական բնութագրերը.

1. հոգեբանական ազդեցության առկայությունը.
2. մանիպուլյատորի վերաբերմունքը ուրիշի նկատմամբ՝ որպես սեփական նպատակին հասնելու միջոց.
3. միակողմանի շահ ստանալու ցանկություն,
4. ազդեցության թաքնված բնույթը,
5. հոգեբանական ուժի կիրառում, թույլ կողմերի վրա խաղալը (հոգեբանական խոցելիության շահագործում),
6. մոտիվացիա, մոտիվացիոն ներդրում («արհեստական» կարիքների և վարքագծի փոփոխության դրդապատճառների ձևավորում՝ ի շահ քարտեզագրական ազդեցության նախաձեռնողի),
7. մանիպուլյատիվ գործողություններ կատարելու հմտություն և ճարտարություն [4]:

Դեռահասները հաճախ օգտագործում են մանիպուլյատիվ մեթոդներ իրենց նպատակներին հասնելու համար, ինչպիսիք են լացը, սպառնալիքը, զգացմունքների շահարկումը, մեղքի զգացողության առաջացումը, և թեմայից շեղումը: Նրանք նաև մանիպուլյատիվ տեխնիկաներ կիրառում են խմբային ճնշման միջոցով, ինչի պատճառով շատ դժվար է դիմակայել ընկերների կողմից կիրառվող մանիպուլյացիային [5]:

Գազլայտինգը, քննադատությունը, մշտական վերահսկողությունը, շանտաժը և խմբակային ճնշումը մյուս հայտնի մանիպուլյատիվ ձևերն են, որոնք կարող են հանգեցնել երեխայի կամքի և ինքնագնահատականի անկման: Դեռահասները, որոնք ընկնում են այսպիսի հարաբերությունների մեջ, հաճախ կորցնում են իրենց ինքնավստահությունը, քանի որ նրանց վերաբերմունքը այլ մարդկանց նկատմամբ փոփոխվում է [6]:

Այսպիսով, դեռահասները ինչպես կարող են մանիպուլյացիայի ենթարկել ուրիշներին, այնպես էլ կարող են դառնալ դրա զոհը, հատկապես երբ ճգնաժամային տարիքում նրանք մեծ ժամանակ են անցկացնում հասակակիցների հետ, ինչը խոցելի է դարձնում նրանց խմբակային մանիպուլյացիաների համար:

Չուզական ինտելեկտի գաղափարը սոցիալական ինտելեկտի մասին պատկերացումների զարգացման հետևանք էր, այն որպես ինքնուրույն կարողություն կամ հատկանիշ ճանաչելու հիմնական պատճառը ընդհանուր ինտելեկտի մակարդակի և անհատի հաջողության միջև հաճախակի անհամապատասխանությունն էր սոցիալական միջավայրի հետ փոխգործակցության մեջ: Չուզական ինտելեկտի ուսումնասիրությանը անդրադարձել են մի շարք հեղինակներ, ինչպիսիք են Դ. Գոլմանը, Յու. Վ. Դավիդովը, ով կատարել է հուզական ինտելեկտի կառուցվածքի և առանձնահատկությունների հետազոտություն [7], Լ. Դ. Կամիշնիկովան, ով անդրադարձել է սոցիալական իրավիճակների համատեքստում դեռահասների հուզական ինտելեկտի կառուցվածքին: Ի. Ն. Անդրեևան, Ա. Ա. Ալեքսանդրովան, Յու. Վ. Դավիդովան իրենց աշխատություններում մատնանշում են դեռահասների մոտ հուզական ինտելեկտի բաղադրիչների ծանրության գենդերային տարբերությունները [3, 29]:

Չուզական ինտելեկտը սահմանվում է որպես ոչ ճանաչողական կարողու-

թյուններ, որոնք մարդուն հնարավորություն են տալիս ճանաչել, հասկանալ և կառավարել իրենց ու ուրիշների զգացմունքները: Գոլմանի կողմից արտահայտված հուզական ինտելեկտի հինգ բաղադրիչները ներառում են ինքնագիտակցություն, ինքնակարգավորում, դրդում, համակրանք և սոցիալական հմտություններ: Այս հմտությունները կարևոր են անձի անձնական ու սոցիալական հաջողությունների համար: Հուզական ինտելեկտի զարգացումը հնարավոր է նաև ուսուցման միջոցով՝ ստանձնելով վարքագծի վերահսկողության հմտությունները և սոցիալական իրավիճակների մասին զգացմունքների ճանաչման կարողությունը [2, 93]:

Դեռահասների հուզական ոլորտը ենթարկվում է էական փոփոխությունների, քանի որ նրանց հոգեկան ու սոցիալական վիճակը շարունակում է փոփոխվել: Այդ շրջանում դեռահասները հայտնվում են նոր հոգեբանական մարտահրավերների առջև, որոնք նպաստում են նրանց հուզական ինտելեկտի ձևավորմանը: Այս շրջանում հատկապես կարևոր է երեխային շրջապատող մարդկանց միջամտությունը զգացմունքների ճանաչման և մշակման գործընթացում: Դեռահասների մոտ հուզական ինտելեկտի բարձր մակարդակը համարվում է այնպիսի կարևոր հմտություն, որը թույլ է տալիս գործել առկա սոցիալական ու մշակութային պայմաններում [7]:


Այսպիսով, դեռահասները հայտնվում են էական հոգեբանական փոփոխությունների շրջանում, որոնք ազդում են իրենց հուզական ինտելեկտի զարգացման վրա: Այս փուլում նրանք դժվարությամբ են հասկանում իրենց զգացմունքները, ուստի անհրաժեշտ է հատուկ աջակցություն և կրթություն: Հուզական ինտելեկտի զարգացումը, որը ենթադրում է ինքնագիտակցություն ու կարեկցանք, կարևոր է դեռահասների վարքագծի վերահսկման և սոցիալական հմտությունների համար:

Հետազոտության կազմակերպումը

Հետազոտության ընտրանքը. Ընտրանքում ընդգրկվել է 15-17 տարեկան 30 դեռահաս՝ աղջիկներ և տղաներ:


Կիրառված մեթոդիկաներ. Դեռահասների մանիպուլյատիվ վարքի ախտորոշման համար կիրառվել է Տ. Բանտի «Մանիպուլյատիվ վերաբերմունքի ախտորոշում» մեթոդիկան [8], հուզական ինտելեկտի ախտորոշման համար օգտագործվել է Ն. Հոլլի «Հուզական ինտելեկտի ախտորոշում» թեստը [9]:

Հետազոտության արդյունքները և դրանց վերլուծությունը



Տրամագիր 1. Դեռահասների մանիպուլյատիվ վերաբերմունքի ընդհանուր ցուցանիշը


Այսպիսով, դեռահասների մոտ գերակշռում է մանիպուլյատիվ վերաբերմունքի միջին մակարդակը՝ բարձր միտումով, որը ցույց է տալիս գործնականում և կյանքում մանիպուլյատիվ տեխնիկայի կիրառման անհրաժեշտությունը համարժեք գնահատելու միտում: Նրանք մի կողմից կարող են կազմակերպել ուրիշների աշխատանքը, մյուս կողմից՝ վատ են գործընկերային շփման համար, քանի որ հաշվի չեն առնվում դիմացինի շահերը:



Տրամագիր 2. Աղջիկների և տղաների մանիպուլյատիվ վերաբերմունքի ցուցանիշը


Համեմատելով աղջիկների և տղաների մանիպուլյատիվ վերաբերմունքի ցուցանիշները՝ կարելի է եզրակացնել, որ տղաները ավելի շատ են հակված մա-

նիպույատիվ վարքի: Տղաների 14 %-ի մոտ առկա է մանիպուլյատիվ վերաբերմունքի բարձր մակարդակ, ինչը նշանակում է, որ նրանք հակված են սեփական կարիքները բավարարելու համար դիմացինին մանիպուլյացիայի ենթարկելու:




Տրամագիր 3. Ղեռահասների հուզական ինտելեկտի ընդհանուր ցուցանիշը

Այսպիսով, ղեռահասների մոտ հուզական ինտելեկտի ցածր մակարդակը կարող է դժվարություններ առաջացնել զգացմունքների կառավարման գործում, ինչը հանգեցնում է կոնֆլիկտների և անարդյունավետ հարաբերությունների:



Տրամագիր 4. Աղջիկների հուզական ինտելեկտի մակարդակը

Արդյունքները ցույց են տալիս, որ աղջիկների մոտ զգացմունքների վերահսկման ցածր մակարդակ կա, սակայն բարձր հուզական իրազեկվածությունը թույլ է տալիս ավելի լավ հասկանալ և կառավարել իրենց հույզերը:



Տրամադիր 5. Տղաների հուզական ինտելեկտի մակարդակը

Այսպիսով, տղաների մեծամասնության մոտ գրանցվել է էմպաթիայի, ինքնակառավարման և զգացմունքների կառավարման ցածր մակարդակ, ինչը ցույց է տալիս, որ նրանք դժվարանում են ճանաչել և վերահսկել իրենց հույզերը, ինչպես նաև ցուցաբերել հուզական ինտելեկտի այլ բաղադրիչներ, ինչպիսիք են ինքնազգացում և ուրիշների զգացմունքների ընկալում: Միայն փոքր տոկոսը ցուցաբերել է բարձր հուզական ինտելեկտի ցուցանիշներ:

Դեռահասների մոտ մանիպուլյատիվ վարքի և հուզական ինտելեկտի փոխադարձ կապի ուսումնասիրման արդյունքում ստացվել է $r = -0,3$ ՝ այսինքն՝ չափավոր հակադարձ կապ: Որքան ցածր է էմպաթիայի մակարդակը, այնքան բարձր է մանիպուլյատիվ վարքի հակվածության մակարդակը:

Այսպիսով, հուզական ինտելեկտի ցածր մակարդակի դեպքում դեռահասները հաճախ ընտրում են մանիպուլյատիվ վարք՝ փոխհարաբերություններում ազդեցություն գործադրելու համար: Այսինքն՝ երբ դժվարանում են հասկանալ և կառավարել հույզերը, փոխհարաբերություններում դիմում են մանիպուլյացիոն ռազմավարությունների՝ որպես փոխհատուցման մեխանիզմ:

Եզրակացություն

Կատարված տեսական և փորձարարական հետազոտության արդյունքում առաջադրված նպատակին և խնդիրներին համապատասխան արվել են հետևյալ եզրակացությունները.

1. Մանիպուլյացիան սոցիալական ազդեցության մեթոդ է, որը նպատակ ունի փոխել մարդկանց վարքը առանց նրանց գիտակցական համաձայնության: Դեռահասները հաճախ են դիմում մանիպուլյատիվ վարքագծի՝ շրջանցելով կոնֆլիկտները և օգտագործելով հուզական ազդեցություն: Նրանք կարող են մանիպուլյացիայի ենթարկել այլ մարդկանց և դառնալ դրա զոհեր:

2. Դեռահասության շրջանում հուզական ինտելեկտի զարգացումը հաճախ ընթանում է անհավասարաչափ, ինչի հետևանքով բարդանում է հույզերի ընկալման և կարգավորման գործընթացը: Սա կարող է նպաստել ոչ հարմարվողական վարքի ձևավորմանը՝ ընդգծելով հուզական աջակցման և զարգացման կարիքը:

3. Հետազոտությունը ցույց է տվել, որ աղջիկների մանիպուլյատիվ վերաբերմունքը ցածր է, իսկ տղաները ավելի հաճախ դիմում են մանիպուլյատիվ տեխնիկայի իրենց նպատակներին հասնելու համար: Աղջիկների հուզական ինտելեկտը բարձր է հուզական իրազեկվածության մեջ, սակայն ցածր՝ զգացմունքների վերահսկման մակարդակով: Տղաների մոտ, ընդհակառակը, հուզական ինտելեկտը ցածր է՝ հանգեցնելով զգացմունքների վերահսկման դժվարություններին և կոնֆլիկտների առաջացմանը:

4. Արդյունքները վկայում են, որ մանիպուլյատիվ վարքի բարձր մակարդակին զուգահեռ միշտ ցածր է հուզական ինտելեկտի մակարդակը, և հակառակը:

Ստացված տվյալները կարող են օգտագործվել կրթական ծրագրերում և հոգեբանական խորհրդատվություններում՝ դեռահասների սոցիալական իրավասության բարելավման նպատակով:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Белинская Е. П. Информационная социализация подростков: опыт пользования социальными сетями и психологическое благополучие. Психологические исследования. 2019, № 30, 51 с.
2. Давыдова Ю. В. Особенности эмоционального интеллекта подростков. Вестник РУДН, 2012, №2, 191 с.
3. Люсин Д. В. Современные представления об эмоциональном интеллекте. Социальный интеллект: Теория, измерение, исследования. Москва: Институт психологии РАН. 2014, - 172 с.
4. <http://www.dslib.net/psixologia-razvitja/svjaz-manipuljativnoj-ustanovki-i-samootnoshenija-detej-podrostkovogo-vozrasta.html>
5. https://www.b17.ru/article/podrostki_i_roditeli_manipulyacii_ispo/
6. <https://mel.fm/blog/irina-teva-kumar/58069-что-такое-abyuz-v-detsko-roditelskikh-otnosheniyakh-i-chem-on-grozit>
7. <https://cyberleninka.ru/article/n/osobennosti-emotsionalnogo-intellekta-podrostkov/pdf>
8. <https://cpd-program.ru/methods/smob.htm>
9. <http://eqspb.ru/emocionalnyy-intellekt/diagnostika-emocionalnogo-intellekta/test-na-emocionalnyj-intellekt-holla/>

ВЗАИМОСВЯЗЬ МЕЖДУ МАНИПУЛЯТИВНЫМ ПОВЕДЕНИЕМ И ЭМОЦИОНАЛЬНЫМ ИНТЕЛЛЕКТОМ У ПОДРОСТКОВ

Чобанян Анаит

Фонд “ВГУ”,

“Психология”, 4-й курс

Научный руководитель:

кандидат психологических наук, доцент А. Авагимян

Резюме

Ключевые слова: эмоциональная саморегуляция, самосознание, групповое давление, механизмы манипуляции, социальные отношения

Статья посвящена изучению взаимосвязи эмоционального интеллекта (ЭИ) и склонности к манипулятивному поведению у подростков. Подростковый возраст является критическим периодом формирования личности, в котором манипуляция может служить адаптивным механизмом, однако при низком уровне ЭИ она мешает конструктивному взаимодействию.

Цель исследования заключается в изучении взаимосвязи между эмоциональным интеллектом и склонностью к манипулятивному поведению в подростковом возрасте.

THE RELATIONSHIP BETWEEN MANIPULATIVE BEHAVIOR AND EMOTIONAL INTELLIGENCE IN ADOLESCENTS

Chobanyan Anahit

“VSU” Foundation,

“Psychology”, 4th Year

Academic Supervisor: H. Avagimyan,

Candidate of Psychological Sciences, Associate Professor

Summary

Key words: emotional self-control, self-awareness, group pressure, mechanism of manipulation, social relationships. manipulation mechanisms.

The article is devoted to studying the relationship between the level of emotional intelligence (EI) and the tendency toward manipulative behavior in adolescents. Adolescence is a critical period of personality formation, in which manipulation can serve as an adaptive mechanism, but at a low level of EI it interferes with constructive interaction.

The aim of the study is to examine the link between emotional intelligence and the tendency toward manipulative behavior in adolescence.

**ԶԳԱՅԱԿԱՆ ԻՆՏԵԳՐԱՅԻՄՅԻ ԽԱՆԳԱՐՈՒՄՆԵՐԸ
ԱՌԻՏԻԶՄ ՈՒՆԵՅՈՂ ԵՐԵՄԱՆԵՐԻ ՄՈՏ**

Ստեփանյան Աննա

«ՎՊՀ» հիմնադրամ,

*«Հոգեբանություն», մագիստրատուրա, 2-րդ կուրս
Գիտական ղեկավար՝ հ. գ. թ., դոցենտ Վ. Միրզոյան*

Հանգուցային բառեր. աուտիզմ, զգայական ինտեգրացիա, զգայարան, ախտանիշ, թերզգայունություն, գերզգայունություն, նյարդային համակարգ

Աուտիզմ ունեցող երեխաների զգայական ինտեգրացիան կարևոր դեր է խաղում նրանց զարգացման և սոցիալականացման գործընթացում: Զգայական ինտեգրացիայի ուսումնասիրությունը նպատակ ունի բացահայտելու դրա դրսևորումները երեխաների մոտ և օգնելու ավելի լավ հասկանալու շրջապատողներին, կառավարելու սեփական հույզերը, վարքը: Այս հոդվածի նպատակն է ուսումնասիրել թերզգայունության և գերզգայունության դրսևորումները աուտիզմ ունեցող երեխաների մոտ՝ հաշվի առնելով այնպիսի գործոններ, ինչպիսիք են սեռը, տարիքը:

Զգայական ինտեգրացիան նյարդաբանական գործընթաց է, որի միջոցով մեր ուղեղը ստանում և մշակում է արտաքին միջավայրից ստացած զգայական ինֆորմացիան: Այս ինֆորմացիան մենք ստանում ենք մեր զգայարանների միջոցով [1]: Աուտիզմ ունեցող երեխաների մոտ հաճախ հանդիպում են զգայական ինտեգրացիայի դժվարություններ: Օրինակ, եթե աուտիզմ ունեցող երեխան զգայական գերբեռնվածություն է գգում, չի կարողանում ուշադիր լինել, հետևել հրահանգներին, խաղալ մյուսների հետ կամ արտահայտել իր կարիքները: Երեխան կարող է ցուցաբերել զայրույթի պոռթկումներ, ֆրուստրացվել կամ վնասել իրեն: Այդ պատճառով կարևոր է անդրադառնալ զգայական ինտեգրացիային, քանի որ աուտիզմ ունեցող երեխաներն ունեն զարգացման որոշ առանձնահատկություններ, հետևաբար նրանցից յուրաքանչյուրն ունի տարբեր հմտություններ, կարողություններ և զգայական կարիք:

Զգայական ինտեգրացիան մի գործընթաց է, որի ժամանակ մարդու նյարդային համակարգը բոլոր զգայարանների միջոցով ինֆորմացիա է ստանում, այնուհետև կարգավորում, պահպանում և մշակում է դրանք այնպես, որ հնարավոր լինի կիրառել մեկ այլ նպատակաուղղված գործունեության մեջ [3]: Զգայական ազդակների մշակման գործընթացի խանգարման հետևանքով խնդիրներ են առաջանում երեխայի շարժողական համակարգի և ճանաչողության զարգացման գործընթացում, ինչպես նաև՝ վարքային դրսևորումներում:

Զգայական ինտեգրացիայի խանգարումների ախտանիշներն անմիջականորեն կախված են այն զգայական համակարգից, որտեղ նրանք առաջացել են: Զգայական ինտեգրացիայի խանգարումը կարող է առաջանալ յուրաքանչյուր զգայա-

կան համակարգում՝ տեսողական, լսողական, շոշափելիքի, հոտի, համի, անդաստակային կամ վեստիբուլյար և պրոպրիոցեպտիվ վերլուծիչների: Ջգայական ինտեգրացիայի խանգարում ունեցող յուրաքանչյուր երեխա պետք է անհատական ախտորոշում անցնի, և միջամտությունն էլ իր հերթին պետք է լինի անհատական:

Ջգայական ինտեգրացիայի իրական խանգարումները երեխաների մոտ կարող են դրսևորվել հետևյալ կերպ.

- մեկ գործողությունից մեկ այլ գործողության անցում կատարելու անկարողություն, ինչը հանգեցնում է հաճախակի պոռթկումների,
- առաջադրանքի կատարման և պահանջվող ժամանակի անհամապատասխանություն,
- ինքնասպասարկման ոլորտում առաջադրանքների կատարման հետ կապված դժվարություններ,
- սոցիալական իրավիճակներում կողմնորոշվելու դժվարություններ,
- որոշակի զգայական ազդակների ընդունման անկարողություն:

Առտիզմ ունեցող երեխաների զգայությունը կարող է փոխվել՝ կախված օրվա ժամից, հուզական վիճակից, օրինակ՝ առավոտյան երեխան դրսևորում է թերզգայություն ձայների նկատմամբ՝ այն է՝ չի լսում, երբ դիմում են իրեն, իսկ օրվա ընթացքում դառնում է գերզգայուն և ակամա ուշադրություն է դարձնում անգամ մոտակայքի շշուկներին:

Այնուամենայնիվ, չնայած զգայական ինտեգրացիայի խանգարումների դրսևորման բազմազանությանը, ընդհանուր առմամբ այս խանգարումները կարելի է բաժանել երկու խմբի՝ գերզգայունություն և թերզգայունություն [5]:

Գերզգայունակության պարագայում երեխան ճնշվում և ընկճվում է արտաքին աշխարհից եկող սովորական զգայական ազդակներից: Այս երեխաները ուղիներ են փնտրում արգելափակելու կամ նվազեցնելու զգայական ազդակները:

Թերզգայունակության պարագայում երեխան չի արձագանքում սովորական զգայական ազդակներին և պահանջում է լրացուցիչ զգացողություններ: Նրանք սովորաբար չափազանց ակտիվ կամ անհանգիստ են լինում, քանի որ նյարդաթելերով ազդակները վատ են փոխանցվում, երեխային սկսում են չբավարարել տակտիլ զգացողությունները [2]:

Հանդիպում են նաև այնպիսի դեպքեր, երբ երեխայի մոտ նկատվում է միաժամանակ և՛ գերզգայունակություն, և՛ թերզգայունակություն [4]: Սա կարող է ազդել տարբեր զգացողությունների վրա: Օրինակ՝ երեխան կարող է լինել գերզգայուն շոշափելիքի առումով, բայց դրսևորել ցածր զգայունակություն՝ ձայների նկատմամբ: Նա կարող է դրսևորել անկայուն վարք [3]:

Գերզգայունության դեպքում երեխան հաճախ ձեռքերով փակում է ականջները բարձր ձայների, աղմուկի ժամանակ, կամ ինչ-որ մեկը բարձրաձայն խոսում կամ երգում է, ապա երեխան կարող է հարվածել տվյալ մարդուն: Վախեր են ունենում բարձր ձայներ արձակող սարքավորումներից: Այս վարքի հնարավոր

պատճառը լսողական գրգռիչների նկատմամբ զգայունության բարձրացումն է: Երկարատև բարձր ձայները, ազդանշանները կարող են առաջացնել նյարդային խանգարումներ: Երեխային օգնելու համար օգտագործել աղմուկը կլանող ականջակալներ: Լարված իրավիճակում հարկավոր է երեխային հեռու պահել աղմուկից, աղմուկտ վայրերում առաջարկվում է օգտագործել նվագարկիչ՝ ականջակալների միջոցով սիրելի երաժշտություն լսելու նպատակով:

Աղյուսակ

Թերզգայունության և գերզգայունության ախտանիշները

<i>Զգայական ինտեգրացիայի տեսակները</i>	<i>Ախտանիշները</i>
Գերզգայունություն	<ul style="list-style-type: none"> ▪ ցավի բարձր շեմ, ▪ անզգույշ վազք՝ առանց գիտակցելու անվտանգությունը, ▪ աչքերը կամ ականջները հաճախակի փակելու գործողություն, ▪ ընտրողական սնունդ, որոշակի կերակուրների նկատմամբ տհաճություն, ▪ գրկախառնություններին կամ հանկարծակի հպումներին ընդդիմանալու միտումներ, ▪ մեղմ, թեթև հպումների նկատմամբ ցավի զգացողություն, ▪ հույզերը կառավարելու դժվարություն, ▪ ուշադրության կենտրոնացման դժվարություն, ▪ հարմարվողականորեն արգագանքելու դժվարություն, ▪ վարքային խնդիրներ:
Թերզգայունություն	<ul style="list-style-type: none"> ▪ ցավի ցածր շեմ, ▪ պատերին հպվելու սովորություն, ▪ իրերը շոշափելու գործողություններ, ▪ իրերը բերանը տանելու սովորություն, ▪ ամուր գրկախառնվելու ձգտում, ▪ բախում այլ մարդկանց կամ իրերի, ▪ անձնական տարածքի գիտակցման բացակայություն, ▪ մարմնի ճոճում, վերջույթների թափահարում:

Շոշափելի գրգռիչների նկատմամբ գերզգայունության ժամանակ երեխան հրաժարվում է մնալ մարդկանց կողքին, թույլ չի տալիս բռնել ձեռքը, դիպչել, շոյել, մեծ դժվարությամբ է հագնում և հանում հագուստը, հանում է կոշիկները, գուլպաները, փորձում է փախչել՝ տհաճ իրադրությունից խուսափելու նպատակով: Երեխային օգնելու նպատակով հարկավոր է թույլ տալ մարդկանցից որոշակի հեռավորության վրա գտնվել: Խուսափել կիպ, սինթետիկ հագուստից, հագցնել փափուկ հագուստ, գուլպաներ, ներքնազգեստ, թույլ տալ ձեռքում պահել շոշափելի խաղալիքներ: Այս դեպքում անհրաժեշտ է կարճ ժամանակով թեթև դիպչել ձեռքին, երեխայի համար հաճելի որևէ գործողության ժամանակ պարբերաբար դիպչել ձեռքին և ամուր սեղմել: Այս դեպքում երեխան չի հանդուրժում

կեղտոտ ձեռքերը և պահանջում է, որ անհապաղ սրբեն: Անհրաժեշտ է օգտագործել թաց անձեռոցիկներ, աշխատանքի ժամանակ կիրառել այնպիսի նյութեր, որ չկպչեն ձեռքերին՝ օրինակ կինետիկ ավազ:

Տեսողական գրգռիչների նկատմամբ զգայունության բարձրացման ժամանակ երեխան կկոցում, փակում է աչքերը, դառնում է անհանգիստ պայծառ լույսի կամ տեսողական շատ խթանիչների առկայության ներքո: Այս դեպքում պետք է խուսափել պայծառ լուսավորությունից, կիրառել լայնեզր գլխարկներ, արևային ակնոցներ: Աշխատասենյակը չպետք է ծանրաբեռնել տարբեր տեսողական ազդակներով:

Համի զգայունությունը աուտիզմ ունեցողների մոտ, գերզգայունության դեպքում տարբեր է. շատ սահմանափակ ուտելիքներ են ուտում, նոր ուտելիքի նկատմամբ հակակրանք են ունենում, հաճախ խեղդվում են, չեն ուտում պինդ սնունդ, նախընտրում են պարզ սնունդ՝ առանց ընդգծված համի: Խուսափում են կարմիր կամ վառ գույներ ունեցող սնունդից: Զգում են շրջակա միջավայրի հոտերը, որոնք ուրիշները չեն զգում, հրաժարվում են սուր հոտով սնունդից, նյարդայնանում են օծանելիքի սուր հոտից, այդ հոտերը կարող են նրանց զայրացնել և ազդել վարքի վրա: Հոտերի նկատմամբ գերզգայուն երեխաներին խորհուրդ է տրվում գրպանում ունենալ արմոթերապիայի յուղի շիշ կամ բարձիկ, որպեսզի երեխան կարողանա զգալ այդ հոտը օրվա ընթացքում, երբ իր համար տհաճ իրավիճակ է ստեղծվում [6]:

Ցավի նկատմամբ շատ զգայուն են, անգամ շատ նուրբ հպումը կարող է նրանց մոտ ցավ առաջացնել, զգայուն են ջերմաստիճանի փոփոխության նկատմամբ: Այսպիսով կարող ենք ասել, որ ամենափոքր զգայական գրգռիչի հետևանքով նրանք կարող են աշխարհն ընկալել որպես չափազանց սթրեսային և քառասային: Այս ամենի արդյունքում նրանց համար դժվար է կենտրոնանալ, ուշադրությունը տեղափոխել, դառնում են գերակտիվ: Հաճախ հրաժարվում են կատարել առաջադրանքները, քանի որ գործողությունները նրանց մոտ զգայական գրգռվածություն են առաջացնում, ինչի հետևանքով խուսափում են և փորձում են փախչել աշխատանքային սենյակից:

